ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՏՈՐ Գ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Проф. Л. М. МЕЛИКСЕТ-БЕК

ГРУЗИНСКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

ИЗВЛЕЧЕНИЯ ИЗ ГРУЗИНСКИХ ПОДЛИННИКОВ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ
С ПРЕДИСЛОВИЕМ, ВВОДНЫМИ ОЧЕРКАМИ И ПРИМЕЧАНИЯМИ

ТОМ III
(XVIII—XIX вв.)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН—1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՏՄԻԳՎԱԾ Է 1961 Թ.

ՊՐՈՖ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

9(Արմ)
Մ-52

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

A II
33824

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՎՐԱՑԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ, ԱՌԱՋԱԲԱՆՈՎ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ՀԱՏՈՐ Գ
(ԺԸ—ԺՅ ԴԴ.)



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1955

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Ա. Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» վերնագիրը կրող այս երկասիրությունը մեր նույնանուն աշխատությյան Ա և Բ հատորների (Երևան, 1934 և 1936 թթ.) շարունակությունն է։ Այն պարունակում է «Բազմածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ», որոնք օժտված են նեյութաժություն-ծանոթագրություններով և հավելվածներով։ Բազմածքները հանված են XVIII դարի և XIX դարի առաջին կեսի վրաց պատմիչների և անանուն հեղինակների երկերից։ Հետևապես այս աշխատության մեջ մեր կողմից օգտագործված հեղինակները հիմնականում մեկ և կես դարի սահմաններումն են ընդգրկած, թեև նրանց հաղորդած տեղեկությունները հաճախ հին պարերին էլ են վերաբերում, նույնիսկ մեզ-ուզ՝ անհիշատակ ժամանակներին։ Այս նկատողությունը, ի հարկե, չի վերաբերում, այսպես կոչված, «Հավելված»-ին, ուր ամփոփված են այլ և այլ հեղինակների երկասիրություններից արված քաղվածքներ միջնադարյան (ֆեոդալական) վրաց գեղարվեստական գրականությունից, սկսած XII դարից մինչև XVIII դարի վերջը։

Հայաստանը և հայերը XVIII դարի և XIX դարի առաջին կեսի ժամանակագրական սահմաններում իրենց որոշ արտացոլումն են գտել վրաց գրականության մեջ մի քանի տասնյակ անվանի և անանուն գրողների երկերում, իսկ սրանցից մի քանիսը նույնիսկ մի քանի երկասիրության հեղինակ են։

Ներկա աշխատության մեջ մտած հեղինակների մեծ մասը իրենց սոցիալական ծագումով, այսպես կոչված, բարձր խավից են. ա. վրաց Բագրատունյան—Բագրատիոնների թագավորական հարստության ներկայացուցիչներ՝ թագավորներ (Թեյմուրազ I, Աբչիլ, Թեյմուրազ II) կամ արքայորդիներ (Վախուշտի, Անտոն I, Դավիթ, Բագրատ, Իոանե, Միրիան, Թեյմուրազ), բ. իշխաններ և ազնվականներ, դիվանապետներ (Փեշանգ-Փաշվի Բեբուդաձե, Նոդար Ցիցիշվիլի, Փարսադան Գուրգիջանիձե, Սեխնիա Ջախիձե, Օթար Թումանով, Պապունա Օրբելիանի, Բեսարիոն Գաբաշվիլի (Բեսիկի), Դավիթ Ալեքսի Մեսխիշվիլի, Իեսե Օսեձե, Գաբսելյան

Ճավճավաձե, Օման Խերխեուլիձե, Ռափիել Դանիելեգով, Դիմբրի Ավալիշվիլի, Նիկոլոզ Դադիանի), գ. եկեղեցական նվիրատվության բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ կաթողիկոս (Անտան I), մետրապոլիտներ (Իոսեբ Թրիալելի, Տիմոթե Գաբաշվիլի, Մաքսիմե, Իոնա Գեգեվանիշվիլի), դ. կրոնավորներ (Սուլխան-Սաբա Օրբելիանի, Դիմբրի Գաբեցի, Սաեփան Տփղիսեցի, Զաքարիա Գաբաշվիլի) և այլն, որոնցից մանր վրացախառ հայեր են։

Հեղինակները մեր կողմից օգտագործված են այլևայլ չափով. կան հեղինակներ, որոնց նվիրված է մեկն ու մի էջ, բայց որոնց կոչերն կան և այնպիսիները, որոնցից 2—3 մանուլի չափ նյութ է քաղված (Վախուշտի տրքայտին Բագրատիոն, Իոանե տրքայտին)։ Երբեմն այս կամ այն հարցին նվիրված ծանոթագրությունն ևս մի առանձին հոդված է կրում (օր. «Ավատագի» բառի մեկնության շուրջը)։

Աշխատության մեջ վեհեղված նյութը բազմակողմանի է. պատմական, պատմա-աշխարհագրական, հնագիտական-արվեստագիտական, ազգագրական, գրականագիտական, վիճակագրական, վաճառաբանական, լեզվաբանական-բարբառագիտական, բանահյուսական, բնագիտական և այլն։

Պատմական նյութերը վերաբերում են Հայաստանի կացությանը խանությունների և փաշայությունների ցանցում, Երևանի, Լոռվա և Ախալցխի պատապրման համար մղված պայքարին, Վահտանգ մելիքներին և նրանց գործին վերջ Վրաստան, Ամենայն հայոց հայրապետության քաղաքական դերին և այլն։ Մասնավորապես առատ են նյութերը Հայոց եկեղեցու, Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների, հայ կաթոլիկների, Հավսեփ Արղությանի, Դավիթ-Դանիելյան պայքարի և այլ խնդիրների շուրջը։

Հնագիտական-արվեստագիտական նյութերից նշանակալից են Հայոց Հայաստանի վանքերի (մասնավորապես Հաղբատի և Սանահնի), Տփղիսի հայոց եկեղեցական հնությունների, Կարսի Առաքելոց եկեղեցու և այլն նկարագրությունները։

Աշխարհագրական նյութերն են՝ հիշատակություններ Հայաստանի պատմական վայրերի, ուղեգրություններ Հայաստանի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի տեղանուններում, ինչպես և հայերի բնակած գաղութների՝ Վրաստանում,

Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում, Պաղեստինում, Հընդկաստանում և այլոց մասին, բնական հարաբերությունների նկարագրությունները (Ախաթանգի) և այլն։

Լեզվագիտական տեսակետից հետաքրքիր են տվյալները հայոց լեզվի մասին, նմուշները հայ բարբառներից և այլն։

Ազգագրական տեսակետից նշանակալից են հատ ու կտոր տվյալները հայերի կենցաղի և հավատալիքների մասին, մասնավորապես հայ երաժշտության պատմության վերաբերյալ նյութերը (խաղերի, նվագների մասին)։

Վերջապես, գրականագիտական տեսակետից հետաքրքիր են տվյալները Սայաթ-Նովայի, նաև հայ գրողների, մասնավորապես մխիթարյան և երկրնակ հեղինակների մասին։

* * *

Ներկա աշխատության մեջ, ինչպես և «Վրաց աղբյուրներ» I և II հատորներում, որոշ տեղ են բռնում պանասլամիստական արատահայտություններ հայերի մասին, մասնավորապես «տաճկավորաց» կամ «ս. Սարգսի» պատերազմի շարք դավանաբանական և եկեղեցական-ծիսական խնդիրների կապակցությամբ, որոնք, ի հարկե, բխում են, ինչպես «Վրաց աղբյուրներ» I և II հատորներում ևս մենք նշել էինք, քաղկեդոնիկ-երկրնակ եկեղեցական իդեոլոգիայից, որին վրաց եկեղեցին հարեց հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետո (607 կամ 609 թ.), այն էլ առանձնապես մոնոֆիզիտ եկեղեցականների մթնոլորտից։

* * *

Այս հատորում օգտագործված հեղինակների շարքը իր մասշտաբով ավելի ընդարձակ է, քան մեր վրաց աղբյուրագիտության պարզը կազմող՝ հանգուցյալ ակադեմիկոս Իվ. Ջավախիշվիլու համապատասխան գործը («Հին վրացական պատմական գրականության ցանկը V—XVIII դդ.». վրացերեն, տ. տպ. 1916, էջ 283—338, բ—գ. տպ. 1945, էջ 329—404), որն ընդգրկում է XVIII—XIX դդ. առմանններում ընդամենը 5 գլուխ, այն է՝ «Վախուշտի արքայազն» (էջ 283—310 [329—351]), «Գաբրիելյան շարունակության վերամշակումը» (էջ 310—320 [352—361]), «Սեխնիա Ջաքելեան» (էջ 320—327 [362—368]), «Պապունա Օրբելիանի» (էջ 327—335 [369—375]) և «Օման Մղվանբեգ Խերխեուլիձե» (էջ 335—338 [376—379])։

Սույն աշխատության մեջ օգտագործած աղբյուրների և նրանց հեղինակների մասին մանրամասն տեղեկություններ՝ ընդարձակ բիբլիոգրաֆիայով՝ կարելի է գտնել մեր համապատասխան գրքերում, որոնք նվիրված են Վրաստանի և Ադրբեջանի պատմության վրացական աղբյուրների ուսումնասիրությանը.

ա. „Обзор источников по истории Азербайджана". Выпуск II. Л. М. Меликсет-Беков. „Источники грузинские" (Издательство АзФАН-а, Баку, *1939*), *էջ 17—23, ուր մեր նյութին վերաբերում են 38—48 համարները, այն է.* 38. Царевич Вахушт—„История Грузии", „Хроники", „География Грузии", карта Грузии и атлас Грузии, 39. Сехния Чхеидзе—„История Грузии". 40. Папуна Орбелиани—„История Грузии". 41. Аноним—„Описание сопредельных с Грузией стран". 42. Давид Ректор—„Описание сопредельных с Грузией стран". 43. Оман Херхеулидзе—„История царствования Ираклия". 44. Иесе Осеидзе—„Приключения". 45. Аноним—„Описание некоторых событий". 46. Царевич Иоанн—„Калмасоба". 47. Царевич Давид—„Материалы для истории Грузии" և 48. Царевич Теймураз—„История Грузии".

բ. «*Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները. Կատալոգ* I» (Публикации письменных источников по истории Грузии. Каталог I), *վրացերեն, Վրացական ՍՍՌ ՆԳՄ Արխիվային վարչության հրատարակություն, Թբիլիսի, 1949, էջ 132—194, մեր օգտագործած հեղինակներից մշակված են. 119. Սեխնիա Չխեիձե, 120—128 և 138. Վախուշտ, 129. Գիորգի Թուրեցի, 131. Տիմոթե Գաբաշվիլի, 135—136, 153. Անտոն I կաթողիկոս, 139. Օթար Թումանով, 142. Պապունա Օրբելիանի, 146. Անանուն (աշխարհագիր), 147. Մաքսիմե մեւռապոլիտ, 154. Անանուն (վիճակագիր), 167 և 187. Դավիթ Ռեկտոր Ալեքսիձե Մեսխիշվիլի, 169. Իեսե Օսեձե (=Բարաթաշվիլի), 172. Անանուն (ժամանակագիր), 173. Գաբռեվան Ճավճավաձե, 174. Օման Խերխեուլիձե, 175. Տեր-Ստեփան, 177. Գրիգոլ Սեփաշվիլի, 186. Վախտանգ արքայազն, 183 և 194. Դավիթ արքայազն, 180. Իոնա Գեգեվանիշվիլի, 191. Ռափիել Դանիբեգաշվիլի, 195. Բագրատ արքայազն, 196. Գիորգի Ավալիշվիլի, 198. Նիկոլոզ Դադիանի, 201.*

Իսանև արքայազն, 203. Անանուն (հնագետ), 206. Թեյմուրազ արքայազն, և այլն։

«Հավելված» բաժնում մենք օգտագործել ենք վրաց գեղարվեստական գրականության լուսաց XII դարից (որ չի մտել մեր «Վրաց ազգայնների» Ա և Բ հատորների մեջ)։

Լ. Մ.-Բ.

Թբիլիսի, 1947—1952 թթ.

Ս.

ԷԳՆԱՏԱՇՎԻԼԻ

ՆՈՐ «ՔԱՐԹԼԻՍ-ՅԽՈՎՐԵՒԱ» (1716—1724)

Վրաց Վախտանգ VI թագավորի մասին խոսելիս (տես այդ աշխատության Բ հատորը, էջ 126—127) մենք, ի միջի այլոց, նշել էինք, որ նա՝ Վախտանգը՝ պատվավոր տեղ ունի դրամած վրաց դրականության մեջ, մասամբ նրանով, որ «նրա պատվերով... խմբագրվեց հսկայական «Քարթլիս-ցխովրեբա» կոչված վրաց տարեգրությունը», որ հրատարակել է ակադ. Մ. Բրոսսեն Պետերբուրգում 1849 թ. (նույնը և փրանսերեն թարգմանությամբ նույնի 1849—1850 թթ.): Մենք նույնպես նշել էինք (նույն տեղ, էջ 131), որ «XIV—XVII դարերի վրաստանի պատմությունը գրի առնելու համար XVIII դարի սկզբներին Վախտանգ VI թագավորի ձեռնարկությամբ «գիտուն մարդկանցից» գումարված հանձնաժողովը սկսել էր ի մի հավաքել բոլոր այն տեղեկությունները, որոնք հիմք պետք է ծառայեին նույն «Քարթլիս-ցխովրեբա»-ի լրիվ խմբագրության»: Ահա այդ «գիտուն մարդկանց» թվում հայտնի է Էգնատաշվիլի Բերի՛ի անունը:

Էգնատաշվիլու անվան հետ է կապված «Քարթլիս-ցխովրեբա»-ի շարունակությունների մեկի գրի առնելը, որին հատուկ ուշադրություն նվիրեց դեռևս 1923 թ. այժմ հանգուցյալ ակադ. Իվ. Ջավախիշվիլին (Նորագյուտ «Քարթլիս-ցխովրեբա»-ն և այլն, վրացերեն, — «Թբիլիսիի պետական համալսարանի Տեղեկագիր», հ. III, էջ 186—202, Հին վրացական պատմական գրականության V—XVIII դդ., վրացերեն, բ.—գ. հրատարակություն, Թբ., 1945, էջ 380—404), իսկ նորերս՝ Ն. Գրիգոլիան (Նոր Քարթլիս-ցխովրեբա, վրացերեն, Թբիլիսի, 1954, էջ 364): Այդ շարունակությունը, որ «Նոր Քարթլիս-ցխովրեբա» անունով է հայտնի, 1940 թվին լույս ընծայվեց նույն գիտնականի խմբագրությամբ, առանձին գրքով՝ վրացերեն, որի (հրատարակության) ռուսերեն և փրանսերեն վերնագիրն է. Берн Эгнаташвили, Новая История Грузии [„Ахали Картлис Цховреба"] нач.

XVIII в. I: Груз. текст с предисловием и под редакцией И. А. Джавахишвили=Monuments historiques géorgiens Béri Egnatachvili. Nouvelle Histoire de la Géorgie. I: Texte géorgien, publié, par *Y. Djavakhichvili*: *Այս գրավոր հուշարձանում ամփոփված են տեղեկություններ սկսած 1393 թվականից մինչև 1696 թվականը (վերջը թերի է)։*

Նոր Բարթլես-ցխովրեբային ծանոթ է եղել XVIII դ. վրաց մեծ գիտնական՝ պատմաբան և աշխարհագիր Վախուշտի արքայազնը։

Ինչպես հեղինակը համապատասխան հիշատակարանում (տես Իվ. Ջավախիշվիլու հրատարակությամբ, էջ 5—6) վկայում է, իր երկասիրությունը կազմելիս հնագույն շրջանի նկատմամբ, ի միջի այլոց, օգտագործել է մի ինչ որ հայոց պատմություն, որ գուցե Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկը լինի։ Էգնատաշվիլին գրում է. «Մինչ ասեմ ծագման Դիմրգի թագավորը, Դիմիտրի անձնագոհ թագավորի որդին, վրաց պատմագրությունները գրված էին։ Սակայն, սկսած Դիմրգի թագավորի որդի Բագրատ թագավորից մինչ Բագրատի որդի Դիմրգին այլևս ոչինչ չէին գրել։ Իսկ այս Բագրատի և նրա որդի Կոստանտինի մասին գրել էին, որ հին գրքերում կա գտանք և սուրբ մենք ևս նրանց հետևողությամբ գրեցինք։ Եվ նախընթաց դեպքերը գուջարներից և Պարսից ու Հայոց պատմագրություններից քաղեցինք և նկարագրեցինք։ Ալեքսանդրի թագավորի և նրա որդի Կոստանտինեի և հաջորդների [պատմությունը] մինչ Ռոստոմ թագավոր՝ հին մարդկանց, Պարսից պատմագրություններից ու գուջարներից ենք լսել-գրել։ Իսկ Ռոստոմ թագավորից այս կողմը՝ ականատեսների ու պատերազմներում մասնակից մարդկանցից ենք լսել-գրել։ Այն, ինչ որ կասկածելի էր, չօգտագործեցինք, իսկ ճշմարիտը գրի ենք առել սկսած Բագրատ թագավորի ժամանակից» (գլուխ 10)։ Մի ուրիշ տեղ Էգնատաշվիլին՝ խոսելով Լանգ-Թեմուրի մասին, նշում է. «Լանգ-Թեմուրի պատմությունը մանրամասն գրի է առնված Պարսից պատմագրության մեջ, և հայերն ևս այլ կերպ ունին նկարագրած այն. բայց թե որն է ճշմարիտը, ասուված գիտե» (գլ. 13)։ Վերջապես, մի տեղ էլ ասում է. «Նրանց (հայերի) անցուդարձը մանրամասն գրի է առնված նրանց պատմության մեջ» (գլ. 15).

* Ընդգծումն այստեղ և ստորև մերն է.—Լ. Մ.-Բ.։

Մնում է նշել, որ Էգնատաշվիլու նոր Բարթլիս-ցիսվրեբան պարունակող ձեռագրի վերջին (Գ) մասը արտագրած է 1731 թ., իսկ բնագիրը գրի է առնված 1716—1724 թթ. միջոցին։

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ XIV—XVIII ԴԴ.]

Գլ. 5. Ուլջայթ սուլթանը առաքեց կրասեր Դիմրգիին[1] իբրև [Վրաստանի] թագավոր։ Եվ սա մելիք Ջաալին պարսիկ խորասանցուն և Ախսունչուն՝ Զոփանի հարևգրաբը՝ հետն ուղարկեց, որպեսզի ամբողջ Վրաստանը Դիմրգիի թագավորության ներքո միացնեին։ Եվ Մխարգրձել Շանշեին և Ավագի դուստր Խոշակից (Խվաշագից) ծնված Ջաքարիային կցեցին նրանց։ Գնացին Ջավախեթի Կոխտա լեռան գլուխը և կանչեցին Սարգիս և Դ'ուարդ'ուարև [ամիրահներ]ին, [որպեսզի սրանք ևս] գնեին, սակայն նրանք չկամեցան գալ։

6. Այս պատին տեղի ունեցավ պատակառում։ Բյուզանդիայում (Հունաստանում) և Ուլջայթ սուլթանից անջատվեցին Փարմանի որդիները և մեծ Կոնիայի քաղաքը (sic)։ Այդ ժամանակ գ'ուները սառեց Զոփանին իր զորքով Բյուզանդիա (Հունաստան) և հետն ուղարկեց վրացիներին. և Դիմրգին Զոփանին հետևեց։ Իսկ Գոգազյան, Մալուքը, Շանշեն և Ջաքարիան նրա հետ չգնացին...

9. ...Այս Դիմրգի թագավորի օրոք Զինգիս-գ'ուեններից մեկը թշնամություն առաջացավ, [ուստի] և նրանք վտառվեցին, իմերեթում էլ Դավիթ Նարինի որդիք իրար դեմ եկան։ Իսկ Դիմրգի թագավորը՝ մի առ ժամանակ սպասելով՝ Հերեթ-Կախեթի և Սամխեթի իշխաններին, որոնք Զինգիզին հարեցին, Կախեթի Ցիվի [լեռանը] հասցրեց ու կոտորեց, հայհոյեց և հայկուլա (իմեր-ամերի) [Վրաստանը] միացրեց և ըստ [իր] ուզածին ամբողջ Վրաստանին տիրեց։

10... [Բագրատի և նրա որդի Կոստանտինեի թագավորության] նախընթաց գեպքերը գուշարներից և Պարսից ու Հայոց պատմագրություններից քաղեցինք և նկարագրեցինք։...

13... Այս Լանգ-Թեմուրի[2] պատմությունը մանրամասն գրի է առնված Պարսից պատմագրության մեջ, և հայերն[3] ևս այլ կերպ ունին նկարագրած այն. բայց թե ո՞րն է գրանցից ճշմարիտը, ասված գիտե։

15. [Լանգ-Թեմուրը] շարժվեց անկից և հասավ Հայաստան, և ավերեց Հայաստանը, գերեց ու մեծ ոչնչի ենթարկեց նրանց (հայերին), ինչպես էլ նրանց անցուդարձը մանրամասն գրի է առնված նրանց պատմության մեջ, քանի որ իր ուժին ու իշխանության ենթարկեց նրանց:

16. Գնաց [Լանգ-Թեմուրը] այնտեղից (Հայաստանից) և մոտեցավ Կաբային (Կաբի), գրավեց այն և տրի ու սրի ենթարկեց բոլորին, քանի որ ոչ ոք ի վիճակի չէր ընդդիմադրության ցույց տալ նրան՝ նրա զորքի բազմության պատճառով: Եվ այնտեղ նա բնակություն հաստատեց ու ձմեռեց: Իսկ ձմեռը դաժան էր:

Այս պահին ախալցխին էլ նվիրատվության նրան (Լանգ-Թեմուրին), և նա հարյուր պատվեց ախալցխին:

17. Ձմեռն անցնելուց հետո [Լանգ-Թեմուրը] շարժվեց գնալ Բաբիլ, քանի որ այս էր փափագում. նա անցավ Աշոցք (Արցախ), ավերելով և կոթնանելով ամեն ինչ, Քրիստոսի 1393 [թվին] իջավ Թոխտալեի, ուր ոչ մի ընդդիմադրության չհանդիպեց...

18... Ապա Լանգ-Թեմուրը գնաց Ղարաչա[կ] (Ղարաբաղ) արտրգության... և այնտեղից նրանք (մոնղոլները) գնացին Ղարաբաղ և կալանավորված Բագրատ Թագավորին[4] էլ հետը տարան:...

27... Սրանից հետո [Լանգ-Թեմուրը] նորից գնաց Ղարաբաղ, ուր և մնաց մի ոտ ժամանակ:

29. Լսելով Վրաստանի գրավումը Գիսրգի Թագավորի[5] կողմից, Լանգ-Թեմուրը... նորից արշավեց Վրաստան... [ապա] հասավ ու կանգ առավ Ղարաբաղում, և Ղարաբաղը լցվեց զորքով...

42. Գիսրգի Թագավորը նորից գրավեց Բաբիլին: Հենց որ այս լուրը հասավ Լանգ-Թեմուրի ականջին, վերջինս սկսեց առավ իր զորքը ուղարկելու [վրաց դեմ]... Եվ եկան [մոնղոլները] ու մոտեցան Երնջակին (Էրինջակ)[6], որ է բերդ, քանի որ այն պահին Բաբիլի Թագավորն ուներ գրաված այն: Բերդում եղողները երկար ժամանակ մնացին պաշարված վիճակում և մի ոտ ժամանակ էլ նեղվեցին, ապա դուրս եկան ու Թողին բերդը: Բերդապահները եկան [Լանգ-Թեմուրի մոտ] և ապաչեցին: Եվ բերդն բերդապահին և ավագ բերդապահին ու նվիրատվեցին Լանգ-Թեմուրին: Իսկ Լանգ-Թեմուրի զորքը շարժվեցին դեպի Բաբիլ և հասան Մանգլիս:

44... Լանգ-Թեմուրը ուղեց Թավրիզին մոտենալ և եկավ տեսնելու այն բերդը, որ առաջներում գրավել էին, [այն է՝] Ալինջան։ Եվ անհամար զորքով և գույնզգույն վրաններով շարժվեց, եկավ ու դիտեց Ալինջա բերդը. ապա գնաց և Դեղարքունյաց (Գեղաքունիք) լճին մոտեցավ...

45. Լսելով այս՝ Գիորգի Թագավորն ուղարկեց իր եղբորը [Լանգ-Թեմուրին դիմավորելու] բազմաթիվ ընծաներով...

46. [Ապա Լանգ-Թեմուրը] եկավ ու կանգ առավ Մանգլիսում։ Եվ կար մի իշխան այն տեղում, որ Մարախանա է կոչվում, և այն իշխանի անունն է[ր] Էսախա...

47. Ապա Ադրուզայի որդի Իվանե ամիրան եվս՝ վերցնելով բազմաթիվ ընծաներ՝ գնաց Լանգ-Թեմուրի մոտ։ Լանգ-Թեմուրը ոգևորմածությամբ ավեց նրան խալաթ և այլ շնորհներ։ Եվ եկան շրջակա տեղերի՝ Սոմխիթի, Սամցխեի և Կարսի (Կարսի)՝ իշխանները։

48... [Լանգ-Թեմուրն] այնտեղից գնաց դեպի Բյուրդստանի (Բուրթխատանի) կողմերը և գրավեց Բյուրդստանը...

50... Գիորգի Թագավորը [Լանգ-Թեմուրի] մոտ ուղարկեց Էսախա անունը կրող այն մարդուն, որ Սոմխիթի իշխան էր...

55... Լանգ-Թեմուրը գրավեց Բյուրդստանը, Հնգկաստանը, Պարսկաստանը, Շիրազը, Աստրաստականը (Ադրբեջանի) և կայանավորեց Բաբադայում նստած խանթքարին, որի անունն էր Բայազիթ...

65. Եվ մեռավ Գիորգի Թագավորը[7] և Թագավոր նստեց նրա որդի Բագրատը[8]. և այս Բագրատ Թագավորի օրոք (sic) գ՛ային Ուզուն-[Հ]ասանն[9]..., որը Թուրքմեններան ծագում ուներ, գրավեց Թավրիզը և այլ բազում գավառներ (քեմեր), և շատ ավերածություն ու վնաս հասցրեց Հայքի գավառներին (քեմերին). և Բարթլիի վրա եվս եկան նրա զորքերը։

67... Բագրատ Թագավորը հզոր էր և հռչակավոր։ Նա տիրում էր Բարթլիին, Հայաստանին, և նրա վասալներն (սարուկներն) էին Լոռին, Կախեթի, Շիրվանի և Սամցխեի բդեշխները (պետերը)...

69. Ուզուն-Հասանը՝ զորք հավաքելով՝ եկավ Սոմխիթի. [Վրաց] Թագավորը գտնվում էր հայկական Լիխի[10] վրացիներն էլ նրան ուղեկցում էին։ [Թշնամին] մոտեցավ Բարաթանց [հոգը]ին և Օրբելին[11]։ Բարաթանք լավ ընդդիմադրեցին նրանց... Ապա [Թուրքմենները] գրավեցին Տփղիսը...

71...Դ'աեւնը մեռաւ. թախտընեըը թոպին Տփղիսը և Սամխիքը, որը Բագրատ թագավորը գրավեց...

74. [Բագրատի որդի Կոստանտինին թագավորի[12] օրոք] Թուրքմեննեըի անթիվ բազմություն եկավ Սամցխե և մտեցավ Տաշիրին...

75... Եվ հրամայեց դ'աեւնը ավերել Սամխիքը...

77. [Թուրքմեննեըը] արշավեցին Սամխիքի վրա...

91... Կոստանտինեի[13] որդի Դավիթ թագավորը[14] տիրում էր... Կարսի (Կարսի) երկրի հայկուկ [գտնվող մասին] մինչ Երևանի (Էրեւանի) սահմանը, ներառյալ Փամբակը (Բանբակը) և Լոռին (Լոբեն), մինչ Ղազախի սահմանը: Սրանք Քաքիլի թագավորն ունեը գրաված:

97. Աքթաբակը տիրում էր... մինչ Կարսի (Կարսի) սահմանը [և] Ա[ր]զրումի կողմի Գուրջի-Բոդպի հայկուկ [գտնվող մաս]ին:

127. Լուարսաբ թագավորը[15] գրավել էր ու ամբացրեե Տփղիսի բերդը: Լսելով այս բանը՝ Ղարաբաղում գտնվող [Շահ-Իսմայելի[16] որդի] Շահ-Թամազը[17] զգոնի հավաքեց ընտիր զորք և շարժվեց Լուարսաբ թագավորի դեմ:...

128... Գրավելով և ամրացնելով Տփղիսի բերդը՝ [Շահ-Թամազը] քաշվեց Ղարաբաղ:

129... Շահ-Թամազը գնաց Հայաստանի [քաղաք] Նախիջևանը (Նախչուանը) և ըմբռնաց հայաստանցիներին հնազանդեցրեց իրեն:

131... Խոնթքաբի մոտ գնացին Օթար Շալիկաշվիլին և Դ'ուարդ'ուարեի որդի Քայխոսրոն: Եվ՝ խնամ զժվարանալով հաղթահարել յուրայիններին՝ խոնթքաբը գուբս բերեց Ա[ր]զրումի և Դիարբեքիրի վաշխաններին և անթիվ զորք:

132... Խոնթքաբի զորքը հասել էր Բասեն (Բասխանի), [երբ] սրանք (Բագրատ Իմերեթի թագավորը, Դադիանը, Գուրիելը, իմերելիները և մեգրելները) եկան հասան:

139.... Խոնթքաբը բարկացավ Գուրիելու վրա՝ պատճառ բռնելով, որ եթե Բագրատի հետ Բասեն (Բասխանի) չգայիր, Բագրատը իր զորքից այսքան չէր կոտորի:

145.... Սուլթանն օգնություն ցույց տվեց Դադիանուն և (տրամադրեց) նրան Ա[ր]զրումի և Տրապիզոնի զորքերը:...

151.... Շաքիի տեր Հասան-բեկի որդի Դավրիշ-Մահմադը դավաճանեց Շահ-Թամազին: Եվ երբ սուլթան Սուլեյմանը[18] վե-

բարձաւ, Շահ-Թամազը զորք հավաքեց Ղարաբաղում, քանի որ Հասան-բեկը Շահ-Թամազին էր ենթակա. իսկ նրա (Հասան-բեկի) որդի Դավրիշ-Մահմադն այլևս չէր հնազանդվում [Շահ-Թամազին] և խռովրեց [նրանից]։ Ուստի և Շահ-Թամազը զորք հավաքեց Ղարաբաղում և մարդ ուղարկեց Կախեթի բռատն Լևանին (Լեւանին)[19] և խնդրեց նրանից օգնություն։

154... Եվ Լևանի զորքը սպանեց Դավրիշ(Դեւուրիշ)-Մահմադին և Լևանը մատուցեց Շահ-Թամազին (Շահնախմադին) նրա՝ (Մահմադի) գլուխը։ Շահ-Թամազը բազում ողորմածությամբ հատուցեց Լևան բատոնին և նա ուղարկեց Լևան բատոնին իրեն տեղը, իսկ ինքը գնաց Ղարաբաղ։

155. Երբ նա (Շահ-Թամազը) հասավ Ղարաբաղ, դեռևս չէր վերացել թշնամությունը Լուարսաբ թագավորի նկատմամբ. նա դիմեց գեալ Տփղիս, ավերեց Տփղիսն ու Տփղիսի շրջակայքը, և Տփղիսի բերդը գրավեց։...

156. ...[Աթաբակ] Քայխոսրոն գրեց Շահ-Թահմազին. «Լուարսաբ թագավորն եկավ և ավերեց իմ երկիրը, և Ա[ր]զրումի Իսկանդար փաշան եվս գալիս է»։

157. Լսելով այս՝ Շահ-Թամազը ...շարժվեց. և աթաբակ Քայխոսրոն ընդառաջ ելավ նրան, առաջնորդեց և տարավ Սամցխե։ Իսկ Շահ-Թամազը իր որդի Միրզա-Իսմայելին[20] ուղարկեց Կարս։ Եվ հասավ Իսմայել-Միրզան [այնտեղ] ու գրավեց ամրոցները, ավերեց Կարսը և, որքան էլ այնտեղ օսմանցի զորք կար, քշեց այնտեղից։...

161. Եվ մտավ Շահ-Թամազը Երևան...

163. Իսկ Շահ-Թամազը գնաց իրեն տեղը. Տփղիսի բերդը Շահ-Թամազն ուներ գրաված։ Նստացրեց նա Ղազախ [կոչված] տեղում և Շամշադիլում իր խանին. այս երկիրն առաջներում կոչվում էր Ռանի և նա սուլթան[ներ] նստացրեց Գանձ[ակ]ում, Բարդուջաթում և Շաբխում։...

164... Գանձ[ակ]ի սուլթան Շա[հ]վերդը՝ լսելով այս՝ ժողովեց Ղարաբաղի զորքը և այն [ուժերը], որ Շահ-Թամազն էր ցուցադրել, և շարժվեց Լուարսաբ թագավորի դեմ։

175... Շահ-Թամազը գրեց Զևրքեզ-Շամխալին՝ Շաբխի սուլթանին, որպեսզի նա շաքեցվոց և գարաբաղցվոց զորքով ելնի. և շարժվեց Շամխալ սուլթանը մեծ զորքով և եկավ Քարթլի։

184... Մեծ զորքով շարժվեց Շահ-Թամազը Ալեքսանդրե

A 33894

ՀԱՅԿ ԳԱՍՊԵՆՏՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

[Կախեթի բատոնի] դեմ. և նկավ Շահ-Թամազը Դարբազ։

186 ... Ապա բաժանեցին երկրները, և [Օսմանյան] սուլթանին ճաց Իմերեթը, Օլթիին, Գուրիան՝ մինչ Վերին Բարթլիի սահմանը, Բարթլիի և Կարսի սահմանը, Աշոցքը (Արոցի) և Երևանյան Հայաստանը (Էրեուանիստա Սոմխեթի), որ այժմ մինչ Բաղդագ Թուրքստան են կոչում։ Իսկ Շահ-Թամազին [սուլթանը] զիջեց Բարթլին, Կախեթը, Երևանը և Գյուրգստանի հայկուց մասը ...

189. ... Ստանթքարի զորքն եկավ և գրավեց Թավրիզը, Երևանը, Գյանջան և Դարբազը և Ատրպատականի բոլոր կողմերը մինչև Սուլթանիա։...

192. ... Սվիմոն [Քագավորն][21] եկավ Բարթլի Քրխտաոսի 1579 [թվին] և գրավեց Գարս բերդը, և բռնեց Բարթլին ու Սոմխեթը, Սաթարաթաշվիլին ու Լոռին և բոլոր ամրոցները բացի [Լոռվա] բերդից։

197. ... Սվիմոն Քագավորը հպճող վերադարձավ և մի ու ժամանակ հանդստացավ, և ուրախ էր։ Ապա նա նորից զորք ժողովեց և շարժվեց Լոռիի վրա։ Հենց որ հասավ [տեղն], ահ-զական փաշան գալիս եկավ և նրանք իրար հետ պայքարեցին, և տեղի ունեցավ սաստիկ կռիվ. և [կամոքն] սաստկաց Սվիմոն Քագավորը հպճեց. և շատ ուժումներ կատարվեցին՝ չորս հարյուր յոթանասուն երեք հոգի, Քրխտաոսի 1586 [Քվ]ին, և վերցրեց Լոռիի այրերը, գրավեց Լոռին, թեև բերդը նույն ուժումների ձեռին էր։

Եվ մի ու ժամանակ հանդստանալուց հետո [Սվիմոն Քագավորը] նորից զորք հավաքեց, եկավ ու մոտեցավ Լոռվա բերդին, սկսեց կռիվը և վերցրեց Լոռվա բերդը ապրիլի մեկին. և գրավեց Լոռին ու վերադարձավ այնտեղից։...

200. Հենց որ խանթքարն այս իմացավ՝ ուղարկեց արշավախումբ, հետն էլ մի զորագլուխ (սարդալը). սա շարժվեց և եկավ Լոռի ու վերցրեց Լոռվա բերդը, և գրավեց այն։ [Ապա] եկավ ու կանգ առավ Ստախս-սոմխեթի ձայրին[22]։

201. Հպճական Սվիմոն Քագավորն եկավ Տփղիս, ժողովեց իր զորքը և մոտեցավ Դմանիսին, քանի որ Դմանիսն այն ժամանակ ուժումների ձեռին էր, և կատարեց Դմանիսում գոնվող բոլոր ուժումներին և գրավեց բոլոր շրջակայքը. և բոլոր ուժումներին քշեց Վրաստանից և ամեն ինչ գրավեց բացի միմիայն Գորուց և Լոռուց։

204. ... Շահ-Աբասը (Շահրաղը)[23] գրավեց Թավրիզը և, որքան էլ Աթրպատականը տարածություն ունեը, այն եվս ամբողջ գրավեց, բացի Երևանից և Բագդադից։

220. ... Ուստաճլուն եկան Լոռի և գրավեցին Լոռվա բերդը ու մացրին այնտեղ իրենց զորքը. ապա գնացին և Սվիմոն Թադեոսին[24] տարան Սատմբուլ։

222. Գիորգի Թագավորը[25] մտեցավ Լոռվա բերդին և վերցրեց բերդն ու գրավեց Լոռին։

226. ...Շահ-Աբասն եկավ Երևանը գրավելու համար և կանչեց Գիորգի Թագավորին և Կախեթի Ալեքսանդրե բատոնին օգնության՝ Երևանը գրավելու համար։ Եվ սրանք երկուսով իրենց զորքով գնացին։ Եվ երբ անկյունում (Շահ-Աբասն) էր կանգնած, իսկ մեկում սրանց (Գիորգիի և Ալեքսանդրեի) զորքերը տեղավորեց։ Եվ երբ դ'աենը հրամայեց գրոհ տալ, այն ժամանակ ասավելապես վրացիները աշխատեցին և անցան պարիսպների մեջ և խիստ պատերազմեցին. մինչև որ դղրաշները կմտնեին, վրացիները գրավեցին ամրոցները, ցույց տվին դ'աենին [իրենց] ուժն ու կարողը, և գրավեցին բերդը։

227. Ապա՝ գրավելով Երևանը՝ դ'աենը սկսեց բանակցել Գիորգի Թագավորի հետ, այսպես ասելով. «Քանի որ խանթքարը և' իմ և' քո թշնամին է, այժմ, քանի որ ես ջանք եմ թափել ու եկել այստեղ, Լոռին քոնը լինի»։ ...Գիորգի Թագավորը... գնջաց։ Ապա Շահ-Աբասը գրավեց Լոռվա բերդը և իր զորքը մացրեց բերդի մեջ, և վերադարձավ իր տերությունը։...

247. ... Ղրմեցիք եկան հասան Դաես։ Երբ որ նրանք հասնում էին [այդտեղ], գտնեցի մի տերտեր (տերտերա)[26] մեն-մենակ աչինչ չզգալով՝ գալիս էր Գարաւ։ Եվ այս ու այն կողմն նայելով՝ [հանկարծ] նկատեց, որ Դաեսը և նրա գաշտերը զորքով է լցված։ Ապա տերտերը գլխի ընկավ, որ նրանք վրացիներ չէին։ Տերտերը զգաց, որ նրանք անօրեններ են և երկիրն ավերողներ։ Եվ այն տերտերը շտապ վերադարձավ և վազեց Գարաւ ուղղությամբ, անցավ Կուրի կամուրջը և հանեց կամրջի բոլոր տախտակները, որ և ջուրը թափեց, և կամուրջը քանդեց։ Իսկ երբ գրիմեցիք ուզղակի կամրջին հասան, տեսան այն քանդված, նեղ տեղն ընկան և չկարողացան կամրջով անցնել[27]։

300. ... [Սամցխեի] աթաբակ էր Մանուչար աթաբակի որդի Մանուչարը, որ Սվիմոն Թագավորի[28] քեռորդին էր։ Եվ Թեյմուրազ [Կախեթի] տերը Օլթիսում բնակեցրեց իր ընտանիքը։

Հենց որ նրանք գնացին, դ'ահնին հաղորդեցին Թեյմուրազ բառոնի գնալը խոնթքարի մոտ և նրա ընտանիքի մասին Սահթաբագոյում։ Այդ ժամանակ [դ'ահնը] նամակ գրեց Երևանի խան Ամիրգունա-խանին... Ապա Ամիրգունա-խանը գնաց [Օլթիսի]... Իսկ նույն գիշերը Թեյմուրազ բառոնի կինը Առաջանն երազ էր տեսել, իբր թե զղրաշները հարձակվել էին նրա վրա և կողոպտել նրա գանձարանը և ունեցվածքը, և՝ զարթնելով՝ Առաջան տիրուհին հենց նույն գիշերն և ևթ շարժվել էր տեղից ու Օլթիսի քաղաքից անցել էր դեպի բերդը. և ամեն ոք և ամեն ինչ, որ հետն ուներ, բոլորը տարել էր բերդը, քանի որ մինչ այդ բերդից ցած էին կանգ առել։ Եվ գնաց Ամիրգունա-խանն այն գիշերը, հասավ այնտեղ, ուր Թեյմուրազ բառոնի կինն ու երեխաներն էին գտնվում, և հենց նույն դյուզի վրա հարձակվեց, և ավերեց այն դյուզը։

319. ... Եվ տեսավ աթաբակն Երևանի խան Ամիրգունա-խանին՝ իր անողին, ապառնաց նրան և թրով խփեց նրա ապտավարի ծայրին, ապտավարը ձեղքեց, գլխին խիստ խփեց և վայր ձգեց։ Ամիրգունա-խանը կանչեց. «...Ինչո՞ւ ես ինձ ապտաւում, չէ՞ որ քեզ ես եմ մեծացրել»...

323. Եկավ զղրաշների զորքը, և մտավ Սարարաթաշվիլու և Սոմխիի, որ և կողոպտեց, ու հետ այնտեղ։

328. ... Երբ Շահ-Աբասը մեռավ[29], զղրաշների մեջ հուզում սկսվեց, և Կարսի բեգլարներն ուզում էին էրանը կործանել։ Իսկ Ռոստոմ Դ'ուլարապատն ամրացրեց Կարսը և դուրս բերեց Շահ-Աբասի որդի Շահ-Սեֆիին (Շահ-սեֆի)[30] և դ'ահն նստացրեց, ասած՝ վերապատնուով՝ ամրացրեց Կարսը և շատ հնազանդ հետ առ դ'ահնը։ Եվ դ'ահնն էլ ողորմած էր դեպի նա։

345. Ապա [Կախեթի Թեյմուրազ բառոնը] գիմեց վրացիներին և կախեթցիներին, որոնք հավաքվեցին, և գնաց գերեզման և ավերելու Դարաբաղը. և անակնկալ կերպով հարձակվելով՝ [նրանք] ամրոցներս թալանեցին ու ավերեցին Դարաբաղը, շատ գերիներ վերցրին ու հաղթական վերադարձան Կախեթ։

353. ... Ռոստոմ Թագավորին[31] օգնության եկան Լոռվա խանը, Ղազախի խանը և Շամշադիլի խանը։...

356. ... Ռոստոմ [Թագավորը]... այդ ժամանակ [Տփղիսում] Իշխանաբատուրի[32] տակը...

365. ... Գերբդի որդի Ալեքսանդրն [Իմերեթի Թագավորը] Դադիանուց խնդրեց ազատել իր հորը և խոստացավ փրկանք

տալ: Իսկ Դադիանին պահանջեց, որպեսզի Զխնորիի և Զխարիի հայերը տրվեն նրան իբրև վրկանք: [Ալեքսանդրեն] տեղահան արավ և տվեց [Դադիանուն] այն, ինչ որ նա ապստամբել էր և ապստամբ իր հորը, որին և բերեց Իմերեթի:...

459. ...Երևանի խանը և Քալբալիխանը նախանձում էին իրար և այդ պատճառով Երևանի խանը որոշեց նամակ գրել Գիորգի Թագավորին:... [Գիորգի] Թագավորը ...Երևանի խանին հարեց և նրա բարեկամը դարձավ: Իսկ Երևանի խանը տեղեկացրեց այս մասին պ'ատենին, և շատ ուրախացավ շահ Սուլթան Հուսեյն պ'ատենը[33] Գիորգի Թագավորի հետ հաղթություն կնքելու մասին և շնորհեց Երևանի խանին թովանդչի-ագասուբյուն, որ է բոլոր հրացանակիրների տեր և տնօրենը:... Եվ Երևանի նախիրին և այլ մեծամեծներին, պ'ատենի հրամանի համաձայն, ուղարկեցին... [Իմերեթի] Թագավորին ծառայեցնելու:...

ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Գիորգի կրոսեր կոչված Վրաց Թագավորի և այս հատվածում հիշված պերսոնաժի ժամանակագրությունը հշտելու համար (հմմտ. մեր «Վրաց ազբյուրները Հայաստանի և հայերի մասին», II, 50, 61) կարևոր է նշել, որ սա Դավիթ VI-ի, այսինքն Ուլու-Դավիթի որդին էր: Էդնսաուշվիլին (Նոր Բարթլես ցեղերեբա XVIII դ. սկզբ., վրացերեն, հրատ. Ի վ. Ջավախիշվիլու, Թբ., 1940, էջ 1) սրան համարում է Բագրատունյաց (Բագրատիոնների) 67-րդ Թագավորը: Համաձայն Ի վ. Ջավախիշվիլու հետազոտության (Վրաց ժողովրդի պատմություն, վրացերեն, դիրք երրորդ, (XIII—XIV դդ.), Թբ., 1941, էջ 149, Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), համառոտ տեսություն, վրացերեն, Թբ., 1949, էջ 188, 277), այս Գիորգին գահ է բարձրացել Օլջաթի խանի հրամանով Վախտանգ III-ի մահից (1308) երրորդ տարին, հետևապես 1310 թվին: Ըստ Վախուշտիի ժամանակագրության (Ք. Յ., II, Դ. Ջուբինովի հրատ., ՍՊԲ., 1854, էջ 237) վախճանված պիտի լինի 1318 թվին: Հմմտ. Ի վ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, դիրք երրորդ (XIII—XIV դդ.), վրացերեն, Թբիլիսի, 1949, էջ 258—259:

[2] Լանկ-Թիմուր կամ Թեմուր-Լենգ մոնղոլական խան, 1360—1405 թթ.:

[3] Այսանգ, հավանական է, ակնարկած է Թովմա Մեծոփեցու Պատմությունը (տես Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք կարապետ վարդապետ Շահնազարեան [Շար հայ պատմագրաց], Փարիզ, 1860: Նաև Թովմա Մեծոփեցի [Վրաստանի պատմության աղբյուրներ. Սերիա III, Հայ հեղինակներ], թարգմանություն, ներածական և կոմենտարներ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի, հայերեն և վրացերեն, Թբ., 1937):

[4] Բագրատ V, մեծն, Վրաց Թագավոր, 1360—1393 թթ.: Այս Բագրատի մասին մանրամասն տես Ի վ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատ-

մությունը, III, Թբ., 1941, 179—191, էջ 223—225, նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), համառոտ տեսություն, վրացերեն, Թբ., 1949, էջ 204—205, 277, նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, դիրք երրորդ (XIII—XIV դդ.), վրացերեն, Թբ., 1949, էջ 282 և այլն:

5 Դեմրզի VI, Վրաց թագավոր, 1393—1407 թթ.: Այս Դեմրզիի մասին մանրամասն տես Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, դիրք երրորդ, 1941, 191—193, 223—225: Նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), 1949, էջ 209—210, 277:

6 Հմմտ. Մելքոպ արքեպ. Սիրտահանց, Նկարագիր ս. Կարապետի վանուց երնջակայ, Թիֆլիս, 1904: С. Тер-Аветисян. Крепость Ериндзак (Алинджа-кала), „Бюллетень Кавк. Ист.-Археол. Института", № 8, Лнгр., 1931, стр. 16.

7 Խոսքը Դեմրզի V Պայծառի մասին է, 1314—1346 թթ.:

8 Տես 4-րդ ծանոթ.:

9 Ուզուն-Հասան կամ Հասան-բեկ Ակ-Կոյունլու Թուրքմենական ցեղի խան, 1466—1478 թթ.: Մանրամասն տես Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, հատոր IV, պրակ I (XV դար), Թբ., 1924, էջ 125—132, նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, դիրք չորրորդ (XV—XVI դդ.), վրացերեն, Թբ., 1943, էջ 119—120:

10 Այժմյան Սուրամի լեռնաշղթան:

11 Նույն Սամշվիլդեն է:

12 Կոստանդին I, Վրաց թագավոր, 1407—1411 թթ.:

13 Ի նկատի ունի Կոստանդին II-ին, 1479—1505 թթ.: Մանրամասն Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, IV—1, էջ 133—183, նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, դիրք չորրորդ (XV—XVI դդ), 1948, էջ 127—172:

14 Այսինքն՝ Դավիթ VIII, 1505—1525 թթ.:

15 Լուարսաբ I, 1534—1558 թթ.:

16 Իսմայիլ I, Պարսից շահ, 1499—1525 թթ.:

17 Թահմազ, Պարսից շահ, 1525—1576 թթ.:

18 Սուլեյման կամ Սյուլեյման, Օսմանյոց սուլթան, 1520—1566 թթ.:

19 Լևան, Կախեթի թագավոր, 1520—1574 թթ.:

20 Իսմայիլ, հետագայում Պարսից շահ՝ 1576—1577 թթ.:

21 Սվիմոն I, Վրաց թագավոր, 1558—1600 թթ.:

22 Խաախ-սոփելի՝ Բոլնիսի հայոց հուշակավոր ուխտատեղին է:

23 Աբաս I, Պարսից շահ, 1587—1629:

24 Տե՛ս 21-րդ ծանոթ.:

25 Դեմրզի IX, Վրաց թագավոր, 1600—1605 թթ.:

26 «Տերաեաթ ապավաղամ՝ ետնոեաթ հայ քահանայի հոմանիշն է վրացերենում՝ ուխտեր բառից:

27 Այս էպիզոդը, որ տեղի է ունենում Վրաց Լուարսաբ II թագավորի օրոք (1605—1616), նկարագրված է նաև Քարթլիս-կեոռվթեայի III շարունակության մեջ (տես Վրաց պատմագրները, II, 141), նաև Վախուշտիի պատմության տեքստում (տե՛ս սույն հատորի Գ պրոլեգ, էջ 63):

28 Սվիմոն II, Վրաց թագավոր, 1619—1629:

29 1629 թվին:

30 *Սեֆի կամ Սաֆի I, պարսից շահ, 1629—1642։*

31 *Ռոստոմ I, վրաց թագավոր, 1632—1658 թթ.։*

32 *Իշխանությանի նույն իշխանությունն է, որ հայտնի է և աշխարհապէս Վախուշտիի «Քարթլիի պատմությունն» և «Աշխարհագրությունը»-ից (տես առն հատորի Գ գլուխը, էջ 64), այժմյան Մամադավիթի կամ Մթածմինդայի լեռը՝ Թբիլիսիի արևմուտքից։ Այս անունը, անտարակույս, հայկական ծագում ունի (Լ. Մելիքսեթ-Բեկ, Վախուշտիի «Իշխանությանի»-ի մասին. Հին Տփղիսի շուրջը, վրացերեն,—«Պատմության Տեղեկագիր», 1924, գիրք II, էջ 229—232։ Л. Меликсет-Беков, Тифлис, его основание и краткий исторический очерк. —Путеводитель „Тифлис и его окрестности", Тифлис, 1925, стр. 21. Լ. Մելիքսեթ-Բեկ, Դավիթ «Անհոգիի» վրաստանում լինելու տարբի շուրջը. «Գրական-բանասիրական հետազոտություններ», I, Երևան, 1946, էջ 256։ Համա. նաև П. Иоселиани, Гора св. Давида в Тифлисе, Т., 1858, стр. 3—4. Նույնի Описание древностей города Тифлиса, Т., 1866, стр 43.*

33 *Հուսեյն կամ Հյուսեյն, Պարսից շահ, 1694—1722 թթ.։*

ՍԵՀՆԻԱ ՉԽԵԻՉԵ

«ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» (1739)

Սեհնիա Չխեիձեն Դիմրգի XI Բարթլիի թագավորի (1676—1688) պալատական գործիչներից մեկն է. հայտնի է իբրև հեղինակ պատմական երկասիրության, որ «Թագավորների պատմություն» (ցխովրեբա մեփեթա) վերնագիրն է կրում: Պատմությունն ամփոփում է պատմական տեղեկություններ Վրաստանի և հարևան երկրների մասին շուրջ 1653—1739 թթ., ուր սկզբնական մասը՝ շուրջ 1653—1687 թթ.՝ գրի է առնված ըստ ուրիշների հաղորդած տվյալների (այս մասում Հայաստանի և հայերի մասին ոչինչ չկա), ապա՝ 1687—1739 թթ. ներքո՝ իրեն իսկ հեղինակի, իբրև ականատեսի, նկարագրածն է:

Սեհնիա Չխեիձեի երկասիրությունը հրատարակված է ալբոճ. Դ. Ջուբինովի լույս ընծայած «Բարթլիս ցխովրեբա»-ի II մասում, ՍՊԲ., 1854, էջ 307—342, նաև արտատպված է Զ. Ձիճինաձեի հրատարակած «Վրաստանի կյանքը» (Սաքարթվելոս ցխովրեբա) գրքում, Թբ., 1913, էջ 1—52: Նույնը կա և ֆրանսերեն թարգմանությամբ ակադ. Մ. Բրոսսեի (M. Brosset) Histoire de la Géorgie, II Partie, II livraison, SPB. 1857, pp. 7—54:

Հեղինակի ու նրա երկի մասին տես Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը, V—XVIII դդ., վրացերեն, ա. տպ., Թբիլիսի, 1916, էջ 320—327, բ.—գ. տպ.. Թբ., 1945, էջ 362—368:

Քաղվածքների թարգմանությունները բերում ենք համաձայն Դ. Ջուբինովի հրատարակության:

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1687—1739 ԹԹ.]

384 [=1696] թ... Ամիլախորին իմերեթում պարսավել էր, ինացած [իշխաններ]ին էրեկլե թագավորն՝ յուրաքանչյուրին իրեն կալվածքում թողեց, քանի որ ղ՝ անեը² հրամայել էր. «Յու-

բաքանչյուրին իրեն կալվածքը տուբ»: [Ուստի] և նրանք իրենց ընտանիքները տեղում թողին, և իրենք Գիորգի Թագավորին[3] ուղեկցեցին, անցան Թալավերը և հասան Երևան, տեղեկացրին դ'ահեղին:...

391 [=1703] թ. ... Վախտանգ արքայազնը[4] լսելով [իր հոր գալու մասին] և ժողովելով վրացական զորքեր՝ ընդառաջ գնաց հորը Տաշիրում:...

407[=1719] թ. ... քորոնիկոնի 407, օգոստոսի 7-ին Վախտանգ Թագավորը՝ գալով Ղազվինից՝ հասավ Այդար-բեկի ամրոցը Լոռիում, ուր նրան ներկայացավ նրա որդի Բաքար Թագավորը[5] վրացական զորքով:...

410[=1722] թ. ... դ'ահեղը խալաթ և դ'ուլարաղասություն* շնորհեց Բաքար Թագավորին և խնդրեց օգնություն: Բաքար Թագավորը ցանկացավ գնալ և կանգ առավ Տաշիրում, Սակայն Վախտանգ Թագավորը խորհուրդ չտվավ իր որդուն գնալու և վերադարձրեց: Եվ մի փոքր ժամանակում Կախեթը, Երևանը, Շամշադինը... (Շամշադիլը) և Ղազախը տրվեց Էրեկլե Թագավորի որդի Կոստանտինեին (Կոստանտիլեին), որ պարսկերեն Մա[ն]մադ-դ'ուլի-խան էր կոչվում: Էրեկլե Թագավորի որդին եկավ Շամշադին:...

Այս պահին Վախտանգն առացավ դ'ահենից խալաթ և արծաթե գուրզ (լախտ) և զորապետության (սարդլորա) կոչում, նաև պահանջ, որպեսզի նա Շիրվանի վրա արշավի, քանի որ Շիրվանը լեզգիների ձեռին էր: Ժողովվեց վրացական զորքը: Այս պահին եկավ Ռուսաստանի Պետրոս կայսեր[6] դեսպանը Վախտանգ Թագավորի մոտ, որին մատուցեց ոգորմածության հրովարտակ և [առաջարկ] ներկայանալ իրեն (Պետրոսին). «Օգնականությամբ Քրիստոսի էլա իմ աթոռանիստից, արմատախիլ արի թշնամիներիս և դարձա ետ Շիրվանի կողմերը, տես զորքիս փայլն ու մեծությունը: Թագավորին այս գուբ եկավ, մեծ ուրախությամբ [ընդունեց նրան], քանի որ քրիստոսասեր էր.... Վախտանգ Թագավորը ճանապարհ ընկավ, հասավ Գյանջայի երկիրը, կանգ առավ Շամխորում (Շանքոր), կայսրն ուշացավ: Ինչպես պարզվեց, կայսրը Աստրախանից (Աշտարխանից) վերադարձել էր: Թագավորը շատ վշտացավ, [նրա] թիկունքում ըմբոստացավ Կախեթի բատոն Կոստանտինեն, քանի որ Ղազախն ու Շամշա-

---

* Ծրանակերեն թարգմանության մեջ՝ le titre de qoular-aghas (M. Brosset, Histoire de la Géorgie, II, 36).

պինը նրանն էին։ Սկսեցին պարենավորման հավաքմամբ և մարդկանց կոտորածը, [ուսահ և Վախտանգը] Շերվանի կողմը չանցավ...

411 [=1723] թ. ... սարասքյար Իբրահիմ-փաշան գնվում էր Դարբանդում։... Բաքար Թագավորը և նրա քեհյան (բիձա) Իևան Թագավորը՝ հանդիպեցին իրար Տաշիրում։...

412 [=1724] թ. ...Այս պահին սարասքյարը գնաց Երևանի վրա... Սարասքյարը հասավ և պրավից Երևանի բերդը, և Երևանի խան Ալիղուլի-խանին պատրաստ հանձնեցին այնտեղից։...

413 [=1725] թ. ... խոնքարը շնորհեց Բաբթին Բաղդադի փաշային և Երևանը Ռաջա-փաշային, սարասքյարությունը՝ Սաբի Մուստաֆա-փաշային։ Սա պրավից Լավա բերդը, իջավ Գյանջա։...

417 [=1729] թ. ...հայերը Ջաուիկը կրկնապատկին (ախալքյուրցիկին) լուսավորին և Թեոդորոսի կյուրակեին մի կերան[8]։...

418 [=1730] թ. ...պատրաստ եկան ճարեցիք [և] ավերեցին Բոլնիսին (Բոլնիսին) և Սամխիխը, [շատերին] կոտորեցին և շատ դերիներ և տավար-ոչխար։...

420 [=1732] թ. ... լեզգիները մտան Սամխիխ և մտան Սամշվիլդեին։ Սամշվիլդեի տերն էր Իևան Թագավորի որդի Աբդուլա-բեկը, որն այն ժամանակ Սամխիխում էր գտնվում։ Հենց որ գրքի գալու մասին տեղեկացրին, նրան օգնության հասան Ղափլանիշվիլի Բայխասրոն, Սարաթաշվիլոյի գրպապետը (սարկալ) և նրանց ընտանիքները ու Սամխիխի գրքը։...

Սույն թվին Բաղդադի փաշային սվին Բաբթին, որա որդի Ուսուֆ-փաշային՝ Ախալցխեին և Օսման փաշային՝ Ա[լ]պրամը։...

...Դեկտեմբերին... լեզգիներն ավերեցին Սամխիխը։...

421 [=1733] թ. ...Բաղդադի փաշան կատարյալ Մուխրանի բերդը՝ սկսած ապրիլից մինչև հունիսի 20-ը, աշխատում էր վեց հարյուր բանվոր Բաբթիից և Սամխիխ-Սարաթաշվիլոյից։

423 [=1735] թ. Թամազ-խանը[9] հասավ Ղարսի երկիրը... Հուլիսի 10-ին լեզգիներն ավերեցին Սամխիխը։...

...Թամազ-խանը գտնվում էր Երևանի Ղրխբուլախում (Ղրխբուլախի)... Ուսուֆները թողին Երևանը, և ոչինչ չվնասեցին ուսուֆները... Սամխիխից փախել էր Ամիլախորի Գիվին, Մուխրանի տերը, Ախալիշվիլի Բայխոսրոն։...

... Նոյեմբերին [Թամազ-խանը] պատրաստվեց Գյանջան, Ղարաբաղը, [քշելով] Բաբթիի և Կախեթի քաշվորներին, Երևանը,

Ղարաբաղ, Ղայդուրին, Փանբակը (Փամբակի), և որքան էլ ուռումնների խոխանան էր մնացել, [բոլորն] ուղարկեց Խորասան։...

424 [=1736] թ. ...ը՝ աւննից եկաւ հրամանն, որով Բաբթին տրվեց Արդուլա-լեկին, որ և վրաց թագավոր գրված Աբչիլ անունով[10], կախեթը՝ Ալի Միրզային, որ կարճ ժամանակ Բաբթիի թագավոր էր, Երևանը՝ ռուլման Սեֆի-խանին։ [Վերջինս] գնաց Երևան։...

425 [=1737] թ. ...ի՝ աւննը Ղանդահար էր կանչել վրացիներ՝ Ամիրլամովի Օթարին, Սարաբախտաշվիլոյի զարդալուխ (առըպալի) Ղավլանիշվիլի Բայխոսրոյին, Յիցիշվիլի Կրիվլի արքեպիսկոպոսին, Ջավախիշվիլի Բայխոսրոյին, Փալավանդիշվիլի Ալիմանդիին, Փիշանգ՝ Լոռվա մելիքին, Փարսադան՝ Սամխիխի մելիքին, Բայանդուրին (Բագուրի), Ալիշ'ուլի-բեկ ախոռապետին (ամիրճիրի)։...

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Էրեկլի I, Նազար-Ալի-խան, Վրաց թագավոր, 1688—1703 թթ.։

[2] Հուսեյն կամ Հյուսեյն, Պարսից շահ, 1694—1722 թթ.։

[3] Թիմրազ IV Գաչիա, Իմերեթի թագավոր, 1696—1698 թթ.։

[4] Խոսքը Վախտանգ VI-ի մասին է, որ Վրաստանի կառավարիչ էր 1703—1712 թթ. և թագավոր 1719—1724 թթ. (վտճանվեց և թաղվեց Աստրախանում 1737 թ.)։ Մանրամասն տես մեր՝ «Վրաց պարյուրնները», II, 126—130։

[5] Բաքար, Վրաց թագավոր, 1716—1719 թթ., Վախտանգ VI-ի որդին էր։

[6] Պյոտր I, 1682—1725 թթ.։

[7] Վախտանգ VI-ի եղբայր Իեսե, Վրաց մահմեդականացած թագավոր, 1714—1716 թթ.։

[8] Խոսքը Ծուղտակի մասին է։

[9] Թահմազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.։

[10] Աբչիլ II, կախեթի թագավոր։

ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1744), «ՔԱՐԹԼԻԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1744), «ԿԱԽԵԹԻ ԵՎ ՀԵՐԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1744), «ԻՄԵՐԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1745), «ՍԱՄՑԽԵ–ՍԱԱԹԱԲԱԳՈ–ԿԱԱՐՋԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1746), «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (1755), «ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (1745), «ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶ» (1735)

Վախուշտի Բագրատիոն արքայազնը, Վախտանգ VI թագավորի (տես մեր «Վրաց ապրյուրնեերը», II, 126 և այլն) գործունեության շարունակողն է գրականության և, հատկապես, պատմագրության ասպարեզում։ Այս Վախուշտին խնդրեց Վախտանգ VI-ի հանձնաժողովի կողմից Վրաստանի պատմության վերաբերյալ ժողոված բազմաթիվ նյութերը ուսումնասիրողն էր, Վրաց տարեգրության («Քարթլիս-ցխովրեբա»-ի) II մասի շարունակության գրի առնողը, Վրաց ժամանակագրության կարգավորողը, Վրաստանի աշխարհագրության և աշխարհագրական քարտեզի ու ատլասի կազմողը և բազմաթիվ այլ գիտական մի շարք աշխատությունների նախաձեռնողը։

Վախուշտին Վախտանգ VI թագավորի «արտամուսնական» զավակն էր. ծնվել է մոտավորապես 1694—1696 թթ.։ 1717—1724 թթ. մի շարք ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքական կյանքում։ 1721 թ. նա նշանակվեց Սարաբաթիանոյի կառավարիչ և ապրում էր Թրիալեթի Ախալքալաքում, որ երբեմն Տաշրաշ կամ Դաշրաշ անունով էր հայտնի։ 1724 թվին Վախուշտին իր հոր Վախտանգ VI թագավորի և եղբայր Բաքարի հետ միասին, օսմանցիներից պարտություն կրելուց հետո, գաղթում է Մոսկվա, ուր նվիրվում է գրական-գիտական գործունեության։ Ապրելով «Պրևոյա»-ում, նա վախճանվում է մոտավորապես 1770-ական թվականներին։

Վախուշտիի գրական գործերից նախ և առաջ հիշատակելի է «Վրաստանի պատմությունը», որ նա ավարտել է 1744թ.։ Այս

աշխատության մեջ տրված է Վրաստանի անցուդարձի սիստեմատիկ նկարագրությունը՝ հենվելով գրական հարուստ ժառանգության վրա, ինչպիսիք են՝ ամենաառաջին հերթով նրա կողմից օգտագործած բազմաթիվ ժամանակագրությունները (խրոնիկաները), «կիւնիկլոսները» և արխիվային դոկումենտները (սիգելոգրաֆիները)։ «Պատմությունը» բաղկացած է 2 մասից, որոնցից առաջինում տրված է Վրաստանի պատմության ամփոփումը հնագույն ժամանակներից սկսած մինչև Վրաստանի բաժանումը XV դարում, իսկ երկրորդում՝ նույնը Վրաստանի բաժանումից հետո մինչ XVIII դարի կեսը ըստ Վրաստանի առանձին քաղաքական-վարչական բաժանումների։

Առաջին մասը հրատարակված է Դ. Զ. Բաքրաձեի կողմից. «Վախուշտի. Վրաստանի պատմությունը. մասն առաջին», Վրացերեն, Թրիլիսի, 1885, էջ 1—307։ Երկրորդ մասը մուծված է պրոֆ. Դ. Զուբիաշվիլի հրատարակած Վրաց տարեգրության երկրորդ մասում՝ «Քարթլիս-ցխովրեբա», Վրացերեն, ՍՊԲ. 1854, էջ 11—258։ Երկուսը միասին վերահրատարակված են Զ. Ճիճինաձեի կողմից, 392 էջ, նույնը ֆրանսերեն թարգմանությամբ ակադ. Մ. Բրոսսեի (M. Brosset)՝ „Histoire de la Géorgie“, II Partie, SPB. 1856, pp. 11—321։ Վերջինը բաղկացած է հետևյալ գլուխներից.

1. «Քարթլիի պատմությունը», ըստ Դ. Զուբիաշվիլի հրատ., էջ 11—94, Զ. Ճիճինաձեի 16—145, Մ. Բրոսսեի թարգմանության, էջ 11—138 (Histoire et actions des rois de Karhtli depuis la divizion du pays en trois royaumes et sinq principautés).

2. «Կախեթի և Հերեթի պատմությունը», ըստ Դ. Զուբիաշվիլի՝ 95—145, Զ. Ճիճինաձեի՝ 146—221, Մ. Բրոսսեի՝ 139—198 (Histoire du Héreth, du Coukheth et du Cakheth).

3. «Սամցխե-Սաաթաբագո-Կլարջեթի պատմությունը», ըստ Զուբիաշվիլի՝ 177—236, Զ. Ճիճինաձեի՝ 222—268, Բրոսսեի՝ 199—238 (Histoire du Samtzkhé ou Saathabago et du Clarjeth).

4. Էգրիս-Աբխազեթ-Իմերեթի պատմությունը», ըստ Զուբիաշվիլի՝ 177—236, Զ. Ճիճինաձեի՝ 269—359, Բրոսսեի՝ 239—321 (Histoire de l'Ègris, Aphkazeth ou Iméreth).

Այս պատմության բնական հավելվածն է «Ժամանակագրությունը», որ ընդգրկում է ժամանակագրական տեղեկություններ սկսած XIII դարից մինչև XVIII-ի կեսը (1201—1755)։ Վերջինս հրատարակված է նույն Դ. Ջուբինովի կողմից՝ «Քարթլիս-ցխովրեբա», II, 237—258, Զ. Ճիճինաձեի՝ 360—392, ֆրանսերեն թարգմանությունը Մ. Բրոսսեի՝ Histoire de la Géorgie, II, 377—406 (Dates recueillies par Wakhoucht).

Պատմության և ժամանակագրության հաջորդում է «Վրաստանի թագավորության նկարագրությունը», որ նույն «Վրաստանի աշխարհագրությունն» է։ Այս աշխատությունը հայտնի է երկնակի հրատարակություններ վրացերեն բնագրի (չհաշված Մ. Ջանաշվիլու կողմից 1892 և 1895 թթ. մասամբ հրատարակած «Սամցխե» և «Քարթլի» պլուհների), և մի-մի էլ ֆրանսերեն ու ռուսերեն թարգմանական. 1. Description géographique de la Géorgie, par Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset, SPB. 1842, վրացերեն և ֆրանսերեն, առանց ընդօրինակած մի քանի քարտեզներով հանդերձ. 2 «Վախուշտի աբրեյագն. Վրաստանի աշխարհագրությունն», Մ. Գ. Ջանաշվիլու խմբագրությամբ, վրացերեն, Թր. 1904. 3. „Царевич Вахушти, География Грузии. Перевод, примечания и редакция М. Г. Джанашвили [„Записки Кавказского Отдела Русского Географического Общества“, кн. XXIV, вып. V], Тифлис, 1904. 4. «Վախուշտի. Վրաստանի թագավորության նկարագրությունը (Վրաստանի աշխարհագրությունը), Ն. Լոմոուրու և Ն. Բերձենիշվիլու խմբագրությամբ = Вахушти. Описание Царства Грузинского (География Грузии), под редакцией Т. Ломоури и Н. Бердзенишвили“, վրացերեն, Թր. 1941։

Վախուշտիի Վրաստանի աշխարհագրական բառարանն ու տալասը, որոնց բնագրերը պահվում են Վրաստանի պետական թանգարանի ձեռագրական բաժնում (առաջինը) և Վրաստանի պետական կենտրոնական պատմական արխիվի հին վավերագրերի բաժնում (երկրորդը), դեռևս, դժբախտաբար, հրատարակված չեն։

Վախուշտիի մասին մանրամասն տես Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական դրականությունը, V—XVIII դդ., վրացերեն, ա. տպ., Թր. 1916, էջ 283—310, բ.—գ. տպ., Թր. 1945, էջ 328—351։

Մեր թարգմանությունները Վախուշտիի երկասիրության-ներից կատարված են հետևյալ հրատարակություններից. «Պատ-մության» ա. մասի՝ ըստ Դ. Բաքրաձեի, «Պատմության» բ. մասի և «Ժամանակագրության»՝ ըստ Դ. Ջուբինովի, վեր-ջապես «Աշխարհագրության»՝ ըստ Թ. Լոմոուրու և Ն. Բերձենիշվիլու հրատարակության: Նյութի՝ գլուխների վերաձևումը մեզ է պատկանում:

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

(Անհիշատակ ժամանակներից մինչև XV դ.)

I[1]

Քարթլոսը Նոյի որդի Հարեթի սերնդից էր, քանի որ Հա-րեթը ծնեց Ալանանին, Ալանանը ծնեց Թարշին, Թարշը ծնեց Թորգոմին (Թարգամոսին), Թորգոմը (Թարգամոսը) ծնեց ութ հսկաներին, որոնք են Հայկ (Հաոս), Քարթլոս, Բարդոս, Մովա-կանոս, Լեկանոս, Հերոս, Կավկասոս և Էգրոս: Նոյն որդիք բա-ժանվեցին ի սկզբան աշխարհն 1758, հունական 2785, վրաց-ական 221 թվին: Թորգոմին բաժին ընկավ երկիրը հետևյալ սահ-մաններում՝ արևելքից Գաւրգանի ծովը, արևմուտքից Պոնտոսի ծովը, հարավից Օ[փ]րևթի կամ Բաւրթի լեռը, հյուսիսից Կավկասի լեռը. և հնազանդ էր նա Ներբոթին: Ապա Թորգոմը (Թարգամո-սը) բաժանեց իր երկիրն իր որդոց մեջն և ավեց նրանց հատա-նելիքը. և ութ եղբայրներն այլևս չուզեցին հնազանդվել Ներ-բոթին, քանի որ իրենք հսկաներ (հերոսներ) էին: Լսելով այս և վերամբարձվելով՝ Ներբոթը հարձակվեց նրանց վրա, և պատե-րազմը երկար ժամանակ տևեց: Իսկ երբ Ներբոթը նեռով սպան-վեց Հայկից Արարատ լեռան վրա ի սկզբան աշխարհի 1829, հունական 2856 և վրացական 292 թվին, եղբայրներն ազատա-գրվեցին սոսկությունից: Ազատվելուն պես Թորգոմը բաժանեց իր որդոց մեջն երկրներն ու սահմանները:

Հայկին (Հաոսին) ավեց [այն երկիրը, որի] արևելյան սահ-մանն էր Կասպից ծովը, հարավից՝ Օ[փ]րևթի լեռն, հյուսիսից՝ այն լեռը, որ՝ սկսվելով Պոնտոսի ծովից՝ պատում է Բասենի (Բասիա-նիի) դռնով, հասնում է մինչև Պարսավ (Բարդա) և Արազ, իսկ արևմուտքից՝ Պոնտոսի ծովը:

Փառնավազ Թագավորը[2]*... բաժանեց Վրաստանը (Սաքարթվելոն) իրեն նախաթաթուքյան (սակրիսթավո)... հինգերորդին նստացրեց Սամշվիլդեում, որին ավեց [երկիրը՝ սկսած] Սկվիրեթի գետից Գաջնաքի (Գաչիանի) վերի [մաս]ով մինչ Փարվանա (Փառնավրա) [լիճը], հանդերձ Աշոցքով (Արտիկ)։...*

Միրվան Թագավորը[3]*,... բանակցելով Հայոց Արշակ Թագավորի հետ, իր դուստրը ավեց [կնության] Արշակի որդի Արշակին։...*

Հայոց Թագավորի որդի Արշակ Արշակունուն (Արշակունիանի) բերին ու համայն Վրաստանի Թագավոր նստեցրին[4]*։...*

[Արշակից] հետո Թագավոր նստեց [Վրաստանում] նրա որդի Արտակը (Արտագը)[5]*։...*

Բարտոմ Թագավորը[6]*... ամուսնացավ [հայ] Արշակունիների զատից հետո, զորք ժողովեց և՝ օգնության առանալով Հայքից՝... կռիվ տվավ Խունանում։...*

... Բարթամի կնոջը, որը հղի էր, տարան Հայք, և այնտեղ նա ծնեց որդի՝ Ատերկին [Միրվան II-ի Թագավորության օրոք[7]*]։..*

Թագավոր դարձավ [Միրվան II-ի] որդի Արշակը, որ գեղեցիկ էր, քաջարի, զորեղ և հակառակ իսկ երբ Ատերկը (Ատերկի) դաստիարակվում էր Հայքում, Արշակը ժողովեց Հայքի զորքը... և եկավ Թախալեթ։... Ապա Ատերկը կոչ արեց Արշակին իրեն հետ պատերազմելու։... Ատերկը... դիմեց վրացիներին՝ ասելով. «Ես ձեր Թագավորի որդին եմ. բայց ես չեմ ցողնի, որ հայոց զորքը ձեզ կոտորի»։ Ապա վրացիները վեր բերին Թագն Արշակի գլխից և դրին Ատերկի գլխին[8] *և նրան Թագավոր դրին հռոմեական 3947, հունական 5506, վրացական 282 թվին, առաջին Իոլիկոսանին։*

Ատերկը գրավեց ամբողջ Վրաստանը և ամուսնացավ հայոց Թագավորի աղջիկ հետ։... Նրա օրոք Պարսկաստանում սկսեց Թագավորել Ժղալանը (sic),... որին հնազանդ էին հայերն ու վրացիները։...

[Կասս և Փարսման Թագավորները[9]*]... սիրով էին Հայոց [Թագավորների] հետ։ Իսկ Հայոց Միրվան Թագավորը մոռացության մատնեց նրանց սերը և գրավեց Քարթլի սահման[ներից] Ծուն[դ]ան և Արտահանը (Արտանի) մինչև Կուրը, և Ծուն[դ]ան կոչեց «Քաջաց-ուտեն» (Քաջթա-ուտեն), որ է պևերի ուտեն։*

[Արմազել և Ազորի Թագավորները[10]*]... որոշեցին վերադարձնել Քարթլի սահմանը և բերին օսերի (օվսերի) Թագավորի երկու եղբայրներ Բագուկ և Ամբազուկին զորքով, նաև լեզ-*

պիներին (լեհերին)։ Նրանց (հայերի) համար աննկատելի կերպով [թագավորները] մտան Հայք և ավերեցին այն. անցան Կուբը և եկան Կամբեճոման։ Տեղեկանալով սրա մասին՝ Սմբատ Բյուրատյանը (Բիւրիտեանի) փոքրաթիվ զորքով հետապնդեց նրանց։ Ապա [Հայոց] թագավորը պիտեց նրանց՝ առաջարկելով, որ [քարթլները] ետ դարձնեն գերիներին, [ասելով]՝ «Թողավորը ձերը լինի, և ես ետ կդառնամ»։ Ապա հյուսխականները պատասխանեցին. «Մենք քեզ էինք փնտրում և չգտանք. այժմ ելիր, որպեսզի շուտ ազատվես մեր կոպիտից»։ Սմբատը՝ լսելով այս՝ վիրավեց ու գուրս եկավ։ Այստեղ կանգ առավ Բագուկը. Սմբատն երկու անգամ զարկեց Բագուկին և անցավ այն կողմը. թամբից վեր բերեց նրան գետնի վրա ու սպանեց... Ապա բոլոր հյուսխականները միասին հարձակվեցին և երկու կողմից էլ անթիվ զոհեր եղան։ Սակայն հյուսխականները պարտվեցին, և թագավորները պիտեցին դեպի Մցխեթա և Արմազ ու ամրացրին քաղաքաբերդերը։ Իսկ Սմբատը ներս մտավ Քարթլի, որն և գերեց, քանի որ [երկիրը] չէր պատրաստվել բերդերի պաշարման համար, և Դեմոթաւում ու Սամցխեում զորք թողեց իրրև օգնություն Ծունդային և ընդեմ Օձրախոսի, ու գնաց։ Բայց [Քարթլիի] թագավորները, քանի որ քաջարի էին՝ չվախեցան և օսերի (օվսերի) հետ բարեկամացան իրենց թագավորների արյան համար, որոնք սպանվեցին, և միշտ աշխատում էին տիրել Հայքը։ Եվ Կլարջեթի և Օձրախևի (Օձրախոսի) նախարարները (էրիսթաւները) հաստատ էին Արմազելի հետ համերաշխության պահպանելու մեջ։ Սրանց օգնում էին էգրիսացիք և տիրում էին Հայքը։ Ապա նկավ Հայոց Արտաշան[11] թագավորը և Սմբատն էլ նրա հետ, որոնց դեմ քարթլները գնաց չկան, այլ ամրացրին քաղաքաբերդերը. և մոտ չորս ամիս [տևեց] Մցխեթայի պաշարումը։ Նեղ տեղն ընկան քարթլները և հաշտություն կընքեցին. հայերը գնացին։ Ապա հայերը սկսեցին պատերազմել պարսիկների դեմ, և քարթլները՝ գնալով [նրանց] ժամանակ՝ սկսեցին հայքն ավերել։ Այդ պահին հայոց թագավորն ուզարկեց իր որդի Զարգեին[12] զորքով։ Քարթլներն և օսերը վիրաված էլան, փախուստի մատնեցին Զարգեի զորքը, իսկ Զարգեին կալանավորեցին։ Իսկ օսերն ուզում էին նրան մահացնել՝ արյան փոխարեն, թեև քարթլները սրա իրավունք չտվին. ուստի և նրան կալանավորեցին Դարիալում։ Քարթլները՝ լսելով այս՝ ամրացրին քաղաքաբերդերը։ Ապա հայոց թագավորի երկու որդիները

և Սմբատն էլ [հետն] եկան Թուղք և սկսեցին բանակցել, որից հետո հաշտություն կնքեցին, և հայերը վերադարձրին Քարթլիի սահման[ներ]ը։ Իսկ քարթլնները վերադարձրին արքայազն Զարդեին և խոստացան թշնամի լինել նրանց (հայերի) թշնամիների հետ և փոզ կարել հայոց թագավորի պատկերով, և հայերը գնացին։ Եվ ուրախ էին մեր (Քարթլիի) թագավորներն՝ իրենց արիությամբ Քարթլիի սահմանները վերականգնելու առթիվ... [Սմբատիլ և Ազորի թագավորները] մեռան ի սկզբան աշխարհի 4052, վրացական 387 և Քրիստոսից 103 թվին։

Մցխեթայում թագավոր նստեց [Հ]ամազասպի որդի Մի[հ]րդատը, իսկ Սմբատում Դերակի որդի Փարսմանը։ Զնայած նրան, որ Մի[հ]րդատ և Փարսման թագավորներն իրար հանդեպ սիրով էին տամակված, Մի[հ]րդատը թշնամություն սկսեց Փարսմանի դեմ։... Մի[հ]րդատը գնաց Պարսկաստան, քանի որ Պարսից թագավորի աղջկանուհու հետ էր ամուսնացած, և այնտեղ բազմաթիվ զորք կազմեց պարսիկներից ու եկավ Երկաթաձորը (բերդ Նախ-խևի). իսկ Փարսմանը դուրս եկավ այնտեղ ընդդեմ նրա՝ Քարթլիի զորքով, և հայերն էլ օգնության կանչվեցին. և սաստիկ էին կռվում հերոսները. նրա (Փարսմանի) սպարապետ (սպասպետի) Փառնավազը, որ Փարսմանի դայակին էր, մարտի ժամանակ քսան և երեքին սպանեց։... Ապա Փառնավազ սպարապետը Փարըսմանի կնոջն և որդուն վախցրեց Հայք. իսկ պարսիկները դուրս բերին Մի[հ]րդատին, և Քարթլին գրավեցին՝ Փարսմանի մասը պարսիկները, իսկ Մի[հ]րդատին իրեն մասը վերադարձրին։ Ապա, երբ Փարսմանի որդի Ադամը չափահաս դարձավ, սա հավաքեց հայերին և հուշներին ու եկավ Քարթլի։ Այստեղ Մի[հ]րդատը Քարթլիի և պարսկական զորքով կռվի բռնվեց [նրանց հետ] Ռևխայում։ Մի[հ]րդատը պարտվեց, նրա զորքը կոտորվեց ու Մի[հ]րդատին էլ սպանեցին... 129 թվին։

[Համազասպ թագավորին[12]]... ուրացան Օձրախևի, Կլարջևթի և Էգրիսի նախարարները (էրիսթաֆլները), որոնք խորհրդակցեցին Հայքի թագավորի հետ, որպեսզի սա իր որդի Ռևին, որ [Հ]ամազասպի քեռորդին էր, թագավոր ուղարկի [Քարթլի]։ [Հայոց թագավորը] ասեց իր որդուն. ժողովվեցին հայերը և վերահիշյալ նախարարները (էրիսթաֆլները), ու գիմեցին օսերին։...

Բերին հայոց թագավորի որդի Ռևին և Արշակունի (Արշակունեանի) թագավոր դարձրին[14]....

... Հայոց թագավոր դարձավ Աասրովը (Կոսրովը)։ Այս Աասրով թագավորը սկսեց պատերազմել Բասրե [Աասանյան] թագավորի դեմ ու օգնության կանչից [Մխրդատի որդի] Ասփագուր [Վրաց] թագավորինց[15]։ Իսկ Ասփագուրը բացեց Դարիայի դուռն ու հանեց օձերին ու լեզգիներին, որոնք՝ միանալով հայերի հետ՝ գնացին պարսից դեմ, ավերեցին ու կոտորեցին շատերին։... Իսկ Աասրով թագավորի որդի՝ մանուկ Տրդատին (Տիրիդատին)՝ փախցրին Հունաստան։ Լսելով այս՝ Պարսից Բասրե թագավորն անթիվ զորք ժողովեց ու ներա մտավ Հայք։ Սրա կռպակցությամբ Ասփագուր թագավորն ամրացրեց [Քարթլիի] քաղաքներըերը։...

Թագավոր դարձավ Մխրվանը, որին Մխրհան կոչեցին, ի սկզբանե աշխարհի 4214, հունական 5773, վրացական 17, ինդիկտիոնի 13-ին, Իվերիայում, Ռանում (Բանի), Մովաքանում և Հայքում։ Իսկ երբ նա 15 տարեկան դարձավ,... ընդհատվեց Թարգմանչ (Թարգմանոսյան)—Նեբրոթյան—Արշակունյաց հարցաւորությունը [Քարթլիում][16]։...

... Աասրովի (Կոսրոսի) որդի Տրդատ (Տիրիդատն) եկավ Հայք, իր հայրինիքը, հունական զորքով, և գրավեց Հայքը, քանի որ այս Տրդատ իր հերոսությամբ սպանեց դուքերի թագավորին, որ [հունաց] կայսեր հետ էր պատերազմում, և այս պատճառով կայսրը նրան զորք տվեց։ Լսելով այս՝ Մխրհանն ընդհատեց կռիվը խազարների հետ և Պարսկաստանից բերեց արքայազնին, որին իր աղջկա հետ ամուսնացրեց և Ռանի նախաիշխանությունը (էրիսթավությունը) տվեց նրան։ Ապա նա (Մխրհանը) պարսիկներից ևս զորք ստացավ և միշտ պատերազմում էր Տրդատի դեմ։ Իսկ երբ Տրդատն օգնություն էր ստանում հույներից, Մխրհանը պարտվում էր, ճիշտ այնպես, ինչպես Մխրհանի՝ պարսիկներից օգնություն ստանալու դեպքում պարտվում էր Տրդատը։ Եվ ոչ ոք չկար միայնակ մարտնչող Տրդատի դեմ. և նրանց միջև միշտ տևող ուներ պատերազմ։ Սրա (Մխրհանի) օրոք Մցխեթա եկավ սուրբ Նինոն Քրիստոսի ավետարանը քարոզելու համար՝ ի սկզբանե աշխարհի 4263, հունական 5922, Քրիստոսից 314, վրացական 66 թվին։...

... Սուրբ Նինոն ծառայում էր Նիափորա Դվինեցի հայուհու մոտ երկու տարի։...

... Սուրբ Նինոն հետևեց այդ կնոջը, և նրանք եկան Հռոմ՝ Եփեսացի կնոջ տունը, ու տեսան այնտեղ թագավորազն տիկ-

նոջն (թագուհուն) Հռիփսիմեին (Բիփսիա) և նրա դայակ Գայանեին (Գաիանա), որոնք գտնվում էին կուսանոցում (կույսերի վանքում)՝ սպասելով մկրտության։ Երբ սկսեց Նինոյի գործերի մասին Հռիփսիմեին, և Հռիփսիմեն պիտով հաճոյացավ Նինոյին, և նույն ասրին Հռիփսիմեն և Գայանեն սպասուհիներով հանդերձ [վաղ] 30 մկրտվեցին սուրբ Նինոյի ձեռքով. և մնաց [Նունեն] այնտեղ երկու տարի։ Այդ կանանց մոտ կայսրը մարդիկ էր ուղարկել, որպեսզի նրա համար գեղեցիկ ու աքանչելի հարսնացու գտնեն, և եկան այն վանքը։ Երբ տեսան Հռիփսիմեին և տեղեկացան նրա ծագման և թագավորազն լինելու մասին, նրա գեղեցկությունից հիացան և ընդօրինակեցին նրա պատկերը, որն և մատուցին կայսեր։ Կայսրը նայեց, աքանչացավ և որոշեց հարսանիք տալ[նրան]։ Իսկ Հռիփսիմեն՝ նկատելով թշնամու նենգությունը՝ տրամեց ու ապերասում էր աստծուց փրկություն։ Ապա [Հռիփսիմեն] 93 հոգով փախավ, նրանք մոտեցան Հայքի նոր[սկսուց] քաղաք[17] Դվինին, որ Հայոց թագավորների ընակավայրն էր, և մտան հնձանի հյուսիս-արևելյան կողմում գտնվող տապավարը, և այնտեղ ծածուկ ապրում էին՝ պարապելով ձեռագործով։ Իսկ կայսրը, տեսնելով, որ իր ցանկությունը չիրականացավ, փնտրտուքներ ուղարկեց ամեն տեղ և նամակ գրեց Տրդատին, թե՝ «Ապջիկ ցանկացա առնել կնության քրիստոնյաներից, որոնք խաչեցյալին ապավինեցին, բայց մեր աստվածներին պղծարարում են. իսկ նա (Հռիփսիմեն) ինձ վիրավորանք հասցրեց ու ինձանից փախավ։ Արդ, իրրև եղբայր, [օգնիր] ինձ նրան գտնելու ու՝ երբ գտնես Հռիփսիմեին, ուղարկիր ինձ մոտ. իսկ եթե ինքդ չտվանես, ամուսնացիր հետը, քանի որ նրա նմանը չես գտնի հունական (հոհոների) երկրում. և մնաս բարով»։ Լսելով այդ՝ Տրդատը սկսեց փնտրել [կույսերին] և գտավ նրանց այն հնձանում, և նահատակվեցին Հռիփսիմեն (Բիփսիմա) և Գայանեն (Գաիանա) ընկերուհիներով, ինչպես Հայոց պատմությունն է ավանդում։ Ապա սուրբ Նինոն, որ թագնվել էր վարպի փչերի մեջ, որ գեռևս չէին ծագկել, ուղեց իր աչքերն դեպի երկինք... Ճանաչարհ ընկնելով՝ [Նինոն] հասավ Օբրանը՝ Հայքի սահմանում, ուր և ձմեռեց։ Ապա հունիս ամսին նա եկավ Ջավախեթ Փաբավանա (Փանավարքի) լճի մոտ և տեսավ հյուսիսային կողմանից լեռները, որոնք ձյունով էին ծածկված, տրամեց ու ասավ. «Ցեր, ան իմ հոգին»։ Սակայն նա այնտեղ՝ երկու օր մնալով՝

անունդ խնդրեց յեղի ձկնորսներից։ Նույն տեղ և հովիվներն արածացնում էին իրենց հոտերը և պաշտում էին Արմազին և Զադենին, իբրև աստվածների, զոհաբերություններ... որոնք խոսում էին հայերեն (սոմխուրի) լեզվով, որ Նինոն սովորել էր մի փոքր Նիափորայից, և հարցրեց նրանց՝ որտեղացի եք դուք։ Եվ նրանք պատասխանեցին, որ Սամխուրցիից, Բինծարից և քաղաք Մցխեթայից են, ուր աստվածներն աստվածություն են անում և թագավորները թագավորում[18]։...

Թագավոր նստեց Միրիան թագավորի որդի Բաքարը։ Սա իր հոր Միրիանի պես հավատացյալ էր։... Բայց սրա և հայերի միջև թշնամություն ընկավ, քանի որ հայերը թագավոր էին ուզում Ռևվի որդի Տրդատին, որ Տրդատ Հայոց թագավորի որդու որդեգիրն էր։ Այս պատճառով Բաքարը խնամիացավ Պարսից թագավորի՝ իր հորեղբորորդու հետ, և դիմեց Երկիրը Փերոզին՝ իր քրոջ ամուսնուն, որը Միրիանից ստացել էր Ռանը, և նրան տվեց Սամշվիլդեն մինչև Աշոցքի (Արցախի) գլուխը, և մկրտեց ու քրիստոնյա դարձրեց նրան՝ ժողովրդի հետ միասին և կրում էր հայերի դեմ։ Ապա հայերը՝ հավաքվելով՝ եկան Թախալեթ։ Իսկ Բաքարն օգնություն էր խնդրել խոսրովյաններից։ Սրանք եկան ու տեղի ունեցավ սաստիկ կռիվ Թախալեթում։...

...[Միրիան թագավորի օրոք[19]] վախճանվեց ճշմարտա[հավատ] Հակոբ (Յակոբ) [եպիսկոպոսը], և թագավորն [եպիսկոպոս] կարգեց հայ[ազն] Հոբին (Յոբին)՝ Ներսես կաթողիկոսի սարկավագին[20]։...

...[Վարդա-Բաքար II-ի օրոք[21]] Պարսից թագավորը զորք ուղարկեց հայերի և վրացիների դեմ, որպեսզի սրանց իրեն հարկատու դարձնի։ Սրա կապակցությամբ հայերը խորհրդակցեցին Վարդա-Բաքարի հետ, որպեսզի Երկոքյան [ժողովուրդները] ժողովվեն ու Պարսից դեմ դնան։ Այս կարծիքին էին և սրանց մեծամեծները, այսինքն որ օսերին ու լեզգիներին դուրս բերեն և հայերի հետ միասին կռվեն Պարսից դեմ։ Սակայն Վարդա-Բաքարը չհամաձայնվեց, քանի որ վախկոտ էր ու թուլասիրտ, և թաքնվեց Կախեթի ձորում։ Ապա Պարսից զորագլուխն եկավ, շրջապատեց Հայքը, ավերեց այն ու ներս խուժեց Բարթլի[22]։...

...[Տրդատ թագավորի օրոք[23]] վախճանվեց հայոց Հոբ (Յոբ) եպիսկոպոսը...

I [24]

...[Արշիլ թագավորի օրոք[25]] Պարսից թագավորը... ժողովելով իր հպատակներին ատրպատական[ցիներ]ի հետ մեսոն եկավ Բերդուջ գետի մոտ...

...[Վախտանգ Գորգասալ թագավորը[26]] առաջարկեց [Պարսից թագավորին], որպեսզի իր աղջիկն կնության տա նրան, քանի որ Բարթլիի սահմաններըը հույներն էին գրավել։ Իսկ Պարսից թագավորն ուրախությամբ տվեց իր աղջիկը կնության նրան, Հայքն և կովկասյան թագավոր[ությունն]ներն իրրև օժիտ, և պատերազմ հայտարարեց հույներին։... [Վախտանգն] անցավ Հայքի ճանապարհով, ուր նրան միացան Հայքի նախարարները (էրիսթավիները) և այնտեղից մտեցան Կարնո քաղաքին, բայց չհարձակվեցան այն գրավել։...

Ծոպրով (Ծոսրո) թագավորի և Մբրխանի գործը Հունաստանից և Տրդատի (Տիրիդատի) ու Դրիդոր Պարթևի (Պարթավեցու) գործերն... վերևում հիշատակեցինք[27]։...

...Անտիոքից վերադառնալիս Վախտանգն եկավ Ուռհա քաղաքը, ուր նրան դիմավորեցին նրա մայրն ու քույրը. ապրելան ու եկան Հայք. այստեղից... եկան Մցխեթա։...

...Լսելով [հունաց] կայսեր գալը՝ պարսիկները ընդդիմադրելու գնացին Կարնիփորա։...

[Փարաման VI-ի[28]] փոխարեն թագավոր դարձավ նրա որդի Բակուրը[29]։ Սա հույժ հավատացյալ էր և եկեղեցիներ կառուցող։ Սա մաքրեց Գիսրգիան[30] անհավատներից և աճեցրեց քահանաների[ի] և սարկավագներ[ի թիվը]։

... Սրա (Բակուրի) օրոք Հայքում կար մի իշխան (մեծավարի) անունով Վազդեն (Վասքեն)։ Սա գնաց Պարսից թագավորի մոտ, ուրացավ Քրիստոսին ու կրակապաշտ դարձավ։ Իսկ Պարսից թագավորը տվեց նրան Ասանի նախարարությունը (էրիսթավությունը) և նա ուղարկեց Այր Վազդենի (Վասքենի) կինն էր Շուշանիկը, որին նա սիրում էր ուրանալ Քրիստոսին, իսկ Շուշանիկը չհամաձայնվեց ու սպանվեց՝ ծանր տանջանքների ենթարկվելով։ Լսելով այս՝ Բակուր թագավորը ժողովեց իր զորքը և աննկատելի կերպով գնաց։ Իսկ Վազդենը (Վասքենը) կանգնած էր դաշտում՝ Կուր [գետ]ի ափին, ուր Անակերտ գետն է միախառնվում։ Այստեղ Բակուր թագավորը հարձակվեց Վասքենի վրա, որին և կալանավորեց ու [խաչ]փայտի վրա կախեց։

Իսկ Շուշանիկի աճյունը տեղափոխեց ու դրեց Յո[ւ]րտավուժ[31]։ Ապա [Բակուրը] դեսպան ուղարկեց Պարսից Թագավորի մոտ և նեղություն խնդրեց։ Իսկ Պարսից Թագավորը չէր ցանկանում, որ [Բակուր] Թագավորը հույներին հետ միանա։ Այս պատճառով նա պատրաստվեց Վազգենին (Վասքենին) և առաջարկեց Բակուրին հանդիպում ունենալ, և մի ուրիշ նախարար (էրիսթավ) ուղարկեց Ռանի։...

...[Գվարամ կուրապալատի օրոք[32]] պարսիկները գրավեցին ամբողջ Բարթլին, Հայքը և պայքարում էին հույների դեմ։...

...[Մինր Թագավորի օրոք[33]] Մուրման Մուլը... պաշարեց Հայքը (Սամխեթը), Բարթլին, Ռանը և ամբողջ Կովկասը։...

III[34]

...[Աարոնեսան II կուրապալատի օրոք[35]] միացան հայերն ու վրացիները... Գվարամ [Մամփալն] օգնեց Աարոնեսանին (Ադարնասեին) և հայերին։... Իսկ Գուրգեն կուրապալատը՝ Մեծն Աշոտի քեռորդին՝ գնաց Տաո... և բնակվում էր Շավշեթում և Արտանում։...

... Ելավ Կոստանդին Ամխազոյ Թագավորը և գրավեց Բարթլին։ Սրան թշնամացավ Հայոց Սմբատ Թագավորը, որ եկավ ու պաշարեց Ուփլիս-ցիխեն[36]. ապա նրանք հաշտություն կնքեցին, և Կոստանտինն ու Սմբատը խնամիացան։ Սմբատը պիջնց Ուփլիս-ցիխեն Կոստանտինին ու գնաց[37]։ Սրանից հետո եկավ արաբացոց ամիրա արաբ Կասիմի որդի Հագարացին։ Սրան չդիմացավ Հայոց Սմբատ Թագավորը, որը քաշվեց Ախխազոց[38] լեռները։ Իսկ ամիրան ավերեց ամբողջ Հայքը ու եկավ Տփղիս։... [Ապա] նա ավերեց Բարթլին և մտավ Սամցխե. ավերեց Ջավախեթը ու մոտեցավ Թմոգվիին, որ չկարողացավ վերցնել, և մոտեցավ Ղ'վելիին։... [Գորգանի նահատակությունից հետո ամիրան] այնտեղից եկավ Դվին։ Այնտեղ նա տեղեկացավ, որ Հայոց Սմբատ Թագավորը Կապուտյա (Կապոետի) բերդումն է, շտապ դիմեց այնտեղ ու պաշարեց, կարճ ժամանակում գաբս բերեց բերդից Սմբատի ընտանիքը, իսկ Սմբատին [խաչա]փայտի վրա կախեց Դվինում[39]։...

... Մինչ Իշխանիկ՝ Հերեթը հերձվածող էր։ Իսկ Իշխանիկը Գվարամ իշխանաց-իշխանի (էրիսթավ-էրիսթավիի) քեռորդին

էր. Գվարամի քույր Դինար թագուհին ուղղափառ դարձրեց այն (Հերեթը)[40]: Ապա Սալարյաններըը գրավել էին Պարտավը (Բարդավը) և Աբրպատականը:...

...Վրաց Բագրատիոն թագավորներըը նոտած էին Բարթլիի թագավոր... և տիրում էին Սամցխեին, որ է վերին Բարթլի, Տաոյին, Ջավախեթին, Թախալեթին, Սամշվիլդեին, Ծունանի էրիսթավությունններին, բացի Գարգարանից, Կլարջեթին, իրենց պատկանելիք բերդաաեղիներին և երբեմն Հայքին և ներքին Բարթլիին:...

...[Կվիրիկե՝ Կախեթի տերը (քորիկոզը)[41]]... Գրավեց Կախեթի բերդերը, բացի Նախճեվան—Բաճարմայի և Լոր[ծ]ոսանի[42]...

... [Դավիթ կամ Բագրատ II Ապուշը[43] տիրում էր Բասենին...

...[Բագրատ III թագավորի օրոք[44] Դավիթ կուրապալատը հավաքեց իր բոլոր ուժերը և հայերին ևս կանչեց... ապա եկավ Թախալեթ՝ Կախեթ անցնելու նպատակով...

...[Գիորգի I թագավորը[45] զորք հավաքեց ու գնաց Բասեն (Բասիան):

... [Բագրատ IV թագավորի օրոք[46] Բագրատի մայր Հեղինե (Էլենա) թագուհին, Աբշահունի [թագավորի] աղջիկը[47], գնաց Ռոմանոս [կայսեր] մոտ:...

Բագրատ թագավորի հետ միացան Լիպարիտ [Օրբելը], Իոանե Արագաձեն, Կվիրիկե Կախեթի թագավորը, Դավիթ Հերեթի և Հայոց թագավորը և Տփղիսի ամիրան, որոնք հարձակվեցին Փաղոնի վրա Եկեղյաց (Եկեղեց) [գավառում], ուր տեղի ունեցավ պատերազմ:...

... Կախեթի թագավոր էր Գա[գի]կը՝ Սամշվիլդեի Հայոց թագավորի[48] որդին:...

Ապա ուժեղացավ Բագրատ թագավորը, որ գրավեց Վևասը (sic) իրեն բերդով, և Անին (Անիսի) էլ Բագրատի մորը տվին...

... Լիպարիտը... խարուսիկ հնարով վերցրեց թագուհուց Անին:...

Լիպարիտն եկավ Կախեթից Հայոց թագավորի հետ [Բագրատի դեմ]. ճակատամարտը տեղի ունեցավ Սասիրեթի պուրակում: Բագրատի կողմնակիցները (Բագրատյանները) պարտվեցին:...

... Լիպարիտը զորք ժողովեց, [սրա հետ միասին] նաև իրեն օգնող կախերին, հայերին և հույներին, հարձակվեց թագավորի

վրա և տեղի ունեցավ սաստիկ պատերազմ: Թագավորը նորից պարտվեց: Լիպարիտը կալանավորեց Սուլային, պահանջից կալմախը: Նա չտվեց Արտանուջը: Ապա Լիպարիտը հուչներին ուղարկեց Դվին, և այնտեղից վերադարձավ: Իսկ վերադարձի տարին Բասենում երեսուն թուրքերը:...

... Նիանիան հուչների մոտ վախճանվեց Անիում:

... Բագրատի քրոջ աղջիկը, որի հետ ուզում էր ամուսնանալ սուլթանը, Հայոց Կարիկե (Կվիրիկե) Թագավորի եղբոր աղջիկն էր, և Բագրատը չտվեց [նրան]: Այս պատճառով Բագրատը գրգռեց մարդկանց, որոնք կալանավորեցին Սամշվիլդե մոնոզ Կարիկեին (Կվիրիկեին) և նրա եղբայր Մարտային, և ներկայացրին Բագրատ Թագավորին, Թագավորը Սամշվիլդեին մոռեցավ: [Սմախթիցիք] պիջնցին Սամշվիլդեն, Օփրեին և այլ բերդերը: Իսկ Բագրատը խնայեց Կարիկեին (Կվիրիկեին) և բոլորը վերադարձրեց՝ բացի Սամշվիլդեից, և նրան իր արքունիքում պահեց:... Դադը ծախեց Թպղունեն:...

[Գիորգի II Թագավորի օրոք[49]] Իսանե Լիպարիտի որդին... վախավ Հայք... Ապա Թագավորը մտավ Սամշվիլդե և Կլդեկարի[50]...

... Գիորգի Թագավորը խլեց հուչներից Անակոփիան, նաև Կլարջեթը, Շավշեթը, Ջավախեթը, Արտանուջը, և գրավեց Կարս (Կարի) քաղաքը, Վանանդը, Անին, և այն երկրի Թուրքերին քշեց՝ օգնականությամբ աստուծո: Սրանից հետո նորից եկավ սուլթան Մելիք-Շահը, պաշարեց Սամշվիլդեն, կրկին գերեց Իսանե Լիպարիտի որդուն, ավերեց Հայքը և դնաց:... Ապա Գիորգի Թագավորը գնաց Տաո, ուր նրան միացավ Գրիգոլ Բակուրիանեն, որ գրավել էր Օլթիսը և Կարնո-քաղաքը, Թագավորին տվեց Կարսը և նրա շրջակայքը: Ապա Թագավորը Թողեց Կարսում շավշեթցի ազնվականներին և ինքը հետացավ: Իսկ այս պահին ուժեղացան Թուրքերը. քանի որ հուչները Թողնում էին արևելքը և հետանում, Թուրքերը գրավում էին նրանց պատկանող երկրները: Սրանք սկսեցին նեղել քրիստոնյաներին՝ մեր մեղքերի պատճառով: Եվ քրիստոնյաների դավաճանության շնորհիվ Ղվելիում գտնվող [Գիորգի] Թագավորի վրա հարձակվեց Անմատ (Ամմատ) Ամիրն իր զորքով, որ այդ պահին վերցրել էր Կարսը, ու փախուստի ենթարկեց Գիորգի Թագավորին...

IV[51]

[Դավիթ Շինող թագավորը]... գրավեց Տփղիսը, Ռուսթավը, Սամխխեթը, Սամշվիլդեն. իսկ ամբողջ Ագարակները (Ագարանի)[52] թուրքերի ձեռին էր:...

... Թուրքերն իջնում են Կուր և Խրամ գետերի ափերը Դիդոմից սկսած մինչ Դանձա[կ]՝. իրենց տուն ու տեղով, քանի որ այս տեղերը ձմռան պահին լի են խոտով և փայտով և վայրի կենդանիներով, ... իսկ ամռանը [թուրքերը] բարձրանում են դեպի Արարատ և Աշոցք (Արագի):...

... [Դավիթ թագավորը] հարձակվեց, Տաոյում թուրքերի վրա, որոնց կոտորեց տուն ու տեղով՝ մինչ Բասեն (Բասիան)-Կարնիփորա, բերեց ավար, որով լցրեց ամբողջ Դիւրդիան[53] 1116 թվին:... Ապա թագավորը Դանուխից գնաց Երասխ (Ախաս) ափը: Զաուիկը Նախիջևանում[54] առնեց... Թագավորը Երասխ ափին հարձակվեց թուրքերի վրա, շատերին կոտորեց և գերիների բազմությունն ու մեծ ավար բերեց հետը: Սրանից հետո նա գրավեց Լոռվա բերդն ու Ագարակները (Ագարանի):...

... Սուլթանը ոսոասալար կարգեց Եղի[ղ]ուին՝ Արդուղի որդուն, որ մեծ ուժի տեր մարդ էր. սրան հանձնեց բսվանդակ թուրքաթյունը՝ Դամասկոսը, Հալեպը (Ալեփը) և բոլոր այլ շատ հարուստ [քաղաքները], Դանձ[ակ]ի աթաբակին և Հայքի ամիրաներին:...

... 1125 թ. (sic)[55] մայիսին Դավիթ թագավորը գրավեց Հայքի բերդերը՝ Գագը, Տերունականը, Գեղազանը, Նոր-Բե[ր]դը, Մանասգոմը և Ղալինջաքարը (Տալինջաքարը?): Հունիսին նա գրավեց Ջավախեթը, Կոլան, Կաոնիփորան, Բասենը (Բասիանը) մինչև Ախլեր և բնաջինջ արավ թուրքաթյանը, իսկ ամռան էլ գնում էր, գերի էր վերցնում... [Ապա] նա հրե ննթարկեց Օլթիսը և հաղթող եկավ Թռխալեթ: Ապա օգոստոսի 20-ին Բաժանյայում գտնվող թագավորին պիտեցին՝ Անի քաղաքը գրավելու համար: [Թագավորն] իսկույն և նեթ գորք ուղարկեց և ինքն էլ ուղևորվեց... Հասնելով այնտեղ, նա երեք օրում գրավեց քաղաքը, բերդը և գյուղերն՝ առանց դժվարության, կալանավորեց և կոտորեց Ալփասլանյաններին (Ալփասաբեանին), որոնք մղկիթի էին վերածել Անիի եկեղեցին, որ բյուզանդական (Հունաց) թագավորի դռնապահ Կատրամիրե (Կատրանիկա) թագուհին էր կառուցել: Թագավորը ժողովեց կաթողիկոս-եպիսկոպոսներին և

օծումով այն նորոգեց։ Ապա Թագավորը ձայն տվեց Կատրամիդի գերեզմանին. «Ուրախ լիր, Թագուհի, քանի որ ասված փրկեց քո եկեղեցին հագարացոց ձեռից»։ Իսկ նա գերեզմանից բացականչեց. «Փա՜ռք ասածո»։ Եվ լսողները զարմանում էին։ 1129 թվին (sic)[56] [Թագավորն] Անին ապնվականներին հանձնեց, [իսկ այնտեղից] բերեց [Ա]բուլասվարին 8 որդով, հարսով, ազատներով և ուղարկեց նրանց Ախլաթ։

... Մի ժամանակ ցանկություն կար հայերին վրացիների հետ դավանություն միացնել, և հավաքվեցին Քարթլի կաթողիկոս Իանեն, եպիսկոպոսները և անապատականները և հայերն էլ իրենց բոլոր [գիտուններով] և սկսեցին վեճը, [որ տևեց] մինչև իններորդ ժամը, քանի որ նրանք մոնում էին անանցանելի [գոթերի քննության մեջ] և գժվարությամբ էին [այնտեղից] դուրս գալիս։ Թագավորը՝ նկատելով այս՝ սկսեց վիճել նրանց հետ և նրանց բերանը փակեց, և նրանք ասում էին. «Աբքա՜. մենք կարծում էինք, որ սրանց աշակերտն ենք, իսկ այժմ իմացանք, որ դուք սրանց վարպետն եք [եղել]...»[57]։

V[58]

... [Դեմետրե I Թագավորի օրոք[59]] Սալդուխ դ'աւենը հարձակվեց Անի քաղաքի վրա և պաշարեց այն։ Լսելով այս՝ Դեմետրե Թագավորն իր զորքով հարձակվեց [նրա վրա]։ Տեղի ունեցավ սաստիկ ճակատամարտ, և Սալդուխն ու նրա զորքը փախուստի դիմեցին, Դեմետրեն շատերին հոշոտ ու սրի ենթարկեց, ձեռք դցեց մեծ ավար և հաղթությամբ վերադարձավ։...

...[Դեորգի III Թագավորը[60]], սառնձնելով իր Թագավորությունը սկսած Սպերի ծոցից մինչև Կասպից ծովը, դնովեց՝ հաղարացոց դեմ գնալու նպատակով... նա գիմեց Կապղան (ընագրում՝ Կաթբրևան) քաղաքը, ավերեց Ժայռոտ ձորերը և [Շահ]ի արմեն (ընագրում՝ Ամսրանի) կոչված Հայոց Թագավորի քաղաքը. ապա գնաց Արտաշատ վերին գտնվող քաղաքը. կռվով գրավեց քաղաքը, ավերեց այն ու բազմաթիվ գերիներ ու ավար վերցրեց, այնքան՝ որ Տփղիսում գերին մի դրամով էր ծախվում։ Դրանից հետո նա զվարճությամբ և սրտորդությամբ էր պարապում, քանի որ բնաիր նեստաձիգ էր։ Ապա նա արշավեց դեպի Անիի դուռն, քանի որ այն Շադադյաններին (ընագրում՝ Շանշե Դադիանի) օրոք անջատվել էր [Վրաստանից], մոտեցավ նրան

և քաղաքը Շագադյաննելի (ընագրում՝ Շանշն Դագիանի) հետ միասին իր ձեռքը գցեց, կարգի հրավիրեց սեպագիներին ու թողեց այնտեղ Բոանն Օրբելեան, իսկ ինքը արագ գնաց։ Այս պատճառով գլուխ բարձրացրին հագարացի իսմայելացիք և Շա[ն]բիեր սուլթան կոչվող Յասը (Իասը). սա զորք հավաքեց Ասորիքում (Շամ) Դիարբեքիր-Թարմիանացոց թուրքերի մեջ։ Սրանք բոլորը՝ ատաճիները տրելով՝ շարժվեցին և մոտեցան Անիին։ Լսելով այս՝ Նահապետագետում գտնվող Դիմրգի թագավորը զորաշարքերը կարգի բերեց... և շտապով եկավ Շիրակ։... [Իսմայելացիք] շարժվեցին և մոտեցան Հայքին, վերցրին Դագն և ավերեցին նրա շրջակայքը (ոտնմաննելը)։... Ապա նրանք Դագից շարժվեցին ու հեռացան։ Երբ նրանք Եկեղյաց (Էկլեցի) գետակը էին անցնում, նրանց ընդդիմադրեց թագավորի զորքը, հագարացիներից շատերին ջուրը գցեցին ու սպանեցին։ Իսկ իսմայելացիք բարձրացան դեպի Դեպարբաունիք (Գելաբաունի), և այնտեղից Անիի գոռնը մոտեցան սուլթանը, ամիրաները և սրաբանները. իսկ Անին ամրացնում էր մեծն Թորեցին պես-պես հնարագործություններով (մեքենաներով)։ Թագավորը կանգ էր առել Տաշիրում և սուլթանի դեսպանը խոպոպալեզուն հաստատելու նպատակով թագավորի մոտ էր գնում։... Ապա իսմայելացիք... շտապ վերադարձան Անիից և գնացին իրենց երկիրը։ Իսկ թագավորը շնորհեց Անին իր հայրենակիցին...

... Թագավորի զորականները նորից խնդրեցին ուզարկել իրենց արշավանքի։ Լսելով նրանց՝ թագավորը մի օր որոշեց [հրամայել] տայեցի-կլարջեթցի-շավշեթցիներին՝ պաշարել Օլթին, մեսխերին [և] Թորեցիներին՝ Կարսն և Աշոտնին (Աշոցանի), ամիր-սպասալարին՝ սամխեթցոց [երկիրը] Կուր [գետի] հարավում մինչև Գանձա[կ], հեր-կախերին՝ Ալազան [և Կուր գետի] միախառնման տեղից մինչև Շիրվան (Շարվան), իսկ ինքը թագավորը՝ Դեպարբաունիքի-Մասխի հայկուս-տայենկուս տեղերը։...

Շարներան քաղաքը գրավելուց հետո [Դիմրգի թագավորը] գնաց և ավերեց Բասենը (Բասիանը)... և հաղթող վերադարձավ։ Ապա ժամանակ առ ժամանակ նա զորք էր ուղարկում մինչ Նախիջևան, Կարս-Մասխը, Դաղվ (sic), Պարտավ-Բայդուն, և զորքը հաղթող էր վերադառնում։...

... Օրբելյանները (sic), տայեցիք, սամցխեցիք, հեր-կախները սկսեցին ավերել ու գրավել երկրները։ Տեղեկանալով սրա

մասին՝ Տիվինում գտնվող Դիմրգի թագավորը զորք ժողովից և պատերազմի ելավ Դեմետրեի դեմ, և առած զաւտառանը փախուստի մնթարկից Դեմետրեին, որ ապատան գտավ Լոռվա բերդում։ Իսկ թագավորը՝ գրաված տեղերում գերելով բոլորին և առնելով այնտեղից՝ ինքը կանգ առավ Ագարակներում։ Այստեղ նրա հետ միացան Սարգիս Մխարգրձելին իր եղբորորդով և սիրելյալ Օրբելին (sic)։ Իսկ Դեմետրեն դանձարանապետին (մեճուբզնիթուխուցեսին) ուղարկից և զորք ժողովից հեր-կախերից, լեզգիներից և վրվրացիներից... [որոնք փախուստի մատնեցին թշնամուն]։... Ապա [թագավորը] եկավ Ագարակից (Ագարա) և մտնելով Լոռվա բերդին։ Այդ ժամանակ Դեմետրեն իշխան (էրխաթավ) Վիպարիտի որդի Սմբատին և Բռանների որդի Բավթարին ուղարկից Շահի-Արմենի (Շահերմանի) և Ելդիգուզի (Էլդիգուզի) որդոց մոտ՝ խնդրելով օգնություն։ Սրանք խոստացան [օգնություն հասցնել], սակայն ասաված չէողից սրանց, քանի որ բերդապահները անզոր էին [դիմադրելու] ու նեղ տեղն էին ընկել։ Այսպիսի հանգամանքներում Դեմետրեն պարան կապից իրեն և բերդից իջավ ու իր հորեղբորը դիմից։ Սրանից հետո շատ ուրիշներին էլ դուրս բերին. [թագավորը] գրավից բերդը, տերն և տիրից, իսկ Օրբելիներին բնաջինջ արավ, միացած հանցավորներին էլ այլևայլ երկրներ աքսորից[61]։...

... [Թամար թագուհու օրոք[62]] վանձանվից սպասալար Ղուբասարը, և սպասալարությունը տվին Սարգիս Մխարգրձելուն։

... Թամարի թագավորության սկզբում իշխանավորներ էին սպասալարը՝ Սարգիս Մխարգրձելին...

1177 թվից հետո... [Վրաց զորքն] արշավից Կարսի և Կանիֆորայի վրա, [զորականները] տվերեցին [այն կողմերը] և հաղթող վերադարձան։ Իսկ թուրքերը նախ եկան Գեղարքունիք և տվերեցին Պալակացիի (Պալակացիոսի) Շնաձոր (Ջաղլխախվի) կոչված [երկիրը]։... Այս ժամանակներում կարնո-քաղաք[ացի]ք, սասպինեք (շամկիք), թուրք-գարիսացիք (գարմիրևնկի) ձիավոր-հետիոտք եկան և տիրեցին շավշ-կլարջներին։ Գուգան Տայեցին ժողովից իր երկրի զորքը. սրանց կցվեցին մհսխերն ևս..., որոնք փախուստի մնթարկեցին [թուրքերին, շատերին] կոտորեցին և գերիները բերին ու նվիրացրին թագավորին։ Ապա Մխարգրձելի Սարգսի որդին արշավից դեպի Դվին, [շատերին] կոտորից ու ավարով վերադարձավ։ Սրանց հետապնդեցին դվինեցի [և] սուրմանեցի զորքերը, որոնց հետ տեղի ունեցավ սաս-

մեկ պատերազմ. ապա փախուստի ենթարկեցին նրանց, [շատերին] կոտորեցին և հպատակ վերադարձան։

Ապա Թագավորը[63] զորք հավաքեց և ուղարկեց Դվին. այն ավերեց Պարսից երկիրը, գրավեց քաղաքներ. [զորականները] մեծ գանձեր բերին ու մատուցին Թամարին։...

Ապա Թագավորը զորք ժողովեց և ուղարկեց Գեղարքունիք, [որ] լցվել էր Թուրքերով, կոտորեցին Թուրքերին ու բազմաթիվ գերիներ բերին։

[Ապա վրացիք] մեծ արշավանք կազմակերպեցին դեպի Գանձա[կ], Բայդաւնիից ցած, [ե]րասխի եզերքը դեպի վեր մինչ Մասիս. Վարդան Դպիրանին, չորս Մխարգրձելները և մեծամեծներ-ազնվականները հետ տպհոց ու մեծ ավարով վերադարձան։...

[Թամարի նախկին ամուսին Գիորգի] Ռուսո[64] եկավ Կարնո-քաղաք։ Նրան ակղրից և եթ մխացան Կլարջեթի էրիսթավը, ապա մևախերը և հայնկուա Լիխի բնակիչները։... Տեղեկանալով սրա մասին՝ Թամարը դիմեց վրացիներին, հեր-կախերին, սամխիթցց և սասեկ երդումով համոզեցրեց չմիանալ նրանց հետ։... [Իսկ նրանք] աշխատում էին գրավել Ջավախեթը, Թաշիրեթը, Սամխիթը։...

Գամրեկել ամիրսպասալարի մահից [հետո]... ամիրսպասալարության շնորհեցին Զաքարիա Մխարգրձելուն։ Այս պահին Ռուսանը գավաճանեց և անջատվեց [վրացականից] Վաշլովանը, Տաոն, Կարսը և շատ բերդեր, ու գնաց Շահի-Արմենի (Շահրմանի) երկիրը։...

[Վրաց զորքն] արշավեց Արզրում Կարնո-քաղաքի վրա։... Իսկ [վրացիներին] օգնության եկան սուրմանեցիք, կարսեցիք, ապերացիք և Սալրսուխի որդի Նասարդինն իր երկու եղբայրներով։...

[Վրացիք] դարձյալ համախմբվեցին և եկան դեպի Գեղարքունիք, անցան Ծաչենը (Ծաչին), իջան Ղ'արադ'ար և հասան Բալդուն (sic), ավերեցին ու գերեցին [անզգացիներին], ապա դարձան հետ՝ պատերով Գանձա[կ]ի դռնով։...

... Ապա Լոռիից եկան Սարգսի երկու որդիները՝ Զաքարիան և Իվանեն ասպատակելու. [ե]րասխի եզերքը, նամանավանդ եկել էին դվինեցոց, բջնեցոց և ամբերդեցոց զորքերը, որոնք ասպատակորեն հարձակվում էին քարավաններին։ Սրանք կես ճանապարհին հարձակվում էին [թշնամու վրա] ու սասեկ պատերազմում։

Թամարի զորականները չնչին բացառությամբ վերադարձան... և ավարով լի ներկայացան ասպվածապահ Թամարին... Ապա մարդկության (բնագրում՝ կացնիս. sic) ակն արժանացրեց Դավիթն[65] ավերել Գեղարքունին, Պարսից-Բազարը (Սպարսի բազարի) և Գոլաբաուլը (sic)... հրի ու սրի ենթարկեցին [այն տեղերը] և անդամահատ գերիներ և խոստակներ (խաստագնի)[66] գցեցին ձեռքը... ապա եկան Թամարի մոտ:... Ապա աքսորված Ռուսը[67] կոստանդնուպոլսից Պարսից աթաբակի մոտ եկավ ու նրանից ստացավ Ռանեի երկիրը:...

... Ղզըլ-Արսլան աթաբակին ապաստանեցին, և նա թողեց երեք սրբի-վանականներ, որոնք և բաժանեցին երկիրը. ավագագույնին՝ Սուլաու-Ինանչիին՝ տվեց Իրակը (Էրաղը), Խորասանը և Բարելոնը, Բուրաքաբինի՝ Ատրպատականը և Հայաստանը, Ամիր-Միրինի՝ Գուրգանի ծովից սկսած մինչև Գեղարքունիքը:...

... Հունիս ամսին Դավիթը հասավ Եկեղյաց (Եկևեցի) գետ[ի ափ]ին, ուր նրան դիմավորեց հետախուզողը, որ ասաց. «Անթիվ զորք կա կանգնած Շաքորիսից մինչև Շոլիի լեռը և Վարդանաշ[ա]տից մինչև Գանձ[ակ]ի դաշտը:... Զաքարիա ամիրսպասալարն իր եղբայր Իվանեի հետ միասին շտապեց [օգնության]... հասան մինչև Գանձ[ակ]ի դաշտն և Գեղարքունիքը, ուր և գերեզին մեծ ամիրաներին՝ իրրև հավերի, 1193 թվին:...

Ապա տեղի ունեցավ մի մեծ հրաշք. Երբ Բասեն կաթողիկոսը պատարագ [մատուցեց և] ավարեց [այն], Զաքարիա ամիրասպասալարը ցանկացավ նշխար վերցնել, մինչդեռ կաթողիկոսը չտվեց այն, քանի որ նա հայտնված էր: Զաքարիան տրտմեց և հանդիմանեց կաթողիկոսին: Իսկ վերջինս ասեցին մերկացնում էր նրան, և նա չկարողացավ պատասխանել, այլ բերել տվեց Հայաստանի կաթողիկոսին և նրանց կրոնագետներին (դավանաբաններին), որոնց հետ տեղի ունեցավ երկար վիճաբանություն... Եվ ինաց Զաքարիան անվստահության մեջ, այսպես ասելով. «Թող պատասխանատու լինի ասածն նա, ով ուղարկեց (առաջ բերեց) հերձվածքը»: Իսկ նրա եղբայր Իոանեն խոստովանեց ճշմարիտն[68]:

Այս պահին կարսը դեռևս թուրքերի ձեռքին էր: Թամարը զորք ուղարկեց և քշեց թուրքերին: Իսկ այնտեղ թողին ախալցխեցի Իոանեին, որն և գրավեց շրջակա երկրները ու ավերեց բոլորը: Եվ թագավորը տվեց նրան կարսը և աթաբակությունը:... Դավիթ [թագավորը]՝ անցնելով Բասեն (Բասիան)՝ նկա-

տեց, որ սուլթանի զորքը բնակություն էր հաստատել Բոլոկեր-տում (sic)[69]:... *Ապա Դավիթը* [*հակող*] *նշանակեց Մխարգրձել Ջա-քարիային, ախալցիխեցի Շալվա և Իոանեին և Թբելեցոց*:...

...*Թամարն իր թագավորության քառնչորսերորդ թվակա-նին*[70] *հետաքրքրվեց Կարսի գրության մասին, քանի որ Մխարգրձել-ներն երկար ժամանակ պայքարում էին և չէին գրավել այն: Այս պատճառով նա* (*Թամարն*) *այնտեղ ուղարկեց Սոսլան-Դավ-թին և ինքը գնաց ու կանգ առավ Ջավախեթում: Դավիթը մո-տեցավ Կարսին և սաստիկ կռվում էր: Բերդապահները՝ նեղ տեղն ընկնելով՝ ասում էին. «Թող գա Թամարը, և նրան կհանձ-նենք* [*բերդը*]», *քանի որ ուրիշներից վախում էին: Տեղեկանա-լով սրա մասին՝ Թամարը գնաց, և նրան ավին բերդը, և Թա-մարը, կարսեցիների ազաչանքի համաձայն, հանձնեց այն իր որդի Գիորգիին և գրավից* [*երկիրն*] [*ե*]*րասխից մինչև Սպեր*...

... *Սակայն այս ուրախության պահին Թամարի աներոջն Սոսլան-Դավիթը մեռավ, լի ամենայն բարությամբ, 1199 թվին* (sic), *վրացական 419-ին* (sic)[71], *որին մեծ սուգ հետևից: Ապա ձմռան պահին, երբ Թագավորը*[72] *գտնվում էր Գեգութում, աս-տանան ոսքի բարձրացրեց Արտավելի սուլթանին, որն լսե-* [*Ջաաիի*] *կյուրակեին եկավ Անի քաղաքի դեմ: Անեցիները վրա որոնք տոնական հանդիսակատարության ու զվարճանքի համար էին պատրաստվել, լուսադեմին աննկատելի կերպով հարձակվեց սուլթանը և անթիվ քրիստոնյաներ կոտորեց. խուճապ որոնք թաքնվել էին քարանձավներում, ժայռերում ու փոսերում, ոչնչաց-ին: Եկեղեցիներում 12.000* [*հոգի*] *կոտորեց. և գնաց սուլթանը գե-րիներով և ավարով լի*:... *Ապա Ռամազան կոչված գարշելի պահին Ջաքարիա ամիրսպասալարը հավաքեց հերեթ-կախեթ-ամխեթցիներին, անցավ Գեղարքունիքը... և շրջապատեց Ար-պերդը* (*Արգեվիլը*):...

... *Թամարը հիվանդացավ, և նրան չկարողացան բժշկել ու օգտակարության նպատակով տարան Տփղիս, ապա՝ Դասո*[73] *և Ագարակ* (*Ագարա*). *սակայն ոչինչ օգուտ չտեսացավ և անցավ հանդերձյալ աշխարհ առ Քրիստոս 1201 թվին* (sic), *վրա-ցական 421-ին* (sic)[74], *հունվարի 18-ին:*

[*Գիորգի Լաշայի*[75] *շուրջը*] *համախմբված էին դանձ*[*ակ*]*ա-ցիք, [նաև] մի կողմից՝ հեր-կախեները, մյուս կողմից՝ վրացիք, ոմխեթցիք և հայերը, ապա՝ հայկուհա Լիխի՝ բեգլացի-դա-պիանները*:...

...Դիւռևս Թամարի օրոք [Վրաստանի]... հպատակ էին և հարկատու իշխանիք:...

...Զինգիս-խանը... գրավեց Զինմաչինը և մեծ Մոնղոլը (Թաթարը) 1202 թվին, վրացական 422-ին (sic)[76], ապա նրա զորքերը մտանցան Քարթլի սահմաններին ու ավերեցին Հայքը և Գագը: Թաթարների գալը հայտնեցին [Դիւրգի] թագավորին: Ապա թագավորը ժողովեց 400.000 (sic)[77] հեծելազորք ու գնաց նրանց դեմ. ճանապարհին նրան դիմավորեց Իռանե աթաբակը մեծ զորքով. իսկ թաթարները կանգ էին առել Սագիմ գեաի վրա[78]:... Սակայն թաթարները հասան մինչ Սամշվիլդե, ապա վերադարձան:...

...[Դիւրգի] թագավորը գնաց Բագավ[ան]:... [ուր] և վախճանվեց[79]:...

...Ջալալ[ա]դինը 140.000 զորքով եկավ Աւրպատականն և սկսեց ավերել Հայքը, Գագը, ուր փոքրիկ երեխաներին նույնիսկ կոտորում էր: Ռուսուդան թագավորը[80] լսելով այս՝ զորք ժողովեց, [դեկտեմբեր] նշանակելով նրանց Իռանե աթաբակին, որի ձեռքը ավեց սելջուկական դրոշը (սելճե-դրոշա) և առաքեց սուլթանի դեմ: Սրանք հասան Դվին, Իսկ խորասանցիք կանգ էին առել Գառնիում: [Վրացիք] կազմակերպվեցին և առաջընթաց զորքով առաքեցին սպասելիսների Շալվային և Իռանեին և թողեցոց: Այնտեղ եկավ սուլթան Ջալալ[ադ]դինը, որ քաջարի էր, խոհյան և պատերազմներում փորձված: Երբ առաջընթաց զորքը մտանցավ, աթաբակը դուրս չեկավ նրանց օգնության. իսկ Շալվան և Իռանեն մարդիկ էին ուղարկում նրա մոտ օգնություն խնդրելով, քանի որ, սասում էին, [թշնամուց] մտածիկ ենք. և աթաբակը չուզեց նրանց օգնել՝ դրված նախանձից և ոչ թե երկյուղից:... Ապա գաղտնի կերպով կաստակրն գարձած... Իվանե աթաբակը վախճանվեց 1214 թվին, վրացական 434-ին (sic)[81]:

... Սույն թվին[82]... սուլթան [Ջալալադինը] ավերում էր Դվինը, Անին և [նրանց] շրջակայքը:...

...Ապա Ջալալ[ադ]դինը հայտնեց Ավագ աթաբակին թագավորի վազիր կարգվելու մասին... ապա ներս մտավ Հայք, ավերեց այն, այնպես որ այնտեղ այլևս ոտք դնել չէիր. ու այնտեղից շարժվեց դեպի Տփղիս: Ապա սկսեց ավերել ու գերել Քարթլին, Կախեթը, Հերեթը, Ջավախեթը, Տաոն, Արտահանը, Սամցխեն, Անին, Կառնիֆորան, որոնց վրա իշխությունը տևեց

հինգ տարի։... Եվ սուլթանը Տփղիսից հանվեց 1233 թվին, վրացական 453-ին (sic)[83]։...

...Սուլթանը նորից շարժվեց դեպի Տփղիս 1234 թվին, վրացական 454-ին (sic)[84]։ ...Նոյիններըն՝... անցնելով մարզպ Գարակասանը՝ դուրս եկան [Ե]րասխ մոտ և մոտեցան Դանձա-[կ]ին։... Ջալալ[ադ]դինը, թողնելով Տփղիսը[85], անցավ Բյուրական-դիա (Հունաստան), իսկ թաթարները՝ տեղեկանալով սրա մասին՝ հետամուտ եղան նրան ու հասան Բասենում (Բասիանի) և ցրեցին Ջալալ[ադ]դինի զորքերը։... Թաթարները... ավերեցին Խլաթը (Խալաթի), Ալաշկերտը (Վալաշկերտի) և անցան Թավրիզ (Թավրիժ) ու գրավեցին այն. ապա մյուս տարին եկան Պարտավ (Բարդա) և սկսեցին ավերել Հայքը, Բարթլին, Դարաբանդը, Թանին, Հերեթ-Կախեթը, Դվինը։... Եկան թաթարները և տարածվեցին, Իտերեթից զատ, ամբողջ Թիֆղիսյամ[87] և Հայքում, իրրև մարեխներ, անողորմ նետողներ։...

... Ղիաս[ադ]դին սուլթանը[88] հաշտություն կնքեց և հարկադրեց [վրացիներին] հնազանդ և հարկատու լինել։ Այնտեղից վերադարձողներին դիմավորեց Խլաթի (Խալաթի) սուլթանը... և եկան Գեղարքունիք՝ լի ավարով։ Իսկ Խլաթի (Խալաթի) սուլթանը... և ուրիշները գնացին Բախտա-ղ'անի մոտ։...

Նոյիններըն բաժանեցին ամբողջ Իվերիան[89] բազմաթիվ իշխանություններին, և ավելի Շահնշահին (Շանշե) իր և Ավագ [աթաբակ]ի հայրենիքը, Վա[ն]րամ Գագեցուն ամբողջ Հայքը։...

...Լաշայի որդի Դավիթը[90] Տփղիսում էր գտնվում։ Նորին-Դավիթը[91] մոտեցավ Ավագի երկրին, և Սմբատ Օրբելյանը տարավ նրան իր տունը։...

... Ղ'ահանը հրամայեց [Վրաց] թագավորին պատրաստ լինել իր զորքով։ Թագավորն եկավ ու հասավ Ավագ աթաբակի տունը, մինչդեռ Ավագը վախճանվել էր և ժառանգ չէր թողել, այլ միմիայն մի աղջիկ Ախշաղ [անունով]։ Ավագի [մահը] ողբացող թագավորը տեսավ Ավագի կին Գվանցային և սիրահարվեց նրա վրա, ապա բերեց [Վրաստան] և ամուսնացավ հետը (հարսանիք սարքեց)։ Իսկ Ավագի զուստրն ամուսնացավ Մանկանաբերդում (Մանկաբերդում) Սապունի հետ՝ [ժառանգելով] Ավագի տունը[92]...

...Զաքարիայի որդի Շահնշահն ուղարկավ ղ'ահանին և գնաց Նարին-Դավիթի մոտ, ապա ապահով Զաքարիային։ Ապա Շահնշահն էլ մեռավ վշտալի, և Գվանցա թագուհին ևս մեռավ թաթարների մոտ՝ իր զուստր Ախշաղի կողմից թունավորվելով[93]։...

... Ղ'ահնը այդհետէյթի գնաց Շիրվան... [Թաթարներն] անցնում էին դեպի Դեղաբքունիք: Ասա Ուլու-ղ'ահնը կալա-նավարից ղ'ահնի երեք որդիներին և սպանել ավից նրանց: Հա-յով այս՝ Հունասատանում գտնվող նրանց զորքերը հավաքվեցին ու եկան Հունասատանից, անցնելով Բասենը (Բասիանի), Տաո, Արտահանը, Սամցխեն, Ջավախեթը, Քարթլ-Սոմխեթը, Ռանին և մտան Ղ'ունդուբ...

... [Վրաց Թագավորը]՝ գարնան հասնելով Դեղաբքունիք՝ ազատից Ուլու-ղ'ահնի որդի Թանգուշին, որպեսզի բաց թողնի նրան Տփղիս:...

... Այս պահին Դարուբանդի ճանապարհով դուրս եկավ Բերքա-ղ'ահնը: Հալով այս՝ Արազ'ա-ղ'ահնն իր շուրջը հավա-քեց մեծաքանակ զորք, կապեց Բոի (Մակվարիի) բերանը և Աբա-պինն (Արևպի) էլ մինչև Մցխեթա: Եկավ Բերքան, ավերեց Մովա-կանն ու Հերևեթը մինչև Տփղիս:...

... Ղ'ահնը շնորհեց [Դավթի որդի Դեմետրեին[94]] թագավո-րությունն և ամբողջ վրաստանը. բացի Սարգիս Ջաղելուց, մո-տեցրեց [նրան] Սագունին, որ ամուսնացած էր Ավագ սթաբա-խի դստեր Խվաշագի հետ. ուստի և մեծարեցավ. և ղ'ահնը վրա-տահեց ամենքին. և Ավագի Սա[հի]ր-դիվանը նրա մոտ էր. և թագավորները (sic) ավին նրան Կարսը (Կարի)[95]...

...[Դեմետրե թագավորի շուրջը,] երբ նա վերադարձավ Տրփ-պիս, ժողովեցան կաթողիկոս-եպիսկոպոսները և մեծամեծները Սոմխեթ-Քարթլից, հերևեթ-կախեթցիք, Ջավախեցի-տայցի-հլարջեթցիք... և օծեցին Դեմետրեին թագավոր 1272, վրացա-կան 492 թվին[96]:...

... Սագունը... ծառայում էր Դեմետրե թագավորին ամե-նայն հնազանդությամբ, և այս պահին ուժեղացավ Սամցխեի տոպատեր Սարգիս Ջաղ'ելին ու նրա որդի Բեքան. և գրավեց նա Տաշիս-կարսից[97] մինչև Կարնո-քաղաք, քանի որ նա իր ամբողջ էությամբ ասողածապաշտ էր:...

... Արդուն[-խանը] մտավ Հայք:...

... Վախտանգ [II թագավորը[89]] գրավեց Կարնիֆորայից մինչև Դարուբանդ, բացի Բեքա-Ջաղ'ելիի [երկր]ից:...

... Նավրուզն՝ ուղեկցվելով [դեպի Վարձիա]՝ հասավ Նախի-ջևան:... Խուտլու-Բուղան[99]՝ մտահնոտով նրան՝ սպանեց նրան ու արմատախիլ արավ նրան որդով ու ազգով, և ոչնչացրեց նրա (Նավրուզի) հիշատակը:...

...Խուալտւ-Բուզան երդվեց և մատանի տվեց դ'աենին, իսկ Խուալտւ-Բուզայի տղան և այլ զավակները տարվեցան պատանդ:...

...Դազան-դ'աենը[100] Խուալտւ-Բուզային ուղարկեց մեծ զորքով, որ և եկավ Հայք... ավերեց Սամխիթը, Բարթլին, էրծոթխանեթը:...

... Դավիթ [VI] Թագավորին[101] մեծ հավատարմություն ցույց տվին վրացական (քարթվելական) և Սամխիթի (սամխիթարնի) ազնվականները, երբ Խուալտւ-Բուզան իր զորքն երկու մասի էր բաժանել:...

...Թուրքական բռնակալն էր Ագատ-Մոլսեսը... Եվ Ագատ-Մոլսեսն եկավ ավերելու ամբողջ Վրաստանն ու հասավ Բասեն (Բասխան) և Տաո... Բեքան կոչ արավ [յուրայիններին] Տաշիսկաբիից[102] սկսած մինչև Բասեն (Բասխան) և 12000-ի [չափ] հեծելազոր հավաքեց:...

... Նոյինը դիմավորեց Վախտանգ [III] Թագավորին[103] Նախիջևանում զորքով հանդիպած...

...Գիորգի [V] Պայծառը[104] գրավեց Վրաստանը, Հայքը, հենեթ-կախեթցիներին, Բարթլին, մհսխերին, Տաոն, շավշեթկլարջեթցիներին՝ մինչև Սպեր և [Պոնտոսի] ծովը:...

[Գիորգի] Թագավորն ապաստանեց իր էրիսթավներին Կլարջեթում, Սպերում, Կալմախում, Արտանուջում և Սամցխեում, Արտահանում և Ծուն[գ]այում:...

... Նոյիններից մեկը գրավեց Ամրպատակարը. նույնը սկսեց գրավել նաև Հայքը, Ռանին և Մովսականն, ու եկավ Գյանջա:... Ապա նա առավել ևս հպատակեցրեց իրեն Ռանին, Մովսականը և Հայքը, որոնք ընդմիշտ հարկատու էին նրան:...

...Բագրատ [V Թագավորը[105]]... Օգիշիից էների դեմ ուղարկեց Դադիան-Գուրիելներին, ամխազներին ու սամխիթցոց (սամխիթարնի)...

... [Բագրատ Թագավորին, երբ նա Բուխայիսում էր գտնվում], տեղեկացրին, որ Թուրքերն ավերեցին Սամցխեն: Լսելով այս՝ Թագավորը շտապ եկավ 12000 հեծելազորքով, անցավ Փերսաթը և՝ երեք օր ու գիշեր շարժվելով՝ հասավ [Ե]րասխի հայնկուղյու:...

... [Բագրատ Թագավորի ժառանգ Ալեքսանդրեի օրոք[106] վերջինիս] հարկատու էին Ռանին, Մովսականը և Դվինը:...

...[Լանկ-]Թեմուրը[107] դրավելով Պարսկաստանը՝ ուղևորվեց մեր (Վրաց) կողմը, մտավ Հայք, [որն և] ավերեց, ամայացրեց... պաշարեց ամրոցներն ու գերեց [բերդապահներին], ապա նոյեմբերին մոտեցավ Կարսին (Կարի), պաշարեց այն և ձնաց այնտեղ [ամրոցի] ձմեռը, քանի որ այնտեղ սաստիկ սառնամանիք էր ու մեծ ձյուն էր գրած:...

...Լանկ-Թեմուրը... գարնանը շարժվեց տեղից ու՝ անցնելով Աշոցքը (Արացը)՝ եկավ ու մոտեցավ Տփղիսին:...

...Բագրատ Բագավորն եկավ ու կանգ առավ Ռունանի դիմացը՝ Բերդուջ [գետ]ի արևելյան ափին:... Բագրատը կանգ էր առել իր զորքով՝ ամեր-խերեցիներին, մեսխ-կլարջեթցիներին, հեր-կախեթցիների և սամխեթցոց (սամխեխարնի):... Թեմուրի զորքը... ավերեց Մցխեթան ու բոլոր եկեղեցիները, Քարթլիի ու Հայքի բոլոր բերդերն ու ամրոցները:...

... Ապա [Դիմրգի VII Բագավորի օրոք[108] Թեմուրը] վերադարձավ Ղարաբաղ:...

... Թեմուրին զայրացնում էր Ալիջան բերդի[109] պաշարումը [Դիմրգի Բագավորի կողմից]...

... Սուլթան [Հուսեյնը, Փիր-Մահմադը, Ամիր-Շահն ու Արաբշահները և նրանց այլ զորապետները (սպասպետները) մոտեցան Էրիջանի[110] բերդին, որ գրավել էր Դիմրգի Բագավորը:...

... Թեմուրն հասավ Թավրիզ՝ Ալիջանի բերդը գիտելու նպատակով, ապա անցավ Գեղարքունիք:... Իվանե ամթարակն ընծաներով ընդառաջ գնաց Թեմուրին, որ [մեծ] պատվով ունկնդրեց նրան: Լսելով այս՝ սամխեխար-վրացիներն էլ ներկայացան Թեմուրին:...

...[Ապա] Թեմուրն եկավ Կարս (Կարի): Տեղեկանալով սրա մասին՝ [Վրաց] Բագավորն ուղարկեց նրա մոտ Սամխեխի իշխան Իեսեին՝ խնդրելով, որ երկիրը չավերի, ասելով. «Ինչ որ նա մեզ կպատվիրի, կկատարենք»:...

...[Ապա] Դիմրգի Բագավորը հավաքեց Քարթլին, Սամխեխը, հերեթ-կախեթցիներին և սկսեց վերանորոգել ավերված [տեղերը]... և Ալեքսանդրե [Իմերեթի] Բագավորի որդի Դեմետրեին... ուղարկեց Քարթլի-Սամխեխը:...

[Դիմրգի] Բագավորը քշեց Բաթմարներին և Քարթլիի-Սամխեխի բոլոր բերդերը դրավեց:

...Գիորգի թագավորը նեղ տեղը դցեց (սև օրի հասցրեց) շրջակա մահմեդականներին մինչև [Ե]րասխի ելերքը՝ ավերելով և թալանելով նրանց:...

...[Երբ] Ալեքսանդրե [Իմերեթի] թագավորն եկավ Քարթլի, [նրա շուրջը] համախմբվեցին վրացիները (քարթվելները), սամխեթցիք (սամխեթարնի) և հերեթ-կախեթցիները, որոնք և կանգ առան Կոխատայում:...

1430 թվին, վրացական 118-ին,... սարկինոզներն (sic) եկան ու անապատավորեն գրավեցին Լոռին, ավերեցին Սամխեթը մինչև Սամցխե, ապա վերադարձան...

...1431 թվին, վրացական 119-ին, [Ալեքսանդրե] թագավորն[111] եկավ Քարթլի,... ապա՝ զորք ժողովելով՝ եկավ Ամբերդ, կարգավորեց տեղական [դործ]երը և հնազանդեցրեց [Թշնամուն] 1432 թվին, վրացական 120-ին: [Ապա] թագավորը մոտեցավ Լոռիին, առավ այն և բնաջինջ արավ սարկինոզներին ու գրավեց Լոռին, կրկին հարկատու դարձրեց Ռանին, Մոզականը և Շիրվանը:

...1433 թվին, վրացական 121-ին, երևաց անձն Շա[հ]-Ռուխը, որ տիրեց Պարսկաստանի մի քանի մասերին, [ապա] եկավ ու գրավեց Ապրեջանը և մտավ Հայք:... [Ապա] Շա[հ]-Ռուխը... Թողեց [Հայքն] ու վերադարձավ:...

...Ալեքսանդրե թագավորը՝ զորք ժողովելով՝ մտավ Ղարաբաղ 1437 թվին, վրացական 125-ին:... Տեղեկանալով սրա մասին՝ շիրվանցիք և գարաբաղցիք վախեցան նրա (Ալեքսանդրեի) ուժից և եկան նույն Ղարաբաղը մեծամեծ ընծաներով:...

...Ալեքսանդրե թագավորը [սովորաբար] շրջում էր ամբողջ թագավորությունը, ձմռան [լինում էր] Իմերեթում, ամռան՝ Սամցըխեում, Կլարջեթում և Թոխալեթում, աշնանն ու գարնանը՝ Սամխեթում, Քարթլում, Հերեթ-Կախեթում:...

1441 թվին, վրացական 132-ին (sic), Վախտանգ [IV] թագավորը[112] շատ կերպով ժողովեց հայնկույա և հայկույա [Լիխի], հերեթ-կախեթցիների և սամխեթցոց (սամխեթարնի) զորքերը և գնաց դեպի Սամցխե:...

...1462 թվին, վրացական 150-ին,... Գիորգի [VII] թագավորը[113] ... ժողովեց Քարթլ-Սամխեթի և հերեթ-կախեթցիների զորքը և հրամայեց [Սամցխեի] աթաբակին գալ Սամցխեի զորքով:... [Այդ պահին] Գիորգի թագավորին... տեղեկացրին, որ

«Թավրիժ, Գիլաքն ու Թեմուրը (sic) եկել են Բարթլի և ավերում Հայքն ևս:... Դիորգի Թագավորը սկսեց նրանց դեմ պատերազմ, և հաղթեց նրանց... 1463 թվին, վրացական 151-ին:...

...Դիորգի Թագավորը ժողովեց իր շուրջը վրացց, սամխիթցց (սամխիթարնի) և հերեթ-կախեթցիների զորքերը, եկավ ու կանգ առավ Փարվանի (Փանավարի) վերևը... 1465 թվին, վրացական 153-ին:...

...1466 թվին, վրացական 154-ին,... Իմերեթի Բագրատ Թագավորը՝ տեսնելով Դիորգի [Բարթլիի] Թագավորի կալանավորումը [Սամցխեի Ղ'վար-ղ'վարև աթաբակի կողմից]՝ զորք ժողովեց,... որպեսզի տիրի Բարթլիին, Սամխիթին, հերեթ-կախեթցիներին:...[Սակայն] Դիորգի Թագավորն անզոր էր:... [Մինչդեռ] Բագրատ աթաբակը ժողովեց Սամցխեի ու Կլարջեթի զորքը ու բերեց Դիորգի Թագավորին Սամխիթ, ուր բոլոր սամխիթցիք (սամխիթար)-վրացիները միացան Թագավորին:... Ապա Դիորգի Թագավորը գրավեց Բարթլին ու Սամխիթը:...

Սրանից հետո Դիորգի Թագավորը տիրում էր և կառավարում էր Բարթլին, Սամխիթը և Հերեթ-Կախեթը»

ՏԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Վախուշտիի «Վրաստանի պատմության» առաջին մասը (ըստ մեր բաժանման) զրեթե բառացի կրկնություն է, տեղ-տեղ պերիֆրազ, XI դարի պատմիչ Լեոնտի Մրովելու հյուսած տեղեկություններին: Սրա մասին տես «Վրաց աղբյուրներից» I հատորը, էջ 143 և այլն:

2 301—237 թթ. նախ քան մեր թվականը: Այստեղ և ստորև մինչև վերջը տարեթվերը նշվում են համաձայն Վախուշտիի ժամանակագրության՝ ըստ Դ. Բաքրաձեի հրատարակության (Թր. 1885):

3 Միրվան (Միրվանի), Վրաց Թագավոր, 162—112 թթ.:

4 Աբշակ Թագավոր, 93—81 թթ.:

5 Արտակ (Արտագի), Վրաց Թագավոր, 81—66 թթ.:

6 Բարտոմ, Վրաց Թագավոր, 66—33 թթ.:

7 Միրվան II, Վրաց Թագավոր, 33—23 թթ.:

8 Ադերկի (Ադերկիի), Վրաց Թագավոր, 2 թ. ն. ք.—65 թ. ք. հետո:

9 Կաոս և Փարսման, Վրաց Թագավորներ, 72—87 թթ.:

10 Ազորկ (Ազորկիի) և Արմազել (Արմազելի), Վրաց Թագավորներ, 87—103 թթ.:

11 Հավանական է, որ Արտաշեսի մասին է խոսքը:

12 Հայոց արքայազնի անունը «Զարմհ» ուղղակի հիշեցնում է II դա-

բի նախ քան մեր թվականը Հայոց Զարեհ թագավորի անվան հունական ձևը «Զաբիադրես», որ պահպանել է Սարաբոնը՝ Geographica, XI, 14, 5 և 15 (հմմտ. Օտար ազբյուրներ հայերի մասին. № 1. Հունական ազբյուրներ. Սարաբոն... Բաղեշ և Թարգմանեց Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Երևան, 1940, էջ 56[57],64[65]). հմմտ. նաև՝ Ա. Բ ո ր ե լ ի, Հայաստանի Արտաշես թագավորի արձանագրությունները,—«Սովետական Հայաստան», 1941 թ. № 39. И. Орбели, Расшифровка древних надписей, „Известия", 1941 г. № 27 (= „Заря Востока" 1941 г. № 19). Հ ա կ ո բ Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա. Երևան, 1944, էջ 128—133. Л. Меликсет-Бек. Armeno-Hebraica, —„Труды Гос. Ист.-Этногр. Музея евреев Грузии", т. III, Тб. 1945, стр. 229—232 (և առանձին). К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении (II в до н. э.—IV в. н. э.), М.-Л. 1953, стр. 162—174. Վախուշտիի տեղեկությունները ուշագրավ են այն տեսակետից, որ համաբուժ են Զաղիկին Հայոց Արտաշան (= Արտաշես) թագավորի որդի, մինչդեռ քան պրոկ. Ա. Բ ո ր ե լ ի վերծանած արամեատառ արձանագրության՝ Զաւիր—Զարեհը Արտաշեսի հայրն է:

12 Համադանայ (Ամադասի), Վրաց թագավոր, 182—186 թթ.:

14 Ռևի, Վրաց թագավոր, 186—213 թթ.:

15 Աստիդատ, Վրաց թագավոր, 262—265 թթ.:

16 Վրաց թագավորների շարքի, ծննդարանության և ժամանակագրության սուտգումը սկսած 284 թ. նախ քան մ. թ. մինչև IV դարի սկիզբը մ. թ. հետո, տե՛ս Ի ն ջ ի ջ ի ա ն ի ուսումնասիրության մեջ՝ Հին վրացական մատյանը «Քարթլիի դարձը» (մաքսիմալ Քարթլիսայ) և անտիկ դարաշրջանի Իբերիայի թագավորների ցանկը, վրացերեն,—«Վրաստանի Պետ. Համալսարանի Տեղեկագիր», XI—B, Թբ. 1941, էջ 259—320, հատկապես 314—317:

17 «Նոր-քաղաք»=հունարեն «Կայսրապոլիս», Վաղարշապատի նախնական անունն է, որ Վախուշտին շփոթել է Դվինի հետ:

18 Տե՛ս Յ ծանոթությունը. Հմմտ. «Վրաց ազբյուրների» I հատորը, էջ 166—174:

19 (Մխրձան), Վրաց թագավոր, 364—379.:

20 Հմմտ. Վրաց դարձի պատմությունը և Լեոնտի Մրովելի՝ «Վրաց ազբյուրների» I հատորը, էջ 21, 175:

21 Վարդա-Բաբաթ (Վարդա-Բաբաթի), Վրաց թագավոր, 379—393 թթ.:

22 Հմմտ. «Վրաց ազբյուրների» I հատորը, էջ 174—176:

23 Տրդատ (Տիրիդատ), Վրաց թագավոր, 393—405 թթ.:

24 Վախուշտիի «Վրաստանի պատմության» երկրորդ մասը (ըստ մեր բաժանման) վերաշարադրված է XI դարի Վրաց պատմիչ Ջուանշեր Ջուանշերյանի հաղորդած տեղեկություններից: Հմմտ. «Վրաց ազբյուրների» I հատորը, էջ 188—196:

25 Աբչիլ, Վրաց թագավոր, 410—434 թթ.:

26 Վախտանգ Գորգասալ (Գորգասլան), Վրաց թագավոր, 446—499 թթ.:

27 Հմմտ. 20 ծանոթությունը:

28 Փարսման VI, Վրաց թագավոր, 542—557 թթ.:

29 Բակուր, Վրաց թագավոր, 557—570 թթ.:

30 *Գիւրգիա=Վրաստան* Georgia, *այսուհետեւ* la Géorgie, Georgien, Georgia. *հմմտ.* Л. Меликсет Беков. Страна св. Георгия.—„Известия Кавк. Отд. Рус. Геогр. О-ва", т. XXIV, № 2, 1916, стр. 222—228 *(և առանձին)։*

31 *Յուրաքանչիւր, ինչպէս և Շուշանիկի մասին, «Վրաց ազգյուրներէ» I հատորում (էջ 12—15) հիշված գրականութիւնից զատ, տե՛ս հետևյալ նորագոյն գրականութիւնը. Լ. Մելիքսեթ-Բեկ, Թռիալեթ-Ծալկայի նյութական կուլտուրայի հուշարձանների և տոպոնիմիկայի ուսումնասիրութեան համար, վրացերեն,— „За марксистское языкознание", Ժողովածու, Թր. 1934, էջ 38—44* P. Peeters, Sainte Sousanik, martyre en Armeno-Géorgie (14 décembre 482—484).—„Analecta Bollandiana", Bruxellis. LIII. *1935*, pp. *5—48, 245—307. Յակոբ Յուրաքանչիւրեան. Վկայաբանութիւն Շուշանիկայ. վրացական և հայկական բնագրերը ուսումնասիրութեամբ, վարիանտներով, բառարանով և ցանկերով լույս ընծայեց Իլիա Աբուլադզե, Թր. 1938, 063+120 էջ։*

32 *Գվարամ (Գուրամ) կուրապալատը, 576—600 թթ.։*

33 *Միհր 663—668 թթ.։*

34 *Վախուշտի «Վրաստանի պատմութեան» երրորդ մասը (ըստ մեր բաժանման) հիմնականում վերաշարադրուած է XI դարի անանուն վրաց պատմիչից հատուկտած տեղեկութիւնների։ Հմմտ. «Վրաց ազգյուրներէ» I հատորը, էջ 200—209։*

35 *Աբարներսեհ (Ադարնասե) կուրապալատը, 881—923 թթ.։*

36 *Ուփլիսցխեի մասին տե՛ս «Վրաց ազգյուրներէ» I հատորը, էջ 209—210, ծան. 7։*

37 *Այստեղ, ժամանակագրությունը խախտելով, Վախուշտին խոսում է Աֆխազաց կոստանտին թագավորի և Սմբատ Խոստովանող Հայոց արքայի միջև եղած պայքարի մասին X դարի սկզբին։ Նույնը Վախուշտին կրկնում է և իր «Իմերեթի պատմութեան» մեջ (տե՛ս ստորև, էջ 69)։ Հմմտ. «Վրաց ազգյուրներէ» I հատորը, էջ 202, 209—210, ծան. 6, 8 և 9։*

38 *«Աֆխազք» (Աֆխազեթ) սովորաբար արևմտյան Վրաստան է նշանակում։*

39 *Այս էպիզոդը, որ Վախուշտին կրկնում է իր «Կախեթի պատմութեան» մեջ (տե՛ս ստորև), XI դարի անանուն վրաց պատմիչից է բխում։ Հմմտ. «Վրաց ազգյուրներէ» I հատորը, էջ 203 (նաև 93)։*

40 *Տե՛ս նախորդ ծանոթագրությունը. հմմտ. «Վրաց ազգյուրներէ» հատորը, էջ 203, 98, ծանոթ. 2։*

41 *Կվբրիկե, կախեթի տեր (բորբիկոզ), 929—976 թթ.։*

42 *Կախեթի սահմաններում գտնվող «Նախճևան» և «Լօրծօրանի» տեղանունները կարող են հատուկ ուսումնասիրության և տառադարձման։*

43 *Բագրատ II, 958—994 թթ.։*

44 *Բագրատ III, Վրաց թագավոր, 980—1014 թթ.։*

45 *Գիւորգի I, Վրաց թագավոր, 1014—1027 թթ.։*

46 *Բագրատ IV, Վրաց թագավոր, 1027—1072 թթ.։*

47 *Պետք է լինի՝ Մարիամ Արծրունյաց թագավորի աղջիկը. հմմտ. նաև «Վրաց ազգյուրներէ» I հատորը, էջ 138—139։*

48 Համմ. «Վրաց աղբյուրներից» I հատորը, էջ 205, 207, 211—212, ծանոթ. նաև՝ 27 Լ. Մելիքսեթ-Բեկ, Դ. Ագայանի «Արուեստն և Մանվելն» ու Սամշվիլդեի որձաքարը, —«Արշավ» (Թբ.), 1940 թ. № 4, էջ 52—55:

49 Գեորգի II, Վրաց թագավոր, 1072—1089 թթ.:

50 Կղեկարների մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Կղեկարներ, վրացերեն, —«Պատմ. Տեղեկագիր» (Թբ.), 1924 թ. № 1, էջ 167—172:

51 Վախուշտիի «Վրաստանի պատմության» չորրորդ մասը (ըստ մեր բաժանման) վերամշակումն է XII դարի անանուն հեղինակի «Դավիթ արքայից արքայի պատմության» երկի: Համմ. «Վրաց աղբյուրներից» I հատորը, էջ 216—220:

52 Ըստ Ն. Բերձենիշվիլու ձեռագրության (Հին Թբիլիսիի տոպոնիմիկայից. Ագարանի. «Մնիմոսինվիլի», II, Թբ. 1951, էջ 36—60. վրացերեն) Ագարանիի տակ պիտի հասկանալ Թբիլիսիի շրջակայքը՝ Շինդիսի, Տաբախմելա, Կոջորին, որոնք XII—XIII դդ. ծառայել են իբրև ամառանոց Վրաց թագավորների և մեծամեծների համար:

53 Տես 30 ծանոթագրությունը:

54 Նախիդուբին, ըստ մեր հետազոտության («Վրաց աղբյուրներից» I հատոր, էջ 14), նախկին Ցուրտաւի է:

55 Պիտի լինի 1123 թ.:

56 Տես նախորդ ծանոթագրությունը:

57 Այս վեճի շուրջը մանրամասն տես Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարպապետ Հայոց հիւսիսային կողմանց etc., վրացերեն, Թբ. 1928, էջ 133—139:

58 Վախուշտիի «Վրաստանի պատմության» հինգերորդ և վերջին մասը (ըստ մեր բաժանման) մի առանձին կոմպիլյացիա-պերիփրազ է XIII—XIV դդ. վրաց անանուն պատմիչների և ժամանակագրների հաղորդած տեղեկությունների, որ մենք ամփոփած ունինք սույն աշխատության II հատորում:

59 Դեմետրե I, Վրաց թագավոր, 1125—1154 թթ.:

60 Գեորգի III, Վրաց թագավոր, 1156—1184 թթ.:

61 Մանրամասնությունները տե՛ս նաև Դ. Բուրջանձյու հիշատակարանում (Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1952, № 2, էջ 113—120) և Սո. Օրբելյանի «Պատմութիւն Տանն Սիսական»-ի 66-րդ գլխում:

62 Թամար, Վրաց թագուհի, 1184—1213 թթ.:

63 Քանի որ Թամարն ինքն էր դահակալ, այլ ոչ դահակալի ամուսին-թագուհի, ուստի և վրաց աղբյուրներում կոչվում է «մեփե», «մեփոս»—բագավար. արմա, և ոչ «գեգոփալի» բագուհի: Այսպես էր և Թուսուդանը:

64 Նույն Ցուրին՝ Անդրեյ Բոգոլյուբսկու որդին:

65 Այսինքն՝ Դավիթ Սոսլանին (Օս-Ալանին):

66 Վրացերեն «խվաստագնի»-ն բանկցս դորձածված է վրաց հին դրականության մեջ: Ծննդոց դրքի XLVII, 18, հայերեն տեքստի «ելեալ արծաթ էր՝ պակասաց, և ելեալ խաշինք և տացուածք՝ առ քեզ են տէր» նախադասությանը վրացերենում համապատասխանում է. «գոդաքմու մոակլդա վեցխլի չուենի դա սաքոնելնի դա խուսաստագի չենդա միմարթ ուփլեսայ չուենսայ» (նուչնը սլավոնական-ռուսականում, „серебро истощилось и стада скота нашего у господина нашего", ուր վրացերեն «խուսաստագի»-ին համապատասխանում է скот բառը): XI դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովե-

լին այս բառը բազմիցս գործածում է Փառնավազ Թագավորի մասին խոսելիս (Քարթլոս-կյովբերա, Աննա Թագուհու դրչագիրը, վրացերեն, 1942, էջ 15—16, համմ. Բրոսսեի հրատ., էջ 30), ինչպես և նույն դարի մյուս պատմիչ Ջուանշեր Ջուանշերյանը՝ Վախտանգ Գորգասալի մասին պատմելիս (նույն տեղ, էջ 98, ըստ Բրոսսեի՝ 115), վերջապես և XIV դարի անանուն ժամանակագիրը՝ մոնղոլական արշավանքների վրաստանի դրությունը նկարագրելիս (Բրոսսեի հրատ., 344, 379, 412)՝ «խոստակի», «խուստակ», «խուստագի», «խվաստագի» ձևով:

Առանձնապես հետաքրքրիր է XIV դարի ժամանակագրի հիշատակությունները «խվաստագի»-ի՝ հետևյալ կոնտեքստներում. ա. «Քոզիկ և՝ ագխր, և՝ ինչքը, և՝ խվաստագի՛նը» (էջ 344), «շատ դրբ տվեց իր ագխով, ընչքով և խվաստագի՛ով» (էջ 379), «ոսկու և արծաթի և կրամահներին և խվաստագի՛ին հաշիվ չկար» (էջ 412):

Ռոստոմ I Վրաց Թագավորի (1634—1658) 1645 թ. մի դուլարում, ըստ վկայության Դ. Բաքրաձեի (Վախուշտի «Վրաստանի պատմություն», էջ 40, ծանոթ.), խվաստագի նշանակում է «մանր եղջերավոր անասուն»:

Բառարանագետ Սուլխան-Սաբա Օրբելյանը (Սուլխան-Սաբա Օրբելիանի Վրացերեն բառարան, Թր. 1949, էջ 466) «խվաստագի»-ն մեկնաբանում է՝ «սաբռնելի դա սադ՝ոլելի», այսինքն անասուն և ագխ (ինչք), մինչդեռ Քելիա և Դամանայի վրացերեն վերծանում նա նշանակում է փող, ապրուստ կամ դանձ:

Ըստ Մ. Բրոսսեի (M. Brosset, Rapport sur l'ouvrage intitulé etc., 1847, p. 15—16 և ծանոթ. 4, նույնի — Histoire de la Géorgie, I Partie, I-e livraison, SPB., 1849, p. 38, n. 4) և Վ. Լանգլուայի (V. Langlois, Essai de classification des suites monétaires de la Géorgie, 1860, p. 12) «խվաստագի»-ն նշանակում է թե՛ չորքոտանի անասուն-մալ, խաշն (pecus, pecunia) և թե՛ դրամ, դանձ: Բառարանագետ պրոֆ. Դ. Ջորբենովը (Грузино-русский словарь, СПБ. 1887, стр. 742) նշում է, որ «խվաստագի»-ն ունի 2 իմաստ՝ տավար-ոչխարի (անասունի) և դրամի, ինչպես լատիներենում՝ pecunia; скот, животина; сокровище, богатство, деньги». Ըստ Ն. Մառի (Грамматика древнелитературного грузинского языка, Лнгр. 1925, стр. 018) «խուստակի»—скот, скотина.

Ամենայն կասկածից դուրս է, որ «խվաստագի»-ն նույն հայերեն-փահլավերենի «խոստակ»-ն է, որտեղից առաջացած է «խոստակ-դար»-ը, այսինքն «խոստակ ունեցող», «խոստակին տիրող», համեմատ դեպք շարժական և ոչ թե անշարժ գույքի, կայքի տեր և՛ տնօրենի իմաստով:

Հայերեն «խոստակ» և «խոստակդար» բառերի առնչությունը տե՛ս Նոր բառգիրք հայկազյան լեզվի, I, էջ 967. Առձեռն բառարան, 387. H. Hübschmann, Armenische Grammatik, 161, Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, III, 595—597. Я. А. Манандян, Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении, Тифлис, 1932, стр. 9—11. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 9, 17, 104—118, 122, 124, 133, 135, 145, 147. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, I, Երևան, 1939, էջ 190—191, Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, II, Երևան, 1944, էջ 286:

67 Տե՛ս 64-րդ ծանոթագրությունը:

68 Այս հատվածը կրկնությունն է «Թագակիրների պատմականն ու դավանանքը» երկի XIII դ. ֆանատիկ պատմիչի կողմից հյուսածի. հմմտ. «Վրաց աղբյուրներից» I հատորը, էջ 16—20 (հատվածը բերում ենք համառոտաբար):

69 Հմմտ. նույն պատմիչի երկում զրպարտված «Բոլոսական» վարդանանով «Բոլոսական» և «Բոլոսական», «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 21 և ծանոթ.:

70 Այսինքն 1184+24=1208 թ.:

71 Իսկապես պիտի լինի 1208 թ.:

72 Հմմտ. 63-րդ ծանոթ.:

73 Բառացի՝ «Առճուճ», «Փիճուճ»:

74 Իսկապես պիտի լինի 1213 թ.:

75 Գիորգի-Լաշա, Վրաց թագավոր, 1213—1222 թթ.:

76 Ուղիղ՝ 1211 թվից սկսած (Զինդիս-խանը դ'ահն 1206—1227 թթ.):

77 Այլ աղբյուրներում՝ 90.000:

78 Տե՛ս «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 51, 63—64, ծանոթ. 4:

79 Ըստ Ի. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու հետազոտության («Վրաց ժողովրդի պատմություն, վրացերեն, III, Թբ. 1941, էջ 5, նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), վրացերեն, Թբ. 1949, էջ 101)՝ 1222 թ. 18 հունվարին. հմմտ. «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 44:

80 1222—1247 թթ., հմմտ. 63-րդ ծանոթ. (Ջալալադինը Խորեզմշահ 1220—1231 թթ.):

81 Իվանե աթաբակի մահը տեղի է ունեցել 1225 թվին. հմմտ. «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 52:

82 Ըստ Ի. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու հետազոտության (նույն տեղ, III, 10)՝ 1225 թվին:

83 Ուղիղ՝ 1226 թ. (նույն տեղ, 14):

84 Ուղիղ՝ 1226—1227 թթ. (նույն տեղ, 15):

85 1227 թ. (նույն տեղ, 15):

87 Տե՛ս 30-րդ ծանոթ.:

88 Իկոնիայի (Ռումի) սուլթան 1237—1247 թթ.:

89 Իվերիա=Վիրք (Քարթլի)= Արևելյան Վրաստան, հմմտ. Л. Мелик-сет-Беков, Новый взгляд на происхождение названия „Иверия“.— „Известия Кавк. Отд. Рус. Геогр. О-ва“, т. XXIV, № 1, 1916, стр. 36-—40 (և առանձին):

90 Ուլու-Դավիթը, Վրաց թագավոր, 1243—1259 (ուղիղ՝ 1243—1271) թթ.:

91 Նարին-Դավիթը Ռուսուդանի որդին՝ աթաբակից 1230 թ., թագավոր 1247 թ., վախճ. 1293 թ.:

92 Հմմտ. «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 58:

93 Նույնը, 59:

94 Դեմետրե II, Վրաց թագավոր, 1273 — 1289 (ուղիղ 1270—1289) թթ.:

95 Հմմտ. «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 59—60:

96 Ըստ Ի. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու հետազոտության (նույն տեղ, III 105)՝ Դեմետրեին պետության կառավարությունը տանձնեց 1278 թվին:

97 «Տաշիս-կարի» այժմյան Բորջոմիի հովիտն է Խաշուրիի մոտ:

98 Վախտանգ II, Վրաց թագավոր, 1289—1292 թթ.:

99 Խուտլու-Բուղայի մասին, ի միջի այլոց, տես H. Marr, Фресковое изображение барса Хут'лу-буги в Ахпате,— „Христ-Восток", т. I, 1912, стр. 350—353:

100 Մոնղոլական դ'ան 1295—1304 թթ.:

101 Դավիթ VI, Վրաց թագավոր, 1292—1310 թթ.:

102 Տես 97-րդ ծանոթ.:

103 Վախճ. 1304 թ...:

104 Գիւորգի V, Վրաց թագավոր, 1318—1346 (ուղիղ՝ 1314—1346 թթ.):

105 Բագրատ V, Վրաց թագավոր, 1360—1395 թթ.:

106 Ալեքսանդրե I, Վրաց թագավոր, 1413—1442 թթ. (ուղիղ՝ 1412—1443 թթ.):

107 Լենկ-Թեմուր կամ Թեմուր-Լենկ, մոնղոլական դ'ան, 1360—1405 թթ:

108 Գիւորգի VII, Վրաց թագավոր, 1395—1407 թթ.:

109 Ալինջան=Ալինջա-դ'ալա=Երնջակ (նույն էրինջանն է):

110 Տես նախորդ ծանոթագրությունը:

111 Տես 106-րդ ծանոթագրությունը:

112 Վախտանգ IV, Վրաց թագավոր, 1445—1445 թթ.:

113 Գիւորգի VIII, Վրաց թագավոր, 1445—1469 թթ.:

«ՔԱՐԹԼԻՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ի՝

(1469—1744)

1469 թ. [Հետո]... Կոստանտինե [Բարթլիի թագավորն[1]] ամբացրեց Տփղիսը, Սամխիին և Լոռին:... Կոստանտինեն տիրում էր Տփղիսին, մխիւլ-մոխելգինեբին[2], Սամխիին և Լոռիին:...

1468 թ. [Հետո]... Բայադետի սրդիք, Սաամբուլի՝ նախկին Կոստանդնուպոլսի՝ սուլթաններըը կռվում էին փրանկների դեմ.... Ուզուն-Հասան դ'աենը[3] եկավ Հայաստան, ավերեց այն և մտավ Բարթլիի Սամխիը:... Իսկ Կոստանտինե թագավորն ուժեղացավ և գրավեց Տփղիսը և Թուրքերի (Թախտարների) կողմից ավերած բերդերը, ապա հրամայեց բարեխչաններին և սամխեցոց հարձակվել այն ցեղերի վրա, որոնց դ'աենը Բարթլիի սահմաններում էր թողել:...

1529 թ.... սուլթան Սուլեյմանն[4] եկավ Երևանի դեմ և գրավեց այն: Սրանից վրաստանի բնիկները վախեցան. սակայն ստոված նրանց փրկեց և խոնթքարը վերադարձավ Բաղդադ:...

1536 թ. ... [Շահ-Թամազը[5] գրավելով Տփղիսը՝] զգլբաշ պահապաններ մտցրեց բերդի մեջ, իսկ ինքը գնաց Ղարաբաղ:

1539 թ. ... Հայերը լիակատար հաշվում շեղվեցին[6]։... Քանի որ այդ պահին Սամցխեն իմերների Բագրատ թագավորն[7] ուներ գրաված, օսմանցիք Բագրատի հետ կռվելու եկան Բասեն (Բասիան)։... [Բագրատ և Լևաբրսար[8]] թագավորները հասել էին Բասեն։...

1548 թ. ... [Լևաբրսար] թագավորն իր ժողոված զորքով գնաց, սթեփանոսից խլեց Սամցխեն, Ջավախեթը, Կլարն և Արտահանը, որ և գրավեց իր համար։ Այս բոլորի մասին սթեփանոսը ծանուցեց պ'ահլոնին, և Շահ-Թամազը շտապ շարժվեց՝ նրան օգնություն հասցնելու նպատակով։ Եկավ ու ավերեց Շաքին, շրջեց Քարթլիի Սամխիթը։ Լևաբրսար թագավորը չկարողացավ ընդդիմադրել։ Ապա [Շահ-Թամազը] մտավ Սամցխե և գրավեց այն, կալանավորեց Իջուին և Շերմազանին, որոնց և սպանեց, իսկ ուրիշներին գերեց, անցավ Հայոց ձոր և գնաց Երևանի վրա։...

Ապա եկավ խոնթքար սուլթան Սուլեյմանը։ Լսելով սրա մասին՝ Շահ-Թամազն եկավ ու կանգ առավ Արտահանում, պ'ահլոնը ավերեց Սամցխեն, գրավեց Կարսը (Կարի), որ և ավերեց։...

1556 թ. ... պ'ահլոնը խաներ կարգեց Ռանում, Մոխախանում, իսկ Երևանում բեգլարբեգ, և սրանց սաղարպլյաներ. ապա կարգեց խաներ և սուլթաններ, որոնք են. բեգլարբեգը՝ էրեսթավների էրեսթավ, խանը՝ էրեսթավ, սուլթանը՝ խևխոսերի։... Լևաբրսար թագավորը՝ պատերազմելով՝ քշեց թուրքերին (թաթարներին) և գրավեց Քարթլին և Սամխիթը և բոլոր բերդերը։...

1577 թ. ... խոնթքարի զորքը գրավեց Երևանը, Գյանջան և Թավրիզը։...

1578 թ. ... սամխիթցիք շատ վնասեցին օսմանցիներին։... Հոկտեմբերին Սվիմոն թագավորը[9] կանգ առավ Սամխիթում։...

1580 թ. ... սթեփանոս Դ'վարդ'վարեն և Բեքան հարձակվեցին Լոռի վրա, ավերեցին ու գնացին։ Ապա եկավ Մանմադ-փաշան կամ Սինան, և սրա զորքը գրավեց Լոռին. սա ինքն գրավեց և Դսրվա բերդը։...

1581 թ. [Սվիմոն] թագավորն եկավ Լոռի և այն գրավեց ապրիլի 1-ին։...

1583 թ. ... խոնթքարը մեծ զորք ուղարկեց. [օսմանցիք] եկան ու մտեցան Լոռուն, որն և գրավեցին։... Իսկ... թագավորը՝ [վերցնելով] Դրանիսը՝... կարճ ժամանակում գրավեց բոլոր բերդերը, բացի Դսրուց և Լոռիից։...

1590 թ. ... օսմանցիք՝ դուրս գալով Լոռվա բերդից և հեռանալով, որ [Սվիմոն] թագավորը նրանցից հեռու է գտնվում՝ զվարճանում էին Տաշիրում, երբ հանկարծ Սվիմոն թագավորը հարձակվեց նրանց վրա և բնաջինջ արավ նրանց։...

1600 թ. ... օսմանցիք վերցրին Լոռին և տեղավորեցին այնտեղ պահապաններ, իսկ իրենք գնացին ու Սվիմոն թագավորին տարան Ստամբուլ։ Ապա Գիորգի [արքայազնը[10]] գրավեց, բացի Լոռիից, ամբողջ Քարթլին ու վերջինիս բերդերը։...

Սվիմոն թագավորի մահից հետո նրա որդի Գիորգին թագավոր օծվեց Տփղիսում 1600 թվին։ ... Ապա [Գիորգին] զորք ժողովեց ու մոտեցավ Լոռին 1601 թվին, և գրավեց այն։...

Ապա եկավ Շահ-Աբասը[11] և մոտեցավ Երևանին 1602 թվին..., կանչեց իրեն մոտ Գիորգի թագավորին և Կախեթի բատոն Ալեքսանդրեին։ Սրանք՝ ժողովելով իրենց զորքերը՝ գնացին Երևան՝ նեղկացնելու ղ'աենին։ Շահ-Աբասի զորքը երեք կողմից մոտեցավ Երևանին, իսկ մի կողմն էլ բռնեցին սրանք (վրացիները)։ Մի քանի օրից հետո Շահ-Աբասը հրամայեց գրոհ տալ բերդին։ Այդ պահին վրաց զորականներն առաջինները ներխուժեցին բերդը, կոտորած կազմակերպեցին ու խլեցին քաղաքները։ Ապա պարսիկները մտան և Շահ-Աբասը բերդաքաղաքը գրավեց։ Շահ-Աբասը դիմեց Գիորգի թագավորին. «Եթե խոնթքարն իմ թշնամին էր, առավել ևս քոնն էր. ուստի և պարտ է քեզ իրրև պարգև տաս ինձ Լոռին Բերդուջ[12] գետից սկսած»։ Թագավորը սաստիկ տրտմեց ու պատասխանեց. «Ես քեզնից էի սպասում իրրև պարգև մի որևէ քաղաք իմ հոր և իմ ծառայության համար, և ոչ թե իմ սահմաններում եղածից խլելը»։ Իսկ Շահ-Աբասը նենգ էր և ուզում էր Քարթլին նվաստացնել, մանավանդ որ Լոռվա իշխան-խանը (էրիսթավը), որ փախել էր ու մահմեդականացել, դրդում էր Շահ-Աբասին թուլացնելու Քարթլիի մեծ ուժը և առավել ստիպում էր, որպեսզի [թագավորը ղ'աենին] դիջի Լոռին՝ Բերդուջ գետի ակունքից սկսած։...Ուժասպառ եղած Գիորգի թագավորը դիջեց Լոռին [Շահ-Աբասին]։

...Երբ թուրք (թաթար) խաները Դռեսի գաշտով էին անցնում, գրեցի մի տերտեր (տեռտեռա[13])՝ նկատելով այդ՝ շտապ վերադարձավ և Գորվա կամուրջը քանդեց[14]։ Թուրք (թաթար) խանները՝ գտնելով կամուրջը քանդած՝ մտան Սացխենո։...

1615 թ. ... Շահ-Աբասը... ասաց [Լուարսաբ թագավորին]. «Դու ասպետ ես և քաջ նետող, որի գնանք Ղարաբաղ»։...

1619 թ. ... [Բագրատ թագավորի[15]] ամուսին Աննան իր որդի Սվիմոնի հետ գնում էր Տփղիսում և Սամխխում:...

1623 թ. ... վրաց զորքը... ավերեց Գյանջան, Ղարաբաղը և մեծ ավարով վերադարձավ Բարթլի:...

1624 թ. ... Ամիրգունա-խանը՝ Երևանի բեգլարբեգը՝... եկավ Մարտգայի լեռան մոտ:... Ապա [զղլբաշները գնացին] ավերելու Սամխխ-Սարաբախիանոն:... Սամխխի մելիք Աթաբեգն ու Զաքումը համախոհ էին դ'աենին:...

1626 թ. ... Մուրադ[16] գուսաբը Ճեաց Ա[ր]զրումում:...

1634 թ. ... [զղլբաշները] Ռոստոմ թագավորին[17] ուզարկեցին օգնության Ղափա-Շամշադին-Լոռի խաներին:

1635 թ. ... եկավ խոնթքար Մուրադն և գրավեց Երևանը, [և] 1636-ին վերադարձավ: Ապա Մուրադ խոնթքարն ու Շահ-Սեֆին[18] հաշտություն կնքեցին. խոնթքարին Ճեաց Իմերեթը, Սաաթաբագոն և Ջյուրդստանի կեսը, իսկ դ'աենին Ճեաց Երևանը, Բարթլին, Կախեթը և Ջյուրդստանի [մյուս] կեսը:...

1638 թ. ... Ռոստոմը այցելում էր Գորին, Ցխինվալը, Տփղիսը, Սամխխը և միշտ զվարճանում էր և ուրախ էր... Իսրամին [Ռոստոմ] թագավորը բերեց Ա[ր]զրումից:...

1664 թ. ... Վախտանգ թագավորը[19] վերաշինեց և ընդարձակեց Բարթլին, Թախալեթը, Տաշիրը, Աշոցքը (Արտոյի), որոնք ամայի (անմարդաբնակ) էին դարձել:...

1667 թ. ... Շահ Սուլեյմանը[20] ցանկացավ ամուսնացնել Շահ-Աբասի այրիին (նախկին կնոջ) Աջուկային, որ [Շահնավազ] թագավորի դուստրն էր, և նրա հետ ամուսնանալ ցանկացան և՛ Շեխիլխանը, և՛ Լոռիստանի խանը:... Իսկ թագավորը նրան... Լոռվա խանին[21] տվեց:

1669 թ. ... Ցիցին... հանդիպում ունեցավ Իշխաուտրուքի (Իշխուտարուքի)[22] կամրջի մոտ:...

1687 թ. ... Սամխխի մելիքն [էր] Ջյամար-բեկը:...

1691 թ. ... [Էրեկլե] թագավորն[23] եկավ Սամխխ-Սարաբախիանոն:...

1695 թ. ... Նագարալի խանն ու Քալբալիխանը շրջեցին Սամխխը, Դմանիսի ձորը և կանգ առան Ղարաբուլախում: Քալբալիխանն և Երևանի խանն [իրար] թշնամիներ էին:... Երևանի խանը շատ սեզևկացրեց դ'աենին [Վրաց] թագավորի [Իմերեթի] գնալու մասին: Լսելով այս՝ դ'աենը շնորհեց [Երևանի] խանին թոփանչի-ապաուրթյուն, իսկ թագավորի մոտ ուղարկեց մեհ-

մանգաբ-հյուրընկալին։ Սա եկավ Ալի[24]. թագավորն էս, որ տեղյակ էր սրան, հասավ Ալի։ Մենմանդարը մեծ պատիվներով ուղարկեց թագավորին, որ անցավ Բարթլին, շրջեց Աաենի կողմը, անցավ Թոխաթեք, Աշոցքը (Արցի) և հասավ Երևան 1696 թվին։ Ապա գնաց Սպահան ու ներկայացավ շահ-Նին։...

1709 թ.... Վախտանգ [թագավորը][25] ձմռան պահին որսորդում էր Ղարայա[զ]-Սոմխիթում, աշնանը և գարնանը Գոքեում և Տփղիսում, ամառանը Թոխաթեքի Շամբիանում։...

1719 թ.... [Վախտանգ թագավորը] կալանավորեց Սոմխիթի մելիք Ջամագ-բեկին, որին հրացանով գնդակահարեց։...

1722 թ.... Մահմուդ-ղ'ալի խանը[26] [Տփղիսն առնելու համար] հետը բերել էր, իրրև օժանդակողների, Գյանջայի խանին, Երևանի գորքը և լեզգիներին։...

[Վրաց գորքը Վախուշտիի գլխավորությամբ] կոտորածի ենթարկեց Բորչալու ցեղերին. իսկ երբ խանն Ազջակ'ալա բերդից դուրս եկավ, գորքը վերադարձավ [Բորչալուից] և կանգ առավ Ծոփեում[27]։ Երկրորդ օրը թալանն ընդհատեցին։ Սոմխիթցիք անզգուշացրին խանին, որ Վախուշտին դուրկ է գորքից... Ա[ր]զրումի փաշան Ղարսումն (Ղ'արսի) էր գտնվում, նպատակ ունենալով պաշարել Երևանն ու գրավել Ապրելջանը։...

1723 թ.... սարսափյարը գտնվում էր Ղարսում (Ղ'արսի) և դուրս եկավ այնտեղից։...

1724 թ.... Թամենաի կաթողիկոսը[28] գնաց Լոռի, քանի որ այն գեռևս օսմանցիք չէին գրավել։...

1728 թ.... Խազ'-փաշան բաժանեց Բարթլին. Սոմխիթ-Սաբարաթխանան ավեց Էրասա Ղ'ափլանիշվիլուն... Խազ'-փաշան մեծարեց Տփղիսի մելիք Աշխարէրեկին։... Բնակչություն չէր մնացել Մուխրանում, Բարթլիում, Սագիցխաուռնոյում և տեղ-տեղ Սաբարաթխանո-Սոմխիթում ոչ մի բան, բացի ամրացներից։...

1734 թ.... օսմանցիք գրավեցին Թավրիզը, և [Շահ-Թամազ] գ'ուկն[29] ընդհատեց պայքարն Երևանի համար և ինքը գնաց Մարտան։ Շահ-Թամազին ուղեկիցները փախուստի ենթարկեցին [գեպի] Երևան, և նա՝ փախչելով՝ հասավ Սպահան։...

... Թամազ-խանը գարնանը թողեց Գյանջան,... շրջեց Սոմխիթը, Դրանիսը, անցավ Ղ'այդ'ուլին և հասավ Ղարս (Ղ'արսի)։ Այդ ժամանակ այգտեղ էր եկել իրրև սարսափյար Քոփրուլը մեծ զորքով։ Իսկ Թամազ-խանը, որ ոչ մի բանով չվախեցրեց Ղարսին

(Ղարսի), վերադարձավ և կանգ առավ Երևանից վերև։ Երրորդ օրն առավոտյան Բոփրուլին էլ եկավ զորքով. շարժվեցին, և այնտեղ տեղի ունեցավ սաստիկ կռիվ, սպանեցին Բոփրուլին, և օսմանցիք փախան։... Օսմանցիք պինդ եղան Երևանը, Գյանջան, Լոռին, Տիփլիսը թամազ-խանին, որը և գրավեց [այդ տեղերը]։ Վերջինս Երևան կանչեց վրացիներին, որոնց և կալանավորեց, բացի մխիթարյան Բակխտարս Ղազիանիշվիլուց, որ այդ պահին սպասրապետ (սպասպետի) էր, և կալանավորվածներին Տիփլիս ուղարկեց։...

1737 թ. ... լեզգիները մտան Տաշիր։ Լսելով այս՝ Սեֆիխանը, որ Դաղեստանն էր նստած, իսկ մինչ այդ խան էր Տիփլիսում ծանուցեց վրացոց։... Բակխտարս սպարապետը (սպասպետը) հետամուտ եղավ Տաշիրից անցնող լեզգիներին, որոնց հասավ, հետները կռվի բռնվեց ու բնաջինջ արավ նրանց, և շատ քչերը փախուստի դիմեցին։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Կոստանտինե III, Վրաց թագավոր, 1468(1478)—1505։ Մանրամասն տես Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, հ. IV, պրակ I, Թբ. 1924, էջ 133—183. Նույնի՝ Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, հ. IV (XV—XVI դարեր), Թբիլիսի, 1938, էջ 127—172. Նույնի՝ Վրաստանի պատմությունը (XI—XV դդ.), Թբիլիսի, 1949, էջ 255—258։

[2] Վրաստանի լուսնականներն են։

[3] Ուզուն-Հասան կամ Հասան-բեյ, Ակ-կոյունլու թուրքմենական ցեղի խան, 1466—1478 թթ.։

[4] Սուլեյման կամ Սյուլեյման I, Օսմանցոց սուլթան, 1520—1566 թթ.։

[5] Շահ-Թամազ, Պարսից շահ, 1525—1676 թթ.։

[6] Խոսքը ծագարակի մասին է։

[7] Բագրատ, Իմերեթի թագավոր, 1511—1548 թթ.։

[8] Լևարսաբ I, Վրաց թագավոր, 1534—1558 թթ.։

[9] Սվիմոն I, Վրաց թագավոր, 1558—1600 թթ.։

[10] Սվիմոն I-ի որդին, հետագայում Գիորգի IX Վրաց թագավոր, 1600—1605 թթ.։

[11] Աբաս I մեծն, Պարսից շահ, 1587—1629 թթ.։

[12] Բերդույջ գետը տվյալ կտակաբանում նշանակում է Ջորագետ-Դերեդը (Դերեզա-չայ). համմ. «Վրաց ազբյուրներից» II հատորը, էջ 63—64։

[13] Տես տվյալ աշխատության Ա. գլխի 26-րդ ծանոթագրությունը (էջ 19, 22)։

[14] Համմ. «Վրաց ազբյուրներից» II հատորը, էջ 141։

[15] Բագրատ VI, Վրաց թագավոր, 1616—1619 թթ.։

16 *Խոսքը Գիորգի Սահակաձեին է վերաբերում, որ «մեծ մոուբավ» կոչումով է հայտնի։ Մանրամասն տե՛ս Առաքել Դավրիժեցու պատմության գլ. IX—XII։*

17 *Ռոստոմ I, Վրաց թագավոր, 1632—1658 թթ.։*

18 *Մուրադ IV Դադի, Օսմանցոց սուլթան, 1622—1639 թթ., և Սեֆի կամ Սաֆի I, Պարսից շահ, 1629—1642 թթ.։*

19 *Վախտանգ V Շահնավազ կոչված, Վրաց թագավոր, 1658—1675 թթ.։*

20 *Սուլեյման կամ Սյուլեյման I, Պարսից շահ, 1666—1694 թթ.։*

21 *Հավանական է, որ Լոբի[ստան]ի խանի մասին լինի խոսքը և ոչ թե Լոռիի խանի։*

22 *Հմմտ. սույն հատորի Ա. գլխի 32-րդ ծանոթագրությունը (էջ 20, 23)։*

23 *Էրեկլե I, Վրաց թագավոր, 1688—1703 թթ.։*

24 *Ալիի ձորում (Դումի կայարանի մոտ, Սուրամից դեպի արևելք), ուր երբեմն՝ XV դ.՝ հայտնի էր հայկական գաղութ բազմաթիվ եկեղեցիներով և գերեզմանատներով։*

25 *Խոսքը Վախտանգ VI-ի մասին է, որ Վրաստանի կառավարիչ էր 1703—1711 թթ. և թագավոր 1719—1724 թթ.։ Մանրամասն տես «Վրաց ազբյուրներից» II հատորը, էջ 126—130։*

26 *Մահմադ կամ Մահմուդ, Պարսից բռնակալ, 1722—1725 թթ.։*

27 *Ծոփքի մասին մանրամասն տե՛ս* С. Т. Еремян, Заметки к тексту „Хроники Сумбата". —*«Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական ֆիլիալի», 1941 թ. № 9, Երևան, 1942, էջ 27—30։*

28 *Խոսքը Վախտանգ VI-ի եղբայր Դամենաի IV Վրաց կաթողիկոսի մասին է, որի հայրապետության ժամանակամիջոցը 1705—1742 թթ. է ընկնում.* Michel Tamarati. L'église géorgienne des origines jusqu'a nos jours, Rome, 1910, p. *375)։ Այս Դամենային 1739 թ. գերի է տարվել օսմանցոց կողմից կ. Պոլիս (հմմտ. նույն՝* Histoire du catholicisme en Géorgie avec les documents justificatifs du XIII-e au XX siècle, Tiflis, *1902, p. 353, հմմտ. 308)։*

29 *Թամազ կամ Թահմազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.։*

«ԿԱԽԵԹԻ ԵՎ ՀԵՐԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

(687—1744)

917 թ. ... հիշատակ է անվան Աբրնևրսեհ (Ապարնասե) պատրիկի և նրա որդու՝ Դինար թագուհու ամուսնու, և նրանց որդի Իշխանիկիի։...

918 թ. ... Դինար թագուհին, Հերևքն հերձվածքից ուղղափառ դավանության դարձնից[1]։

1039 թ. Կվիրիկե Կախեթի[2] թագավորը զավակ չունենալով՝ որդեգրել էր իր քեռորդուն՝ Սամշվիլդեի Հայոց Դավիթ թագա-

վրի[2] որպէս Գա[գի]կին[3], և Կվիրիկէ թագաւորի մահից հետո այս Գա[գի]կը Կախեթի թագաւոր նստեց։ Այս Գա[գի]ն օդնեց Բագրատ թագաւորին[4], Տփղիսի վրա արշաւելու պահին... և ներկայացավ Բագրատ թագաւորին, երբ Բագրատը Տփղիսը գրավեց։... Բագրատ թագաւորը գրավել էր Հերեթը, իսկ Գա[գի]կը՝ Կախեթը։ Ապա 1058 թվին Գա[գի]կը մեռաւ։

Գա[գի]կից հետո Ադարբանը նստեց Կախեթի թագաւոր[5]։

... Ալեքսանդրէ [թագաւորը][6] բաժանեց իր որդոց [երկրները]. ավագագունին՝ Բագրատին՝ ավեց Իմերեթը, երկրորդին՝ Դիորգին՝ ավեց Քարթլին, Սամխեին ու Սամցխե-Կլարջեթը, երրորդին՝ Դավթին՝ ավեց Հերեթը ու Կախեթը։...

1547 թ. ... [Լևան Կախեթի թագաւորն] անցավ Ղարաբաղ գ'աւնի մոտ[7]։...

1548 թ. ... Դավիթ-Մանմագը փախավ Դյուլաուանի բերդը,... իսկ Շահ-Թամազը գրավեց Շիրվանը, ուր նստացրեց Բեգլարբեգին և իր սուլթաններին, ապա նորից անցավ Ղարաբաղ։...

1574 թ. հետո... Շահ-Թամազն եկավ Ղարաբաղ։...

1602 թ. Շա[հ] Աբաս[8] եկավ Երևանը գրավելու նպատակով։... Երևանը վերցնելուց հետո [Շահ-Աբասը] ավեց Ալեքսանդրէ [Կախեթի թագաւոր]ին Կախը։...

1616 թ. հետո... աթաբակը ավեց [Մանուչարին] Օլթիսը. Թեյմուրազ [Կախեթի թագաւորն] էս գնաց այնտեղ ու թողեց Խափրեչան թագուհուն և Կախեթի արքայազուտրներին Օլթիսում։...

1620 թ. հետո... Շա[հ]-Աբասը հրամայեց Երևանի բեգլարբեգ Ամիրգունա-խանին. «Գնա և տարձակվիր Օլթիսի վրա ու Թեյմուրազի կնոջը (թագուհուն) բեր ինձ մոտ իբրև դերի»։... Թեյմուրազը հաղթական եկավ Օլթիս։...

1629 թ. հետո... [Թեյմուրազ թագաւորը] զորք ժողովեց, գնաց ու դերեց Արազի [ավազանի] ներքին [մասը], Պարտավը (Բարդա), Ղարաբաղը, Շամշադինն ու Ղափանը, և բազմաթիվ ավարով հաղթող վերադարձավ։...

1661 թ. ... Շա[հ]-Աբասը ուղարկեց Թեյմուրազին Աստարաբադ (Աստարաբաթ)։...

1663 թ.... Աստարաբադ (Աստարաբաթ) գնացած Թեյմուրազը հենց նույն ձմեռը վախճանվեց։...

1712 թ.... լեզգիները ավերում էին Քարթլին, Ղափանը, Շամշադինը, Ղարաբաղը և Շիրվանը։...

1716 թ. ... [հարեցիք].... ավերեցին Ղարաբաղը, Շաքին:...

1723 թ. ... Էրեկլե թագավորի[9] որդի Մանմադ-դ'ուլի-խանը, որ ծառայուհուց էր ծնված և որին Կոստանտինե կոչեցին,... եկավ ու կանգ առավ Ղազախում, քանի որ դ'ահնը նրան էր ավել Երևանը, Շամշադինը և Ղազախը:...

1734 թ. ... Թամազ-խանը[10] կանչեց Թեյմուրազին[11] Երևան:...

ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *911 և 918 թթ. նևբրս այստեղ հիշատակած դեպքերը Վախուշտիից շատ առաջ նշված են «Վրաց (Քարթլիի) մատյան»-ում, որ գրված է XI դ. անանուն հեղինակի կողմից: Համմ. «Վրաց պատմագրերի» I հատորը, էջ 203, համմ. 98:*

[2] *Դավիթ Անհողին կոչված Հայոց Կուրիկյանց թագավոր, 989—1048 թթ.: Հայոց Կուրիկյան հարստության (Լոռի-Տաշիրում) և Դավիթ Անհողինի մասին տես Դ. Ս ո ն ի ն ի Վ. Մ ո վ ս ի ս ե ա ն, Լոռի Կուրիկեան թագավորներու պատմութիւնը [«Ազգային Մատենադարան», 95], Վիեննա 1923, 93 էջ, ապագուցակով. Е. А. П а х о м о в, О монете Корике Куропалата,—„Известия Кавк. Ист.-Арх. Института", т. III, Тифлис, 1925, стр. 37—45 (մեր հավելվածով, էջ 46—48), Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, «Վարդապահք Հայոց հիւսիսային կոմմանց» etc., վրացերեն, Թր. 1928, էջ 24—32. Նույնի՝ Վ. Ագայանի «Արուեստն և Մանվելն» ու Սամշվիլդեի արձաքարը,— «Արշավ» (Թր.) 1940 թ. № 1, էջ 54—55:*

[3] *Գագիկ (Գակ), կախեթի թագավոր, 1039—1058 թթ.:*

[4] *Բագրատ IV, Վրաց թագավոր, 1027—1072 թթ.:*

[5] *Ագսարթան, կախեթի թագավոր, 1058—1084 թթ.:*

[6] *Ալեքսանդրե I մեծն, Վրաց թագավոր, 1412—1443 թթ.:*

[7] *Ի նկատե ունի Թամազ կամ Թահմազ I, Պարսից շահին, 1525—1576 թթ..*

[8] *Աբաս I մեծն, Պարսից շահ, 1587—1629 թթ.:*

[9] *Էրեկլե I, Վրաց թագավոր, 1688—1703 թթ.:*

[10] *Թամազ կամ Թահմազ II, Պարսից շահ, 1729—1736:*

[11] *Թեյմուրազ II, Վրաց թագավոր, 1745—1762:*

«ԻՄԵՐԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

(686—1745)

921 թ. (sic) ...Կոստանտինե [Ախթազից թագավորը] և Սմբատ Հայոց թագավորը կռվում էին Քարթլիում: Ապա նրանք հաշտություն կնքեցին և Քարթլին գրավեց Կոստանտինեն[1]:...

1392 թ. [Իմերեթի թագավոր] Կոստանտինեն՝ Բագրատ որդին և Ալեքսանդրեի ու Դիմարքի թագավորի եղբայրը, և Դեմետրեն՝ Ալեքսանդրե թագավորի որդին գեգերում էին Բասենում (Բասխանում) ու Ճուցին այնտեղ չորս տարի։

1401 թ. Դիմարքի թագավորը[2] Կոստանտինեի եղբորորդուն և Ալեքսանդրե թագավորի որդի Դեմետրեին հատկացրեց Սամխիթը։...

1470 թ. Կոստանտինեն[3] ամրացրեց Տփղիսն ու Սամխիթը։...

1535 թ. ... Շահ-Թամազը[4] կանգ առավ Ղարաբաղում. Բագրատ՝ [Իմերեթի] թագավորը գնաց Շահ-Թամազի մոտ, խնդրելով օգնություն։... Ամենքարն ուղարկեց Ա[ր]զրում-Դիարբեքիրի փաշային Սուլթանի հայտնության գնվող զորքով։...

1545 թ. ...օսմանցիք մտել էին Բասեն։...

1568 թ. ...Դադիանեան օգնություն հասցրեց խոնթքարը ուղարկելով Ա[ր]զրում-Տրապիզոնի զորքը։...

1660 թ. ... Ասլան-փաշան վախտանգին[5], Դարչոյանին և Քեթեվանին[6] ուղարկեց Օլթիս։...

1678 թ. ... Ասլան-փաշան... ուղարկեց Ա[ր]զրումի փաշային Սուլթանի հայտնության գնվող զորքով։... Արչիլ՝ Կախեթի թագավորն[7] եկավ Կուլրիթ (sic) և իր բոլոր գործերի մասին դեկուցեց Ա[ր]զրումի փաշային։ Ապա Ա[ր]զրումի փաշան Ասլան-փաշային գլխատեց։...

1687 թ. ... Ա[ր]զրումի փաշային հրամայվեց, որպեսզի Արչիլին թագավոր նստացնի [Իմերեթում][8]։ Ապա Ա[ր]զրումի փաշան ուղարկեց Քևնա-[Ճուսուփ-բեկ]ին մեծ զորքով։...

1691 թ. ... Դիլչիդո [Չերքեզների տերն] ուղարկեց [Իմերեթի] թագավորին Բասեն (Բասխան)։...

1701 թ. ... խոնթքար Մուստաֆան[9] զայրացավ և ուղարկեց Ա[ր]զրումի փաշային մեծ զորքով [Իմերեթ]։...

1716 թ. Ա[ր]զրումի փաշան զորք ավեց Ա[ր]զրում գնացած Դուբլել-[իշխան]ին։...

1721 թ. ... Դիմարքի [Իմերեթի] թագավորի նախկին կին Թամարը և Դաբրիել Ճղոնդիդելին[10]... գնացին Ա[ր]զրումի փաշայի մոտ։... Ա[ր]զրումի փաշան դիմեց Խազ-փաշային։...

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Այստեղ ժամանակագրության խախտումով խոսվում է Ախիսգաց (արևմտյան Վրաց) Կոստանտին թագավորի և Սմբատ Զորավանդոց Հայոց*

արքայի պայքարի մասին Քարթլիում, Գորի-Ուփլիսցիխեի շրջանում, X դարի սկզբին: Այս հարցի շուրջը պատմութիւնների և գրականութեան տեսութիւնները տե՛ս «Վրաց պատմութիւնների» I հատորը, էջ 202, 203—210, ծանոթ, 6, 8 և 9, նաև սոյն աշխատութեան Դ. գլուխը՝ «Վրաստանի պատմութիւն»-ից հատված III և ծանոթ. 37 (էջ 39, 57):

2 Դեմետրէ VII, Վրաց թագաւոր, 1395—1407 թթ.:

3 Կոստանտինէ III, Վրաց թագաւոր, 1469 (1478)—1505 թթ.:

4 Թամազ կամ Թամմազ I, Պարսից շահ, 1525—1576 թթ.:

5 Դարեջան թագուհու ամուսինը, թագաւորապետ:

6 Դարեջան թագուհու եղբորորդու՝ Բագրատ թագաւորի կինը:

7 Աբչիլ I (1647—1713), երբեմն Կախեթի և երբեմն Իմերեթի թագաւոր, պահպանում էր 1664—1675, 1678—1679, 1690—1691, 1695—1696 և 1698 թթ.:

8 Տես նախորդ ծանոթագրութիւնը:

9 Մուստաֆա II, Օսմանցոց սուլթան, 1694—1703 թթ.:

10 Ճղոնդիդիի (Մարտվիլիի) մեհրապոլիտը:

«ՍԱՄՑԽԵ-ՍԱԱԹԱԲԱԳՈ-ԿԼԱՐՋԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

(508—1746)

... Աւսլրը ծնեց Բահանային, Բահանան ծնեց Դանին, Դանը ծնեց Սոզոմոնին, Սոզոմոնը ծնեց յոթն եղբայրներ, որոնք են՝ Բագրատ, Արգամար, Բորակ, Դուբսամ, Սահակ, Աամամ և Վարդավարդ: Սրանք եղան փղշատցոց երկրից (Փիլիստիմից) և եկան Ռաքայել սիկնոջ (թագուհու) մոտ: Այս Ռաքայել սիկինը (թագուհին) մկրտեց սրանց և Բագրատին իրեն փեսա դարձրեց, իսկ Արգամար և Մուշեղին (Մոսրալին) Հայոց թագաւորի հետ խնամացրեց[1]:

619 թ. հետո... հուդնները խլեցին [վրացիներից] Սպերը:... Աարնեբուհն (Ագարնասեն)... նշանակված էր Հայքի կոմսերում:...

826 թ.... Դուբսամ մամփալը սիրեց Ջավախեթին, Թռխալեթին, Աշոցքին (Արտցին) և Հայքի այլևայլ տեղերին, քանի որ Դուբսամ մամփալն ամուսնացած էր Հայոց թագաւորի դստեր հետ և [հայերը] հնազանդ էին Բագրատին:...

983 թ.... Դավիթ [Աարնեբուհի որդին] սիրեց Տայքին (Տաոյին), Բասենին (Բասիանին), Թորթումին, Հայքին և տեղ-տեղ Կարջեթին, Շաւշեթին. Ջավախեթում գրավել էր բերդեր և հողեր:... Բագրատիոնները սիրում էին Տաոյին, Կարջեթին, Իսպիրին, Շաւշեթին, Արտահանին[2]:

1268 թ. ... Դեմետրե թագավորն[3] իր կրտսեր որդի Գիորգիին ուղարկեց իշխան. և Դեմետրեից հետո, ինչպես գրված է, Վախտանգը[4] գրավեց Կարնիփորայից մինչ Դարաբանդ:

1486 թ. (sic)... Յապաւր դ'աւնն[5] անցավ Աշոցքով (Ախուրով) և մոտեցավ Ախալքալաքին և ավերում էր շրջակա երկրները:... Սեպտեմբերի 25-ին դ'աւնի զորքը կոտրած էր Բարթլիի Սամխեթից:...

1500 թ. հետո... Ա[ր]դրում-Տրապիզոնի փաշանները սկսեցին ավերումներ կատարել Սասթարագոյում և Ճանեթում:...

1545 թ.... սուլթանն... ուղարկեց Ա[ր]դրումի և Դիա[ր]բեքիրի փաշաներին՝ Սուպի հայկական երկրներին զորքով:... Լսելով այս՝ Բագրատ [Իմերեթի] թագավորը բերեց Լուարսաբ թագավորին[6] և Բաուենի (Բասիանի) Սոխախատայում (sic) հարձակվեց սահմաններին վրա:

1552 թ. ... օսմաններըը գրավեցին Փարսկանը (sic) և ամբողջ Արտահանը և շինեցին Փարսկանը (sic)...

1553 թ. ... Շահ-Թամազը[7] [վերադառնալով Սամցխեից]՝ իջավ Երևան ու գնաց Պարսկաստան:...

1556 թ. ... սուլթան Սուլեյմանը[8] [վերա]կառուցեց Կարսը (Կարի), կոտորեց անհնազանդներին, վերադարձավ ու կանգ առավ Բասենում (Բասիանում):... Սրան հետևեց Շահ-Թամազը և կանգ առավ Արտահանում, իսկ սուլթան Սուլեյմանը գնաց Ամասրուբ:

Ապա Շահ-Թամազը ուղարկեց իր որդի Իսմայելին[9], որը պաշարելով գրավեց Կարսը (Կարի), ավերեց, սրի ու հրի ենթարկեց այն:...

1563 թ. հետո... սթթարակ նսանեց Բայխասրոյի որդի Դ'վարդ'վարեն և սթթարակությունն էր անում: Իսկ նրա մայր Դեգիս-Իմեգին և Վարազա Օթար Շալիկաշվիլիի որդին առաջին գործակալներն էին ամեն բանի: Եվ Դեգիս-Իմեգին էր հպարտ, անամոթ, քմահաճ, վայրագ և անխոհեմ: Երբ Շահ-Թամազը դայրացած եկավ Կախեթի բառոնի Ալեքսանդրեի վրա Գյանջայում, այն ժամանակ խորամանկությունն բանեցրեց Օթար Ջոլոզ'աշվիլին... Իսկ Դեգիս-Իմեգին՝ նենգաբար սեգեկանալով այս բանսարկության մասին՝ կալանավորեց Վարազային և սպանեց նրան, քանի որ այս Վարազան Շահ-Թամազի կնոջ եղբայրն էր[10]:

1574 թ. հետո... Շահ-Թամազը խոնթքարին գիջեց Սամցխե-Սասթարագոն, Կարսը (Կ'արսի) և Իմերեթը:...

1578 թ. օգոստոսի 9-ին Ջուբանի և Ծինծախայի մեջտեղն Ա[ր]զրում-Վանի փաշաներն եկան:... Ամիրսախրիի որդի Բոխան Խալա-փաշային դիմավորեց Արտահանում:... Ապա փաշան հեռացավ (տեղահան եղավ), Դ'վարդ'վարեին տարավ հետն ու այլևս չվերադարձրեց, Օլթիսը ավեց նրան իրրև տանջանք:...

1579 թ. Մանուչարին Ա[ր]զրում տարան:...

1580 թ. Բեքրան Վալիից գնաց, Խալա-փաշան գնացել էր և Բեքրան գրավել էր Օլթիսը:... Մարտին եկավ Դ'վարդ'վարեին, հոկտեմբերի 15-ին Բեքրան էլ եկավ, երկուսով գնացին Լոռի, Լոռին ավերեցին, տպթող վերադարձան:...

1588 թ.... Շա[հ]-Աբաս[11] Երևանը գրավելու եկավ:... Վերադառնալով Շահ-Աբաս աթաբակի որդի Մանուչարին թողեց Երևանում Ամիրգունա-խանի մոտ, որն և գաղտխարակում էր նրան:...

1614 թ. ... մեսխերը խոնթքարի հրամանով Մանուչարին բերին Երևանից և աթաբակ նստացրին:... Թեյմուրազ [Կախեթի] բռնակը կանգ առավ Օլթիսում... Օսմաններըը ընկինելրին բռնի կերպով մահմեդականացնում էին ու անհնազանդ գտնում գնդի աթաբակը, իսկ Մանուչարը բռնի ուժ էր գործադրում նրանց նկատմամբ և չէր հավանություն նրանց: Այս պատճառով նրանք դանդաղեցին օսմանցիներին, որոնք [իր հերթին]՝ Ա[ր]զրումի փաշային: Ապա Ա[ր]զրումի փաշան զորք ուղարկեց 1624 թ:...

1635 թ. հետո... [Յ]ուսուֆ-փաշան... կառավարում է Սահթաբագոն... կամքն օսմանցիների և մանավանդ Ա[ր]զրումի փաշայի:...

1647 թ. հետո... գժվարին գործերի մասին [իմներնները] տեղեկացնում էին Ա[ր]զրումի փաշային:...

1659 թ. հետո... Ասլան-փաշան իմներների ցանկությամբ եկավ իմներեթ, թագավոր նստացրեց Բագրատ կուլրին, կալանավորեց Գարեջանին և Վախտանգին, բերեց նրանց ու եկավ Ախալցխեխ, ապա նրանց Օլթիսում բնակեցրեց:... Ախալցխեխում և Օլթիսում աթաբակ էր Ախալցխեխի փաշա կոչեցյալը:... Ջայրացած խոնթքարն Ա[ր]զրումի փաշային ուղարկեց Սուրպի հայկուսյա երկրի զորքով:...

1677 թ. ... Ա[ր]զրումի փաշան և մեսխերն եկան Սամցխե:...

1701 թ... խոնթքարն իրրև սարասքյար ուղարկեց Ա[ր]զրումի փաշային մեծ զորքով հանդերձ:...

1703 թ... Բևհան զորքով գնաց Ա[ր]զրում, քանի որ Գուրիայից գնացած սարասքյարն էլ Ա[ր]զրում էր գնացել:...

1705 թ.... Քարթլիից և Հայաստանից տեղական եպածները բնակություն էին հաստատում Ջավախեթում՝ այս ու այն տեղերում:...

1723 թ....խոնթքարն իրրև սարասքյար ուղարկեց Ա[ր]զրումի փաշային մեծ զորքով՝ Ապրիջանը գրավելու համար: Նա եկավ Ղարս (Ղ'արս) ու դիմեց Բասղ'-փաշային, ապա... [թուրքերին] եկան Տիգիս:...

... Բասղ'-փաշան խոնթքարի կողմից կառավարում էր Ամբողջ Վրաստանը, Սամցխե, Սաաթաբագոն, Ամբողջ Իմերեթը, Քարթլին, Լոռին, Ղազախ-Շամշադիլը և Կախեթը:...

1742 թ.... Շա[հ]-Նադիրը[12] *սարասքյար ուղարկեց Ղարս (Ղ'արս) և ավերել տվեց Ջավախեթը, Արտահանը, Կոլանը:...*

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Այս հատվածը Վախուշտին գրել է, հետևելով XI դարի վրաց պատմիչ Սմբատին. տես «Վրաց պատմություններից» I հատորը, էջ 137. հմմտ. Л. Меликсет-Бек, Армяно-Hebraica,—„Труды Гос. Ист.-Этногр. Музея евреев Грузии", т. III, Тб., 1945, стр. 237—238:*

[2] *Հայ բազրատունիների և վրաց Բագրատիոնների մասին տես «Վրաց պատմություններից» I հատորում նշած գրականությունը, էջ 139:*

[3] *Դեմետրե II Անձնազոհ, Վրաց թագավոր, 1270—1289 թթ.:*

[4] *Հետապատում Վրաց թագավոր Վախտանգ III, 1301—1307 թթ.:*

[5] *Յազուբ՝ Ակ-կոյունլու-ի'ան, 1478—1490 թթ.:*

[6] *Լուարսաբ I, Վրաց թագավոր, 1534—1558 թթ.:*

[7] *Թամազ կամ Թահմազ I, Պարսից շահ, 1525—1576 թթ.:*

[8] *Սուլեյման կամ Սյուլեյման I, Օսմանցոց սուլթան, 1520—1556 թթ.:*

[9] *Հետապատում Պարսից շահ, Իսմայել II, 1576—1577 թթ.:*

[10] *Այս էպիզոդը թեև Հայաստանի և հայերի մասին ոչինչ չի պարունակում, սակայն մենք նպատակահարմար գտանք այստեղ բերել իրրև մեկ այլ աղբյուր Թմկաբերդի առման մասին գոյություն ունեցող ժողովրդական ավանդության (զրույցի), որ՝ Նադրը-շահի հետ կապելով՝ օգտագործել է Հովհ. Թումանյանը (տես՝ Լ. Մելիք-Բեկ, «Ջավախքի բուրմունքը» Հովհաննես Թումանյանի երկերում և պատմա-լեզվա-հնագիտությունը»,—«Սովետական Վրաստան», 1938 թ., № 36. Հովհ. Թումանյան, Թմկա-*

բերդի առումը. պահմ, պրոփ. Լ. Մելիքսեթ-Բեկի թարգմանությամբ և ներածականով, վրացկերն, Թբ., 1939):

[11] Արաս I մեծն, Պարսից շահ, 1587—1629 թթ.:

[12] Նադըր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(1201—1755)

1430 թ. Շա[հ]ռուխը[1] հայտնվեց ու գրավեց Լոռին:

1432 թ. Ալեքսանդրե թագավորը[2] գրավեց Լոռին:

1437 թ. Ալեքսանդրե թագավորն եկավ Ղարաբաղ:

1444 թ... մեռավ Փանասկերպյու դուստր Սիթի-խաթուն թագուհին, Վախտանգ թագավորի[3] կինը:...

1454 թ. «Մեք, Գիորգի թագավորն[4] համայն Վրաստանի, Ռանի, Շարվանի և Շահանշահի (Շաանշի) [երկրի]...» (Գիորգի թագավորի սիտզրագը):

1463 թ. Թավրիժ-Գիլաքն ու Թեմուրը հպեցին Գիորգի թագավորին, Բարթլին, Սոմխիթն ու թագավորի գանձարանն ավերեցին:...

1536 թ. Շահ-Թամազը[5] գազտագողի եկավ Տփղիս, պաշարեց և գրավեց այն, վերադարձին կանգ առավ Ղարաբաղում, ուր նրա մոտ եկավ Բագրատ [Իմերեթի] թագավորը, որին նա ողջ-մաձարար ետ ուղարկեց: Նույնտեղ գնաց և Կախեթի թագավոր Լևանը և նրան ևս պատվով ետ ուղարկեց:

1539 թ. հայերը լիալուսնի հաշվում շեղվեցին[6]:

1545 թ. Լուարսաբ[7] և Բագրատ թագավորները կռվի բռնվեցին Բասենի (Բասիանիի) Սոխոխատայում երկու վաշտանների և Քայխոսրա [Սամցխեի] աթաբակի հետ, վրացիները պարտվեցին, Քայխոսրան գրավեց Սամցխեն:

1548 թ. Շահ-Թամազն եկավ Ղարաբաղ, նրա մոտ եկավ Լևան [Կախեթի] թագավորը, [երկոքյան] մտան Շիրվան, նա (Շահ-Թամազը) վերցրեց Դյուբրանը, գրավեց Շիրվանը, ապա եկավ՝ Տփղիսը վերցրեց:

1552 թ. օսմանցիները գրավեցին Արտանուջը, մինչ Արսխան, Փանավարը շինեցին, Արտահանը գրավեցին, չկարողացան անցնել Սամցխով:

1533 թ.... դ'աւնն (Շահ-Թամազն) անցավ Սոմխիթ, ապաստանեց Իջու, Շերմազան և Վախուշտ Դիտասամիձևներին:...

1556 թ. սուլթան Սուլեյմանն[8] եկավ, վերաշինեց Կարսը (Կարի) և կանգ առավ Բասենում (Բասխանում)։ Սրան գուգընթաց Շահ-Թամազն եկավ Արաքսան, Շահ-Թամազի որդի Իսմայելը[9] գրավեց Կարսը, [որ] և քանդել ավեց. խոնթքարը հեռացավ, գ'ուենն անցավ Քարթլ։...

1569 թ. Սամխեթի Փարցխուում պարսիկները Սվիմոն Թագավորին[10] գերեցին ու տարան Ալամուտ։

1579 թ. Մանուչար աթաբակին տարան Ա[ր]գրում։

1580 թ.... հոկտեմբերի 15-ին Ղ'վարդ'վաբեն ու Բեքան հարձակվեցին Լոռի վրա և ավերեցին այն։

1582 թ. Սվիմոն Թագավորը հարձակվեց Լոռի վրա, քարանձավները գրավեց։

1590 թ.... Սվիմոն Թագավորը Լոռին վերցրեց, օսմանցիներին կոտորեց։

1601 թ. Դիմրգի Թագավորը[11] Լոռին վերցրեց ու իրեն վերապահեց։

1602 թ. Դիմրգի Թագավորը և Ալեքսանդրե Կախեթի Թագավորն Երևանին մոտեցող Շա[հ]-Աբասի[12] մոտ գնացին։

1636 թ. Երևանը խոնթքար Մուրադը[13] գրավեց։...

1663 թ.... Թեյմուրազ [Կախեթի] բռնանը մեռավ Աստրախանում։...

1679 թ.... Ա[ր]գրումի փաշան գարձյալ եկավ Իմերեթ... Ա[ր]գրումի փաշան սպանեց Ախալցխեի փաշա Ասլանին... ու հեռացավ։

1722 թ. գ'ահն Մա[հ]մադ-գ'ուլի-խանը[14] մարտ [ամս]ին... եկավ Ղազախ։...

1729 թ. հայերը լիակատար հաշվում գարձյալ շեղվեցին[15]։

1735 թ. Թամազ-խանն[16] Երևանում հաջողություն ունեցավ սարսափելի Քոփրալ-գադեի վրա։...

1751 թ.... Էրեկլե [Թագավորն][17] Երևանում հաջողություն ունեցավ Ադամ-խանի[18] վրա։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Շահռուխ, Միջին Ասիական մոնղոլական գ'ահն, Լանկթեմուրի որդին, 1404—1447 թթ.։

[2] Ալեքսանդրե I մեծն, Վրաց Թագավոր, 1412—1443 թթ.։

[3] Վախտանգ IV, Վրաց Թագավոր, 1443—1445 թթ.։

[4] *Գիորգի VIII, Վրաց թագավոր, 1445—1469 թթ.։*
[5] *Թամազ կամ Թահմազ I, Պարսից շահ, 1525—1576 թթ.։*
[6] *Քոռքը ծառացակի մասին է։*
[7] *Լուարսաբ I, Վրաց թագավոր, 1534—1558 թթ.։*
[8] *Սուլեյման կամ Սյուլեյման I, Օսմանցոց սուլթան, 1520—1566 թթ.։*
[9] *Հեռուզայում Իսմայել II, Պարսից շահ, 1576—1577 թթ.։*
[10] *Սվիմոն I, Վրաց թագավոր, 1558—1600 թթ.։*
[11] *Գիորգի X, Վրաց թագավոր, 1600—1605 թթ.։*
[12] *Աբաս I մեծն, Պարսից շահ, 1585—1629 թթ.։*
[13] *Մուրադ IV Ղազի, օսմանցոց սուլթան, 1622—1639 թթ.։*
[14] *Մահմադ կամ Մահմուդ, Պարսից բռնակալ, 1722—1725 թթ.։*
[15] *Տես 6-րդ ծանոթ.։*
[16] *Թամազ կամ Թահմազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.։*
[17] *Էրեկլե II, նախ կախեթի թագավոր, 1744—1762, ապա հոր՝ Թեյմուրազ II-ի մահից հետո միացյալ Քարթլ-կախեթի արքա, 1762—1798 թթ.։*
[18] *Ագամա-խան, 1747—1761 թթ.։*

«ՎՐԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

(«ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ)

ԱՌԱՋԱԲԱՆ

... Ապերկը թագավոր նստաց[1] Քրիստոսի ծննդյան տարին, և նրա գործերն (ընագրում՝ թագավորությունն) էլ հայտնի է։ Սակայն նրան հաջորդող թագավորները մինչ Մըրիան[2] նստում էին [Հունաց-հռոմեական] կայսրներին, Պարսից և Հայոց թագավորների վավերացումով (վկայությամբ)։... Հենց այսպես՝ սկսած Բաքարից[3] մինչև Վարազ-Բաքար[4] կայսրների և Հայոց թագավորների հաստատմամբ թագավոր էին նստում։...

ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐՔ ՈՒ ՎԱՐՔԸ

...Իշխանության կարգերը Վրաստանում սկզբից և եթ այնպես են, ինչպես գիտենք. ... Հայկն (Հառան) իր եղբայրներին բաշխեց երկրների [նրանց հանդող] մասերը[5]։...

Թագավորական հարստություններն էին. առաջին՝ Քարթլոսյաններ, և Նեբրոթյաններ, և Արշակունյաններ, և թագավորում էին սրանք 566 տարի... Սրանցից հետո Բագրատիոնները։...

[Եվ] Բարթլոսյան-Ներսեթյան-Արշակունիները հայտնի էին հետոսությամբ:...

Իսկ իշխանական տոհմերը հետևյալ էին՝... Մխարգրձելի, Օրբելիանի, Գագելի,... Նեբսիանի,... Ջուանշերիանի,... Սմբատիկ Մանկարեր Սպասունը...

... Ամբողջ Իվերիան կամ Գիորգիան[6] չորս գրոշակի ներքո էր բաժանված... [որոնց իվում] սմխիթցիք, որոնց տիրում էին [վրացիները]:...

... Բարթաշվիլիները... տիրում էին Գաջևանքի (Գաչիանի) և Գարդաբանի նախարարությունների (սահմանում) Տփղիսից դեպի հարավ, մինչ Լոռի և Փարվան (Փանավրա):... Սմխիթի մելիք[ությունը] տոհմական [առանձնաշնորհում] չէր, այլ այն, որ հայերից մեկին Շա[հ]արասը[7] շնորհեց [այս կոչումը] մոհմեդականանալու առթիվ: Արդուբյաններըը (Արդուբաշվիլի)՝ այժմ ազնվականներ՝ [նույն] Մխարգրձելներն են[8]:.. Ցիցիշվիլի[ները] հետևյալ Փանասակե[ր]ից են եկել:...

Վերոհիշյալ իշխաններից զատ հետևյալ առաջավոր, հզոր և անբաժան տներ էին... Ղ'ափլանիշվիլին... և Սմխիթի մելիքը:...

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՐԹԼԻԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

... Կուր (Մակուաբի) գետին միանում են բոլոր գետերը՝ Կոլայի, Արտահանի, Ջավախեթի, Սամցխեի, Բարթլիի, Կախեթի, Հերեթի, Ռանիի, Մովականի և Արագն իսկ:...

... Բարթլիի առհասնը Բերդուջ գետն է:... Այս Բերդուջ գետը սկիզբ է առնում Աշոցքի (Արագի) սարից և հոսում է դեպի արևելք մինչ Ձոճկան, ապա շուռ է տալիս և գնում դեպի հյուսիս և միախառնվում Քցիա գետի հետ: Եվ երեք անուններով է կոչվում սա. առաջինը՝ Բերդուջ, երկրորդը՝ Սագիմ, երրորդը՝ Դերեգ: Եվ Բերդուջ կոչվեց սա ավան Բերդկիից, իսկ Սագիմը հավանական է Ինջան կամ Ագռաւը լինի[9]:...

Հոսում այս շրջանի անուններ էր Քուրդիվաճրիս-խեվի[10], իսկ այժմ կոչում են Աղջաղ'ատա՝ Սպիտակաբերդ, ինչպես կոչվեց Յաղուբ գ'աենից, որը առաջին անգամ կառուցեց այս բերդը... և ապա բերեց Բորչալու ցեղը և բնակեցրեց այստեղ, և այս պատճառով [երկրամասը] կոչվեց Բորչալու: Իսկ այնտեղ, ուր Բերդուջը գեպի արևելք է հոսում, խիտ անտառ կա մայրերով, ուր մարդ [երբեք] չի մտել: Այստեղ բանում են ամեն տեսակ

հատիկներ, նուշնիակ բրինձ և բամբակ, կան խաղողի այգիներ, նուռը, թուզը և այլ շատ մրգեղեն: Իսկ Լոռվա բերդի վերևը ցուրտ է, բայց ամռանը հրաշալի է, բազմազան ծաղիկներով և սառ ու անուշ աղբյուրներով լի: Իսկ Բամբակի ձորում ոչինչ չի բռնում (չկա) բացի ցորենից, գարուց և կտավատից, և չոր խոտով է անվում ոչխարը, կովը, գոմեշը, ձին, էշը, այծը, [որոնք] շատ են աճում: [Կան նաև] գազաններ՝ ժայռերում քարայծ և լեռնայծ,... անտառներում շատ և շատ եղջերու, եղն, արջ, գայլ, վագր, աղվես, նապաստակ: Այստեղի ձուկն ու միսը համեղ է: Լոռվա բերդից ցած տաք է ու ամառն անտանելի, իսկ ձմեռը նեղ տեղապրությանն պատճառով հրաշալի է: Իսկ Հայրապետն (Ախալցխի) և Սանահինը (Սանահինի) վրաց թագավորների կառուցվածն են (sic), թեև հայերը գրում են, որ երբ Հայոց թագավորների ձեռին էր այս տեղերը, [այն ժամանակվա] կառուցվածքներ են նրանք: Եկեղեցիները գմբեթավոր են և հոյակապ[11]: Իսկ այժմ այստեղ բնակվում են հայերը, և Բարթլիի թագավորն եպիսկոպոս է կարգում [նախօրոք] գրելով հոգևոր տիրոջը (օքելվարտերին)[12], քանի որ որքան էլ Բարթլիում հայեր են բնակվում, [բոլորը] նրա (հոգևոր տիրոջ) հոտն են կազմում: Այստեղ շատ բորակ է հանվում ոչ թե հողից, այլ ժայռի խոնավությունից: Սրա վերևից գոնվում է մի փոքր վանք, սակայն մեծաշեն, Բորայրի (Բորերի)[13], որը հայերի ձեռին է[14]: Նաև՝ սրա արևմուտքից կա մի վանք՝ կենարար փայտի (ձեղի ճեշմարիտիա), սքանչելի, Բերդուջ գետի վրա, որը հայերի ձեռին է[15]: Այստեղ բարձր ժայռում կան բազմաթիվ այրեր, և այդ այրերում գոնվում են բազմաթիվ հին գրքեր, որոնք [սակայն] անգործածելի են՝ մարդկանց համար [այրերն] անմատչելի լինելու պատճառով[16]: Սրա (Բորայրի) արևմուտքից գոնվում է Լոռվա բերդը և մի փոքր քաղաք, ամառը սքանչելի, ձմեռն անտանելի, երկու գետերի միջև, քարքարոտ (քարափոտ) ժայռի վրա[17]: Սրա (Լոռու) արևմուտքից ժայռոտ դաշտ է, որտեղից էլ այն բազմիցս վերցրել են [թշնամիները]. այժմ հայերի ձեռին է:

Իսկ Բամբակի ձորը լեռնոտ է և սքանչելի [ու] պտղավետ: [Այստեղ] բռնում է ցորեն, գարի, կտավատ, վարսակ և ուրիշ ոչինչ: Ինքը Բամբակը փոքր քաղաք է: Այստեղ կենդանիների առատություն կա՝ բացի ուզուից: Ոտն առատ, մեղրը շատ: Սոմխիթի, Երևանի և այս [կողմերն] իրարից բաժանողը մեծ լեռն է, բարձր ու միշտ ձյունապատ, իսկ լանջերում անտառա-

պատ, գազաններով լի։ Սա տարածվում է դեպի արևմուտք՝ մինչ Արտահան, իսկ արևելքից Ռանիի և Գեղարքունիքի միջովն է անցնում և հասնում մինչ [Ե]րասխ։ Այս լեռան հարավային մասը Հայոց աշխարհն է, իսկ հյուսիսայինը՝ Բերդուջինը և Ռանինը։ Եվ Բերդուջ գետի արևելյան կողմը գրված ունին բոշաբուեցիք, իսկ արևմտյան կողմի մի մասը մինչ Աուհան գրված ունի Քարթլիի թագավորը։ Իսկ Բերդուջի փոքր լեռը գնում է դեպի հյուսիս և հարավ ու Երևանի վերոհիշյալ լեռանն է մոտենում։ Այս լեռան արևելյան մասը Ռանին է [պատկանում], իսկ արևելյան մասը Բերդուջինն է։...

Հաղբատից ցած գնում է Ձոճկանի ձորը՝ Լալվար (Լեղվար) լեռան տակ, այգիներով լի, մրգառատ, պտղավետ և օդով աքանչելի։ Նրանից ցած գեղի հյուսիս գնում է Ագարակի եկեղեցին, ուր [Վախտանգ] Գորգասալն եպիսկոպոս կարգեց, որ հետագայում Սոմխիթի մետրապոլիտ և [վրացատյավաննների] թեմակալը [դարձավ], և որի հոտն էին կազմում Աուհանը, Դարդարանը և Բերդուջ գետի ձորը։ Եկեղեցին գմբեթավոր, մեծակառույց, այժմ կոչվում է Ախտալա, և երեցի տեսչության նեղքո է[18]։ Ախտալայի դիմացը, գեղի արևելք, Բերդուջի լեռան մեջ գտնվում են զույգ վանքեր, որոնցից մեկը խելագարին խելքի է բերում, որ կարծում եմ, թե այդ Ծուրտավը պիտի լինի, և աքանչելագործություններն էլ նրանից են. իսկ մյուսում բխում է ազբյուր, որի ջուրն՝ եթե 40 օր [անընդհատ] կաթսայածին խմացնեն, կծած մարդուն կատաղությունը ոչինչ վնաս չի պատճառի[19]։ Իսկ Ախտալայից ցած գնում է Ժոժոռնիի ձորը։ Ժոժոռնիում կա եկեղեցի գմբեթավոր, իսկ Ծոփիում փոքր բերդ[20]։ Այս ձորն այգիներով լի է, մրգառատ, ամեն տեսակ բերք ավող։ Սրանից ցած գաշտում մինչ Գեխա [գետն][21] ապրում են քոչվորներ, ցանում են ամեն տեսակ հատիկներ։...

...Շուրթավերի ձորի... վերևից գնում է Օփրեթը[23]։... Բերդիկի բերդի... վերև գնում է Հուջաբի վանքը, գմբեթավոր, աքանչելի տեղում և այժմ գաղարիկ է։ Իսկ այս տեղերն ու Բերդուջի գետը բաժանում է իրարից Լալվարի լեռը, որ արևելքից գեղի արևմուտք է տարածվում։ ... Իսկ Լալվարը բարձր սար է, որի կատարը անտառազուրկ է, իսկ լանջերն անտառապատ և գազանով լի, մինչ Լոքի, որ [գնում է] Բերդուջից գեղի հարավ և Հայոց աշխարհից գեղի հյուսիս։ Իսկ Լոքի սարը բաժանում

է Տաշիրն ու Կապրեթը, Բալաճն ու Դրանխի ձորը. և սա Ախ Լալվարի սարի պես է և նայում է Աշոցքի (Արոցի) լեռան, որ նույն Իրջանի [լեռն] է։ Այս տեղերին, սկսած Դևբեդից մինչ Բոլնախի արևմուտքում [գտնվող] փոքր լեռը և Վշքի գետից մինչ Լալվար-Լոքի սարը, այժմ կոչում են Սոմխիթ. [իսկ] հնում սա Աուանանի նախարարության (էրիսթավության) էր պատկանում։... Այս տեղերի բնակիչները պավանության համար հայեր են, փոքրամասնությունը Բարթլի [եկեղեցու] դավանանքին [է հետևում]։...

Իսկ Լոքի սարի հարավակողմի գետերը հոսում են ու միախառնվում Տաշիրի ջրին, որ Լոռվա բերդի մոտ միանում է Դեբեդին։ Իսկ Լոռիից վերև ու Լոռիից դեպի հարավ մինչ Դեբեդ ու Արջանի լեռը՝ [բոլոր] այս տեղ[եր]ը կոչվում են Տաշիր՝ հարթ լինելու պատճառով, և պտղավետ է՝ ցորենով, գարիով, կտավատով, վարսակով [և] անասուններով առատ։ Ամռանը վերին ասեֆճանի աքանչելի է, ծածկված խոտով ու ծաղիկներով, բազմաթիվ աքանչելի ագրյուրներով. քաղաքներն էլ բազմաթիվ՝ բացի վանահանից ու կաթսվից։ Դեռևս իշխանաձկնով լի, իսկ մյուս ձկները՝ սակավ։ Մրգավետ ու պտղատու ծառեր բոլորովին չկան։ Մեղրը շատ է և սպիտակ՝ ինչպես ձյունը և անհյութ։ Կտավատից շատ ձեթ են հանում, նաև չորացնում, այրում և ծախում են։ Ձմեռը ցուրտ է ու ձյունոտ, և ձյունի բարձրությունը երկու ապլի[23] է լինում, և սառնամանիքներով, քիև [անելը] տաքացնում են առանց վառարանի։ Այստեղ չկա անտառ և ոչ էլ ծառ, և [վառելը] Լոք-Լալվարից են բերում։ Դեբեդանցիները գործածում են ախթ՝ քիև կերակուր [եփելու] և քիև տաքության [տևողության] համար։ Այստեղ՝ Մխանջայում[24] հանում են մեծ քանակությամբ պղինձ-մետաղ։ Նույնպես հողից հանվում է կարմրագույն և շատ ամուր քար, վայրկյան և մաքուր։ Բնակիչները դավանությամբ հայեր են, սակայն ենթակա են Դրանխին[25], հպնված են կեղծած և ճարպած են, երկար չխթայով, վատ գույն ունեն, բայց բարձրանասակ են և վայելչակազմ, կարող, պատերազմներում անվրդով և ոչ պիտանի։

Իսկ Տաշիրը, Աշոցքը (Արոցը) և Բևրդուջ-Բամբակը բաժանվում են իրարից Իրջանի և այժմ Ղարադաջ կոչված լեռով, որ միշտ ձյունով է ծածկված, անտառից զուրկ, լանջերը խոտավետ ու ծաղկավետ. ագրյուրները բազմաթիվ [և] համեղ։ Տարածվում է հարավից դեպի հյուսիս։ Այստեղ արտահանվում է սպի-

տակ քաը, որ մարմարիոնի նման է։ Այս լեռան արևմուտքից գտնվում է Աշոցքը (Աբոցը), որ այժմ Դ'ախլ'ուլի է կոչվում և որ ամբողջապես լեռներով է պատած. իսկ մեջտեղը հարթ է, և լեռնակողմը բլրանման, իսկապես բերքատու. ցորեն, գարի, կտավատ, վարսակ, և ուրիշ ոչինչ՝ ոչ մրգեղեն և ոչ էլ բանջարեղեն։ Ուռած առատության պատճառով անասունները շատ են։ Ձուկը պակաս է, բայց եղածն իշխանաձուկն է։ Դպատնջին փոքր քաղաք էր[26]։ Պալակացիոսի[27] և Աշոցքի (Աբոցի) միջև Ագրաբի սարն է, և այդ սարը Բարթլիի և Դարսի (Դ'արսի) միջասահմանն է, մինչ Սպիտակաբերդ (Թեքր-ցիխե)[28] և Տաշտադանի լիճը։ Իսկ Աշոցքն (Աբոցն)՝ ավերված՝ վերաշինեց 90-րդ թագավոր Վախտանգը[29], և այժմ գրավից Շա[ն]-Նազիրը[30]։ [Բնակիչները] գավառս թյամբ հայեր են, բարձրահասակ և վայելչակազմ տղամարդիկ, թեև անճոռնի՝ իրենց հագուստով, տաշիրեցոց նման, պատերազմում պիտանիները. սրանք ևս ձիթադործությամբ են պարապում։

Իսկ Ղարադաջի և Տաշիրի լեռան հյուսիսային կողմում գտնվում է Դրանխի ձորը և Մաշավեր գետը, որ նրանց միջև է հոսում։... Այս ձորը բաժանում է հարավից Ղարադաջի և Լոքի սարը, արևելքից Բոլնիսի փոքր լեռը, հյուսիսից Լուկունի սարը, որ տարածվում է դեպի արևելք մինչ Նախիջևան[31]։

... Օրմոզանի լճի [շրջանը]... Տաշիրի պես պտղավետ է... [Դրանխում] հոսում է եպիսկոպոս, որ Տաշիրի և Դրանխի ձորի [վրացադավան բնակիչների] հովիվն է։... Փինեզասուրի ձորը սկիզբ է առնում Լոքի սարից, և նույնպես պտղավետ է, ինչպես Տաշիրն ու Դրանխի ձորը։... [Լոքից] ցած միանում է նրան Դեսաձորը (Դեսիս-խևվի[32]) և Բիլիշաձորը[33] (Բիլեշիս-խևվի)։... Սև ապրյուրի (Շավի ծղ'արս)—Ղ'արաբուլախի դաշտում կա մի ավան։... Կումխից դեպի արևելք, Կուրի կողմը, գտնվում են Թելեթնևերը (Թելեթևերի) և սքանչելագործ եկեղեցի [հանուն] սուրբ Գևորգի[34]։...

.... Ասունանի էրխաթավությունն [ընդգրկում էր]... Գարդաբանը, Սոմխիթը, Բերդուջ գետի ձորը, Տաշիրն ու Բամբակը, իսկ մյուս էրխաթավությունը՝ Սամշվիլդեինը՝ Սարաբաթիանոն, Դրանխի ձորը, Սկվիրեթը, Թռխալեթը, որ Գաչիոսի ժառանգության [մասն] էր կազմում, Գարդաբանից վերև։ Սա (Գաչիոսը)[35] կառուցեց Գաչիան քաղաքը[36]։... Ղարայա[գ]ի (Ղ'արսխա)...

բնակիչներն են Սամխիթ-Սարաբաթիանոյի իշխաններն ու աղնվականները։...

... Տփղիսի... [քաղաքային] պարսպից դուրս [տարածությունը] կոչում են Դարբիազանի[37]... Այստեղ կա 2 եկեղեցի գմբեթավոր, 2 էլ անգմբեթ, որը հայերի ձեռին է[38]։...

... Տփղիսի բնակիչներն են՝ Բերդում և Սեյդաբադում պարսիկ-մահմեդականները, իսկ բերդից դուրս առավելապես հայերն ու նվազ չափով վրացիները, որոնք վրացական վարք ու բարք ունին։... [Բազաքի] արևմուտքից Իշխաուրաք ժայռն է[39]։...

... Ատենիում[40]... բնակիչներն են վրացիները, հայերը և հրեաները։...

... Իմերխեվից դեպի արևմուտք, Ջամ [գետ]ի ափին, գտնվում է փոքր քաղաք Մձորեթը[41], որի բնակիչներն են հայերը [և] հրեաները։...

... Ախալգորին[42] փոքր քաղաք է, որի բնակիչներն են հայերը։...

Գորիում... 8 եկեղեցի կա հայկական, որոնցից մեկը՝ տաճկահայերինը (օսմանցոց հայերի)[43] ավերվեց [պատերազմական գործողությունների պատճառով]։...

... Ծխնիվալում (Ցխինվալում)[44]... բնակիչներն են վրացիները, հայերը, հրեաները...

Ալին փոքր քաղաք է, որի բնակիչներն են հայերն ու հրեաները, պակաս՝ վրացիները[45]։...

... Սուրամը[46] փոքր քաղաք է, որի բնակիչներն են վրացիները, հայերը և հրեաները։...

ՀԵՐԵԹԻ, ԿԱԽԵԹԻ ԵՎ ԿՈՒԽԵԹԻ, ՆԱԵՎ ԹՈՒՇԵԹԻ ԵՎ ԴԻԴՈՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս երկիրն երեք անուն ունի՝... Հերեթ[47] կոչվեց Թորգոմի (Թորգամոզի) որդի Հերոսի անունով։

ԱՅԺՄՑԱՆ ՕՍԵԹԻ ԿԱՄ ՄԻՋԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս երկիրը... բաժին է Թորգոմի (Թորգամոսի) որդու Կավկասոսի։... Խազարների թագավորը տվեց իր որդի Ոբրաննոսին Կավկասոսի երկիրը ու Քարթլիի [և] Հայաստանի (Սամխեթի) գերիները[48]։...

ՍԱՄՑԽԵ-ՍԱԼԹԱԲԱԳՈՑԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՏԵՂԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

... Այս երկիրը տարածվում է [երկայնությամբ] Բարթլիի սահմանից սկսած մինչ Գուրջի-բողազը (Բարթլես-գ'ելի) և Բայբուրդ ու Ճանեքի սահմաններից, լայնությամբ՝ Դելաբանին, Իրիջլուի և Ղանլուի լեռներից սկսած մինչ Ղազդյի և Գուրիայի լեռներն ու ծովը։ Եվ այս երկրի սահմաններն են. արևելքից՝ Բարթլիի հողը... և Ղարսի (Ղ'արսի) լեռը, Արատհան-Կոզայի (Արատան-Կոլա) և Ղարսի (Ղ'արսի) միջև, հարավից՝ վերոհիշյալ լեռը, Հայոտատան-Բարթլիի սահմանը, որ այժմ Իրիջլուի և Դելաբանինի լեռ է կոչվում, հյուսիսից՝ Ղազդյի կամ Փերսաթի լեռը և Աճարա-Գուրիայի միջև լեռն ու Պոնտոսի ծովը, արևմուտքից՝ Ա[ր]զրումի, Երզնկայի (Էգինդի) Գուրջի-բողազի (Սաքարթվելոս-գ'ելի) միջև...

... Ածղ'ուրը քաղաք է և մեծաշեն բերդ, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները, իսկ իշխողները մահմեդականներ են։...

... Ախալցիխեի բնակիչներն են մեծամեծ և երևելի մահմեդականներ և վաճառականներ, [Այստեղ] բնակվում են նաև հայեր, հրեաներ և մոտավ մեսխերն ևս[49]։...

... Գոկիան փոքր քաղաք է, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները[50]։...

... Բաբալեթը փոքր քաղաք է, որի բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները[51]։...

... Իշխանի բերդը շատ ամուր է, մեծաշեն եկեղեցի գրմբեթավոր է, հոյակապ և փառաշեն[52]։ Այստեղ էր նստում եպիսկոպոսը, հավիճն Բապիրը, Թորթումի և Բայբուրդի մինչ Տրապիզոնի լեռները. այժմ թափուր է։...

...Արատհանջի գետի՝ [Ճորոխին] միախառնվելու տեղից վերև Ճորոխին միանում է Թորթումի լեռից հոսող ջուրը, որ ուղղվում է գետի արևելք։ Այս ձորի վրա է կամրախի բերդը, որ կառուցել են բզեջները (պատերազմներ) մեծաշեն, ամուր և անառիկ, [և] որ Տաոյի էրիսթավությանն [կենտրոնն] էր։ Սրա վերևից Ճորոխին միանում է Բանա-Փանտակե[ր]տի գետը[53]։...

Այս գետի վրա, Ճորոխից դեպի արևելք, գտնվում է Փանտակե[ր]տի բերդը, ժայռի վրա [կառուցված], մեծաշեն, ամուր։ Այստեղ նստում էր Փանտակե[ր]ս-Օլթիսի էրիսթավը, այժմ ավան է։ Սրանից վերև, սուր գետի վրա, տարում, գտնվում է

Բանան, [որ] այժմ կոչվում է Փանաք։ Այստեղ կա գմբեթավոր եկեղեցի, մեծ, փառաշէն, աքանչելի տեղում [կառուցված]. այս շինեց Աարնեւրանէ (Ագարնասե) թագավորը և այստեղ թաղված են թագավորները[54]։ Այստեղ նստում էր եպիսկոպոսը, Փանակե[ր]տի և համայն Տաշի, Օլթիսիի և Նարտամակիի հովիվը, այժմ թափուր է։...

Սրա վերևից, Ճորախի արևելյան ափին, գտնվում է Օլթիսին՝ բարեկարգ և լավ օդով օժտված քաղաքը։...

Օլթիսի-Նարիմանի... հարավից, Իրիջլուի լեռան հայնկուշտ, գտնվում է Բասենը (Բասիանի)։ Այս Բասենը (Բասիանի) թեև Հայաստանինն է, սակայն՝ Բագրատունյաց թագավորության [անկումից] հետո գրավված լինելով [մեսխերի] կողմից՝ այժմ Սամցխենինը դարձավ։ Եվ այս Բասենը (Բասիանի) [ե]րասխի (Ռասխի) կամ Արագի ակունքներումն է։ Սկզբում այս քաղաքը կոչվեց Բասեն (Բասիանի) և այս պատճառով այս անունով կոչվեցին և [բոլոր] այս տեղերը։ Իսկ այժմ այս անունով կոչվում է քաղաք [Հ]ասանդ'ալան, որ Բասենի (Բասիանիի) մի[ջ]ումն է, Արագի ափին, դեպի հյուսիս, և մեծ քաղաք չէ։ Եվ այս Բասենի սահմաններն են. արևելքից՝ լեռը, որ իջնում է հարավակողմի սարից, որ է Հայաստանի սարը, արևմուտքից՝ Իրիջլու-Դեվարսինի լեռը, հյուսիսից՝ Իրիջլու-Ղալնուսի լեռը, հարավից՝ Դեվարսինից իջած Հայաստանի լեռը։ Եվ այս տեղերում [ե]րասխին միանում են հայնկուշտ և հայակուշտ լեռներից հոսող գետերը։ Այստեղ շինված են ավանները։ Ջաղդի այդիներ չկան, մրգից ու [հացա]հատիկից զուրկ է... սակայն լավ օդ ունի։ Անտառազուրկ է, չհաշված փոքր թվով կեչիից։ Գործածում են ձիաթաղ, իսկ փայտն ու վառելիքը բերում են [ե]րասխի ձորից։ Այս [Հ]ասանդ'ալայից ցած կա կամուրջ [ե]րասխի վրա, որով անցնում են քարավանները։ Եվ [այս կամրջից] դուրս անցնել Արագն անհնարին է։

Իսկ Խոպիր ձորի գետը հոսում է Բայբուրդի վերևից, Տրապիզոնի սարից։ Երկայնությամբ Տրապիզոնի սարից մինչ Ճորախ է հասնում։... Խոպիրի գետի ափին փոքր քաղաք կա՝ Խոպիր։... Սրա վերևից միանում է Սաքարթվելոս-ղ'ելիի կամ Գուրջի-բողազի գետը. և այս գետից վերև կա լեռ, որ բաժանում է Բայբուրդն ու Խոպիրը։... Արևմուտքից սահմանն այն լեռն է, որ Խոպիրի սարերից է իջնում մինչ նույն Խոպիրի գետը, հարավարևմուտքից, Բայբուրդի և Սպերի մի[ջ]ևե։ Եվ այս լեռներն ան-

տառապատ են, ժայռոտ. այս տեղով ճանապարհներ են անցկացրած մինչև Բայբուրդ:...

Այնտեղ, ուր Իսպիրի գետին Դուրջե-բողազն է միանում, և սրա վերևից էլ կան Իսպիրի սարերից իջած լեռներ, որոնք Իսպիրի և Բայբուրդի [միջա]սահմանն են կազմում:... Այս լեռներից վերև գտնվում է Բայբուրդը, ամեն կողմից լեռներով շրջապատված և ինքն էլ լեռն[ատան] է: Սրա միջով անցնում է Իսպիրի գետը: Այս գետի վրա, մեջտեղում, գտնվում է Բայբուրդ քաղաքը, որը մեծ չէ, և այստեղի բնակիչները մահմեդականներ են կամ քիչ թվով նաև քրիստոնյաներ: Այս քաղաքի պատճառով է, որ այս կողմերն ևս կոչում են Բայբուրդ: Բայբուրդի տեղում Իսպիր գետին միանում են Աճարա-Երզնկայի (Էրզինգայի) լեռներից հոսող գետերը և այստեղ շինված են ավաններ: Իսկ Բայբուրդի սահմաններն են. արևելքից՝ Իսպիրի և սրա միջում եղած լեռները, հարավից՝ Երզնկայի (Էրզինգայի) և Բայբուրդի միջև [եղած] լեռը, որ տարածվում է արևելքից դեպի արևմուտք և անտառապուրկ է, արևմուտքից՝ Տրապիզոնի լեռը, հյուսիսից՝ Ճանեթի, Բայբուրդի և Ճանեթի միջում եղած լեռները: Եվ այս Բայբուրդը, ինչպես և Ջավախեթը լեռնոտ է՝ բերքով և անասուններով [լի]: Նրա շուրջն անտառապուրկ լեռներ են, և փայտն ու վառելիքը Ճանեթի սարից են բերում, գերազանցապես գործածում են սոխար: Ամռանն օդը դուրեկան է և սքանչելի, ձմեռը ցուրտ է, ձյունոտ և անտանելի: Շրջապատի լեռներով անցնում են ճանապարհները:... Բնակիչները բոլորը մահմեդականներ են իրենց [հատուկ] վարք ու բարքով:

Իսկ Բայբուրդի և Փորչխիից դեպի հարավ, Ճանեթի լեռան հայնկույս, գտնվում է Ճանեթը, որ այժմ կոչվում է Լազ[55]:...

ԷԴՐԻՍԻԻ ԿԱՄ ԱՓԵԱՋԵԹԻ ԿԱՄ ԻՄԵՐԵԹԻ ՆԱՀԱՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

... Ջխարխի... վերևից գտնվում է պուրակ-անտառ (ճալաոդ'ե). այստեղի բնակիչներն են հայեր և հրեաներ, որոնք և զբաղված են առևտրով:...

... Ջխոսրը փոքր քաղաք է, որի բնակիչներն են իմերներ, հայեր և հրեա վաճառականները:...

... Սաչխերեում... բնակիչներն են իմերներ, հայեր և հրեա վաճառականներ, որոնք և զբաղված են առևտրով:...

... Քութայիսում... բնակիչներն են իմերները, հայեր [և] հրեա վաճառականները:...

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Ըստ Վախուշտիի ժամանակագրության 2 թ. նախքան մ. թ.—55 թ. մեր թ. հաշվ:*

[2] *Միբիան, Քարթլիի թագավոր, 265—342 թթ.:*

[3] *Բաքար, Քարթլիի թագավոր, 342—364 թթ:*

[4] *Վարդ-Բաքար, Քարթլիի թագավոր, 379—393 թթ.:*

[5] *Այստեղ Վախուշտին հիշեցնում է Լեոնտի Մրովելու Քնարերային, տես «Վրաց պատմությունների» I հատորը, էջ 143 և այլն, հմմտ. այս աշխատության Գ գլուխը («Վրաստանի պատմություն»-ից, I):*

[6] *Տես այս աշխատության Գ գլուխը («Վրաստանի պատմություն»-ից, ծանոթ. 30 և 89),*

[7] *Արաս I, Պարսից շահ, 1585—1629 թթ.:*

[8] *Հմմտ. Լ. Մելիք-Բեկ, Երկայնատարզուհիներին տրված էրեկլե II արքայի և Պավել I կայսեր հրովարտակները, վրացերեն,—«Պատմության Տեղեկագիր», I, Թրիլիսի, 1945, էջ 22—32 (Л. Меликсет-Бек. Грамоты царя Ираклия II и императора Павла I на имя Долгоруких):*

[9] *Հմմտ. «Վրաց պատմությունների» II հատորը, էջ 63—64, ծանոթ. 4:*

[10] *Առաջք տվյալների հիման վրա, որ մանրամասն քննության են ենթարկված մեր կողմից (Լ. Մելիք-Բեկ, «Վարդապետաբ Հայոց հիւսիսայնոյն կողմանց» etc., վրացերեն, Թբ. 1928, էջ 42—55), Սանահնի և Հաղբատի տաճարները կառուցված են Բագրատունյաց Աշոտ Ողորմած թագավորի ամուսին Խոսրովանուշ թագուհու հոգատարությամբ 957 թ. (Սանահինը) և 967 թ. (Հաղբատը), հետագայում ենթարկվելով ճոխացման, որի կապակցությամբ և զարգարվել են բարձրաքանդակներով՝ Հաղբատի սուրբ Նշան տաճարը 991 թվին Խոսրովանուշի և Աշոտի զույգ որդոց Սմբատի և Գուրգենի կողմից, իսկ Սանահնի Ամենափրկիչ տաճարը՝ 1063—1065 թթ. միջոցին Կյուրիկյանց Կյուրիկե և Սմբատ թագավորների կողմից: Հետևապես, վախուշտիի ցուցմունքը հիմք պիտի ունենա մի այլ հանգամանք, կապված Հաղբատի և Սանահնի հետագա վերաշինության հետ՝ սկսած XII դարի Դավիթ II Շինող Վրաց թագավորից (1123 թվից) և մինչ էրեկլե II (վախճ. 1798 թ.): Ընդ ամին հաշվի պիտի առնել և Հաղբատի ս. Նշան տաճարի արևմտյան մուտքի գլխին փորագրված արձանագրությունը, որը կարդացվում է այսպես. «Ի ժամանակն ինքնակալ արքային Դաւթի բարեպաշտի և յաղթուզի՝ որդւոյ Գիորգեայ, որդւոյ Բագրատայ,... որ տիրեաց գաւառս և պինս,... եղև խնամատուր Հաղբատայ Սանահնի... ընթացեալ քաղցր և բարեխէր առատաձաւոյ պաշտութեամբ...զՀաղբատս ի մթութենէ աւերութեանն պատեաց, զրով և վրձնով ընծայեաց ի տուրք եկեղեցիս զայգիս..., զգեաղն... և ամենայն հողով և վիճակովք ...զեղեալ կալուածս ամենայն վերահաստատեաց... Գրեցաւ գիրս յարքեպիսկոպոսութեան... առաջնորդի Հաղբատայ, որ է եղբայր Գրիգորի... ի թուին ՇՀ[ր? գ? դ?] (=112[3? 4? 5?])» (տես Описание монастырей Ах-

патского и Санагинского, архим. Иоанна Крымского=Description des monastères arméniens d'Haghbat et de Sanahin, par archim. Jean de Crimée, avec notes et appendice, par M. Brosset [„Mémoires de l'Académie des sciences", VII sér., t. VI. № 6], СПБ, 1863. էջ 4. А. Ерицов, Ахпатский монастырь,— „Кавказская Старина", № 2, Т. 1872, стр. 51. *Ռուսաստրէզ Երդնկեան, Հնախոսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, Վաղարշապատ, 1886, էջ 32. Կ. Կոստանեանց, Վիմական տաբեգիր, ՍՊԲ, 1913, էջ 28. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետաց Հայոց հիւսիսային կողմանց»* etc, *վրացերեն, Թբ., 1928, էջ 136—137 և 34)։*

11 *Սանահնի և Հաղբատի ճարտարապետության մասին տես* А. Ерицов, Ахпатский монастырь. „Кавказская Старина", Тифлис, № 2 (1872). стр. 49—52, № 3 (1873), стр. 83—88. Памятники древнеармянской архитектуры в фотографиях и чертежах, под редакцией Г. Д. Гримма. Составили и издали Л. Егиазаров и Р. Мартиросян = *Հայոց հին ճարտարապետության նշմարների լուսանկարներ և գծանկարներ, գ. Գ. Գրիմմի խմբագրությամբ կազմեցին և լույս ընծայեցին Լ. Եղիազարեանց և Ռ. Մարտիրոսեանց, տետր I—V. ՍՊԲ, 1904, տախտ. I—XXV. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետաց Հայոց հիւսիսային կողմանց և այլն. վրացերեն. Թբիլիսի, 1928, էջ 42—55 և նկ. 1 և 2, էջ 90—94 և նկ. 3 և 4.* Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 169—173 и рис. 52—55, 90—93. Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении= *Ռ. Ադամյան, Վրաստանի և Հայաստանի գմբեթավոր շինութիւնների կոմպոզիցիան, Երևան, 1950, էջ, 89* etc., *նկ. 73.* А. Л. Якобсон. Очерки истории зодчества Армении V—XVII венов, М.—Л., 1950, стр. 84—87, 110—112, 129—134 и рис. 67—70, 89—107, 108, 111, 112. О. Х. Халпахчян, Архитектурные памятники Ахпата, „Архитектура республик Закавказья", М. 1951, рис. 321—355. В. М. Арутюнян и С. А. Сафарян. Памятники армянского зодчества, М., 1951, стр. 55—58 и стр. 101—115.

12 *Վրաց պրոյեկտներում XVII—XVIII դդ. ամենայն հայոց կաթողիկոսը սովորաբար «օրթվաձաների» է կոչվում, որ հայերին «հոգևոր տէր»-ի ուրույն պատասխանությունն է, կամ ազատագործ, որ տեղագ. Մ. Բրոսսեն ճիշտ կերպով թարգմանում է ֆրանսերեն իրրև* pére spirituel: *Տասուկ պրակտանությունն այս խնդրի շուրջը՝* Description géographique de la Géorgie, par Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset, SPB, 1842, p. 139—140. p. 2. *Լ. Մելիքսեթ-Բեկ — «Պատմության Տեղեկագիր», վրացերեն, Թբ., 1924 թ., № 2, էջ 229. Նույն ի— «Վրաց լեզվագիտական բնակերության Տարեգիր», վրացերեն, I—II, Թբ., 1925, էջ 370: Համա. տոտր՝ ժե դլխ. 23-րդ ծանոթ., ժթ դլխի 7-րդ ծանոթ.։*

13 *«Քոռեր» || «Քորայր» ← «Քվար-ի» (վրաց). + «այր» || «էր» (հայերեն)։*

14 *Ինչպես հայտնի է, Քորայր-Քոռերը սկզբում՝ XII դարում՝ եղել է հայադավան (հակաքաղկեդոնիկ) վանք, իսկ XIII—XIV դդ. վրացադավան (քաղկեդոնիկ)։ Վախուշտիի օրոք այն տոնից հայերի ձեռքն է եղել. բայց Վրաց աշխարհագիրը տեղյակ չի եղել նրա նախնական կառուցման պատմու-*

թյանը: Տես հատուկ գրականությունը՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Քարերն ու նրա հայերեն և վրացերեն արձանագրությունները, վրացերեն.— «Թրիալեթի պետ. համալսարանի Տեղեկագիր», VII, 1927, էջ 60—73. Նույնի՝ Վարդապետ Հայոց հիւսիսային կոմսանց, էջ 57—58:

15 *Ի նկատի ունի այսպես կոչված «Հնևվանքը». Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետ Հայոց հիւսիսային կոմսանց, էջ 34—35 և ծանոթ. 3, նաև 57—58: Համմ. նաև այս հատորի Իե գլուխը (էջ 270):*

16 *Այս այրերի կամ բարձունքների, ինչպես և Հաղբատ-Սանահնի «էրթ»-երի մասին տես Գ ի ւ տ ա. բան. Ա դ ա ն ա ս ե ա ն ց, Հնից-նորից. Հնախուսական ուղևորություն, Թ. 1900, էջ 11—21.* С. Тер-Аветисян, Важность археологического исследования пещер Ахпата и Санаина,— „Известия Кавказского Музея", т. IX, в. 2, Т. 1915, стр. 130—134 (*համմ.* „Известия Кавк. Отд. И. Моск. Арх. О-ва", вып. III, Т. 1913, стр. 52, прот. № 55). Н. М[арр], К исследованию пещер Ахпата и Санаина,— „Христ. Восток", т. IV, в. 2, Пгр., 1916, стр. 194—195. *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետ Հայոց հիւսիսային կոմսանց, էջ 51—54:*

17 *Համմ.* А. Муравьев, Грузия и Армения, ч. II, СПБ, 1849, стр. 52. П. Иоселиани, Города, существовавшие и существующие в Грузии, Т., 1850, стр. 52. Л. М.-Б., Об экспедиции в Лори-Ташир и по ущелью Машавери летом 1926 г. —„Известия Кавк. Ист.-Арх. Института", т. IV, Т., 1926, стр. 135—136.

18 *Համմ.* А. Муравьев, Грузия и Армения, ч. II, стр. 313—331. П. Иоселиани, Путевые записки от Тифлиса до Ахталы, Т., 1850, стр. 23—33. А. Ерицов, Монастырь Ахтала,—„Кавказская Старина", № 1, 1872, стр. 20—24. Е. Такайшвили, Грузинские надписи Ахталы,— „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXIX,. Т. 1901, стр. 138—145. Н. И. Толмачевская, Фрески древней Грузии, Т., 1931, стр. 15. *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետ Հայոց հիւսիսային կոմսանց, 58—59. Նույնի՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 64—70: Համմ. վերև՝ Վախուշտիի «Վրաստանի պատմությունից» գլխի 52 ծանոթությունը Ադարանիի մասին:*

19 *Համմ.* Л. Меликсет-Беков, Целебные источники исторической Грузии,—„Целебный Кавказ", (Т.), 1916 г., № 3, стр. 24—26, и отдельно.

20 *Համմ.* С. Т. Еремян, Заметки к тексту „Хроники Сумбата",— *„Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական ֆիլիալի», 1941 թ., № 9, էջ 27—30:*

21 *Այժմյան Խրամի:*

22 *Համմ.* П. Иоселиани, Города, стр. 60.

23 *«Ազին»=1,016 մ. (Իվ. Ջավախիշվիլի, Վրացական չափ ու կշիռների պատմությունը կամ նումիզմատիկա-մետրոլոգիա, վրացերեն, Թբ., 1925, էջ 135, համմ.* Л. Меликсет-Беков, Армазни,—„Материалы по истории Грузии и Кавказа", 1938 г., вып. II, стр. 86, прим. 4):

24 *«Մխխանաձ»-ն նույն «Մխխանե» ‖ «Մխշան»-ն է. տես այս աշխատության II հատորը, էջ 66:*

[25] Դրանցից նույն Թամանիս-Թումանիան է, ուր բավական թվով հայերեն արձանագրություններ կան խաչքարերի վրա (տես Լ. Մելիքսեթ-Բեկ, Թամանիի հայերեն արձանագրությունները, վրացերեն, „Труды Института языкознания АН Груз. ССР. Серия восточных языков". т. I, Т. 1954, стр. 153—161):

[26] Նույն պատմական Դայդուլին:

[27] Այժմյան Զրկդը լինելու որ նշանակում է «հյուսիսայինը» (վրաց. չրդիլո) լինի. տես Ս. Ջիքիա, Սամցխե-Սաաթաբագոյի տոպոնիմիկայի և պատմական աշխարհագրության մի քանի հնդիրները, վրացերեն,—«Թբիլիսիի պետ. համալսարանի Աշխատություններ», XLI, Թբ., 1950, էջ 190—195:

[28] Տես Е. Такайшвили. „Материалы по археологии Кавказа", вып. XII, М., 1909, стр. 56—57 (Тетр-цихе или Агджа-кала):

[29] Վախտանգ V, Շահնավազ կոչված, 1658—1675 թթ.:

[30] Նադիր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:

[31] Նախիջևանին նույն Յուբրաիլը է, բայ մեր տեսության (Լ. Մելիքսեթ-Բեկ, Թրխալեթ-Ծալկայի նյութական կուլտուրայի մնացորդների և տոպոնիմիկայի ուսումնասիրության համար, վրացերեն, Թբ., 1934, էջ 38—44; Նույնի՝ Վրաց ազգությունները I, էջ 12—15, ծան. 6):

[32] «Գետխա-խեվի»= «գետ» (հայերեն)+«խեվի» (վրաց.), բառացի Վեsuձոոr (հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց լեռվոդիտական ընկերության Տարեգիրք», վրացերեն, I—II, Թբ., 1925, էջ 370):

[33] Նույն «Քուռնէ փորթ»-ն է՝ բայ Անանիա Շիրակացու՝ Աշխարհացույցի (պրոֆ. դ-բ. Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 348):

[34] Թելեթի հայկական հնությունները 1002 թ. արձանագրությամբ հանդերձ՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայկական հնություններ Թրխլիսի մոտիկ շրջակայքում: Շավշավադ-Թելեթ-Ծավկիսի, վրացերեն,—«Վրաստանի թանգարանի Տեղեկագիր», I, 1922, էջ 90—100. Л. Меликсет-Беков. Кистории удин (Utica- Armeniaca).—«Թբիլիսիի պետ. համալսարանի Աշխատություններ», XXIII, Թբ., 1942, էջ 39, 41:

[35] Գաչիոսը՝ Գաչկեր-Գաչիանքի կառուցողը՝ առասպելական անձնավորություն է, որի անունը սեզանունից է բխում և ոչ թե ընդհակառակը:

[36] Նույն Յուբրաիլը, այժմյան Նախիջևան-Աբրխլոն. տես «Վրաց ազգություններ» I հատորը, էջ 12—15, նաև մեր հոդվածը За марксистское языкознание «Ռոդովածուում, վրացերեն, Թբ. 1935, էջ 38—44. հմմտ. այս աշխատության Գ դլուխը, «Վրաստանի պատմություն»-ից, II, ծանոթ. 31:

[37] «Գարբեհուբանի» [«Գարբեհուբանի» (վրացերեն)- Գեսի բաղ, որ կոչվել է նաև «Կալոտուբանի» (այսուհետև ազավազված «Կոլուբանի» և ազգանուն „Колубанский)=Կալի բաղ, նույնն է, ինչ որ հայերը անվանել են «Տափի թաղ»: Այսուհետև է նախկին եկեղեցիների անունները՝ «Կալոտուբոնի»=Колубанская և «Տափիթաղի» (Քամոյանց):

[38] Սրանցից մեկը, հավանական է, այսպես կոչված, «Զրկինյան»-ը լիներ, որ՝ հակառակ Վախուշտի ցուցմունքի, հայերի կողմից հիմնած և կառուցած է եղել: Մյուսն անհայտ է:

[39] «Աշխատությունը» նույն «Աշխատությունք»-ն է, որ հիշված է Վախուշտի «Քարթլիի պատմության» մեջ (տես այս աշխատության Գ դլուխը, ծա-

նոթ. 22) և էդնաստաշվիլու «Քարթլիս-ցխովրեբաց»-ում (տես նույնտեղ Ա գլուխը, ծանոթ. 32)։ Մանրամասն՝ այս աշխատության Ա գլուխը, ծանոթ. 32։ Հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Դավիթ Անհաղթի վրաստանում լինելու հարցի շուրջը, Երևան, 1946, էջ 256—257։

40 Աստեղի մասին տես՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Ծաղկաքաղ բանից նախնի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառդրովք, I, Թբ., 1920, էջ 112—113։ Նույնի, VII դարի հայերեն արձանագրությունները Վրաստանում (Ատենի Սիոն),— «Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտությունները, 1945 թ., № 5, էջ 3—6, «Ատենիի» անունը կապվում է «Տանա» գետի անվան հետ, որի իմաստը ճիշտ ստուգաբանված չէ։

41 Մձոռեթը հին քաղաք է. տես՝ П. Иоселиани, Города, 52—53.

42 Ախալգորիում արտագրված է, ի միջի այլոց, Հայաստանի Մատենադարանի № 4642 ձեռագիր Բարդզիրքը, 1631 թվին, և № 2480 Ավետարանը 1640 թվին։

43 Խոսքը Գորբի հայության այն շերտերին է վերաբերում, որոնք պահվել են Տաճկաստանից (Օսմանյան պետությունից) XV—XVIII դդ. բնաջոգրում, և ոչ թե հիմնականին, որի առկայությունը նշվում է դեռևս XI դարում (Պատմութիւն Տարօնոյ Բագրատունւոց, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմ., 1920, էջ 81) կամ XII-ում (Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, բ. տպ., Վաղարշապատ, 1898, էջ 356)։

44 Այժմյան Սառլինքերն է։

45 Ալիում մեզ հասել են մի շարք եկեղեցիներ և կերեզմանատներ խաչքարերով և հայերեն արձանագրություններով։

46 Ալիից դեպի արևմուտք։

47 Հմմտ. Հայաստանի պատմական աշխարհագրությունից հայտնի Հեր և Զարեվանդ գավառների հիշատակությունը։

48 Այս տեղեկություններն առասպելական բնույթ են կրում։

49 Ախալցխեի և առհասարակ Մեսխեթ-Ջավախեթի հայերը պատմականորեն մի քանի շերտ են կազմել, որոնցից ամենաբազմամարդը 1829 թ. կարնո գաղթականներից բաղկացածն է (Акты Кавк. Археогр. Комиссии, т. VII, стр. 830—832, 852 etc: Հովակիմ Դեղամեանց, կարապետ արքեպիսկոպոսի կենսագրությունը,— «Փորձ», 1876 թ., № 1, էջ 163—206, 1877 թ., №1, էջ 81—112; Ե. Լալայեան, Ջավախք, Ա. հատոր, Շուշի, 1897 (արտատպ. «Ազգ. Հանդեսից»), I, Շուշի, 1895, էջ 117—378); Ե. Ֆօսեան, Ախալցխա,— «Հանդէս ամսօրեայ», 1902 թ., էջ 79—85; Լ. Մելիքսեթ-Բեկ, կարնո հայ գաղթականների 1829 թ. դեներալ Պասկևիչին ուղղած գրության բնագիրը,— «ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի հայկական ֆիլիալի Տեղեկագիր», 1940 թ., № 3, էջ 37—40։ Հայերեն արձանագրություններն Ախալցխեում, որ ցարդ պահպանվել են այլևայլ եկեղեցիների պատերի մեջ, հետևյալ տարեթվերն են կրում՝ 1351, 1356, 1442, 1451. Հայաստանի Մատենադարանի № 415 (430) ձեռագիրը գրված է «ի եպիսկոպոսութեան տէր Գրիգորի, որ է առաջնորդ Սամցխեոյ երկրիս», 1473 թվին։

50 Ջավախեթի հայության անցյալի մասին տես նախորդ ծանոթության մեջ հիշված գրականությունը։

51 *Տես 49-րդ ծանոթագրությունը։*

52 *Կառուցվել է Ներսես Շինողի, հետագայում հայոց կաթողիկոսի (641—661) կողմից, Չմաբռնոցի և Անիի Գագկաշեն տիպի կլորածև, որ մեզ չի հասել և հետագայում վերաշինվել։ Տես* Г. Н. Чубинашвили и Н. П. Северов, Пути развития грузинской архитектуры, Т., 1936, стр. 58—70. Л. Меликсет-Беков Местечко Ишхан Эрзерумского вилайета,—„Тифлисский Листок", 1915 г., № 107. *Համմ. նաև Ա. Սարուխան, Վերահայրի Տայք և կպարչք գաւառների հին հայ և վրացական վանքերը,—«Հանդէս ամսօրեայ», 1939, էջ 104—105.* Н. П. Северов, Памятники грузинского зодчества, Москва, 1947, стр. 95 (рис. 89), 97 (рис. 90). Е. Такайшвили. О грузинских землях, захваченных Турцией,—„Заря Востока", 1946г., № 107 *(Նույնը վրացերեն «Կոմունիստի» 1946 թ. № 104 և 105 —Իշխանի տաճարի նկարով № 104-ում, որ առաջներին կցված չէր. հայերեն թարգմանությունը՝ Թյուրքիայի գավիաճ վրացական հոգևոր մասին, — «Սովետական Վրաստան», 1946 թ., № 49)։ Համմ. նաև Ներսէս վ. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864,* M. Brosset, Mémoires de l'Académie Imperiale des sciences, t. VIII, № 10 pp. 19—20, et tabl. III, IV. Н. М. Токарский. ц. с., стр. 200—214: Л. Меликсет-Беков, Некоторые памятники армянской эпиграфики на территории Турции. „Эпиграфика Востока", IX, Лнгр. 1954, стр. 78—82. Е. Такайшвили Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тб. 1952, стр. 37—38, 42:

53 *Իսպիր-Սպերից մեզ հասել է մի հայերեն ձեռագիր, որ Հայաստանի Մատենադարանի № 2409—Շարականն է, հեռևյալ հիշատակարանով՝ «Գրեցաւ գիրքս, որ Շարակնոց կոչի, ի յերկիրս Ըսպերոյ ի յանապատս սուրբ Միքայէլի և սուրբ Կարապետի և սուրբ Նշանաց, որ սա՛ կան հաւատեալ» 1592 թվի։*

54 *Վրացական բառեր տաճարի մասին տես՝* Е. Такайшвили, „Материалы по археологии Кавказа", вып. XII, М., 1909, стр. 88—117 и рис. 62—71 и табл. XVII—XXa. Г. Н. Чубинашвили и Н. П. Северов, ц. с., Е. Такайшвили, „Заря Востока", 1946 г. № 107 *(Նույնը վրացերեն «Կոմունիստի»-ի 1946 № 104, հայերեն թարգմանությունը,— «Սովետ. Վրաստան», 1946 թ., № 48)։* Н. П. Северов, Памятники грузинского зодчества, Москва, 1947, стр. 85 (рис. 77), 86 (рис. 78), 87 (рис. 79).

55 *Ճորոխի ավազանի և առհասարակ Տուշ-Կլարջեթի հայերի մասին տես,* Георгий Мерчул, Житие св. Григория Хандзтийского, Грузинский текст, введение, издание и перевод Н. Марра, с Дневником поездки в Шавшию и Кларджию [„Тексты и Разыскания по армяно-грузинской филологии", кн. VII], СПБ., 1911. *Ա. Արշակ, Ճորոխի ավազանը [«Ազգային Մատենադարան» 118], Վիեննա, 1929։*

ԳԵՈՐԳ ԿԱ.ԿԱ.ԲԵՆՑ՝ ԳՈՐԵՑԻ

«ԺՈՂՈՎԱԾՈՒ» (1748)

Գևորգ Գորեցին, ազգանունով Կակաբենց (Կակաբաանթ), վրացախոս հայ է, հայագավան և նույնիսկ Հայոց եկեղեցու սպասավոր՝ Վասպուրականի Կուռց անապատի մխարան-վարդապետ, հռչակավոր Սայաթ-Նովայի ժամանակակից, որը գրի է առել մի սովոր ժողովածու վրացերեն լեզվով հիշյալ անապատում։

Ինչպես հիշյալ ժողովածուի հիշատակարաններից երևում է, Գևորգն եղել է Ավթանդիլի և Մի[ն]րանդախ[ա]ի որդին, ունեցել է մի եղբայր՝ Դավիթ անունով և 3 քույր՝ Թինաթին, Խանում և Ռուսադամ, որոնցից վերջինը 1748 թվին հիշվում է որպես ննջեցյալ, իսկ միացածները՝ ամուսնացած։

Ձեռագիրը, որ գրված է մաս առ մաս՝ 1740, 1747, 1748 և 1750 թթ., իսկ հիմնականում 1748 թվին, ներկայացնում է իրենից դավանաբանական բնույթի մի տեսակ ժողովածու, որին կցված են մի շարք տոներ ու ներբողյաններ հայերեն և վրացերեն լեզուներով։ Դավանաբանական մասը հիմնականում կոմպիլյացիա է Գրիգոր Տաթևացու (XIV—XV դդ.) «Գիրք հարցմանց»-ից և «Բարոզգրքի» Ամուսն հատորից, ինչպես և Ղազար Ջահկեցու (XVIII դ.) «Դրախտ ցանկալի»-ից, որոնց կողքին տեղ են գտել Թարգմանչի և հեղինակի՝ Գևորգ վարդապետի՝ բազմաթիվ հիշատակարաններն ինքնակենսագրական ակնարկներով (վրացերեն)։ Ներբողյաններից երկուսը հայերեն է՝ նվիրված Հովհան Ոսկեբերանին ու Բրիտոսին, միացածները՝ 6 հատ՝ վրացերեն են, նվիրված Գրիգոր Տաթևացուն, Սեղբեստրոս Հռոմի պապին և Գրիգոր Պարթևին, կրկին Գրիգոր Պարթևին և Ներսես Լամբրոնացուն, յուրաքանչյուրը մի-մի տուն, վրաց այբբենին (գովասանք)՝ 37 տող, տաղեր՝ Վարագա Խաչին՝ 27 տուն (108 տող), Բրիտոսին (Բրիտոսի կենսագրությունը)՝ 30 տուն (120 տող)։

Գրիգոր Տաթևացու Բարոզգրքից կատարած վրացերեն թարգմանությունների աչքի է ընկնում «Բարոզ Վարդավա-

ինն» (ընագիրը տես՝ Գիրք քարոզութեան որ կոչի Ամառն հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեացւոյն Եօթնալոյս վարդապետի, Կ. Պոլիս, 1741, էջ 485—486), իսկ Դաղար Զահկեցու «Դրախտ ցանկալի»-ից պատմիչ պատկանների մասին (Գիրք առաուածարանութեան որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Դաղարու առաուածարան վարդապետէ Ճահկեցւոյ, Կ. Պոլիս, 1734, էջ 520—530)։ Իսկ Գևորգ վարդապետի ինքնուրույն թե կոմպիլատիվ գրվածքներն են այն կտորները, որ նվիրված են սուրբ Մարգսի կամ առաջավորաց պատին, Ծառգատակին, Հայոց եկեղեցիների տեսութեանը, հայ-վրացական և հայ-ապվանից եկեղեցական փոխ-հարաբերութեաններին պատմութեանը և այլն։ Գևորգի ալբոքը հիմնականում ուղղված է Ֆրանկներին, այսինքն կաթոլիկների դեմ։

Մանրամասնութեանները Գևորգ Գորեցու կենսագրութեան և գրական գործունեութեան մասին տես մեր հոդվածում՝ «Գևորգ Գորեցի, վրաց և հայոց անծանոթ գրողը XVIII դարու առաջին կեսին» = Георгий Горели, неизвестный грузинский и армянский писатель первой половины XVIII века, *վրացերեն, առաջերեն ամփոփումով՝ «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», հ. X—B, 1941, էջ 89—122, ուր 104—121 էջերում տրված է և հեղինակի ինքնուրույն գրվածքների անդրանիկ հրատարակութեյունը։ Նույն հոդվածում (էջ 89—90 և ծանոթ. 1 և 2 նույնտեղ) տրված է մեր մեկնաբանութեյունը եվրոպական ճանապարհորդների* John. Cartwright-*ի (1590) և* Amédée Jaubert-*ի (1806) նշած փաստերի, որ Զուլպայում և Վանի շրջակայքում՝ Վարագում, հայերին կից եղել են և վրացիներ (իմա՝ վրացախոս հայեր կամ Վրաստանցի հայեր)։*

ԱՆՏՈՆ I ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ» (1750—1752), «ՋԱՓԱՐԵՐԱԿԱՆ» (1753), «ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (1753), ՆԱՄԱԿ ՀԱՅՈՑ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ (1786)

Անտոն I կաթողիկոսը՝ Քարթլիի Իեսե Թագավորի (Վախտանգ VI-ի եղբոր) որդին էր, ծնված Էրեկլե I-ի դուստր Էլիսաբեդից, որ Թեյմուրազ II-ի քույրն էր։ Ծնված լինելով 1720 թ.՝ նա մկրտությունից կոչվել է Թեյմուրազ. սկզբնական կրթությունը ստացել է Դավիթ-Գարեջեցու անապատում, ուր սովորել է սուրբ գիրքը, աստվածաբանություն, փիլիսոփայություն և հունարեն լեզու։ 1739 թ. Դելաուր վանքում (Քութայիսի մոտ) ընդունել է կուսակրոնություն՝ կոչվելով Անտոն, և շուտով նույն վանքի վանահայր է կարգվել, իսկ 1740 թ., հետևապես 20 տարեկան հասակում՝ ձեռնադրվելով եպիսկոպոս՝ նշանակվել է Քութայիսի մետրապոլիտ. 1743 թ. վերադարձել է Դավիթ-Գարեջեցու անապատը և 1744 թ., հետևապես 24 տարեկան հասակում, գրավել է Մցխեթայի կաթողիկոսական աթոռը։ 1755 թ., դառընկից լինելով կաթողիկոսությանը հարելու պատճառով, անցել է Ռուսաստան, ուր սահանձնել է Վլադիմիրի արքեպիսկոպոսական թեմի անօրությունը, ձգելով այնտեղ մինչև 1762 թ.։ Այդ թվին, պատիվը վերականգնելուց հետո, Անտոնը վերադառնում է հայրենիք ու կրկին սահանձնում կաթողիկոսական աթոռը և մնում այդ կոչման մեջ ցմահ՝ մինչև 1788 թ.։ Թաղված է Մցխեթայի «Կենարար սյունի» (Սվետի ցխովելի) կաթողիկոսական մայր տաճարում։

Անտոն I կաթողիկոս Բագրատիոն արքայազնը պատվավոր տեղ ունի գրված վրաց գրականության տարեգրում։ Նրա գրական գործերը հիմնականում, ըստ Կ. Կեկելիձե (Վրաց գրականության պատմություն, I, 1951, էջ 345—358, հատկապես 349—358), ընդգրկում են հոգևոր գրականության հետևյալ ճյուղերը. մեկնաբանական, դավանաբանական-ընդդիմախոսա-

կան, աստվածպաշտական-ճիտական, ներբողյաններ, հովվական-քարոզչական, կանոնագիտական, վարքագրական-վկայաբանական, պատմական, քերականագիտական և փիլիսոփայական։ Սրանցից Անտոնի ինքնուրույն և թարգմանական սուրբ հատորների թիվը հասնում է 23-ի, որոնցից մի քանիսը պարունակում են հետաքրքրական նյութեր Հայաստանի և հայերի մասին, առանձնապես Հայոց եկեղեցու, եկեղեցական գործիչների և եկեղեցական գրականության մասին։

Անտոնի դավանաբանական-ընդդիմախոսական երկերից նախ և առաջ հիշատակելի է նրա մեծածավալ «Հակաճառություններ» (Մղամեաղ՝ վերևում, բառացի՝ «Պատերազմաբանություններ»), որ 3 գրքից է բաղկացած և գրվել է 1750—1752 թթ.։ Մեր ձեռքի տակ է այդ աշխատության հրատարակությունը՝ Պօլիեվքտոս քահանա Կարբելաշվիլու խմբագրությամբ, Թբիլիսի, 1892, XXXVIII+617 էջ։ Այստեղ հատկապես հայերին վերաբերում է Բ գրքի IV գլուխը (էջ 107—121) և Գ գրքի XXIII գլուխը (էջ 593—603), որտեղից մենք առավել թարգմանաբար բերում ենք լոկ մի երկու հատված։

Այս աշխատության կողքին նշելու է Անտոնի թարգմանությունները հայերենից, Թբիլիսիի հայոց կաթողիկե եկեղեցու Բերդի մեծ եկեղեցու (այժմյան Ս. Գևորգի) մեսրոպ Փիլիպպոսյան. Ղայթմազաշվիլու աշխատակցությամբ, 2 մեծ գործ, որոնք են՝ 1. «Եվսեբիոսի պատմությունը», որ նույն «Առաջին 3 սինեզերական ժողովների պատմությունն» է, թարգմանված 1776 թ., և 2. Կյուրեղ Ալեքսանդրացու «Գանձը», թարգմանված 1788 թ. (սրանցից և ոչ մեկը հրատարակված չէ)։

Վարքաբանական-վկայաբանական գործերից առանձնանում են «Մարտիրոսիկա»-ն, այսինքն «Վկայաբանություններ», ուր բավական պատվավոր տեղ է հատկացված ինչպես հայ-վրացական, նույնպես և հայոց վկաների կենսագրություններին, օրինակ՝ Շուշանիկի, Սուքիասյանց, Իսահակ և Հավսեփի, Գրիգոր Պարթևի և այլն (սա ևս հրատարակված չէ)։ Ընդ սմին, Անտոնը թարգմանել է հայերենից Հովհան Ոսկեբերանին վերագրվող ապոկրիֆիկ ներբողյանը Գրիգոր Պարթևի մասին, որին, բան մեր հետազոտության, հմբ է գրվել Երևսաղեմի 1734 թ. հայերեն հրատարակությունը (տես մանրամասն սրա մասին և վրացական վերնիայի տեքստը մեր հրատարակությամբ մեր աշխատության մեջ. Грузинская версия апокрифической гомилии

о Григории Парфянском, приписываемой Иоанну Златоусту, *վրացերեն, ռուսերեն ամփոփումով,— „Литературные Разыскания“, II, 1944, էջ 39—61, ահքատը՝ 46—59)։*

Ըստ էության ներբողյաններ է պարունակում Անտոնի «Ջափաբերականը» (Ծղ՛որիլխոլ՛վաբա) ևս, ի միջի այլոց, գտնում ենք այսպիսիները (ներբողյաններ), նվիրված հիշյալ սրբերին՝ Շուշանիկին, Սուքիասյանց, Իսահակ և Հովսեփին, նաև Դավիթ և Տիրիճանին, ինչպես և հիշատակություններ (հեգնանքով) Հովհան Օձնեցու և Գրիգոր Տաթևացու։ Այս «Ջափաբերականը» հրատարակվել է Պ. Ի ո ս ե լ ի ա ն ու խմբագրությամբ, Թրիլիսիում, 1853 թվականին։

Քերականագիտական երկերից նշանավոր է «Քերականության» առաջին փորձը (խմբագրությունը), որ ներկայացնում է իրենից գրեթե բառացի թարգմանություն, վերոհիշյալ Փիլիպպե քահ. Ղ՛այթմազաշվիլու ընկերակցությամբ, Մխիթար Սեբաստացու «Քերականության» վենետիկի 1730 թ. հրատարակության, թարգմանչի ընդարձակ առաջաբանով հանդերձ, որ ստորև թարգմանաբար բերում ենք (այս փորձը ևս դեռ հրատարակված չէ)։

Եթե իր «Քերականության» առաջին խմբագրությունը ձեռնարկելիս 1753 թ. Անտոն կաթողիկոսը հետևել է Մխիթար Սեբաստացու «Քերականության» 1730 թվականի հրատարակությանը, հապա իր գլուխ գործոց՝ «Հակաճառությունն»-ը գրելիս նա, բացի վրացական աղբյուրներից, որպիսիք են Արսեն կաթողիկոս Սափարացու (IX դ.) «Վրաց և Հայոց բաժանման մասին» և Արսեն Իղ՛ալթեկցու (XII դ.) «Դոգմատիկոն»-ը, օգտագործել է նաև բազմաթիվ աղբյուրներ հայերեն լեզվով, այն է՝ Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց առաք եկեղեցւոյն ընդ մեծի առաք եկեղեցւոյն Հռոմայ» (=Consiliationis Ecclesiae Armenae cum Romana), հ. II, մասն I (Հռոմ, 1658), որտեղից ամբողջապես թարգմանված է Բ գրքի Գ գլուխը, նաև ժամանակակից գրականությունից՝ Ղազար Ջահկեցու «Գրախտ ցանկալի»-ն (Կ. Պոլիս, 1734), Հակոբ վ. Նալյանի Ակնեցու «Վէմ հաւատոյ»-ն (Կ. Պոլիս, 1733), «Յայսմաւուրք»-ը (Կ. Պոլիս, 1706, 1730), «Մաշտոց»-ը (Կ. Պոլիս, 1714, 1726, 1744) և այլն։ Այս աղբյուրները մանրամասն քննված են մեր հոդվածում. Латинско-армянские источники „Готового ответа“ Антония I, *վրացերեն, ռուսերեն ամփոփումով. «Թբիլիսիի Պետ. համալսա-*

բանի Աշխատություններ», XXX в—XXXI в, Թբ. 1947, էջ 97—112։

Հայոց Դուկաս կաթողիկոսին ուղղված Անտոն Վրաց կաթողիկոսի 1756 թվակիր (?) նամակը նորևրս հրատարակվեց Վրաստանի պետ. թանգարանի վրացերեն ձեռագրերի ցուցակում (վրացերեն, հ. I, Թբ. 1946, էջ 176—177)։

Թարգմանություններն Անտոն I-ի երկասիրություններից մենք կատարել ենք ըստ հրատարակի վրա եղած հրատարակությունների, բացի «Քերականություն»-ից, որ օգտագործել ենք ըստ Թբիլիսիի նախկին հնդեցական թանգարանի հավաքածուի № 785 ցրչագրի։

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ»-Ի 3

ԱՌԱՋԱԲԱՆ

...Ծանոթացա Հովհան Օձնեցու, Պողոս Տարոնեցու, Սահակ Սյունեցու, Դոշիկ Վանականի, Վարդանի, Սարգսի, Մաշտոցի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Կնեցու (Կեսարացու?), Դավիթ Ջահկեցու, Հակոբ Ակնեցու (Անգեղի?) հայոց վարդապետների գրքերի հետ։ Սրանցից ոմանց գրությունները լիովին համաձայն եմ, իսկ ոմանց գրություններից... խոցոտվեց սիրտս, և «Նախասնձ տան Աստուծոյ եկեր զիս» [Սաղմոս LXVIII, 9 (10), Աւետ. Յովհաննու ii, 17]։... Սրանց դեմ ինձանից շատ առաջ եղել են ունեցել նախկին աթոռակալները, համայն Վրաստանի հայրապետներ՝ ատավածա[հաճո] Կիրիոնը և երանելի Արսենը, որոնք շնորհով ամենասուրբ հոգվույն ընդգիմադրեցին իրենց ժամանակակից մխիթարիստ հայերին։ Իսկ ևթե ցանկանում ես իմանալ, թե ինչպես եմ աշխատել այս գրքի վրա, այդ մխիթարյան իմաստություններ գիտես։

Ինձ օժանդակում էր Փիլիպպոս հայազգի երեցը՝ թարգմանություններ [կատարել]ով հայերեն գրվածքներից, իսկ լատիներեն գրվածքների թարգմանությունները [հատցնում էր ինձ] լատինացոց ամեն կուսակրոն քահանան, քանի որ ես, բացի վրացերենից, ուրիշ ո՛չ մի լեզու չգիտեի, իսկ հայերեն գիրը թեև գիտեի, սակայն շատ թույլ և թոուցիկ կերպով։...

Այս՝ «Հակաճառություն» գրքի առաջին, երկրորդ և երրորդ գրքերում բերած են վկայություններ հետևյալ սուրբ գրվածքներից... իսկ հայոց վարդապետներից՝ 1. Սուրբ Գրիգոր Լուսա-

վրիչը, 2. Ներսես Մեծն, 3. Սահակ (Իսահակ) Մեծն, 4. Դավիթ փիլիսոփան, 5. Հովհաննէս Մանդակունին, 6. Հայ եպիսկոպոսների ձեռնադրության գիրքը [Մաշտոցը], 7. Ներսես Կլայեցի, 8. Ներսես Լամբրոնացի, 9. Շիրակավանի ժողով[ի որոշումները], 10. Սարգիս հերձվածողը, 11. Իգնատիոսը, 12. Տարսոնի ժողովի [կանոնները], 13. Գրիգոր Սահ [կաթողիկոսը], 14. Սահ ժողովի [կանոնները], 15. Մովսես Սահցին, 16. Ազարիա Սահցին, 17. Ագանայի (Աաենի) ժողովի [կանոնները], 18. Հայոց Հայմասվուրքը (սամավուրքի), որ է Սվինաքսար...

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ Ա. ՓՈՐՁԻՑ[1]

ԱՌԱՋԱԲԱՆ[2]

1

... Բազմաթիվ թարգմանական գրվածքներ գտնված են... սուրբ քաղաքում[3] և մեր՝ վրացական սուրբ լեռան վանքում[4] բայց քերականության մասին ոչինչ չեմ լսել...

Լևոնի (Լէօնի)[5] որպի՝ Վախտանգ Թագավորն[6] կամեցավ, գտնել այս[պիս]ի մի գիրք... և նրա օրոք կար մի վանական Օրբելյանի տոհմից Սարա անունով[7], որը իմաստա[սիրության] հետևող էր. ... Ոչ նվազ չափով քերականությունը որոնում էր մանավանդ իմ ազգական Վախուշտին[8]: Եվ քանի որ այդ [քերականությունը] չգտնվեցավ՝ ... դիմեցին Թրելիսի քաղաքացիներից մեկին, որին այժմ Զաքարիա վարդապետ են կոչում[9], և ազերսեցին, որ օգնի: Եվ համաձայն նրանց ազերսանքին, նա (Զաքարիան) ձեռնարկեց քերականության թարգմանելուն [հայերենից][10]: Սակայն երբ Արչիլ Թագավորի[11] օրոք այդ թարգմանությունն ավարտվեց, պարզվեց, որ այն քերականություն չէ, և որ գտնվածն այն չէ, ինչ որ փնտրում էին...

2

... Հասավ մեզ Թեյմուրազ Երկրորդի[12] և նրա որդի Իրակլիի[13] թագավորությունը... և թագավորներն իսկ չկարողացան գտնել քերականությունը...

... Մի քանի տարուց հետո ևս հանդիպեցի ոմն քահանայի, որ ազգով Էրմանյան, այսինքն հառայան էր[14], ազգանունով Ձա՛յթմաղ՛աշվիլի Փիլիպպե և ազնվական ծագումով՝ մեծ իշխան

Օրբելիաններէ իշխանութեան սահմաններից։ Եվ մենք երկուսով օրըստօրէ պրպտուքներ էինք կատարում, և նա շատ մեծարում նրա հետ։ Մենք նախ և առաջ թարգմանեցինք հայերենից Արիստոտելից...

Երբ հետ խորհրդակցելով՝ մտադրվում էինք քերականության փոխադրութեան և սկսենք, սակայն ինձ զարում էր այն, որ իմ միտքը քերականագիտական կրթութեան չէր ստացել. իսկ այն Փիլիպպոս քահանան խիստ հմուտ էր քերականական արվեստին, և՝ ապավինելով աստվածային իմաստութեանը՝ թեմուրազ թագավորի և նրա որդու հրամանով ձեռնարկեցինք այս [գործը]։

Նախ Փիլիպպոսն ծանոթացրեց ինձ, թե՝ ինչ է մասունք բանին և ապա քերականութեան սահմաններին, տեսակներ, վանկերը, բառերի և խոսքի էության հետ, հետագայում մասունք բանիի ու նրանց հատկութեաններին, այսինքն պարագաների հետ, և աստիճանաբար մոցրեց ինձ իմաստութեան գետնի։...

Սակայն ևս և այն Փիլիպպոսն միայն հայերեն քերականութեամբ չէինք բավականանում, այլ կարդում էինք և լատիներեն քերականութեաններն ևս... և՝ հայերենի հետ համեմատելով՝ նմանապես թարգմանում էինք։

Իսկ համաձայնութեանը (սինտաքսի[ս]), որ է շարահյուսութեան, ...նույնպես բացատրեց մեզ այն գովելի անձնավորութեանը, մեզ կարեկից բարեկամ Փիլիպպոսն։...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Անտոն I կաթողիկոսի «Քերականութեան» ա. փորձի մասին հետաքրքիր է լսել հանգուցյալ պրոֆ. Ա. Ցագարելու (А. Цагарели, О грамматической литературе грузинского языка, СПБ. 1873, стр. 21—22) *դնահատականը.*

„Антоний... придерживался армянской грамматики известного вардапета Мхитара, основателя братства мхитаристов. Антоний следовал ему в распределении и расположении грамматического материала, заимствовав многие общие определения грамматических категорий целиком, ... но то, что составляет грамматическую особенность каждого языка, — звуковые особенности, *этимологические формы* и *словообразование*, в обширном смысле слова, главным образом *склонение* и *спряжение*,— изложено автором самостоятельно и сообразно с духом грузинского яызка, резко отличающегося от грамматического строя армянского языка.

„Но насколько Антоний в изложении грамматических форм собственно грузинского языка отступает от мхитаровой грамматики, настолько

же он придерживается этой последней в общем плане изложения грамматических положений и определений разных грамматических категорий, которые он иногда приводит слово в слово[6]:

Իբրև ապացուցց այս քերդ, Ա. Յ ա գ ա բ ե լ ի ն առաջ է բերում մի շարք համեմատութիւններ, ուր, ի միջի այլոց, ցոյց է տալիս Անտոնի սխալները, որոնք նախադասութիւնները հայերենից վրացերէն բառացի թարգմանելու հետեւանք են (նոյն տեղ, 22—30):

Միեւժամանակ, հետաքրքիր է Յ ա գ ա բ ե լ ու մի նկատողութիւնը, որ վերաբերում է տերմինաբանութեանը.

„Терминология, как в этом трактате, так и в других грамматических трудах Антония, больше приближается к греческой и латинской, но попадаются и такие технические названия, которые позволяют заключить, что они переведены с армянского языка, а не непосредственно с греческого или латинского; так, слово „падеж" не переведено на груз. словом *«ვარდნა», «ვარდნილება».* (соотв. русскому „падение, случай", нем. Fall), как следовало ожидать, судя по греч. πτῶσις, лат. casus, но переведено словами *«ვრცნობა»*—„кружение, верчение", как и в арм. *հոլով*, букв. „катание, кружение, обращение". Равно и слово „склонение" не передано словами *«ვარდნა»*, как в греч. κλίσις, лат. declinatio, но словом *«ვრცნობერება»* — „скатывание, кружение, обращение", как и в арм. *հոլովումն* (стр. 39).

*Ի միջի այլոց, հոլովումներն քվին Անտոնն ավելացնում է բացառական *«վաժդ'ներին»* (= лат. ablativus), որ վրացերենում գոյութիւն չունի, ինչպես և ր տառը և հնչյունը, որ գրական վրացերենին խորթ է:*

[2] *Ըստ նախկին Թր. հիպոցեական թանգարանի (այժմ Վրաստանի պետ. թանգարանում) հավաքածուի № 785 գրչագրի, էջ 1a — 6в. տմմտ.* Ф. Жордания. Описание рукописей Тифлисского Церковного Музея, кн. II, Т. 1902, стр. 221—223, *նաև Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Հատված XVIII դ-րի Վրաց գրականության պատմությունից. Փիլիպե Դ'այթմազաշվիլի, վրացերեն,—«Հոմիսիս», 1922 Թ. № 16: Թարգմանությունները՝ ռուսերեն* А. Цагарели, О грамматической литературе грузинского языка, стр. 6—7, *հայերենը՝ Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Հայերը Վրաց հին գրականութեան մեջ,— «Գեղարվեստ», № 7, Թ. 1921, էջ 46—47:*

[3] *Այսինքն՝ Երուսադեմում և նրա Սուրբ Խաչ վանքում, որ հնուց վրացիներին էր պատկանում:*

[4] *Այսինքն՝ Աթոռում (Բագրեվանդի թեքարկղում):*

[5] *Լևոն (Լեվան), կախեթի թագավոր:*

[6] *Վախտանգ VI, Քարթլիի կառավարիչ՝ 1703—1712 ԹԹ., թագավոր՝ 1719—1724 ԹԹ. (վախճ. Աստրախանում 1757 թ.):*

[7] *Տե՛ս «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 118—125:*

[8] *Վախուշտիի մասին տե՛ս այս գործի Գ գլուխը:*

[9] *Խոսքը Զաքարիա Մագինաշվիլու մասին է. Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Հայերը վրաց հին գրականության մեջ, — «Գեղարվեստ» № 7, էջ 44. տ'ես նաև ստորև՝ Ի-Դ գլուխը (էջ 257):*

[10] *Դեռևս տպված չէ: Ընդբի շուրջը անտիպ աշխատություն թողեց*

հանդուցյալ վրացագետ Դ ա վ ի թ Գ. Կ ա բ ի ճ ա շ վ ի լ ի ն (զեկուցված Վրաստանի Պատմա-ազգագրական ընկերության հրապարակական նիստերից մեկում՝ 1923 թ.):

11 Արչիլ I (1647—1713) Կախեթի, երբեմն Իմերեթի թագավոր ընդմիջումներով՝ 1664—1675, 1678—1679, 1690—1691, 1695—1698, 1698 թթ.:

12 Թեյմուրազ II, Կախեթի թագավոր, 1744—1762 թթ.:

13 Էրեկլե II, նախ Կախեթի թագավոր, 1744—1762 թթ., ապա միացյալ Քարթլիի և Կախեթի արքա՝ 1762—1798 թթ.:

14 Այսինքն Հայկազն կամ Հայազն, հայազիք, հայ:

ՆԱՄԱԿ ՂՈՒԿԱՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

«Ղուկաս ամենայն հայոց սրբազնագույն հայրապետին, ս. Բարգուղիմեոս և Թադեոս առաքյալների աթոռակալին, սիրելի եղբոր և լիովին արժանահավատ մտերիմիս:

«Ամենամեծ հարգանքով և կատարյալ սիրով դեպի Ձերդ Սրբությունը սկսում եմ գրել Ձերդ Սրբությանն ուրախ հոգվով և ամենալայն բարեմաղթություններով հոգվույս, հայտնելով Ձեզ մաքրափայլ սերս և նվիրվածությունս Ձեզ, իբրև հերս առ հերս գրուցող Ձերդ Սրբության հետ:

«Սրբազնագույն Հայր... առաջս Ձերդ Սրբության ուղարկած նամակը, որ լի է սիրով և մխիթարությամբ դեպի ինձ, և շնորհակալությամբ առ Աստված ուրախացա... և Ձեր մխիթարանքն ուրախություն ներշնչեց հոգուս:

«...Ձերդ Սրբության կողմից ինձ ուղարկած նամակին ժամանակին չպատասխանելն այն էր, որ չգտա մեկին, որ այդպես լիով լիներ՝ Ձերդ Սրբության մոտ, որի համար խնդրում եմ Ձեր ներողամտությունը: Իսկ իմ՝ կաթողիկոսական գահի վրա բազմելու առթիվ Ձեզանից ինձ ուղարկած մի շարք ընծաները առաջս՝ իբրև հատուցումն Աստծուց... խնդրում եմ Ձերդ Սրբությունից, որ ինձ չմոռանաք և ինձ մխիթարելու նպատակով նամակով ինձ հիշեք, քանի որ ինձ համար շատ հաճելի էր Ձեր նամակը: Եվ սրանով ավարտում եմ Քրիստոսով եղբայրական սիրով լի խոսքս, մնալով կատարյալ հավատարմությամբ առ Ձեզ»[1]:

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1 Այս նամակը հրատարակված է 1756 թվականի ներքո (Описание грузинских рукописей Государственного Музея Грузии. т. I. Тбилиси, 1946, стр. 174, 176—177). որ, սակայն, կասկածելի է: Այդ թիվը պետք ուղ-

դել 1786-ի՝ ելնելով այն հանգամանքից, որ Անտոն I կաթողիկոս է եղել 1744—1755 և 1762—1788 թթ., իսկ Ղուկասը ամենայն հայոց կաթողիկոս էր 1780—1799 թթ.։ կարճ ասած, դույզ կաթողիկոսների գրագրությունը կարող էր տեղի ունենալ միմիայն 1780—1788 թթ. միջոցին, զուցե 1780 կամ, որ ավելի հավանական է, 1786-ին, բայց ոչ մի դեպքում 1756-ին։

Օգտվելով առիթից, կարևոր ենք համարում նշել, որ Անտոն I կաթողիկոսը լավ տեղյակ է էջմիածնի աթոռի գործերին։ Այսպես, օրինակ, իր «Հակաճառությանն» մեջ մի տեղ հիշում է իր ժամանակակից կաթողիկոս Ղազար Ջահկեցուն (1737—1751), որի մասին գրում է. «Սա (Ղազարը), որ ապրում է մեր օրոք, իմ մեծ բարեկամն է, քանի որ բազմիցս սիրո նամակով բարևներ հղել ինձ». ապա նշում է, որ «Ղազարը գրել մի գիրք, որ կոչել Գրախոս ցանկալի»,... որը «հակառակ է Բազդեդոնի ժողովին և Լևոնի [տումար]-ինձ։

Մի տեղ ևս Անտոնը խոսում է առանց բեմի եպիսկոպոսներ ձեռնադրելու սովորույթի մասին, ապա մի առ մի թվում է անվիճակ եպիսկոպոսների պաշտոնեությունը էջմիածնում, ինչպիսիք են Վիրակները (հետագա նոմենկլատուրայով նույն հայրապետական պատվիրակները), ավագերից կամ վանահայր եպիսկոպոսը (ժամօրհնողը), վիճակավոր եպիսկոպոսը (յուսաբարձրացողը), արքունակալ-եպիսկոպոսը (տեղակալը) և Տաթևացիաբ-եպիսկոպոսը (հյուրընկալը), որոնցից վերջինը էջմիածին եկող քարավանների, վաճառականների, ճանապարհորդների, ուխտավորների և առհասարակ բոլոր այցելուների հսկողն էր։ Վերջինս, ի միջի այլոց, կարևոր դեր էր խաղում էջմիածնի ֆինանսական օպերացիաների գծով։

ՕԹԱՐ ԹՈՒՄԱՆՈՎ

ՋԵԿՈՒՅԱԳՐԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻՆ (1754—1756)

Օթար Թումանովը մեկն է Վրաստանի այն իշխաններից, որոնք անցել էին Ռուսաստան Վախտանգ VI թագավորի գաղթի միջոցին՝ նրա բազմամարդ շքախմբի կազմում 1724 թվին։ Հասնելով Պետերբուրգ՝ նա մտել էր ռուսական զինվորական ծառայության մեջ։ Ռուսաց զորքում էր ծառայում նաև նրա որդի Իվանը. այնպես որ 1750 թվականին հայրը կապիտանի աստիճան ուներ, իսկ որդին՝ պրապորշչիկի։

1750 թ. սեպտեմբերին Օթար Թումանովը դիմել է ռուսաց արտաքին գործերի պետական կոլեգիային մի հայցագրով, ուր նա՝ առաջարկելով իր պատրաստակամությունը գաղտնի հետախուզություններ կատարել Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանակից Վրաստանում և վերջինիս մայրաքաղաք Տիֆլիսում հիշյալ երկրների քաղաքական և զինվորական դրության և իրադարձությունների մասին, որպեսզի հետևանքները հաղորդի կոլեգիային՝ խնդրել է 2 տարի ժամանակով գործուղվել իբրև Վրաստան։ Այս հայցագրի մեջ, որը ռուսերեն է գրված և հասել է մեզ Մոսկվայի՝ ֆեոդալական էպոխայի Արխիվի „Грузинские дела“ ֆոնդի № 11 գործում, նա իրեն անվանում է „грузинского гусарского полку капитан Отар Томанов“, իսկ իր որդու մասին գրում է. „...сын мой князь Иван Туманов служит в оном же полку прапорщиком, и оной сын мой объязан чтоб в России вечно останица“.

Նույն խնդրագրի մեջ Օթար Թումանովը մանրամասն բացատրում է իր գործուղման կարևորությունը և խնդրում հետևյալը. „...меня нижайшего онного отправить в Грузию в город Тифлиз, а оной в Грузии столичной город на границе между турков и персианов состоит, а у меня племянник родной... и при грузинском царе оной мишкарбашом нахо-

литца, и других многих свойственников в Грузии имею и могу азейские, а особливо персицких ведомостей чрез Грузию достать; в каком обстоятельстве та Персия находитца будет, и кто шахом зделаетца и против турков и против про те их войну объявят или с кем мир заключат, сверх же того могу из Грузии под секрет отправить разных... людей в Ыспаани и в Ереване, и те посланные в оных персицких местах тамошние ведомости получать и ко мне в Грузию писать будут". *Ասա իր մասին ավելացնում է.* „Закон содержу я армянской* и в Грузии тамошними армянами я почитателен, к томуж в Грузии у меня дом и деревня, а для лутчего к тому делу уверения оставляю здесь, в России, жену и детей моих":

Ա.յպիսով, Օթար Թումանովը ոչ միայն խոստումներ է տալիս ռուսաց կառավարությանը, այլև երդնում, որ իր կնոջը և երեխաներին թողնում է իբրև պատանդ, միայն թե նրան թույլ տրվի գալ Վրաստան, ուր նա թողել է իր տուն ու տեղը՝ հայրենի գյուղը:

Հակառակ դեպքում Օթար Թումանովը խնդրում է՝ „...буде государственная коллегия иностранных дел... меня к тому делу отправить не дозволит, тоб дать одного человека такого, который бы знал говорить по грузинский или по персицкий илиж по армянский, и такого человека отправить от коллегии в Грузию во оный город Тифлиз к царю грузинскому или племяннику моему...":

Արտաքին գործերի պետական կոլեգիան Օթար Թումանովին անմիջապես ոչ մի պատասխան չի տալիս, այլ միմիայն 1754 թվականին որոշում է օգտագործել նրան, համաձայն վերջինիս պատրաստակամության, ի հետևություն որի 1754 թ. մարտի 21-ին կայացած բարձրագույն հրամանով առաջադրվում է.
„Грузинского гусарского полку капитана князя Отара Томанова, для поручаемого ему от той коллегии секретного разведывания и примечания, отпустить в Грузию на два года, а для скрытности сего намерения дать ему из военной коллегии паспорт в такой силе, что он по желанию своему для исправления домашних нужд в отечество его отпущен. А

* *Ուզում է ասել՝ որ հայազգի է — Լ. Մ.-Բ.:*

в небытность его, остающейся здесь, в России, жене его с детьми на пропитание давать из войнской казны обыкновенное жалованье с рационами и порционами, сколько он по своему чину получает".

Հաղորդելով մարտի 21-ին կայացած բարձրագույն հրամանի մասին Օթար Թումանովին, որտեղից գործերի պետական կոլեգիան հանձնում է նրան 7 կետից բաղկացած մի ընդարձակ հրահանգ, ուր սկզբում կարդում ենք. „Выписка, для объявления отправляющемуся в Грузию грузинского гусарского полку капитану князью Отару Туманову, чего ему тамо наблюдать надлежит и которая имеет ему служить вместо инструкции... по высочайшему Ея И. В. соизволению повелено вас в Грузию на два года отпустить под претентом исправления домашних ваших нужд, а в самом деле поручить вам прилежное разведание о всем нижеследующем...":

Գալով Տփղիս, Օթար Թումանովը սիստեմատիկ կերպով զեկուցագրեր է գրում վրացերեն լեզվով և ուղարկում Պետերբուրգ՝ որտեղից գործերի պետական կոլեգիայի հասցեով և իր սեռրագրությամբ՝ «կապիտան Կնյազ Օթար Թումանով» կամ «կապիտան Կնյազ Օթար Թումանովս եմ սեռրագրել»:

Մեզ հասել է 9 զեկուցագիր Օթար Թումանովի գրած՝ սկսած 1754 թ. հուլիսի 17-ից մինչև 1756 թ. հուլիսի 13-ը, որոնց մեջ (մեկից զատ) բավականաչափ տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին: Այս զեկուցագրերն են՝ 1754 թ. հուլիսի 17 և 24, դեկտեմբերի 1, 1755 թ. փետրվարի 7, մարտի 21, նոյեմբերի 20, 1756 թ. մարտի 23, մայիսի 22 և հուլիսի 13-ի թվակիրներով, գրված Տփղիսից:

Զեկուցագրերը համառոտ ներածականով հանդերձ, ուր տրված են կարևոր տեղեկություններ Օթար Թումանովի մասին, հրատարակել է պրոֆ. Յ ա ս ե Յ ի ն ց ա ձ ե ն հատուկ հոդվածում՝ «Կապիտան Օթար Թումանովի զեկուցագրերը Վրաստանից (1754—1756)», վրացերեն, — «Թբ. պետ. համալսարանի Աշխատություններ», հ. XXVII—B, 1946, էջ 1—32:

---

* *Հմմտ. նույն Յ. Յ ի ն ց ա ձ ե ի մյուս հոդվածը՝ «Մի քանի տեղեկություն որոշ ինքնակալության հետախուզություններն և նրա գործակալների գործունեության մասին 18-րդ դարի կրկրորդ կեսի Վրաստանում», վրացերեն, — «Բուբայիսի Մանկավարժական Ինստիտուտի Աշխատություններ», հ. II, Բուբայիսի, 1941, էջ 85—86:*

ՉԵԿՈՒՅԱԳՐԵՐԻՑ

1

1754 թ. հուլիսի 17

... Ղափլանի որդոց Իսմանեին և Ջալին Ագաա-խանն[1] է ուղարկել այստեղ։ Նրանք եկել են Երևան։ Այնտեղից մի թարգյամա է ուղարկել։...

2

1754 թ. դեկտեմբերի 1

... Լեզգիները... սեպտեմբերի 6-ին Մծղ'նեթից[2] գարձյալ 3 գերի տարան։... Հոկտեմբերի 20-ին Մծղ'նեթում գարձյալ սպանել են կամ գերել 4 հոգի։...

... Անցյալ տարիները Էրեկլե թագավորը Երևանումն է եղել ավգան Ագաա-խանին Էրեկլե թագավորը սակավաթիվ զորքով հաղթել է։...

... Հայերը գոնվում էին Սղնախում՝ Գյուլստանի (Կուլիստանի) ներգում։ Նրանց գլխավորները մելիք Յուսուֆ (Ուսուֆ) և մելիք Աթամ են կոչվում[3]։ Սրանք մինչ 1500 [դինված] մարդ ունին։ Այս հայերի վրա հարձակվել է Փանա-խանը, հայերը հաղթել են, Փանա-խանի մարդկանցից 300-ի չափ սպանել են։ Այս պատերազմը եղավ 1754 [թվի] օգոստոսի 26-ին։...

1754 [թվի] հուլիսի 28-ին լեզգիները հարձակվել են տաճկական հողերի վրա, ... քրիստոնյաներին էլ են տարել գերի, օգնություն չեն ցույց տվել ոչ Ախալցիխաի փաշան և ոչ էլ Ղարսի [փաշան]։...

3

1755 թ. փետրվարի 7

... Պարսկաստանում (Փերսիա) իսկապես խառնակություն է։ Քարթլիից գնացած մի քանի ցեղերը գարձյալ մտադիր են Բոլչալու-Երևանի [երկր]ից Քարթլի վերադառնալ։ Այս պատճա-

ով Պարսկաստանում (Փերսիա) խառնակություն է։ 1755 [թվի] հունվարին Ախալցխեից լուր եկավ, որ խոնթքարը[4] մեռել է և նրա տեղ ուրիշին են նստացրել։ Նախկին խոնթքարը Ախալցխեի փաշային փոխել էր և Ախալցխեի փաշայությունը տվել նրա եղբորը, որը Ափուզ-Մա[ն]մադ-փաշա է կոչվում։ Իսկ այն՝ նախկին փաշային Վանի փաշայությունն էր հանձնել։ Ղարսից էս լուր հասավ, իբր թե նոր խոնթքարից[5] 2 փարման է եկել մեկը՝ խոնթքար դառնալու մասին, մյուսը՝ Էգիչարի ռոճիկի մասին։... Սուտնպես լսեցինք, իբր թե այս աշնանը Ա[ր]զրումում ժանտախտ է եղել, որը այժմ ձմռանը չքացել է։ Ղարսում, Ախալցխեում, Պարսկաստանում (Փերսիա), Քարթլիում ողջ և առողջ են։...

4

1755 թ. մարտի 21

1755 [թվի] փետրվարի 18-ին Երևանից լուր ստացվեց, որ Թուրքերը պատրաստվում են հարձակվելու, խոնթքարը հրամայել է հարձակում կատարել, նույնիսկ երկյուղ են կրում՝ որևէ տեղից [Թուրքերը] այս կողմը չշարժվեն։ Դարձյալ՝ մարտի 7-ին Թոխաթից Տփղիս քաղաք եկավ հայ Հարությունն Գասպարյանը (Արութինա Գասպարաշվիլի), որը Թոխաթից դուրս էր եկել դեկտեմբերի 27-ին. սա ասաց, թե Թոխաթում լուր ստացվեց Կոստանդնուպոլսից (Կոստանդիպոլի), որ ռուսաց դեսպանին և Ֆրանսիայի դեսպանին արձակել են։...

Սղնախի հայերը մեկուսացած են լրենց տեղում, ներկայումս Փանա-խանին և Թուրքերին չեն ծառայում։ Կարծում եմ՝ Քարթլիի Թագավորը և Կախեթի Թագավորը, որքան էլ սրանք ի վիճակի են, [լավ են] տրամադրված դեպի քրիստոնյաները։...

5

1755 թ. նոյեմբերի 20

...Այստեղ լուր հասավ, որ Թուրքական (Թուրքիկիս) հողում՝ Բայազետում և Ղարսում ժանտախտ է սկսվել... Ասում են, որ լեզգիներն ավերում են Թուրքական հողը, ավերել են Գոկիան (Կոկիա) և Բարալեթը. քրիստոնյաներին թալանում են և գերի տանում, նույնպես և Ղարսում սպանդ[6]... Ճիշտ է, որ Բայազետում և Ղարսում ժանտախտ է սկսվել...

...Սղնախի հայոց մելիք Յուսուֆը (Ուսուֆը) այստեղ թագավորների մոտ եկավ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցությամբ։ Սղնախը գտաարկվել է։ Իրոք հացի թանկություն է եղել [այնտեղ]... Գյուղացի-ռայաթը Փանա-[խան]ին է մնացել։ Մելիք Ադամն իր ընտանիքը Գյանջա է ուղարկել, ինքը դեռևս իր բերդում է գտնվում. սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնություն չի երևում։

6

1756 թ. մարտի 23

...Քաղաք Տփղիսում գտնվում էին [լատինական] պատրեր, որոնք 8 եկեղեցի ունեին... սրանք զավթել էին մի քանի հայոց և մի քիչ էլ վրացական եկեղեցիներ։ Ժողովրդի սիրտը՝ Քարթլիի կաթողիկոս Անտոնը[6], որը Թեյմուրազ թագավորի քրոջորդին է, պատրերին երես էր տվել։ Վրաստանի ժողովուրդը ասում էր, թե կաթողիկոսը Հռոմի դավանությանն է հարել, որը արդարացի դուրս եկավ։... 1755 թ. դեկտեմբերի 16-ին էրեկլե թագավորը Կախեթից ժամանեց [Տփղիս], և նույն իսկ դիշերը ժողովեցան եպիսկոպոսները, վարդապետները, քահանայական դասը, նաև իշխանները։ ...Անտոնը ...խոստովանեց հունադավանությունից հեռանալը և Հռոմի դավանությանն հարելը։ Եվ նույն պահին բերին կաթողիկոսի մեծավորներին՝ հինգ քահանաներին և մի հայ աբրաներին[7], որոնք նույնպես խոստովանեցին Հռոմի դավանության հարելը։ Այս Անտոնին նույն ժամին կաթողիկոսությունից հեռացրին և արգելեցին պատարագել, հինգ քահանային և մի հայ աբրաներին ևս մյուս օրը կարգալույծ արին։...

1756 թ. հունվարի 7-ին Երևանից մարդ եկավ և ասաց, որ Ապաս-խանը[8] պարտվել է, իսկ ամանք ասում էին, որ սպանվել է[8], Երևանի ժողովուրդը տարակուսանքի մեջ է։ Առաջին լուրը հենց որ իմացա, այն դեռ ևս ոչ ոք չէր ասացել։ Պարսկաստանում (Փերսիա) իրոք խառնակություն է։ Դարձյալ հայերից իմացա, որ Թուրքական (Թուրքիայի) երկրում խոնթքարը Զաթաչի Աբդուլա-փաշային սարասքյար է նշանակել։...

...Բայազետում, Ղարսում, Ախալցիխեում ժանտախտ է, Քարթլիում խաղաղություն է տիրում, ոչ ժանտախտ կա և ոչ էլ որևէ այլ հիվանդություն, բոլորը ողջ և առողջ են։...

1756 թվի հունվարի 12-ին քաղաքից ելա, փետրվարի 8-ին հասա Դազախ։...

Հայոց ծայրագույն (նախամեծար) պատրիարքը, որ էջմիածնումն է նստում, որին թուրքերը Ուչքիլիսա են կոչում, նոյեմբերի 11-ին մեռավ[9]։...

Վրաստանի թագավոր Վախտանգի որդին, որը ապախնից էր ծնված և Պա[ա]տա էր կոչվում և որը Ռուսաստանումն էր, այժմ Գյանջա է անցել և Շա[ֆ]վերդ-խանի մոտ է գտնվում։... Նրա Գյանջա հասնելու պահին Բարթլիի հայերին Շա[ֆ]վերդխանը կալանավորել է։...

7

1756 թ. մայիսի 22

[Հիշվում են] Դազախի խանությունը և Բորչալուի խանությունը։...

8

1756 թ. հուլիսի 13

Բարթլիի թագավորին և Կախեթի թագավորին [ամենա]խոնարհ զեկուցում կատարեցի ինչպես Օմար Թումանովիցս։ Ապա զեկուցում եմ, և դուք ևս տեղյակ եք, ... իմ կալվածքը իմ փեսա Աշխարհ-բեկին[10] էր հանձնված։...

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Ագաա-խան, 1747—1761 թթ.։*

2 *Մծղնեթի նույն Մղնեթի դյուղն է Բորչալուում, որի անունը մենք մծղնեութեյան ազանդի և ազանդավորների via armeniaca վրաստան անցնելու փաստի հետ ենք կապում։ Սրա մասին մանրամասն տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Նոր նյութեր հոնդրակեցիների մասին, II. Մծղնեից-հոնդրակեցոց շարժման արձագանքները Վրաստանում, — «Արշալույս» 1940 թ., № 2, էջ 52—54։ Նույնի, Հայոց հին դրականության պատմությունը, վրացերեն, Թբ. 1941, էջ 107։*

3 *Համմ. Բաֆֆի, Խամսայի մելիքությունները. Թիֆլիս, 1882, էջ 78—102, մանավանդ 90, 102։*

4 *Խոսքը Մահմուտ Ա. Ղազիի (1730—1754) մասին է։*

5 *Խոսքը Օսման Գ-ի (1754—1757) մասին է։*

6 *Անտոն Վրաց կաթողիկոսը 1744—1755, 1762—1788 թթ. Համմ. այս աշխատության և պլուխը։*

7 Համանական է, Պետրոս Թիքլէնցու մասին լինի խոսքը:

8 Հմմտ. 1 Յովսէփ.:

9 Ագեքսանդր Բ Բյուզանդացին (1753—1755):

10 Այս Աշխարհրնկին չպիտի շփոթել մեկը Աշխարհրնկի հետ, որը Ջալալզանի մասնվեց 1734 թվին:

Ի

ՏԻՄՈԹԵ ԳԱԲԱՇՎԻԼԻ

«ԱՅՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆՑ ՍՐԲԱՏԵՂԵՐԻ» (1754—1757), «ԱՔՑԱՆ» (?)

Տիմոթե Գաբաշվիլին XVIII դարի վրաց գրականության ականավոր գեմքերից մեկն է՝ Անտոն I կաթողիկոսի կողքին ու նրանից հետո, իրրև վրացական ատյանադատական մտքի ներկայացուցիչ։

Տիմոթեի ծննդյան թվականը հայտնի չէ։ Գիտենք միայն, որ նա եղել է Բեսարիոն կաթողիկոսի աշակերտը, մինչ 1738 թ. եղել է Քութայիսի եպիսկոպոս և մետրոպոլիտ, հետագայում Քարթլիի արքեպիսկոպոս։ Չ անգամ ճանապարհորդել է Ռուսաստան. նախ՝ 1738 թվին Իմերեթի թագավոր Ալեքսանդրի հանձնարարությամբ, իրրև գեսպան՝ կայսրուհի Աննա Իվանովնայի մոտ, և մնացել է այնտեղ մի քանի տարի (արանցից 2 տարի ուսուց Սինոդում աշխատանք տանելով). իսկ երկրորդ անգամ 1756 թվին՝ Անտոն I-ի գահընկեցությունից հետո։ Իսկ մինչ այդ նա շրջել էր արևելյան կողմանց սրբատեղերը, որ և նկարագրել է առանձին գրքով։ Վախճանվել է ու թաղվել Ատրախանում 1764 թվին։

Տիմոթեի գրչին պատկանում է առնվազն 2 երկասիրություն։ Մեկն է «Այց (բառացի՝ Տեսություն) արևելյան կողմանց սրբատեղերի», որ լույս է ընծայվել Պլատոն Իոսելիանու խմբագրությամբ Թբիլիսիում 1852 թ., իսկ մինչ այդ մի մասը այդ «Այց»-ից հրատարակվել է Դ. Ջուբինովի՝ վրաց գրականության «Ծաղկաքաղ»-ում (ս. հատոր, ՍԲՊ, 1846, էջ 137—160)։ Այստեղ հիշատակություն արված է Աթոնի լեռան վանքերի և հունական այլ մենաստանների ու անապատների նկարագրությունը, որոնց նվիրված է ընդարձակ ներածականն ու սկզբնական 30 գլուխները, ապա և ճանապարհորդությունը Կ. Պոլսից մինչ Երուսաղեմ, և Երուսաղեմի սրբավայրերի տեսությունը, ուր տեղ-տեղ խոսվում է և հայերի մասին։ Ինչ վերաբերում է

երկրորդ երկասիրությանը, դա՝ «Աբբան» կամ «Ունելիք» (Մաբունախ) վերնագիր կրող է. դա դատ դավանաբանական մի գործ է, որ ուղղված է օտար դավանություններին և, ի միջի այլոց, միաբնակների դեմ, և որի մշակման պրոցեսում հեղինակը ձեռք տակ է ունեցել XVIII դարի ընթացքում հրատարակված Ներսես Կլայեցու-Շնորհալու «Յիսուս Որդի»-ն (Վենետիկ 1643, Ամստերդամ 1660, Վենետիկ 1660, 1686, Մարսել 1702, Կ. Պոլիս 1724, 1746)։ Այս վերջինը, այսինքն «Աբբան» կամ «Ունելիք»-ը, մեզ հասել է նախկին Վրաց մեջ գրագիտության տարածող ընկերության (այժմ Վրաստանի պետ. թանգարանում) հավաքածուի №№ 118 և 120 ձեռագրերում (մանրամասնությունները տե՛ս Л. Меликсет-Беков, К биографии Тимофея Габашвили Кутатели, на груз. и русск. яз.,— „Сообщения Груз. Филиала Академии наук СССР“, т. I, № 8, 1940 г., стр. 637—640. Նույնի՝ К биографии сподвижника Израэля Ори — Минаса вардапета, — „Известия Академии наук Армянской ССР“, обществ. науки, 1946, № 1, стр. 78, 80).

«ԱՅՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆՑ ՍԲՐԱՏԵՂԵՐԻ»-ԻՑ

[ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԱՆՑ ՍԲՐԱՏԵՂԵՐՈՒՄ]

[Նեռ-Կեսարիայից] եկանք՝ հասանք Կոմանա՝ Հայքի Կոկիսոն (Կուկուսը), ուր տեսանք մեր սուրբ հայր Հովհան Ոսկեբերանի գերեզմանը, որ աքսորված էր այստեղ ու հենց այստեղ էլ վախճանվեց[1]. և սրանից շատ հեռու չէ Հայքի Կոկիսոն (Կուկուս) մեծ քաղաքը, որ այժմ Թուրքերը Թոխաթ են կոչում...

[Կ. Պոլսից] Նավով անցա կախոլիկների եկեղեցին... [հայերն] ինձ մոտեցան և ասում էին, որ ֆրանկներն ու հայերը կնունք չպիտանե[2]։ Պետք ունեն կրկին մկրտության, և մենք սրա դեմ ելանք։...

[Երուսաղեմի սրբավայրերը շրջելուց] հետո գնացինք հայոց վանքը և նրա վայելուչ տեսքը մեզ ապշեցրեց, քանի որ այսպիսի փառավոր տաճար և ոչ էլ այսպիսի զարդարանք երբեք չեմ տեսել[3]։ Սա՝ այն վանքն է, որ կառուցեց Գիորգի [III] Թագավորը[4], քանի որ Վրաստանի Թագավորներն ուժեղ [զարկող] Թուրը բարձրացնել տվից նրանց (քրիստոնյաների) ձայնը և գերի ընկած Քրիստոսի գերեզմանը պարսիկների ու տաճիկ-

ների ձևից խլեցին, ապատեցին, տիրեցին, և այսքան սրբատեղեր ու վանքեր կառուցին հոգվո փրկության համար...

...Ահա մոտեցան Ծաղկազարդի և Զատիկ հանդիսավոր օրերը:... [Տրնատան գերեզմանի տաճարում] լսում էր լատինացվոց օրգանի ուժգին ձայնը, և հայոց երգիչների ներդաշնակ ձայները քաղցր ձայնակցում էին [նրանց], նուչնակս և հակոբիկներ, տաորիներ, հարաշներ՝ համաձայն նրանց ծիսի, և հունաց երգեցիկ խմբի [մասնակից] երգիչներն ևս ներդաշնակ երգում էին:...

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Հովհան Ոսկեբերանի վարքից հայերեն է (Joannis Chrysostomi archiepiscopi Constantinopolitani Opera omnia quae exstant, t. XIII. Venetiis 1741, p. 37), որ դահրնկեցությունից հետո Կ. Պոլսից դեպի աքսորավայրը (Պիթիունտ, այժմյան Պիցունդա-Բիձվինթան, Աբխազիայում) ուղևորվելիս և Փոքր Ասիայով անցնելիս՝ Հովհան Ոսկեբերանը կանգ է առել Փոքր Հայքի Կոկիսոս կամ Կուկիսոս (հայերեն՝ Կոկիսոն) քաղաքում, ուր հիվանդացել է ու վախճանվել 401 թվին: Կոկիսոս-Կուկիսոս-քաղաքում եղած պահին Ոսկեբերանին վերաբերում են Դրիգոր Լուսավորչի հիշատակին նվիրված ներբողյանի հորինումը և արտասանությունը իբրև ճառ, որ մեզ հասել է 1141 թվի հայերեն թարգմանությամբ ևս յունահանէ... ի ձեռն Արրահամու Դքամատիկոսի, ի հին և յեղծ օրինակաց»: «Կոկիսոն Հայոց»-ը հիշված է ներբողյանի վերնագրում. «Վերանելւոյն [սրբոյն] Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի՝ Ներբողեան ասացեալ յադագս վարուց և նահատակութեան սրբոյն Գրիգորի Հայոց Մեծաց հայրապետի ի Կոկիսոն Հայոց մինչև յաղսաբանս էր, ի խնդրոյ հայպին ուրումն եպիսկոպոսի և վարդապետի համագործոյ նորին Դիոսկորոս անուն կոչեցելոյ և այլոց յոգնախումբ բազմութեան, որք ժողովեալ էին յաւուր յիշատակի մեծահռչակ ծոնի նորին սուրբ Լուսաւորչին արևելեան աշխարհի» (Ներբողեանք ասացեալ այրն աստուծոյ Ոնան Ոսկեբերան ապաշխարութեան վարդապետն ի վերայ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, երուսաղէմ 1734, «Մատենից հայկականաց», IV, 1853, էջ 1: Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Ներբողեան ասացեալ յադագս վարուց և նահատակութեան սրբոյն Գրիգորի Հայոց Մեծաց հայրապետի, հրատարակեալ հանդերձ յառին թարգմանութեամբ, վենետիկ 1878: Հմմտ. նաև՝ Л. Мелик-сет-Беков, Древнейшая Пицунда у Понта Евксинского,— „Записки Одесского О-ва Ист. и Древностей", т. XXXII, Одесса 1914, стр. 7—8 = „Записки Кавк. отд. Рус. Геогр. О-ва", кн. XXIX, вып. 4, Тифлис, 1916, стр. 64—65. Նույնի՝ Грузинская версия апокрифической гомилии о Григории Парфянском, приписываемой Иоанну Златоусту, վրացերեն՝ առաջերեն ամփոփումով,— „Литературные Разыскания", II, 1944, էջ 39, 40, 42, 60.

[2] Անհասկանալի է, թե ո՞ր կնունքի մասին է խոսքը (համ գուցե «Հոն-Գիրմացիայի»):

[3] Խոսքը Հակոբյանց պատրիարքանիստ մայրավանքի տաճարի մասին է, որի լուսանկարը տե՛ս Նորայր Ալիշանում՝ Պողարյան. Համառոտ ակնարկ հայ Երուսաղեմի վրա, «Էջմիածին», 1951 թ. ապրիլ—հունիս, էջ 79,

[4] Այսինքն՝ Գիորգի III վրաստանի թագավորը (Թամարի հայրը)՝ 1156—1184 թթ.:

Ը

ՊԱՊՈՒՆԱ ՕՐԲԵԼԻԱՆԻ

«ՔԱՐԹԼԻԻ ԱՆՑՔԸ» (1759)

Պապունա Օրբելիանին հեղինակ է բավական ընդարձակ պատմական երկասիրության, որին ինքը «Քարթլիի անցքեր» (Ամբավքի Քարթլիսանի) է կոչում. մինչդեռ այս երկասիրությունը 1773 թվին արտագրող՝ Ալեքսայց եկեղեցու ավագերեց արդի Դավիթն «Համառոտ Քարթլիս Ցխովրեբա» է անվանում։ Այս երկը ներկայացնում է իրենից շարունակություն Սեխնիա Չոխիձեի «Թագավորների պատմության» (տես այս աշխատության բ. գլուխը)՝ սկսած 1739 թվից և մինչև 1758 թիվը։ Իրեև վերջաբանին մոտիկ կանգնած անձնավորության և բազմաթիվ ռազմական գործողությունների մասնակից, հեղինակն իրազեկ է եղել պատմական բոլոր անցքերին. ուստի և նրա գրվածքն ականատեսի գրչից եղած ժամանակագրության տպավորություն է թողնում (հաճախ հեղինակը իրեն էլ է հիշում)։

Պապունա Օրբելիանիի երկասիրությունը հրատարակված է պրոֆ. Դ. Ջանաշվիլու լույս ընծայած «Քարթլիս-Ցխովրեբա»-ի II մասում, ՍՊԲ. 1854, էջ 343—474, նաև արտատպված՝ է Ջ. Ճիճինաձեի հրատարակած «Վրաստանի կյանքը» (Սակարթվելոս Ցխովրեբա) դրքում, Թր. 1913, էջ 53—240։ Նույնը կա և ֆրանսերեն թարգմանությամբ ակադ. Մ. Բրոսսեի՝ M. Brosset, Histoire de la Géorgie, II Partie, IIe livraison, SPB, 1857, pp. 55—202.

Հեղինակի ու նրա երկի մասին տես Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական դրականությունը V—XVIII դդ., վրացերեն, ա. տպ., Թր. 1916, էջ 327—335, բ. տպ. Թր. 1945, էջ 368—375։

Բազմաթիվ քննարկությունները տալիս ենք համաձայն Դ. Ջանաշվիլու հրատարակության։

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1739—1758 ԹԹ.]

427 [=1739] թ. ...Լեզգիներն ավերեցին Սամխիթը և մոտեցան Դմանիսի բերդին...

429 [=1741] թ. ...Իմամ-ղ'ուլի խանը[1] Քայխոսրո Օրբելիանուն շնորհեց վեքիլութիւն, իսկ Սամխիթ-Սարաթաշվիլոյի պարքը նրա որդի Ռեվազին հանձնեց...

430 [=1742] թ. ...Արդուլա-բեկ արքայազնը[2] ուղևորվեց [Պարսկաստան]... և նրա հետ էր զորապետ (սարդալ) և դիվանապետ (մդիվան-բեկ) Քայխոսրո Օրբելիանին, նաև Սամխիթ-Սարաթաշվիլոյի ավագանիները...

Իմամ-ղ'ուլի-խանի շուրջը համախմբվեց Երևանի և Գյանջայի զորքը...

...[Պարսից շահն] երեք հազար թուման պահանջեց երկրին, վրացու հարկը դիջեց, իսկ հային . . . կրկին ծանրաբեռնեց:

431 [=1743] թ. ...Քարթլիի խանը, Երևանի խանը և Դոնբոլի (sic) խանը մեծ զորքով գնացին [Պարսից շահին օգնության]...:

Հրամանն հասավ, և Քարթլիի խանությունը Խոջա-խանից խլվեց, և նա [Պարսից] արքունիքը կանչվեց: Բերիմ-խանը[3], որ Երևանի մարզ էր, վարմունքով արքայի նման, ...և Երևանի ու Դոնբոլի (sic) խաներն էս կանչվել էին [արքունիք]...

Քարթլին տրվեց Ալիխանին (Ալղա-խանին sic), որը ծագումով Խորասանցի էր և որը մի ձմեռ ինացել էր քաղաք [Տիրկես]ում. [Նրան] տրվեց Կախեթում գտնվող ավգանական զորքը և Ղազախ-Բորչալուն ու Քարթլիի զորքը:...

Զորապետ (սարդալ) Քայխոսրոյին զորքով ուղարկեցին Սամխիթ-Սարաթաշվիլու, ասելով՝ «Դու քո կողմերն (երկրներն) ամրացրու»: Զորքն եկավ և՝ բաժանվելով՝ Սամխիթ-Սարաթաշվիլոյի բերդերը մտավ: ... Զորքն անցավ Դմանիսի ձորը, հասան Մանասկերտ, այրերն ամրացրած էին...:

...Լեզգիները հարձակվեցին Սանահնի վրա և այն երկիրն ամբողջապես ջնասեցին, տարան անթիվ գերիներ: Զորապետ (սարդալ) Քայխոսրոն Բվնեքիի բերդումն էր և Լոռվա խանն էլ այնտեղ էր: Հենց որ այս իմացան, խելքն և եթ ելան, դեմ առ դեմ գնացին, կռտորեցին լեզգիներին և՝ ինչ որ վերջիններն տանում էին՝ ձգել ստիպեցին...:

Լեզգինների մեծ զորք դուրս եկավ... և Լոռվա երկրին [կըր-կին] ջնասեցին: Նրանց հետամուտ եղավ [Հ]աջի-խանը: Սակայն լեզգինները փախան Ջավախեթ...:

...Այդ պահին սարսափյարն եկել էր Ղարսի երկիրը: Այն-տեղից նա քշեց վրաց[ային]... [Ուռուսները] հարձակվեցին Ղազախ երկրի վրա, շատ գերիներ և տավար[-ոչխար] տարան, պատեցին Սամխեթի շուրջը, զլբաշների սակավաթիվ զորքը դուրս գնաց, Սամխեթ-Սարատաֆսչվիլյի զորքը հանդիպեց Մարթիլի (sic) կամրջի վրա, նրանց ետ ուղարկեցին, հետո մենք խրվե-ցին և ասած պատիժը հասցրին, թողնել ամին տավար[-ոչ-խարը], գնացրեցին ուռուսներին. սրանք հպատակ վերադարձան, իսկ ուռուսները պարտված հասան Ղարս...:

432 [=1744] թ. ...Ղ'ասնի սրբիններից մեկը գարձյալ երևաց ուռուսների երկրում, խոնարհարը տվեց զորք և միջոցներ, տա-րաստ[ի հետ], և եկան Ղարսի երկիրը:...

...Նորահայտ շահզադեն[4] չկարողացավ մնալ այն երկրում, մոտ հարյուր մարդկանցով գողունի կերպով եկավ, ուղեց Ամի-լախվարդի մոտ գնալ և այնտեղից անցնել ուռուսների Ղարսը, մի գուցե Ղ'ասնի սրդուն հայտարերեն, ասելով՝ «Իմ եղբայրն է նա»:...

...Ղ'ասնը հրամայել էր. «Այդ շահզադեի աչքերը հանեք, և Ղարսում որ եղբայր ունի, նրա մոտ ուղարկե'ք և նա երկուսին միասին կտեսնեմ»...:

...Լեզգինների զորքն եկավ և հարձակվեց Սամխեթի վրա, մեկիքից կալվածքը խլեցին...:

...Թեյմուրազ Թագավորը[5]... կարգի բերեց Քարթլիի և Ղա-զախ-Հորչալուի գրությունը...:

Բոլոր իշխանները՝ առնելով Թեյմուրազ Թագավորի հայ-ցագիրը (արզա)՝ ժողովեցան [Պարսից] արքայի մոտ Նախիջևա-նում[6]...:

[Պարսից] զորքը, որին առաջնորդում էր Ջրիդոն-բեկը, [Տփղիսից] անցավ Լոռի և միացավ Երևանյան երկրում արքային, Ալի-խանն էս գնաց Շամշադիլ (Սամշադիլո) Ջաֆալի-խանի մոտ...:

...Թեյմուրազ Թագավորը... ուղևորվեց Ղազախ: Ջաֆալի-խանն այնտեղ էր կանգնել, լեզգինների էլ իջել ու մոտեցել էին Կուրին. խանները հավաքվեցին և հետամուտ եղան լեզգիներին...:

Ֆախալի-խանը կրկին վերադարձավ Ղազախ, իսկ Թեյմուրազ թագավորը ժամանեց Տփղիս քաղաքը...:

...Թեյմուրազ տեր-[թագավոր]ը... շնորհեց Դեմետրե Օրբելիանուն... Քարթլիի և Ղազախ-Բորչալուի մանդատուրթուխուցեսությունը:...

[Վրաց] արշավախումբն ավերեց Ջղըրը (Ջիլդուբի) և Ախալցխեից ներքև... Դ'աճն շահան-շահը (շանշահն) գտնվում էր Ղարսի բերդում, և օր ասար անգի ուներ սատրիկ պատերազմ, և դղրաշները կատորում էին ուռումներին, ինչպես կատուներին: Դղրաշների արշավախումբը Ղարսից գնում է և ավերում Ա[ր]ղըրսումի հայկուսյա կողմը և գալիս է անթիվ տավար[-ոչխար]ով: Ջուբն այնպես կարեցին, որ բերդում գտնվողները մի շալակ (փալա) ջուրը մի գրամով չէին կարողանում ճարել. ուռումները նեզ տեղն էին ընկել: [Պարսից] արքան ապտպրել էր քաղաք [Տփղիս]ից չորս հարյուր հոգի աշխատավոր, որոնց առաջնորդից քաղաք [Տփղիս]ի Մելիք ապան, և հասան Ղարս, մի տարի աշխատեցին ու նոր վերադարձրին: Հազար լեզգի ռաճիկով ուռումներն մոտ էր գտնվում Ղարսի բերդում, և քանի որ ջուր այլևս չգտան, թնդանոթն էլ լսեցրին. և արքան էլ զոռ էին անում, լեզգիները չկիմացան ու փախան՝ նոր եկան: Արքան հևնց որ լսեց այս, զորք ուղարկեց հետից, բայց ոչ մի տեղ նրանց (լեզգիներին) չհասան. զղրաշները վերադարձան, ավերեցին Ախալցխեի երկիրը և գրոհ տվին Ղարսին:...

...Ալի-խանը Ղազախում և Կախեթի տերը Կախեթումն էին գտնվում...:

[Կախեթի] բռնողն՝ ուղևորվեց Դմանիս. ուզեկցում էին Աբգուլա-բեկ արքայադնը, Լռովա տուլթան Մա[ն]մագ խանը և վրացիները: Դ'անը վերադարձավ Ղարսից, ձմեռը հասավ, զորքը գրաին չկիմացավ, Թոդից բերդը, եկավ ու կանգ առավ Ախալքալաքում:

...[Կախեթի] տերը Դմանիսից եկավ, [Պարսից] արքային մխցավ Ջավախեթի երկրում... [ապա] հանվեց Ջավախեթից, անցավ Ղ'ախե'ուլեով և իջավ Տաշիր. երկու օր մնաց այնտեղ, թողեց Լոռիում Օզրեկի և Բուլուճի զորքը, ինքը հետացավ ու անցավ Սամխիթով և իջավ Ագջագ'ալա...:

[Կախեթի] տերն նոր ուղարկեց Թագուհուն Ղազախից բազմաթիվ ընծաներով...:

...[Պարսից] արքան հետացավ և զորքը թողեց Ղազախում

և Բորչալուում և հրամայեց. «Ինչ որ Թեմուրագ-խանը ձեզ հրամայի, հնազանդվե՛ք»։ Օղրևիի և Բուլուճի զորքը, որ կանգնած էր Լոռիում, գնաց և ավերեց Զլդբրի (Զիլդաբի) երկիրն. շատ ստվար [=ոչխար] ու գերի բերին...

433 [=1745] թ... Բուլուճի և Օղրևիի զորքը... ավերեց Ղարաի երկիրը և անթիվ գերիներ ու ստվար[=ոչխար] բերեց։...

... հասավ [Պարսից] արքայի հրամանը. «Բանի որ Լոռիում Օղրևիի և Բուլուճի զորքերն են կանգնած, թող [զլբաշները] իջնեն Դմանիս ու կանգ առնեն այնտեղ»։ Իսկույն և նի տեղահան եղան ու Դմանիսի մոտերքում կանգ առան։...

...Հասավ [Պարսից] արքայի հրամանը... և զլբաշի զորքն արձակեցին և այս զորքից երկու խանին իրենց զորքով Լոռիա արվարձաններում[8] բնակեցրին։ Հասավ արքայի հրամանը,... [և] Գիվի Ամիրխանբեին... արքայի մոտ ուղարկեցին Կախեթի տերջ մորթալ Սոլոմոնի և Ղազախի սուլթանի հետ միասին։

...Սուլթանը ներկայացրեց [Պարսից] արքային [Քարթլիի] թագավորի հայցագիրը (արզա)։ Իսկույն և նի լսեց թագավորի խնդիրը և հանձնեց Ամիրխանբեին մայորբաշուն, որն արքայի մոտիկ ծառան էր, ծագումով Արզրոմաշվիլի[9]։...

...[Պարսից] արքան գնացել էր մեծ զորքով ու Երևանում ապստրել Քարթլիից ամալեների[10]։ Գնացին վեհիլը, վեզիրը, մուստաֆան և [Տփղիս] քաղաքի մելիքը։ Հրամայեց արվարձաններում զորք կանգնեցնեն։ Ճանապարհ գցեցին Լոռիա սուլթանին և Փամբակի շրջակայքում թողին։ Նույնպես և Ռևազ Օրբելիանուն՝ Սամխեխ-Սարարախաշվիլոյի զորքով ու Ջաուլ Օրբելիանուն Դմանիսի ամանները։ Եկավ ստրատեջյարը մեծաքանակ զորքով Արփաչայի վրա և կանգ առավ Ալագյազի լեռան ստորոտում, Ղ'ալենն էլ եկավ, կանգ առավ ուղղակի Մուրադ-Թափայի վրա ...Պատմությանն, վշացրին Բորնեանները. ժամանեց [Կախեթի] տերը, հանեց ընկան ու լեզգիների ճանապարհը կտրեցին Ջավախեթում։

Ուռումների և լեզգիների մեծ զորքը հարձակվեց Լոռիի վրա, շատ մարդիկ գերեցին, իսկ քշած ստվար[=ոչխար]ի ու անասունների թիվն հաշիվ չկար. Լոռվա սուլթանը հետամուտ եղավ ու հետապնդեց նրանց Տաշիրում, շատերին կոտորեց և նույնպես շատերին կենդանի բռնեց, և ինչ որ տանում էին, հրամայեց թողնել։

Ներքևից դուրս եկավ լեզգիների զորքը, որի [պարա]գլուխը

Մաշադ-խանն էր, ծագումով լեզգի. շրջեցին Ղազախը և գնացին Ղարս սարասքյարի մոտ:...

[...Իմերեթի] օգնության ուղարկվեց Ղազախի սուլթան Սաֆան-Վերդի-բեկը...:

...Լեզգիների զորքը մտավ Սամխեթ-Սարաթաշվիլու:...

[Թեյմուրազ թագավորի օծման արարողության ժամանակ, որ տեղի ունեցավ Մցխեթի պատրիարքական տաճարում], նախ [թագավորին] կացուցին սեղանի մուտքից ցած, և եպիսկոպոսներն-ալ ու ձախ կողմից կանգնեցին, նմանապես հայոց [հոգևորական] դասը և կաթոլիկները (ֆրանկները)՝ բոլորը զգեստավորված, և երկյուղածությամբ ունկնդիր էին [ծխակատարությանը]...

Լսեր հասավ Իմերեթից, որ Ղազախի սուլթանը և Մաչարելի Իասեն Ալեքսանդրե թագավորին օգնության հասան իրենց զորքով...:

Իմերեթից ուռումները կալանավորած տարան Ղազախ սուլթանին, Մաչարելի Իասեին և Վերին Քարթլիի մի քանի իշխանների տղաներին և Ախալցխեում կալանավորեցին:

Թագավորը մեկնեց Սագուրամո, հանդիպեց լեզգիներին, որոնք Սամխեթից էին գալիս, բնաջինջ արավ լեզգիներին և՝ ինչ որ առնում էին՝ հրամայեց բոլորը խողնել:

434 [=1746] թ. ...Ուռումների և լեզգիների զորքը գիշերով անցավ Սամխեթով, որ և անվնաս թողեց...: Ուռումների և լեզգիների զորքը գարձյալ եկավ, ավերեց Փամբակը...:

...Սուլթան Օրբելիանու փոքր ջոկատը հարվածեց Արգահանի երկրին և շատ գերիներ ու տավար[-ոչխար] բերեց...:

Դնաց Սուլթան Օրբելիանին Սարաթաշվիլույի զորքով... և հասավ Ղարսի երկիրը: Քարթլիի զորքից Օսմանյան երկր[ացիք] այնքան վախեցան, որ ամբողջ երկրի մարդիկ բերդերն ու ամրոցներն էին անցել: Ղարսի բերդի մոտ մի ամուր բերդ կար և հնուց տաշած քարով շինած [այնպես], որ այդ բերդի գեղեցկությունն ամեն մի ականատեսին զարմանք էր, և որը Ջարիշահի բերդ էր կոչվում: Հենց որ [վրացիները] հասան, զորքն ամբողջապես շրջապատեց [բերդը]. սկսվեց սաստիկ պատերազմ:... Ղարաշվիլու ճարտ Թամազաշվիլին հասնելուն պես առնդուխք դրեց և մեկ-մեկնակ ներս մտավ բերդը: Հենց որ իջավ [այնտեղ], երեքին սպանեց և մի քանիսին էլ վիրավորեց, բերդի միջում գտնվող զորականներից լսում էր ղենքը ու շպրտում գրան զոր-

քի կողմը։ Երբ որ մարտում հոգնեց, սպանվեց։ Ապա Սարատխաշվիլոյի զորքը մոտեցավ, բոլոր [զորականները] առնդուխքներ գրին ու բերդի ներսը խուժեցին, գրավեցին բերդը, կոտրած ասրքեցին և անթիվ տալար[=ոչխար] գնեցին իրենց ձեռքը։ Սուլթան Օրբելիանու առաջնորդությամբ հպծիական զորքն անձկաս Քարթլիի երկիրը վերադարձավ...։

...Բարչալուի զորքը գնաց, ավերեց Ղարսի բերդի հայկական երկիրն և բերեց բազմաթիվ գերիներ ու տալար[=ոչխար]...։

Ուռուսների և լեզգիների զորքը, որ Ախալքալաքումն էր կանգնած, արշավանքներ էր կազմակերպում դեպի Քարթլիի երկիրը։ Այստեղից և Քարթլիից արշավելով՝ ավերում են Ախալցխեի երկիրը։ Երկու կողմից էլ լինում է գրոհ և պատերազմ, ավերվում է ամրոցի երկիրը։ Բերդերից և ամրոցներից դուրս [ժողովուրդը] ոչ մի տեղ չէր մնում՝ ոչ Ղարսի և ոչ էլ Ախալցխեի երկրների մարդ[կ]...։

...Ղ'ահնի մոտ գնացող... ուռուց զեսպանին պիտավորելով, Վրաց բռաոնը՝ Էրեկլե [Թագավորը] ուղեկցեց նրան մինչև Ղարսը...։

...Ախալցխեով վերադարձավ Ղարսի սուլթան Սուլեյման-Վերդի-բեկը, որ կալանավորված էր... Տերը շնորհեց նրան խալաթ... և Ղարսի սուլթանություն...։

435 [=1747] թ... Ղարսի վերդին վերել էր Քարթլիում։..

[Պապունա և Ղափլան Օրբելիանները] իրենց ուռն ու ուղով գնացին իրենց ժառանգական Դմանիսի բերդը, ուզտանարին իրենց կալվածքի [բնակիչներին] ու հավաքեցին բերդի մեջը...։ Նմանապես ուզտանարին Տաշիրի երկրի [բնակիչներին] և մացրին բերդի մեջը...։ Քանի որ գ'ահնը Լոռվա խանից շատ գանձումներ էր պահանջել արծաթով և խանը Լոռուց հեռացել էր, երկիրը մնացել էր անտեր. [ուստի և] Լոռվա քեթխուդներն եկան Դմանիս ու ազերբեկին ասեց. «Մենք մեջտ Օրբելու արդու և բնտանիքի աջակցությամբ ենք պիտացել և այժմ այսպես անտեր ենք մնացել, հոգացե'ք մեր մասին»։ Ապա Ղափլանը զորքով գնաց ու Լոռվա բերդը մտավ. խորտակվեց Լոռվա երկիրը և նա իր մարդկանց մացրեց բերդի մեջ, իսկ ինքը գնաց Դմանիս...։

[Ազբեջանի երկրի, քարթվելների և կախեթցիների՝ գ'ահնից անջատվելուց հետո] Երևանի խանը և այն երկրի երևելիները հայցագիր (սրգ) էին ուղարկել [Թեյմուրազ] տիրոջը. «Քա-

նի որ դուք այդ բանն արել եք, մենք ձեզ կծառայենք ինչպես ճորտեր և մեր զորքն էլ՝ ուր էլ ցանկանաք՝ այնտեղ կուղարկենք»: [Թեյմուրազ] բառոնն էլ սրան համաձայնություն պատասխան գրեց նրանց ու ճանապարհ գցեց [նրանց] մարդուն: [Իսկ] երեք ամիս սրանից առաջ սպասալար Ամիր Ալան-խանն եկել էր մեծ զորքով և երևանումն էր գտնվում, ամեն օր տեղի ուներ քննդանիների ու ռումբերի հրաձգություն. սակայն ոչ մի բանով երևանի բերդին չէին հասնում: Իսկ Բարքլիի և Կախեթի անջատումով [երևանցիք] ավելի ևս ոգի առան:

Լեզգինների մեծ զորք դուրս եկավ, անցավ Սամխիխով, հարձակվեց: Ղազախի և Բայդարի քոչվորները միասին էին կանգնած, շատ անասուն և գերիներ քշեցին գնալ ասրը և Ջավախեթի վրայագրեցին:

...[Թեյմուրազ] բառոնը մեկնեց [քաղաքից], իջավ Լոռվա հողում. Լոռվա բերդը Ղափլան Օրբելիանու ձեռին էր. տերը խլեց նրանից ու զարձյալ Լոռվա քեխվուդներին հանձնեց և Լոռվա սուլթանությունը Քալբի-[Հ]ասանի խանի որդի Մուսային տվեց:

Արդուլ-բեկ արքայազնը Լոռվա բերդից դուրս հանեց քննդանիները և զինամթերը, մոցրեց Սամշվիլդեի բերդը, և վրացիները ու կախերը հրաժեշտ տվին Փամբակին ու վերադարձան: [Թեյմուրազ] տերը մեկնեց [Տփղիս], Արդուլ-բեկ արքայազնը եկավ Սամշվիլդեի բերդը և սկսեց բերդի ամրացումը:

Երբ որ Թեյմուրազ թագավորը գնալ Երևանյան հողը մեկնեց, առաջուց Մա[հ]մադ-[Հ]ասանն ուղարկեց Պարսից դորապետի (սարդարի) մոտ, որն Երևանյան բերդն էր պաշտպանում: Եվ ամեն օր տեղի ուներ սաստիկ պատերազմ: Հենց որ իմացավ Թեյմուրազ թագավորի ժամանումը՝ [զորապետը] հույժ ուրախացավ և շնորհեց Մա[հ]մադ-[Հ]ասանին քանկարժեք խալաթ և անհամար արծաթեղ փող: Ինքը զորապետը (սարդարը) ձիու վրա հեծավ և երեք մղոն (ազպ) ընդառաջ գնաց, խոնարհությամբ աղջունեց նրան և իր հեծկան ձին մատուցեց, քանի որ Երևանի և շրջակա երկրներն անջատվել էին [Պարսից արքայից], որն այս զորապետին (սարդալին) ուղարկել էր և [այժմ] աշխատում էր նրան բանել՝ բոլորովին հույս չունենալով Քարքլիի վրա...: [Թեյմուրազ] տերը Երևանով մեկնեց պա'ենի մոտ:

...Երբ սպասալար Ամիր-Ասլանը կանգ էր առել Երևանյան

բերդը գրավելու համար, սրա դեմ թշնամություն սկսեց Սամշահը, և այս սպասալարն էլ Երևանից հեռացավ, իսկ Սամշահը գնաց նրանց հանելու։ Բայց այս երկրներում այսպիսի խռովություններ տեղի ունեցան, Թեյմուրազ թագավորը դ'ահեղի մոտ չհասավ...

Լեզգիների զորքը Սամշվիլդեով անցավ, հարձակվեց Սամխիթի մելիքի վրա և ավերեց երկիրը. [լեզգիները] շատ գերիներ ու տավար[-ոչխար] հավաքին Սամշվիլդե։

...Ղազախ-բորչալու[եցիք] Արդուլ-բեկի մոտ էին գնում ու ծառայում նրան։ Էրեկլե թագավորը մեծ զորքով Բորչալուի և Ղազախի քոչվորներին վրա հասցրեց...[սպա] Բորչալուի և Ղազախի քեխիաներն եկան Էրեկլե թագավորի մոտ, մատուցին նվերներ (փեշքաշ) և խնդրեցին ներսեսն (փարվան) իրենց հանցագործություններին...

Բանի որ Սարարախաշվիլին նրա (Էրեկլեի) հետ էր, իսկ Սամխիթը նրան չէր հարել, [վրաց] զորքին հրամայվեց (արձակեց զասաուլ) [հնազանդեցնելու] այն։ [Եվ զորքը] գնաց, արշավեց Սամխիթի ձորը, անցավ Հաղբատ-Սանահնով, ավերեց ու գերեց [այն տեղերը] և անթիվ տավար-[ոչխար] բերին Սամշվիլդեի բերդը։ Պապանա, Ղափլան և Սալխան Օրբելիանիներն իրենց՝ Թալուա բերդատեղն էր նասած և այնտեղից կառավարում իրենց երկիրը (հայրենիքը). սրանց զորքը հարձակվեց Ղարսի երկրի վրա, և անթիվ գույք բերին։ Այսպես վախացրին [վրացիներն] Օսմալո երկրի [բնակիչներին]։ Եվ եթե չլինեին ամբողջներն ու բերդերը, այլուր ոչ մի տեղ չէին գիմանա ջալալեթցիներն ու զարանցիները։

Ալիխանը, որը երրեմն խան էր Քարթլիում, սա ևս Նադիրշահի մահից հետո սկսեց այս ու այն կողմը հարձակվել ու ավերումներ կատարել։ Երբ որ Թեյմուրազ թագավորը Քարթլիի ներքին [մասումն] էր գտնվում և կարծում էր, որ նա ոչ մի հակառակորդ այլևս չունի, սա (Ալի-խանն) եկավ Ղազախ, ժողովեց Ղազախի զորքը, իսկ Ղազախի սուլթանի եղբայր Թալի-բեկը խոստացավ. «Քարթլիին ես քեզ տիրել կտամ»։

Արդուլ-բեկ արքայազնը ընծաներ (փեշքաշ) ուղարկեց սպասալարին Ագաջան-Յուզբաշի ձեռով և խնդրեց զորք ու աջակցություն։ [Սպասալարն] էտ էր ուղարկել Ագաջանին և՝ հույս գնելով նրա վրա՝ խոստացել էր աջակցություն ցույց տալ։ Ջանա-Յուզբաշին ուղարկեցին, հանդիպումն ունեցան Լոսիում. նախ

Ապաջան-Յուղբաշուն ապանեցին, [իսկ] մյուսներին բոլորին կա-
լանավորեցին։

Լոռվա սուլթան Մա[հ]մադը, որ Սամշվիլդեսումն էր գոնը-
վում, սատյավ կարգադրություն՝ հանձնել այն (Լոռին) Գյան-
ջայի խանին. գնաց Սամշվիլդեից ու հասավ Գյանջա...։ Լեզգի-
ները...միշտ ավերում էին Սամխրձը և նույնիսկ Դմանիսի ձորը
և ավարը Սամշվիլդե էին տանում։

[Վրացիները] անզգամն ասին Ղազախի սուլթան Մուսա-բե-
կին և քաղաք [Տփղիս]ում պահեցին. նույնպես և Բայդարի և Ղա-
զախ-Բորչալուի քեթխուդներին հավաքեցին քաղաք։

...[Ալի-շահն] ապստրել էր Ղազախ-Բորչալուի և քաղաք
[Տփղիս]ի քեթխուդներին...

...Արդուլա-բեկ արքայազնը գնաց սպասալարի մոտ, ան-
ցավ Ղազախով։ Ղազախն ուրացավ Էրեկլե թագավորին. Ար-
դուլա-բեկի հետ գնաց Թալի-բեկը Ղազախի քեթխուդներով...։

...Արդուլա-բեկ արքայազնը, Թալի-բեկը և Ղազախի զորքը
միասին գնացին։

...Ղազախի կոմսերը սկսեցին ապստել Էրեկլե թագավորին
իրենց հանցանքը ներել (շնորհի փաթվան), մատուցին նրան անթիվ
ընծաներ և նա ներեց, նրանց քեթխուդներին հանեց ու բնակեց-
րեց քաղաքում նրանց հետ, որոնք Ղազախի սուլթանի հետն
էին գտնվում քաղաքում ընտանիքներով հանդերձ. նույնպես և
Բորչալուի և Բայդարի քեթխուդներին ասպատն ասին և քա-
ղաքում բնակեցրին։

Ղազախի կոմսերն եկավ Ջուբեդյալան՝ լեզգիների առաջ-
նորդը՝ յոթհարյուր հոգով, որոնք շատ տեղեր ջնասեցին, դուրս
հանեցին գերիներ ու ավար և եկան հաշվեցին Արդուլա-բեկ
արքայազնի հետ։ Նրանց բնակեցրին Սամշվիլդեի բերդում ու
այնտեղից սկսեցին Քարթլիի կոմսերին զարկել։ Էրեկլե թագա-
վորն ուղարկեց լենդ հազար մարդ վրացիներ և կախեթցիներ,
որոնք հարձակվեցին Շամշադիլի (Սամշադիլի) վրա, ավերեցին
այն ու անթիվ ավար բերին։ ...Լեզգիների զորքը Սամշվիլդեից
հեռանում՝ ավերում է Սամխրձի ձորը ու [ավար] բերում Սամշվիլ-
դեի բերդը։ Նեղվեց Սամխրձի ձորը, [սամխրձցիք] չկարացին
ապրել իրենց տեղերում. Սամխրձի մելիքն ևս տեղացիք եղավ
իր տան ու տեղով և ճորտերով, նմանապես և Արզութաշվիլի-
ները[11], բավանդակ Սանահնի ձորը և Հաղպատի ձորը, իջան քա-
ղաք [Տփղիս]ը և քաղաքից միասին գնացին Մուխրան, ուր Մուխ-

ըանի տեր Կաստանտինին նրանց տեղ տվեց ու իր հոգում բնակեցրեց։ Ամբողջ Սամխխում՝ Բոլնիսից և Սամշվիլ[ի]ց զատ՝ ոչ մի տեղ այլևս շինություն չկար։ Օրբելիանների երկիրն (հայրենիքը) ևս այնպես զատարկվեց, որ Դմանիսի և Փխովեթից զատ ոչ մի տեղ այլևս շինություն չկար։

...Էրեկլե թագավորի բերած Ղազախի ու Բորչալուի քրիստոնյաներն իրենց ընտանիքներով հանգերձ, Բորչալուի սուլթանը և Բայդարի սուլթանն իրենց պատանդներ մնացին [Ջվիդիսի] բերդում։...

Ամիրսախվարի տերն Ամիրանդոային ուղարկեց և ապսպրեց Գորուց [բերել] մեծ թնդանոթը, որ գ'ահեն Շա[հ]նազարին[12] երեվանից էր բերել Բարթլի, և ասում էին. «Երկու հազար հազարանոց լիտր [ծանրություն] ունի»։...

...Ապրելջանի կոմսանց մարդիկ տասանիկ վախեցած, խուճապահար (փնչքաշ) ուղարկեցին Գյանջայի խանին և Երևանի խանին Էրեկլե թագավորի համար։...

...Էրեկլե թագավորը գ'ահեն մոտ ուղարկեց Սամխխի մեծերին։...

...Արդուլա-բեկ արքայազնին էր [պատկանում]... Սամխխե-Սաբարաշվիլն ու Բոլնիսները, Ծինձ'արն և այլն։

Էրեկլե թագավորը Սամխխե-Սաբարաշվիլի զորապետությունը (սարկլոբա) Ռևազ Օրբելիանուն շնորհեց...։

...[Հ]ասան-Միրզա արքայազնը... երեք հարյուր աշխատավոր (նոքար) էր խնդրել նաև Ղազախ-Բորչալուից...։

...Ղազախեցիք շատ երկերեսանություն թույլ տվին իրենց ու զղջացին։...

437 [=1749] թ. ... Թեյմուրազ թագավորը գ'ահեն [մոտից] վերադառնալով՝ Թավրիզով անցավ [1749 թ.] մարտի 29-ին... ապա Ղազախ-Բորչալու ժամանեց, ուր նրա զավրերն էր դռնըվում...։ Շահ-Սուլթան-Իբրահիմը Թեյմուրազ [թագավոր]ին այսպիսի հրահանգ էր տվել. «Ինչպես վրաստանը, նույնպես և Ղազախ-Բորչալուն ծառայեցրու քեզ»։

...[Թեյմուրազին] ընդառաջ գնացին Ղազախի և Բորչալուի սուլթանները, իրենց զորքերով, իրրև ճարտար դիմավորեցին ու մատուցին ընծաներ։ Ժամանելով Ղազախ հողը, բառոնը այստեղից մտավ Բայդար...

Դաղստանում տեղի ունեցավ համաժողով։ Լեզգինների զորքերը մեծ [քանակով] հավաքվեցին, այնքան, որ այսչափ զորք

միասին գնա ևս չէր ժողոված։ Ելան. նախ մտապրվեցին իշնել Կախեթ։ Թեյմուրազ թագավորը հավաքեց Քարթլիի և Ղազախ-Բորչալուի զորքը և խևսուն և նի մեկնեց Կախեթ...

Երևանի խանը հավատարիմ մարդիկ էր ուղարկել [Թեյմուրազ թագավորի մոտ]՝ խնդրելով օգնություն։ Երևացել էր բնիկ երևանցի մի մարդ, որ գաղտնությամբ սպանել էր Շա[հ]-Նազը գ'անկին՝ Մա[հ]մադ-խան [անունով]։ Սա զորք էր ճարել և Երևանի խանի եղբորը կալանավորել, ընտանիքը կողոպտել և Երևանի բերդի դուրսն ամբողջ երկիրը հնազանդեցրել էր իրեն ու պահանջում էր, որպեսզի բերդն ևս նրան զիջեն ընդմիշտ։ [Թեյմուրազ և Էրեկլե] բաոոնները շատ ցավեցին, որ [Երևանի խաների] ոդդակիցն այդպես բռնությամբ գրավել է երկրները, և հրամայեցին օգնություն հասցնել Երևանին։ Լսելով, որ Երևանի խանը վրաց ոխերջն է դիմել օգնություն խընդրելով՝ Մա[հ]մադ-խանը նույն բաոոնի մոտ մարդիկ ուղարկեց ապաոնալիքով. Վխրավորվելով սրանից՝ Քարթլիի բաոոնը և Կախեթի բաոոնը մեծ զորքով ուղևորվեցին դեպի Երևան։ Երբ նրանք հասան Ղազախ, նրանց մոտ եկավ Գյանջայի խանի մարդը՝ առաջարկելով իր ծառայությունը և նա ևս խնդրում էր օգնություն։ Այնտեղ ևս երևացել էր Ջավանշիրցի մի մարդ, Ֆանա անունով, որ ժողովել էր զորք և գոփում-գլխում էր Գյանջա-Ղարաբաղի կողմերում։ [Վրաց թագավորի մոտ] եկան նաև Սղնախի մելիքի որդիք մոտ հարյուր հոգով և նրանք ևս խնդրեցին օգնություն Ֆանայի դեմ [կռվելու համար]։ Բայց, քանի որ [վրացիք] Երևան գնալու էին պատրաստված, այլևս չցրվեցին. սրանց ևս օգնություն խոոտացան և ուղևորվեցին դեպի Երևան։ Չենց որ իմացվեց զորքի հանդելու մասին, մեծ ուրախություն առաջացավ Երևանի բերդում. մարդիկ ուղարկվեցին դիմավորելու և դեկուցին Մա[հ]մադ-խանի սրարքը։ Երևանի բերդին մի կայանի չափ որ մոտեցան, Մա[հ]մադ-խանն իմացավ այդ և զորք ժողովեց. նա ևս եկել էր ու բերդից կես մղոնի հեռավորությամբ կանգնել։ Աբքանները (բաոոնները) ևս ժամանեցին և նրանց Երևանի խանը դիմավորեց։ Իրար դեմ կանգնեցին։ Վրաց և կախեթի զորքը չորս գրոշի բաժանեցին. առաջապահ [գնդում]՝ Օրբելիանի Ռևվազ զորապետը (սարդալը) Սարաբաթաշվիլոյի զորքով և Քարթլիի թյուրք քոչվորներով, Բիդիդ'ի մոուրավ Թամուզը Բիդիդ'ի զորքով և համապատասխան թվով դրոշակակիրներով. աջակողմյան գնդում՝ Ամիլախորի

*Ամբրինգան Վերին Բարթլիի զորքով... և Կախեթի և Ղազախ զորքին էլ հրամայվեց սրանց հետ լինել. ձախակողմյան [գընդաւմ]՝ Մուխրանի բտաննը, սախլխուցես Կոստանտինեն գույդ իշխանության (սահբխթաս) զորքով և Բարչալուի զորքով: Զերքեզ[ներ]ի ախրոչն էլ իր զորքով հրամայեցին ձախակողմյան դրոշի տակ լինել: Երկրյան արքանների դրոշակներն իրենք տերերն էին կրում՝ յուրաքանչյուրն իր զորքին կից: Եվ այսպես ռազմական շարքերով դուրս եկան պատերազմի վայրը: Թեյմուրազ Թագավորը ռազմաշարքով շարժվում էր, իսկ Երեկլե Թագավորը երբեմն մի դրոշին էր հետևում, երբեմն մյուսին, զորքին հրահանգում էր, ոգևորում էր և պարծանության հույս ներշնչում: Սկսվեց սաստիկ պատերազմ: Զորապետ (սարդալ) Ռևազն ու մուրալ Թամազն առաջապահ զորքը դուրս տարան ոգևորված: Եվ սրանք այնպես ներս խրվեցին զղրաշների զորքի մեջ, ինչպես ճուտակն ագռավների երամի մեջ, և Մա[ն]մադ-խանը փախավ: Գրան ավին աջակողմյան և ձախակողմյան գնդերն ևս, խառնվեցին վրացիք և կախերը, թրատեցին սուսերով, նաև անթիվ կենդանի թուրքերին բանեցին: Առանց հրամանի՝ սիրոչ դրոշակի ներքո գանվող զորքը ցրվեց ու հետամուտ եղավ փախչող [թշնամու] զորքին: Սաստիկ վրդովվեց Թեյմուրազ Թագավորը և խոովեց իր դրոշակի ներքո գանվող մարդկանց հետ: Վրացիներն ևս հետևեցին չորս մղոն (ապաջ) և այսպես փախուստի ենթարկեցին Մա[ն]մադ-խանին. այնպես որ նա [այլևս] չկարողացավ իր բերդը մտնել ընտանիքի մոտ: Արքաները (բատոնները) կանգ առան մի լեռան վրա, պատերազմը վերջացավ մինչև արևի մայր մտնելը, երբ [նրանց] մատուցին [Մահմադխանի] գլուխը և հազար յոթ հարյուր հոգի կենդանի: Սկսվեց ուրախության և խնդանոթագրության: Արքաները (բատոնները) ուղևորվեցին գետի Երևանի բերդը, [ձիուց] իջան բերդի դրսում: Այսպիսի սուսերամարտ և վրացիների հազթանակ Երանի երկրում [երբևէ] տեղի չէր ունեցել:

Հենց նույն գիշերը Երեկլե Թագավորը մեկնեց իր զորքով, հարձակվեց Մա[ն]մադ-խանի բերդի վրա, ուր վերջինիս ընտանիքն էր պատսպարվել, գրավեց բերդը, կոտորեց նրա կնոջ և երեխաներին, ավերեց գույքը, դուրս բերեց Երևանի խանի եղբորը, որին Մա[ն]մադ-խանը կալանավորել էր: Թեյմուրազ Թագավորն ևս մեկնեց և գրավեց մյուս բերդը, ուր Մա[ն]մադ-խանի հավատարիմ մարդիկն էին պատսպարել. նրանց ներս*

գերի վերցնելն ու մարդ սպանելը, իսկ գույքը հափշտակել։ Երեկվա թագավորը ժամանեց իր հոր մոտ մեծաքանակ ավարով. ի մի հավաքեցին երկու բերդերի ավարը և բաժանեցին զորապետներին (սարդալներին), իշխաններին, ազնվականներին, գյուղացիներին։ Յուրաքանչյուրին, ինչպես հարկն էր, այնպես մատուցին արծաթը, դանձերը և գույքը։ [Վրացիք] տեղհան եղան, նորից ժամանեցին Երևանյան բերդը, հինգ հազար թումանի ավին երևանցիներին. նույնքան՝ իրրև պարգև՝ բաժանեցին զորքին, ապա ժամանեցին Քարթլիի երկիրը։ Ղազախով որ անցնում էին, Երևանի խանն էլ հետներն էր։ Փանան, որ Շամախու երկրումն էր, Մա[ն]մագ-խանից ազատել էր [օգնությունն], և նրանց զորձն էլ մի էր։ Մեծ զորք էր հավաքել ու եկել Գյանջա... Արքաները (բատոնները) որ ժամանեցին Ղազախ, Փանան Ալաքոլա [կոչված տեղն] էր եկել, սկսվեց պատերազմի պատրաստությունն, ճանապարհին Կախեթի արքայազն [Հ]ասանմիրզան պարտվեց, և այդ պատճառով երկոքյան թագավորներն ընկճված էին, թեև պատերազմը նրանց համար հաճելի էր։ Քարթլիի և Կախեթի զորքը նույնպես պատրաստված էր... Հենց որ Փանահխանն այս լսեց, սկսեց բանակցել, որ ուզում է հաշտվել։ Փանահխանը մարդ էր ուղարկել... [իսկ մերոնք՝] իրրև պատանդ վերցնելով Շերվանի և Գյանջա-Ղարաբաղի երկրների մեծամեծներին՝ ուղարկեցին Մուխրանի բատոնին... Փանայի հետ էր [Հ]այջի-Ջալարը ծպտումով լեզգին... Սա ըմբռատացավ՝ [ասելով]. «Մա[ն]մագ-խանի ընտանիքի գույքը մեզ տվեք և Ղազախի երկիրն էլ ինձ թողեք և կհաշտվեմ ձեզ հետ»։ Այս բանը սաստիկ տրտմեցրեց Թեյմուրազ թագավորին և Երեկվա թագավորին... Եվ ի պատասխան սրա՝ Փանային հաղորդեցին. «Ինչ որ ապսպրել ես, [նրանից] և ոչ մեկը չի լինի... Քանի որ Մա[ն]մագ-խանն երևանցի էր, նրա ընտանիք[ի գույք]ը Երևանի խանին կատանք. իսկ սա ուզի որ ուզի, նրան կասա»։ Փանահխանը տեղհան եղավ, իջավ Գյանջա, վրաց բատոնը և Կախեթի բատոնը Տփղիս քաղաքը ժամանեցին. Երևանի խանն էլ հետներն էր։...

Եկավ Գյանջայի խանի քեռին (բիձան) Հոջա-խանն և Ջաֆար-խան Երևանցին, որի ընտանիքը գերի էր ընկել Մա[ն]մագ-խանին, և իրենց ընտանիքների մասին խնդրեցին արքաներին, [վերջիններն] ամեն ինչ տվին Երևանի խանին, որին և վերադարձրեցին բոլոր իրավունքների պայմանով, ճանապարհ

գցեցին. Երևանի խանին շատ բանով պարգևատրեցին, հետո էլ Ջազա Թարխնիշվիլուն ուղարկեցին, իբրև հյուրընկալի (մեմանդար), որին գեղի [Երևանի] բեգլարբեգությունը ճանապարհ գցեցին։

Նախիջևանի խան՝ Բա[հ]ման-խանը չափազ էր ուղարկել և ազատել երկոքյան արքաներին՝ Քարթլիի և Կախեթի, խնդրելով զորք և օգնություն։ Հրամայեցին Ջաալ Օրբելիանուն, որ Թիֆլիս-ատաման էր, փոքը զորքով գնալ, և նա հասավ Նախիջևան։ Բա[հ]ման-խանին շատ գուբ եկավ Ջաալը, որին հույժ պարգևատրեց, նույնպես և՝ նրա մարդկանց, և պահեց նրանց Նախիջևան քաղաքի մեծամեծների շարքում։...

438 [=1750] թ. Փանահխանը և Գյանջայի խան Շա[հ]վերդ խանը սկսեցին խառնություն ու արքել։ Փանան ուզեց Գյանջայի խանությունը ձեռքը գցի, նաև աշխատում էր Ադրբեջանի սարդարություն ևս յուրացնի։ Սրան Շա[հ]վերդ-խանը չհամաձայնվեց և Փանան իր շուրջը զորք ժողովեց. ինքն էլ լավ քոչվորներ ուներ, Ջևանշիրի և Ղարաբաղի մեջը մտավ, զորքն այնպես ժողովեց, որ Գյանջա քաղաքից գատ [տևդ] չմնաց, [որ նրա ձեռքը չանցներ]։ Գյանջայի խանն ուղարկեց իր եղբայր Ռազի-Ղուլի-բեկին Քարթլի և ազատեց Թեյմուրազ թագավորին և նրա որդի Էրեկլե թագավորին. «Այս մարդուց ինձ ազատեք, ես և իմ երկիրը ձեր ծառան կդառնանք, զորքին էլ ռոճիկ կտանք»։ Եվ Սղնախի երկու մելիքներն էլ այստեղ էին ու ազատում էին. «Քրիստոնյա արքաներ եք, տիրեք մեզ, Թուրքի ձեռքից ազատեցեք»։ Այս պահին մի հայ եպիսկոպոս[13] ևս եկավ։ Փանահխանը մտել էր Սղնախ, սաստիկ նեղացել էր։ Եպիսկոպոսն ևս ազատեց և արքաները (բռատոններ) հանձն առան. սկսեցին զորքի պատրաստություն տեսնել։ Այս ժամանակ եկավ Գյանջայի խանի չափարը՝ [հազորդելով], որ Փանահխանը շրջապատել է Գյանջայի բերդը, ավերել է քաղաք Գյանջան ու բերդում գտնվողներին հալածել։ Թագավորները հրամայեցին Քարթլիի և Կախեթի զորքերին, և շատապեցին օգնություն հասցնել Գյանջային։ Չէ որ Փանահխանը պայմանավորվել էր. «Իմ քոչվորներին վատահանամ և ոչ մի երկրին այլևս թշնամի չլինեմ»։ Այս պայմանը նա խախտել էր։ Ապա՝ եթե Գյանջան ուժով գրավեր, Ղափա-Բորչալուն ևս կուգեր։ Այս պահին ոչ մի տեղ դ'ատն չկար, և այս պատճառով տեղի ունեցին շատ խռովություններ։... Թեյմուրազ թագավորը և Էրեկլե թագավորը *438* քրո-

Նիկոնի [=1750] 8 փետրվարին [դուրս եկան Տփղիսից]։ Երբ որ նրանք կտրած կամրջով անցան, նրանց Բորչալուի զորքը մնացավ, Ղազախի զորքը՝ Ղազախում, և մեկնեցին Շամշադին (Սամշադիլո). Երևանի զորքերն էլ տպատամբել էին և սպասում էին նրանց. եկան շամշադինցիք (սամշադիլեցիք) և մատուցին ընծաներ երկրչյան արքաներին (տերերին)։...

Չենց որ Փանահխանը լսեց, թե՝ «Վրաց բատոնը եկել է քո դեմ», քանի որ չէր կարող ընդդիմադրել վրացիներին, իսկույն և նի դիշերով տեզուհան եղավ Գյանջայից ու գնաց՝ անցավ իր քոչվորների մեջ, սկսեց նրանց ևս տեզուհան անել ու ամրանալ։

Գյանջայի խանը դիմավորեց արքաներին (բատոններին) մինարեյի ծայրին, արքաները (բատոնները) ժամանեցին, իջան քաղաք Գյանջայի մատերքում, զորքով եկավ Երևանի խանը, բոլորը ժողովեցան, և Գյանջայի խանը մատուցեց Թեյմուրազ Խագավորին և Էրեկլե Խագավորին ձիաներ, լավ Խամքած, ինչպես վայել է արքաներին մատուցանելու համար։ Նմանապես բոլոր մեծամեծներին լիացրին ավարով և Խանկարժեք իրերով։

... Փանահխանի զորքը Գյանջան այն ատելիանի էր հասցրել, որ իրերից զատ ոչ մի տեղ ոչ մի չինություն չէր Խոգել, նույնիսկ մզկիթները քանդել էր... Արքաները (բատոնները) վեցերորդ օրը շարժվեցին ու Փանահխանի դեմ եկան։ Ջմանշիրը (Ջամշիրլի) իր քոչվորներին տեզուհան էր արել և դեպի Արազի ափը քշել, վեց հազար մարդով ճանապարհը կարել։ Ղարաբաղի զորքը, Ջմանշիրի (Ջամշիրլի), Շամշադինի, Սղնախի, Բարգուշատի և Շ[ա]նահանի, նաև այս երկրների զորքերը բոլորը նրա հետ էին. ինքն եկել էր ու ծառուղիի մեջ Խաքնվել, աշխատում էր խարդավանքով կռվի կպչել։ Իջնելով ծառուղիի մեջ՝ [վրացիներս տեսանք], որ նա այնտեղ բերել էր [Հ]աջի-Ջալաբի արգուն հեծելազորքով։ Եկավ Թեյմուրազը, Սղնախի մելիքը և Գանձասարի հոգևոր տերը (օքեվարտերը)[14], մատուցին արքաներին (բատոններին) ընծաներ և հանձն առան ծառայել ու զորքի համար բերին մթերք, որ է պարեն։

Գնալով հայնկուլս և անցնելով մատ մի մղոն (աղաջ)՝ [վրացիներս] տեսանք Փանահխանի զորքը։ Դու մի ասեք՝ Խաքնված կանգնել էին, իսկ մեր հակիչը (դ'արաուլը) չէր նկատել. իրենք էլ երևացին։ Բայց պատերազմի տեղը չէլան, անտառի եռևն էին կանգնած, և անտառ ու ամրոց ունեին Խիկունքում։ Այդ օրը կռիվ տեղի չունեցավ։ Արքաները (բատոնները)

մեկնեցին, իջան Սղնախի երկրում, այնտեղ նրանց մատուցին այն երկրի մթերքները, իսկ քեխխուդները սկսեցին ապատվորել...

[Փանահխանը] շամշադինցիներին ապստրկել էր (գրել էր), և նրանց զորքն էլ հետն ուներ... Շամշադինցիները մեր ճանապարհները կտրեցին. մենք լինչ գիտեինք, գնացինք Սղնախից և ուղղվեցինք [այն կողմն], ուր Փանահխանի կայանն էինք ենթադրում... [Սակայն] Փանահխանը... խնդուչն և եթ փախել էր:...

... Այս հարթանակներում մտանակից չի եղել զղրաշների, Երևանի, Գյանջայի կամ [Հ]այի-Զալարի զորքը, շաքցիք և շիրվանցիք. որանք բոլորը հեռվից էին գիտում: Իսկ ավքեր Վրաստանի զորքի կազմի մեջ էին՝ Դեմուրչա-Ալիի[15] [մարդիկ], զապախեցիք և բորչալուեցիք՝ որանք մեծ արիություն ցուցաբերեցին և շատ մարդիկ էլ խնայեցին:...

Երկրորդ օրն արքանները (բատոնները) մեկնեցին՝ հարթակ և ուրախալից. ժամանեցին [այնտեղ], ուր Փանահխանի խրամատն էր գտնվում, Սղնախի ծայրին՝ Թուլում[16], ուր Փանահխանը թողել էր իր թոխխանան ու դինարանը (ջարախանան):... Եկավ Թուլի մելիքը, որը մեծ զորքով գտնվում էր Փանահխանի մոտ, և խնդրեց իր հանցանքի ներումն, և հանձն առավ ծառայել արքաներին: Ներեցին նրա հանցանքը. հրամայեցին պղնախցիներին զորքի վեց օրվա պարենը տալ և պարտավորեցրին նրան գնալ գեպի Բարգուշատ՝ Փանահխանի փախած քոչվորների դեմ: Համբավաբերներ ուղարկեցին Գյանջա, Շիրվան-Շաքի, Ճար, Կախեթ, Թբիլիսի, Ղազախ-Բորչալու, Երևան և Նախիջևան և հորդեցին հարթության մասին: Ամենուրեք սկսվեց ուրախություն, և ճարեցոց զորքը, որ հավաքվել էր վրացիներին բնդդիմադրության ցույց տալու, քայքայվեց. և ամենամեծ ինացին շամշադինցիք, որոնք փշացրել էին ճանապարհները և մատղիր էին դավաճանել վրացիներին ու կախեթցիներին:

Ընտրելով ռազմատենչ մարդիկ, թագավորները բոլոր զորքով մեկնեցին գեպի Արազի ափն՝ արմատախիլ անելու իրենց հակառակորդներին: Թուլայում թողին էշերը, ուղտերը, իրերը, բեռները և թոխխանան: Բերին զորքը, որի գլուխ կանգնեցրին մխակարբաշի-ագասուն[17]: Երկու օր շարժվելուց հետո, երրորդ օրը քաց թողին արշավախումբը, զորքը գնաց, պատեցին Բարգուշատի տեղերն և Արազի հայնկույս և հայկույս կողմերը, ձևոքը գցեցին անթիվ ավար: Փանահխանին քիչ մարդկանցով նկա-

տեղին Խոզափերինի (Խոզափունի) կամրջի վրա, մտադիր էր պատերազմել։ Սակայն՝ լսելով վրացիների դալը, իր քոչվորներին թողեց ու փախավ, քիչ մարդկանցով հանդերձ ապաստանեց Արքանների (բատոնների) իջան Արագի ափին, գորքը գնաց և ավերեց Մուղանի դաշտի (չոլի) վերին [մասը]։ ավարի շատության մասին սրանից ավելի ի վիճակի չեմ զեկուցելու։ Այս մեծ անեզ գորքը Վրաց բատոնի և Կախեթի բատոնի հետն էր և ավարը անարձնելու ի վիճակի չէր։ Երկրորդ օրը Էրեկլե թագավորը՝ Կախեթի տիրակալը՝ մեկնեց Բարգուշատի երկիրը։ Սրան դիմավորեց Բարգուշատի խանը, որն ողջունեց նրան. «Ինձ մի հյուրընկալ» [Էրեկլեն] զիջեց նրան նրա տունն ու քաղաքը, և հրամայեց ավերել երկիրը։ [Վրացիները] այնքան [ավար] բերին, որ առաջինից շատ էր, և այս երկուսը միասին որ հավաքվեց, ավարն այնքան շատացավ, որ նրա պահելն ոչ ոք ի վիճակի չէր։ Երկու շտեմ ոչխար էին ծախում և հինգ արաասով՝ կով, երկու մինալթունով՝ գերի։ Զորքին ավին արծաթ, երեք հատար գերի ևս վերցրին՝ փրկանք [տալով]։... [Մերոնք] մի ուժամանակ Բարգուշատի երկրում մնացին։...

... Մեկնելով Բարգուշատից, [մերոնք] գարձյալ եկան Թուլ։...

... Բոլոր գյուղացիներին, որոնք [իրենց տեղերից] փախել էին ու գնացել էին Վրաստանի (Սաքարթվելո), Կախեթի, Ղազախ-Բորչալուի կամ Երևանի, Ղարաբաղի և Սղնախի երկրներում, մեր թագավորների հրամանով տեղահան արին։

... Երբ [վրացիները] եկանք Գյանջա, տերն Երևանցի գյուղացուն շնորհեց Երևանի խանին, ղազախեցուն՝ Ղազախի սուլթանին, բորչալուեցուն՝ Բորչալու, քարթլեցուն՝ Քարթլի և կախեթցուն՝ Կախեթ, և ճանապարհ դրին։...

... [Հ]աջի-Զալարի և Շիրվանի զորքը [Վրաց բատոնը] հենց Բարգուշատից արձակեց և այլ զորքերով ժամանեց Գյանջա, [ուր] նրան մատուցին տաս հազար թուման, [ճնշացած] հազար հինգ հարյուրը պակասեց, որ չէին կարողացել կորզել, և՝ իբրև դրամական այդ հազար հինգ հարյուր թուման՝ մատուցին Շամշադինի երկիրը։ Մեկնեցին Գյանջայից, ժամանեցին Շամշադին։ Գյանջայի խանը բերել ավեց Շամշադինի քեթխուդաներին, որոնց ներկայացրին [Վրաց] բատոնին. բատոնն արձակեց խանին, որը վերադարձավ Գյանջա. արձակեցին նաև Երևանի խանին, որը գնաց Երևան. արքաները (բատոնները) Քարթլիի և Կախեթի զորքով ուղևորվեցին դեպի

Քարթլի։ Երբ նրանք ժամանեցին Ղազախ, այնտեղ նրանց դիմավորեց Բա[ղ]ման խանն և Ապվանից երկու խաները՝ ... որոնք ուղեկցեցին նրանց մինչև Քարթլի։...

... Արձակեցին Նախիջևանի և Ապվանից խաներին, տալով նրանց հատուցելիքը, և նրանք գնացին իրենց երկրները, հնազանդ ծառայով մեր թագավորների հրամաններին։

... Թեյմուրազ օծյալ թագավորը հրամայեց Դեմետրե Էշիկագասրաշ Օրբելիանուն գնալ և կառուցել բերդեր ու ամրոցներ Սոմխիթի և Սարարաթաշվիլայի երկրներում։...

... Վրաց տերը հավաքեց Քարթլիի, Ղազախ-Բորչալուի զորքերը և մեկնեց Կախեթ։...

... Թեյմուրազ թագավորի... շուրջը համախմբվել էր Քարթլիի և Ղազախ-Բորչալուի զորքը։...

... Բա[ղ]ման խանի ընտանիքը Նախիջևանով գացած [Տըփղիս] եկավ...

... Ա[ր]զրումի քարվանն Ալգեթ [գետ]ովն էր անցնում։...

... Լեզգիների զորքն ավարը բերում էր Օրբելիանների երկիրն (հայրենիքը) և Սոմխիթ...

... Զաալ Օրբելիանին Նախիջևանով եկել էր գացած Տփղիսը։ Ազատ խանը, որ սպասավոր էր Ապրքիջանում, խոսվել էր Բա[ղ]ման՝ Նախիջևանի խանի հետ, և վերջինս իր ընտանիքով հեռացել էր այնտեղից, իր ընտանիքը Քարթլի էր ուղարկել, իսկ ինքն անցել Երևան. [հատվ.] Զաալն ձեմ մոտ պիտի ճար, և իր զորքով, որ Քարթլիից էր տարել, եկավ։ Նախիջևանը ճամց Ազատ խանին. իրեն համար վատահելի մարդուն խան կարգեց Նախիջևանի երկրում։...

... Լեզգիների զորքն յոթ հազար հեծյալից բազկացած՝ գնաց և հարվածեց Ղազախի երկրին, շատ ավար և գերի տարավ։... Վրաց բանակն մոտ, որ Սադարեջոյումն էր գտնվում, մարդիկ եկան Ղազախից և զեկուցին Ղազախին վրաների մասին։...

... Մեր թագավորների տեսությանն էին եկել Երևանի խանի եղբայրն և Այրումների (Այրումլուի) խանը։...

... [Երեկվա թագավորի հարթանիքին Դարեջան՝ Դապիանու դստեր հետ] հրավիրված էին Գյանջայի և Երևանի խանները, նաև Հաջի*-Զաալաբի եղբորորդին։...

[Թեյմուրազ և Էրեկլե թագավորները] հավաքեցին Քարթլիի, Կախեթի և Ղազախ-Բորչալուի զորքը և մեկնեցին դեպի Ճար-

* Բնագրում՝ Ահջի։

Ապսպրեցին և Գյանջայի խանին... [Ապա] նրանց միացավ Գյանջայի խանը Ղարաբաղի զորքով:...

Այս հանգամանքներում երեք առան զղլբաշները և ուղեցին վտանել Բարթլիին: Բայց քանի որ Գյանջան ու Երևանը Վրաց թատոնի շուրջն էին, [ուստի և] նախ այն երկրներին ցանկացան տիրել: Ազատ-խան Ազմանը, որն իր ուժով Ապրեջանի երկրներին էր իշխում, զորք ուղարկեց Երևանը գրավելու նպատակով, և Մա[հ]մադ-խանը, որ երևանցի էր, [գործին] գլուխ կանգնեց: [Ազատ-խանն] եկավ և կռիվ առավ Երևանյան երկրներում: Երևանի խանն և ավագանին եկան ու աղաչեցին մեր պատրոններին՝ զորք և օգնություն խնդրելով: [Մերոնք] խոստյան և եթ մարդիկ ուղարկեցին չերքեզների մոտ, Օսեթ և լեռնային երկրները, զորք հավաքեցին և այսպես ևս սկսեցին զորքերի պատրաստություն տեսնել. որովհետև՝ եթե զղլբաշներն Երևանը ուժով գրավեին, Գյանջան և Ղարաբաղն էլ նրանց ձեռին կմնար և ապա Ապրեջանի բոլոր երկրները թշնամություն կսկսեին Բարթլիի դեմ: Սահմանապահ զորքի գլխավոր նշանակեցին Բա[հ]ման-խանին, որ մի առ ժամանակ խան էր Նախիջևանում և իշխում էր այս երկրներին իրրև սպասալար՝ Վրաստանի (Սաքարթվելոյի) թեյմուրազ թագավորի հրամանով: Այս Բա[հ]ման-խանը Բասանի էրիսթավի փեսան էր, թշնամու շնորհիվ հեռանալով Նախիջևանից, այլևս ի վիճակի չէր [վերադառնալ] այնտեղ կենալու, եկավ քաղաք [Տփղիս] և մեր բատոնի հրամանի ներքո էր գտնվում: Սրան տվին թուրքերից [կազմված] զորք, նույնպես և Ջաալ Օրբելիանուն տվին Բարթլիի զորքը և ուղարկեցին՝ [այսպես] հրամայելով. «Մինչև որ մենք կպատրաստվենք, տեղեկացրեք մեզ բոլոր հանգամանքների մասին, և մենք ևս, օգնությամբ աստծո, շուտով կգանք և ցասում կթափենք մեր թշնամիների վրա»:

Գնացին, հասան Փամբակի ձորը, ուղեցին Երևանյան երկիրն անցնել: Սակայն Երևանյան երկրներն արդեն ավերված էին ու մեջն ոչ մի ոչինչ չէր մնացել, բոլորը թշնամու ձեռին էր: [Իսկ] սրանք կանգ առան Փամբակում և դեկուցին մեր թագավորներին Երևանի գրության մասին: Թագավորները պատրաստվեցին և հավաքեցին Բարթլիի և Կախեթի, [նաև] Ղազախ-Բորչալուի զորքը և նրանց, որ լեռներից էին [իջել ու] հասել... Էրեկլի թագավորը մեկնեց Երևան, անցավ Սոմխեթով, ժամանեց Փամբակ, [ուր և]

նրան դիմավորեցին իրենց զորքերով Բա[ղ]ման-խանն և Զաալ Օրբելիանին։ Քաղաք [Տփղիս] եկան հյուսիսային (հայկական) Օսեթի մարդիկ։ [Թեյմուրազ] Թագավորը ավեց նրանց պարեն և ուղեկիցներ ու իր որդու մոտ ուղարկեց։ Նրանք հասան ու միացան Էրեկլե Թագավորի [զորքի]ն Փամբակում։ [Էրեկլե Թագավորը] Փամբակից մեկնեց։ Եվ երբ որ նա անցնում էր Երևանյան [երկիր] տեղերով, ազվանները դգացին այդ և տեղահան եղան Քանաքեռից և ներքև իջան՝ կանգնելով Երևանի բերդի մոտերքում։ Էրեկլե Թագավորը հասավ և կանգ առավ Քանաքեռում։ Երևանի բերդից դուրս եկան ուժասպառ եղած զորաշներն և սկսեցին նրան դավել։ Անկասկած, սովը սոխել էր բերդում եղողներին [այսպես վարվել]։ Քանի որ հունձի ժամանակ էր, [Թագավորը] հրամայեց իր զորքին հնձել և կալսել, և տաս հազար կող հաց վերցրեց իր զորքից և Երևանի բերդին ուղարկեց։ Այնպես ավերված էր Երևանյան երկիրը, [որ] հնձող չէր ճարվում։ Երևանից ու Էջմիածնից (Էչմիատս. sic) դուռ՝ ոչ մի տեղ ոչ մի շինք չէր մնացել։ Այս ազվանական զորքը և Մա[ղ]մադխանը նույնպես Երևանյան երկրում էին կանգնած։ Դեմ առ դեմ պատերազմել չէին համարձակվում և հարձակվում էին իրրև դաչաղներ (զապտիեներ), ձի և մարդ փախցնելով։ Մեր զորքն անցնելիս գրահ կապեր, ազվանները կփախչեին և չեն սպասի պատերազմի։ Էրեկլե Թագավորը շարժվեց տեղից, մեկնեց դեպի Շարուր և Սարադապի յայլանները։ Կանգ առավ լեռան գլխին ու այնտեղից զորքեր ուղարկեց արշավելու։ Ուր էլ ազվանների կողմնակից մարդ կար, բոլորին կողոպտեցին, կործանեցին։ Վրացիք և կախեթցիները ավերեցին Նախիջևանի հայկական գավառ երկիրը մինչև Արագի ափը, նրանք լցվեցին ավարով, և այսպես ավարով լցված եկան։ Բաւանն իջավ Ղըրխբուլախում[18], Երևանի բերդից հանեց Զերզալի-խանին ընտանիքով, Երևանի մինարաշ Բադիմ-բեկին և չորս ևս այլ մեծամեծ մարդկանց, զորքն ուղարկեց Բորչալու և մի մասը Սարաբաթաշվիլու ուղարկեց իր օձյալ հորը քաղաք Տփղիսում պահ[պան]ելու համար։ Սրանց մեզադրում էին դավաճանության և մատնության մեջ Երևանի բերդի [պաշարման ժամանակ]։ Իսկ ինքը՝ Էրեկլե Թագավորը նույնպես մնաց, և Երևանի գործերն էր կարգավորում։

Հենց որ լուրն այս [գնդերի] մասին հասավ Ագաս-խանին, [վերջինս] կատաղեց՝ [իրրև] մոլեգին գազան, և ... ելավ Էրեկլե Թագավորի դեմ. աշխատում էր գազանի կերպով հար-

ձակվել նրա վրա, եկավ Ղըրխըռւլախ և, ուր Էրեկլե թագավորն էր կանգնած, [նրա դիմաց] լեռների վրա կանգնեց։ Հակիչներն եկան և դեկուչին թագավորին։ [Թագավորը] հրամայեց զորքին պատրաստվել, իսկ ինքը սկսեց ազոթել... և կաթոգին ազաչեց աստծուց հաղթություն [շնորհել] ազարյանների վրա։ Հենց որ ազոթքը վերջացրեց, հնծաձ ձին..., ...եկավ պատերազմի տեղն առաջնորդությամբ ամիր-սպասալար Ռեվազ Օրբելիանու և առաջապահ զորքի, որանց հետ էր խառնված և Բխախ'ի զորքը, նույնպես և ձախակողմյան և աջակողմյան միացյալ զորքը Բարթլի և Կախեթի, որոնք շարվեցին ըստ կարգի։ Աբքան (բաճոնը) իր զորքով մերձակա զորքերի թիկունքումն էր կանգնած. Երևանի [պարսկական կայա]զորը Բա[հ]ման-խանի [զեկավարությամբ], պարսկական զորքի հետ միասին, ամենք առաջապահների հետ, ամենք աջակողմյանների կամ ձախակողմյանների հետ՝ գնացին պատերազմելու։ Ագաա-խանն ևս դուրս եկավ հրանոթների (զամբուրակների) հրաձգությամբ և հպարտորեն, այնպես, որ նրանց մեջ ոչ մի երկչոտություն չէիր նկատի։ Եվ նրա զորքը հինգ-վեց գնդի էր բաժանված. մինչդեռ վրացական զորքը հազիվ նրա հինգերորդ մասը կլիներ։ Առաջին ելույթով նրանք հարձակվեցին ձախակողմյան ջոկատի վրա։ Նախ հպվեցին վրացիները, ապա ազվանցիները, որոնք վրաց ձախակողմյան ջոկատը փախուստի ենթարկեցին։ Վրաց հետիոտն զորքը մի դյուզատեղում ամրացավ, և երկու կողմերի միջև մեծ պատերազմ տեղի ունեցավ և երկուսի կողմից էլ զոհեր եղան։

Այս հանդամանքներում մաս առ մաս (գունդը գնդի ետևից) եկավ Ագաա-խանի զորքը, որը Էրեկլե թագավորի երեքյան զրուշակի տակ գտնվող զորքը շրջապատեց։ Ազվանցիները այնպես գրոհ տվին, որ հենց մեր զորքի մեջ [խրվելով] նիզակով շատերին վայր գցեցին։ Էրեկլե թագավորը հրամայեց ամիր-սպասալար Ռեվազ Օրբելիանուն իրեն մոտ լինել։ Հասան առաջապահներն և բաճոնի զորքին միացան։... Էրեկլե թագավորն՝ իրրև անզսպելի ասյուծ՝ թե ինքն էր կռվում և թե իր զորքին էր կռվացնում։ Կատորեցին [շատ] ազվանցիներ և զղլբաշներ։... [Թշնամին] թողել էր թիխիանոն, վինարանը (ջարախանան), անթիվ հրանոթներ (զամբուրակներ) ուղտերի վրա բարձած, բազմաթիվ էշեր և ուղտեր, իրեր և վրաններ, «մեյթաբխանեց»-ն[19]. և [բոլորն,] ինչ որ Ագաա-խանի ու նրա զորքինն էր, վրացիներին ձեռաց, այնպես, որ նրանք մի-մի ձիուց ավել հետևներն ոչինչ

չէին տարել։ Ագաթ-խանն այնպիսի մարդ էր, որ պատրաստվում էր դ'ահն դառնալ, Ադրբեջանի երկիրներին տիրել էր և այդ փառքով էլ տարված էր։ Այս բոլոր ամարը վրացոց ձեռքն անցավ, սակայն այդ այնքան շատ էր, որ չկարողացան տեղափոխել։ Ագաթ-խանի վրանը դրին, Էրեկլե թագավորը մեջը բազմեց։ Եկան Երևանի, Նախիջևանի, Այրումլուի և այլ խաները և շնորհավորեցին ու գովեցին նրան։ Նույնպես եկան վրացիները, կախեթցիները, և շնորհավորեցին հաղթանակը և մատուցին կենդանի [գերիներ] և [ապանվածների] գլուխները։ Սկսվեց թնդանոթների կրակոց Երևանյան բերդում և մեծ խնդություն։ Եվ այս լուրն խկուչն և նթ տարածվեց Ադրբեջանի բոլոր երկրներում։ Ամեն տեղ թուղթ ուղարկվեց և շրջակա քաղաքների խաներին ևս ծանուցվեց [այս] հաղթանակի մասին...

... Էրեկլե թագավորը մտավ Երևան իր հոր՝ Թեյմուրազ թագավորի հրամանով. Երևանի բեգլարբեգությունը նա շնորհեց Արգուլա-խանին, որ բերդում էր նստած իբրև մինրաշ, որ է հազարապետ։ Նմանապես վրաց իշխաններից նշանակեց Երևանի գործերի վարիչներ, Ղազախ-Բորչալուի և Երևանի զորքը տվեց Բա[ղ]ման-խանին, նաև վրացական զորքը՝ Ջաալ Օրբելիանուն, որին Նախիջևան ուղարկեց։ Վրացիք հենց որ հասան Նախիջևան, խկուչն և նթ գրավեցին այն ու մնացին մեջը։

Էրեկլե թագավորը դարս գալավ Երևանից, ժամանեց Սոմխեթ։ Ճանապարհին հանդիպեց լեզգիների զորքին, որը շատ գերիներ և ավար էր հետը տանում։ Հրամայեց զորքին [շրջապատել նրանց], շրջապատեցին և բոլորին — ձեր արևը վկա — կենդանի գլեցին ձեռքը։ Այսպես երկիցս հաղթող Էրեկլե թագավորը ժամանեց Տփիս...

Քարթլի բառնը զորք ժողովեց վրացիներից և Ղազախ-Բորչալուից... Լեզգիներին լուր հասավ. «... Մի զորք եկավ, Ղազախին խփեց»։

Սղնախեցիք հաշտվեցին [Հ]աջի-Ջաւարի հետ, իսկ Փանա խանն ուժեղացավ։ Սրա մասին տեղեկացնելու մեր թագավորների մոտ չափարներ ուղարկեցին. Ղարադաղի խանին ևս նուիրք գրեցին։ [Հ]աջի-Ջաւարն եկավ, գյանջային մտնեցավ, շուրջը ամեն ինչ ավերեց, քաչվորներին տեղահան արավ Ղարաբաղից ու իր երկիրը փոխադրեց։ Մեր չափարներն եկան Սղնախից, հետո էլ մի վարդապետ եկավ, [Հ]աջի-Ջաւարի մոտ էր եղել և աշխատում էր նրան [վրացիների հետ] հաշտեցնել, իբրև միջնորդ էր եկել...

... Ազատ խանը հարձակվեց Նախիջևանի վրա. մեր զորքը հեռացավ: Բա[ն]ման խանն եկավ Գյոքչա:...

Գյանջայից եկավ մոտավոր Բայխասրան, որի հետն էին Գյանջայի վեքիլը, Փանահխանի հորեղբոր որդին, Ղարաբաղի քեխխուդները և Ջավանշիրի (Ջավանշիրի) ու Բարգուշատի խանի եղբորորդին:... Սոմխիթում գտնվող լեզգիների զորքը մեծ ավարով գնաց:...

Երևանի ավագանիներին կանչել էին [Տփղիս]...

440 [=1752] թ. ...Թեյմուրազ Թագավորն և Էրեկլե Թագավորը մեկնեցին Գյանջա: Ուզում էին այնտեղից հարվածել [Հ]աջի-Ջալարին: Դուրս գնացին քաղաքից հունվարի 9-ին: Կոտրած կամրջի վրա հավաքել էին Բորչալուի զորքը, նաև Բորչալուում կանգնած լեզգիներին:... Ժամանեցին Ղազախ, ուր մի քանի օր մնացին և ժողովեցին Ղազախի զորքը, ապա մեկնեցին Շամշադին, ուր ընդունեցին ընծաներ և զորք, և զորքի համար բավականաչափ պարեն: Նրանց դիմավորեց Գյանջայի խանի եղբայրը և Երևանի զորքն էս հավաքվեց:...

Վրաց տերը դուրս եկավ Գյանջայից, հասավ Ագարմաթա. Գյանջայի խանը հետն էր. սրանց միացվեցին Սղնախի մելիքները՝ զորքով, բայի երկու մելիքից, որոնք մասուցին զորքի ծախսը, որքան էլ պետք էր:

Այս պահին Ալազան [գետ]ը մեծացել էր, [և Վրաց Թագավորները] չկարողացան գնալ [Հ]աջի-Ջալարի դեմ: Խանները հրավիրում էին [Թագավորներին] ներքևում [կանգնած] ազվաննների դեմ [գնալ], դու մի ասի՝ ուզում էին վրացիներին գավճանել: Մեր Թագավորները՝ նկատելով այս՝ ընտրեցին այսպիսի [միջոցառում]. «Այս խաներին կալանավորենք և սրանց ունեցածը (տավարը) զորքին տանք»: Այսպես վերջացրին խորհրդակցությունն և հրավիրեցին խաներին: Գյանջայի խանն իր եղբոր հետ, Քազում-խան Ղարադաղցին, Բարգուշատի խանը, Շահսևանի խան Փանահխանն ու սրանից հետո նրանց երկրների ավագանիները և Սղնախցի Զանախչիի մելիքը՝ բոլորը նստեցին վրաց բաոռնի վրանում: Սրանք խրախճանք և քեֆ էին անում և չնկատեցին, թե ինչպես Քարթլիի և Կախեթի աժդահա մարդիկ [յուրքանչյուր] խանին էին կոչել: Երկոքյան Թագավորները դրսում էին գտնվում: Պայմանավորված ժամին սկսեցին ծխել պալխան, և սուրճ (պալա) մատուցին. հենց այդ ժամանակ Վրաց և Կախեթի իշխանները հարձակվեցին խանների վրա ու կալա-

հավաքեցին նրանց։ Երբ որ զինվորները լսեցին «Ծաներին բռնեցին», այնպիսի խառնակություն և իրարանցում տեղի ունեցավ, որ վերջին պատառատանի (երկրորդ գալստյան) օրին նմանվեց...

...Բարթլիի թագավորը հրամայեց Երևանյան զորքին... փախչել։... Վրացիք պարտվեցին, կոտորվեցին. ոմանք գնացին դեպի Սղնախ, ոմանք դեպի Երևան, իսկ ոմանք էլ եկան Տփղիս քաղաքը։...

Երկոքյան թագավորները բարձրացան Գյանջայի լեռը։ Երբ մթնեց, իջան Շամշադինի ձայրին, և ով էլ ճնացել էր, նրանց հետ միասին ժամանեցին Ղազախ, այնտեղից պարտված մուտն քաղաք [Տփղիսը]։... Փախած զորքին դիմագրեցին շամշադինցիք, որոնցից ոմանց սպանեցին, ոմանց մերկացրին. այսպիսով Վրաստանի [Թագավոր] արյունը շամշադինցիք իրենց վրա վերցրին։...

[Հ]աջի-Զալարը... թուղթ գրեց Ղազախ-Բորչալու, Դեմուրչասալիի քոչվորներին, Բայդարին. «Վրաց բանակին այլևս մի ծառայեք. հակառակ դեպքում կոտորած կանեմ. չեմ թույլ տա, որ թաթարը վրացու ճորտ լինի»։ Թաթարներին այս լուրը գոհ եկավ, Վրաստանի բոլոր քոչվորներն ու Ղազախ-Բորչալուն ընծաներ պատրաստեցին, գնացին, մատուցին [Հ]աջի-Զալարին և հանձն առան ծառայել նրան և խոստացան լինել նրա ճորտն և համախոհը։ Վերադարձան տուն, նորից զորք հավաքեցին, սկսեցին պատրաստել Սամխեթ-Սարաբաթաշվիլուին. Բորչալու-բայդարցիք ևս գալիս էին ու քաղաքի շրջակայքն ավերում. լեզգիները նույնպես և զազախեցոց զորքը դուրս բերել ոչինչ։...

Ղազախի, Բորչալուի և Բայդարի զորքը հարձակվում էր քաղաքի շրջակայքի վրա և անթիվ ավար տանում, նույնպես և լեզգիների զորքը բերին և կանգնեցրին Ղազախում և Բորչալուում. սրանց միանում էին տեղական զորքերն ևս, և վերջիններիս առաջնորդությամբ ավերում էին Սամխեթն ու Սարաբաթաշվիլուն։... Որքան էլ Սամխեթ-Սարաբաթաշվիլուում հաց կար, բոլորը տարան։ Այսպիսի պատերազմ էլ չի հասցրել, ինչ որ սրանք արին։ Ղազախ-Բորչալուն և Բայդարն ավարով լցվեց։ Ղազախ-բորչալուեցիք և բայդարցիք երկերեսանություն արին վրաց տիրոջ նկատմամբ և սկսեցին պատել Ջավախեթի և Ղարսի երկրներին։...

...[Հ]աջի-Զալարը զորք հավաքեց, իր որդուն ուղարկեց

Գյանջա ու այնտեղ ևս հավաքեց Ղարաբաղի ու Սղնախի զորքը:

[Հ]աջի-Ջալաբի որդին և Գյանջայի խան Շա[հ]վերդ-խանը մեծ զորքով եկան Քարթլիի վրա. սրանց ընդառաջ գնացին Ղազախ-Բորչալուի և Դեմուրչասալիի զորքերը, որոնք եկան Շամշադին: Ղազախում Ղազախ-Բորչալուի քեթխուդներին ասել էին:...

[Հ]աջի-Ջալաբի որդի՝ Ապա-քիշին և Գյանջայի խանը հեռացան Ղազախից և կանգ առան Բայդարում:...

[Վրաց թագավորներին] լուր հասցրին... [որ թշնամին] մտել է Ղազախ:...

Քարթլիի և Կախեթի թագավորները գնացին [Հ]աջի-Ջալալի որդու և Գյանջայի խանի դեմ, որոնք կանգնած էին Ղազախում:... Ղազախի խանն և զազախեցիներից ոմանք տերերին մնացան: Երբ [Հ]աջի-Ջալաբի որդին Ղազախի և Շամշադինի (Սամշադիլոյի) սահմաններին մոտեցավ, այդ ժամանակ էրեկլե թագավորը հասավ...

Թագավորները հպմող մեկնեցին և իջան պատերազմական [գործողությունների] տեղը Շամշադինի (Սամշադիլոյի) վայրում, [իսկ] լեզգիները գնացին պարտված: Գյանջայի խանը գնաց Գյանջա, [Հ]աջի-Ջալաբի որդին հասավ Շաքի, կենդանի մնացած զորքը ցիրուցան եղավ, բոլորն իրենց տեղերը գնացին, կոզոպոխչները ուղարկեցին Շամշադինի երկիրը, կոզոպոխցին երկիրը, այրեցին, ավերեցին. իսկ վրացիները տեղահան եղան այնտեղից, փոխադրվեցին Ղազախ [և] նրանց շուրջը համախմբվեց Ղազախի ավագանին: Նրանց, ովքեր հանցանք ունեին, մատնեցին մեր թագավորներին. հանցավորներին և ուխտազրուժներին խեղդեցին ջրում, ոմանց գլխատեցին և ոմանց կալանավորեցին, հավատարիմ [մնացած]ներին ողորմածություն խոստացան:

Մուսա-պ'ուլի-խան՝ Բորչալուի նախկին խանին, որը քաղաքում մնաց և [Հ]աջի-Ջալաբին չմխացավ, Բորչալուի խանություն տվին ու ճանապարհ դրին դեպի Ազջաղ'ալա: Բորչալուի խանը [և] Մուսան՝ Բայդարի սուլթանը, իրրև հանցագործներ և ուխտազրուժներ, դեպի Երևանյան երկրները փախան:

Հպմող թագավորները դուրս եկան Ղազախից և ամեն ինչով լի հասան Սղնալուխ, այնտեղ մնացին ու կարգավորեցին

Ղազախ-Բորչալուի գործերը, թագուհյուն ասին ախալցիքի համար և ներկեցին հանցագործներին:...

Մեր թագավորները Զեյդալ-խանին ուղարկեցին Երևան այն պատճառով, որ Վրաց սրքայի (բատոնի) կողմից խան նշանակված Արդուլ-խանին Ագամ-խանն իրեն մոտ էր կանչել և պահել ու այլևս ետ չէր թողել, Երևանի խանությունը խլել էր և դարձյալ [Հ]ասան-Ալիխանին էր տվել, որը նրանից առաջ էր խան, այս խանին էլ ազմանական զորքով ուղարկել էր ու Երևանի բերդում տեղավորել: Այս բոլորը մեր բատոնին ընդդեմ էր սարքել: Զեյդալ-խանն Երևանի բերդը պիտի մտներ և թագավորի անունից Ագամ-խանի հետ բանակցեր. «Եթե հաշտություն ուզեիր, սրքաններն (բատոններն) ևս կհաշտվեին, Շահ[ա]բաս խանն(՞) Ագամ-խանի կողմից էր Երևան ուղարկված, անվանի մարդ էր»: Այսպես դիմեց Զեյդալ-խանը, որին Հասան-Ալիխանը մեծապես պատվեց ու Երևանի բերդում տեղավորեց, և Ագամ-խանի հետ սկսեց բանակցել:

Սուլխան Էշիկ-ագասը-բաշին ուղարկեցին Ղազախ՝ այնտեղի գործերին տեղեկանալու համար:...

...[Հ]աջի-Ջալալի որդի Ագա-քիշին... զորքով ...շարժվեց դեպի Ղազախ:... [Հ]աջի-Ջալալի որդին մեծ զորքով և Ղարաբաղի զորքն եկան Ղազախ, սկսեցին ավերել, ղազախեցիք տեսահան էին եղել, ամրացնները մտել: Սակայն ամրացնները խորտակեցին, ...շատ տեղեր ավերեցին, ավարով լի գարձյալ իջան Ղազախ: Այս պատճառով թշնամաբար էր վերաբերում Ղազախին և ասում. «Դուք ինձ [այստեղ] բերիք ու պարտվեցիք, և վրացիք իմ զորքը բնաջինջ արին, ես ձեր արյունն եմ ուզում»: Մտադիր էր էլ ավելի թշնամանքյուն անել և դեռևս չէր ուզում գնալ. նույն տեղում կանգ էր առել ու ավերում էր: Վրաց տերը սրանից ավել զորք չհասցրեց. Սամխիթ-Սարթարթաշվիլուի զորքը հապճեպ կանչեցին... Ղազախ հասցրին... հասան Ղազախ... Ղազախում կանգնեցին... հարձակվեցին Շամշադինի վրա:...

Ագամ-խանի չափարն եկավ, սրքաններին (բատոններին) մատուցեց գաշինքի և հաշտության գիրը: Զեյդալ-խանն այստեղից որ Երևան էր գնացել, լսեր էր...

441 [=1753] թվի հունվար ամսին էրեկլե թագավորը Քարթլիի և Կախեթի զորքով մեկնեց Բայդար... մտադիր էր անցնել Ղազախ... [որպեսզի] զազախեցիք իրենց հավատարմությունը հայտնեին [նրան]: Ղազախեցիք լսեցին այս. եկան սուլ-

թանի եղբայր Թադի-բեկն և Ղազախի քեթխուդներն ու մատուցին ընծաներ... Բա[ն]ման-խանին իր մարդկանցով ուղարկեց Ղազախ...

...[Հ]աջի-Ջալարը... զորք ժողովեց և մոտադրվեց գալ Բարթլի և Կախեթի վրա, երկու թևի բաժանեց զորքը. զորքի մի մասին Բա[ն]ման-խանն էր առաջնորդում Բարթլիի վրա, երկրորդին՝ Ջուբար Էրիսթավիս-շվիլին Կախեթի վրա, սրանց հետ էին ճարեցիք, Շաքի-Շիրվանի, Գյանջա-Ղարաբաղի, Բարդ[ա]լի, Բարգուշատի և Սղնախի զորքերը:... Ազատ-խանը բոլոր կերպով ուզում էր գրավել Երևանը:...

[Լեզգիները] բազմաթիվ զորքով իջան Դաղստանից, հասան Բամբակի երկիրը, ավերեցին բերդերը, գերեցին, բնաջինջ արին, անթիվ գերի ու ավար տարան. հարձակվեցին Ղարսի երկրների վրա, շատ տեղեր վնասեցին, ոչ մի տեղ ընդդիմադրության չհանդիպեցին, գնացին Գյանջա, գրավեցին բերդը և այնտեղի բոլոր բնակավայրերն ավերեցին: Հարձակվեցին Երևանի երկրի վրա, սկսեցին ավերել Տփղիս քաղաքի շրջակայքը:...

442 [=1754] թվին... լեզգիների զորքը մոտավ Սոմխեթ... [լեզգիները] անցան Սոմխեթով, հասան Հաղբատ, այնտեղից նրան Ղազախի լեռները ու իջան Գյանջա...

...Երևանի խանի դեսպաններն եկան. շրջակա երկրների մարզիկ աշխատում էին հաշտ ճար ու դաշնակից լինել վրացիների հետ:

Դիվանբեգ Իմանե Օրբելիանու և Ջաալի մարզիկ, որոնք Սպահանումն էին Ազատ-խանի մոտ, եկել էին Երևան... Լեզգիների զորքի մի մասը գնաց Երևանյան կողմերը, մյուսը՝ Սոմխեթի կողմերը, իսկ երրորդը՝ վերին Բարթլի:... Իսկույն և եթ Թադավորը չափար ուղարկեց Երևան... Նա ճնացել էր Երևանում, ուր Երևանի խանը նրան լավ պատվել էր. նմանապես նրան լավ էր ընդունել Հայոց պաարխարքը էջմիածնում (էչմիատի. sic)[20]: Երբ լեզգիների զորքը գնաց դեպի Երևան, նա փչացրեց Սատրապը[21], կոտորած սարքեց. [լեզգիներն] այնքան ավար և գերի վերցրին, որ շատ լինելու պատճառով հազիվ էին տանում, անցան Ղազախով և գնացին ամեն ինչով լի: Ղազախի զորքն էլ այդ լեզգիների զորքի հետն էր:...

...Սոմխեթ-Սարարաթաշվիլոյի տեղերն ավերակ էին դարձած և թշնամի[ներ]ով լի:... [Մգիվան-բեգին և Ջաալ Օրբելիանուն] Երևանում դիմավորեցին:...

... Լեզգինների զորքը ... Ծալկայի Բևգենիի սարից ... անցավ Դմանիսի գյուղը, լեռան սորսորին Տաշիրով անցավ և մտավ Հաղրատի ձորը: Հետախույզները [սրա մասին] զեկուցին թագավորներին: Վերադարձան Բևգենիից և իջան Նախիդուբի[22], այնտեղից մարդիկ ուղարկեցին Ղազախ և Բորչալու:...

Երբ լեզգինների զորքը Հաղրատումն էր կանգնած՝ լի ավարով, սրա մասին հաղորդեցին Քարթլիի թագավորին:...

443 [=1755] թվին... Երևաքյան թագավորները մեկնեցին դեպի Բորչալուի կողմերն և շրջեցին Սամխիթի երկիրը. ոչ մի տեղ թշնամու չհանդիպեցին և՝ արտորդությամբ զբաղվելով՝ վերադարձան Տիփիս քաղաք:...

Բա[ն]ման-խանը լեզգինների զորքով եկավ Ղազախ երկիրը,... և Ղազախից սկսեց թագավորների հետ բանակցել:... Բա[ն]ման-խանը և լեզգինների զորքը Սամխիթի մելիքի հողում (հայրենիքում) էր կանգնած... Շիռ Արղութքուլին իրրև պատանդ ուղարկեցին լեզգիներին:... Բա[ն]ման-խանը և լեզգինների զորքը գարձյալ Սամխիթի անառուն էին կանգնած:... Էրեկլե թագավորն իջավ Բայդար:... Արղութքուլիի Շիռին, որը պատանդ էր լեզգինների մոտ, սպանել էին ճանապարհին:...

Մի փոքր ժամանակից հետո լեզգինների զորքը գարձյալ եկավ Գյանջայից և՝ կանգ առնելով Սամխիթի երկրում՝ սկսեց վնասել այս ու այն կողմը, բռնեց ճանապարհներն ու բազմաթիվ գնացող-եկող քարավաններին վնաս պատճառեց:...

Այս հանգամանքներում Ղարաբաղի Փանա խանն ուժ էր գործադրել Սղնախի [մելիքների] նկատմամբ. հայերն այլևս չէին կարողացել դիմանալ. մի ձորի մելիք [Յ]ուսուֆ-բեկը հարյուր ծուխից բազկացած խիղաննևրով տեղահան էր եղել ու, գալով Վրաստան, [տեղ] խնդրել [Վրաց] թագավորներից: Այս հանգամանքները զեկուցին թագավորներին Թելավում. խնդրեց և եթ մարդ կցեցին նրանց և այս սղնախցիներին բնակեցրին [Տփխիս] քաղաքի քարափի թաղի կողմը, իսկ իրեն [մելիքին] կանչեցին Կախեթ: Գնաց մելիք [Յ]ուսուֆ-բեկին իր զորքով Կախեթ, միացավ թագավորներին: Հրամայեցին ոտքոմածություն ցույց տալ նրան և պատվելով պահեցին:

... Լեզգինների զորքն ավերել էր Դեմուրչասալիի բնակատեղերն ու կողոպտել Դեբեդի հայկական գոնվող Բորչալուի գյուղերը:... Այժմ [լեզգիները] եկան Հաղրատի ձորով... Այս զորքը Փամբակով անցավ Ղարաքիլիսա, [ուր] և բաժանեցին ավարը:

Խունձախի տերն և Շամխալն իրենց մարդկանցով գնացին Գյանջա, ավարը հետը տարան [ու] իրենց երկրները գնացին: Դադուանի մյուս զորքը Ճաց Փամբակի Ղարաքիլիսայում, ավարն այտտեղ թողին, իրենք գնացին, Երևանյան երկիրն ավերեցին. հետո գնացին, ձլասեցին Ղարսի երկրներին՝ բերին բազմաթիվ ավար ու գերի, նմանապես անցան Ջավախեթ, ավերեցին Բարալեթը, բերին բազմաթիվ ավար, վտխապրեցին Փամբակ և ոչ մի ընդդիմադրողի չհանդիպեցին:...

...Լեզգինների զորքը Սամխեթի և Սարաբաթաշվիլոյի անտառներն ու ժայռերը մտան ու այնտեղից սկսեցին ավերել քաղաք [Տփղիս]ի շրջակա գյուղերը:... Լեզգինները գիշերով... ոտնդուխտներով բարձրացան Սամխեթի Սամծեվրիսի բերդը:...

...[Տփղիս] կանչեցին Ղազախի և Բորչալուի խաներին ու բեխխուդներին... ապա [վերջինները՝ վերադառնալով] վարեցին Ղազախի երկրի և Բորչալուի գործերը:...

Ագաա-խանը, որ տիրում էր Արագի և Ապրևջանի երկրներին, իր մի դուլին ուղարկեց Երևանյան երկիրն ասելու. «Որքան էլ վրաստանի քոչվորներից այն երկրում մարդ է բնակվում, բոլորին տեղահան արա և վրաց տիրոջը հանձնիր»:... Ապա այդ դուլն եկավ [Քարթլի] և սրա մասին [վրաց] թագավորներին զեկուցեց: Սրանք ուղարկեցին Կախեթի բատոնի էշիկաղասբաշ Սուլխանին և հետը կցեցին Սամխեթի մելիքի որդի Ամիրանդիլին [և] հրամայեցին երդումի տակ ներսին բորչալուեցոց բոլոր հանցանքները: Սուլխան էշիկաղասբաշը գնաց... Ղազախ, Բորչալուի, Դեմուրչասալիի ավագանիներին բոլորին հետը տարավ, հասավ Երևան. հավաքվեցին Բորչալուի խանն և քեխխուդները. այնտեղ էին և Լոռիի ու Բամբակի քեխխուդները: Երդվել տվեց Սուլխան էշիկաղասբաշը... ու վերադարձավ Տփղիս

.... Ագաա-խանը... էլիզբարին շնորհեց գանձարանապետի (մալարեթուխուցեսի) [պաշտոնը]... Քարթլի ուղարկեց [Հ]ասան-միրզային. [իսկ] մայրը՝ Քեխևան խանումը՝ բազմաթիվ ընծաներով մտավ Երևան, ուր և լավ ընդունելություն գտավ:...

444 [=1756] թվին... Ղազախի խանն ևս Ղազախի բոլոր քոչվորներով տեղահան եկավ ու անցավ Փամբակ:... Նրանք անցան Տաշիրով՝ Դմանիսի բերդի հանդիպ [ճանապարհով]:...

...Յուղբաշ Ռևիազ Մոթամխա-շվիլուն Ղազախի խանի... բերդում սպանեցին:... [Վրաց իք] պատանդներ պահանջեցին... Ղազախի ավագանիներից:... [Թաթարական ցեղերը] Ղարսի եր-

կերն ավերել էին ու մեծ ավար բերել [այնտեղից]։ Երբ նրանք Էրեկլե թագավորի մեկնումն իմացան, ...Երևանի խանն Երևանի մեծամեծներին ուղարկել էր դիմավորելու [թագավորին] և մատուցանելու նրան [լավ] ցեղի ձի և թանկագին ընծաներ (փեշքաշ)։ Նույնպես և Ղարսի փաշան ուղարկել էր ընծաներ և իր երկրի մարզպանը՝ ասելով. «Ձեր ցեղերն իմ երկրին ջնասեցին. քանի որ ձեր և մեր միջ համերաշխություն է, արդար գտատատան արա»։ Սա [մերը] թագավորներին [մեծ] վիշտ պատճառեց. [ուստի և] ինչ որ Ղարսի երկրից ավար էին բերել, բոլորը խլեցին, և Էրեկլե թագավորը դարձյալ Ղարսի փաշային ուղարկեց։...

445 [=1757] թվին գատարկվեց Սարաբաթաշվիլին, Սոմխեթը, Օրբելիանների հողը (հայրենիքը) և ամենք գնացին Կախեթ, ամենքն անցան վերին Բարթլի և [այլ] իշխանությունները (սաէրիսթաոերի). ոչ մի տեղ այն կողմերում այլևս շինություն չէր մնացել։...

446 [=1758] թվին եկավ Բա[ն]ման-խանը, վրաց սիրոջ հետ հաշտվեց։ Նրան ավերն Բորչալուի խանությունը։ Որքան էլ Գյանջայում Բարթլի քոչվորներ կային, Ղազախ-Բորչալու-Դեմուրչասալիում... երևից տեղերում բնակեցրեց։...

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պարսկական խան Բարթլ-կախեթի պարսկական տիրապետության 1735—1747 թթ. ժամանակագրջանում։

2 Աբդուլարեկը վրաց մահմեդական իևե թագավորի (1714—1716 թթ.) որդին էր։

3 Քեքիմ-խանն, Պարսից շահ Զենդական հարստությունից, 1750—1779 թթ.։

4 Շահզադե—շահի որդի, թագաժառանգ։

5 Թեյմուրազ II, Բարթլիի թագավոր, 1744—1762։

6 Խոսքը հին Նախիջևանին է վերաբերում, որ չպիտի շփոթել կախեթի Նախիջևանի հետ։

7 Էրեկլե II, կախեթի թագավորը, 1744—1762 թթ.։

8 Բնագրում՝ «սաբոթևբշի» (էջ 480), որ Մ. Բրոսսեն (M. Brosset, Histoire de la Géorgie, II, 97) թարգմանում է „sur les frontières“, կցելով նրան այսպիսի ծանոթագրություն. «սաբոթևբի»-սաբոթևբի limite, on pourrait aussi traduite: dans les districts“։ Մինչդեռ այս բառը՝ «սաբոթևի» մեկնաբանված է իբրև մոզակիա (Д. Чубинов, Грузино-русский словарь, 1110, հմմտ. Ս. Օրբելյանու բառարանը, 1928 թ. հրատ., էջ 298)։ Հավանական է սրվարձան կամ շրջակայք նշանակե։

[9] Համմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Երկայնաբազուկներին տրված Լբեկից II արքայի և Պավել I կայսեր հրովարտակները, վրացերեն,— «Պատմության Տեղեկագիր», I, Թբ., 1945, էջ 22—32 (Л. Меликсет-Бек, Грамоты царя Ираклия II и императора Павла I на имя Долгоруких): Համմ. նաև այս հատորի Գ գլխի վերջին հատվածի 8-րդ ծանոթ. (էջ 87):

[10] Բնագրում «համալերի» (էջ 380), այսինքն բեռնակիրներ. միաժամանակ «համալի» || «համալա» նշանակում է և շախտուրմ (свита), շախմբի անդամներ:

[11] Նույն Արղությաններըը:

[12] Նադիր, Պարսից շահ, 1736—1747 թթ.:

[13] Անունը չի հիշված:

[14] Տե՛ս այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88):

[15] Մ. Բրոսսեի ֆրանսերեն թարգմանության մեջ Démourtchasalis (M. Brosset, Hist. de la Géorgie, II, 150):

[16] Թուլի || Թուլա || Թուղա: Ըստ Մ. Բրոսսեի (M. Brosset, Hist. de la Géorgie, II, p. 151, n. 1). դուցե Վարանդայի Տուղը լինի. «un lieau nommé Toug, un peu au S.-E. de Choucha»: Համմ. Թուլայեցոց հիշատակությունը Դրիդոր Մադիստրոսի թղթերում (Կ. Կոստանեանց, Դրիդոր Մադիստրոսի թղթերը, Ազ., 1910, էջ 161, 164): Մեր կարծիքով, դուցե այստեղ «Թալ[իշ]ի» կամ «Թալիխ» մասին լինի խոսքը:

[17] Թարգմանում ենք համաձայն վերականգնած բնագրի, որ ունի է Մ. Բրոսսեն (M. Brosset, Hist. de la Géorgie, II, 151, n. 2).

[18] Ըստ Մ. Բրոսսեի (նույն տեղ, 162, n. 2)՝ „les 40-sources, lieu situé à l'O. d'Erivan, dans le canton actuel de Sourmali; toutefois il y a encore, m'a-t-on dit, un autre lieu de même nom, au N. de Kanakir":

[19] Ըստ Մ. Բրոսսեի ֆրանսերեն թարգմանության (նույն տեղ, II 163)՝ meithar-khaneh, որին կցված է այսպիսի ծանոթագրություն. La tente où sont déposés les instruments de musique militaire":

[20] Ագեքսանդր Բ. Բյուրդանդային (1753—1755):

[21] Մ. Բրոսսեի ֆրանսերեն թարգմանությամբ (նույնտեղ, II, 180)՝ s'était porteé contre Erivan raagea Sadarag'.

[22] Այժմյան Աբբեթ, նախկին Ծուբատավը (համմ. սույն աշխատության I հատորը, էջ 12—15):

ԻՈՎԱՆԵ ՊԵՆՏԵԼԱՇՎԻԼԻ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԴԱՎԹԱՐՈՒՄ (1765)

Իովանե Պենտելաշվիլին XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի սկզբների գրականագետ-գրիչն է, որի անվան հետ կապված է «Ագվեսադրքի» թարգմանությունը հայերենից վրացերեն 1798 թվին. նրա գրչագիրներից ամենահնագույնն է 1765 թ., իսկ ամենաուշը՝ 1808 թ.։ Հետևապես Իովանեն ծնված պիտի լինի XVIII դարի առաջին կեսում և վախճանված XIX դարի առաջին քառորդում (Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, վրացերեն, Թբ., 1935, էջ 19, ծանոթ. 2. Ալ. Բարամիձե, Հետազոտություններ վրաց գրականության պատմության, II, XV—XVIII դդ., վրացերեն, Թբ., 1950, էջ 436—437)։

Իովանե Պենտելաշվիլու գրչին է պատկանում, ի միջի այլոց, վրացերեն սերուն բոլորագիր տառերով (մխեդրուլի) գրված մի հիշատակարան, որ կցված է Սայաթ-Նովայի երգերի ինքնուրույն գավթարին (որ այժմ Հայկական ՍՍՌ Մատենադարանում է պահվում և որը քանիցս հրատարակվել է (Դ ե ր պ Ա խ վ ե ր դ ե ա ն. Սայաթ-Նովայ, Մոսկվա, 1852, էջ ԺԴ։ Ի. Դ ր ի շ ա շ վ ի լ ի, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբ., 1918, էջ 41. Լ. Մ ե լ ի ք սե թ-Բ ե կ, Սայաթ-Նովա. Քննական-կենսագրական էտյուդ, վրացերեն, Թբ., 1930, էջ 86—87. Գ. Լ ե ո ն յ ա ն, Սայաթ-Նովա, Եր., 1932, էջ 46 (լուսանկարը). Լ. Մ ե լ ի ք սե թ-Բ ե կ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լրիվ ժողովածուն, Թբ., 1935, էջ 19)։ Հայերեն թարգմանությունը Թբիլիսիի բարբառով ավել է Գ. Ախվերդյանը (հիշյալ գրքում), որ կրկնում է Գ. Լեոնյանը։

Մենք տալիս ենք նույն հիշատակարանը մեր՝ աշխարհաբար թարգմանությամբ։

[ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ]

«Այս խաղերը բոլորը Սայաթ-Նովայի առած[ներն] է[ն]։

«Ք. Ո՛վ, ուղղահավատք և քրիստոսասերք։ Սրա գրողն ու

այս խազերի ստորն շատ օր է մթնացրել ու դիշեր լուսացրել սրանց ստելուն։ Այժմ, սրա ընթերցողներ, այս եմ ազաչում, որ սրա[նց] ստորին բարվոք և ողորմի ստելով հիշատակիք։ Եվ դուք ևս Քրիստոսի բերանով բարվոք հիշվիք։ Ես, Պլճտելենց (Պլճտելանթ) Իովաննէն, գրեցի այս հիշատակարանը մայիսի 1-ին քրոնիկոնի 453-ին [=1765 թ.]»[1]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Բացի այս հիշատակարաններից և հայերեն խազերին կցած վրացերեն* post-scriptum-*ներից, նույն ձեռագիրը մատյանում կա 2 հիշատակարան վրացերեն անվարժ գրչի (հավանական է, Սայաթ-Նովայի երեխաներից կամ բարեկամներից մեկի), որ կարդացվում է այսպես (Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, էջ 88—89).*

ա. «ք. երանի ստուած տեր-Սահեփանին ողջ և առողջ վերադարձնի, այս գավթարը ինձ կարդացնի. այս խնդիրն [անկատար] չմնա և ևս երան ծառայեմ» (էջ 24)։

բ. «ք. երանի տեր-Սահեփանը ողջ և առողջ գա, այս գավթարն ինձ կարդացնի՝ իր երեխաների կենաց համար։ իմ խնդիրն [անկատար] չմնա և ևս՝ մեղապարտս՝ երան ծառայեմ. ամէն» (էջ 84)։

Ինչպես Իովաննէ Պլճտելաշվիլու 1765 թ., նույնպես և անանուն գրչի այս գուցե հիշատակարանները գալիս են մի անդամ ևս ապացուցելու, որ Սայաթ-Նովայի խազերի ինքնաձեռագիր մատյանը (գավթարը) գրված և ավարտված է եղել 1765 թվին, երբ Սայաթ-Նովան դեռևս աշխարհական է եղել, և որ մոտավորապես այս թվականի շուրջն է տեղի ունեցել նրա հեռացումը ոչ միայն Վրաց էրեկլե II թագավորի արքունիքից (երբև պալատական աշուղ-սազանդարի), այլև Թբիլիսիից քշելը, հավանական է, հասարակական-քաղաքական բնույթ ունեցող հանդամանքների կապակցությամբ, եթե, ի հարկե, ճշմարիտ մեր նոր դիտողություններ, որ Սայաթ-Նովան, իբրև Թբիլիսիի հայ համայնքի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը, կարող էր այս կամ այն չափով մասնակից լինել Հովսեփ Էմինի՝ էրեկլե թագավորին ոչ հաճելի գործակալության հետ (հմմտ. А. Р. Иоаннисян, Иосиф Эмин. Ереван, 1945, стр. 252), որի հետևանքով սա ևս քշվել է Վրաստանից։

Իսկ անանուն գրչի գուցե հիշատակարաններին, որ գրված պիտի լինեն 1765 թվից հետո, երբ Սայաթ-Նովան քահանա է ձեռնադրվում տեր-Սահեփանոս անունով, միանդամայն գուշադիպում են Սայաթ-Նովայի մյուս ինքնաձեռագիր ժողովածուի հիշատակարանները 1766 թ. ներքո, որ գրված են նրա՝ Զաքաթալայի կախ-ավանում եղած մելջոցին (Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, էջ 82—83, 05—015)։

ա. «Սահէփանոսի քահա[նայ]ից է գերքս այս. ողորմ[ի ասէք]» (էջ 1ա)։

բ. «Ես նոյն յայնմանէ ուսուցեալ, դի այսպէս ունէր. Սայիդ-Նովայ գրել է» (էջ 37 բ)։

գ. «Գրեցաւ ի կախոյ քարվասարէն։ Ով, ընթերցող, չիշեայ ի սր ազօթս քոյ զդծօղ մեղապարտս զՍահէփանոս քահանայիս և իւր

ծնողացն մահտեսի կարապետեան, մօրն Սառային եւ այլ ամ այրեանց մե[րոց...]» (էջ 100 բ):

դ. «Ով, ընթերցող, յիշեա զՍտեփանոս քահանայս Թփղիս. զերեցս Կախ. ՌՄԺԸ» (էջ 170 բ):

ե. «Թուին հայոց ՌՄԺԵ: Դիր տաբւոյն ցօն է. տանուտէրն Այծեզջիւրն է: Իսկ խեցգետինն և կարիճն և ձուկն նահանջեն. երբ դիր տաբւոյն ի նոցա կարգն հասանիս ի մարտի ամիսն, քէ քէ է, դուփիւրն բանեցոյ. և քէ փիւր է, դու գնիւնն. այնպէս մինչև ցայրն. Ի տաբւոջն. ա. դիր յառաջ տուր. և թիւ մի աւելի կալ գՊուսականն և ուղիղ գաս: Գրեցաւ ի Կախոյ քարվասարէն: Ով, ընթերցող, յիշեայ զգծող զերոյս մեղապարտ Ստեփանոս քայհանայս, որ Սաեապ-Նովայ կոչեն, և հայրն իմ մահտեսի կարապետն և մայր իմ Սաբբայ. և դուք յիշեալ լինիք յառաջի Աւյ. ամէն» (էջ 276 բ):

(Հմմտ. նաև Հ ր. Ա ճ ա ռ ե ա ն, Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի-վիեննա 1910, էջ 97):

Ա. ՆԱՆՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԳԻՐ

«ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1769)

Անանուն աշխարհագիրը, որ Անտոն I կաթողիկոսին մոտ կանգնած մարզկանցից մեկը պիտի լինի և որը XVIII դարի երկրորդ կիսի գործիչ է, 1769 թ. 14 հունիսին ավարտել է վրացերեն և ռուսերեն լեզվով մի զեկուցագիր՝ «Վրաստանին կից երկրների նկարագրությունը» վերնագրով, որ ուղարկվել է Ղզլարի կոմենդանտ գեներալ-մայոր Ի. Լ. Ֆոն-Ֆրաուենդորֆին Ռուսաց արքունիքին ներկայացնելու համար։

Նկարագրության վրացական տեքստը հրատարակվել է 2 անգամ, նախ՝ ըստ միակ ձեռագրի՝ պրոֆ. Ա. Յագարելու կողմից, դրքում՝ А. А. Цагарели, Грамоты и другие исторические документы, относящиеся до Грузии, т. II, вып. 1. Грузинские тексты с 1768 по 1801 год, СПБ. 1898, *էջ 8—13, ապա ըստ 3 ձեռագրի (Վրաց մեջ գրագիտության տարածող նախկին ընկերության [այժմ Վրաստանի պետ. թանգարանում] հավաքածուի №№ 4989 և 2316, և Բուխարեստի գավառագիտական թանգարանի № 203) մեր գրքույկում՝ Լ. Մելիք-Բեկ, Վրաստանին կից երկրների նկարագրությունը XVIII դարի երկրորդ կիսին, իբրև նյութ Այրկովկասի պատմական աշխարհագրության քարտեզով, վրացերեն, Վրաստանի Աշխարհագրական ընկ. հրատ., Թբ., 1936, էջ 15—31 (ձախ սյունակ)։*

Ռուսերեն տեքստը ևս 2 անգամ է հրատարակված. նախ՝ А. А. Цагарели, Грамоты и другие исторические документы, относящиеся до Грузии, т. I, с 1768 по 1774 год, I, СПБ, 1891, стр. 433—438. *ապա՝* Л. Мелик-сет-Беков, „Описание сопредельных с Грузией стран“ второй половины XVIII века,—„Труды Тбил. гос. университета“, т. XVIII, 1940, стр. *125—137 (ձախ սյունակ)։*

Նկարագրության բնօրինակը տես նաև մեր գրքույկում.

Երկրից դուրս հանելու, առանց ռոճիկի, հազար հինգ հարյուր ռազմիկներ։ Այստեղ կան շատ քրիստոնյաներ՝ դավանությամբ հայեր։ Այս Բայազետի քրդերը խոնթքարին այլ կերպ չեն ծառայում, բայց եթե իրենց [հոժար] կամքով։ [Բայազետը] գտնվում է հարավում, Արարատի հետևը, ասհմանակից է Երևանին, Սալմաս[տ]ին և Ղարսին։ Եվ սրանք (բայազետցիք) նրանցից (պարսիցիներից) ավելի փորձված են պատերազմում։ Եվ սրանց երկիրը շեն է ու բշնամուց չվնասված։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ

Երևանը Իրանի (Էրանի) մասն է՝ բեգլարբեգությունն, ուր առաջներում եղել է հայոց արքայի գահը (թախտը)[1]։ Այստեղ նըստած է բեգլարբեգ, սակայն ոչ ժառանգարար։ Եվ այստեղ է հայոց կաթողիկոսի գահը (թախտը)[2]։ Սա (Երևանը) ունի և՛ սար, և՛ դաշտ շատ, և պտղավետ-բերքավետ է։ Այստեղ բնակվում են շատ քրիստոնյաներ, դավանությամբ հայեր։ Սրանց (երևանցիների) երկիրը մի տասը-տասնհինգ տարի սրանից առաջ[3] վնասված էր լեզգիներից և պլրաշներից, մինչև որ մեր (վրացիներիս) ձեռքը չընկան։ Այժմ, երբ մեր ձեռքի տակ ընկան, ամեն ինչից ապահով են և մեզ են ծառայում[4]։ սակայն անշեն տեղեր ևս շատ ունին։ [Երևանը] գտնվում է հարավային կողմում, Բարթլիի և Բայազետի միջև։ Մեր երկրի (Բարթլիի) և այստեղի սահմանները իրար հետ շփվում են։ Մեր (Բարթլիի) և նրանց (Երևանի) միջև այնպիսի լեռ կա, որով ասյլ և քարավան է անցնում։ Եվ [Երևանը] ի վիճակի է դուրս հանելու երկու հազար ռազմիկներ, սակայն սրանք ևս պատերազմում ու մարտերում վախկոտ են, անզեն են և մանավանդ անփորձ։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՅԱՆՋԱՅԻ*

Գյանջյան Իրանի (Էրանի) մասն է՝ բեգլարբեգությունն, հռչակավոր քաղաք՝ գոված բերդ[ով]... Այստեղ շատ քրիստոնյաներ կան, դավանությամբ հայեր։ ...Այս երկիրը գտնվում է արևելքից, հարավից [և արևմուտքից] Շիրվանի, Ղարաբաղի, Երևանի, Ամասայի և Բարթլիի միջև։ ... [Գյանջեցիները] երևան[ցիներ]ի պես բան կարողության հնազանդ են մեզ վրացիներիս... պատերազմում երևանցիներից ավելի արիություն և փորձառություն ունեն։

* Բերում ենք կրճատումով։ —Լ. Մ.-Բ.

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՄՄԱՑԻ

Խամսան՝ երկիր է, որի մեջ մտնում են յոթը (sic) մելիքութիւններ։ Այս [տեղի բնակիչները] քրիստոնյաներ են՝ դավանութիւնով հայեր և սրանք ևս ունեն [իրենց] կաթոլիկոսը[6]։ Սրանք ևս Պարսից թագավորի սրբունիքի հարկատու են եղել։ Երբ Պարսից թագավորութիւնը քայքայվեց, այստեղի քոչվորներից մեկը, որ մահմեդական էր, Ջվանշեր (Ջոանշեր) ցեղից, ուժ հավաքեց։ Եվ այս Խամսայի մեջտեղը հնուց կա մի սմուռ բերդ, որն և գրավեց [Ջվանշերը]։ Մեր (վրացոց) և Ջվանշերի (Ջոհանշերի) միջև տարաձայնութիւն ծագեց։ Եվ օգնականութիւնով սասձա՝ մեր և մեր զորքից պարտվեցին ու ավերվեցին ոչ թե այն քրիստոնյա-հայերը, այլ միմիայն այն Ջվանշերը (Ջոհանշերը)։ Այժմ այնպիսի պատճառներ առաջացան, որ մեր (վրացոց) և նրանց (Ջվանշերցիների) միջև խաղաղութիւն է տիրում։ Խամսան ունի մեծ սմրոց, շատ լեռներ, թեև ժայռոտ անառատ, և դաշտ էլ ունի ջրառատ, հույժ բերքառատ։ Իր երկրում Ջվանշերը (Ջոհանշերը) ի վիճակի է դուրս հանելու երկու հազար և հինգ հարյուր ռազմիկներ և հայերն ևս դուրս կգան չորս հազար հինգ հարյուր։ Այս երկիրը՝ տարածվելով արևելքից արևմուտք՝ հասնում է մինչև Ղարադաղի և Գյանջայի սահմանները, և գտնվում է Շիրվանի ու Նախիջևանի, Գյանջայի և Ղարադաղի միջև։ Այս՝ Խամսայի մարդիկ, որոնք հայեր են, հույժ քաջարի են, ռազմատենչ և խիզախ։ Եվ այս միլիքների միջև փոխադարձ նախանձի և թշնամութեան առաջացումը Ջվանշերի (Ջոանշերի) ձեռքը դրեց այս[տեղի] հայերին։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՔԻԻ*

Շաքիի խանի պալը Հաջի-Ջալար էր կոչվում, և այս Հաջի-Ջալարի հայրը հայ երից էր, և ինքը Հաջի-Ջալարը մահմեդականացել էր։ ...Այս երկրում բնակվում են շատ քրիստոնյաներ [դավանութիւնով] հայեր՝ բացահայտ, և վրացիներ՝ գաղտն[աբար], մահմեդականներից երկյուղ կրելու պատճառով[8]...։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՐԻ ԶՈՐԻ, ՋԻՆԻԽԻ, ԹԱԼԻՒ ԵՎ ԲԵԼԱՔԱՆԻ*

Թալիի ձորը, Ջինի[խ]ի ձորը և Բելաքանի ձորը անտառ են

* Տես նախորդ ծանոթութիւնը։—Լ. Մ.-Բ.

և սրանց ժողովուրդը տափաստանի ռայաթ-թյարաքամա է, որոնց մեջ գտնվում են սակավաթիվ քրիստոնյաներ, ամանք ուղղափառներ՝ գաղտն[աբար], և ամանք հայեր՝ բացահայտ...:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հեղինակը ուզում է ասել, որ հայոց թագավորների աթոռանիստը Երևանյան երկրում է եղել:

2 Հեղինակը ուզում է ասել, որ հայոց կաթողիկոսի աթոռանիստը Երևանյան երկրում է:

3 Ի նկատի ունի Երևանի խանության առումը էրեկլե II-ի կողմից 1752 թվականին և Երևանի ավերումները մինչ այդ թվականը: Հմմտ. այս աշխատության ժե գլուխը, 18-րդ ծանոթ. (էջ 181):

4 Տես նախորդ ծանոթություններ:

5 Այստեղ, անկասկած, սխալ է. պիտի լինի հինգ մելիքություններ:

6 Ի նկատի ունի Ազվանից կամ Գանձասարի կաթողիկոսությունը:

7 Հմմտ. Բ ա փ փ ի, Խամսայի մելիքությունները (1600—1827), Թիֆլիս, 1882:

8 Հավանական է, որ հայադավան և վրացադավան քրիստոնյաների նեքթո հեղինակը ի նկատի ունի ոչ միայն հայերին և վրացիներին, այլև հայադավան և վրացադավան ուտիացիներին (հմմտ. Л. Меликсет-Беков, К истории удин. Utica-Armeniaca, — „Труды Тбилис. Гос. Унив.", т. XXIII, 1942, էջ 52—53):

ԺԱ

Ա. Ն Ա. Ն Ո Ի Ն Վ. Ի Ճ Ա. Կ Ա. Գ Ի Ր

«ՔԱՐԹԼԻԻ ԵՎ ԿԱԽԵԹԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1770)

XVIII—XIX դդ. վրաց գրականությունը պահպանել է մի շարք անանուն հեղինակների գրչից ելած «վիճակագրություններ» դեմոգրաֆիային վերաբերող տեղեկություններով հանդերձ։

Ահա այդպիսի «վիճակագրություն»-ներից մեկը, ուր գտնում ենք տեղեկություններ և հայերի մասին, էրեկլե II թագավորի կարգադրությամբ 1770 թվի 5 ապրիլին կազմված՝ Քարթլիի և Կախեթի բնակչության վիճակագրությունն է, որ հրատարակել է պրոֆ. Ա լ. Մ ա ք ա ն ա շ վ ի լ ի ն, հոդվածում՝ «Վրաստանի անցյալի վիճակագրական և անտեսական ուսումնասիրության համար», վրացերեն, — «Կվալի», 1898 թ. № 11, էջ 194—195 (հմմտ. Ս ա ր գ ի ս Կ ա կ ա բ ա ձ ե. Պրպտումներ Վրաստանի պատմության խնդիրների մասին, վրացերեն, Թբ., 1920, էջ 27—29)։

[ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ]

Տփղիս քաղաքը։ Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր, կաթոլիկներ (ֆրանկներ) և ապրելջանցիներ՝ 4090 ծուխ։

Բազաք Գարին։ Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, կաթոլիկներ (ֆրանկներ) և հայեր՝ 500 ծուխ։

Ծիլկանի քաղաքը։ Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր և հրեաներ, խոզանների հետ միասին՝ 700 ծուխ։

Բազաք Սուրամը։ Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ, հայեր և հրեաներ՝ 200 ծուխ։

Կախեթում՝ քաղաք Թելավը։ Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր խոզաններով ու Թելավի ծայրին [գըմենովոզ] գյուղ[ացին]երով՝ 740 ծուխ։

Քիզիղ'ումն է քաղաք Սղնախը (Սիգնաղի)[1]։ Այստեղ բնակվում են հայեր՝ 100 ծուխ։

Արտվին վրա է փոքր քաղաք Անանուրը։ Այստեղ բնակվում են [ուղղափառ] վրացիներ և հայեր՝ 100 ծուխ։

Քաանի վրա է փոքր քաղաք Ախալգորին[2]։ Այստեղ բնակվում են ուղղափառ վրացիներ և հայեր՝ 140 ծուխ։

...Քարթլիում [այլ և այլ տեղերում] կան 500 ծուխ հայեր։

Բորչալուն և Փամբակի ձորը մի ամբողջ խանություն է։ Այստեղի բնակիչները ցիրուցան են եղել այլ վայրերում (թե-մերում) և այժմ [այստեղ] կա 2560 [ծուխ] հայ։

Ղազախը մի ամբողջ խանություն է, և այստեղի բնակիչ-ներից շատերը ցիրուցան են եղել ուրիշ երկրներում. և այժմ Ղազախում ապրելջանցիները 3000 են և հայերը 1200 [ծուխ]։

Շամշադինը մի ամբողջ խանություն է։ Այստեղ ապրում են ապրելջանցիներ 2200, հայեր էս կան՝ 1200 [ծուխ]...։

Կախեթում ուղղափառ քրիստոնյաներ կան խիզաններով 7000 ծուխ, Կախեթի հայերն են 450 ծուխ, Կախեթի ապրելջան-ցիները 1000 ծուխ։

Կախեթում... կան քրիստոնյա ուղղափառ [վրացիներ], հայեր և ապրելջանցիներ 10,000 ծուխ[3]։

... Ավեր են Տաշիրը, Գուլջաբերդը և Սոմխիթը, որ մեծ և բազմա[մարդ] երկիր է[ր], ուր քառասունից մեկն է մնացել...

Սաթաթաշվիլուն ավերված բազմա[մարդ] երկիր է, ուր հարյուրից մեկն է մնացել՝ խիզաններ։ Այս Սոմխիթն ու Սաթա-թաշվիլուն նեթքին Քարթլին է։...

Ապրելջանցիներից կարելի է գուրս հանել զորքի մեջ 5.000, վրացիներից և հայերից՝ 18.000, միասին՝ 23.000 [հոգի]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Այս Սղնախը (Սիղնախի) չպետք շփոթել Սղնախ-Ղարաբաղի հետ, որ հաճախ հիշատակվում է Պատմնա Օրբելյանի «Քարթլիի անցքերը» երկում (տե՛ս այս աշխատության Ը գլուխը) և այլուր։*

2 *Այժմյան Լենինգորի՝ Հարավ-Օսեթի ինքնավար մարզի սահման-ներում։*

3 *Տարօրինակ է կախեթի վիճակագրության այս կրկնությունը։*

ԺԲ

ԴԱՎԻԹ ԱԼԵՔՍԻ-ՄԵՍԽԻՇՎԻԼԻ

«ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1784), «ԲՈՒՌԱՐԱՆ» (1804)

Դավիթ Մեսխիշվիլին՝ XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի առաջին քառյակի գործիչ է, Վրաց գրականության ականավոր դեմքերից մեկը, որը հայտնի է իր բազմակողմանի գործունեությամբ՝ իբրև բանաստեղծ, պատմարան, փիլիսոփա, բառարանագետ և, որ գլխավորն է, կալլիգրաֆ։ Սա Թբիլիսիի Անչխատուի առաջարի ավագերից Ալեքսիի որդին էր, ուստի և հաճախ «Ալեքսի-շվիլի» (Алексеев) է կոչվում, քան իր ազգանունով «Մեսխիշվիլի» (Месхиев), երբեմն երկուսով միասին՝ «Ալեքսի-Մեսխիշվիլի» (Алексеев-Месхиев), ինչպես տրված է ստորև հատվածի վերնագրում։ Դավիթը ծնվել է Թբիլիսիում 1744 թ., ստացել կրթությունը սկզբում Անտոն I կաթողիկոսի մոտ և Թբիլիսիի սեմինարիայում (բացված 1755 թ.), ուր առաջին ուսուցիչը կամ «ոքոլապետն» էր հայ քահանա տեր Փիլիպպոս Դայթմազաշվիլին։ 1782 թվականին Էրեկլե թագավորի հրամանով նշանակվել է Թելավի սեմինարիայի ռեկտոր և այդ պաշտոնում մնացել մինչև 1803 թիվը։ Վախճանվել է Թբիլիսիում ծայրահեղ չքավորության մեջ 1830 թ. և, ըստ Գ. Իոսելյանու վկայության, թաղվել է Մթածմինդայի կամ Մամա-Դավիթի վանքի գավթում (գերեզմանի տեղն անհայտ է), ուր 1829 թ. թաղվեց Ա. Ս. Գրիբոեդովը։

Դավիթ Մեսխիշվիլու կամ, ինչպես սովորաբար նրան կոչում են, Դավիթ Ռեկտորի կալլիգրաֆիկ գործերից ամենանշանավորն է նրա «Ծաղկաքաղ»-ը, որ պարունակում է զանազան բանաստեղծների չափածո երկերը և, ի միջի այլոց, Շամչի-Մելքոյի (Մելքոն Թումլքանյանի) վրացերեն բանաստեղծությունները թվով 6, որ մենք օգտագործել ենք մեր համապատասխան աշխատության համար՝ «Շամչի-Մելքո» վերնագրով (որը պատրաստ է տպագրության), մասամբ հրապարակ են հանված Տ. Ռու-

խաչքի գրքում «Հին վրացական քնարերգության պատմությունից», վրացերեն Թբ., 1954, էջ 196—204։

Նույն Դավիթ Ռեկտորի պատմագրական - բանասիրական գործերից նախ և առաջ պիտի հիշատակել «Վրաստանին կից երկրների նկարագրությունը», որն անանուն հեղինակի 1769 թ. կազմած նույնանուն երկի (տես այս աշխատության Ժ գլուխը) դրեթե բառացի կրկնությունն է, թեթև վերամշակումով, որ կատարվել է 1784 թվականին կամ սրանից հետո։ Այս երկը հրատարակված է մեր գրքույկում՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաստանին կից երկրների նկարագրությունը XVIII դարի երկրորդ կիսի՝ իբրև նյութ Այարկովկասի պատմական աշխարհագրության, քարտեզով, Վրաստանի Աշխարհագրական ընկերության հրատարակություն, վրացերեն, Թբ., 1936, էջ 15—29 (աջ սյունակ). Նույնը մեր ուսումներն խարգմանությամբ. Л. Меликсет-Беков, „Описание сопредельных с Грузией стран“ второй половины XVIII века. „Труды Тб. Гос. Унив.“, т. XVIII, 1940, էջ 125—136 (աջ սյունակ)։

Դավիթ Ռեկտորի երկրորդ գործը Սուլխան-Սաբա Օրբելիանու Բառարանի (տես սույն աշխատության II հատորը, էջ 118—124) մեկնությունն է, որ մենք համառոտ «Բառարան» ենք կոչում։ Վերջինս հրատարակված չէ, սակայն նրա ընդհանուր բնութագիրը բնորոշ քաղվածքներով տրված է պրոֆ. Վ. Բերձենի հատուկ հոդվածում «Դավիթ Ռեկտորը՝ բառարանագետ, Սաբա Օրբելիանու շարունակողը», վրացերեն,—«Թբ. Պետ. համալսարանի Աշխատություններ», հ. I, 1936, էջ 310—332։

«Վրաստանին կից երկրների նկարագրությունը» բաղկացած է 13 գլխից հետևյալ հաջորդականությամբ. Նկարագրություն՝ 1. Ախալցխեի, 2. Դարսի, 3. Բայազեթի, 4. Երևանի, 5. Գյանջայի, 6. Խամսայի, 7. Դուբայի, 8. Կումախի, 9. Շաքիի, 10. Ալիսուլթանի, Ճարեցոց և կից ձորերի, 11. Խունձախի, 12. Դիդո-Բիսոխի, Դվիվիի, Ջուրձուկի, Թուշ-Փշավ-Խևսուրի և Խևսի, և 13. Բերիմ-խանի գործերի։

Սրանցից մի մասը (ինչպես և այս աշխատության Ժ գլխում) անմիջապես Հայաստանի անցյալին է վերաբերում, չհաշված այն գլուխները, ուր հայերի մասին ևս կան տեղեկություններ, մանավանդ վիճակագրական տվյալներով, թե որտեղ, որքան հայ է ապրում կամ որքան գորք կարող է դուրս բերել պատերազմի պահին։

Այս բոլորը կրկնութիւն է 1769 թ. անանուն աշխարհագրի տվյալների. ուստի և նրանց թարգմանութիւնը չենք տալիս։

Ինչ վերաբերում է մեջբերումներին (մեր թարգմանութեամբ) «Բառարան»-ից, այդպիսիները մենք կատարել ենք անմիջապես Դավթի ձեռագրից, որ մեզ սիրալիր տրամադրեց պրոֆ. Վ. Բեբիթեանը (որի սեփականութիւնն է այն), մասամբ նաև վերջինիս հոդվածից, որը վերևում հիշեցինք։

«ԲԱՌԱՐԱՆ»-Ի Յ

Աբոցի՝ նույն Դայդուլին (Դ'ափէ'ուլի) է[1]։

Ալանի՝ Հայկազունների (Հասսխանի) ամեմանակից է։ Ալանը Դաղստանցի է, և Դաղստանի տափաստանում ապրող լեզգիները։

Ալիս գետը սկիզբ է առնում Փոքր Հայքից, անցնում է Սեբաստիայի մոտով և ուղղվում է դեպի արևմուտք՝ Դամիրք, այսինքն Կապադովկիա, [որ] քաղաք [է] Նոր-Կեսարիայի (Նեո-Կեսարիայի) մոտերքում, և ապա անցնելով Լանգրա քաղաքով, Պաֆլագոնիայի միջով, թափվում է Պոնտոսի ծովը, այսինքն Սև ծովը։

Ամինճաշատի[2] ... կաթոլիկների (ֆրանկների) մեր ոտարմյան (կերբևեցյանը)։

Ամասեդամ՝ առաջին քաղաքն է Հալանդիայում, որին հայերը Մարգամ (Մարբիդամ) են կոչում[3]...։

Արձանիգի՝ նույն արձանգի Բարթլիս-Յեսովբեցայում[4]։

Աղուանիա՝ երկու թեմ՝ առաջինը Մարքը (Մկիա) և երկրորդը՝ Ալբանիա կամ Արնաուտ, և երրորդն էլ Տիգրանի կողմից ժողոված զորքերը, որ են ալանացիք, հայկազունների (հասսյանների) ամեմանակիցները, այսինքն դաղստանցիք և տափաստանում ապրող Դաղստանի լեզգիները։

Բիթլիս՝ հնում հայկական քաղաք էր, ուր նրանց (հայերի) իշխաններն ու ազնվականներն էին ապրում, այժմ գրաված ուներն օսմանները։ Այստեղ կա ծխախոտ (թամբաքո)՝ ամենալավը։

Միդիա՝ ...ընդարձակ երկիր է մեծն Ասիայի կամ Ազիայի, որին ամեմանակից են՝ հյուսիսից Կասպից ծովը, արևելքից Վըրկանը (Իրկանիա) կամ Ատրպատը (Ադրպատկի) և Պարթիան։ Պարթիան նույն Շաքի-Շիրվանն է, հարավից՝ Պարսկաստանն ու Ասորեստանը, արևմուտքից՝ Մեծ Հայքը, և այժմ պարունակում է Շիրվանի, Դարբանդի և այլ թեմերը։ Երբեմն միջնադարյան իշխանութիւնը շատ տարածված էր, մինչև որ ասորեստան-

ցիք տիրեցին Հայկազանց (հասցյաններին) սասրեատանցիներին, Պարսից և Միջագետքի մասերին։ Միջագետքը Մեսոպոտամիան է, որ այժմ Դիարբեքիր է կոչվում։

Պարքի՝ *Նույն Ռանն է, որ է Դարաբաղը, Շաքի-Շիրվանը, Դ'արալը, Թալիշը։ Որքան որ այս կոմերում երկիրներ կան, բոլորը կոչվում են Պարքիա։ Գրիգոր՝ Հայոց Լուսավորիչն էլ այսպես գալ էր։ «Գործք Առաքելոց»-ում, ուր հիշվում են պարքեք, մարք (միդիացիք), ասժիկներ[5], որանք են պարքևները, մարք (միդիացիք), Թավրիզեցիք, ասժիկներ, քյուրդեր։*

Պատմեզի՝ *...հայերեն [բառ] է[6]։*

Պեարիծի՝ *...Բագրեւանդի ժողովից [հետո]... հայերն անջատվեցին ճշմարիտ դավանությունից և խոստովանեցին մի բնություն, մի ներգործություն, մի կամք Քրիստոսի մեջ, նույնպես և խաչեցարը, անխառն և անջատ գոհարերությունը...[7]։ Աթենքում Իոանե [Պետրի]ու ընկերակիցներն էին հայերի՝ Դավիթ Անհաղթ փիլիսոփան, որը հորինեց «Սահմանաց գիրքը», պյուրոնացոց դեմ, և մյուսը՝ Մովսես Խորենացին (Մոսե Խորանելի), որը հորինեց բառարան[8]։*

Բանի՝ *Նույն Ղարաբաղն է, որն Այի-սուլթանի [երկրի] մասն է[9]։*

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Արոցը նույն Աշոցքն է, հետագայում Ղայդուլի-Ղազանջի. համմ. «Վրաց ազգյուներին» I հատորը, էջ 148, ծանոթ։*

[2] *Հայերեն բառ է՝ ամենաբաս (համմ. «խոսրանաբաս»)՝ Թրիլիսիի բարբառին հատուկ արտասանությամբ՝ ամինաչաս։*

[3] *Համմ. Լ ե ո, Հայկական ազգագրություն, I, բ. տպ., Թր., 1904, էջ 443։*

[4] *Հայերեն բառ է, ազավաղված, գուցե «արժանիք», երեցություն, ավագություն, քան Դ. Ջ ո ւ ա ն շ ո վ ի վրացերեն-ռուսերեն բառարանի (էջ 47)* старшинство.

[5] *«Գործք առաքելոց» (II, 8). «կիրարդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր, յորում ծնեալ եմք. պարթևք և մարք և ելամացիք և որ բնակեալ են ի Միջագետս»։ Համմ. Л. М е л и к с е т-Б е к, Armeno-Hebraica, „Труды Гос. Ист.-Этногр. Музея евреев Грузии", т III, Тбл., 1945, стр. 227—228, 258.*

[6] *Համմ. հայերեն «պատանեշ»-ը։*

[7] *Համմ. «Վրաց ազգյուրներին» I հատորը, էջ 39, 40, 58, 60։*

[8] *Այստեղ գործ ունենք ակնհայտորեն անաքրոնիզմի հետ, քանի որ Դավիթ Անհաղթն ու Մովսես Խորենացին իրար ժամանակակից լինելու դեպքում (VI դ.) ոչ մի կերպ չէին կարող լինել ընկերակիցները Իոանե Պետրիծու, որը XI—XII դդ. գործիչ է։ Գուցե այստեղ ակնարկ լինի այդ երեք*

անձնավորության մինչնույն իդեոլոգիական ուղղության (հելլենոֆիլ-հունասիրական) ժամանակից լինելու մասին։ Համմա. Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայ հին գրականության պատմություն, վրացերեն. Թբ., 1941, էջ 11, 66—68, 80—86։ Համմա. նաև՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Դավիթ Անհաղթի վերաստանում լինելու հարցի շուրջը,— ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի «Գրական հետազոտություններ», 1 հ., Երևան, 1946, էջ 243—267։

• Ռանէն (Ռանէ) նույն Առանն է։

ԺԹ

ԻԵՍԵ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ - ԿՏԱԿԸ (1786)

Հին վրացական մեմուարային գրականության մեջ առանձնապես աչքի է ընկնում Իեսե Օռելի որդի Բարաթաշվիլու անվերնագիր երկասիրությունը, որին «Իմ գլխով անցածը» կարելի է կոչել։

Իեսե Բարաթաշվիլին ծնվել է 1728 թ., 1742 թվից սկսած Իեսեն այլևայլ գրքեր է արտագրում, վերջապես, ինքն էլ հրատարակում է 2 աշխատություն. 1. «Իմ գլխով անցածը» սկսած 1768 թվից և հասցրած մինչև 1786 թվականը, և 2. «Ժամանակագրություն», որն ընդգրկում է «Ընտանեկան խրոնիկա»-ն. 1786 թվին Իեսեն 58 տարեկան հասակում ապրել է ավազակներից։

Հայաստանի և հայերի մասին ավյալներ պարունակում է Իեսե Բարաթաշվիլու առաջին աշխատությունը՝ «Իմ գլխով անցածը», որը տալիս է բավական հարուստ նյութ Վրաստանի և հարևան երկրների քաղաքական կացության մասին, ինչպես վերև նշեցինք, 1768—1786 թթ. շուրջ, օրինակ՝ տեղեկություններ Վրաց թագավորների քաղաքական-պետական մեջբողոքների և պատերազմական գործողությունների, Վրաստանի ներքին կենցաղի, հայ-վրացական փոխհարաբերությունների մասին և այլն։

«Իմ գլխով անցածը» 3 անգամ է հրատարակվել։ Այդ հրատարակություններից կատարյալը և ամենալրիվն է Ա. Վ ա ն դ ա լ ի ա ն ո ւ գրքում՝ «Իեսե Բարաթաշվիլու ինքնակենսագրություն-հիշատակարանը», վրացերեն, Թբիլիսի, 1950, XXIX + 120 էջ։

Իեսե Բարաթաշվիլու մասին տես Ս. Կ ա կ ա բ ա ձ ի և Ա. Ի ո ս ե լ ի ա ն ո ւ հրատարակությունները, նաև՝ Ռ ր. Շ ա ր ա շ ի ձ ե, Իեսե Օռելաձի Ռոբանիկոնին, վրացերեն, — „Известия Института языка, истории и мат. культуры имени Н. Я. Марра“, XIII, т. II, 1943, էջ 121—137։

Մեր թարգմանությունը Իևսե Օսեռնեի «Ինքնակենսագրության-կատակից» կատարված է համաձայն Ա. Իոսելիանու հրատարակության։

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1768—1786 ԹԹ.]

Լավ գրել գիտեի եկեղեցական գրերով (խուցուրի), պինվորական գրերով (մխեդրուլի) և բոլորագիր տաճարով (մգրգլովանի)։ Փոքր ինչ սովորեցի Վախտանգի հարից[1], իսկ Պարիսյոսի «Ներսեսականը»-ը (կաթողիկոս)՝ Զաքարիա վարդապետից[2]...։

432 [=1745] թվին գ'աենը[3] շնորհեց Թեյմուրազ թագավորին[4] Քարթլիի թագավորությունը, իսկ Էրեկլե թագավորին[5] Կախեթի [թագավորությունը]։... Սույն ժաման Թեյմուրազ թագավորն եկավ Գիմի Ամիլախորու գեմ մեծ զորքով. նրա հետն էր ինն հազար զրահաշ ու ավգան, նաև Վրաստանի զորքը, չհաշված Ղազախ-Բորչալուները։ Ղազախ-Բորչալուն Իսոդ'-փաշային ավին իբրև դաւրեկին, քանի որ Ղազախ-Բորչալուն զրահաշների խանների ձևին էր, որոնք Քարթլուեցի էին նստած և, ի հարկե, Վրաց բռնանիի կողքին էին միշտ լինում։ Ղազախում Սփանվերգի խանն էր նստած, որը Վրաց բռնանիի հպատակն (ծառան) էր, և Բորչալուում, մեծ[անուն] մարդու արդի Մահմուդ իշխանը։

Քրանիկոնի 453, Քրիստոսից 1765 թվականի մայիսի 15-ին... կիրակի օրը [Էրեկլե] բռնանը ուղևորվեց Երևան. [վրացիները] քյուրդերին ավերեցինք և անվնաս վերադարձանք...։

Քրանիկոնի 457-ին [=1769 թվականին]... [Էրեկլե] բռնանը քրդերի գեմ ելավ։ Հոկտեմբերի 5-ին ուղևորվեց Մցխեթա, այնտեղից Դիդում վերադարձանք ու բարձրացանք Ծղնեթի, այնտեղից Կոջորով իջանք ու անցանք Դմանիս, ուսկից Ղարադաջով ...հոկտեմբերի 13-ին [իջանք և] Արփաչայի ափին՝ Անիի բերդից դուս կանգ առանք։ Բնակիչը զորքը հետս էր մեզանից։ Այն գիշերը [Էրեկլե] բռնաններին ոչ մի թիկնապահ (քշիկ) չէր ուղեկցում։ Երկու ազանների վրանում թողնք և երկու ազաններ և ես թիկնապահությունն էինք անում։ Կես գիշերին քրդերն իջել էին, իմ ձիանները բռնել էին, ազանները չէին իմացել, տարել էին։ Իրոք, լավ ձիաններ կորցրի։ Մյուս օրը վրանն ու իրերը եղնիների վրա բարձեցինք։ Ես մի քարե խնդրեցի ու գուրս եկա։ Հասանք Երևան, Շարաբառում կանգ առանք...։ Ջուրը գուրի, անգին, հետոտան գուրս եկա [այնտեղից], արևը վար, և եկա Տփղիս...։

Բրանիկոնի 462-ին [=1774 թ.] հունվարին քաղաքում տուն գնեցի Մելիք Ավետիքից: Սա ևս Զաքարա չերքեզից էր գնել... Միջնորդներ էին [Հ]ասրաթ (Ասրաթյան) Արեսալամ արդին և Տալոյաշվիլի Գուրգենը... Այս անեբում մանրամասնո [Հ]արություն (Արութինա) Փարեզ Ասլանի արդին էր ապրում, 14 թումանի գրավը հանձն էր առել, մուրհակ էր տուցել մելիք Ավետիքից:...

Բրանիկոնի 463-ին [=1775 թ.] մարտի 9-ին մի սենյակ ներքնահարկով (նկուղով) 2 թումանով գնեցի Մկրտչից (Միքիրտիչից):...

Բրանիկոնի 464-ի [=1776 թվի] հունիսի 12-ին Արզրումյան Զաբելյայի կեզծ արձանագրությունը կարդացի:...

...Բեգիարևի արդի Սուլթանը[6] [և] Գորջասպ մզիվանի արդի Սուլթանը այնտեղ էին, միասին նստած էինք...: Լուսացավ հունիսի 13-ը: Ինձ իջևցրին: Եկել էին Զաալ էշիկաղան, Շեխ գանձարանապետը, թագավորի և թագուհու մզիվաններըը ու բազմաթիվ ժողովուրդ, և կարդացին արզուհալը.

«Ինձնից իր սահմանը լեզվի և ապերախտ մարդ համար ենթարկվի [հետևյալ պատիժներին].

1. Մեր ամառ իշխանության գերը խլվի:

2. Մեր շնորհած կալվածքները խլվի:

3. Մեր ամառ՝ հայերի անունը խլվի:

4. Արքունիներից գնած տունն էլ խլվի և այլն.»:

Բարչալուից անցա Փամբակ...

[Արքան] Ախալցա մեկնեց...

Հունիսի 14-ին բանտանը Ախալցա մեկնեց...

Երևանի խանի ազգկան, որ գեղեցիկ էր և հարուստ օժիտ տվեր, կին էին ուզում վերցնել և՛ Խոյի Ահմադ-խանի արդին, և՛ Գյանջայի Մա[Հ]մադ-խանը, և՛ Շուշվա Իրզա[Հ]իմ-խանը: Երևանի բեգլարբեգ Հուսեյն-Ալիխանը ամենքին գրեց, որ ումն էլ Էրևկլի թագավորը կնրամայի տալ, նրան կտամ: Ահմադ-խանն երեք հազար թուման և հազար պատառական ձառաններ խոստացավ [Էրեկլին] տերոջ: Գյանջայի խանն ուղարկել էր իր եղբայր Ռա[Հ]իմին, իր հոր դայու (բիձի) արդի Մա[Հ]մադ-Էմին-բեկին: Ոմանք արծաթի փող էին ուղարկել և ոմանք էլ արծաթի փոխարեն իրրև պատանդ սրանց և եղբայրներին, և պատչում էին. «Իրանում չամաչցնես. այն ազգիկն իմ ուղածն է. հիսուն ձուխ հարուստ մարդկանց անպատան արի, տուր, ձեզ ևս կներկայացնեմ նրանց հավատար»: Մինչ սրանց այստեղ գալը [Էրեկ-

լեն] իր զորապետին (սարդալին) Երևանի խանի մոտ ուղարկեց մի այլ դրծով և բերանացի հանձնարարեց ասել. «Ադիլիկ Ահմադխանին տուր, որ [նրանք (խոյեցիք) Շերինին ընդունեցին և զորապետին (սարդալին) խիստ պարգևատրեցին։ Եվ նա վերադարձավ։ [Ապա Էրեկլեն] ուղևորվեց Փամբակ և այնտեղից Երևանի խանի մոտ ուղարկեց Մխայելին...։ Մխայելը ևկավ թթու գինի էր ուղարկել, խաղող և գաթաներ (շաքարահացեր), և ամբողջապես տեղահան էր արել Երևանը ու բերդի մեջը գցել...»

[Քրոնիկոնի 467-ի (=1779 թ.)] մայիսի 20-ին... [Էրեկլի] բաառնն ինձ ճանապարհ գցեց Ախտալա՝ հուշներին կարգի հրավիրելու [և] դնքսելու համար։ Ես գնացի... և վերադարձա Ախտալայից հունիսի 5-ին։

Քրոնիկոնի 467-ի [=1779 թվի] օգոստոսի 19-ին [Էրեկլի] բաառնը ուղևորվեց Երևան... Մարտնեալ հասավ 31-ին...։

[Էրեկլեն] Երևանի բերդին մոտեցավ. ոչ ոք նրա հուսով չէր, և զարմանալի էր, որ Էրեկլի թագավորն այն ամրացրեց։ Զորք էլ ուներ բերդում և բերդն էլ խիստ ամրացրել էր։ Երեք հազար մարտիկ էր դուրս գալիս [այնտեղից]։ Դարան մտած լեզգիները սպանեցին Գիվի Զոլաղ'աշվիլուն։ Տասներկու լեզգի էին ճարել ու կրակում էին։ Մի օր [Էրեկլի թագավորը] հարյուր հնձյալ և մոտ երկու հազար հետևոան էր ուղարկել պատերազմի։ Բաառնի զորքը ցիրուցան էր։ Սկսել էինք հրացանաձգություն։ [Բաառնը] նախ Գիորգի արքայազնին էր ուղարկել, ապա Լևոնին։ Երբ նեղ տեղն էին ընկել, ինքը հասել էր օգնության, հաղթել էր, թեև Էրեկլեի [կողմնակիցներից] մաչառելուն սպանել էին։ Նոյեմբերի 10-ին [արքան] Տփղիս վերադարձավ։

Ինձ թաղելու համար դուք նեղություն մի կրեք։ Մի քիչ բան ունիմ, և այն ինձ համար բավական է. գավթարում գրված է։ Գերեզման ունիմ և պատանք [էլ]։ Մարմարե արձանը [հայ] աերաերի մոտն է, այն էլ իմ [փող]ով գնեք. գնեք, ինչպես ասել եմ...։

[Քրոնիկոնի 473-ին (=1785 թ.)] ...Օմար խանը*... Ախտալան պղնձե ականով վերցրեց։ Բազմաթիվ վանականներ և քահանաներ սպանեց, [նույնպես և] բազմաթիվ աշխարհականներ։ [Լոռվա] մելիքի որդիք այնտեղ էին, [և նրանց էլ] գերեց։ [Ապա] մոտեցավ Ուդունլարին, ուր և կանգ առավ։ Այնտեղ էլ չմնաց, անցավ Լոռի, այնտեղից Ախալքալաք, հասավ Սամցխե...։

* 1951 թ. հրատարակության մեջ «Անձնանուններին ցանկում» Օմար-խանը Օթար-խան է դարձել (տե՛ս էջ 116) sic.

ԺԹ

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՆԵՐ

«ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (1791)

XVIII *դարի վրաց գրականությունն առանձնապես հարուստ է, այսպես կոչված, «ժամանակագրությունն»-ներով, որոնցից աչքի է ընկնում անանուն հեղինակների կազմած «Այլևայլ անցքերի նկարագրությունը՝ Քրիստոսի ծննդից սկսած և ամսաթվերի ցուցմունքով ըստ վրացական քրոնիկոնի»:*

Վերջինս պարունակում է նաև ժամանակագրական տվյալներ, սկսած 1658 թ. և մինչև 1791 թ. ներառյալ, որի վրացերեն բնագիրն ըստ համապատասխան ձեռագրի, ռուսերեն թարգմանությամբ հանդերձ, հրատարակել է պրոֆ. Ե. Թաղ՝այշվիլին իր գրքույկում՝ „Материалы для истории Грузии", Тифлис, 1895. стр. 34—54.

Հրատարակիչը համոզված է գտնում, որ անանուն հեղինակները հայեր լինեին, և այս տեսակետը նա հիմնավորում է հետևյալ կերպ (տես նույն տեղ, էջ 31—32): «Авторами большинства записей, вошедших в нашу рукопись, вероятно, были армяне. Этим и можно объяснить довольно частые известия о смерти тифлисских меликов, которые, как известно, были из армян и имели большое значение для армянского населения г. Тифлиса. Для тифлисских армян смерть мелика была событием немаловажным; поэтому неудивительно, что кончину их они считали нужным передать памяти. Об одном из них, мелике Зурабе и его сыне Автандиле, автор записи не без сострадания замечает, что они без *вины* были умерщвлены палочными ударами. Для грузин, наоборот, мелики не имели такого значения, и поэтому в грузинских хрониках нет упоминания об их смерти, хотя о событиях XVII и XVIII веков грузинские историки дают более или менее подробные сведения... Еще более наглядным до-

казательством того, что некоторые записи, вошедшие в нашу рукопись, принадлежат армянам, служат армянские слова и названия, встречающиеся в тексте записей. Так, духовное лицо католикос названо в записи 1718 г. армянским словом „окевартер". В другом месте под 1742 г. упоминается о страшном землетрясении и указывается, что это случилось 24-го июля, в день субботний „Вартеура". „Вартеур" равняется армянскому слову „Вардавар"—Преображение. Нечего говорить, что, если бы эти записи принадлежали грузину, то мы не встретили бы подобных выражений в тексте":

Այս նկատողության առթիվ միայն կարելի է առարկել, որ «օքեվարտեր»=«հոգևոր տեր» բառը գործածական է վրաց գրականության մեջ XVIII դարում անկախ այս կամ այն հեղինակի հայ լինելուց թե չլինելուց և, մասնավորապես, վրաց պատմիչների՝ Վախուշտիի, Օման Խերխեուլիձեի և ուրիշների մոտ։

ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ [1658—1791 թթ.]

1662—350. Խոջա-Մելիք Բերութը (Բերուդա)[1] վախճանվեց հուլիսի 7-ին...

1718—406. Սուրխափն ավերեց Բոլնիսները[2]:...

1718—406. Բանդեցին կաթոլիկների (պատրերի) եկեղեցին։ Հոգևոր տերը (օքեվարտերը)[3] հոկտեմբերին Տիֆլիսում էր դանվում։

1734—422. Բասլ-փաշան կախազանի հանեց Տիֆլիսի Մելիք Աշխար[հ]-բեկին սեպտեմբերի 10-ին[4]։

1742—430. Իմամ-գուլի-խանը[5]... առանց որևէ հանցանքի փայտի հարվածներով մահացրեց Տիֆլիսի մելիք Զաբարին ու նրա որդի Ավթանդիլին։

1742—430. Մի օրվա ընթացքում յոթն անգամ կրկնվեց երկրաշարժը... լուսնի չորրորդ օրը, հուլիսի 24-ին, Վարդավառի (Վարքևևատրի)[6] շաբաթ օրը։

1751—439. Էրեկլե թագավորն ուղևորվեց Երևան։ Երևանին մոտեցավ Թավրիզից ավղան Ադաս-խանը։ Ճակատամարտը սոսկալի էր. Ադաս-խանը պարտվեց ու փախավ դեպի Նախիջևան՝ հուլիսի 28-ին։

1752—440. Թեյմուրազ թագավորն և Էրեկլե թագավորը զորքով եկան Տիֆլիսից դեպի Գյանջա։ Գյանջայի խան Շա[հ]-վերդ-խանը, դուրս գալով բերդից, դիմավորեց թագավորին

մեծաքանակ ընծաներով և տեռնվեց թագավորների հետ։ Թագավորներին այցելության եկան նաև ընծաներով Դարագավ կույր Քազում-խանը և Շուշվա Փա[նահ-խան]ը։ Այս խաները ուզում էին Հաջի-Զալարին հաշտեցնել թագավորների հետ։ Թագավորները կարծում էին, որ այս խանները պայման ունին միանալու Հաջի-Զալարի հետ և բոլոր խաներին կալանավորեցին, ձեռները շղթաներով կապեցին և ընչազուրկ արին։...

1752—440. Փանա-խանի որդին Հաջի-Զալարի մոտ գնաց Գյանջա, զորք հաացրեց, սկսվեց պատերազմ։... [Վրաց] թագավորները պարտվեցին։ Թագավորական զորքը թագավորներով հանդերձ եկավ Տփղիս, իսկ ընչազուրկ խաները գնացին Գյանջա Հաջի-Զալարի մոտ։ Զատկի շաբաթ օրն էր։ Տփղիսեցի քաղաքացիներն առևտրական [գործերով] Գյանջա էին գնացել, և Հաջի-Զալարի մարդիկ նրանց կողոպտեցին մարտի 28-ին։

1768—556. Ագա-Մելիքը վախճանվեց սեպտեմբերի 18-ին։

1791—479. Փանահ-խանի որդի Իրրե[ն]իմ-խանը և Օմար-խանը լեզգիների զորքով եկան Նախիջևանի վրա, սակայն պարտություն կրեցին նոյեմբերի 21-ին։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Թբիլիսիի մելիքը։

2 Հետևապես, և հայոց «Ժամախս-սոփելինց», որ Բոլնիսի ձորում է գտնվում։

3 Տե՛ս այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88), ԺԵ գլխի 23-րդ ծանոթ. (էջ 181) և ԻԳ գլխի 7-րդ ծանոթ. (էջ 237)։ Ի նկատի ունի Ասոմածատուր I կաթողիկոսին, 1715—1725 թթ.։

4 Հմմտ. Գ գլուխը։

5 Քարթլիի խան։

6 Հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդավառը վրացոց մեջ. «Արարատ», 1918 թ. № 1—3, էջ 129—133։

ԺԵ

ՕՄԱՆ ԽԵՐԽԵՈՒԼԻԶԵ

«ԹԵՅՄՈՒՐԱԶԻ ՈՐԴԻ ԻՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» (1795—1798)

Օման Խերխեուլիձեն վրաց պալատական ավագ դիվանադպիրը կամ դիվանապետն (մդիվանբեգի) է եղել, Էրեկլե II թագավորի (1744—1798 ԹԹ.) ժամանակակիցը։ Նա գրել է Էրեկլեի պատմությունը, սկսելով այն 1722 թվից և հասցնելով մինչև 1785 թիվը, հետապես նրա երկին ընդգրկում է մոտավորապես 60—65 տարվա պատմություն։ Երկում մի քանի անգամ հիշվում է Ղաջար Ագա-Մահմադ-խանի արշավանքը Վրաստան, որ տեղի ունեցավ 1795 թվի սեպտեմբերին։ Հետևապես երկը գրվել է կամ, ծայրահեղ դեպքում, խմբագրվել է 1795 թվից հետո, հավանական է 1795—1798 ԹԹ.։ Հեղինակի նպատակն է պարզել, թե «ինչպիսի վաստակով է Էրեկլեն աստղել Քարթլիի թագավորությունը», ապա և «ինչպես է նա [Էրեկլեն] մխացրել երկիագավորությունը (տես՝ Քարթլին և Կախեթը)։

Օման Խերխեուլիձեի երկասիրությունը հրատարակված է պրոֆ. Դ. Ջուբինովի լույս ընծայած «Քարթլիս-Ցխովրեբա»-ի II մասում, ՍՊԲ, 1854, էջ 475—500, նաև արտատպված է Ջ. Ճիճինաձեի հրատարակած «Վրաստանի կյանքը» (Սակարթվելոս Ցխովրեբա) գրքում, Թբ., 1913, էջ 241—276։ Նույնը կա և ֆրանսերեն թարգմանությամբ ակադ. Մ. Բրոսսեի՝ M. Brosset, Histoire de la Géorgie, II partie, II-e Livraison, SPB, 1857, էջ 203—227։

Հեղինակի ու նրա երկի մասին տես. Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականություն, V—XVIII դարեր, վրացերեն, ա. տպ., Թբ., 1916, էջ 335—338, բ. տպ. Թբ., 1945, էջ 376—379։

Քաղվածքների թարգմանությունները բերում ենք համաձայն Դ. Ջուբինովի հրատարակության։

[1722—1780 ԹԹ. ԱՆՑՔԵՐԸ]

1722 թ. ...Շահ-Սուլթան-[Հ]ուսեյնի[1] որդի Շահ-Թամազը[2]... Քարթլիի թագավորությունը հանձնեց Մահմադ-Ղուլի-խանին[3]... և ավեց նրան Գյանջան, Ղարաբաղն ու Երևանը:...

1723 թ. Ռուսների սարսափքարն եկավ Դարա և տեղեկացավ Քարթլիի դրության մասին:... Իսկ [վրաց Վախտանգ] թագավորն[4] ուղարկեց իր եղբայր Բեսոնին[5], սարսափքարն ելավ Ղարսից ու եկավ Շանրիան:...

1734 թ. ...Լեզգիները ավերում էին Քարթլին և Կախեթը, մանավանդ Սամխեթ-Սարարաթիանոն:...

1739 թ. ...Նապըը-շահը Ղարսի բերդին մոտեցավ:

1744 թ. Նապըը-շահը[6] ...Ղարսից վերադարձավ: Թևմուրազ թագավորը[7], տեղեկանալով սրա մասին, դիմավորեց նրան Աշոցքում (Արտցում), որ է Ղ'այդ'ուլի (Ղ'ախդ'ուլի). այնտեղից եկավ Բորչալու, Դեբեդի ափը:... Նապըը-շահը վերադարձավ Ղազախով և Գյանջայով:...

1747 թ. Բեան թագավորի որդի Արգուլա-բեկը[8]... վրացիներին և սրանց ուրիշներին հանեց Սամխեթ-Սարարաթիշվիլուց և գավաճանեց Իրակլի թագավորին[9], բերեց զգլրաշների Սաարխիսիար խանին՝ զորքով հանդերձ. սրան հետևեցին Գյանջա-Ղարաբաղի խաները, Դագստանի խան Ազատ-խանը և Վրաստանի քրչվորները, Շամշադինը, Ղազախը, Բորչալու-Դեմուրչաալին, Բայդարը և այլն:...

1749 թ. Թևմուրազ թագավորը ժամանեց Իրանից: Այդ պահին Իրանում Իրահիմ-շահին[10] սպանեցին, և ամբողջ Իրանը խառնվեց. սկսեցին իրար կոտորել, գերել և ավերել: Այս ժամանակ սրն Մահմադ-խան Ադրբեջանի կոմմերսում ուժեղացել էր [և] շատ երկրներ էր ավերում, որի պատճառով երևանցիները դիմեցին Թևմուրազ թագավորին և Իրակլի թագավորին. «Իրանում այլևս տեր չկա, և Մահմադ-խանը այս երկիրն ավերում է. դուք մեզ օգնության հասեք, պրանից ազատեք և մենք ձեզ կծառայենք»: Լսելով այս՝ երկրների թագավորները զորքերով գնացին Երևանին օգնության: Բայց Իրակլի թագավորն հինգ հարյուր հոգով առաջ գնաց: Չենց որ Մահմադ-խանը տեղեկացավ սրա մասին, իր ամբողջ ուժովը գեմ ելավ և Իրակլի թագավորի հետ սկսեց պատերազմել: Առաված Իրակլի թագավորին շնորհեց կարողություն և հաղթություն: Մահմադ-խանը փախավ և մտավ Դարաբաղ (sic), քանի որ այնտեղ Մորվիրսալի (Մարգվիրսրի) բերդը[11] ամրացրել էր և իր բնաանիքն էլ այնտեղ էր տարել:

Իրակլի թագավորը հետամուտ եղավ [Մահմադ-խանին] և շրջապատեց ու գրավեց այն բերդը, [որտեղից և] Մահմադ-խանի ընտանիքը գուբս հանեց, և ինչ որ հարստություն-գանձեր ուներ, բոլորը վերցրեց ու եկավ Երևան։ Այստեղ Թեյմուրազ թագավորի և Իրակլի թագավորի մոտ եկան երևանցիները և նույնիսկ Երևանի խանն էս։ Ապա հարկատու հայտարարեցին իրենց և հանձն առան ծառայել [թագավորներին]։ Եվ այս թագավորներն իրենց մարդուն նստացրին Երևանում և ուղևորվեցին [դեպի Վրաստան]։ Մինչ թագավորներն այնտեղից կվերադառնային, Ղարաբաղի Փանահ-խանը, Գյանջայի խան Շա[հ]վերդխանը և Նախճ խան [Հ]աջի-Զալարը՝ բոլորը հավաքվեցին Գյանջա-Ղարաբաղի և Շաքի-Շիրվանի զորքերով ու Ագստափայով եկան Ղազախ. և մինչ այդ թագավորներն էս Երևանից Ղազախ ժամանեցին. այնպես որ այստեղ հավաքված խաներն այլևս չհամարձակվեցին պատերազմ [մղելու], խույս տվին [կռվից] և՝ ամրոցում փակվելով՝ սկսեցին բանակցել թագավորների հետ համերաշխություն [հաստատելու] մասին, հաշտություն [կնքելու] ու վերադարձան։ Իսկ թագավորները հաղթական եկան Տիֆլիս։ Եվ այդ օրվանից Երևանը հարկատու էր [մեր՝ Վրաց] թագավորին մինչև Ղաջար-Մահմադ-խանի[12] գալը Վրաստան[13]։ Թեև սա էլ բոլորովին չվերացրեց Երևանի հարկատվությունը (ծառայությունը) Վրաստանին։

1750 թ. Ղարաբաղի Փանահ-խանը մոտեցավ Գյանջային... [Գյանջայի օգնության գնացին Վրաց] թագավորները զորքերով ...սրանք մոտ Ղազախ... [թագավորները] անցան Ղարաբաղ, և Փանահ-խանն էլ մեծ զորքով ընդդեմ ելավ պատերազմելու.... Երկրորդ օրը երկոքյան թագավորները պատրաստվեցին ավերելու Ղարաբաղը, գնացին և Արտպի հայկական գանձող Ղարաբաղի տարն (հայրենիքը) ավերեցին ու շատ [ավար] վերցրին։ Եվ ետևցին այնտեղ երկու ամիս և բոլոր զարաբաղցիներին հնազանդեցրին, և Գյանջա-Ղարաբաղը հարկատու դարձրին։...

1752 թ. երկոքյան թագավորներն եկան Ճարն ու Շաքի-Շիրվանն ավերելու, զորքեր հավաքեցին և իջան Իորի վրա, ուր [որանց] միացան Գյանջա-Ղարաբաղի խաները։... Այս եկավ փետրվար ամսին։ Իսկ նույն թվականի հունիս ամսին մեծ զորքով եկավ Ագստա-խանը և սկսեց ավերել ու թալանել Երևանը, քանի որ Ագստա-խանը սիրում էր Մխիթային, որ է Ագրիպյան[14], և կոչվում էր սիրակալ Պարսկաստանի։ Այս պատճառով երև-

վանցիները Իրակլի թագավորին գրեցին. «Քանի որ մեզանից հարկ եք պահանջում և ձեր հպատակության ներքո ենք գտնվում, ձեր պարտականությունն է ազատել մեզ այսպիսի բռնակալի ձեռից»։ Եվ խնդրեցին օգնություն, որի կապակցությամբ Իրակլի թագավորը հաճեց օգնել Երևանին։ Երբ Մուսա-խանը, որ մտեցել էր Երևանի բերդին, լսեց Իրակլի թագավորի գալը, նույն իսկ րոպեին հեռացավ բերդից։ Իսկ Իրակլի թագավորը հասավ Երևան և պարենավորումից կատարյալ զուրկ երևանցիներին ապահովեց մթերքով և հասցրեց պարեն, իսկ ինքը վերադարձավ Քանաքեռ (Քանակիրի) և կանգ առավ Ղարաբուլախում՝ բացօթյա, Երևանի մոտերքում, որ գտնվում է Երևանից 12 վերստ[15], այսինքն մեկ մղոն (ազաջ), հեռավորությամբ։

Այս Մուսա-խանը՝ Երևանից հեռանալով՝ խիստ և եթ նամակ գրեց Ազատ-խանին և տեղեկացրեց նրան Միքելյանում գտնվողին, Իրակլի թագավորի գալու և նրա բոլոր գործերի մասին։ Լսելով այս՝ [Ազատ-խանը] զայրացած ժողովեց զվարճասիրական զորքերը քառասուն հազարի չափ, այնպես որ [նրանց մեջ] տասերկու հազար ռեզնամարտ մարդ կար, բացի թվանդչիներից, հետո էլ տասերկու թնդանոթ և երկու հարյուր հրանոթ (զամբուրակ)։ Նա (Ազատ-խանը) աննկատելի կերպով եկավ ու Գյառնի-չայի[16] վրա կանգ առավ։ Գյառնի-չայը գտնվում է Քանաքեռից (Քանաքերից) քսան վերստի[17] հեռավորությամբ։ Եվ երեկոյան լուր հասցրին Իրակլի թագավորին. «Ազատ-խանը մեծ զորքով եկավ ու Գյառնի-չայի վրա կանգ առավ»։... Իրակլի թագավորի մոտ եկավ մի երևանցի ապրելջանցի (թաթար)՝ Այրումլուի սուլթանը Ալա[հ]վերդի անունով... Երբ թագավորը նկատեց իր զորքի սակավաթիվ լինելը, երկբայեց Քրխառոսի խաչին արտասավից և իր բոլոր մարտիկներին երկրպագել տվեց խաչին, և այդ ժամանակ այն ապրելջանցի (թաթար) Ալահվերդի սուլթանն էս եկավ ու դիմեց Քրխառոսի խաչին այսպիսի խոսքերով. «Եթե դու որևէ ուժ ունես, այսօր կերևա», և ինց Իրակլի մոտ։ Ապա Իրակլին հանգիստ կերպով առաջնորդեց հազար հինգ հարյուր հետիոտն մարտիկներին և, որտեղ էլ ամենից շատ էին կուտակված Ազատ-խանի զոհատանները, հենց գետի այն կողմն ուղղվեց։ Եկավ կատաղած Ազատ-խանը և իր զոհատաններով շրջապատեց [Իրակլի զորքը] և չորս կողմից էս այնքան մոտեցավ, որ նիզակ պատելու տեղ չկար և նրանք (ապրելջանցիները) աշխատում էին կենդանի ձեռք

գցել վրացիներին։ Ապա խաներից մեկը զեկուցեց Ագաա-խանին. «Թույլ տուր ինձ, որպեսզի գնամ և Իրակլի թագավորին վենդանի կալանավորված քեզ ներկայացնեմ»։ Նա թույլ տվեց, և հեծյալ [խան]ը շտապ-շտապ գնաց նիզակը ձեռին, որ պատրաստել էր կռվի համար, և կանչեց. «Համաման հանիեր Իրակլի խանը, այսինքն՝ «ահա է Իրակլի թագավորը»։ Այդ ժամանակ նրա դեմ դուրս եկավ թագավորն և ասաց. «Ես եմ Իրակլի թագավորը»։ Եվ ասելուն պես թագավորը լցրեց հրացանը, և կրակեց այն, որը և դիպավ խանի սրտին. խանը վայր ընկավ ձիուց հենց Իրակլի թագավորի առջև։ Տեսնելով Իրակլի թագավորի այսօրինակ սխրագործությունը՝ վրացիք և կախեթցիք ևս արիացան և միանգամից կրակեցին իրենց հրացաններից և, որքան էլ մոսեերքում զվլրաշներ և աղվաններ կային, բոլորին գլորեցին, և ընկան նրանք գետնի վրա։ Ապա Իրակլին հեծավ իր ձին և հրամայեց իր մարտիկներին ևս հեծնել։ Հեծան մարտիկները և թուր ու սրով պինդված միանգամից գրոհ տվին և՝ հասնելով [պատերազմի դաշտը]՝ ձիերից վայր գցեցին զվլրաշ-ավաններին։ Իսկ այդ օրերին [վրացոց] հետ էր Այրումլուի սուլթան Ալա[հ]վերդին, որը սքանչել[ագործություն] խնդրեց խաչից և քաջարի էր։ Իսկ Ագաա խանն ամրոխահար վախեստեղծեց։ Մինչդեռ այս հաղթանակի հետևանքով Իրակլի թագավորին միացավ 24 թնդանոթ, 200 հրանոթ (զամբուրակ) 100 ուղտով և բազմաթիվ զրոշակներ և 2.500 վրան, իսկ գերիների և տավար[-ոչխար]ի թիվը անհնարին էր հաշվել։ Իսկ այն Ալա[հ]վերդի սուլթանը խիստ զարմացած մնում էր խաչի առաջ. «Այս[պիսի] գործը մարդկային ուժով անհնարին էր. բայց այս խաչի ուժն այդ արավ»։ Դարձյալ ասաց. «Մաչ, սանա դ'ուբրան օլիմ», այսինքն՝ «Մահ, քեզ դո գնամ»։ Բայց ընկղմվեց։ Իրակլի թագավորը ժամանեց Տփղիս հաղթական. Եվ այս հաղթանակը տևզի ունեցավ հուլիս ամսին[18]։

1753 թ. ... մայիս ամսին [Հ]աջի-Զալարի որդի Ագաքիրիմը զորքեր հավաքեց, Շաքի-Շիրվանի զորքով եկավ Գյանջա, ուր նրան միացավ Ղարաբաղի խանը [իր] զորքերով, [միասին] եկան և Ղազախ-Բորչալուն տեղահան արին և ինքներն անվընդով կանգ առան Բայդարում... Երկոքյան թագավորները Քարթլիի և Կախեթի չերքեզական զորքերով հանդերձ Տփղիսից ելան։ Հենց որ սրանք իջան Սողանլուղ, [Հ]աջի-Զալարի որդի Ագա-քիշին և այլ խաները, որոնք սրա հետն էին, Բայդարը

Քոպին և, վերագառնալով հասան Ղափան։... [Մյուս] խաները և ա... հասճեզ Թուղով Շամշադին հասան։...

1755 թ... Վրաստանի ապրբեջանցիները (Թախտ) քոչվորներն ըստ սովորության սար բարձրացան, այնտեղից փախան ու Երևանյան հողն իջան։ Լսելով այս, Իրակլի Թագավորը մեկնեց Վերին Քարթլի, այնտեղ գաղտնի կերպով զորքեր հավաքեց օգոստոս ամսին, [ապա] Թոխալեքով անցնելով՝ սեպտեմբեր ամսին Երևանյան հողը [իջավ] և Արազի ափին Ղարասու կոչված տեղում կանգ առավ, և Վրաստանից գնացած քոչվորներին բոլորին վերադարձրեց ու հոկտեմբեր ամսին նրանց իրենց տեղերում նստացրեց։

1760 թ. ... Զևնդ Բյարիմ-խանն(Քարիմ-խանն)[19] ուժեղացավ... [և] ազվան Ագամ-խանին քշեց։ Վերջինս այլևս չկարողացավ իր երկիրը գնալ և [իր] զորքով Ապրբեջանի կողմն եկավ ու ամառվա-նման շատ վատ գործեր կատարեց։ Եվ Բյարիմ-խանը Իրակլի Թագավորին նամակ գրեց՝ եղբայրաբար և սիրով լի. «Ագամ-խանն Ապրբեջանի կողմերն է եկել ու երկրները վչացնում-ավերում է, և եթե նա ձեզանում որևէ տեղ երևա, բանը և ինձ մոտ ուղարկեք, որի համար Իրանի (Էրանի) հանդեպ մեծ երախտիք կունենաս»։ Մինչդեռ Ագամ-խանն այդ տեղերում չդիմացավ և գնալի Դագստան ուղևորվեց։ Իրակլի Թագավորը՝ իմանալով այս՝ կանխեց մինչ նրա գալը Ղափան, և իր ամբողջ զորքով Ագամ-խանին կայտնավորեց և Բյարիմ-խանին ուղարկեց, իսկ նրա զորքերն ամբողջապես ոչնչացրեց ու իրենց երկրներն ուղարկեց։ Այս գործի ատիճով Բյարիմ-խանը հույժ երախտավոր եղավ [Իրակլի Թագավորին], որին շատ ընծաներ ուղարկեց և Երևանը հանձնեց նրա վրա և Երևանի խանին թուղթ գրեց. «Որքան էլ պետական հարկ լինի քեզ վրա դրված, բոլորը Իրակլի Թագավորին պիտի տաս և նրան հնազանդվես, ինչպես էլ հնազանդության կարգն է»։ Եվ Ապրբեջանի այլ խաներին էլ գրեց Իրակլի Թագավորին հնազանդվելու մասին։...

1767 թ. Երևանյան քյուրդերը նորից ուրացան [Իրակլի Թագավորին]ու այլևս հարկ չէին վճարում [Վրաստանին]. ուստի և Իրակլի Թագավորը հունիս ամսին մեկնեց այնտեղ։ Նրանք՝ իմանալով Թագավորի գալը՝ փախան, Արազդից (Արեգի) անցան և Արաքսա լեռան հարևանությունը գնացին։ Իրակլի Թագավորը հետամուտ եղավ նրանց, ավերեց քյուրդերին և տալիք հարկից շատ ավելի՝ տասնապատիկ հավաքելով եկավ Տփղիս։...

1769 թ. Երևանյան քյուրդերը նորից ուրացան [Իրակլի թագավորին] ու այլևս հարկ չէին վճարում [Վրաստանին]. ուստի [և Իրակլի թագավորն] երկրորդ անգամ գնաց զորքով, քյուրդերի [տեղը] հասավ, Արազի (Արեզի) այն կողմն ավերեց. զորքերը շատ [ավար] վերցրին ու եկան Տիflիս: Իսկ քյուրդերը վերապարձան Երևանյան երկիրը, նստեցին իրենց տեղերում և հարկեր էին վճարում [Իրակլի թագավորին] ու այսուհետև այլևս չէին համարձակվում ուրանալ և Իրակլի թագավորի հարկատու էին:

1772 թ. ...[Իրակլի թագավորը] շատ հետախուզություններ կատարեց ու աշխատանք թափեց, որպեսզի իր երկրում գտնի ոսկու և արծաթի հանքեր, և գտավ այն Սոմխիթի (Սոմխեթի. sic) երկրում՝ Ախտալայում[20], որ է հայբենական [ժառանգություն] Սոմխիթի մելիք իշխաններին: Եվ բերել ավել Հունաստանից հուշերի մի փոքրաթիվ խումբ, որոնք տեղյակ էին հանքային ոսկի և արծաթ հալելու գործին[21]: Ապա սկսեցին հանքագործությունը, որից [Իրակլի թագավորը] շատ օգուտ քաղեց:...

Փյարիմ-խանը (Փարիմ-խանը) մեր նամակ գրեց Իրակլի թագավորին, ուղարկելով նրան թուր և ձի՝ ոսկով սպառազինված: Ապա մտադիր եղավ վեզան ուղարկել խոնթքարի մոտ և առաքեց իր արքունիքից Միրզա-Դուրգենին (Դուրգինա), ումն հայի, որը Ղարաբաղից էր եկած:...

...Այս [իսկ] պահին խաղաղություն ընկավ Քարթլ-Կախեթում, և Վրաստանում սկսեցին ավերված ավանների վերակառուցումը, և շատ գյուղեր շինվեցին Քարթլ-Կախեթում և Սոմխիթում:

1780 թ. Երևանի խան [Հ]ասան-Ալի-խանն ուրացավ [Իրակլի թագավորին] ու [Երևանցիք] այլևս հարկ չէին վճարում [Վրաստանին]. ուստի [և Իրակլի թագավորն] ուղարկեց դ'որապետաուլ-բաշ իշխան Զազա Թաբախնիշվիլուն, որ վերանորոգի իր գործադրած աշխատանքի հատուցումը Երևանի համար թափած արյան և հենց այս [Հ]ասան-Ալի-խանին խանություն շնորհելու համար, քանի որ Իրակլի թագավորն էր ավել նրան Երևանի խանությունը: Թեև [թագավորն] այս բոլոր անցյալ գործերը հիշեցրեց նրան (Հասան-Ալի-խանին), սակայն նա չլսեց, քանի որ շատ գերիներ և մեծ հարստություն դիզելու հետևանքով իրեն ուժեղ էր զգում և անվախ արտահայտվեց

[Թագավորի նկատմամբ]։ Իրակլի Թագավորն խնդուն և եթ հրամայեց Քարթլ-Կախեթի զորքը ժողովել և լեզգիներին ևս կանչեց զորքի մեջ՝ մի քանի հազար [մարդ], և սույն թվի օգոստոս ամսին ելավ, գնաց ու կանգ առավ Շիրաբաթ գյուղում, որ գտնվում է երկու մղոն (ագաջ) հեռավորությամբ Երևանից։ Եվ [Վրաց] զորքը սկսեց Երևանի պաշարումը. և ոչ մի տեղ շինություն չմնաց, բացի Երևանից ու էջմիածնից։ Այս պահին Իրակլիին հնազանդ էին Գյանջա-Ղարաբաղը, և այնտեղից էլ մի քանի հազարանոց զորք միացավ նրան։ Իսկ Երևանից գաղթած քոչվորները գնացել էին Բայազետի երկիրը, որ խոնթքարի իշխանության ներքո է։ Գնացին Քարթլ-Կախեթի իշխանները և զորքը ու ամրոցներին ավերեցին Բայազետի հողը ու բազմաթիվ գերիներ ու ավար բերին։ [Բայազետցիներին օգնության] եկան քյուրդերը։ Սրանց ևս հաղթեցին ու խայտառակեցին։ Եվ Ադրբեջանի բոլոր խանները հնազանդվեցին Իրակլի Թագավորին։ Եկան - դեսպաններ, որոնք և բերին Թանկագին ընծաներ Թավրիզի խանից, Մայլ-խանից, Ուրմիի (Ուրմեմ) խանից, Շագաղի խանից, Մարաշի խանից, Բայազետի փաշայից և Ղարսի փաշայից։ Սրանց միացավ նաև Երևանյան հոգում գտնվող Շա[հ]մադյան (Շամախինցի. sic) քյուրդը, որը մեծ ուժի տեր մարդ էր և շատ քրդերի տիրակալ, և իր հպատակությունը հայտնեց [Թագավորին]։ Բայի գրանից, եկավ Շորագյալի (Շորագլի) սուլթան Ղա[հ]րամանը և Շորագյալի (Շորագլի) ամբողջ ժողովրդով ու հոգով [Թագավորի] հպատակ դարձավ։ Եվ Երևանում եղած պահին Իրակլի Թագավորն այնքան ուժեղացավ, որ [նույնիսկ] իրանից ապատում էին, որ նա անկասկած կայսր կդառնա (գահակալ մեփեբա) և Իրանի (Էրանի) մասերն ևս կդրավի... Մի օր Իրակլի Թագավորի որդի Գիորգին գնացել էր Երևանի բերդն ու քաղաքը գիտելու։ Երևանցիները[22], նկատելով իրենց մոտերքում ձիավորների մի փոքր խումբ, դուրս եկան [քաղաքից]. և քանի որ [Թագավորի] ներոզամտության հույսը չունեին, որոշեցին անձնազոհություն անել, և զայրացած հարձակվեցին Իրակլի Թագավորի որդի Գիորգիի վրա, և սկզբի ունեցավ սաստիկ պատերազմ։ Եվ քանի որ այս երևանցիները մեծ մասամբ բերդի մոտերքում ապրողներն էին, այդ պատճառով քիչ նեղություն չպատճառեցին արքայազնին։ Իսկ այս դեպքի մասին Գիորգին հաղորդեց [իր] հորը և զորք խնդրեց օգնության։...

... Իրակլի թագավորը... հրամայեց իր որդի Լեոնին և զորականներին գնալ օգնության [Թիորգիին], և ինքը Իրակլի թագավորն ու նրա սպարապետները (սարդալները) ևս ձի հեծնելով՝ շտապեցին պատերազմի։ Երևանցիները ևս դուրս եկան, որքան կարող էին կռվել, և սկսվեց սաստիկ պայքար, [որը տևեց] երեք ժամ չափ, թեև ի վիճակի չէին այսքան ժամանակ դեմ առ դեմ կռվելու։ Բայց երևանցիք ունեին խիստ մեծ ժայռեր և պարիսպներ, և Երևանի խանը իր մոտն էր պահում պատերազմասեր լեզգիներին, և գրանով էին [երևանցիները] դորավիգ։ Իսկ սրա ականատես Իրակլի թագավորը զայրանում էր, ինչպես առյուծն այծերի դեմ, և այս ժամանակ նրան նկատողներից մեկն Երևանի բերդից Քնգանոթ արձակեց Իրակլի թագավորի ուղղությամբ և մերձակա ժայռին դիպավ... Զայրացած [Իրակլի թագավորը] կոչ արավ նեղ տեղն ընկած զորականներին ու խնդրեց և եթ հարձակվեց [Քշնամու վրա], կոտորեց շատերին ու բնաջինջ արավ Երևանի բոլոր ուժերն ու շատերին էլ կենդանի կալանավորեց, ապա հրամայեց արձակել իր զորականներին, որպեսզի ամեն մեկն իր համար տուն շինի և ձմեռն այնտեղ անցկացնի։ Այս բանի ականատեսներն ու լսողները ահ ու դող մեջ ընկան, իսկ Երևանի խանը ապերսելով հանձն առավ վճարել չորս հազար թումանի չափ արծաթի, և առավել ևս այլ հավելյալ ընծաներ մատուցանել [թագավորին]։ Մինչդեռ Իրակլի թագավորը սրա իրավունքը չտվեց [խանին]... [Իրակլի թագավորը] վերադարձավ Երևանից երրորդ ամսին. հայ բնիկներից շատերին... տեղափոխեց Վրաստան, որոնք հիմա էլ գըտնվում են մի քանի տեղերում, նաև բերեց գերիներ, իսկ զորքը [բերեց] անթիվ ավար։ Շատ արծաթ մատուցեց [Իրակլի թագավորին] հոգևոր տերը (օքիվատերը)[23], և արծաթի վերահշյալ գումարը հարկ դրեց Երևանին։ Ապա, իրրև իր կառավարիչ (մուրավ), նշանակեց այնտեղ Մուխրանի տեր՝ իր փեսա Բռանե Կոստանտոնի որդուն, և Երևանը Իրակլի թագավորի հարկատու [մնաց] մինչ Զաջար Ապա-Մահմադ-խանի[24] գալը։

Մի քանի տարուց հետո... ...Իրակլի թագավորը՝ ուրախալով Գյանջայցին ու ամբողջ նրա հոգին՝ բարեկամություն էր հաստատել և Շուշվա խանի հետ, որի մարդկանցից մեկը Իրակլի թագավորի մարդկանցից մեկի հետ միասին կառավարում էին քաղաք Գյանջան։... Օմար-խանը Ախտալայի հանքերը

(մադանը) հասավ, գրավեց Ախտալայի բերդը, ավերեց հանքերը (մադանը) և կալանավորեց այնտեղ գտնվող հույներին ու վրացի-հայերին և գնաց Ախալցխեի(Ախալքալաքի[25]) փաշայի մոտ:... [Ապա Օսման-խանն] անցավ լեռները և մտավ Ղարաբաղ՝ Իբրահիմ-խանի մոտ... Սուլթան Թվականին Վրաստան էին փախել Ղազախի և Շամշադիլի քոչվորները և գտնվում էին Գյանջա-Ղարաբաղում (sic). և Ղարաբաղից փախան Իբրահիմ-խանի մելիքները, հույժ հարուստ, ճորտերով և բերդ ու ամրոցներով ուժեղ, որոնք եկան Իրակլի թագավորի մոտ և խնդրեցին օգնություն, որպեսզի զոք տա իրենց ճորտերին տեղահան անելու նպատակով: Այս նպատակով [Իրակլի թագավորն] ուղարկեց այնտեղ իր որպի Յուլոնին՝ կցելով նրան զորապետ (սարդալ) և վրաստանի զորականներին: Երբ Նրանք մտան Ղարաբաղի հողը, նրանց այնտեղ դիմավորեց զորքը և Իբրահիմ-խանի զորապետը (սարդալը), և իրավունք ավին տեղահան անելու մելիքներին:... Այս պահին Իբրահիմ-խանի հետ համաձայնության համար Օսման-խանը Դադասանի զորքով եկավ Ճար...

... [Իրակլի թագավորին] հարկատու էին Գյանջան, Ղարաբաղն ու Երևանը, որոնք հնազանդ էին համապատասխան պարտականություններ կատարելով մինչև Ղաջար Ագա-Մահմադ խանի գալը:...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հուսեյն կամ Հյուսեյն, Պարսից շահ, 1694—1722 թթ.:

2 Հեռագայում Թամազ II, Պարսից շահ, 1729—1736 թթ.:

3 Էրեկլե I (Նադար-Ալի-խանի) որդի՝ Կախեթի թագավոր Կոստանտինեն, մահմեդականացած:

4 Վախտանգ VI, Քարթլիի կառավարիչ՝ 1703—1711, թագավոր՝ 1719—1724:

5 Վրաց թագավոր՝ մահմեդական Իևսե, 1714—1716:

6 Նադրը, Պարսից շահ, 1736—1747 թթ.:

7 Թեյմուրազ I, Քարթլիի թագավոր, 1744—1762 թթ.:

8 Արգուլաբեկը՝ վրաց մահմեդական Իևսե թագավորի որդին էր: Համմ. սուն հատորի Ը գլխի 2-րդ ծանոթությունը (էջ 146):

9 Էրեկլե II, Կախեթի թագավոր՝ 1744—1762 թթ., միաժամայ Քարթլ-Կախեթիի թագավոր՝ 1762—1798 թթ.:

10 Իբրահիմ, Պարսից շահ, 1747—1749 թթ.:

11 Ասել է հին Արտաշատի տեղում, որ, ի հարկե, ոչ մի կերպ չի կապվում Ղարաբաղի (կամ դուցե Ղարադաղի) հետ, ինչպես Օսման Խերխուս-

լինեն է նշում: Հավանական է, որ այս նշման մեջ դուրս ունենք մի ինչ որ lapsus-ի հետ:

12 Ագա Մահմադ-խան, Ղաջար, Պարսից շահ, 1794—1797 թթ.:

13 1795 թ. սեպտեմբերին:

14 Սա ավանդական տեսակետ է, որով միդիացիք (մարք) ազգակցական նախնիներն են համարվում:

15 Վերստ=ռուս. верста, որ ապացույց է հեղինակի տեղյակ լինելուն ռուսերեն գործածական բառերին, որոնք մուտք են գործում Վրաստան XVIII դարի վերջերից:

16 Նույն Ագաթ պետը:

17 Տես 15-րդ ծանոթ.:

18 Հեռատես, էրեկլե II Վրաց թագավորի կողմից Երևանի առման միջև ժամանակն է 1752 թ. հուլիսը:

19 Բյարիմ կամ Քերիմ խան, Զենդական հարստության, Պարսից շահ, 1761—1779 թթ.:

20 Նույն Պղնձահանքը (լոռու Պղնձահանքը) ըստ հայկական աղբյուրների, կամ Ագարակը՝ ըստ վրացականի:

21 Ախտալա-Շամբուլուի հույները հենց սրանց սերնդից են:

22 Այստեղ և ստորև «Երևանցիները» ասելով հեղինակը ի նկատի ունի Երևանում կանգնած պարսկական կայազորը:

23 Տես այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88), նաև ԺԲ գլխի 7-րդ ծանոթ. (էջ 209):

24 Տես 12 և 13-րդ ծանոթ.:

25 «Ագսխխա» քուրդական ձևն է «Ախալցխե»-ի, որը հայերի կողմից ապավաղված է «Ախալցխա»-ի:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆ ՏՓՂԻՍԵՑԻ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ (1796—1798)

Տեր-Ստեփանը վրաստանում գործող հայ գրագետ հոգևորականներից մեկն է, որը 1795 թվից Թրիլիսիի ավերումից հետո հանդես է գալիս Հաղբատի թեմի առաջնորդական փոխանորդ-լուսարար [վարդապետ]ի դերում։

Այս տեր-Տաճիանի անունը տակա է մի շարք հիշատակարաններում, որոնք գրված են վրացերեն լեզվով և վրացերեն տառերով, միաժամանակ և Թրիլիսիի հայ բարբառի տպեցության կրելով, և որոնք կցված են Սիրոք գրչի Տփղիսի ավերման պատմության պարունակող ձեռագրին (Վրաստանի պետ. Թանգարանի Armenica-ի № 21 գրչագիրն ըստ մեր կազմած ցուցակի)։

Այս հիշատակարանները, անկախ նրա հեղինակ տեր-Ստեփանի՝ Սայաթ-Նովա—տեր-Ստեփանի հետ նուիրացնելու խնդրից, մեծ նշանակություն ունեն Հաղբատի վանքի և նրա Թրիլիսիի վանատան՝ բերդի մեծ եկեղեցու (այժմ Մեյդանի ս. Գեորգի) պատմության, մասնավորապես նրանց գրադարանի մասին գաղափար կազմելու համար, ուստի և բերում ենք թարգմանաբար ամբողջապես։

[ՀԱՂԲԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՎԻԼ-ԴԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՑՈՒՑԱԿԸ]

I. *Քրոնիկոնի 484 [=1796 թ.]. ինչ որ հանգուցյալ առաջնորդ (արաչնուրթի) Դավիթ վարդապետի՝ կահ-կարասիք կամ գրքեր կամ հագուստեղեն կամ պղնձե-ամանեղեն է, բոլորը առաջ մի առ մի կ[գուցա]կագրվի։ Ինձ՝ տեր-Ստեփանիս՝ հանձնվեց։*

II. *1 մեծ կտթաս, 1 փոքր կտթաս, 7 մաթլաս, 4 պղնձե փոքր թաս, 3 մաջուռ, 1 մեծ թեփշի, 4 փոքր թեփշի, 1 փոքր*

լագան, 1 նալբաքի, 1 գլուխ լվանալու թաս, 1 մաքլաբա, 1 պղընձե թունդի, 1 մեծ մաշխալա, 1 քաւիկիր, 1 կաշե մուշտակ, 1 մահուդի քաթիբա, 1 մահուդի վարագոյ, 1 կարա, 1 արծրումից գործված արխալուխ, 1 շապիկ զգեստաւորվելու, 1 շապիկ ընկեր (պերանգիս ամխանագի), 1 շալի գոտի, 1 զույգ հողաթափներ զգեստաւորվելու, 1 զույգ գուլպա (չուլքի), 1 կապույա թաշկինակ, 1 մեռելի սաւան։

III. Քրոնիկոնի 485 [=1797 թ.] հունվարի 3-ին։ Ինչ որ նա (Դավիթ առաջնորդը) պղնձե ամանեղեն է ավել ինձ, առաբև գրված է։

7 թեփշի, 7 լամբաքի, 1 մեծ թեփշի, 1 պղնձե թաս, 3 մաքլաբա, 3 կաթսա, 1 քաւիկիր, 1 չամչա, 1 լագան, 1 թունդի, 1 ֆանար։

IV. Ինչ որ հայերեն գ[ր]քեր (գիքեր) կամ գրքույկներ ունիմ, սա [ևս] առաբև գրված է և եկեղեցում պահեցինք։

Քրոնիկոնի 486 [=1798 թ.] օգոստոսի 1-ին. ինչ որ ժամի գրքեր[ից] ինձ մոտ է, մի առ մի գրված է առաբև։

[1.] 1 Նոր[2] Աստվածաշունչ	[Աստուածաշունչ, Ամստերդամ 1666 կամ կ. Պոլիս 1705]։
[2.] 1 Հին[3] Աստվածաշունչ	[Ջեռագիր Աստուածաշունչ]։
[3.] 1 Գիրք Սահմանաց	[Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, Ամստերդամ 1704 կամ կ. Պոլիս 1731]։
[4.] 2 Առաքել պատմագիր (Արաքել պատմագիրքի)	[Գիրք պատմութեանց շարադրեալ Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Ամստերդամ 1669]։
[5.] 1 Ածաարան	[Ածաարան, Վենետիկ 1680, 1685, 1710, 1732, 1759, կամ Ամստերդամ 1698 և այլն]։
[6.] 1 Մաշտոց (Մաշտուց)	[Մաշտոց, Ամստերդամ, 1667, 1676]։
[7.] 1 Նարեկ (Նարեկ)	[Նարեկ, կ. Պոլիս, 1701, 1721, 1755, 1763, 1774, 1783]։
[8.] 1 Մաթեոս մեկնիչ (Մաթեուզ մեկնիչի)	[Մեկնութիւն սրբոյ աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի, արարեալ և շարադրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ, Վենետիկ 1737]։
[9.] 1 Գիրք առաքինութեանց (Աբաքինութեանց գիրքի)	[Առաքինութեանց գիրք ի լատիներենէ ի հայ լեզու թարգմանեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ, Վենետիկ 1721]։
[10.] 1 Քերականութիւն Բաղդասարի (Բաղդասարին	[Քերականութիւն Պաղտասար դպրի, կ. Պոլիս, 1738, նույնը համառոտ՝ 1760]։

քերաբանութիւնի)

]11.] 1 Պարտաւճառ Սիմեոնի (Պարտաւճառի Սիմեոնեսա) [Գիրք որ կոչի Պարտաւճառ, ի Սիմէոն կաթողիկոսէ, էջմիածին, 1783]։

[12.] 1 Գիրք Խիկարի (Խիկարես ծիղնի) [Գիրք Խիկարի, կ. Պոլիս, 1708, 1731]։

[13.] 1 Գիրք ազոթից (Ազոթից գիրքի) [Գիրք ազոթից, կ. Պոլիս 1721, 1734, 1747, կամ վենետիկ 1793]։

[14.] 1 Գիրք յոթն խմաստասէրաց (Յոթն խմաստասիրաց գիրքի) [Գիրք եաւթն խմաստասիրաց, կ. Պոլիս, 1807, 1731]։

[15.] 1 Քարոզգիրք Մաաթեոսի (Քարոզգիրքի Մաթեուզիոս) [Քարոզգիրք Մաաթէոսի, վենետիկ, 1704, 1781]։

[16.] 1 Հաւաք Քարոզգիրք (Հաւաքի քարոզգիրքի) [Գիրք քարոզութեան արարեալ Գրիգոր վարդապետի Տաթեացւոյն, Ամառան հաւաք, կ. Պոլիս 1731, եւ Ձմեռան հաւաք, կ. Պոլիս 1740]։

[17.[2 եղն[լիկ] Կողբացւոց Մեսրոպ (Իղնա Կողբացու Մեսրոպես)։ [Գիրք ընդդիմութեանց արարեալ ի սրբոյ եղնիկ կողբացւոյ Հայոց վարդապետէ և յաշակերտէ մեծի Քարզմանչին սրբոյն Մեսրոպայ, Իզմիր, 1762]։

[18.] 1 Կաթուղիկեութեանց (կաթուղիկութեանցի) [կաթողիկէութեան? կ. Պոլիս]։

[19.] 1 Աբարչութիւն եւայի (Աբարչութեանցի Իվախա) [Աբարչութիւն եւայի ɔ ɔ]։

[20.] 1 Աբարոգութիւնք եկեղեցւոյ (Սազգրիս արարուգութեանցի) [Աբարոգութիւն հանապազորդեան եկեղեցւոյ Հայաստանեայց, Ամստերդամ, 1667]։

[21.] 1 Գիրք տոմարի (Տոմարես ծիղնի) [Տոմարաց գիրք Հայոց, Հռոմայեցոց և Պարզաւոմար, բնդ որոց և Տաղ Յովասափու, մարիամախաղաց և նրպատհան, Ամստերդամ, 1668]։

[22.] 1 Փոքր Սազմոս [Սազմոս, վենետիկ 1565, 1587, 1642, 1682, 1684, 1712, 1733, 1742, 1748, 1755, 1759, 1770, 1771, 1786, 1789, 1793, կամ Իւրով 1616, Լիվոռնո 1643, Ամստերդամ 1661, 1664, 1713, 1714, Մարսել 1677, 1710, կ. Պոլիս 1738, 1745, 1756, 1765, Թրիեստ 1787, Ն. Նախիջևան 1791]։

[23.] 1 Ոտանաւորի գիրք (Վուտանաուրիս ծիղնի) [ɔ]

[24.] 1 [Ձ]րսարան (Բռսարանի) [Ձրսարան հոգևկիր Սիմէոն կաթողիկոսի, ՍՊԲ, 1777]։

[25.] [1 Գիրք (Ինքնանրականիս ծիգնի) [Գիրք ընդհանրական Ներսեսի Շնորհալւոյ, ՍՊԲ, 1788]։
[26.] 2 Մազմանք (Պարակլիսի) [Աստուածաղեբս Սիմէօն կաթողիկոսի, ՍՊԲ, 1786]։
[27.] 1 Քրիստոնեական առ ընթերցողս (Քրիստոնեական առ ինքիրցողս) [ɔ]
[28.] Տաղարան [Տաղարան, Կ. Պոլիս 1698, 1701, 1740, 1788]։
[29.] 1 Տոնացուց (Տոնացուցի) [Տօնացոյց Հայաստանեայց եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1702, 1725, 1740, Վենետիկ 1782]։
[30.] 1 Հինն սաղմոս [Ձեռագիր Սաղմոս]
[31.] 1 Հինն ժամագիրք [Ձեռագիր ժամագիրք]
[32.] 1 Ցոքն իմաստասիրաց (Իմքն իմաստասիրացի)։ [Եաւքն իմաստասէրք ɔ]

Կուսանացուցմն Լ[6]

[33.] 1 Սաղմոս [Տես № 22]
[34.] 1 Հիսուս Որդի (Իսուս վուրդի) [Յիսուս Որդի Ներսիսի Կայեցւոյ, Վենետիկ 1643, 1660 (երկիցս), Մարսել 1702, Կ. Պոլիս 1724, 1746 (երկիցս), ՍՊԲ 1785, Մադրաս 1792].
[35.] 1 Աւետարան [Տե՛ս № 5]։
[36.] 1 Փոքրիկ Տաղարան [Տաղարան փոքրիկ շարահիւսեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ, էջմիածին 1777, Մադրաս 1791]։
[37.] 1 Շարական [Շարական, Ամստերդամ 1664, 1685, 1702, 1718, Կ. Պոլիս 1727, 1736, 1742, 1768, 1784, 1790]։
[38.] 1 Հինն շարական [Ձեռագիր Շարական]

Տեր-Առաքելի մոռ Լ[8]

[39.] 1 Գիրք աստղաբաշխի (Աստղաբաշխիս ծիգնի) [Գիրք աստղաբաշխութեան ɔ]
[40.] 1 Քարոզգիրք [Քարոզգիրք ɔ]
[41.] 1 Գիրչիս մշակի (ɔ)[9] [ɔ]*

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Խոսքը վերաբերում է Հայրապետի թեմի առաջնորդ Դավիթ եպիսկոպոս Հավիլ-Դարբանին։

2 «Նոր» գործածվում է իբրև «տպագիրք»-ի հոմանիշ։

3 «Հին» գործածվում է իբրև «ձեռագիրք»-ի կամ «գրչագիրք»-ի հոմանիշ։

* Ընդամենը 41 մլավոր, որոնցից առնվազն 4 ձեռագիր է։

[4] Տես ծանոթ. 3։

[5] Տես նուշնը։

[6] Ուզում է ասել, որ հետևյալ (№№ 33—38) դրքերը Տփղիսի ս. Սահակ-փանոս կուսանաց վանքն են եղել տարած։

[7] Տես ծանոթ. 3։

[8] Ուզում է ասել, որ հետևյալ (№№ 39—41) դրքերը տեր-Աւաքեն է տարել։

[9] Այս նյութի շուրջը համմտ. նաև՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Նոր նյութեր Սայաթ-Նովայի առասպելական «նահատակության» շուրջը,— «Պրոլետարը» (Թբ.) 1935 թ., № 189, ուր մենք արծարծել ենք այն թեզը, որ այս հիշատակարանների հեղինակ՝ տեր-Ստեփան [Տփղիսեցին] նույն տեր-Ստեփան Սայաթ-Նովան պիտի լինի, հետևապես 1796—1798 թթ. վարդապետ, որը չէր ապանվել Աղա Մահմադ-խանի կոդմից։ Սայաթ-Նովայի մեր ձեռքի տակ եղած դրքերը (մինչ 1766 թ.) և այս տեր-Սահակի դիրը (1796—1798 թթ.), որոնք բաժանված են իրարից մոտ 35 տարով, այնքան նմանություն ունեն, որքան ակնհայտ և հետագայում զարգացած գրի տեր անձանց։ Սայաթ-Նովայի մինչ 1766 թ. դրերը տես Սայաթ-Նովայ, Թ. 1914, նկար IV. Ի. Գրիշաշվիլի, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբ., 1918, էջ 91. Գ. Լևոնյան, Սայաթ-Նովա, Եր., 1932, էջ 49—50։ Գրացուցակը տես Լ. Մելիքսեթ-Բեկ. Անտոն I-ի «Հայահաւատության» լատիներեն-հայերեն աղբյուրները. «Թբ. Պետ. համալսարանի Աշխատություններ», XXX—B., 1947, էջ 97—112 (104—108)։

ԺԷ

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն Պ Ա Տ Մ Ի Ք

«ԿԱԽԵԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ» (1801)

Վախուշտի Բագրատիոն արքայազնի (տես այս աշխատության Գ գլուխը) կազմած «Կախեթի և Հերեթի պատմության», որ ընդգրկում է 687—1744 թթ. պատմությունը, ունեցավ իր շարունակողը, որը հանձն առավ գրելու հետագա անցքերի մասին սկսած 1744 թվից մինչև 1801 թիվը։ Այդ շարունակողը մի անանուն պատմիչ է, անկասկած, Վրաց վերջին թագավոր Դիմրդի XII-ի որդի Դավիթ արքայազն-անգևնոի (1800—1803 թթ.) մոտիկ անձնավորություն, որը հիշյալ Դավթին ընդարձակ պատումներ-ներբողներ է նվիրում։

«Կախեթի պատմության շարունակությունը», որ հիմնականում, բացի վերջին մասերից, կրկնում է Պապունա Օրբելիանու (տես այս հատորի Ը գլուխը), Օման Խերխեուլիձեի (ԺԵ գլ.) և ուրիշների հաղորդած փաստական տվյալները, հրատարակել է պրոֆ. Դ. Ջուբինովը «Քարթլիս-Ցխովրեբա»-ի II մասում (ՍՊԲ, 1854, էջ 501—516), որն և օգտագործել ենք մենք ստորև։

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1744—1801 ԹԹ.]

1745 թ.... Իրեհիմ-խան Ամիր-Ասլան-խանը[1] մոտեցավ Շուշիին։ Իսկ [Տփղիս] քաղաքի բերդն ամրացրեց Դաւթա-խանը, որը պահապան էր նշանակված պարսիկների կողմից։...

1748 թ.... Մա[ն]մատ-խան Ղաջարը, որ Նադըր-շահի[2] սպանների մեկն էր, մոտեցավ Երևանին և ճիգ ու ջանք էր թափում, որպեսզի այն գրավի։ Երևանցիք [օգնություն] խնդրեցին Թեյմուրազ Թագավորից[3], որը և գնաց իր զորքով, Մա[ն]մատ-խանին հաղթեց, շատ ավար վերցրեց, Երևանն ազատեց։ Ապա նա Երևանցիներին իրեն հարկատու դարձրեց ու վերադարձավ Տփղիս։

Շուշվա Փանահ-խանն եկավ Գյանջա՝ Թեյմուրազ թագավորն իր որդու հետ՝ միասին գնացին օգնության Գյանջային։ Լսելով նրանց գալը, Փանահ-խանն ընդհատեց Գյանջայի պաշարումը և վերադարձավ Ղարաբաղ։ Տեղեկանալով սրա մասին՝ [Վրաց] թագավորները հետամուտ եղան նրան և մտան Ղարաբաղ։ Ղարաթափա կոչված վայրում տեղի ունեցավ ճակատամարտը, և Փանահ-խանն այնտեղ պարտվեց, իսկ վրաց զորքն ավերեց բոլոր այն տեղերը մինչ Մուգան[ե]րին և այնքան ավար գտան, որ ոչխարը մի արաբով էր ծախվում, իսկ ձին, գոմեշը և կովը հինգ արաբի։ Եվ հպարտ վերադարձան՝ ավարով հանդերձ։

1749 թ. ...Ագաա-խան ազվանն ուժեղացավ Պարսկաստանում և շարժվեց Երևանի դեմ։ Երևանցիները [օգնություն] խնդրեցին Թեյմուրազ թագավորից, որն ուղարկեց իր որդի Էրեկլեին երեք հազար հեծյալներով։ Երբ Էրեկլեն հասավ Ղըրխբուլախ, նա (Ագաա-խանն) էս եկավ, հետն ունենալով տասն և ութ հազարից ավելի մարդ։ Տեղի ունեցավ ճակատամարտ։ Ագաա-խանը պարտվեց վրացիներից, Երևանը փրկեցին և [վրացիք] հպարտ վերադարձան բազմաթիվ ավարով։...

1751 թ. ... Թեյմուրազ թագավորն իր որդի Էրեկլեի հետ միասին գնաց Գյանջա, ուր նրան ներկայացան Գյանջայի, Շուշվա և Ղարաբաղի խաները, որոնց և Էրեկլե թագավորի հրամանով կալանավորեցին։...

...[Հաջի-Ջալաբի որդի] Ագաբիշին՝ շրջելով Շամշադինն ու Ղազախը՝ եկավ Բայդար։... Ապա [Վրաց] թագավորները եկան Շամշադին՝ Թուլքի-Թափա կոչված տեղը, ուր տեղի ունեցավ ճակատամարտ, և Ագաբիշին պարտվեց։...

1753 թ. ... Բարչալուեցիք տեղահան եղան ու բնակություն հաստատեցին Ղարաստուում՝ Երևանի մոտ։ Ապա Էրեկլե թագավորը զորք ժողովեց, եկավ Երևան, նրանց վրա հարձակվեց ու տեղահան արեց Բորչալու։...

1757 թ. ...Փաթալի-խան ավշարը, հավաքելով Ապրեջանի հեծյալներին, [եկավ ու] մոտեցավ Շուշուն, և օգնություն խընդրեց [Վրաց] թագավորից, որը հեծելազորք ուղարկեց, իսկ երբ սրանց դեմ շարժվեց Քարիմ-խանը[ֆ], այն ժամանակ Վրաց հեծելազորքը վերադարձավ։...

1767 թ. ...[Էրեկլե] թագավորը գարնայել զորք ժողովեց և հարձակվեց Երևանյան [երկրի] գյուղերի վրա, որոնց

վրացինները գերեցին և մեծ ավարով վերադարձան։ Այդ պահին Բամբակը ավեր էր։ Նրա (Էրեկլեի) անդրանիկ որդի Գիորգին[6] խնդրեց այն տալ իրեն և նա [վերա]շինեց այն։...

1769 թ. ...Էրեկլե թագավորը կրկին արշավեց քյուրդերի վրա, ավերեց նրանց, և վրացինները մեծ ավարով վերադարձան։

1772 թ. ... Ժողովեցին զորախումբ, բոլշևլուեցիք և վամբակեցիք և գերեցին Նախիջևանը. տեղացի Շաքուր[ա]լի-խանին հպեցին։...

1778 թ. ... Էրեկլե թագավորն և Շուշվա խան Իրրա[հ]իմը՝ համաձայնության գալով՝ գրավեցին Գյանջան, կալանավորեցին Գյանջայի Մա[հ]մադ-խանին ընտանիքով հանդերձ, որին Շուշվա Իրրահիմ (Իրրահիմ) խանը գերի տարավ։...

1779 թ. ...Երևանի խան [Հ]ուսեյն-զուլին հրաժարվեց հարկ վճարելուց վրացիներին, որի պատճառով [Էրեկլե] թագավորը գնաց նրա դեմ. Այնտեղ տեղի ունեցավ պատերազմ, ուր խոպտխությամբ հանդես եկավ արքայազն Գիորգին։ Այդտեղ Երևանյան զորքը հպեցվեց թագավորից, որը հարկատու դարձրեց [Երևանցիներին] և շատով վերադարձավ [Տփղիս]...

1782 թ. ...Երևանի խան [Հ]ուսեյն-զուլին մեռավ ու խան դարձրին նրա որդի Ղուլամուլին։ Քանի որ վերջինս թեթևամիտ էր, երևանցիները նրան սպանեցին։ [Էրեկլե] թագավորը հարկադրված եղավ ուզարկելու այնտեղ Միրզա Գաւրգինա Էնակոլոփաշվիլուն[7], և [Հ]ուսեյն-Ալիխանի կրտսեր որդի Մահմադ-խանին խան դարձրին։ Եվ սրան թագավորի հրամանով Երևանի խան հաստատեցին։...

1785 թ. ...Երևաց Նուբաթլ-բեկի որդի Օմար-խան Ավարցին, որն անցավ Քուրին և Ղարայազն (Ղա՛րախա), անցավ Կուրը, մոտեցավ Ախալալային, որն և գրավեց, ապա գնաց Ախալցիխե։... Օմար-խանն անցավ Գյոքչան, հասավ Շամքոր, որն և ավերեց ու հետացավ։

1786 թ. ...Նախիջևանցիք խռովություն գցեցին և Նախիջևանից քշեցին իրենց Քալբալի-խանին, որն եկավ [Երևան] ու [օգնություն] խնդրեց Երևանի խան Մահմադից, իսկ Մահմադխանն [օգնություն] խնդրեց [Էրեկլե] թագավորից։ Ապա թագավորն իր փեսա՝ Մուխրանի տեր Իոաննեին ուղարկեց զորքով և թնդանոթներով, որոնք երևանցիներին մեացան, գնացին Նախիջևան, ուր և տեղի ունեցավ ճակատամարտ։ Պարտվեցին նախիջևանցիները, և խնդրեցին վրացական զորքից. «Եթե [վրացա-

կան] զորքը Նախիջևանը թողնի (Նախիջևանից հեռանա), Նախիջևանցիք զարձյալ իրենց խան կկարգեն Քալբալիին։ Եվ այս պայմանով [վրացական զորքը] հաղթական վերադարձավ Երևան, և Երևանից Քարթլի։ Ղազախ[եցիք] ամրողջապես տեղահան եղան ու գնաց[ին] Շուշի, իսկ Շամշադեցի[ք]՝ Գյանջա։ Մի տարուց հետո Էրեկլե թագավորը ռուսական և վրացական զորքի հետ գնաց, որպեսզի տեղահան անի քոչվորներին և Ծամասայի մելիքներին, որոնք պայման ունեին զրած թագավորի հետ։ Տանեալով Գյանջային՝ նա իր որդի Յուլոնին զորքով ուղարկեց [Ղարաբաղ]։ Երբ որոնք հասան Ջեյրա, հանդիպեցին զարաբաղցոց զորքին։ Ղարաբաղցիք պարտվեցին։ Շատ զարաբաղցիներ կտտորվեցին [վրացիներից]։ Այս պահին Գյանջա եկավ ռուբրանդակը (չափարը) Ռուսաստանից, ուր ետ էր կանչվում ռուսաց զորքը։ Երբ ռուսները ետ քաշվեցին, [Էրեկլե] թագավորն այլևս կարևոր չհամարեց գնալ Ղարաբաղի դեմ, և թագավորը վերադարձավ Գյանջա՝ տեղահան չանելով քոչվորներին։ Իսկ ռուս[ներ]ը 1787 թվին գնացին։

1789 թ. ...[Վրաց զորքը] հասավ Շամքոր, ավերեց Զընգըլին (Զինգիլը), տեղահան արավ Շամքորը։ Այնտեղ եկավ Դաբուբանդի Փաթալի-խանը և Շաքիի Մահմադ-խանը, որոնք և որոշեցին երեքով Ղարաբաղի դեմ գնալ, քանի որ Իրբևիմ-խանը մոռացության էր ավել Էրեկլե թագավորի լավությունը։

...Լեզգիները... ջնասում էին Քարթլիին և Սոմխիթին։...

...Միքել Արղութաշվիլին առաջնորդում էր լեզգիներին որոնք կրծանիսը գրավեցին... ապա Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ [լեզգիները] գրավեցին Ղալայչին (Ղալաչա), որտեղից և տարան երկու հարյուրից ավել հայ գերիներ։

...Թագավորի հրամանով Դավիթ արքայազնը[8] հազար մարդով հարձակվեց Ղարսի վրա և գերեց Ինջադարանը, Փալդերեվանը և Ջոմուշլուն, և տարան հազարից ավելի գերի։ Ապա նահից նրանց մոտեցավ թուրքական մեծ զորքը՝ Խաթունի որդիները Ալի-բեկի և Մա[հ]մադ-բեկի գլխավորությամբ։ Այդտեղ ինքը Դավիթ արքայազնը քաջարի էր, որն իրեն իսկ ձեռքով սպանեց թուրքական ականավոր զորական Թիքնիսի խան Թոփանչիբաշին։... Աշիշ-բեկը հայանի զորական էր ամրողջ Ղարսում և գյուրգների մեջ և որն Դավիթ արքայազնին թուրով յոթը հարված հասցրեց։ Սակայն նրան պաշտպանեց վերտ զրահը, քանի որ նա շորի տակից հագած ուներ վերտ զրահ։ Եվ

վերջինս արքայազնի ձեռքից [վերավորվելով], մեռավ:... Ապա լեզգիները Ախալցխեից եկան Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ և գրավեցին Գյաուրարիսը:...

1790 թ. ...[Երեկլե Թագավորը] տեղատան արավ Շամշադինցիներին ու վռնտվեց Նուլավեր: [Վրացիք]'... հասնելով Շամշադին՝ Մահմադ-խանի ու նրա զորքի վրա հարձակվեցին: Եվ ոչ միայն հաղթեցին Մահմադ-խանին... Եվ չնայած, որ Թագավորը Շամշադինը քանիցս գյանջեցիներին էր տվել, սակայն չէին հնազանդվում: Մի ատ ժամանակ սպասելով՝ Ջավադ-խանը Գյանջայի և մելիքների զորքով հարձակվեց ու գերեց Շամշադինը, և ուներ նա երեք հազարից ավելի զորք: [Շամշադինցոց] զազախեցիք եկան օգնության, իսկ զազախեցիք և շամշադինցիք երեք հարյուրից ավելի չէին: Սրանք հաղթեցին Ջավադ-խանին և գերեցին ութ հարյուրից ավելի գյանջեցիներ:...

[Ապա Մահմադ-խան]-Ջոջան՝ Պարսկաստանի գործերից իրեն ազատ համարելով՝ եկավ ու մոտեցավ Շուշիին, քանի որ Շուշվա խան Իբրե[հ]իմը նրան չէր հնազանդվում: Սակայն նա չկարողացավ գրավել այս բերդը: Ապա Քարթլիի քաչվորները՝ հներն ու նորերը, և Դարբազի բնիկներից էլ շատերը՝ երկյուղ կրելով Ջոջայից՝ [խնդրեցին օգնություն]. Ուստի և արքայազնը Յուլոնը և Ալեքսանդրեն[9] հարձակվեցին Գյանջայի վրա և գերեցին այն:...

1795 թ. ...Շուշվա Իբրե[հ]իմ-խանը եկավ Գյանջայի վրա: Քանի որ Գյանջայի խանը Դարբազի և Տփղիսի ավերման պատճառն էր, նա օգնություն խնդրեց Թագավորից, որն ուղարկեց իր որդի Ալեքսանդրեին և Քոռն Դավթին... սրանց սպասքագործություններից սպասած էին զարբազցիները ու լեզգիները:...

1796 թ. ...Ագա-Մա[հ]մադ խանը՝ Խորասանի գործերից ազատ զգալով իրեն՝ շարժվեց դեպի Շուշի: Տեղեկանալով նրա գալու մասին՝ Իբրե[հ]իմ խանն իր տուն ու տեղով քաշվեց Բեյլաքան, և Ագա-Մա[հ]մադ խանը գրավեց բերդը: Նույնտեղ նա սպանվեց իր ծառաներից [մեկի] ձեռքով 1797 թվին:...

1798 թ. ...վեճ ծագեց Քարթլիի և Դարբի միջև: Ուստի և [Դիմբգի] Թագավորն ուղարկեց իր որդիներ Դավթին և Իոանեին, որոնք հարձակվեցին Դարբի վրա և գրավեցին Ղզլչախչախի շրջակայքը: Ապա մեծ զորքով գնաց եկավ Ալի-բեկը, և օսմանցիք վրացիներից պարտվեցին:...

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Երևանի խան։*

[2] *Նազըը, Պարսից շահ, 1736—1747 թթ.։*

[3] *Թեյմուրազ II, Քարթլիի թագավոր, 1744—1762 թթ.։*

[4] *Խոսքը էրեկլե II-ի մասին է, որ նախեթի թագավոր էր 1744—1762 թվականներին և Քարթլիի և կախեթի՝ 1762—1798 թթ.։*

[5] *Քերիմ-խանը, հետագայում Պարսից շահ, 1761—1779 թթ.։*

[6] *Գիորգի XII, Վրաց վերջին թագավորը, 1798—1800 թթ.։*

[7] *Լեզուները իմացող քաղաքագետ, որի մասին մանրամասն տես Դալլաստ Շերմազանեան, Նիւթեր ազգային պատմութեան համար. երեւելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 284—294։*

[8] *Վրաց վերջին թագավոր Գիորգի XII-ի որդին, Վրաստանի ռեգենտ 1800—1803 թթ. (մանրամասն տես հետևյալ՝ ԺԹ գլուխ)։*

[9] *Ալեքսանդրե արքայազն՝ Սահակ Մելիք-Ազամալյանի փեսան, որի մասին խոսում են Խ. Աբովյանը (Վերք Հայաստանի, գլ. III) և Բաֆֆին (Ալեքսանդր արքայազնը Պարսկաստանում), համմա. Լ. Մելիքսեթ-Բեկ, Խ. Աբովյանը Թբիլիսում և «Թուրքի ազդիկը» պատմվածքի տեղադրությունը,—«Գրական հանդես» (Թբ.) 1941 թ., № 1, էջ 34—35։ Համմա. ԺԹ գլխի 14-րդ ծանոթ. (էջ 210)։*

ԺՐ

ԻՈՆԱ ԳԵՐԵՎԱՆԻՇՎԻԼԻ

«ՈՒՂԳՐՈՒԹՅՈՒՆ» (1805—1810)

Իոնա Գաբրիելի որդի Գեգեվանիշվիլին XVIII—XIX դդ. վրաց նշանավոր ուղեգիրներից մեկն է, որի գրչին է պատկանում «Ճրջագայություն» (Միմոսվլա) կամ «Ճանապարհորդություն» (Մոգզաուրոբա) վերնագրով երկը XVIII դ. 80—90-ական թվականներին կատարած իր ճանապարհորդության տպավորություններով։

Գեգեանիշվիլին ծնվել է 1737 թ.։ Իր կրթությունը ստանում է Անտոն I Վրաց կաթողիկոսի ղեկավարությամբ, և ապա վերջինից ձեռնադրվում է կուսակրոն սարկավագ՝ ընդունելով Իոնա անունը։ Ապա Անտոնի գահընկեցությունից հետո (1755) ուղևորում է նրան Ռուսաստան և նրա հետ էլ վերադառնում է, նշանակվելով Մցխեթի բլրի ս. Խաչ վանքի (Ջվարիս-մոնաստեր) վանահայր։ 1775 թ. ձեռնադրվում է եպիսկոպոս, ստանալով Ռուխի և Սուբրամի աթոռը՝ մետրապոլիտի կոչումով, որի կապակցությամբ և հայտնի է դառնում «Մրովելի», այսինքն «Ռուխեցի»-ի հորջորջումով։ 1780 թ. մի ինչ որ անհայտ պատճառով կարգալույծ է արվում և ապաշխարանքի ուղարկվում Դավիթ-Գարեջայի անապատը (Ղարայազի մոտ), որտեղից փախչելով գնգերում է՝ Քութայիս, Տփղիս և այլուր, վերջը անցնում է Ախալցխեն, որ այն ժամանակ Թյուրքիայի սահմաններուն էր մտնում, և տեղական վաշայի օժանդակությամբ անցնում է Կ. Պոլիս, ուր տիեզերական հույն պատրիարքից վերականգնվում է հոգևոր կոչման մեջ և ապա սկսում իր երկարամյա ճանապարհորդությունը. շրջում է Միջերկրական ծովի ափագոտով, անցնում է Կիև, ուր մնում է մոտ 3 տարի, վերջապես 1795 թ. ուղևորվում է Մոսկվա, հաստատվելով Կրեմլի «Զուդովի» վանքում, ուր մնում է ցմահ՝ մինչ 1821 թ.։

Իոնա Գեղեվանիշվիլի Ռաբխացին (Մրավելին) իր ճանապարհորդության տպավորությունները գրի է առել Մոսկվայում եղած ժամանակ՝ 1805—1810 թթ. միջոցին։

Իր «Ուղեգրության» մեջ Իոնան, ի միջի այլոց, տալիս է տեղեկություններ նկարագրած վայրերի հայերի մասին, որոնց հիշատակում է իբրև վաճառականների, նաև հայոց եկեղեցիների մասին, մանավանդ Երուսաղեմի «Քրիստոսի գերեզմանի» շուրջը, նշում է իր հանդիպումները Յասսայում առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ 1791 թվին և այլն։

Իոնա Գեղեվանիշվիլու գրվածքը հրատարակվել է վրացերեն, Պլատոն Իոսելիանու առաջաբանով և ծանոթագրություններով, Թիֆլիսում 1852 թվին առանձին գրքով՝ «Միմոավլա անու մգզավրթա» («Շրջագայություն կամ ճանապարհորդություն») վերնագրով, որտեղից և թարգմանել ենք համապատասխան հատվածները։

«ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

...[Կ. Պոլսում]... *քաղաքում, որ շրջապատված է պարսպով, քսան և չորս եկեղեցի կա վայելչատես՝ ուղղափառների, և մեկն էլ հայոց* (sic), *իսկ ֆրանկ-կաթոլիկների և ոչ մեկը*[1]....

...[Երուսաղեմում]... [Ամագ] *շարաթ երեկոյան թուրքերը (թաթարները) փակեցին Քրիստոսի գերեզմանի [տաճարը], ուր դեհետավարված գնաց Նաղարեթի և Էպիտրոպի կամ Դիվեի մետրապոլիտ Գերասիմը (Դևրասիմոսը), և տարան կանթեղը. ապա դուռը բացին, և մտան Քրիստոսի գերեզմանի [տաճարը], որտեղից հանեցին վառած կանթեղը. իսկ վառած մոմերը մետրապոլիտը երկու ձեռքով տվեց ուղղափառներին, և [մյայն] ձախ ձեռքով հայերին, որոնք էրմաններ (էրման) են։... Սուբբ գերեզմանի [տաճարին] կից փոքր եկեղեցի է կառուցված՝ զպատական, դեպի ձախ ֆրանկների վանքն է, իսկ աջ կողմում բարձրաշեն հայոց եկեղեցին է գտնվում, արևմուտքից՝ ասորոց և մարոնիտ զպանների։... Իսկ սուբբ գերեզմանի վրա վառած են կանթեղներ ամենայն օր և ամենայն ժամ՝ տասնևվեցը մեր ուղղափառների, տասնևերկուսը լատինացոց, ութը հայոց, չորսը զպանների, երկուսը մարոնիտների և մեկն ասորոց*[2]...

[Վենետիկ] *քաղաքից դուրս ծովի կողմում գտնվում է հայ կաթոլիկների փոքր վանքը։ Վանքում կա մի փոքր եկեղեցի.*

տները փոքր են և շուրջը ծով է. ունեն իրենց լեզվով գրքեր տպող տպարան[3]:...

[Յաասայում] տիրում էր ուրախություն, տեղի ուներ պատրանդեա ու մեծ ճաշկերույթ [պալատի] վերնատունը, տրված [իշխան] Բեզբորոդկոյի կողմից, ուր մուտքը հրավիրատոմսերով էր [1791 թ. դեկտեմբերին ռուս-տաճկական պաշնագիրը կնքելու առթիվ]: Ինձ ևս [Բեզբորոդկոն] ուղարկել էր հրավիրատոմս: [Այնտեղ] էին Ամբրոսի [մետրապոլիտը], ևս և Երոպոլի [եպիսկոպոս] Գրիգորը, նաև հայոց երեցապետ (արքերեց) Հովսեփը[4] և օտարերկրացի բազմաթիվ մարդիկ և բոլոր գեներալները և լենոց հնձելազորքի մեծամեծները: Հենց որ հասանք տեղը, սկսվեց նեստը վերնատունը. Մտավ Ամբրոսին և նստեց Բեզբորոդկոյի աջ կողմը, ես ևս անցա ու նրա կողքին նստեցի, ապա իմ կողքին Երոպոլի [եպիսկոպոս] Գրիգորը և նրա կողքին հայոց երեցապետ (արքերեց) Հովսեփը: Իսկ Բեզբորոդկոյի ձախ կողմն անցավ ու նստեց կոմս Պոտոցկին՝ ոսպես կապույտ ժապավենով և ապա այլ լենացիք, իսկ մյուս կողմում տեղիս զորապետները, համարյա Ռուսիայի գեներալները՝ մոտ չորս հարյուր հոգի, և Մոլդավիայի բոյարները, այսինքն պաններ-մածնուններ:...

... Կոմս Ռումյանցևը, որը փիժ գետի ափին էր կանգնած, գնաց Ռուսիա. ապա և կոմս Բեզբորոդկոն պատրաստվեց ուղևորվելու, և բոլոր հոգևորականներս եկանք հրաժեշտ տալու: Ինձ կրկին էին հայոց երեցապետ (արքերեց) Հովսեփին, որն ասում էր, թե՝ «Ես այգուց՝ [առմանից դուրս] ճանալը լավ չէ, ավելի լավ է մտնես Ռուսիա, որը լավ է, քան Թուրքիան, և նրանց (Թուրքերի) երկիրը, այս երկիրը Թուրքերին է ճնում, իսկ քեզ համար ավելի լավ է Ռուսիան»: Եվ ևս (Իոնան) նրա կամքին հնազանդվեցի: Երբ [Հովսեփն] ինձանից հեռացավ, հրամայեց. քո անունով հրամանագիրը շուտով կատարվի:...

...Գեներալ անշեֆ Վալկոնսկին ևս մեծ խնճույք և ճաշկերույթ սարքեց,... [ուր] նորից էին վերոհիշյալ երեցապետները:...

...Այս՝ [Ռոմանիա] քաղաքում բնակվում են վաճառականներ՝ մոլդավացիներ, հայեր ու հրեաներ[5]...

Յասսա քաղաքում... բնակվում են վաճառականներ՝ եվրոպացիներ, հայեր և հրեաները...

[Ապա-Մանմապ-խանի կողմից Տփղիսի ավերումից հետո ուսանելը] գրավեցին Գյանջան, որն ելիսավետպոլ կոչեցին, և Շուշվա բերդը և Շամախին (Շամախիա), Դարբանդը, Բաքուն:...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Կասկածելի է, որ Իոնա Գեղհանեշվիլու Գ. Գոլսում գտնված ժամանակ՝ XVIII դ. 80-ական թվականներին, այնտեղ միայն մի հայոց եկեղեցի լիներ, իսկ կաթոլիկների և ոչ մեկը:

[2] Նորայր վարդապետ (այժմ եպիսկոպոս) Պողարյան, Համառոտ ակնարկ հայ երուսաղեմի վրա, «Էջմիածին», 1951 թ. ապրիլ-հունիս, էջ 89—92, հուլիս-օգոստոս, էջ 77—80:

[3] Խոսքը Վենետիկի Մխիթարյան միաբանության տպարանի և հրատարակչության մասին է:

[4] Խոսքը Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մասին է և վերջինիս գործունեության այն շրջանին է վերաբերում, երբ նա գտնվում էր Յասսայում. տես Լ. Ե. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թ., 1902, էջ 75—86. Գ. Ե. ա. ք. Աղանեան, Դիւան Հայոց պատմութեան, դիւք Թ., Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մ. առաջին. 1778—1800, Թ. 1911, էջ 120, 121, 309:

[5] Մոլդավիայի հայերի մասին տես Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911:

ԺԹ

ԴԱՎԻԹ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

«ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1814)

Արքայազն Դավիթ Բագրատիոնը Գիւրգի XII վերջին թագավորի որդին էր, ծնված 1768 թ., ապա 1795 թ. ռուսաց գնդապետ, գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, ենիսաոր և զանազան չքանշանների առոլետ, 1800—1803 թթ. մինչդին Վրաստանի անգլիա, վախճանված Պետերբուրգում 1819 թ.։

Դավիթ արքայազնը գրականության մեջ հռչակ է ստացել իբրև պատմաբան, հարել է «վոլտերական» հոսանքին։ Նրա գրական գործերից հայտնի են. 1. «Վրաստանի համառոտ պատմություն», որ հեղինակը գրել է ռուսերեն և հրատարակել Պետերբուրգում 1805 թվին՝ Краткая история Грузии со времени первого в оной населения *(նույնը բ. հրատ. К. Н. Бестужев-ի առաջարանով, Թր., 1893). 2. «Վրաց օրենսգիրքը», որ դեռևս հրատարակված չէ (վաղուց պատրաստել էր տպագրության հանգուցյալ վրացագետ Մ. Գորգաձեն). 3. «Նոր պատմություն», գրի առնված 1814 թվին, որը 2 հրատարակություն ունի. ա. Մ. Ջանաշվիլու խմբագրությամբ՝ «Նյութեր Վրաստանի պատմության համար, ժողված արքայազն Դավիթ Գիւրգիի որդու ու նրա եղբայրների կտակից», վրացերեն, Թր., 1905, էջ 1—126, և բ. Թ. Լոմտատիդու խմբագրությամբ՝ «Դավիթ արքայազն. Նոր պատմություն», Թր., 1941, էջ 1—44։ Բացի դրանից Դավիթ արքայազնը հեղինակ է հատուկ գեկուցագրի ռուսերեն լեզվով «Վրաստանի լավ կազմակերպման մասին» (*И. К. Ениколопов, Две записки царевича Давида „О лучшем устройстве Грузии“,— „Материалы по истории Грузии и Кавказа“, 1942, выпуск I, Т. 1942, стр. 121—167).

Սրանցից երկրորդը տեղ-տեղ անանունի «Կախեթի պատ-

մության շարունակության» (ես այս հատորի ԺԷ գլուխը) կրկնությունն է ներկայացնում։

Կ. Կեկելիձեն (Նոր գրավոր աղբյուրներ Լաշա-Գիորգիի պատմության, վրացերեն,—«Թր. պետ. համալսարանի Աշխատություններ», XVI, 1940, էջ 91, ծանոթ. 1) գտնում է, որ «Նոր պատմություն» կոչված երկի հեղինակը Դավիթ արքայազնը չվիտի լինի, այլ՝ Բագրատ արքայազնը, քանի որ այնտեղ Դավթի մասին երրորդ դեմքով է խոսվում և, բացի դրանից, այն լի է աքանչելագործությունների նկարագրությամբ, որ Դավիթ արքայազնին, իբրև «վոլոտերականի», չի սազում։ Սակայն այս դիտողությունները մեզ համոզեցուցիչ չեն թվում, քանի որ հեղինակը իբրև, իբրև պատերազմական և քաղաքական գործողություններում մասնակցողի, կարող էր երրորդ դեմքով հիշատակել, իսկ հրաշագործությունների նկարագրությունները կարող էին նշել երկաբերության լրացնող-շարունակողները կամ հետագա խմբագիրները, որոնցից մեկը՝ Բագրատ արքայազնը՝ այն հասցրել է մինչև 1824 թ., իսկ մյուսները մինչև 1840 թ.

Ըստ իս, «Նոր պատմություն»-ը, որ մեզ հասել է Բագրատ արքայազնի ինքնաձեռագիրը «Նոր պատմութ» մեջ մտնված, իսկ մի այլ ձեռագրում շարունակվում է մինչև 1840 թ., 2 շերտից է բաղկացած. մեկը հիմնական, որ Դավթի արքայազնինն է և առանց փակագծերի է բերված և մյուսը՝ անանունի կրկնությունը, որ մեր կողմից անկյունավոր փակագծերի մեջ է ամփոփված։ Իսկ Բագրատ արքայազնի և հետագա շարունակողների գործերը օգտագործում ենք համապատասխան գլուխներում (ԻԹ և ԻԶ գլուխները)։

Առաջ քաղվածքները մեր թարգմանությամբ բերում ենք ըստ Մ. Ջանաշվիլու և Թ. Լոմոուրու հրատարակությունների, որոնք իրար լրացնում են։

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1745—1812 ԹԹ.]

I[1]

1745 թվին... Իրե[ն]իմ խանը... եկավ մոտեցավ Շուշինի-Իակ Տիղիս քաղաքի բերդն ամրացրեց Դուբա-խան բեկ Ղազախեցին, որը պահապան էր նշանակված պարսիկների կողմից։...

1748 թ. ... Մա[ն]մագ-խան Ղաջարը, որ Նագըրի սպանող-ներից մեկն էր, մոտեցավ Երևանին և ճիգ ու ջանք էր թա-փում, որպեսզի այն գրավի։ Երևանցիք [օգնություն] խնդրեցին Թեյմուրազ Թագավորից, որն և գնաց իր զորքով, Մա[ն]մագ-խանին հաղթեց, շատ ավար վերցրեց, Երևանն ավերումից փրկեց, բայց [ամրոցչ] Երևանն իրեն հարկատու դարձրեց, ապա վերադարձավ Տփղիս։

Նույն՝ [1748] թվին... Շուշվա Փանահ-խանն եկավ Գյանջա և շրջապատեց այն։ Լսելով այս, իսկույն և նեղ Գյանջային օգ-նության գնաց Թեյմուրազ Թագավորն իր որդի Էրեկլե Թագա-վորի հետ միասին։ Լսելով նրանց գալը՝ Փանահ-խանն ընդհա-տեց Գյանջայի պաշարումը և վերադարձավ Ղարաբաղ։ Տեղե-կանալով սրա մասին՝ [վրաց] Թագավորները հետապնդեցին նրան, մտան Ղարաբաղ։ Ղարաքափա կոչված վայրում տեղի ունեցավ ճակատամարտ, և Փանահ-խանն այնտեղ պարտվեց, <և [նրա] բնպանորներն ու գինարանը (բուխանան) ամրոցչ գրավեցին>։ Վրաց զորքն ավերեց մինչ Մուղափերրին կա-մուրջը և այնքան ավար գտան, որ ոչխարը մի աբասով էր ծախվում, իսկ ձին, գոմեշը և կովը հինգ աբասի։ Եվ [վրաց Թագավորները] հաղթող վերադարձան՝ <նրանցից խլած բնդա-նոթները բերելով և գնելով Թելավի և Գորու բերդերում>...

1749 թ. ...Ագաա-խան ազվանն ուժեղացավ Պարսկաստա-նում և շարժվեց Երևանի դեմ։ Երևանցիները նորից [օգնու-թյուն] խնդրեցին Թեյմուրազ Թագավորից, որն ուղարկեց իր որդի Էրեկլեին երեք հազար հեծելազորքով։ Երբ Էրեկլեն հասավ Ղըրխբուլախ, նա՝ (Ագաա-խանն) ևս եկավ, հետն ունենալով տասն և ութ հազարից ավելի մարդ։ Տեղի ունեցավ ճակատամարտ։ Ագաա-խանը պարտվեց վրացիներից, Երևանը փրկեցին և [վրա-ցիք] հաղթող վերադարձան բազմաթիվ ավարով։... [Թեյմուրազ] Թագավորին ներկայացան [Գյանջայում] Գյանջայի, Շուշվա (վաբխանով՝ Շաքիի և Շիրվանի) և Ղարադաղի խաները, որոնց և Էրեկլե Թագավորի հրամանով կալանավորեցին։

1751 թ. ...Ագաքիշին՝ շրջելով Շամշադին և Ղափան՝ հա-սավ Բայդար...

1752 թ. ...բորչալուեցիք տեղահան եղան ու բնակություն հաստատեցին Ղարասուում՝ Երևանի մոտ։ Ապա Էրեկլե Թագա-վորը զորք ժողովեց, եկավ Երևան, տեղահան արավ սրանց ու տեղափոխեց նորից Բորչալու։...

1757 թ. ...Մահմադ-Հասան Ջաջարը... գրավեց Պարսկաստանի ավելի քան կեսը ու մոտեցավ Շուշուն... Իսկ երբ Շիրազում երևաց Քարիմ-խան Զանդը, այս Մահմադ-[Հ]ասան Ջաջարը [Շուշիից] գնաց նրա դեմ:

<...Թելավի պարոնում նա (Անտոն I կաթողիկոսը) պատուոյ նշանակեց հայ քահանա տեր Փիլիպե Դ'այթմազովիլուն, որը մեծ գիտնական էր և փիլիսոփա՝ ինչպես հին փիլիսոփայութեան տեղյակ, նույնպես և նորում հույժ վարժված...>[2]:

Այս պահին եկավ Փաթալի-խան Ավշարը, որը զորք ժողովեց Ադրբեջանում ու մոտեցավ Շուշուն, խնդրելով օգնութիւն [Վրաց] Թագավորից, որն և տասըրեց նրան զորք...

1767 թ. ...[Էրեկլե] Թագավորը նորից զորք հավաքեց և հարձակվեց Երևանյան [երկրի] քյուրդերի վրա, որոնց դերեց, և վրացիները մեծ ավարով վերադարձան:...

<1772 թվին... բոլշաուսեցի և մեր այլ քաչվորները ան ու ոարսամի գեղերին Ախալցխեի և Դարբի կոմերում>:

Ապա ժողովեցան զազախեցիք, բոլշաուսեցիք և փա[մ]բակցիք, և գնեցին Նախիջևանը. տեղացի Շուբուր-Ալի-խանին հազթեցին:...

... Էրեկլե Թագավորը սուլթանի Դուռն Մասամբուլ ուղարկեց իր դեսպան՝ երկիցս մերոց Գուրգինա Էննակոլոփաշվիլուն...

Էրեկլե Թագավորը և Շուշվա Իրրահիմ-խանը՝ համաձայնութեան գալով՝ 1778 թվին, քրոնիկոնի 466-ին գրավեցին Գյանջան և կալանավորեցին Գյանջայի Մահմադ-խանին ընտանիքի հետ միասին, որին Շուշվա Իրրահիմ-խանը գերի տարավ:...

1779 թ. ... Երևանի խան [Հ]ուսեյն-Ալիխանը հրաժարվեց հարկ վճարելուց վրացիներին, որի պատճառով [Էրեկլե] Թագավորը գնաց նրանց (երևանցիների) դեմ: Այնտեղ տեղի ունեցավ պատերազմ, ուր խիղախությամբ հանդես եկավ արքայազն Գիորգին: Այդտեղ երևանյան զորքը հաղթվեց Թագավորից, որն շտապ վերադարձավ [Տփղիս]:...

1781 թ. ...մեռավ Երևանի խան [Հ]ուսեյն-զուլին, և Էրեկլե Թագավորը խան նստացրեց նրա որդի Դուլամանին: Քանի որ վերջինս թեթևամիտ էր, երևանցիները նրան սպանեցին: [Էրեկլե] Թագավորը հարկադրված եղավ ուղարկելու այնտեղ մերզա Գուրգինա Էննակոլոփաշվիլուն, և [Հ]ուսեյն-Ալի-խանի

Կրտսեր որդի Մահմադ-խանին խան դարձրին։ Եվ սրան թագավորի հրամանով Երևանի խան հաստատեցին։...

1785 թ. ...Երևաց Օմար-խան Ավարցին, որն անցավ Իրբին և Ղարայազի կողմերը, անցավ Կուրը, մոտեցավ Ախտալային, որն գրավեց, ապա գնաց Ախալցիխե։... Շահվերդ-խանի որդի Ռահիմ-խանը, որին այն ժամանակ Իրբահիմ-խանը կանոնավորել էր, Շուշուց ելավ և Գյանջայի խան դարձավ։... Իսկ Օմար-խանն անցավ Գյոքչան, հասավ Շամքոր, որն ավերեց ու հեռացավ։

1786 թ. ...Նախիջևանցիք խոստություն գրեցին և Նախիջևանից քշեցին իրենց Բալթալի-խանին, որն եկավ [Երևան] ու [օգնություն] խնդրեց Երևանի խան Մահմադից, իսկ Մահմադ-խանն [օգնություն] խնդրեց [Էրեկլե] Թագավորից։ Ապա Թագավորն իր վեզիր՝ Մուխթարանի տեր Իոանեին ուղարկեց դորքով և թնդանոթներով, որոնք երևանցիներին մրցան, գնացին Նախիջևան, ուր տեղի ունեցավ ճակատամարտ։ Պարտվեցին Նախիջևանցիները և խնդրեցին վրացական դորքից, քև որ Նախիջևանից [վրացիք] հեռանան, Նախիջևանցիք գարձյալ իրենց խան կկարգեն Բալթալիին։ Եվ այս պայմանով [վրացական դորքը] հաղթական վերադարձավ Երևան և Երևանից Բարթլի։ Ղազախ[եցիք] ամբողջապես տեղահան եղան, գնաց[ին] Շուշի և Շամշադիլ-Գյանջա։ Մի տարուց հետո Էրեկլե Թագավորը ռուսական և վրացական դորքով գնաց, ալպագի տեղահան անի քոչվորներին ու Ծամասպի մելիքներին, որոնք պայման ունեին գրած Թագավորի հետ։ Մոտենալով Գյանջային՝ նա իր որդի Յուլոնին դորքով ուղարկեց [Ղարաբաղ]։ Երբ սրանք հասան Զեյքա, հանդիպեցին գարաբաղցոց դորքին։ Ղարաբաղցիք պարտվեցին. շատ գարաբաղցիներ կտտորվեցին [վրացիներից]։ Այս պահին Գյանջա եկավ սուրհանդակը (չափարը) Ռուսաստանից, որին ունկնդիր եղավ ռուսաց դորքը։ Երբ Ռուս[ներ]ը ետ քաշվեցին, [Էրեկլե] Թագավորն այլևս [կարևոր] չհամարեց գնալ Ղարաբաղի դեմ ու վերադարձավ Գյանջա։...

1789 թ. ...[Վրաց դորքը] տեղահան արավ շամշադին[ցիներին]։... [Էրեկլե] Թագավորը հասավ Շամքոր։ Այնտեղ եկավ Գարաբաղի Փահալի-խանը և Շաքիի Մահմադ-խանը, որոնք և որոշեցին երեքով Ղարաբաղի դեմ գնալ, քանի որ Իրբահիմ-խանը մոռացության էր տվել Էրեկլե Թագավորի լավությունը։...

...Լեզգիները ձյասում էին Բարթլիին և Սամխիին։...

Միքել Արղութաշվիլին առաջնորդում էր լեզգիներին, որոնք կրծանիսը գրավեցին... ապա Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ [լեզգիները] գրավեցին Ղալաչին (Ղալաչա), որտեղից և տարան երկու հարյուրից ավելի հայ գերիներ:...

Սույն 1789 թվին [Էրեկլե] թագավորի հրամանով Դավիթ արքայազնը հազար մարդով գնաց գեղի Ղարս, գերեց Ինջագարանը... [սրա] դեմ գուրս եկավ Ազիզ-բեկը, որն ամրազոր Ղարսի և քյուրդերի նշանավոր զորապետն էր և որն յոթ անգամ թրով հարվածեց արքայազնին: Սակայն սա անվնաս մնաց, քանի որ ներքուստ ոգորան ուներ հագած: Իսկ [Ազիզ-բեկը] արքայազնի ձեռքից մեռավ:... Լեզգիները Ախալցխեից եկան Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ և գրավեցին Գ[յ]ումբրին... Լեզգիները հազար հոգուց ավելի մանկտով Սադաբամա՝ երկու մասի բաժանվեցին. կեսը <քաղաքին կից՝ [Հ]ավլաբարի Խոջա-մելիքի ժամի[3] մոտերքում [արածվող]՝ Դարնչան թագուհու նախիրը քշեց...>...

1790 թ. ...[Էրեկլե թագավորը] ...անդհանն արավ շամշադիլ[ցիներին] ու փոխադրեց Շուլավեր: [Վրացիք]... հանկելով Շամշադին՝ ասին այն գյանջեցիներին, սակայն շամշադիլցիք չէին հպատակվում: Մի ում ժամանակ սպասելով՝ Ջավադ-խանը Գյանջայի [և] մելիքների զորքով գրավեց Շամշադինը և ուներ նա երեք հազարից ավելի զորք: [Շամշադինցիներին] դպաղանցիք եկան օգնության, իսկ դազախեցիք և շամշադինցիք երեք հարյուրից ավելի չէին: Սրանք հաղթեցին Ջավադ-խանին և գերեցին ութ հարյուրից ավելի գյանջեցիներ:...

[Աղա-Մահմադ-խան]-Խոջան՝ Պարսկաստանի գործերից իրեն ազատ համարելով՝ եկավ մոտեցավ Շուշան, քանի որ Շուշվա խան Իրբե[հ]իմը նրան չէր հնազանդվում: Սակայն նա չկարողացավ գրավել այս բերդը:...

<1795 թ. ...Ագա-Մա[հ]մադ-խանը Ղարաբաղից ուղղվեց գեղի Տփղիս... Խոջան ընտրեց ութ հազար զինվոր, որոնց գլուխ կանգնեց Նախիջևանի Քալբալի-խանը... Տփղիսի ավերման պահին նահատակվեցին... շատ ազամարդիկ և կանայք՝ ինչպես վրացիք, նույնպես և հայեր:...>[4]

<1795 թ. ...Շուշվա Իրբա[հ]իմ-խանն եկավ Գյանջայի դեմ, քանի որ Գյանջայի խանն էր Ղարաբաղի ավերման պատճառը... Ղարաբաղցիք և լեզգիները զարմանում էին վրացիների սխրագործություններից:...>

1796 թ. ...Ագա-Մա[հ]մադ-խանը՝ Թորասանի գոբեներից ոտատ դպալով իրեն՝ շարժվեց դեպի Շուշի։ Տեղեկանալով նրա գալու մասին՝ Իբրե[հ]իմ-խանն իր տուն ու տեղով քաշվեց Բեյլաքան, և Ագա-Մա[հ]մադ-խանը գրավեց բերդը։ Նույնպես նա սպանվեց իր ծառայի ձեռքով 1797 թվին։...

<Սույն իսկ թվին՝ 1798-ին՝... քանի որ ամենուրեք վրաստանում տարածվել էր ժանտախտը, [Դիմրգի] թագավորը մարդ ուղարկեց Ղուկաս հոգևոր տիրոջ (օրքիվատերի) մոտ, և [էջմիածնից] բերին մեր տեր Հիսուս Քրիստոսի գեղարդը. և ժանտախտն արագ չքացավ>[5]...

1798 թ. ... վեճ ծագեց Քարթլիի և Ղարսի միջև։ Ուսաի և Դիմրգի թագավորն ուղարկեց իր որդիք Դավթին և Իսահակին, որոնք պատերազմեցին Ղարսում և գրավեցին Ղլչախչախի շրջակայքը։ Ապա մեծ զորքով գնաց եկավ Ալի-բեկը և Օսմանցիք վրացիներից պարտվեցին։...

II

1798 թվին ...Բարա-խան-ը՝ տեր Դիմրգի թագավորին... խոստացավ տալ [նրան] ինչպես Շաքի-Շիրվանը, նույնպես Գյանջա-Երևանը... Եվ Դիմրգի Յիսուվիլին Երևանից վերադարձավ [Տփղիս]...

1799 թվին ...մեռավ Ղուկաս[6] հոգևոր տեր (օրքիվատերը)[7], և հայերը մտադիր էին Սուամբոլի պատրիարք Դանիելին բազմեցնեն [հայրապետական աթոռի վրա]. սակայն Դիմրգի թագավորը թույլ չտվեց այդ, այլ Ռուսաստանից բերել տվեց Արզուբյան Հովսեփ վարդապետին։ Սրանց երկուսի (Դիմրգի թագավորի և Հովսեփի) ցանկությունն էր հունաց և հայոց դավանությունների միացում[8]։ Եվ այս՝ [Հովսեփը] հոգևոր տեր (օրքիվատեր) էր նշանակվել։ Սակայն մինչ նրա Տփղիս հասնելը Դիմրգի թագավորը մեռավ և Հովսեփն էլ մեռավ Տփղիսում երկու ամսից հետո, 1801 [թվին][9]։ Հայերը նորից մտադիր էին Դանիելին [ընտրել] հոգևոր տեր (օրքիվատեր), սակայն Դավիթ արքայազնը, որն այն ժամանակ Վրաստանի կառավարիչն էր, հոգևոր տեր (օրքիվատեր) օծել տվեց Դավիթ վարդապետին, որ Վրաստանի հայերից էր՝ Էնագեթցի[10]։ Այս առթիվ հայերն ամենուրեք հուզմունք առաջ բերին և Դանիելին Սուրբ օծեցին հոգևոր տեր (օրքիվատեր) և էջմիածին տարան նրան՝ սուլթա-

նի հրամանով։ Իսկ քանի որ Դավիթ հոգևոր տերը (օրքիվա-տերը) Պարսից հովանավորության ներքո էր, սա օժանդակու-թյուն խնդրեց Երևանի [Հ]ուսեյն Ալի-խանի որդի Մահմադ-խանից, որն և աջակցեց նրան։ Դանիելին՝ գալուն պես՝ կալա-նավորեց և Դավիթ հոգևոր տերոջը (օրքիվատերին) հանձնեց։ Իսկ Դավիթը Դանիելի մորուքը խուզել տվեց և բանտարկեց Էջմիածնում. լսելով այս՝ Ռուսիայում բնակվող [հայերը] խըն-դրեցին կայսրից[11], որպեսզի Դանիելին հոգևոր տեր (օրքիվա-տեր) դարձնի, իսկ Եփրեմին Ռուսիայի առաջնորդ։ Տեղեկանա-լով սրա մասին՝ կայսրը գրեց Վրաստանի կառավարիչ Դուգո-վիչին[12], որպեսզի Դավիթին գտնկեց անի և Դանիելին բաց-մեցնի Էջմիածնի [հայրապետական գահի վրա]։ Այսպես արին ուսանները. Եվ Դավիթը փախավ Բարա-խան գանձի մոտ ու ՅԱց այնտեղ՝ [Պարսկաստանում][13]։

1800 թվին... Բարա-խան գանձը՝ լսելով ռուսաց զորքի մուտքը Վրաստան՝ ուղարկեց իր սարդարին մեծ ուժով հան-դերձ, որն և եկավ ու կանգ առավ Նախիջևանում։... Ապա գան-ձի հրամանով սարդարը Նախիջևանից վերադարձավ, իսկ այն-տեղ ՅԱց Ալեքսանդրե [արքայազնը][14], որն այնտեղից անցավ Ղարաբաղ՝ Իբրահիմ-խանի մոտ... [Ապա] Ալեքսանդրե արքա-յազնը Ղարաբաղից վերադարձավ [Պարսկաստան]։

... Ղարաբաղում Իբրահիմ-խանի մոտ էր... Ալեքսանդրեն։...

1800 թվին... Ալեքսանդրեն, որը Ղարաբաղումն էր, լսեց իր եղբոր՝ Գիորգի [Թագավորի] մահվան մասին... [և] եկավ Ղազախ...

1801 թվին... [Տիփիս] քաղաքի մելիքն էր Դարչին (Դար-չիա)[15]... կային և հայ քաղաքացիներ (մոքալաքներ)...

1803 թվին... Ալեքսանդրե և Թեյմուրազ արքայազնները փախստական եղան և գնացին Ղարաբաղ և Ղարաբաղից Թավ-րիզ և Թավրիզից Թեհրան։...

1804 թվին... Յիսխանովը[16] գնաց Երևան՝ քաղաքը գրավելու նպատակով։ Էջմիածին հասնելուն պես, նրա գեմ դուրս եկավ գանձի որդի Աբասը սակավաթիվ զորքով։ Թեև նրանց միջև տեղի ունեցավ փոքր ինչ պայքար, սակայն անօգնական վիճա-կի մեջ ընկած պարսիկները հեռացան ու գնացին Գառնի, իսկ Յիսխանովը անցավ Զանգի գետն և մոտեցավ Երևանի բերդին։ Տեղեկանալով սրա մասին՝ գանձ Բարախանը զորք հավաքեց ու եկավ Գառնիի գեմ։ Այս պահին Յիսխանովի զորքն իջավ։ Նա ուղարկեց մայոր Մանտրեզորին երկու հարյուր վինովոով

և մի քնգանոթով դեպի Համբակ, որպեսզի այնտեղից հարվածի պարսիկներին։ Լսելով այս՝ դաենը նրանց հետամուտ լինելու ուղարկեց Ալեքսանդրե արքայազնին հազար պարսիկ զինվորներով, որոնք հասան նրանց Դարպասի մոտ և ամբողջապես կոտորեցին նրանց՝ մայոր Մանուրզորով հանդերձ, խլեց քնգանոթները ու գնաց՝ դաենի մոտ, որը մեծարեց և առատ պարգևատրեց [Ալեքսանդրին]։ Մի քանի օրից հետո սկսվեց պատերազմ Յիցիանովի և Բարա-խանի միջև։ Յիցիանովը այնպես պարտվեց, որ գիշերով փախուստի դիմեց այն սակավաթիվ զորքով, որը պատերազմի ընթացքում Պարսից ձեռից փրկվել էր... [Ապա] Փառնաոզը՝ կախեթից անցնելով Ղազախ՝ կալանավորվեց զազախեցիների կողմից։...

...Դաենը տեղեկացրեց Փամբակում գտնվող իր սարդար Փիրզուլի խանին, քանի որ [Յիցիանովի զորքը] կանգ էր առել Ղարաքիլիսայում, ուր ռուսները պարեն ու զինապահեստ ունեին և այնտեղ մտել էին նաև Փամբակի և Լոռվա ձորի հայերը։... Այս պահին Ալեքսանդրե արքայազնը, Փառնաոզը և Թեյմուրազը Փամբակում էին ժողոված Փիրզուլի խանի մոտ Վրաստանի քաչվորների զորքի հետ միասին։ Մոտենալով ռուսաց [զորքի] կայանին (դարպասին)՝ Փիրզուլի խանը հարձակվեց նրանց վրա և ամբողջապես ընաջինջ արավ նրանց, խլեց քնգանոթները և բոլոր գերիներին քնգանոթների հետ միասին ուղարկեց դաենին, որն առատ պարգևատրեց ինչպես սարդարին, նույնպես և արքայազներին։... Լսելով դաենի գալն Երևան՝... Յուլոն և Փառնաոզ արքայազները, որոնք այն պահին Իմերեթի էին գնացած, շտապեցին տեղից, որպեսզի դաենին ներկայանան։... Սուրամում կանգ առած ռուսները՝ [լսելով] արքայազնների ուղևորվելն Երևան՝ [հարձակվեցին նրանց վրա]... [ռուսներն] այլևս չէին սպասում Յիցիանովին Երևանից։... Փառնաոզը... Դավիթ-Գարեջայի վանքով... անցավ Ղազախ ու բարձրացավ հայոց Ապրան գյուղը, ...[ուր՝ շրջապատվելով] երկու հազար զազախեցիներով Դոնդուզչի-օղլի հայի առաջնորդությամբ՝... ընկավ... ու կալանավորվեց։...

1805 թվին... Բարա-խանն եկավ Արդբիլ։ Նրանից սարսափահար եղած Շուշվա Իբրահիմ-խանը ռուսաց հովանավորության ներքո անցավ, խնդրեց Յիցիանովից զորք, որպեսզի իր բերդը պաշտպանի։ Յիցիանովը ուղեց հինգ հարյուր ռուս զինվոր։ Բարա-խանն եկավ Արազի (Արեզի) ափը և այնտեղից ու-

զարկեց իր որդի Աբասին Վրաստան սակավաթիվ զորքով, որը հասավ Թարթար:... [Ցիցիանովը էլ] եկավ Շամշադիլ:... Ապտեվի լեռան նեղ փեշը մտնելուն պես՝ [Բայթ-խանին] դիմավորելու զգաստեցիք, որոնք մեծ ջնաս հասցրին պարսիկներին:...

Այդ Ազաջոլի Սուլեյմանը գաղտագողի ուղարկեց ասլդար Իռանն Ղափլանիշվիլուն այն ճանապարհով, ուր [Ցիցիանովի հակառակորդները] երթվել էին կենտրոն փայտին (Ջելի ճեշմաբիխաս)[17] հավատարիմ լինելու Ալեքսանդրեին և Բարատխանին այն պահին, երբ Ցիցիանովը Երևանում կովի էր բռնված:...

1806 թվին... Ցիցիանովը... Նուխվա խան նշանակեց Ջաֆար Դուլի-խանին, որ Մոյի խանն էր, և զանն Բարատ-խանից փախել էր և [Ցիցիանովի] Երևանում եղած պահին ծառայություն էր նրան մատուցել:...

1806 թվին... Ցիցիանովին հաջորդող կոմս Իվան Վասիլևիչ Գուդովիչը... մի գիշեր հարձակվեց Ղարաբաղի Իբրահիմ-խանի վրա, որը քՒ [իր] բերդը և քՒ իր անձը Ռուսաստանին ծառայելու էր ուղել... Իբրահիմ-խանը խնդրեց Գուդովիչից, որպեսզի նրան Ղարաբաղի խան [ճանաչի և] նշանակի, որին Գուդովիչը համաձայնվեց և խան նշանակեց և հարկ էլ դրեց՝ տարեկան տասն և չորս հազար հոլանդական ոսկի: Եվ ուղին այս խանին գեներալ-մայորի աստիճան, իսկ Ղարաբաղի երևելի անձանց ռուսական համապատասխան աստիճան[ներ], երդվեցին հավատարմության մասին և բաժանվեցին: Իսկ Շուշվա բերդը ռուսների ձեռին էր:

1807 թվին... լուր ստացվեց Ղարսից գեներալ-մայոր Նեսվետաևից, որը Գուդովիչի կոմից ուղարկված էր Ղարսի դեմ չորս հազարից բազկացած զորքով և որը Յուսուֆ-փաշայից պարտություն էր կրել և նրանից պարսված իր սակավաթիվ՝ մնացած զորքով փախուստի էր դիմել Դ[յ]ումրիի բերդը, և խնդրում էր օգնություն: Գուդովիչը գնաց: Արփաչային հասնելուն պես՝ տեղի ունեցավ պատերազմ թուրքերի և ռուսների միջև: Թուրքերը և Յուսուֆ-փաշան պարտվեցին և գնացին Ղարս:...

1808 թվին, դրանիկոնի 496-ին, հոկտեմբերի 5-ին, կոմս Գուդովիչն իր զորքով, նաև վրացական զորքով գնաց Երևանը գրավելու նպատակով: Հասնելով այնտեղ, գրավեց քաղաքը և կանգ առավ Քանաքեռում: Այդ պահին Երևանի բերդը հույժ ամրացրել էր զանի սարդարը... տեղական խան Մահմադին

ընտանիքով հանգերձ գանձը.. Թեհրան էր տարել և չկարող [վերա]դառնալ Երևան, քանի որ Մահմադ-խանն երկերևանի էր և անհատատ, և այս պատճառով գանձը՝ համոզված չլինելով նրա [հավատարմության] մեջ՝ իր պահապաններին մացրեց բերդը և իր սարգարին նշանակեց բերդի պետ... Արաս-միրզան Նախիջևան եկավ Երևանին օգնություն հասցնելու համար...

1808 թվին Գուդովիչը ժողովեց ռուսական և վրացական զորքերը, գնաց ու Երևանի բերդին մոտեցավ, սանգուբքներ գրեց ու հրամայեց զինվորներին բարձրանալ։ Իսկ զինվորները հենց սանգուբքով ելան, զղրաշները սկսեցին սաստիկ կրակել նրանց վրա հրացաններից և թնդանոթներից։ Ռուսները պարսկեցին և կոտրվեցին երկու հազարից ավելի։ Եվ քանի որ Գուդովիչը չկարողացավ այլևս այնտեղ մնալ, վերադարձավ Ապարանի ճանապարհով. և այդ պահին սոսկալի սառնամանիք էր, հազարից ավելի զինվոր ձեռ ու ոտից զրկվեց։ Պարսիկները հետամուտ եղան նրանց, բոլոր սայլերը խլեցին և հիվանդներից շատերին էլ գերի տարան։...

<Var. *Կոմս Գուդովիչի Երևանում եղած պահին նա տեղափոխված էր այլ պաշտոնի և նրա տեղ նշանակվել էր զինեբալ-շեֆ Տորմասով Ալեքսանդր Պետրովիչը*[18]*։ Վերջինս՝ հասնելով Տփղիս՝ ուղևորվեց Երևան, և հասավ այնտեղ։... Կոմս Գուդովիչը մոտիկը էր նորից գրոհ տալ [Երևանի] բերդին, սակայն՝ վշտացած լինելով իր տեղափոխության առթիվ՝ հանվեց այնտեղից իր զորքով և շարժվեց Ապարանի ճանապարհով։ Այդ պահին սոսկալի սառնամանիք էր, և զրկից շատ մարդիկ կոտրվեցին Ապարանում, քանի որ ձմեռվա պահին լեռն անանցանելի է ձյունի պատճառով և փայտ էլ չի ճարվում։ Իմանալով այս՝ Արաս-միրզան էլ, որը Գառնիում էր կանգնած, հետամուտ եղավ ռուսներին մինչ Ապարան, ուր շատերին բնաջինջ արավ, նրանց իրերը հափշտակեց և շատ մեծ ինչս հասցրեց ռուսներին և վրացիներին, քանի որ այդ ժամանակ դեկտեմբեր ամիսն էր, և տավիվ անցան ռուսների ճանապարհները և վրացիներն էլ Բա[ղ]րատով։ Իսկ Արաս-միրզան վերադարձավ Երևան, կրկին ամրացրեց Երևանը, շատացրեց Երևանի զորքը և հենց այնտեղ անց կացրեց ձմեռը։...>*

1810 թվին... գանձ Բաբա-խանի որդի Մահմադ-Ալի-խանը եկավ և ամրոցջ Փամբակը տեղափոխեց Երևան <var. *ամրոցջ Փամբակը տեղացան արավ և բնակեցրեց Երևանում*>....

...Տրմաասովը... Ղարաբաղ էր գնացել պարսիկների հետ պաշնագիր կնքելու համար <var. Տրմաասովը պատրաստվել էր գնալու Արազի (Արեզի) [ափը] Ղարաբաղում, քանի որ դահնի մոտից եկել էր վեզիր միրզա Բուզուրգը, որպեսզի փոխադարձ դաշն և խաղաղություն կնքեն և ճշտեն Քարթլիի և Պարսկաստանի միջասահմանը>:...

1810 թվին (sic)... մեռավ հայոց հոգևոր տեր (օրքիվաաեր) Դանիելը[19], և Ագեքսանդր [ռուսաց] կայսրը հոգևոր տեր (օրքիվաաեր) նշանակեց Եփրեմին[20]: Այս Եփրեմը [Ագա-Մահմադխան] Թոջայի օրոք, երբ սա Տիգիսը գրավեց, սեփական փողով (սպիտակ || արծաթե [դրամ]ով) սեղացի գերիներին ազատեց մինչ հարյուր հոգի, ինչպես հայերին, նույնպես և վրացիներին: Սա Ռուսաստանի [հայոց] առաջնորդն էր, և հոգևոր տեր (օրքիվաաեր) բազմեցրին:...

...1810 թվին... Ագեքսանդրե արքայազնը Երևանից՝ [Յուլոն արքայազնի որդի] Լևոնի մոտ սարն ուղարկեց Իևան Դուլաձեին:...

1811 թվին... Երևանի պետ Հուսեյն <-զուլի խանը> Պարսկաստանից գնաց երկու հազար պարսկական զորքով ու հասավ Ջավախեթի Ախալքալաքը. այնտեղ նա սպասում էր Ախալցիխեի փաշա Շարիֆին զորքով և Ագեքսանդրե [արքայազն]-ին. և մտադիր էր հարձակվել Սամխրխի վրա, [որ սակայն չհաջողվեց]... Ապա սարդարը վերադարձավ Երևան: Իսկ դահնի որդի <Աբաս-միրզան> կանգնած էր Գառնիում, որտեղից Գյորգի Թագավորի որդի Թեյմուրազը փախավ <հաչվերացի օրը՝ սեպտեմբերի 14-ին>:...

1812 թվին <var. 1811 թվին>... Ախալքալաքը գրավելուց հետո մարկիզ [Պաուլուչին][21] մտադիր էր [բանակցել] Երևանի բեգլարբեգ Հուսեյնի հետ, որպեսզի բերդը հանձնի [ռուսներին], քանի որ նրան խոստանում էր տալ Երևանը ի տարատություն: Հուսեյնը խոստացավ տալ. Սակայն անմիտ իշայացին չիմացավ Հուսեյնի նենգությունը և ուղարկեց գնդապետ Լիսանովիչին երկու հազար զորքով: Ապա Հուսեյնը շրջակա [տեղերից] զորք ժողովեց ու թաքցրեց էջմիածնում: Հենց որ ռուսներն եկան, պարսիկները ճակատամարտ ունեցան և փախուստի ենթարկեցին ռուսներին, և Մարկիզը իշայատակվեց այսպիսի անմիտ սխալ գործելու պատճառով:

...1812 թվին... Մարկիզը գնաց Ղարաբաղ, ուր նրան գիմավորեց տեղական Մելիք-խանը ու շատ ընծաներ մատուցեց նրան, քանի որ Ղարաբաղը ռուսներն ունեին գրաված:... Այդ պահին Շուշվա մոտերքում, Ակարան կոչված տեղում, կանգնած էր ութ հարյուր ռուս՝ ի պաշտպանություն Ղարաբաղի: Արաս-մերգան, առաջնորդությամբ Ջաֆար-զուլիի, եկավ ու հարձակվեց ռուսների վրա: Տեղի ունեցավ այդտեղ պատերազմ: Ռուսները պարտվեցին պարսկական կանոնավոր զորքից, որ պարսկերեն սարբազա է կոչվում, [և] որի հետն էր Արաս-մերգան, քանի որ պարսիկները ֆրանսիացիների օրինակով էին սովորեցրել զինվորներին:...

... Այս պահին Մարկիզին վռնեցին ու նրա տեղ ուղարկեցին գեներալ-լեյտենանտ Ռոտիշչևին[22], որին իրրև օգնական կցեցին գեներալ-մայոր Ախվերդովին, Տիֆլիսի նախկին նահանգապետին, որն ազգանունով Պուպուլաշվիլի է և Ջիխնվալցի (Քրցխինվալցի) հայ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Այս՝ 1 մասի ծանոթագրությունները հիմնականում նույնն էն, ինչ որ կցված է ժէ գլխին, իսկ մի քանիսը նոր են (աճս ստորև):*

2 *Չմմտ. այս աշխատության ե. գլխի 2-րդ ծանոթ. (էջ 101):*

3 *Խոսքը Խոջիվանքի մասին է: Չմմտ. ստորև 15-րդ ծանոթ.:*

4 *1795 թ. Տիֆլիսի ավերման մասին գրականությունը տես Լ. Մելիք-Բեկ, Անանուն հայ պատմիչի նորագյուտ երկը Թբիլիսիի 1795 թ. ավերման մասին,—«ՍՍՌՄ Գիտ. ակագ. Հայկական ֆիլիալի Տեղեկագիր», 1941 թ., № 3—4, էջ 45—53:*

5 *Ժանտախտի մասին տե՛ս Գ ի ւ ա ա. ք. Ա ղ ա ն և ա ն, Դիւան Հայոց պատմութեան, գ. Դ., 1898, Թ., էջ 701—703.* А. Ерицов. О чуме в Тифлисе в 1797 году и о задержании царем Георгием XII в Грузии принадлежащего Эчмиадзинскому престолу священного копья,— „Кавказская Старина", № 3, 1873 г., стр. 60—64:

6 *Դուկաս I կաթողիկոս, 1780—1799 թթ.:*

7 *Տե՛ս այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88) և ժե գլխի 23-րդ ծանոթ. (էջ 181):*

8 *Սա մի կարևոր հանդամանք է, որ ի միճակի է լույս սփռելու Հովսեփ Արղության նորընծաի (և չօծված) կաթողիկոսի մահվան կապակցելի հանդամանքների վրա: Չմմտ. այս աշխատության իզ գլխի 21-րդ ծանոթ.:*

9 *Հովսեփ Արղությանի մասին տե՛ս Մ. Ե ր ի ց ե ա ն ց, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա. (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 1—16. Լ է օ, Ցոմսէփ կաթողիկոս Արղութեան, Թ.,*

1902. Եղիշէ ա. ք. Դեղամեան, Պատմական քաղվածքներ (արտատ. «Հովիւ» շաբաթաթերթից), պրակ I. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Բաքու, 1909. Գիւտ ա. ք. Ագանեան, Գիւտն հայոց պատմութեան, վերք Թ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին. 1778—1800, Թ., 1911. Մաղաքիա ա. ե. Օրմանեան, Ազգապատում, II, կ. Պոլիս, 1913, էջ 3263—3281 (§§ 2232—2243). Լ. Մելիք-Բեկ, Վրաց էրեկլէ II թագաւորի և Պավել I կայսեր հրովարտակները Մխարգրձելներին, վրացերէն,— «Պատմութեան Տեղեկագիրք», I, 1915, էջ 22—32:

10 Դավիթ-Դանիելյան վեհի մասին մանրամասն: Մ. Երիցեան, Նուէրնտեղ, էջ 17—41. Ե. ա. ք. Դեղամեանց, Նուէրնոյեղ, պրակ II, Բաքու, 1909: Գիւտ ա. ք. Ագանեան, Գիւտն հայոց պատմութեան, գ. ե. Դանիել կաթողիկոս, 1800—1808, Թ. 1904, գ. Զ. Դաւիթ կաթողիկոս, մ. առաջին, 1801—1802, Թ. 1904, գ. Լ. Դաւիթ կաթողիկոս, մասն երկրորդ, 1803—1804, Թ., 1908: Մաղաքիա ա. ե. Օրմանեան, Ազգապատում, II, էջ 3281—3376 (§§ 2244—2308):

11 Ալեքսանդր I-ին:

12 Գեն. Ի. Վ. Գուդովիչը՝ վրաստանի կառավարիչ՝ 1806—1809 թթ.:

13 Դավիթ Էնագևթցին՝ կաթողիկոս 1801—1807 թթ., Դանիելը՝ 1807—1808 թթ.:

14 Ալեքսանդրն արքայազնի մասին տես այս աշխատության ժէ գլխի 9-րդ ծանոթ. (էջ 192):

15 Դարչի Բեհրութովի մասին է խոսքը, մանրամասն տե՛ս Լ. Թաղայշվիլի, «Վրաստանի հնություններըը», III, 1910, генеалогическая таблица рода Бебутовых.

16 Ցիցիանովը կամ, ինչպես «Նոր պատմության» հեղինակն է միշտ անվանում, Ցիցիշվիլին վրաստանի կառավարիչն էր 1802—1806 թթ.:

17 Համառական է, Զորագետ հեռվանքի մասին լինի խոսքը: Համմասյա աշխատության Գ. գլխի վերջին պրակի 15-րդ ծանոթ. (էջ 89):

18 Գեն. Ա. Պ. Տորմասովը վրաստանի կառավարիչ՝ 1809—1811 թթ.:

19 Դանիել կաթողիկոսի մահը 1808 թվին էր:

20 Եփրեմ կաթողիկոսը 1809—1830 թթ.:

21 Մարկիզ Պաուլուչչին վրաստանի կառավարիչ՝ 1811—1812 թթ.:

22 Գեն. Ն. Ֆ. Ռտիշչևը վրաստանի կառավարիչ՝ 1812—1816 թթ.:

Ի

ՌԱՓԻԵԼ ԴԱՆԻԲԵԳՈՎ

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀՆԴԿԱՍՏԱՆ» (1813—1815)

Ռափիել Դանիբեգովի (Դանիբեգաշվիլու)՝ Վրաստանի ազնվականի ծննդյան, մանկան և կենսագրության հանգամանքները հայտնի չեն. Վրաց Էրեկլե II թագավորի հանձնարարությամբ սա ճանապարհորդել է Հնդկաստան 1795 թվից սկսած մինչև 1813 թիվը, որ և նկարագրել է առանձին գրքով։ Գրքի վրացերեն բնագիրը, ժամանակաւորապես, մեզ չի հասել, սակայն հեղինակի վերադարձից 2 տարի հետո այն լույս է տեսել Մոսկվայում ռուսերեն թարգմանությամբ, որ նվիրված է Ալեքսանդր I կայսեր, հետևյալ վերնագրով. „Путешествие в Индию грузинского дворянина Рафаила Данибегова. Перевод с грузинского“, Москва, 1815, 06+56 էջ in 16°։ Սույն աշխատությունը ռուսերենից վրացերենի վերածված հրատարակվեց նորերս առանձին գրքով՝ «Ռափիել Դանիբեգաշվիլի, ճանապարհորդություն դեպի Հնդկաստան», թարգմանությունը, առաջաբան և հավելվածներ, հանգերձ ծանոթագրություններով Ս. Իորդանիշվիլու, Թբիլիսի, 1950, XVIII+121 էջ, 4 քարտեզով։

Այս գրքի մանրամասն քննությունը և բովանդակության համառոտությունը տալիս է հանգուցյալ պրոֆ. Ալ. Ախվլեդիանին (Ախվլեդիանի) նախ իր լրագրական հոդվածում Путешествие в Индию грузинского дворянина Рафаила Данибегова („Новое Обозрение“, 1891 г., № 2420), *ապա իր՝ Վրաց գրականության պատմության* III *հատորում* (Очерки по истории грузинской словесности, выпуск 3-й, Москва, 1901, стр. 308—312)։ *Նույնը քննության է առնում և գր. Տրիֆոն Ռուխաձեն «Անցուդարձային շրջանի վրացական էպոսը», (վրացերեն, Թբ., 1939, էջ 110—115) գրքում, շեշտելով, որ Ռ. Դանիբեգովն իր ուղեգրությունը գրել է վրացերեն և ապա ինքը վերածել այն ռուսերենին, ինչպես 1815 թվի հրատարակության*

առաջարանում է նշած. „перевел сие путешествие с грузинского на язык российский“ (էջ 110)։ Համմ. նաև՝ Գ. Ջարգալիշվիլի, Առաջին վրացի ճանապարհորդը Հնդկաստան, վրացերեն,— «Ախալգազրդա Կոմունիստի», 1945 թ., № 130։

Իր ճանապարհորդության նկարագրության մեջ Ի. Դանիբեգովը տալիս է որոշ ավյալներ և Հայաստանի մի քանի վայրերի մասին հետևյալ մարշրուտով՝ Ախալցիխե—Արզրում—Մուշ—Դիարբեքիր—Բաղդադ—Բեբա—Կալկաթա։

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ»-ԻՑ

1795 թվին, մարտի 15-ին, Վրաց Էրեկլե թագավորի հանձնարարությամբ մեկնեցի Հնդկաստան հետևյալ հանգամանքների կապակցությամբ։ Մադրասում ապրում էր մի հարուստ հայ, որը տարեց տարի Էրեկլեին ընծաներ էր ուղարկում։ Ի հատուցումն նրա, թագավորը շնորհեց նրան մեծ գյուղ Լոռին, և կայքագիրն իմ միջոցով ուղարկեց նրան։ Հասնելով Մադրաս՝ ես այն հային կենդանի չգտա. նա իմ գալուց մի տարի առաջ մեռել էր։ Հիշյալ կայքագիրը ես հանձնեցի նրա որդուն, որն այն պահին Մադրասում էր գտնվում։

Թողնելով Ախալցիխեն և անցնելով Տաճկաց պետության հարավ-արևելյան մասով, ես քանի օրից հետո հասա Արզրում։ Ախալցիխեից մինչ հիշյալ քաղաքը ճանապարհը անցնում է բարձրաբերձ ժայռատ լեռներով և բարձր բլուրներով, որոնց աքանչելի տեսքը հրապուրում է յուրաքանչյուր ճանապարհորդի ուշադրությունը. բայց ես ի վիճակի չեզա բավականաչափ հիանալու այս գեղեցիկ բնության աքանչելի տեսարանով։ Արզրում քաղաքի դիրքը բավական հաջող է։ Իր ընդարձակությամբ նա Ախալցիխեից մեծ է։ Առաջինում հին շենքեր բոլորովին չկան և չի էլ կարող լինել, քանի որ նրա բնակիչները շատ հանգստատեն և հարուստ և, բացի դրանից, իրար հետ մրցելով՝ աշխատում են ունենալ լավ տներ. և այս պատճառով այս քաղաքում շատ հոյակապ շենքեր կան։ Այս քաղաքի գեղեցկությունն են կազմում շատրվանները, որոնք բոլոր փողոցներում մարմարիոնից են շինված և շատ լավ էլ զարդարված։ Ջնայած իր հարուստ լինելուն, այս քաղաքը վայրից դուրկ է (շատ աղքատ է), այնպես որ բնակիչները, ստիպված են իրրև վառելիք գործածել տներում կենդանիների աթարը։ Մնացած պիտույքների

[պարենավորման] կողմից բնակիչները եթե միշտ ապահով չեն իրենց անվտանգ [շուկայում], գոնե ապահով են նրանով, ինչ որ մերձակա քաղաքներից են այնտեղ հասցնում։

Երկար [ժամանակ] չմնալով այդտեղ (Արզրումում)՝ ես ուղևորվեցի դեպի Մուշ, որն Արզրումից տասներկու օրվա ճանապարհով է հեռու։ Մուշը մեծ քաղաք չէ։ Նրանից հրեսուն վերստի հեռավորության[ի] վրա գտնվում է Տիրոջ մկրտչի՝ Հովհաննու գերեզմանը։ Այս գագաղում հանդչում են Հիսուսի այս մեծ նախակարապետի (նախագուշակի) սուրբ մասունքները։ Շիրիմի վրա, ուր գագաղն է դրված, կառուցված է հոյակապ եկեղեցի հանուն [սուրբ] Կարապետի[2], լավ զանգակատնով, որոնք թե իրենց ուրույն գեղեցիկ ճարտարապետությամբ և թե գերքով, քանի որ լեռան վրա են կանգնած, գեղեցիկ տեսարան են ներկայացնում։ Այս լեռան մի քանի տեղից կենդանացուցիչ ջրի աղբյուրներ են բխում։ Վանականները, որոնք ժամասացությունն են կատարում հիշյալ եկեղեցում, միմիայն եփած կարեկով են կերակրվում։

Երկրպագելով Տիրոջ մկրտչի շիրիմին՝ ես շարունակեցի ճանապարհորդությունս, և ութ օրից հետո հասա Արգանա կոչված քաղաքը։

Տիգրանակերտը՝ հինավուրց և հոյակապ քաղաք է, որ այժմ կոչվում է Դիարբեքիր։ Այն գտնվում է Տիգրիս գետի ափին։ Հին ժամանակները քաղաքը շրջապատված էր մեծ քարե պարսպով, բարձր աշտարակներով, որոնց մեծերն են այժմ գետվում մեջն[3]. իր ընդարձակությամբ և շրջակայքի գեղեցիկ տեսարաններով այս քաղաքը հռչակ ունի։ Այստեղ գտնվում են մեծ քանակով պտղատու ծառեր, ուստի և սրա բնակիչները շատ լավ են ծավալում մրգավաճառը։ Ասում մեջն, որ այսպիսի հինավուրց քաղաքում բնակիչները վատ[սրտ]են, նրանք ոչ միայն օտարերկրացիներին, այլև յուրայիններին ատում են։ Սրանց սրտերը միանգամայն զուրկ են իրենց նմանների նկատմամբ սիրո և քնքշության զգացմունքներից։ Այս քաղաքում համեմատաբար ավելի հարուստ են հրեաները, որոնք այստեղ բավական [մեծ] են բնակվում։

Բաղդադ... Բուն բարելոնացիներից զատ այստեղ ապրում են բազմաթիվ այլ ժողովուրդներ, ինչպիսիք են՝ հնդիկները, պարսիկները, տաճիկները, հայեր և եվրոպացիներ։

Բեքա քաղաքը... Իմ այստեղ գալը մի կողմից շատ երջան-

կ[ալից] էր, իսկ մյուս կողմից և շատ դժբախտ[ալից]։ Բախտավոր էի, քանի որ հենց այս պահին սկսել էին նավ կառուցել արքայի համար. հետաքրքիր էր տեսնել այս։ Դրսից նավը ծածկելին մաքուր ոսկով, իսկ ներքուստ այն պիտի ծածկեին թանկարժեք փայտերենով։ Իսկ դժբախտ էի այն պատճառով, որ ի վիճակի չէի դիմյլվել ինձ համար այսպիսի հաղվադյուտ տեսարանով, քանի որ մարդկանց ամբոխը շրջապատեց ինձ, կալանավորեց ու տարավ դեպի բանտ, սպառնալով ինձ գլխատել։ Բայց ինչո՞ւ։ Քանի որ ես՝ ցանկանալով մոտենալ կառուցվող նավին և չհաջողանալով այդ անել ցնծի պատճառով՝ անգիտակցաբար անցա այն տախտակով, որն այն նավի համար էր հատկացրած։ Եվ թերևս ես կյանքից էլ զրկվեի, եթե չմիջամտեին այն մի քանի հայերը, որոնք այնտեղ հայտնի են իրենց հարստությամբ, և չհամոզեին մեծին, որ ես անգիտակցաբար եմ սրել...

Կալկաթա քաղաք... Այստեղ շատ հայեր կան, որոնք շատ շքեղ և փարթամ կյանք են վարում և առևտուր են անում օտարերկրացիների հետ[4]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Շահամիր Շահամիրյանի մասին է խոսքը։ Մանրամասնությունների՝ Ս. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար,— Երևանի պետական համալսարանի Դիտական աշխատություններ, հ. XIII, 1940, էջ 5—99 (բարեհղով)։ Մանրամասն բիբլիոգրաֆիան՝ Հովհ. Պետրոսյան, Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա, Երևան, 1941, էջ 223—226։

[2] Մշո ս. Կարապետ հռչակավոր վանքի և սրբատեղի մասին է խոսքը («Մշո սուրբն սուբ Կարապետ Թարփիտն»)։

[3] Տիգրանակերտի մանրամասն նկարագրությունը տե՛ս Գաբրիել վ. Սրվանձտեանց, Թորոս-Ագրաք, մասն բ., կ. Պոլիս, 1885, էջ 192—230 (հատկապես 198—205). W. Belck, Majafarkin und Tigranokerta,— «Zeitschrift für Ethnologie», 1899, SS. 263—275. C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, Berlin, 1910, SS. 381—429, 501—523. J. Marquart, Südarmenien und die Tigrisquellen, «Հանդէս ամսօրեայ» 1914, էջ 112—113. Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ериван, 1954, стр. 69—85. Հակոբ Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմ, Երևան, 1940, էջ 56—72. Я. Манандян, Тигран второй и Рим, Ереван, 1943, стр. 56—71։

[4] Կալկաթայի մասին տե՛ս Լէօ, Հայկական տպագրություն, II, էջ 608—610։

ԻԱ.

ԳԻՈՐԳԻ Ա. Ա. ԻՇՎԻԼԻ

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ» (1820)

Գիորգի Իոաննեի որդի Ավալիշվիլին կամ Ավալովը XVIII *դարի վերջերի և* XIX *դարի սկզբների գործիչ է։ Ծնվել է 1769 թվին. 1784 թվից եղել է Էրեկլե Թագավորի կողմից Ռուսաստան ուղարկած դեսպանության քարտուղար. 1791 թ. ճանապարհորդել է Պարսկաստան, իսկ 1819—1820 թթ. կատարել է ճանապարհորդություն դեպի Երուսաղեմ հետևյալ մարշրուտով. Տիղիս — Գորի — Սուրամ — Քութայիս — Փոթի — Սուխում — Սեվաստոպոլ — Ղրիմ — Կ. Պոլիս — Ադեքսանդրիա — Գահիրե — Երուսաղեմ — Կիպրոս — Թարսու — Կեսարիա — Արզրում — Ղարս — Շուլավեր — Տիղիս։ Վախճանվել է Մոսկվայում 1850 թվին և թաղված է* Всехсвятск *կոչված եկեղեցում՝* Сокол *մետրոկայանին կից։*

Դեպի Երուսաղեմ կատարած ճանապարհորդության նկարագրությունը, որ մեզ հասել է վրաց մեջ գրականության տարածող նախկին ընկերության (այժմ Վրաստանի պետական Թանգարանում) հավաքածուի № 450 ձեռագրում, դեռևս հրատարակված չէ։ Սրա մասին տեղեկություններ է տալիս՝ նախնական հաղորդագրության ձևով՝ դոց. Տրիֆոն Ռուխաձեն «Անցուդարձային շրջանի վրացական էպոսը» (վրացերեն, Թբ., 1939, էջ 169—173) գրքում։

Սակայն մենք, չտեսականանալով գրականության մեջ գոյություն ունեցող տեսություններով Գ. Ավալիշվիլու մասին, անհամբեր ուսումնասիրեցինք հիշյալ unicum *ձեռագիրը, որտեղից և քաղեցինք մեզ հետաքրքրող տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, որ սփռած է ամբողջ աշխատության մեջ։*

Գ. Ավալիշվիլու (Ավալովի) ուղեգրությունը պարունակող ձեռագիրը in quarto *դիրքով, բաղկացած է 199 թերթից։ Ուղեգրությունը կազմված է 2 մասից. առաջինը՝ 5ա—112ա էջերում, երկրորդը՝ 114ա—196ա, սկզբում տրված է առաջաբան և վերջում՝ 197ա—199ա՝ ցանկ։ Ուղեգրության վերնագիրն է.*

«Ճանապարհորդության Տփղիսից Երուսաղեմ Հունաստանով և վերադարձը Տփղիս Կիպրոս կղզով, Փոքր Ասիայով և Անատոլիայով, իշխան Գիւորգի Ավալովի 1820 թվին»:

Գ. Ավալիշվիլու նկարագրության մեջ առանձնապես հետաքրքիր են վիճակագրական տեղեկությունները շրջած տեղերում ապրող հայերի և հայոց եկեղեցիների ու վանքերի մասին:

[ԱՅԼԵՎԱՅԼ ՏԵՂԵՐԻ ՀԱՅԵՐԸ]

Գորիում... կան եկեղեցիներ՝ վրացական, կաթոլիկաց և հայոց[1] երեքը: Իսկ այս երեք ազգերը մոտ 1500 տուն են:...

Քութայիսում... կա երեք եկեղեցի ուղղափառ քրիստոնյաների, մեկը կաթոլիկների, մեկը հայոց և մեկ էլ սինագոգա: Այստեղ բնակվող այս չորս ազգերի թիվը մոտավորապես 2000 տուն է:...

Երուսաղեմի... [Վրացական] սուրբ Խաչ վանքում... գտա ինձ համար հետևյալ տպագիր գրքերը [թվով] 15[2], մի գիրք [ևս] հայերեն...

Հայոց (հառայաց) երեք հոգևորականների [Հարության տաճարը] մտնելու մասին

Երբ մտանք այս (Հարության) տաճարի գավիթը, մեր ապառաժից ավելի գտանք ուղղահավատների բազմությունն, ևս առավել անվեհերության և ոգևորակ նրանց մեջ [գտնվող] բեդուհեմցիներին, որոնք արաբերեն գոչում էին. «Մեծ է և բարի մեր՝ ուղղափառ քրիստոնյաների՝ հավատքը, և վատ է ֆրանկների, հայերի և ուրիշներինը. ելնք, թևերահավաններ, այս սուրբ վայրից. երկարակյաց լինի մեր սուլթան Մահմադը»: Այս առթիվ հայերը մի փոքր կատաղեցին, մեր խոսքը մտան նրանց երեք հոգևորականները, որ նրանց պատրիարքի կողմից էին ուղարկված, համբուրեցին Միխայել սրբ[ազան] մեռապոլիտի ոջը և խնդրեցին, որպեսզի կարգադրականներն հակոզ թուրքերին հրամայեն բեդուհեմցիներին հարկադրի լռել: Բարձր սրբազան սուրբ տերը՝ հարգելով նրանց խնդիրը՝ հրամայեց հոգևորականներին արգելեն բեդուհեմցիներին այսպիսի բաներ ասելու: Եվ թեև թուրքերը միանգամայն գոհ մնացին այս առաջարկից և սկսեցին մարակել և ապառնալ [նրանց] բանաարկությամբ, սակայն բեդուհեմցիք [սկսեցին] ավելի ևս բարձրաձայն գոչել արաբերեն. «Մեծ է և բարի մեր՝ ուղղափառ քրիստոնյաների՝ հավատ-

քը, և վատ է ֆրանկների, հայերի և ուրիշներինը. ելնք, Թերահատանը, այս սուրբ վայրից. երկարակյաց լինի մեր սուլթան Մահմադը»։

Իմ այցելությունը հայոց (հառայաննների) վանքը

Գնացի այսոնկղրոս Հակովբոս սուրբ առաքյալի վանքը[4], որ կառուցվել է Վրաստանի թագավորների կողմից, և այժմ... հայոց (հառայաննների) ձեռքն է[5], որպեսզի տեսնվեմ հայոց (հառայաննների) Գաբրիել պատրիարքի հետ[6]։ Վերջինս ինձ ընդունեց՝ ըստ սովորության՝ գրկաբաց և վարդաջրով օծեց ինձ։ Ապա իմ վանքը գիտենալու՝ ներքին սքանչելի տեսարաններն ու շինությունները։ Այս [վանքի] հյուսիսային մասում գտնվում է Հակովբոս առաքյալի գանգը, որ ամփոփված է պատի տակին... Երեկոյան պահին պատրիարքից ստացա մի ոչխար, մեծ կուժ գինի, մի քանի սպիտակ հաց և քազդրեղեն (շաքարլամա)։

Երուսաղեմի [Հարության տաճարի] հայոց խորանի մասին

Այստեղ [Քրիստոսի գերեզմանից] 17 քայլ հեռավորության դեպի հարավ հայոց (հառայաննների) խորանն է...

Հարություն (Արեամ) Աբարաւեցու մասին...

[Երուսաղեմում] ինձ մոտ եկավ Արեամ Բոգդանովիչ Աբարաւեցին և հրաժեշտ տվեց ինձ Շամ գնալու պատճառով[7]։...

[1573 թվին տեղի ունեցած սքանչելիքը]

1573 թվին, Երուսաղեմի (sic) Երեմիա պատրիարքի օրոք[8], հայերը (հառայաննները)՝ շատ փող ծախսելով՝ տեղական փաշայի միջոցով հաջողեցրին, որ սուլթանը հրաման արձակեր, որպեսզի մեծ շարաթ [երեկոյան ‖ գիշերը] հույներից ոչ ոք չգար սուրբ գերեզմանի մոտ ասեվածային լույսը ստանալու համար, որ սփռվում է այնտեղից, այլ [գան] միմիայն հայերը (հառայաննները)։ Եվ այսպես, փաշան, որն իր արքայի հրամանն էր կատարում, թողեց [տաճարում] բռնկման բազմություն հայերից (հառայաննների), փակել տվեց տաճարի դուռը, որի առաջ կանգնած մնացել էր Երեմիա պատրիարքը բազմաթիվ հոգևորականներով և ու ասեված ազերսող՝ ուղղափառներով հանգերձ։ Ժամկետը լրանալուց հետո պատրիարքը կանգնել էր սրբուհի Հեղինեի (Էլենայի) եկեղեցու մի սյան մոտ՝ արտաավալից... և ազերսող [ու Քրիստոս]... Ապա այն պատի մեջ՝ արևմտյան դռան կից՝ ճեղքվեց քարը և այնտեղից սփռվեց ասեվածային

լուսը, որը խափանված էր հայերի (հառույանների) կողմից, և Երեմիա պատրիարքը շտապեց դեպի այն կողմը. վաղուցին նրա մոմերը և ձայն ավին ժողովրդին, որը մասնակից էր նրա պաղատանքին։ Իսկ հայերը (հառույանները), որոնք տաճարի ներսումն էին, խնդրած երջանկությունը չստացան... Այս բոլոր աքանչելիքների ականատես թուրքերը և անհավատները սկսել են բամբասել հայերին (հառույաններին), որոնցից մեկը, ... որ բռնել էր սեպը, բարձրաձայն ազդարարեց։...

Վակոսում... [հանդիպեցինք] նախիջևանցի հայ հաջիներին՝ Սիմեոն-Երեմիային և Գասպար Մելչոտուրովին... Երրորդ ժամին ինձ մոտ եկան արքեպիսկոպոսի եղբորորդին և հաջի Սիմեոն հայը։...

Թարսու քաղաքը... ավելի մեծած է, քան կենդանի, ուր ապրում են մահմեդականներ մինչ 1500 և հայեր մինչ 300 ծուխ։...

Կեսարիայում... [ծանոթացա] հայ[ազգ] Օսեփ Քայա-օղլի Կարապետի հետ։... Էֆենդին ասաց՝ «Ես հայ եմ, Օսեփ Քայա-օղլի Կարապետ»...[9]։

Կեսարիա քաղաքում բնակվում են հույներ մինչ 400, հայեր մինչ 2000 և մահմեդականներ մինչ 10000 ծուխ։ Առաջիններն ունեն մի եկեղեցի, երկրորդները երկու, իսկ վերջիններն 87 ադրթաուն (ջամի)։

Սուվազ քաղաքում... 8 ծուխ հույն կա, 1080 ծուխ հայ և 6773 ծուխ մահմեդական։ Առաջիններն ունեն մի եկեղեցի, երկրորդները՝ երկու, իսկ վերջիններն 19 ադրթաուն (ջամի)։

Շապին-Գարահիսար քաղաքում... 30 ծուխ հույն է, 400 հայ և 4000 մահմեդական. Առաջիններն դրեթե չգիտեն իրենց մայրենի լեզուն և խոսում են թուրքերենի խառն հայերենով, չեն ճանում առանց քահանայի և եկեղեցու։ Հայերը ունեն մի ադրթաուն, իսկ մահմեդականները մի մզկիթ։...

Շաղրիաևում [հանդիպեցի] բայազետցի հայ քահանա տեր-Մարգարին, երեք թուրքի և երկու հայի։...

Արզրումում [հանդիպեցի] քաղաքացի Քասա-օղլի-Մելքոյի հետ... հային հարցրի։... ուղեկիցներս հայեր [էին]...

Զղբիլիսայում [կա] վրաց եկեղեցի վրացական երկաթագիր և հայերեն արձանագրություններով, [որ] Թամար Թագուհու կառուցվածն է։...

[Անա] Թոխաթեցի վաճառական՝ մղոնի Պողոս-ադա-Սաֆար-օղլի, Շապին-Գարահիսարցի հայ Օհաննես Յուման-օղլի-Օզան-օղլի-Պետրոսը...

Կարս քաղաքի մասին

Այս քաղաքը Օսմանյան պետության վերջին բունն է՝ Ռուսիային սահմանակից: [Այստեղի ազգաբնակչությունը] բաղկացած է 10000 ծուխ հայերից և թուրքերից: Առաջինները ապրում են գերազանցապես պարսպից դուրս, արևմտյան կողմում, մինչ 500 ծուխ: Բերդը կանգուն է բարձր ժայռի վրա և սրան շրջապատող պարիսպների մեջ բնակվում են թուրք երևելիները՝ հոգևորականները, վաճառականները և քաղաքացիները:...

Երկոտասան առաքելոց [անվան] նախկին եկեղեցի—ջամիի մասին

Այստեղ ոչինչ կա նշանավոր, բացի հնագույն դարերի հայոց Աշոտ (Արշոտ) Թագավորի (sic)[10] սրբատաշ քարից կառուցված մի եկեղեցուց հանուն երկոտասան առաքելոց, որի [արտաքին] տեսքը պարունակում է ապիտակ քարից կոփված մարդու մեծությամբ [քանդակները], որոնք պատում են այս տաճարի շուրջը[11], գմբեթի տորև մեծ վանդակների միջում ամփոփված, [և] որոնք այժմ էլ վերամբարձ ձեռներով բռնած ունեն այս գմբեթը: Այժմ սա անհավատների ապրհատուն (ջամի) է դարձած[12]:

Այս՝ [Կարս քաղաքը] շինված է շատ նեղ, ապառաժ և զգվելի ձորում, որով հոսում է մի փոքր գետ և որը բաժանում է բերդը քաղաքից, պատում է գրեթե ամբողջ քաղաքի շուրջը և [ապա] միախառնվում է Արփաչայի հետ: Այստեղի բնակիչները չգիտեն այս գետի անունը, և կոչում են այն Կարսքն-սու, այսինքն Կարսի ջուր: Այստեղ չեն նկատվում ոչ այգիներ, ոչ ծաղկանոցներ և ոչ էլ բանջարանոցներ, որ պետք է լինեին քաղաքից դուրս՝ հյուսիսային կողմում, քանի որ արևելյան և արևմտյան կողմերը ժայռոտ են: Հարավայինը գրաված ունեն բնակիչները բնակվելու և վարուցանքի համար, իսկ հյուսիսայինում գտնվում է ձորը, ուր միշտ վաճառվում են թարմ մրգեր, կանաչեղեն և այսպիսիք, և բոլոր պիտույքների էժանությունն է այստեղ:

... Առավոտյան ինձ մոտ եկան Տփղիսի քաղաքացի հայ Պետրոս Սարքիսովը և կարճ ժամանակից հետո՝ Պետրե Լարաձեի և [նույն] Պետրոս Սարքիսովի հետ միասին մտա Տփղիս, [ուղևորվելով] այն Սարքիսովի տունը, [ուր] ես պիտի բնակվեի:...

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Գործ հայերի մասին տե՛ս Գ ր ո ւ մ ա. ք. Ա գ ա ն ե ա ն ց, Վրաստանի հայերը.—«Տարազ», 1919 թ., №№ 1—12, էջ 44—45:* Бюллетень КИАИ, № 4, Тифлис, 1928, стр. 15—16.

[2] *Երուսաղեմի ս. Խաչ վանքի վրացերեն ձեռագրերը ցուցակագրված են մի շարք վրացագետների կողմից.* А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, вып. II, СПБ., 1889, стр. 1—50, Н. Марр, Предварительный отчет о работах на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джаваховым, и в Иерусалиме, в поездку 1902 г.,— „Сообщения И. Палестинского О-ва", т. XIV, ч. 2, 1903, стр. 1—51, *ավելի մանրամասն՝* Robert P. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la bibliothèque patriarcale grecque a Jérusalem, —exrtrait de la Revue de l'Orient Chrétien, 3-e serie, t. III (XXIII) № 3 et 4 (1922—1923), pp. 345—413, t. IV (XXIV) № 1 et 2 (1924), pp. 190—210; № 3 et 4 (1924), pp. 387—429, t. V (XXV) № 1 et 2 (1925—1926), pp. 132—135, *և առանձին՝* Paris *1924 — 1926, 157 էջ:* Н. Я. Марр, Краткое описание грузинских рукописей библиотеки греческого патриархата в Иерусалиме, Тб. 1955, 95. стр.

[3] *Մահմուտ Բ Ադիլ, Օսմանցոց սուլթան, 1808—1839 թթ.:*

[3] *Երուսաղեմի հայոց պատրիարքարանի՝ ս. Հակոբյանց մայրավանքի մասին է խոսքը:*

[5] *Վրացական ավանդության համաձայն, Հակոբյանց վանքը հիմնվել, շինվել ու բարեկարգվել է Վրաց Թագավորներից, մանավանդ Գեորգի III-ի (1156—1184) կողմից (հմմտ.* А. Цагарели, Памятники грузинской старины в святой земле и на Синае [„Православный Палестинский Сборник", т. IV, в. 1], СПБ, 1888. М. Г. Джанашвили, Грузинские обители вне Грузии. Тифлис, 1899), *որ, սակայն, չի համապատասխանում իրականությանը, Մ ա ք ր ի տ ս. ե. Օ ր մ ա ն ե ա ն, Ազգապատում, III, Երուսաղէմ, 1927, էջ ՃՀԹ—ՃՀՂ. հմմտ.* Л. М. Меликсет-Бек, Armeno-Hebraica, —„Труды Ист.-Этногр. Музея евреев Грузии", т. III, Тб., 1945, стр. 258—259 и прим. 1 стр. 259. *Ն ո ր ա յ ր վ. (այժմ եպիսկոպոս) Պ ո ղ ա ր յ ա ն, Համառոտ ակնարկ հայ երուսաղեմի վրա. «Հէմիածին» 1951 թ., ապրիլ-հունիս, էջ 89—92, հուլիս-օգոստոս, էջ 77—80:*

[6] *Գաբրիել Նիկոմիդացի, պատրիարք հայոց երուսաղեմի, 1818—1840 թթ.:*

[7] *Խոսքը Հարություն Աբրահամյանի մասին է, որի անվան հետ կապված է կենդ համարվող հուշերը. տե՛ս* Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат, писанная и переведенная им самим с армянского на российский, с приложением 6 гравированных эстампов, изображающих виды городов персидских, I—II, СПБ, 1813, *Նույնը հայերեն՝ Վարդապետական Յարութիւն Արարատեանի կեանքը. Թարգմանեց ռուսերենից Պ[ետրոս] Պ[ողոսեան], Թիֆլիս, 1892, հմմտ. Ա[բրահամէ] Ե[պիսկոպոս] Ս[ողոմոնեան], Յարութիւն Արարատեանի կեդծիքը, Բաքու, 1894. հմմտ. Ն. Մ ա ռ ի ր դ ր ո ւ մ ա կ ա ն ը այս վերջինի մասին՝* „Записки Вост. Отд. Рус. Арх. О-ва", т. IX, 1896, стр. 311—313:

[8] *1573 թվին Երուսաղեմի հունադավան պատրիարքական աթոռի վրա*

հայտնի էր Գևրմանոս I (1543—1579 թթ.), իսկ երեմիա անունով ոչ հունա-պաման և ոչ էլ հայազգաման պատրիարք երուսաղեմում առհասարակ հայտնի չէ: Մյուս կողմից, երեմիա II անունով հայտնի է կ. Պոլսի հունաց պատրիարքը 1572—1579, 1580—1584, 1586—1595 թթ. շուրջ: Հետևապես, այստեղ հեղինակը շփոթել է երուսաղեմի և կ. Պոլսի պատրիարքների անուններն իրար հետ, քամ դուցե երեմիա անունով մետրապոլիտ լինեը երուսաղեմում, ինչպես, օրինակ, նա հիշում է Միսայելին: Համենայն դեպս, նշում ենք, որ այդ պահին երուսաղեմի հայոց պատրիարքն էր Անդրեաս Մերտինեցին (1551—1583 թթ.):

9 Այստեղ և ստորև գրույցը վերաբերում է հայ գրաբարախոսն բարբառով է, և կարևոր նյութ է հայ բարբառագիտության պատմության համար, որ մենք տալիս ենք վրացատառ տեքստը հայատառի վերածելով (translitteratio), տես. էջ 173 բ—175 բ:

— Ահա այն բժիշկն, զոր տեսաք մեք այսօր:

— Պարոն կարապետ, խնդրեա զայս բժիշկը, որ քեզ տուաք տա:

— Աստված վկա, այս բժիշկն կարէ առողջացուցանել. պարոն կարապետ, ես տեսնում եմ ի նոցանէ իմացած հաշիւն:

— Պարոն Օսեփ, նախ աջ ձերդ ցոյց բժշկին և չի լինէը այն, որպէս ես եղէ:...

10 Պիտի լինի Աբաս I-ի 945 թ.

11 Տաճարի գմբեթի լուսանկարը տե՛ս Dr. J. Schwieger, Neue Wege zur Erforschung von Ursprungsfragen altarmenischer Kirchenbauter,— „Monumenta armenologica", Wien 1927 (=«Հանդէս ամսօրեայ», 1927 թ., № 11—12), Tafel VI, Abb. 14:

12 Կարսի մասին տե՛ս Կ ր պ է (= Կ ա բ ա պ ե տ Օ հ ա ն ջ ա ն ե ա ն), Կարս քաղաք, Մոսկուա, 1894:

ԻԲ

ՆԻԿՈԼՈԶ ԴԱԴԻԱՆԻ

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (1823)

Նիկոլոզ Դեսրգիի որդի Դադիանին Սամեգրելոյի իշխան Օսիայի (1728—1744) թոռն էր և Կայսր II-ի (1744—1788) եզբորորդին, որը հայանի է իբրև Սամեգրելոյի խոշոր քաղաքական և դիվանագիտական գործիչ։ Ծնված լինելով 1774 թ. մոտերքում, նա 1805 թ. գլխավորում էր այն պատգամավորությունը, որը Սամեգրելոյի գործերի կապակցությամբ Պետերբուրգ էր գնացել Ալեքսանդր I կայսեր մոտ։ Պետերբուրգից նա վերադառնում է գնդապետի աստիճանով և ապա գործում է իր հայրենիքում իբրև մեծ վեզիր, վեկավարում է դիվանագիտական աշխատանքները, մանավանդ Թուրքիայի հետ կռվում 1828 թվին, երբ Փոթին ու Բեգիան վերջինիս լծից ազատվեցին. ապա նա առանում է գեներալ-մայորի աստիճան և զանազան շքանշանների ասպետություն։ Վախճանվել է 1834 թվին (տմմտ. Ս. Յ ա ի շ վ ի լ ի, Նիկոլոզ Դադիանին, վրացերեն.—«Լիտերատուրա դա խելովնեբա», 1944 թ., № 38)։

Ն. Դադիանու գրչին են պատկանում մի շարք գրական գործեր. 1. «Վրաց պատմությունը». 2. «Ուղեգրություններ». 3. «Դատաստանագիրք»—Սամեգրելոյի Դատաստանագիրքը. 4. «Բառգոզիրք» (Անտոն Ճգոնգիգելու հետ միասին), և 5. Բանաստեղծություններ։

Այս գործերից ամենանշանավորն է «Վրաց պատմությունը», որ բաղկացած է 3 մասից. առաջին մասում տրված է Վրաստանի համառոտ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1469 թ., այսինքն մինչ Վրաստանի բաժանումը 3 թագավորությունների և 5 իշխանությունների. երկրորդում խոսվում է Վրաստանի մասին հիշյալ ժամանակվանից մինչև Սոլոմոն I Իմերեթի թագավորը (1751—1784 թթ.), և վերջապես երրորդում ներկայացրած է Իմերեթի պատմությունը

Սոլոմոն I-ից մինչ 1823 թ.: Հետևապես, այս պատմությունն ավարտված պիտի լինի 1823 թվին: Մինչդեռ ա. և բ. մասերը գրեթե կրկնություններ և համառոտություններ են Քարթլիս-ցխովրեբայի, գ. մասը համեմատաբար ավելի ինքնուրույն և արժեքավոր գործ է, որը պարունակում է, ի միջի այլոց, և տեղեկություններ Հայաստանի և հայերի մասին:

Ն. Դադիանու պատմությունը կրճատումներով հրատարակվել է «Իվերիա» թերթում 1877 թ. №№ 5—18-ում: Վերջին (երրորդ) մասը ամբողջովին հրատարակել է ռուսերեն թարգմանությամբ հանգերձ պրոֆ. Է. Թաղ'այշվիլին (Е. Такайшвили, Описание рукописей Общества распространения грамотности среди грузинского населения, т. I, Тифлис, 1902—1904, стр. 14—56, пер. 57—104),

[1804—1815 թթ. ԱՆՑՔԵՐԻՑ]

Իշխան Յեկիանովը արշավեց Պարսկաստան և մոտեցավ Երևանի բերդին: [Յեկիանովի Երևանին] մոտենալու պահին Բաբախան-դաենն երկու հարյուր հազար զորքով օգնության հասավ Երևանի բերդին և շրջապատեց Յեկիանովին: Տեսնելով թշնամու մեծաքանակ լինելը և առավել՝ որ ինքը երեք հազարից ավելի զորք չուներ, որպեսզի բերդը պաշարի և դաենի հետ պատերազմի, Յեկիանովը զգաց իր թուլությունը. ուստի և թողեց բերդը, դեմ առ դեմ եկավ դաենին, սաստիկ պայքարեց և խաղաղ վերադարձավ Տփղիս:

...Այդ պահին օսմանցոց սարասքյարը՝ Յուսուֆ-փաշան մեծ զորքով եկավ Վրաստան պատերազմելու: Այստեղից նրա դեմ եկավ կոմս Գուդովիչը[1]. պատերազմը տեղի ունեցավ Կարսում: Սարասքյարը չախչախվեց, և փառավոր հաղթող հանդիսացավ կոմս Գուդովիչը:... Սրանից հետո կոմս Գուդովիչը գնաց և շրջապատեց Երևանի բերդը, սակայն՝ չնայած երկարատև պայքարին՝ չկարողացավ գրավել այն ու կրկին Վրաստան վերադարձավ:...

...Իմերեթի Սոլոմոն թագավորը, որն օսմանցիների մոտ էր գտնվում, գնաց Արզրում ու այնտեղից խնդրագիր ուղարկեց օսմանցոց կայսրին, Օտտոմանյան դռան, ապա անցավ Երևան ու այնտեղից աղերսեց Պարսկաստանի դաենին, սակայն ոչ մի տեղից օգնություն չստացավ. և երկարատև աղերսներ ու

խնդրագրեր [ուղարկելուց] հետո եկավ Տրապիզոն, ուր հիվանդացավ և մեռավ 1815 թվին, և մեծ հանդիսավորությամբ թաղեցին այնտեղ[2]:...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Ի. վ. Գուդովիչը Վրաստանի կառավարիչ՝ 1806—1809 թթ:*

[2] *Թադման ականատես է եղել Մխոա վ. Բժշկյանը, որը նկարագրել է այն իր գրքում՝ «Գամոգրաֆիան Պոնտոսի», Վենետիկ, 1819, էջ 76 (§ 123) և 103 (§ 153), հմմտ.* Л. Меликсет-Беков. Pontica-Transcaucasica Ethnica. „Советская Этнография", 1950 г., № 2, стр. 164, 165.

ԻԳ

ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

«ՆՈՐ ՊԱՏՈՒՄ» (1824)

Բագրատ Բագրատիոն արքայազնը Վրաց Գիորգի XII վերջին թագավորի որդին է, ծնված 1776 թ. և վախճանված 1841 թ. մայիսի 8-ին։

Այս Բագրատի գրչին է պատկանում մի երկասիրություն «Նոր պատում» (Ախալի մոթխրոբա) վերնագրով, որը պարունակում է նյութեր Վրաստանի և նրա երկրների պատմության վերաբերյալ՝ շուրջ 1753—1824 թթ.։ Այս երկը հիմնականում ավարտված է 1814 թ., ապա ընդմիջումներով շարունակվել է մինչև 1819, նույնիսկ 1824 թվականը։

«Նոր պատում» հրատարակվեց Թ. Լոմտաթիդի խմբագրությամբ առանձին գրքով, որի վերնագիրն է. «Դավիթ արքայազն. Նոր պատմություն. Բագրատ արքայազն. Նոր պատում», վրացերեն, Թր., 1941, էջ 49—161։

Այս երկը շատ և շատ կետերում շփվում է Դավիթ արքայազնի «Նոր պատմության» հետ, երբեմն բառացի կրկնություններով. սակայն միաժամանակ և տարբերվում է նրանից։ Մինչդեռ Դավիթ «Նոր պատմությունը» գլուխների չի բաժանված, Բագրատ արքայազնի «Նոր պատումը» 115 պարագրաֆների է բաժանված, որ և նշում ենք մենք համապատասխան քաղվածքները թարգմանելիս։

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1753—1824 թթ.]

1. 1753 թվին. [Հ]աջի-Զալարը... գրավեց Նոխին և Շամախին (Շամախիան)... և՝ ժողովելով Շաքիի, Շիրվանի, Գյանջայի, Ղարաբաղի և Դաղստանի զորքերը՝ շարժվեց դեպի Քարթլի՝ այն նվաճելու նպատակով։ Եկավ ու նվաճեց Վրաստանի մասերը՝ Շամշադինից մինչև Ալգեթ։ Նկատելով այս՝ Թեյմուրազ

II Թագավորն[1] ուղարկեց իր որդի Էրեկլեին[2] Կովկաս[յան լեռները] չերքեզներին բերելու նպատակով:... Վրացիները հարձակվեցին Բայդարում կանգ առած [Հ]աջի-Զալարի վրա,... որը քաշվեց այնտեղից:... Վրացիները հետամուտ եղան նրան ու վրա հասան Զեգամ գետի վրա[3], որ Շամշադինում է, ճակատամարտ ունեցան, ասուված մեր Թագավորներին հաղթություն չնորհեց:...

2. 1754 թվին Թեյմուրազ Թագավորն և Էրեկլե Թագավորն իրենց զորքով գնացին Ղարաբաղը գրավելու համար:... [Վրաց զորքը] Ղարաբաղի Փանահ-խանի հետ պատերազմեց: [Վրացիները] Փանահին հաղթեցին, [Փանահը] ասատիկ պարտվեց, վինաբանը նրանից ամբողջովին խլեցին, մեծ ավար վերցրին ու հաղթանակով վերադարձան: Եվ նրա թնդանոթները պահվում են Թելավի բերդում: Այս պատերազմը մարտի 12-ին էր, որի մասին գրված է թնդանոթների վրա:

10. Էրեկլե Թագավորը 1762 թվին ուղևորվեց՝ քրդերին դեպի Ալագ[յ]ազ քշելու նպատակով: Քրդերը չուզեցին այլևս հպատակվել Էրեկլե Թագավորին. ուստի և գերեց քրդերին, շատերին տեղահան արավ ու բերեց՝ բնակեցրեց Քարթլիում...

19. 1768 թվին Իմերեթից գաղթած Բայխասրա Լևանիի որդի Արաչիձեն բռնեց Ա[ր]զրումի սարասքյարին ու մեծ զորքով տարավ Իմերեթ...

20. 1769 թվին Տփղիսում երևաց կործանիչ ժանտախտը, որը շատ մարդիկ կոտորեց Քարթլիում, Կախեթում և Իմերեթում, և տևեց ամբողջ տարի, [մինչև որ] այն չվտարվեց մեր տեր Հիսուս Քրիստոսի գեղարդի շնորհիվ, որը բերին Էջմիածնի վանքից, ուր այն սուրբ գեղարդը պահվում է:

22. 1778 թվին Էրեկլե Թագավորը հաճեց գնալ՝ Երևանը նվաճելու նպատակով: Ժողովեց իր զորքը, շարժվեց ու հասավ Երևանի բերդին, որն և [պաշարեց] 4 ամիս [շարունակ]: Երևանի խան [Հ]ուսեյն-ալին շատ անգամ ընդդիմադրեց և՝ հաղթող դուրս գալով՝ սկսեց բերդն ամրացնել: [Էրեկլեն] շատ նեղ տեղը գցեց Երևանի բերդը, քիչ մնաց, որ այն գրավեր, սակայն Իմերեթի Սոլոմոն Թագավորը խանգարեց Էրեկլե Թագավորին, բերեց Ալեքսանդրե Բաքարի որդուն Պարսկաստանից ու ապըստամբություն կազմակերպեց Քարթլիում: Տեղեկանալով սրա մասին՝ Էրեկլե Թագավորը և [Հ]ուսեյն-Ալիխանը դաշն կնքեցին: Էրեկլե Թագավորն Երևանին տարեկան վճ հարյուր թուման հարկ նշանակեց, որը վրացիները տանում էին մինչ

Գիորգիի[4] ժամանակը։ Իսկ Էրեկլե թագավորը տեղահան արավ այնտեղի հայերին ու բնակեցրեց Ղարայազում և [Հ]ավլաբարում, և վերադարձավ հաղթական։...

28. 1785 թվին Խունձախի տեր Օմար-[խան]ը... ժողովեց Դագստանի զորքը քսան հազարի չափ[5] և շարժվեց Վրաստանի վրա...[Էրեկլե] թագավորը գնաց Բորչալու, իսկ Օմար-խանը քաշվեց այնտեղից և Արծաթհանքին[6] մոտեցավ, Արծաթհանքը վերցրեց, բազմաթիվ տեղացի հույն բնակիչներին կոտորեց կամ գերի վերցրեց, Ուզու[ն]լարի ձորով անցավ, Լոռին մոտեցավ։ Լոռին չկարողացավ վերցնել, քանի որ այն մոտրավ Մալաքիա Գլուրջիձեն ամրացրել էր։ Լոռուց [Օմար-խանն] Ախալցխեի անցավ, Ախալցխեից իջավ, Վահանին (Վախանի) մոտեցավ և քսան օրից հետո Վահանի (Վախանի) բերդը[7] վերցրեց,... Եվգեն Աբաշիձեի գուսաբերին գերեց... Գարնանը գնաց, անցավ Ղարաբաղ Իրրահիմ-խանի մոտ և նրան ի կնություն ավեց Եվգենի գուսաբերից մեկին, իսկ մյուսի հետ ինքն ամուսնացավ [և] Էրեկլե թագավորի հետ գաշինք կնքեց։...

29. 1786 թվին Էրեկլե թագավորը գնաց՝ Գյանջան գրավելու նպատակով, հետն ունենալով ինչպես իր, նույնպես և ռուսական զորքը։... Գյանջայի բերդին մոտեցավ, նեղ տեղը գցեց այն։... Թագավորի մոտ եկան Ղարաբաղի հայ մելիքները, որոնց [Էրեկլեն] ուզում էր տեղահան անել և իրենց քոչվորների հետ միասին Վրաստանում բնակեցնել։ Նրանց տեղահան անելու համար Էրեկլե թագավորն ուղարկեց իր որդի Յուլոնին, որին կցեց Վրաստանի մի քանի զորականներին։ Այնտեղ Ղարաբաղի խան Իրրահիմը պատերազմի ելավ Զեյլա կոչեցյալ վայրում։ Ղարաբաղի խան Իրրահիմը պարտվեց, շատ զարաբաղցիներ կոտորվեցին, իսկ վրացիներից և ոչ մի մարդ չզոհվեց,...մինչդեռ ռուսական զորքը հրաման առացավ վերադառնալ Ռուսիա, [և ռուսները] քաշվեցին, գնացին։ Տեսնելով այս, Էրեկլե թագավորը գրեց իր որդի Յուլոնին, որպեսզի վերադառնա բնակատեղը։ Շատով կերպով վերադառնալով՝ Յուլոնը հաղթական եկավ իր հոր մոտ, ապա Էրեկլե թագավորն ևս եկավ Տփղիս։

38. ...1795 թվի մայիսին Աղա-Մահմադ-խան Ղաջարն[8] իր զորքով եկավ և մոտեցավ Ղարաբաղի Շուշվա բերդին։ 4 ամիս Աղա այնտեղ, [սակայն] Շուշին չկարողացավ վերցնել, [քանի որ] այն Շուշվա Իրրահիմ-խանը շատ էր ամրացրել։ [Աղան] ուղեց վերադառնալ [Պարսկաստան], սակայն

Գյանջայի Զավադ-խանը, քանի որ Էրեկլե թագավորի հակառակորդն ու թշնամին էր, առաջնորդեց նրան դեպի Տփղիս[9]... Ագա-Մահմադ-խանը պահանջում էր [Էրեկլե] թագավորից հնազանդություն և դաշինք՝ խոստանալով տալ նրան Գյանջան, Երևանը, Ղարաբաղը, Շաքին, Շիրվանը և [նույն]ինք Ադրբեջանի կառավարչությունն... [Առաջին] ճակատամարտը տեղի ունեցավ սեպտեմբերի 11-ին Շամքորադի [ծայր]ին[10], ուր վրացիք պարտություն կրեցին պարսիկներից[11]:...

39. 1796 թվին... Էրեկլե թագավորը՝ զորք ժողովելով՝ գնաց Գյանջան նվաճելու, որն այն ժամանակ մի բեկ էր Ղարաբաղի Իբրահիմ-խանի հետ:...

40. 1796 թվին... մեծ սով էր Քարթլիում, Գյանջա-Ղարաբաղում և Շաքի-Շիրվանում, այնպես որ հացի մի կոպը գժվար էր ճարվում և գնահատվում էր մի թուման...

41. 1797 թվին Ագա-Մահմադ-խանը՝ լսելով ռուսների նահանջը [Վրաստանից՝] մեծ զորքով ուղղվեց դեպի Վրաստան, եկավ Շուշի: Շուշվա Իբրահիմ-խանը վախից փախավ, գնաց Ճար: Իսկ Ագա-Մահմադ-խանը գրավեց Շուշին և՝ հիասով այնտեղ՝ զորք պատրաստեց, որն երկու մասի բաժանեց, մտադրվելով մի մասն ուղարկել Քարթլիի դեմ և մյուսը՝ Կախեթի... Սակայն տասված խախտեց նրա մտադրությունը, քանի որ հունիսի 12-ի գիշերը Ագա-Մահմադ-խանին քնած վիճակում Ղարաբաղի Շուշվա բերդում սպանեց իրեն իսկ պահապանը... և տասված Քարթլին ու Կախեթը ավերումից փրկեց[12]:...

43. 1798 թվին... Դիմրթի Յեգիշվիլին... գնաց Փամբակ (Փանբակ)... Սարդար Դիմրթի Յեգիշվիլին, որը Պարսկաստանում էր գտնվում,] Երևանյան սահմաններից վերադարձավ:...

44. 1800 թվին Դ'աեն Բարախանն[13] ուղարկեց իր սարդարին Նախիջևան: Դիմրթի թագավորի եղբայր Ալեքսանդրեն պատվաճանեց նրան, գնաց Նախիջևան սարդարի մոտ: Այդ պահին սարդարը վերադարձավ Պարսկաստան, իսկ Ալեքսանդրեն՝ հիասով այնտեղ՝ ոչինչ չկարողացավ գլուխ բերել: Ալեքսանդրեն Նախիջևանից անցավ Ղարաբաղ Իբրահիմ-խանի մոտ: Իսկ այդ պահին Խունձախի տեր Օմար[-խան]ը տասերկու հազար զորքով եկել, իջել էր Ճար: Լսելով այդ՝ Ալեքսանդրեն Ղարաբաղից անցավ Ճար ու գնաց Օմարի մոտ, գանգատվելով [Դիմրթիից] և խոստանալով տալ նրան բազմաթիվ գերիներ և ավար... 1800 թվին... Օմար-խանը... Գյանջայից անցավ Ղարաբաղ իր փեսա

Իբրահիմ-խանի մոտ, որը [սակայն] նրան հյուրընկալության ցույց չտվեց:...

46. 1801 թվին... զազախեցիները երթվեցին [Յուլոն և վախտանգ արքայազներին], քանի որ այն պահին Դարաբաղից Ղազախ էր եկել ու այնտեղ էր մնում Ալեքսանդրեն:... Դարաբաղից նոր եկած Ալեքսանդրեն լսել էր իր եղբոր՝ Գիորգիի մահվան բոլը:... Տփղիսի մելիքն էր Դարչի (Դարչիա) Բեբութովը[14]:... Կայսրը[15] հառաստակեց Տփղիսն իրրև նահանգ և բաժանեց Քարթլին, Կախեթը և Սոմխեթը, որոնք են՝ 1. Տփղիս, 2. Լոռի, 3. Թելավ, 4. Սղնախ, 5. Գորի, 6. Դուշեթ: Սրանք էին գավառական գլխավոր քաղաքները[16]:...

61. 1803 թվին Ցիցիանովը[17] գիմեց Երևանի Մահմադ-խանին՝ առաջարկելով համերաշխ լինել Ռուսիայի հետ և խընդրեց թույլ տա Երևանի բերդում իր զորքը պահել, իսկ Երևանին ինքը (Մահմադ-խանը) տիրի և հարկ վճարի, ինչպես [վրաց] թագավորները օրոք էր: Չկամենալով լսել այս առաջարկը՝ Մահմադ-խանը սրա մասին տեղեկացրեց պաեն Բարյատինին, որի կապակցությամբ պաենը դեսպան ուղարկեց Ցիցիանովի մոտ, գրելով, որ նա հրաժարվի Երևանը պահանջելուց, հակառակ դեպքում՝ կռվի պաենի հետ: Լսելով այս, Ցիցիանովը... գնաց Երևանի դեմ: [Ցիցիանովի] Երևան հասնելուն պես, շահզադե Աբաս-միրզան, Բարյատինի որդին, տաս հազար զորքով օգնության հասավ Երևանին: Սրա հետ ճակատամարտ ունեցավ Ցիցիանովը, և պատերազմը սաստիկ էր: Թեև զղրաշները պայքարում էին, գեներալ Սերգի Ալեքսանդրովիչ Գուչկովը չխուսափեց այն ամրություններից, որոնք՝ խիստ քարքարոտ և ժայռոտ լինելով՝ Երևանի շուրջն են գտնվում: Գուչկովը իր զորքը, որ կովկասյան գրենադերներից էր բազկացած, տարավ դեպի լեռները և բարձրացավ այն լեռան վրա, ուր զղրաշներն էին ամրացած, խլեց այդ բերդը, իսկ զղրաշները փախուստի դիմեցին ռուսներից, որոնք հետամուտ եղան նրանց մինչ նրանց բանակատեղը, որը նույնպես հաղթանակով գրավեցին: Այս պատերազմի միջոցին սպանեցին Բայխոսրո Արաշիձեին, Լեռնի որդուն, որը նոր էր եկել Ախալցխեից և որը ռուսների հետ էր: Իսկ ռուսները հասան մինչ Էջմիածնի վանքը, որը նույնպես խլեցին զղրաշներից, ապա հասան Երևան քաղաքը, որն և գրավեցին, և կանգ առան այնտեղ: Իսկ խանը և ժողովուրդը բերդի մեջ ամրացան, քանի որ Երևանի բերդը խիստ

ամուր էր և թշնամուց անառիկ։ Այս բոլորի մասին զեկուցեց իր հորը։ Դաւիթը՝ լսելով այս՝ շարժվեց հարյուր հազար զորքով դեպի Երևան. եկավ և հասավ Երևան, ուր Ցիցիանովն էր գտնվում։ Եվ ամեն օր տեղի ուներ պատերազմ։ Ցիցիանովը ռուսական քիչ զորք ուներ, որից շատերը՝ շոգին ու օդին չդիմանալով՝ հիվանդացել էին և նույնիսկ մեռել։ Ուստի և նրա հետ մնացել էր երկու հազար վեց հարյուր ռուս զինվոր։ Տեսնելով այս, այնտեղ գտնվող վրաց իշխաններն և քաղաքացիները սկսեցին հեռանալ ռուսներից և ուզևորվեցին Տփղիս։ Այդ պահին դաւեն Բաբախանն այնպես էր ամրացրել Երևանի շուրջը գտնվող ճանապարհները, ուր ոչ մի զորք այնտեղ անցնել չէր կարող։ Հետացող վրացիների ճանապարհը կարճեց դպրաշների զորքը, որը վրացիների մի մասը կոտորեց և մյուսը կալանավորեց բոլոր քաղաքացիների հետ միասին, որոնց թվումն էին Օրբելիանի Իոանե Դավթի որդին, Սարաբաթիանոյի սարդարը, և սա կալանավորվեց իր երեք հորեղբորորդոց հետ միասին, որոնց իրրև գերիներ ուղարկեցին դաւեն։... Իսկ դեպի Փամբակ դաւեն ուղարկեց իր սարդար Փիր-գուլի-խանին ութ հազար զորքով, որպեսզի վերցնեն Ղարաքիլիսայի բերդը, որը ռուսներն ամրացրել էին և այնտեղ պահում էին պարեն և ղինանյութ (արճիճ և վառոդ)։ Հասնելով Փամբակ՝ Փիր-գուլի-խանը պատերազմում էր Ղարաքիլիսայի բերդի դեմ, սակայն չկարողացավ այն վերցնել, քանի որ ռուսներն այն խիստ ամրացրել էին։... Մինչդեռ Ցիցիանովը Երևան քաղաքում նեղ վիճակի մեջ էր գտնվում [և թեև] ամրանում էր, սակայն ղինանյութը (դեղն ու արճիճը) պակասում էր։ Ապա [Ցիցիանովը] Փամբակ ուղարկեց Մանարեզար ազգանունով մայորին ութսուն մարդով և նրանց հետ միասին պարարտպի մելիք Աբովի որդի Ռոստոմին վաթսուն պարարտպի հայերով, և սրանց հետ երկու թնդանոթ։ Սրանք՝ դպրոցական երևելով Երևանից՝ հասան Փամբակ։ Տեղեկանալով սրա մասին՝ այնտեղ գտնվող սարդար Փիր-գուլի-խանն ուղևորվեց ու ճանապարհը կտրեց Համամլիում։ Եկած ռուսները ճակատամարտ ունեցան [զղրաշների հետ], սակայն պարսիկները հաղթություն ունեցան՝ բոլորին կոտորեցին, հայերից սմանց գերեցին, և նրանց թնդանոթներն ու գերիներին ուղարկեցին Երևանում գտնվող դաւեին, որի առթիվ դաւեն Փիր-գուլի-խանին մեծ շնորհակալություն հայտնեց ու խալաթ ևս նվիրեց։

62. 1805 թվին, Զիցիանովի Երևանում գտնվելու պահին, Վրաստանի ժողովուրդը... սպասում էր Զիցիանովի կործանումը Երևանում:... Յուրն և Փառնասող արքայազները... Իմերեթից... եկան Սուրամի մոտերքը... և ուզեցին Կուր [գետ]ով անցնել ու գնալ Փամբակ Փըր-գուլի-խանի մոտ:... Լեզգիները հասցրին Փառնասող և Լեռն արքայազներին Փամբակ ու բերին սարդարի մոտ, ուր նրանք հանդիպում ունեցան իրենց եղբայր Ալեքսանդրեի և եղբորորդի Թեյմուրազի հետ:... Փառնասողը Փամբակից անցավ Թոխալեխ... Իսկ Զիցիանովը իր զորքով գրոհ էր տալիս Երևանին:... Այս պահին զանն Բաբախանն Երևանում լսեց, որ Պարսկաստանում խռովություն է ընկել, որի պատճառով Նահանջեց. իսկ Զիցիանովը խաղաղ վիճակում մնաց Երևանում, [ապա] տեղանան եկավ ու վերադարձավ Տփղիս:... [Ապա] Պավել Զիցիանովը բոլոր տեղերն ուղարկեց գրություն, որպեսզի Փառնասոգին կալանավորեն ու իրեն հանձնեն: Իսկ Փառնասոգը՝ ելնելով Արագվայից և անցնելով Կուրը՝ հասավ Ղազախ, բարձրացավ Ալպան կոչված լեռնային գյուղը, ուր հայերն են ապրում:... Ավալիշվիլի Սոլոմոնը, որն այն պահին Ղազախի մոուրաձին էր, ժողովեց զազախեցիներին երեք հարյուր հոգու չափ և գիշերով հարձակվեց քնած Փառնասոգի և նրա ուղեկիցների վրա, որոնց բոլորին կալանավորեց ու Զիցիանովին հանձնեց:...

63. 1799 թվին, երբ Էջմիածնում վախճանվեց Ղուկաս[18] հոգևոր տերը (օրքիվատերը)[19], հայերը ցանկացան Աստվածոլից բերել այնտեղի պատրիարք Դանի[ել]ին ու նրան հոգևոր տեր (օրքիվատեր) բազմեցնել Էջմիածնում: Լսելով այս՝ Գիւորգի Թագավորը խնդրեց Պավել կայսրից, որպեսզի Ռուսիայից ուղարկի իշխան Արղության Հովսեփին (Արղությով Օսեփ)[20], ռուսահայոց քահանայապետին և հոգևոր տեր (օրքիվատեր) դարձնի Էջմիածնում: Կայսրը լիովին կատարեց Թագավորի խնդիրը: Ապա երկպատակություն առաջացավ հայերի միջև, ոմանք ուզում էին Հովսեփին, ոմանք Դանի[ել]ելին, ում վրա հայերը մեծ հույսեր էին դնում: Լսելով այս՝ Հովսեփը խնդրեց կայսրից, որպեսզի գրի Աստվածոլ իր դեսպանին, որ Դանիելին Էջմիածին չուղարկեն: Ապա կայսրը գրեց իր դեսպանին, որն և կատարեց հրամայածը՝ կալանավորելով Դանիելին և ուղարկելով նրան, իբրև բանտարկյալի, Բոխչա-Ագա, ուր նա մի առ ժամանակ մնաց: Իսկ 1801 թվին այս Հովսեփը իբրև հոգևոր տեր (օրքիվատեր) Ռուսիայից Տփղիս եկավ, բայց Գիւորգի Թա-

գավորին կենդանի չտեսավ։ Այս պատճառով շատ տխրեց, քանի որ ռուսաց կայսրին հատուկ խոսք էր տվել հայոց եկեղեցին և կրոնը (եկեղեցինները և կրոնները) ռուսա[գաման] պահելու։ Տեղեկանալով սրա մասին՝ հայ հոգևորականները թուղթ գրեցին Հովսեփ հոգևոր տիրոջ (Օսեփ օրքիվատեի) և նա Տիգրանում մեռավ մարտ ամսի 10-ին և չարժանացավ օծման իբրև հոգևոր տեր (օրքիվատեր)[21]։ Դարձյալ ուզեցին Դանիելին բերել։ Այս պահին Դավիթ անունով մի վարպապետ կար Վրաստանի Էնաթեթ գյուղից։ Սա իր կողմնակից դարձրեց Վրաստանի արքայազն Դավթին և Երևանի խան Մահմադին, և էջմիածնի հայոց ժողովը նրան կաթողիկոս դարձրեց, և նույնիսկ նրան օծեցին։ Լսելով այս՝ ռուսա[հայոց] առաջնորդ Եփրեմն իր կողմնակից դարձրեց ռուսահայերին, նաև նախարարներին, որոնք խնդրեցին Ալեքսանդր կայսրից, որպեսզի Դավթին գահընկեց անի և Դանիելին նստացնի [կաթողիկոս]։ Այս պահին հայերը Դանիելին բանտարկությունից ազատել էին։ Լսելով այս՝ արքան կատաղեց նրանց խնդիրը և գրեց Վրաստանի կառավարչին, որպեսզի Դանիելին դարձնի [կաթողիկոս], իսկ Դավթին գահընկեց անի։ Դալով Ստամբուլից՝ Դանիելը գահընկեց արավ Դավթին և ինքը օծվեց [կաթողիկոս] 1804-ին։ Դավիթը հեռացավ, գնաց պահն Բաբախանի մոտ, որը նրան պատվով ընդունեց։ Դավիթը ընծաներ մատուցեց [պահին], ուստի և նրան կրկին տվին հոգևոր տերության (օրքիվատերության) 1805 թվին։ Դավիթը՝ հասնելով էջմիածին՝ կալանավորեց Դանիելին, որի մորուքը խուզել տվեց, էշի վրա նստեցնել տվեց և այսպես՝ անարգանքի ենթարկելով՝ բանտարկեց մի խցի մեջ, ուր Դանիելը վշտից մեռավ։ Սակայն Դավիթն իր նպատակին չհասավ, քանի որ հայերը նրան չէին հնազանդվում[22]։ Իսկ 1809 թվին Ալեքսանդր կայսրը հոգևոր տեր (օրքիվատեր) նստացրեց ռուսահայոց երեցպատետ (արքիեպիսկ) Եփրեմին։ Էջմիածին գալուն պես՝ հայերը նրան ընդունեցին [և] հոգևոր տեր (օրքիվատեր) օծեցին։ Դահեն ևս հաստատեց նրան։ Սա մաերմացավ Դավիթ հոգևոր տիրոջ (օրքիվատեր) հետ, որին պատվով էր վերաբերում և իրեն մոտ պահում։ Եվ այսուհետև խաղաղություն ընկավ հայոց մեջ[23]։

65. 1805 թվի հունիսի 3-ին Ցիցիանովը գնաց Գյանջա՝ նպատակ ունենալով նվաճել Ղարաբաղը։ Ղարաբաղի Իբրահիմ-խանին նամակ գրեց, հրավիրելով նրան հավատարիմ մնալ արքային։ Լսելով այս՝ Իբրահիմ-խանն ուրախությամբ հնազանդ-

վեց Յեգիանովին, եկավ Գյանջա ու հանձնեց նրան [Շուշվա] բերդի բանալին։ Ապա եկած խանին Յեգիանովը ևս մեծարեց ու վերստին շնորհեց նրան Ղարաբաղի խան[ությունը] և նշանակեց հարկ՝ տարեկան տաս հազար ռուբլի։ Իսկ բերդի մեջ տեղավորեց եգերյան մի գունդ։ Եվ մի առ ժամանակ Իբրահիմ-խանը խաղաղ էր։ Սակայն... Նինիա [Ա]միլախվարին, որն երեսատասրդ հասակից Ալեքսանդրե արքայազնի մոտ էր գտնվում, Պարսկաստանից գավաճանեց Ալեքսանդրե արքայազնին ու Յեգիանովի մոտ փախավ Երևան, հաղորդելով զղրաշների ու զանի բոլոր գործերի մասին, որի պատճառով [Յեգիանովը] չատ սիրեց ու պատվեց նրան։ Եվ սրան հանձնեց [Յեգիանովը] Ղարաբաղի գործ[եր]ն ևս, որի կապակցությամբ Իբրահիմ-խանին մեղադրեցին նենգամտության մեջ, և մի գիշեր Իբրահիմ-խանի վրա հարձակում գործեցին [մայոր Դիմիտրի Տիխանովիչ] Լիսանևիչն և [Նինիա Գուրաշվիլին, որին] Թավրեցա [Լին կոչում]. Երբ Իբրահիմը կանգ էր առել Ակարանի մի այգում, սպանեցին նրան, զավթեցին նրա ամբողջ գույքը և նրա ավարով (տավար[ոչխարով]) խիստ հարստացան։

66. 1806 թվին Յեգիանովը գնաց Շաքի-Շիրվանը նվաճելու։... Ապա գնաց Բագվի վրա։ Այսաեղ Բագվի խանը՝ [Հ]ուսեյն զուլին զավաճանություն սարքեց, որպեսզի սպանի Յեգիանովին։ Լսելով այս՝ այնտեղ ապրող հայերից մեկը հաղորդեց սրա մասին Յեգիանովին, որը [սակայն] իր հպարտ լինելու և անհոգատեսության շնորհիվ հավատ չընծայեց այն հային, բանտարկել տվեց և անողոք պատժեց նրան։...

67. 1806 թվին... Ախալքալաքում գտնվող կոմս Գուդովիչին (Ղուդովիչին)[24] լուր հասավ, որ Ա[ղբումի սարասքյար [Հ]ուսեյնն ութսուն հազար զորքով գալիս է։ Լսելով այս՝ կոմս Գուդովիչը թողեց Ախալքալաքի պաշարումը և գնաց դեմ առ դեմ նրա հետ պատերազմելու։ Հասնելով Արփաչայ գետի [ափը]՝ հանդիպեց սարասքյարին։ Տեղի ունեցավ մեծ պատերազմ հունիսի 18-ին։ Օսմաններըը պարտվեցին և փախան ռուսներից։ Ռուսներին միայն օսմանցոց վինանոցը (թոփխանան) ու նրանց բանակ[ատեղը]։...

73. 1808 թվի հոկտեմբերի 5-ին կոմս Գուդովիչը գնաց՝ Երևանը նվաճելու։ Հասնելով այնտեղ, նա վերցրեց Քանաքեռը ու կանգ առավ այնտեղ։ Այդ ժամանակ Երևանի բերդը զանի սարգարի կողմից ամրացրած էր. իր առաջին գալստյան մի-

ջոցին պահն Երևանի Մահմադ-խանին ընտանիքով Թե[հ]րան էր կանչել իր մոտ ու չէր թողել Երևանում, քանի որ Մահմադ-խանն երկերեսանի էր և անհաստատ։ Այս պատճառով պահը՝ հավատ չընծայելով նրան՝ [Երևանի] բերդը մացրեց իր պահապաններին ու Երևանի կառավարիչ նշանակեց տեղական իր սարդարին։ Լսելով այս՝ Աբաս-միրզան, պահն Բաբախանի որդին, Թավրիզից շարժվեց իր զորքով և իր նոր կանոնավոր զորաբաժնով և հրետանիով (արտիլերիայով), որոնց այդ պահին [դեկավարում] էին Նապոլեոն կայսեր կողմից ուղարկված ֆրանսիացիները, որոնք [եկել էին] զլուխներին կանոնավոր [զորք պահելու արհեստը] սովորեցնելու նպատակով, քանի որ պահնի և ֆրանսիացիների միջև բարեկամություն էր հաստատվել... Աբաս-միրզան՝ հասնելով Նախիջևան՝ կանգ առավ այնտեղ, որպեսզի Երևանին օգնություն հասցնի։ Լսելով այս՝ կոմս Գուդովիչն երկու [զոր]գունդ ուղարկեց,... որոնք՝ հասնելով Նախիջևան՝ պատերազմ սկսեցին Աբաս-միրզայի հետ. տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, բայց ոչ մի կողմը չհաղթեց, քանի որ զլուխները, որոնք նոր էին սովորել ֆրանսիացիներից [զինվորական գործը], լավ էին կռվում... Իսկ Գուդովիչի փոխարեն նրա Երևանում գտնվելու միջոցին, ռուսաց արքունիքի կողմից նշանակվել էր գեներալ անշեֆ Ալեքսանդր Պետրովիչ Տորմասովը[25], որն ուղևորվեց Երևան։ Լսելով այս՝ կոմս Գուդովիչը վշտացած հեռացավ Երևանից, քանի որ այն պահին գրոհ էր տվել բերդին ու չէր տեսնում [հետևանքը], Երևանից քաշվեց ու վերադարձավ [Տփղիս]։ Բերդապահները՝ տեսնելով այս՝ հարձակվեցին ռուս զինվորների վրա և մի բառալուն կոտորեցին ամբողջապես։ Լսելով այս՝ Աբաս-միրզան դուրս եկավ Նախիջևանից, հետամուտ եղավ ռուսներին ու շատ ջնաս հասցրեց նրանց։ Այդ պահին կոմս Գուդովիչն անցավ Ապարանի ձյունապատ լեռը, քանի որ դեկտեմբեր ամիսն էր, և շատ ռուսներ ու վրացիներ կոտորվեցին սառնամանիքից և ձյունից, քանի որ այս լեռը շատ դաժան է ձմեռային սառնամանիքին։ Այդ պահին հասնելով Երևան՝ Աբաս-միրզան վերստին խստ ամրացրեց այն, զորքը շատացրեց ու ձմեռեց այնտեղ։...

75. 1810 թվին Իմերեթի թագավոր Սոլոմոնը կրկին աշխատում էր ընդդիմադրել ռուսներին և հրավիրում էր Ա[ր]զրումի սարասքյարին [օգնության]... Այդ ժամանակ Տորմասովը գնացել էր Արազի (Արեզի) ափը, ուր եկել էր պահնի դեսպան

Միրզա-Բուզուրգը, որպեսզի վոխադարձ գաշինք [կնքեն] և խաղաղություն հաստատեն, որոշելով Վրաստանի և Պարսկաստանի միջսահմանը... Տփղիսի նահանգապետն էր Ախվերդովը... Տորմասովը Արագի (Արեգի) ափին էր, և սպասում էր հաշտության կնքելու դեսպանների հետ... Տփղիսում նահանգապետի կարգադրությամբ կալանավորեցին ոսոխկանապետ, այսինքն նացվալ Դավիթ Դոստաշարաշվիլուն և բոլորովին անմեղ ասանասպետներ (դեսյատնիկներ) Գևոնեւլաշվիլի Մաքսիմե Իոանեի որդուն[26], Գոգիա Իմերցուն և գրեցի հայ Իոաննեին։ Այս չորսին հրացանով գնդակահարեցին Տփղիսում, [Հ]ավլաբարի ջրափին, և թաղված են [սրանք] [Հ]ավլաբարում իսկ՝ մեկիկ ժամ[27] հայնկուց գանվոզ դաշտում, որոնց գերեզմանն[ներ]ի վրա ծագեց ի վերուստ իջնող լույս, և նրանք սրբոց շարքը դասվեցին։...

77. ... 1810 թվին... դահճի որդի Արաս-միրզան շարժվեց Բարթլիի վրա։ Փամբակ գալուն պես՝ նրան հասավ դահճի հրամանը, որպեսզի Թավրիզ վերադառնա։ Ետ գնալիս Արաս-միրզան մտավ Երևան ու կանգ առավ Դավալու (Դեվալու) կոչված վայրում, որն իննը մղոնով (տասջով) է նրանից հեռու գտնվում... Վրացի իշխան Կիկոլա Բարաթովը, ազնվական Պետրե Լարաձեն, Լալան, Լոռեցի ազնվական Լևոնը և այլն ուղևորվեցին դեպի Ալագ[յազի] սարը և անցան այդ սարն ու հասան Շորագ[յալ]՝ ռուսների մոտ։ Լսելով. այս, Արաս-միրզան հետամուտ եղավ նրանց, սակայն չհասավ։

84. 1810 թվին... Մարիվիլ Պաուլիչից[28] պարտված սարդար [Հ]ասեյն-խանը հասավ Երևան։ Այս հաղթանակն եղավ սեպտեմբերի 5-ին։...

96. 1812 թվին ... Կախեթում ապստամբություն կազմակերպեցին և դիմեցին Էրեկլե թագավորի որդի Ալեքսանդրեին, որն այն պահին Երևանում էր գտնվում [օգնություն խնդրելով], և սկսեցին ամբռնալ[29]։ Լսելով այս՝ Վրաստանի կառավարչապետ Ռոխշչևը[30] գրեց Ղարաբաղում կանգնած գեներալ-մայոր Կոտլյարևսկուն (Կիսլերևսկին), որպեսզի նա իր զորագնդով գնա և հարձակվի Արաս-միրզայի վրա Արագի (Արեգի) [ափին] և պատերազմի նրա հետ։... Գնալով Ղարաբաղից՝ գեներալ Կոտլյարևսկին (Կիսլերևսկի) Արագ (Արես) գետով անցավ և մի գիշեր, հոկտեմբերի 20-ին, հարձակվեց զղրաշների վրա Ասլանգուղ կոչված վայրում։ Տեսնելով այս՝ զղրաշները փախուստի դիմեցին։...

101. 1813 թվի դեկտեմբերի 18-ին Պարսկաստանի դահն Բաբախանը դաշինք կնքեց Ալեքսանդր Պավլովիչ կայսեր հետ[31], և որոշեցին Վրաստանի սահմանն այսպես. Ռուսաստանին անցած զվրթաշական խանությունները (խանական երկրները). 1. Ղարաբաղի՝ մինչև Արաղ (Արեզ), 2. Գյանջայի, 3. Շաքիի և ամբողջ Շերվանի, 4. Դաղստանի, 5. Բաքվի, 6. Ղուբայի, Թաւիշի, և 7. ամբողջ Դաղստանի:... Իսկ դահնին ինաց Երևանն ու ներքին Պարսկաստանը Մուղանիերինից հայնկուս:...

115. 1817 թվին... Գիւորգի քահանա Շամ-մելիքիշվիլին[32], որը վաստակավոր մարդ էր, Մոսկվայում էր գտնվում:

1824 թվին հայերը կորցրին սուրբ Զառիկը և լիալուսնի պատճառով սխալվեցին[33]: Այսպես պատմեց ինձ տեր-Գևորգ քահանա Թելեթեցին, որն այժմ Պետերբուրգումն է գտնվում, և հմուտ է ինչպես հայերենում, նույնպես և վրացերենում: 80 տարին մեկ անգամ այսպես հայերը Զառիկի հաշվում սխալվում են:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Թեյմուրազ II, Քարթլիի թագավոր՝ 1744—1762 թթ.:

[2] Էրեկլե II, Կախեթի թագավոր, 1744—1762 թթ., Քարթլ-Կախեթի թագավոր՝ 1762—1798 թթ.:

[3] Նույն Սապիմը կամ Բերդուջը, որը շփոթում են Դերեգի հետ. հմմտ. «Վրաց աղբյուրներից» II հատորը, էջ 63—64:

[4] Գիւորգի XII, Վրաց վերջին թագավորը, 1798—1800 թթ.:

[5] Ըստ «Վրաստանին կից երկրների նկարագրության» գույդ համաբրությունների՝ 1769 և 1784 թթ., Դաղստանն ի վիճակի էր դուրս հանելու 22.000 զորք (հմմտ. Л. Меликсет-Беков, „Описание сопредельных с Грузиею стран" второй половины XVIII века.—„Труды Тбил. Гос. Унив.", т. XVIII, 1940, стр. 122, 134).

[6] Այսինքն Ախտալային:

[7] Ի նկատ ունի Թմոգվի (Թմկարբերդի)—վարձիայի գիմացը, կուր գետի աջ ափին գտնվող «Վանից-քվաբի»-ն, Գոգաշեն գյուղից ցած:

[8] Ագա-Մահմադ-խան, Պարսից շահ, 1794—1797 թթ.:

[9] Հմմտ. Բ ա ֆ ֆ ի, Քամտայի մելիքությունները, Թ., 1882, էջ XXXIX (ըստ ցանկի):

[10] Որը հայանի էր հայոց ուխտաւանդով (հմմտ. Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Հայկական հնություններ Թրիլիսիի մոտիկ շրջակայքում. Շաիքաբադ-Թելեթ-Ծաղկահովիտ, վրացերեն, «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», I, Թբ., 1922, էջ 90—92):

[11] Տփղիսի ավերման վերաբերյալ հայ գրականության տեսությունը, տե՛ս Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Անանուն հայ պատմիչի նորագյուտ երկը

Թրիլիսիի 1795 թ. ավերման մասին,—«ՍՍՌՄ Գիտ. Ակադ. Հայկական ֆիլիալի Տեղեկագիր», 1941 թ., № 3—4, էջ 45—53։

12 Ոմանք 1797-ի փոխարեն 1796-ն են դնում։

13 Ֆաթհ-Ալի, Պարսից շահ, 1797—1834 թթ.։

14 Չմոռանալ այս աշխատության ԺԹ. գլուխը, 15-րդ ծանոթ. (էջ 210)։

15 Խոսքը Ալեքսանդր I կայսեր մասին է։

16 Չմոռանալ Полное собрание законов Российской империи, 1-е. т. XXVI, №№ 20.007—20.009.

17 Գեն. Պ. Դ. Ցիցիանովը (Ցիցեշվիլին), Վրաստանի կառավարիչ, 1802—1806 թթ.։

18 Ղուկաս, ամենայն հայոց կաթողիկոս, 1780—1799 թթ.։

19 Չմոռանալ այս աշխատության Դ գլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. (էջ 88) և այլուր։

20 Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի մասին տե՛ս այս աշխատության ԺՀ գլխի 4-րդ ծանոթությունը (էջ 196) և Ի գլխի 9-րդ ծանոթ. (էջ 209—210)։

21 Չմոռանալ այս աշխատության ԺԹ գլուխը (էջ 203—204)։

22 Դավիթ-Տանիելյան վեճի մասին տե՛ս այս աշխատության Ի գլխի 10-րդ ծանոթ. (էջ 210)։

23 Նիքեմ, ամենայն հայոց կաթողիկոս, 1809—1830 թթ.։

24 Գեն. Ի. Վ. Գուդովիչը Վրաստանի կառավարիչ 1806—1809 թթ.։

25 Գեն. Ա. Պ. Տորմասովը, Վրաստանի կառավարիչ, 1809—1811 թթ.։

26 Իսահակ Գենաթալաշվիլու մասին այս աշխատության Թ գլուխը (էջ 148)։

27 Խոջիվանքի մասին է խոսքը։

28 Մարկիզ Ֆ. Օ. Պաուլուչչին Վրաստանի կառավարիչ 1811—1812 թթ.։

29 Կախեթի ապստամբության մասին տե՛ս Ալեքսանդր Փրոնզել (=Ալեքսանդր Ղևիշյան), Կախեթի ապստամբությունը (1812-թվին) պատմական եղելություն, վրացերեն, Թ. 1907. Ա. ր. կ ի կ ի ձ ե, Դյուդպական ապստամբությունները Կախեթում 1812 թ., վրացերեն, Թ. 1911։ О. П. Маркова, Восстание в Кахетии 1812 г., Москва, 1951.

30 Գեն. Ն. Ֆ. Ռտիշչևը Վրաստանի կառավարիչ, 1812—1816 թթ.։

31 Խոսքը Գյուլստանի դաշնագրի մասին է։

32 Վրաց պալատական եկեղեցու քահանա (դրան երեց), որը Դավիթ Բնապեկցու օրոք այցելել էր Էջմիածինը (տես էջ 259)։

33 Խոսքը Ծոպատակի մասին է։

ԻԹ

ԻՈԱՆՆԵ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

«ԿԱԼՄԱՍՈՐԱ» (1800—1828)

Իոաննե Բագրատիոն արքայազնը Վրաց վերջին թագավոր Գիորգի XII (XIII)-ի որդին էր։ Ծնվել է 1772 թ., կրթությունը ստացել է Թելավի սեմինարիայում, 1795 թ. մասնակցել է Ագա-Մահմադ-խանի դեմ մղած պայքարում։ 1801 թ. Քարթլ-Կախեթի Ռուսաստանին միացնելուց հետո անցնում է Ռուսաստան, բնակություն հաստատելով Պետերբուրգում, ուր և զբաղվում է զրական-գիտական գործունեությամբ, որտեղ և վախճանվում է 1839 թ.։ Նրա մոզած հարուստ գրադարանն ու ձեռագրերի հավաքածուն անցնում է Պետերբուրգի Հանրային, այժմ Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանին, коллекция Царевича Иоанна նմանկլատուրայով։

Իոաննե արքայազնը հեղինակ է «Կալմասորա» կոչված մեծ երկի, ռուս-վրացերեն բառարանի, «Սեյլանխանի» վեպի և այլն։ Բայց նրա գլուխ գործոցը «Կալմասորա»-ն է։

«Կալմասորա»-ն 3 հատորից բաղկացած ստվար աշխատություն է, որը հուշերի և ուղեգրություն-զրույցների (դիալոգների) բնույթ է կրում՝ պատմական, աշխարհագրական, զրական-գիտական, ստուգաբանական, մանկավարժական, փիլիսոփայական, բնագիտական և այլն բովանդակությամբ, որը և մի տեսակ հանրագիտարան-շեմարանի նման է։ Վերնագիրը՝ «Կալմասորա», որն, անկասկած, հայկական ծագում ունի (համմ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, III, 858. Սաթա Օրբելիանի, Բառարան, 160), բաղկացած լինելով «կալ» և «մաս» արմատներից (այստեղից՝ «կալ+մաս-որա=կալմասուկ), նշանակում է հավատացյալներից ցրվեն և գինի հավաքել՝ հօգուտ վանքի։ Եվ իրոք «հավաքող» գաղափարն է ընկած Քարթլիի Բվարթախևի (Բվարթախևի) վանքի կուսակրոն կիսասարկավագ (խազդիակոն) Իոնա Խելաշվիլին, որը Իոաննե արքայազնի գաղափարը

է եղել Թելավի սեմինարիայից, և որին հեղինակը մաՆ է ածում այլևայլ տեղեր՝ ախտած Թարթլիից, Կախեթ, Սոմխիթ, նույնիսկ Հայաստան՝ հատկապես Էջմիածին։ Տեղ-տեղ գրված քում հանդես են գալիս և ուրիշ անձինք, օրինակ՝ նույն վանքի վանահայր Դոսիթեոս Փիցխելաուրին, Զուրաբ Ղամբարաշվիլին, որ գոբեցի հայ էր, վրացադավանության անցած, և այլն։ Աշխատությունը սկզբից մինչև վերջը հիմնականում դիալոգի ձևով է գրված 1800—1828 թթ. միջոցին։

Հայաստանին և հայերին վերաբերյալ նյութը «Կալմասոբա»-ում («Կալմասունք»-ում) գրված է այս ու այն տեղ, ուր իրեն զրուցակիցներ հանդես են գալիս հայ տերտերը, հայ վարդապետը, նույնիսկ Սայաթ-Նովան՝ Հաղբատի վանքում, ամենայն հայոց կաթողիկոսը (Դավիթ Ղարդմանյան Էնդպեթցին)՝ Էջմիածնում, Սոդոմոն Արղությանը՝ Սանահնում, Ալեքսանդրե արքայազնը՝ Բոլնիսում և շատ ուրիշները։

«Կալմասոբա»-ն ամբողջությամբ ցարդ հրատարակված չէ, այլ հրապարակի վրա է միմիայն առաջին և երկրորդ հատորները, և երրորդ հատորից լոկ պատառիկները։

Առաջին հատորը այլևայլ խմբագրություններով (ըստ տարբեր ձեռագրերի և տարբեր մոտեցումով և մշակմամբ) հրատարակվել է առնվազն 3 կամ 4 անգամ (մինչև կրճատումներով)։ ա. Ժուռնալ «Ծիսկարի»-ում (Թր.) 1862 և 1867 թթ., բ. Դ. Զ. Բարբանձեի առաջարանով ու Զ. Ճիճինաձեի հրատարակությամբ Թրիլիսիում 1896 թ., գ. պրոֆ. Գ. Ա. Ջավախիշվիլու վերապատումով ու Թբիլիսիի Հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակությամբ (ապաճիապիլ), Թր., 1933, և դ. պրոֆ. Կ. Կեկելիձեի ու Ա. Բարամիձեի խմբագրությամբ Թրիլիսիում 1936 թ.։ Այս՝ վերջին հրատարակության հիման վրա է կատարված ռուսերեն թարգմանությունը (զգալի հապավումներով հենց մեզ հետաքրքրող տեղերում), որ հրատարակվել է հետևյալ վերնագրով. Царевич Иоанн. Калмасоба или хождение по сбору Иоанна Хелашвили, иподиакона, родом из деревни Вакира в Кизике, принявшего монашество в Квабтахевском монастыре при настоятеле Досифее Пицхелаури. Перевод с грузинского, введение и комментарии Варлама Дондуа, Тбилиси, 1945.

Երկրորդ հատորը հրատարակված է պրոֆ. Կ. Կեկելի-

ձեի և Ա. Բաբամիձեի խմբագրությամբ, Թրիլիսիում 1948 թվին։

Անկախ այդ հրատարակություններից, առաջին հատորից մի հատված, ուր նկարագրած է Իոնա Մելաշվիլու հանդիպումը Սայաթ-Նովայի հետ—Հաղբատի վանքում, հրատարակել է Գ. Լեոնիձեն իր գրքում՝ «Բանաստեղծ Սայաթնովան», վրացերեն, Թբ., 1930, էջ 28—31։ Նույն հատվածի նշանակալից հապավումները և մի այլ հատված, ուր նկարագրած է Իոնա Մելաշվիլու այցելությունն էջմիածին, հրատարակված է մեր հոդվածում՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Իոնա Մելաշվիլին Հայաստանում և Սայաթ-Նովան, վրացերեն,—«Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիրը», IX—B, Թբ., 1936, էջ 128—129, 132—135։

Ինչ վերաբերում է այն նյութին, ուր Հայաստանն և հայերն են հիշվում, գտնելու է մյուս հատորներում, որոնցից ցարդ հրատարակված են. ա. Հայ-վրացական դավանաբանական վեճը Գիորգի Լաշայի օրոք և Դանիել ստորոգ վարդապետի մասնակցությունն այդ վեճում՝ Կ. Կեկելիձե, Լաշա Գիորգիի պատմության նորագյուտ գրական ապրյուրներ, վրացերեն,—«Թբ. պետ. համալսարանի Աշխատություններ», XVI, 1940, էջ 98—100։ բ. Տփղիսի մելիք Դարչի Բեհբութովի զրույցը Իոանեի հետ՝ Ս. Կակաբաձե, Կալմասորան Արևմտյան Վրաստանի մասին, վրացերեն,—«Պատմության ժողովածու», IV, 1929, էջ 37—39։ գ. Հայ գիտնականները Վրաստանում՝ Է. Թաղ'այշվիլի, «Վաղեմի Վրաստան», վրացերեն, I, Թբ., 1909, էջ 45—46 (ուր այդ հատվածի հեղինակ սխալմամբ Թեյմուրազ արքայազն է հայտարարված)։

Ստորև՝ «Կալմասորա» — «Կալմասունք»-ից քաղված հատվածների թարգմանությունները մենք տալիս ենք համաձայն Կ. Կեկելիձեի և Ս. Բաբամիձեի 1936 և 1948 թթ. հրատարակությունների, պահանջները լրացնելով մեր, Գ. Լեոնիձեի, Կ. Կեկելիձեի, Ս. Կակաբաձեի և Է. Թաղայշվիլու այլ հրատարակություններից։

I

[ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ][1]

ԶՐՈՒՑՑ ԲՈՐՋԱԼՈՒՄՈՒՄ

Ալեքսանդրե [արքայազն].— Այլևայլ ազգերը, կարծեմ, այլևայլ կերպ են խաղում։

Իոնան. Անկասկած։ Ասիայում բոլորովին այլ կերպ է... իսկ հայերն ավելի մեզ (վրացիներիս) նման են խաղում։ Օրինակ՝ երբ արքայազունների հարսանիքին կամ մեծ խնճույքներին հավաքվում էին հայերը, [առանձնապես] համքարների (վանականների) դասից, մարմնից փայտ էին կապում ու չթով ծածկում, գլուխ ու վիզը ձիու նման փայտից շինում և որևէ բանով փաթաթում ու վրայից փոքր զանգակներ կախում։ Եվ այսպես էին պարում շատերը։ Եվ շատ գեղեցիկ էին շարժում ոտները. և նրանց տեսքն այնպիսի էր, կարծես թե ձիու վրա էին նստած։ Եվ սա հնուց՝ կռապաշտության ժամանակից էր մնացել հայոց մեջ։ Նույնպես՝ ուղտեր էին շինում կարպետներից և երկու մարդ կանգնեցնում ցածր. ուղտի էր նմանվում. և սրանք ևս գուռնա-դափը նվագելով հրաշալի կերպով պարում էին և փախչելիս ուղտերին նմանվում։ Այսպես համապատասխան դեպքերում և բարեկենդանի շաբթին էին խաղում[2]։...

II

[ԻՈՆԱ ԽԵԼԱՇՎԻԼԻՆ ԲՈՐՋԱԼՈՒ–ՍՈՄԽԻԹ–ՓԱՄԲԱԿՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍԱՅԱԹ–ՆՈՎԱՅԻ ՀԵՏ ՀԱԳՊԱՏՈՒՄ][3]

... Հեծան ձիանները, և Զուբարն ու Իոնան ուղևորվեցին [Տփղիսից] դեպի Սոմխիթ։ Հենց որ Սեյդարադի այգիներն անցան, հանդիպեցին մի ձիավորի, որը Իոնայի վաղեմի ծանոթ Յարալ Շանշիաշվիլին էր և որը] հարցրեց. «Ո՞ւր եք մտադիր ճանապարհորդելու»։ Իոնան. «Դեպի Սոմխիթ և նրա շրջակա վայրերը»։

Յարալը.— Իրոք որ լավ ժամանակ եք գտել գրոսնելու, Դավիթ արքայազնը այս երկու-երեք օրում Բորչալու է գնալու, Ալեքսանդրե արքայազնը՝ Շուլավեր, Փառնաոզ արքայազնը՝ Դեմոլուչասալ։

[Մարաբդայում զեկուցեցին, որ] «այսաեղ իջել է Քվարթախևիի վանականը, որը Սոմխիթ է գնում...»։

[Ապա] Իոնան պատրաստվեց գնալու դեպի Բորչալու։ Զիանները հեծան և ուղևորվեցին դեպի Բորչալու ու մոտեցան Դեբեդ գետին, որը Բորչալուի միջովն է անցնում. և դիտեցին այնտեղի դերքն ու բերդը։ Իոնան այն շատ հավանեց։... Դիտեցին բերդը... և ապա հարցրին. «Այստեղ կա՞ արդյոք մեկը՝ հայ կամ վրացի». և պատասխանեցին. «Այստեղ առջևը փոքր գյուղ կա. գա պարսիկների (դուբդիների) գյուղն է...»։...

Սրանք [կրկին] ձի հեծան և ուղևորվեցին դեպի Ախտալա[4]. Դանդաղ շարժվելով ու հանգստանալով՝ երեկոյան պահին հասան Ախտալա. իջան, և Իոնան մարդ ուղարկեց Ախտալայի եպիսկոպոսի մոտ՝ գիշերելու համար իջևան խնդրելով։ Նա (եպիսկոպոսն) իսկույն և նե հատկացրեց իջևանի տեղ ու ընթրիքի իրեն մոտ հրավիրեց։ Իոնան մի քիչ հանգստացավ և նշանակված ժամին գնաց երիցապետի (արքեպեցի) մոտ։ Իոնան հենց որ եկավ երիցապետի մոտ, խոնարհաբար համբուրեց [նրա աջը]։ Նա ևս ողջունեց, հրամայեց նստել ու հարցուփորձ արավ ճանապարհորդության հանգամանքների մասին։ Իոնան ամեն ինչ զեկուցեց, և նրանք այլևայլ հարցերի շուրջը զրուցեցին, և ապա խոսք բնկավ հանքերի (մադանի) և մետաղների մասին։ Ապա Իոնան ասաց. «Այս սարուձորը մետաղների մայր պետի կոչել, քանի որ ամեն ինչով զարդարված է»։

Երիցապետը.— Իսկապես որ այդ անվան արժանի է. և ունե՞ս արդյոք որևէ տեղեկություն հանքերի ու մետաղների մասին։

Իոնան.— Սակավ ինչ։

Երիցապետը.— Հապա, մինչև որ ընթրիքը պատրաստվի, որևէ բան ասենք մետաղների մասին։

Իոնան.— Եղնեցի կամք Ձեր։...

Մյուս օրը երիցապետն իրեն մոտ կանչեց Իոնային, նվերներ տվեց ու մի նամակ էլ Միխանայի հանքագործների պետի մոտ, որպեսզի սա հույների շրջանում նվիրատվությունների հավաքելուն օժանդակեր։ Եվ այսպես, շնորհապարտ Իոնային ճանապարհ դրեց դեպի Միխանա։ Իոնան՝ հասնելով այնտեղ՝ լավ ընդունելություն գտավ հանքագործների պետի մոտ, որը բնակարան տվեց հանգստանալու. և ապա ցույց տվեց պղնձի և արծաթի ձուլումը։ Այս արհեստը Իոնան շատ հավանեց։ Ապա [Միխային] ճաշեցին և մի քանի բաժակ պղինձ նվիրեցին նրան։

Իոնան շնորհակալությամբ հրաժեշտ տվեց և շարունակեց ճանապարհը գեպի Սանահին։

Հասնելով Սանահին՝ Իոնան հարցրեց Արզութաշվիլիների այնտեղ լինելու մասին։ Պատասխանեցին, որ այնտեղ գտնվում է Սոլոմոնը։ Զուրաբը գնաց, ողջունեց ու իջևանելու տեղ խընդրեց։ Նա (Սոլոմոնը) խոսքն և եթ բնակարան հատկացրեց ու Իոնային իրեն մոտ ընթրիքի հրավիրեց։ Ընթրիքի պահին Իոնան Սոլոմոնի մոտ գնաց։ Հասնելով այնտեղ, Իոնան դիմեց. «Խաղաղություն Ձեզ, Մխարգրձել»։ Նա էս շնորհավորեց, ողջունեց, հարցուփորձ արավ ճանապարհորդության հանգամանքների մասին։ Իոնան ամեն ինչ ասաց և ապա ընթրիքի նստեցին։ Վայելելով անուշ գինին՝ Սոլոմոնը վերցրեց գավաթը և տվեց Իոնային ու ինքն էլ ուրիշ գավաթ վերցրեց, լցրեց գինով և ասաց Իոնային. այս գինով հաստարակության կենացը պիտի խմենք։

Իոնան.— Կարգն այսպես է, որ նախ՝ ովքեր մեր տերերն են, նրանց կենացը պիտի խմենք և ապա հաստարակության։

Սոլոմոնը.— Այժմ մենք ենք մեր գլխի տերերը։

Իոնան.— Բոլորս տիրում ենք մեր գլխին, սա բնական է։

Սոլոմոնը.— Ոչ, հաստարակությանն էս մենք պետք է տերություն անենք։

Իոնան.— Ո՞վքեր են ձեր ընկերներն ու օգնականները։

Սոլոմոնը.— Սարդարը, մելիքը, ամիրսպավարին, էրիսթավը, թարխանը, էշկասաղաշին, սախլթխուցեսը և էս՝ Մխարգրձելը, իսկ հոգևորականներից՝ [վարդապետը], Թրիլելին և արքեպիսկոպոսը։

Իոնան.— Զուռնա-նազարայից զատ՝ ձեզ էլ ոչինչ չի պատահում։

Սոլոմոնը.— Վիրավորում ես այդ խոսքով արդյոք։

Իոնան.— Ո՛չ։

Սոլոմոնը.— Հապա ինչպե՞ս էս դատում։

Իոնան.— Մի օր այլևս տերեր չեն լինի և ոչ էլ գուբ կլինենք։

Սոլոմոնը.— Շատ տեղ ռեսպուբլիկա է։

Իոնան.— Ոչ ձեր խելքի տեր մարդիկ։

Սոլոմոնը.— Մենք անխելք ենք։

Իոնան.— Աչքի հայացքից ոչ։

Սոլոմոնը.— Հետևապես, աչքուն ենք ունեցել խելքը։

Իոնաթան.— Դուք խոստովանվիր. ուր էլ կարմիր կաթա եք տեսնում, այն կողմն եք վազում։

Սոլոմոն.— Զգիտեմ, այսպիսի անձինք լի են իմաստությամբ։

Իոնաթան.— Որո՞նք։

Սոլոմոնը.— Իսանեն, Կոստանտինեն, Գիորգին, Դարչին, Ալեքսանդրեն, Շանշեն, Սոլոմոնը, Արսենը, Օ[հ]անեսը, Էլեփթերը և ևս։

Իոնաթան.— Անուններ լավ թվեցիր և խնդրում եմ հրամայիք. Սալաղ'բոյում և Բերուա Նալբանդի խանութում սովորեցիք արդյոք այս իմաստությունը, թե՞ որևէ դպրոցում ուսումնասիրեցիք...

. . . . . .

Իոնաթան.— Դուք այսուհետ հանգերի մինարաշ եք և վերահսկող. գիտե՞ք արդյոք այս հանգերի արհեստը, կամ արծաթի հալումը, կամ արծաթից ոսկի հանելը, կամ այլ մետաղների երևան բերելը։

Սոլոմոնը.— Մադանչի հո չե՞մ, որ գիտենամ։

Իոնաթան.— Վայ իմ գլխին, դատարկ անուն ևս ունեցել։ Հապա ի՞նչ կիմանաս, եթե այդ ծառայողները արծաթ կամ ոսկի գողանան։

Սոլոմոնը.— Ինչ որ կասեն, կասանձնեմ ու կգրանցեմ։

Իոնաթան.— Հապա երկրի կառավարելն էլ այս ձևով կսկսեք ու այդ խելքով երկիրը կշենացնեք։

Սոլոմոնը.— Ինչ որ իմ ընկերներն են անում, ես էլ նույնն եմ անում, և ավելի խելք ինձ ինչի՞ն է պետք։

Իոնաթան.— Ձեր քեհյն մախարբաշը, Նապըր-շահի[5] վեքիլը, եթե ձեզ տեսներ, ձեր խորհրդից չէր շեղվի։

Սոլոմոնը.— Նա խելոք էր։

Իոնաթան.— Իսկապես որ Պարսկաստանը, Թուրքաստանը, Հնդկաստանը և ուրիշ տեղերը նա էր կառավարում. խելոք էր, թե ոչ։ Բացի սրանից, հավատարմության մեջ դուք նրա նման չեք. որքան էր սիրում նա Վրաստանի թագավորներին և ինչպիսի՞ օժանդակություն ցույց տվեց Թեյմուրազ թագավորին[6] և Էրեկլե թագավորին[7]։ Եվ սրա համար իրրև պարգև Արդուբաշվիլին Մխարգրձելության ստացավ[8]։

Սոլոմոնը.— Ես վազուց էի Մխարգրձել. և ահա այս Սանահինն էլ սրանից իրրև գամրան ունեմ։

Իոնան.— Զվիրավորվեք, դուք Գյանջեցի եք, Իանից գամ Ղարաբաղից եկած, Գյանջայի հայ-Արղութքայի զավակներ, որը Զաքարիա Մխարգրձելիի արտամուծանական գավակն էր, եկել եք [Վրաստան] Ռուսոտոմ թագավորի օրով[9]։ Իսկ երբ մահարթաշը Նագըր-շահի [վրա ապստելով]՝ գինվել տվեց Թեյմուրազ և Էրեկլե թագավորներին Քարթլին ու Կախեթը, իսկ Արգուալաբեկին հանեց տեղից, ապա [Էրեկլե] թագավորը ձեզ չնորհեց ազնվականության աստիճան և այս գամրանն ու գյուղը, թեև հիմա այս տեղն ու գամրանը Հայոց թագավորներինն էր, իսկ հետո Թամար թագուհու կողմից սա իրրև գամրան տրվեց Մխարգրձելիներին՝ թագավորի սարդարներին[10]։ Եվ ի վերջո քո հարևդրայր Հովսեփ (Իոսեբ) վարդապետը Էրեկլե թագավորից [գիր] խնդրեց իր ազգատոհմի հաստատման մասին, և Էրեկլեն չնորհեց ձեզ այն, և նա հաստատել տվեց ձեզ այս թագավորի տված գրի ուժով՝ իրրև Մխարգրձելությեան իշխաններին՝ Ռուսաստանի կայսր Պավել Պետրովիչի կողմից[11], և գյուղն էլ այնտեղ ձեռք բերեց։

Սալոմոնը.— Դեպի իմ հարևդրայրն այդպես ողորմած էր* Էրեկլե թագավորը[12]։

Իոնան.— Մչ միայն Հովսեփ (Իոսեբ) վարդապետը, այլև քո հարևդրայր Մովսեսը (Մոսեն) և քո հայր Բեժանը հավատարմության և ծառայության շնորհիվ միշտ տեղ ուներին [Էրեկլե] թագավորի մոտ. և թեև ինչպես Գիւորգի թագավորը ողորմած է դեպի քեզ, բոլորը գիտեն այս։ Եվ [գիտեն] ահա քո տան մարդիկն [ևս]՝ Սիսեն և ուրիշները, որոնք աստիճանով և պատվով ձեզանից տարբեր են. սակայն երևում է, որ ազուհաց չգիտես, ինչպես ասված է՝ վրացին գեղնած կամ տեսքով գունաթափ, թուրքը սպիտակ-կարմիր և հայը թուխ (սև) գեմքով անվստահելի կլինի, և քո գեմքը դրսևորվում է հենց գործիդ հետ։

Սալոմոնը.— Ի՞նչ անվստահելիություն կլինի, եթե...

Իոնան.— Դա այն ժամանակ կլինի, եթե ազգատոհմը արու զավակ չի ունենա։ Եվ այժմ քո հոգատարությամբ և խնամիությամբ ոչոքի (ոչ մի աղջկա) այստեղ չեմ գտնի(?), ոչ Իոանեին թագավորություն, ... ոչ Շանշեին՝ էրիսթավություն, ... ոչ Գիւորգիին՝ ամիլախվարություն, ոչ Ալեքսանդրեին՝ էշկատագասություն, ... ոչ Դարչիին՝ քաղաքի մուրաղություն, ոչ

* Այստեղ և սորև բնդգծումը մերն է. Լ. Մ.-Ի.։

Սոլոմոնին՝ կլդեկարիի էրխթավություն, և ոչ էլ դուք կանեք Մխարգրձելի պես սարդարություն, ոչ Թրիլելին կաթողիկոսություն, ոչ Օհանեսը հոգևոր տերություն (օրքիսատերություն)[13] և ոչ Էլեփեերը՝ Ալավերդելություն, ուստի և խորհուրդ եմ տալիս ի զուր տեղը մոլեգին մի եղեք ձեզանով...

Եվ այսպես վերջացրին ընթրիքը։

Իոնան վեր կացավ, հրաժեշտ տվեց Սոլոմոնին։ Սոլոմոնը նվիրեց ճանապարհածախսի փող և ճնաս բարով մաղթեց, ասելով, որ վազ առավոտյան Մխանանա պիտի գնա։ Եվ այդպիսով նրանք իրարից բաժանվեցին։

Այդ գիշերը Իոնան հանգստացավ։ Հաջորդ օրը դիտեց տեղական կառուցվածքներն ու ամրոցները, խիստ հավանեց և ասաց. «Զարմանում եմ թագավորներից, թե ինչու այստեղ ամրոցներ չեն կառուցել քաղաքների նման և ժողովուրդ չեն բնակեցրել։ Այս հո բնությունից է ինքնին առեղծված, որպես զորքի համար անանցանելի։ Սակայն թվում է, որ նրանք սրա համար նախանձախնդիր օժանդակողներ (օգնականներ) չեն ունեցել, այլ եղել են իրենց սեփական անձի շահախնդիրք»։ Եվ անցավ նա դեպի Հաղբատ։ Նույնն ևս դիտեց. և այնտեղի եկեղեցին և կառուցվածքներն ևս խիստ հավանեց։ Այդ պահին ամն հայ վանական հրավիրեց Իոնային իր խուցը, և սա հետևեց նրան։ Հենց որ վարդապետը Իոնային հասցրեց իր խուցը, ողջունեց ու ճանապարհորդության հանգամանքների մասին հարցուփորձ արավ։ Իոնան ամեն ինչ պատմեց. և ապա նստեցին, մի փոքր զրուցեցին և վարդապետը մատուցեց Իոնային նախաճաշիկ. և սկսեցին ուտել, և սրա հետ լավ գինի էլ մատուցեց Իոնային և ինքն էլ լավ կոնծեց։ Ապա վարդապետը վեր բերեց սազը (չոնգուրը) և սկսեց նվագել, ապա սկսեց երգել՝ այսպես [սահլով][14]։

Թեզե իմ գըլուխ, ինչպես խաթի մեջ ընկար,
Ողջ աշխարհում ծիծաղելի բան դարձար։
Ուր էլ փախար, սայթաքեցիր՝ վայր ընկար,
Վերջն էլ, հապա, դու բեդովլաթ մարդ դարձար։

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ձեռից այս եղավ։
Այս բաները իմ խելքիցն է, որ եղավ։

Կարծես էի աշխարհումըս ես գոված,
Գավաթի պես ոսկե տուփում ամփոփված։

Ի՞նչ պատահեց այս իմ գլխին անիծված,
Ինչ որ եղավ, ակամայից հո եղավ։

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ո՞ւմից այս եղավ,
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ։

Արքաններից մեջլիսներում հրավիրված,
Իշխաններից պատված, հարգված, մեծարված.
Ծիրանագույն կարա հագած, զըկըզըված.
Այժըմ ահա քուրձը հագին սևացած։
Այս վիճակըն առաջնորդից ինձ եղավ։

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ո՞ւմից այս եղավ,
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ։

Ես բրինձ էի, գարի լինելն ինչո՞ւ էր,
Բազե էի, ուրուր լինելն ինչո՞ւ էր.
Աշխարհիկիս տերտերությունն ինչո՞ւ էր.
Ինձ վարդապետ ձեռնադրվելըն ինչո՞ւ էր։
Կարծեմ, որ իմ քամրախատ գլխից այս եղավ։

Ո՞ւմ մեղադրեմ, արդյոք ո՞ւմից այս եղավ,
Այս բաներըն իմ խելքիցն է, որ եղավ։

Իոնա [կիսա]սարկավագը սպասած նայում էր և ասաց. «Վայ ողորմելին, ինչպես է ողբում աշխարհից հեռանալը». և ի վերջո ասաց. «Հայր [ուրբ], կուսակրոն (մոնոզոն) եք, դեպի ձախ չթեքվեք»։

Վարդապետը.— Երբ ես քո հասակումն էի, թե դեպի ձախ էի գլորվում և թե դեպի աջ։

Իոնան.— Վայ իմ գլխին։ Դրա համար եք ողբում։

Վարդապետը.— Սրա համար էլ եմ ողբում և քեզ համար էլ, որ երիտասարդ մարդ վանական ես դարձել։

Իոնան.— Ավելի լավ է, որ մարդն երիտասարդ հասակից ընտելանա լավին։ Դու էլ որ երիտասարդ հասակից վանական պատնայիր, այժմ այսպիսի կակիծի մեջ չէիր լինի։

Վարդապետը.— Եթե ինձ իմ առաջնորդը (վարդապետը) թրկեր, այն աշխարհականությունն այս կուսակրոնությունից դերագահելի էր։

Իոնան.— Հրամայիր, ով եք դուք։

Վարդապետը.— Ես խոճուկ Սահթամանն[15] եմ, թե որ լսել եք։

Իոնան.— Այո, լսել եմ ձեր գովքը իբրև սաղանդարի՝ քեֆերում. արդ հրամայեք, ինչպես պատահեց այս։

Սահթամանը.— Ես լավ նվագում էի սազով (չոնգուրով) և, միաժամանակ, պարսկական ձայնի վերածելի վրացական խաղերը։ Այն դեռևս ընդունված չէր։ Եվ երբ Էրեկլե թագավորը խնճույք սարքեց և մեզ՝ նվագողներիս՝ տարան նրա մոտ, այն ժամանակ ես պարսկական նվագը վրացերեն երգեցի։ Արքան (բատոնը) շատ հավանեց և խնդալ պարգևեց ինձ։ Ապա շատ ուրիշներն էլ [նույնպես] ասին և ինձ նմանվեցին։ Ես ամեն տեղ ընդունված էի ոչ միայն երգով, կատակով և նույնիսկ աշխարհիկ գործերում[16], այնպես որ շատ բանով էի զբաղված։ Ապա կուսակրոնություն ընդունեցի. և ահա այսուհետև եմ, և այս կուսակրոնության միջոցին հորինած բանաստեղծություններով լսելի դարձրի ձեզ։

Իոնան.— Քանի որ աշխարհից հեռացաք, նվագելուց ու խաղերից ևս ձեռք պիտի վերցնեիք։

Սահթամանը.— Իմ առաջնորդն (վարդապետն) էր, որ հրամայեց[17], և ես այսպիսի պայման դրի, որ քանի որ այս սազը (չոնգուրը) այս լարերով է զարդարված և այն չի կոտրվի, ձեռք չեմ վերցնի, այն պատճառով, որ երբ ինձ վարդապետ (վանական) ձեռնադրեցին, այս լարերը ծոցումս էին մնացել և սրանք ևս ինձ հետ օծվեցին (օրհնվեցին), և ահա այս օծված (օրհնված) լարերով է, որ նվագում եմ սազով (չոնգուրով)։

Իոնան.— Եվ քանի որ ուխտ պահել ես, ազգումդ կպտնես։

Եվ այսպիսի կատակով վերջացրին նախաճաշիկը։

Սահթամանը.— Ինչ էլ որ լինի, կխրկվեմ, որովհետև այս մեր եկեղեցին քառասուն խորան (սեղան) ունի և եթե որ մերոնցից վախճանվում է, քառասուն օր պատարագ են մատուցում ամեն տեղ. տասը պատարագ է մատուցվում քառասուն օրում։ Եվ այսպես է սահմանված, որ ով քառասուն օրում կատարած պատարագ մատուցանելու իր ննջեցյալի համար, անպայման կխրկվի[18], եթե վերջին օրը խոստովանվել ու ճաշակվել է։

Այս ժամի այսքան խորանները (սեղանները) Իոնային շատ ապշեցրին. կրկին դիտեց [բոլորը] և ասաց. «Իսկապես որ հին հարատարապետները գովասելի են, որ այսքան լավ արհեստ են

մշակել ու կերտել, և սանդուխքներ շինել մի քարից և թաղերը լուսամուտներով գուբս բերել՝ հատակով հանդերձ։ Այսպիսի կառուցվածք ես ոչ մի տեղ չեմ տեսել։ Եվ վերջապես հրաժեշտ տվեց Սահմատմային և նորից դեպի Բոբչալու ուղևորվեց։

Կեսօրին Սագախլո (Սագախլե) գյուղը հասան։...

III

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ[19]

[Գալով Դուլարշ՝ Ասլան Դափլանիշվիլու մոտ, Իսահան զրուցում է Ասլանի հետ, ի միջի այլոց, լեզուների մասին].

Ասլանը.— Ո՞ր լեզուներն էին հնում ուրիշների համեմատությամբ ավելի ճոխ և տարածված ըստ գործածության։

Իսահան.— Հնարավոր է հաշվառման վերցնել ավելի քան չորս լեզուներ, այսինքն՝ հերբայերենը, արաբերենը, հունարենը և հռոմեականը կամ լատիներենը և սրանց հետնորդները։ Նշանավոր հնագույն և ճոխ լեզուներն են ֆրանսերենը, իտալերենը, գերմաներենը (նեմեցուրի), սպանական (իշպանականը), պարսկականը, ջաղաթայի լեզուն և ռուսերեն-սլավականը, որոնց հետևում են հայերենն ու վրացերենը։...

. . . . . .

Ասլան.— Ո՞րքան նշանագիրներ կամ տառեր կան։

Իսահան.— Վրացերենում հաշվում են մինչ քառասուն տառ, արաբերենում՝ քսանևինը, հայերենում՝ նույնքան (sic), ռուսերենում՝ երեսունհինգ, լատիներենում և այլ եվրոպական [լեզուներում]՝ քսան և չորս, հունաց, հնդկաց, հերբայեցոց, պարսից և թուրքաց (թաթարաց)՝ երեսունևերեք. իսկ չինացիների հաշիվ չկա։...

. . . . . .

Ասլան.— Ասիական կամ եվրոպական լեզուներից ո՞րն և ինչո՞վ է գոված։

Իսահան.— Ասիական լեզուների նշանակությունը այսպիսի է. արաբերենը՝ իմաստության և գիտության մեջ, պարսկերենը՝ դրույցի և փազաքշական խոսքի մեջ, նույնիսկ բանաստեղծության մեջ էլ գոված է և լսողության համար անուշ (քաղցր), թուրքերենը (թաթարերենը)՝ մարտի կամ պատերազմի մեջ, վրացերենը՝ ինճուլքի, գիմարճության, կատակի և կերուխումի ժամանակ, իսկ հայերենը՝ առևտրի մեջ (sic)։ Եվրո-

պական լեզուներից հելլենականը և լատիներենը՝ իմաստության և գիտության մեջ, ֆրանսերենը՝ դրույքի և վաղաքշական խոսքի մեջ, գերմաներենը (նեմեցուբի)՝ մարտի մեջ, իտալերենը՝ երգի և վարճության մեջ, սպանականը (դիշպանիուբի)՝ անքաղաքավարի [վարմունքի] մեջ...

IV

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ[20]

Իոնան վերադարձավ իր տուն։ Ճանապարհին նա հանդիպեց քարտաշ տերտերին, որը մարմարե քար էր բերում՝ [արդեն] տաշած։ Տիրացուն շատ հավանեց այդ, տերտերը հրավիրեց նրան իր մոտ և ասաց. «Ինչ ցույց կտամ արվեստս»։ Տիրացուն ուղեկցեց նրան։ Հենց որ տերտերի տունը հասան, հյուրասիրվեց նախաճաշիկով, և ապա գնացին տերտերի արվեստը դիտելու։ Վանականը տեսավ մեծ թվով լավ տապանաքարեր՝ նրա ձեռքով տաշված և քանդակագործված տեսակ-տեսակ օրինակներով և վայելչատես հորինվածներով, և տիրացուն դիմեց նրան. «Տեր-հայր, ինձ ասացին, որ հմուտ եք եղել քարտաշության և քանդակագործության արվեստին»։

Տերտերը.— Մեղանում եթե ոչ տափակ տաշած և ծաղկաձև թեթև դուրս կտրած տապանաքարերը, ուրիշ ոչնչին չեն նայում, և այս ուսումն ինձ համար անպետք մնաց։

Իոնան.— Իրավացի եք. բայց ո՞րտեղ սովորեցիք այս արվեստը։

Տերտերը.— Օսմանյան երկրում։

Իոնան.— Իսկապես, առաջ Հունաստանում էր [զարգացած] այս արվեստը, իսկ հիմա չգիտեմ. արդյոք ինչպես հարկն էր, այնպես սովորցրի՞ն, թե՝ ոչ։

Տերտերը.— Ո՛չ, հենց այնպես նայելով սովորեցի և օգնում էի, ում մոտ էլ գնում էի։

Իոնան.— Հապա, հիմնովին և լավ չե՞ք յուրացրել քանդակագործության արվեստը։

Տերտերը.— Հրամայի՛ք, ինչ է քանդակագործության արվեստը։

Իոնան.— Քանդակագործության արվեստը մեզ ուսուցանում է...

Տերտերը.— Այս արվեստը հնուց արդյոք հայտնի՞ էր։

Իոնան.— Այս արվեստի հնությունը երևում է նրանով, որ Ռաքելը, Լաբանի դուստրը, իր հոր տնից բերեց կուռքերը:...

Տերտերը.— Իսկ այժմ բազմաթեւանի են շինում այդ-քե ոչ:

Իոնան.— Բազմաթեւանի...

Տերտերը.— Որպիսի՞ քարեր են գործածվում սուշելու այս արվեստի համար:

Իոնան.— Այլևայլ տեսակի մարմարեղեն, սև քար...

Տերտերը.— Որպիսի՞ գործիքներ են պետք այսպիսի քարերը սուշելու համար...

Իոնան.— Պողպատից շինած այլևայլ տեսակ քլունդներ, բրիչներ...

Եվ այսպես ավարտվեց նրանց զրույցը:

Տիրացուն հրաժեշտ տվեց տերտերին և տուն վերադարձավ:

V

ԱՐՄԵՆԻԱՅԻ ԿԱՄ ՍԱՍՈՄԽԵԹՈՑԻ ՄԱՍԻՆ[21]

Գոդերձն ասաց. «...Այժմ ուզում եմ հարցնել, ինչու աշխարհագրության մեջ չհիշեցիր Մեծ Արմենիայի նկարագրությունը»: Վանականը ներողություն խնդրեց և ասաց. «Պատրը ինձ չհարցրեց և ես էլ այս պատճառով այլևս չհիշատակեցի»:

Գոդերձը.— Ո՞ւր է գտնվում Արմենիան կամ Սասմխեթոն»:

Իոնան.— Արմենիայի սահմանն է հյուսիսից Մաքարթվելն, հարավից Դիաբրեքիրը, արևելքից Քյուրդստանը (Քուրթիստանն) և արևմտքից՝ Ալադուլիան (?), արևելյան պրովինցիան և Ասիայի Թյուրքիան կամ Տուրեցիան: Արմենիայի երկարությունն է հազար հինդհարյուր վաթսուն վերս և լայնությունը գրեթե նույնքան: Այս երկիրն ունի լավ օդ և լավ ապրելու տեղ է, ողջ և առողջ: Ելիբատ գետը ոռոգում է երկրագործական աշխատանքների վայրերը, և ունի պաղպաղեր տեղեր, խաղողի այգիներ, ապրշում, բամբակ և աղտհանքեր. իսկ հացով այնքան էլ ապահովված չէ, քանի որ քիչ բերք է տալիս. Ունի նաև արծաթահանքեր: Հայերը կրոնով քրիստոնյաներ են, սակայն Դիոսկորոսի հետևորդներ, որին Քադկեդոնի տիեզերական ժողովը նզովեց 451 թվին: Հայերը արտաքուստ գեղեցիկ են, թխահեր, սև աչք ու ունքերով, իսկ որոնք Վրաստանին կից

են ապրում, սպիտակ-կարմրագույն են։ Սրանք համեստ նախասկաց ունին, մեծ հակում ունին դեպի առևտուրը և միաժամանակ խնայող-անահնեներ (իկոնոմոսի) և անային կարիքների գիտուններ, ուսման սիրահարներ և հեշտ ուսումնասիրում են այլևայլ լեզուներ և շատ լեզուներ էլ գիտեն։ Հյուրասիրներ են և օտարներին ընդունող, թշվառներին օգնող, սակայն մի փոքր նախանձոտ, գոռոզ... վինովորական գործերում միջին արիություն ունեցող, ոչ շատ քաջասիրներ և ոչ էլ երկչոտներ։ Առևտրական գործերով հետաքրքիր երկրներ գնացողներ, անխոնջ և համբերատարներ...

Արմենիան ընկած է [արևելյան] երկայնության 56°-ից մինչև 60°, և [հյուսիսային] լայնության 37°-ից մինչև 40°։ Նրա հողերը բաժանված են Թյուրքիայի, Պարսկաստանի և Վրաստանի միջև. բայց կան և ազատ վայրեր, որոնք՝ լեռների և նրանց ճանապարհների շնորհիվ անմատչելի լինելով թշնամիների համար՝ միանգամայն ազատ են և անառիկ։ Արդրումը՝ Արմենիայի առաջին քաղաքը, այժմ Թյուրքիային է պատկանում, Երևանը՝ Ախթական Արմենիայի աթոռ[անիստը]՝ Պարսից տերության ներքո է, թեև որպես Վրաստանի թագավորից գրավված, վերջինիս տարի է վճարում։ Բեթլը (sic), լավագույն քաղաքը, իշխանների տիրապետության ներքո է։ Հայերի թիվը տեղերում, ինչպես այս ու այն տեղ ցրվածների, նույնպես էլ իրենց երկրում ապրողների, մոտ երեք միլիոն հոգի կլինի։ Հնում հայոց թագավորները հզոր էին և անվանի, մանավանդ Հայոց մեծն Կոնստանտին կայսեր օրոք։ Թագավորության գերը այսպիսի նշաններ ուներ. Արարատ լեռը և վերևից նայող աստղը, միջում արևը, շուրջը առյուծներ և ագռավին՝ ձիթենիի ճյուղը կտուցին։ Սակայն այս գերը մեզ հոգևոր տիրոջ (օրքիվսաների), որն և վերապահեց այն Էջմիածնի եկեղեցուն։ Հին թագավորների ևեմաուսը մոտ հինգ միլիոն [թուման] էր հասնում, իսկ այժմ հոգևոր տերը (օրքիվսաները) սահմանում է մոտ հեռուն թուման, նույնիսկ և ավելի, երբ տեղի ունի մեռոնօրհնեքը։

Գոպերտը.— Ի՞նչ է նշանակում հոգևոր տերություն (օրքիվսաերոբա)։

Իոնան.—Ընդհանրական հայր, այսինքն հոգվոց տեր, որն իսկապես այսպես է։ Եվ սրան հնազանդ են բոլոր հայերը, որոնք և տալիս են նրան հասույթները։ Եվ սա է կարգապրությունները անում բոլոր երկրներում եղած հայերին, [սրա ձեռին է] հայ

են ապրում, սպիտակ-կարմրագույն են։ Սրանք համեստ նախասկաց ունին, մեծ հակում ունին դեպի առևտուրը և միաժամանակ խնայող-անահնեներ (իկոնոմոսի) և անային կարիքների գիտուններ, ուսման սիրահարներ և հեշտ ուսումնասիրում են այլևայլ լեզուներ և շատ լեզուներ էլ գիտեն։ Հյուրասիրներ են և օտարներին ընդունող, թշվառներին օգնող, սակայն մի փոքր նախանձոտ, գոռոզ... պինվորական գործերում միջին արիություն ունեցող, ոչ շատ քաջասիրներ և ոչ էլ երկչոտներ։ Առևտրական գործերով հետաքրքիր երկրներ գնացողներ, անխոնջ և համբերատարներ...

Արմենիան ընկած է [արևելյան] երկայնության 56°-ից մինչև 60°, և [հյուսիսային] լայնության 37°-ից մինչև 40°։ Նրա հողերը բաժանված են Թյուրքիայի, Պարսկաստանի և Վրաստանի միջև. բայց կան և ազատ վայրեր, որոնք՝ լեռների և նրանց ճանապարհների շնորհիվ անմատչելի լինելով թշնամիների համար՝ միանգամայն ազատ են և անառիկ։ Արդրումը՝ Արմենիայի առաջին քաղաքը, այժմ Թյուրքիային է պատկանում, Երևանը՝ Ախթական Արմենիայի աթոռ[անիստը]՝ Պարսից տերության ներքո է, թեև որպես Վրաստանի թագավորից գրավված, վերջինիս տարի է վճարում։ Բեթլը (sic), լավագույն քաղաքը, իշխանների տիրապետության ներքո է։ Հայերի թիվը տեղերում, ինչպես այս ու այն տեղ ցրվածների, նույնպես էլ իրենց երկրում ապրողների, մոտ երեք միլիոն հոգի կլինի։ Հնում հայոց թագավորները հզոր էին և անվանի, մանավանդ Հայոց մեծն Կոնստանտին կայսեր օրոք։ Թագավորության գերը այսպիսի նշաններ ուներ. Արարատ լեռը և վերևից նայող աստղը, միջում արևը, շուրջը առյուծներ և ագռավներ՝ ձիթենիի ճյուղը կտուցին։ Սակայն այս գերը մեզ հոգևոր տիրոջ (օրքիվասների), որն և վերապահեց այն Էջմիածնի եկեղեցուն։ Հին թագավորների ևեմաուտը մոտ հինգ միլիոն [թուման] էր հասնում, իսկ այժմ հոգևոր տերը (օրքիվասները) սահմանում է մոտ հիսուն թուման, նույնիսկ և ավելի, երբ տեղի ունի մեռոնօրհնեքը։

Գոպերտը.— Ի՞նչ է նշանակում հոգևոր տերություն (օրքիվասերութ)։

Իոնան.—Ընդհանրական հայր, այսինքն հոգվոց տեր, որն իսկապես այսպես է։ Եվ սրան հնազանդ են բոլոր հայերը, որոնք և տալիս են նրան հասույթները։ Եվ սա է կարգապրությունները անում բոլոր երկրներում եղած հայերին, [սրա ձեռին է] հայ

չէր գլուխը բարձրացնել՝ վերև նայելու համար, այլ միշտ գետնին ցած էր նայում։ Սա ճանապարհին հանդիպեց վանականին, իսկույն և նրբ ճանաչեց Իոնային, որը դիմեց նրան առելով. «Մելիք. ինչ ես փնտրում գետնին նայելով»։

Մելիքը.— Բազրատիոններէի հետքը. գուցե նրանցից մեկը ծնացած լինի։

Իոնան.— Լավ են քեզ դաստիարակել, որ մարդու հետքն էլ քեզանից չի թաքնվում։

Մելիքը.— Ռուսները դաստիարակեցին ինձ[25]։

Իոնան.— Նրանք լավ գիտեն գետնին ցած նայելու դաստիարակությունը. սակայն սա որ լավության փոխարեն է։

Մելիքը.— Ի՞նչ լավություն են արդյոք նրանք ինձ արել։

Իոնան.— Անեցի հայիդ իշխան (Թավադ) դարձրին։

Մելիքը.— Լսած կլինես, որ լավության համար ոմն է լավությամբ հատուցել։

Իոնան.— Այսպիսի խոսքերով ես յուրացրել օձի բնավորությունը։

Մելիքը.— Ոչ միայն ես, այլ և շատ ուրիշները։

Իոնան.— Բո հետնորդներից հետո շատերը լավ են լսել քո գործողությունը (օրգանը), քանի որ սողալով ման գալու ժամանակ օձին ես նման։

Մելիքը.— Ես այնպես ուրիշների գործողության կարիք չունիմ, այլ ուրիշներն են ինձ ունկնդիր լինում, ինչպես օրգանին։

Իոնան.— Ուրեմն, սատանա ես եղել։

Մելիքը.— Դուք չէ՞ որ չեք ճանաչում հայերի հոգվոց վրիժությունը, և ինչ որ ուզում եք, այն եք մեզ անվանում։

Իոնան.— Ճշմարիտն ասացիր այդ. սակայն... դու ամենափշացածն ես երևում իմ աչքում։

Մելիքը.— Դու որ երկրորդ գալստյան պահին տատնեվերկու առաքյալների հետ նստած լինես իրրև դատավոր, կարծում եմ, ավելի և ավելի կփչանաս։

Իոնան.— Իմ այնտեղ նստելը պետք չէ. դու հենց այստեղ փչացած ես. ուստի և մարդարեն ասում է...

Բ

Իոնան.— Ո՞ր լավության համար է, որ քեզ՝ անեցի հային՝ իշխան (Թավադ) դարձրին։

Դաբչին.— Նրանց հորաքրոջ որդինները, փեսաները և խնամիները սովրեցրին ինձ։

Իոնան.— Որո՞նք։

Դաբչին.— Սարդար Իսաեն՝ Մուխրանի տերը, Շանշե էրիսթավի որդին, Բեգումի քրոջորդի՝ Գոգիա Ամիլախվարու որդին, Կաատրինեի ամուսինը, Սոլոմոն մեյթար Թարխնիշվիլին, Ալեքսանդրե Մաղաշվիլին, Շիոշ Թումանիշվիլին և, վերջապես, Տփղիս-Ծիլկանի-Ռուխիի եպիսկոպոսը (Թբիլել-Ծիրկնել-Մրավելի) և շամշադիլցի Սոլոմոն Արզուխաշվիլին։

Իոնան.— Իսկապես որ Բագրատիոնները փչացան, հապա ինչ է։

Դաբչին.— Եթե արու զավակին կհանի թագավորությունը, հապա աղջկան չի՞ հանի։ Իսաեն սարդարը էրեկվի թագավորի մեծ աղջկա որդին է և Ղափլանիշվիլին խանջալխան էր նստած իրրև նախ։ Մուխրանի տերը մյուս աղջկա որդին է և Շա[հ]նազյան, և նրանք մեթե՞ թագավոր չեն եղել։ Ուրիշները՝ սրանցից ոմանք արքունական (սալխուցես) են, ոմանք այլ պաշտոնյա էին լինում, իսկ ես հո մելիք եմ և կլինեի [այդպիսին]։

VIII

ԴԱՎԻԹ ՇԻՆՈՂ ԱՐՔԱՅԻ ՄԱՍԻՆ[26]

... Սրա թագավորության օրոք կայացավ հայոց և վրաց տեղական ժողով, ուր ներկա էր և ինքը՝ թագավորը։ Եվ հոգևորականությունը վեճ ուներ իրար հետ գավանական [խնդիրների] շուրջը և ոչ ոք չկարողացավ լուծելու հայերին։ Ապա թագավորը էրեցապետներից թուլտվություն առացավ և սկսեց վիճել հայերի հետ և բոլորին լուծեցրեց։ Սրանից հետո... հայերից շատերը ուղղափառության անցան[27]։...

IX

[ՀԱՅԱԳՆՏ–ՎՐԱՑԻՔ ԵՎ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ][28]

Ա[29]

Շոթա Ռուսթավելու և այլ աշխարհական բանաստեղծների մասին

Շոթա Ռուսթավելին, ավագագույնը գրողների մեջ Թամար թագուհու օրոք, փիլիսոփա-աստվածաբան էր, հմուտ եկե-

դեցական և աշխարհիկ դրականության, պարակերեն և հայերեն լեզուներին տիրապետող, երևելի ստեղարաշխ և բնական պատմության մասնագետ...

Արժան[ապատիվ] մեր հոր՝ Կախեցի Աբսեն Իղ'ալթոեցու մասին

...Սա հորինեց երկասիրություն մի բարնակների մերկացնող, որին հայերը ոչ մի կերպ չկարողացան պատասխանել[30]...

Հայր Գայիոս Թաղաշվիլու մասին

Գայիոսը... հմուտ էր ռուսերեն լեզվի, գիտեր լատիներեն ու հայերեն գրել[-կարդալ]։

Գլախա Նաթիսշվիլու մասին

Գլախա Նաթիսշվիլին Թագավորի դռան եկեղեցու սարկավագը, փիլիսոփան, աստվածաբանության մեջ կատարել[ագործ]ված] և հրաշալի քարոզիչը, մեծ հռետորը, հայերեն լեզուն ուսուցնասիրած, որը հայերենից փոխադրեց Սիմեոն Ջուղայեցի փիլիսոփայի համառոտած Պրակը [Դիադոխոս]ի Շարկապը Աստվածաբանականքը...

Դոսիթեոս՝ Նեկրեսի եպիսկոպոսի մասին

Նեկրեսեցի Դիոսիթեոս Զերքեզիշվիլին գիտուն մարդ էր և աստվածաբանության մեջ հմուտ. սա լավ գիտեր հայերեն լեզուն, որը հայերենից փոխադրեց Մխիթար Իմաստասիրի Հռետորության Հանդեսը լեզվով...

Մարադ'ոփեցի Իգնատիոս (Իգնատե) Օնիսիմի որդու մասին

Իգնատիոսը (Իգնատե) սուրբ Գեորգի՝ դռան եկեղեցու քահանան, մարադ'ոփեցի Օնիսիմի որդին, որն այժմ Իոսելիանի ազգանունն է ընդունել, հայերեն լեզուն սովորեց աեր-Դավթից, որը գիտուն մարդ էր, և հեշտությամբ և կատարելապես ուսուցնասիրեց հայերեն լեզուն. ինչպես փիլիսոփա է և սուրբ գրոցն հմուտ, նույնպես և հրաշալի հռետոր։...

Ջաքարիա երեց Լալախանաշվիլու մասին

Ջաքարիա երեց Լալախանաշվիլին... լավ կրթություն ստացավ և հայերեն լեզուն ևս [ուսուցնասիրեց], մասն ունի նաև քարոզչության մեջ...

Դատավոր Մզեճաբուկ Օրբելիանու մասին

Մզեճաբուկ Օրբելիանին, որը վայելչատես արտաքինով մարդ էր, նման Եզովպոսին և հմուտ հին փիլիսոփայություններին, ... հայերենից թարգմանեց հին փիլիսոփայական գիրքը՝ Պերիարմենիաս կոչեցյալը։...

Բեսարիոն Գաբաշվիլու մասին

Բեսարիոն Գաբաշվիլին փորձառություն ուներ գիտության մեջ և հրաշալի բանասեր էր, բանասուեցի՝ նման Թուխթավելուն։... Սրա հետնորդ բանասուեցիներն են... և շատ ուրիշ երիտասարդ մարդիկ՝ վրացիք և հայերն ևս...

Բ

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՏՓՂԻՍՈՒՄ

Զաքարիա վարդապետ Մադինաշվիլու մասին[31]

Այս Զաքարիա վարդապետ Մադինաշվիլին հմուտ փիլիսոփա-աստվածաբան էր և բժշկական արվեստին տեղյակ։ Սա վրացիներից և հայերից շատերին ծանոթացրեց փիլիսոփայական դրվածքների հետ և այլևայլ աշակերտներին մեկնեց Պորփյուրոս փիլիսոփայի «Ծագկապք աստվածաբանականք»-ը հինգ ձայնով և Դավիթ Անհաղթ փիլիսոփայի հորինած «Սահմանաց գիրք»-ը. և այսպիսով լուսավորեց շատերին։

Տեր-Փիլիպեի մասին[32]

Սա հմուտ փիլիսոփա էր՝ վերոհիշյալ վարդապետի նման։ Սա էլ շատ աշակերտներ դաստիարակեց և օժանդակեց մի քանի գրքերի թարգմանությանը կաթողիկոս Անտոն առաջինին։

Տեր-Պետրոսի մասին[33]

Տեր-Պետրոսն էլ վերոհիշյալի նման էր և թարգմանության մեջ շնորհքավ։ Սա էլ օժանդակեց Անտոն կաթողիկոսին գրքեր թարգմանելու [գործում]։

Նմանապես լավ թարգմանիչներ են հայերենից վրացերեն և լավ քերականագետ-փիլիսոփիկոսներ տեր-Դավիթն ու տեր-Սամվելը[34]։

Գաբրիել հայի մասին

[Պատմա Անդրանիկաշվիլուց հետո Թուխչիրաշի պաշտոնում էրեկլե թագավորը] նշանակեց Գաբրիել հային, որը լավ գիտեր արտիլերիան։ Սա եվս իր եղբոր հետ միասին զոհ գնաց էրեկլե թագավորի առաջ Ապա-Մահմադ-խանի հետ պատերազմում։

Ապա արտիլերիայի ծառայող կարգվեց Գեուրգ-ապան, որը Մոսկվայումն էր կրթություն ստացել։ Սա եվս լավ գիտեր ինչպես արտիլերիան, նույնպես և բժշկությունը։

X

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ[35]

[Հնում Վրաստանում] ապրողները խոսում էին վեց տեսակ լեզվով, այն է՝ հայերեն (սոմխուրի), վրացերեն, խազարերեն կամ ջաղաթայի լեզվով, ասորերեն, հունարեն և հերբայերեն։ Սրանցից առաջին երկուսն էին ավելի գործածվում, այսինքն հայերենը և վրացերենը։ Եվ այս ժողովուրդներից եվս ընդունեցին կռապաշտության, կախարդության և վհկության սովորությունը։

XI

[ՀԱՅԵՐԸ ԻԲՐԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ][36]

Իոանան.— Աննշարին է, որ պարսկական նվագը միմիայն նրանց լեզվով և գործիքներով լիներ և որ վրացիները հնուց տեղյակ չլինեին դրան։ Սակայն գրականության մեջ սրա մասին ոչինչ չկա։ Իսկ երբ Ռոստոմ թագավորը առացավ Քարթլին, նա ամեն տեղ պարսկական կարգ ու կանոն մտցրեց, համանապես՝ ռներում [կարպետներ] փռելը, գեռնին նստելը, ծառայողների կոչումների փոխելը, պարսկերեն լեզվով պաշտոնյաներին կոչելը և, մի ժամանակ, սա (Ռոստոմը) մտցրեց և տարածեց Վրաստանում [նվագարան] գործիքներն ու խաղերը։ Սրանից հետո Վախտանգ թագավորը, ապա Թեյմուրազ թագավորը և, վերջապես, էրեկլե երկրորդ թագավորը, որը Պարսկաստանում և Հընդկաստանումն էր եղել և Նագըր-շահի մեծացրած էր, ինքն էլ Թուրքերենի (Թախթարականի) և պարսկերենի հմուտ և գործիքներին ու նվագներին կամ ձայներին ծանոթ, [չարունակեց] իր նախնիների սկսած գործը։ Սրա (Էրեկլեի) օրոք ավելի ևս տարածվեց պարսից նվագարան գործիքների ու խաղերի գործածու-

թյունը։ Եվ աշխատեցին սրանց նմանեցնել և հարմարեցնել վրացական բանաստեղծությունները՝ պարսկական նվագների նման սազ (չանգուրով) և այլ գործիքներ գործածելով։ Իսկ առաջիններըը, որոնք այս նվագները վրացերենի հարմարեցրին, հայեր էին՝ Սահակյամա կոչեցյալ և այլ նվագողներըը, ապա Բեսարիոն Դարաշվիլին՝ առաջին բանաստեղծը [վրացիներից] և ազանչելի հոբինողը։...

XII

[Զրույցներ էջմիածնում դավանաբանական խնդիրների շուրջը][37]

ա. Իոանա Խևաշվիլու և մի ոմն վարդապետի միջև,

բ. Նույնի և հոգևոր տերոջ (օրքիվատերի) միջև,

գ. Նույնի և վրաստանից եկած Գիորգի քահանա Շավ-Մելիքիսշվիլիի միջև,

դ. Գիորգի Շավմելիքիսշվիլու և հոգևոր տերոջ միջև, և այլն[38]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այս հատվածում ամփոփված դիալոգի թարգմանությունը կատարված է ըստ «Կալմասոբա»-ի 1936 թ. հրատարակության, էջ 212—213։

2 Խոսքը այսպես կոչված «Ղևենորաց»-ի մասին է։

3 Այս հատվածի թարգմանությունը կատարված է ըստ «Կալմասոբա»-ի I հատորի 1936 թ. հրատարակության, էջ 200, 220—228, ինչպես և Գ. Լեոնթևի «Բանաստեղծ Սահինավանդ», գրքույկի (1930), էջ 28—31, և մեր «Իոանա Խևաշվիլին Հայաստանում և Սայաթ-Նովան» հոդվածի (1936)։ Ռուսերեն թարգմանությունը Վ. Դոնդուայի „Калмасоба" գրքում (1945), էջ 110—114, 212—213, բնբի, ինչպես և հայերենը Գ. Լեոնյանի հրատարակության մեջ (1931), էջ 33—34, բնբի։

4 Խոսքը Պղնձահանքի մասին է, որի շուրջը տե՛ս «Վրաց աղբյուրների» II հատոր, էջ 64—68, ծանոթ. 8։

5 Նադըր, Պարսից շահ, 1736—1747 թթ.։

6 Թեյմուրազ II, Քարթլիի թագավոր, 1744—1762 թթ.։

7 Էրեկլե II, Կախեթի թագավոր, 1744—1762, Քարթլ-Կախեթի թագավոր 1762—1798 թթ.։

8 Համմա. Լ. Մելիք-Բեկ, Վրաստանի թագավոր Էրեկլե II-ի և Ռուսաց կայսր Պավել I-ի հրովարտակները Մխարգրձելներին,— «Պատմության Տեղեկագիր», I, 1945, էջ 22—32։

9 Ռոստոմ, Քարթլիի թագավոր՝ 1632—1658 թթ.։

10 Այսինքն ապստամբներին։

11 Տե՛ս 8-րդ ծանոթ.։

12 Այստեղ և ստորև գործածված բայերի ձևերը՝ անցյալում՝ Էրեկլե թագավորի նկատմամբ, և ներկայում՝ Դիորգի թագավորի նկատմամբ, օրինակ, «ողորմած էր Էրեկլե թագավորը», «տեղ ունենի Էրեկլե թագավորի մոտ», «Դիորգի թագավորը ողորմած է դեպի քեզ», պարզ ապացույց է այն իրողության, որ Իոնա Թեյսպվիլու և Սոլոմոն Աբգուբաշվիլու զրույցը Սանահնում տեղի է ունեցել Էրեկլե թագավորի մահից (1798) հետո՝ Դիորգիի թագավորության օրոք (1798—1800):

13 Տե՛ս այս աշխատության Դ դլխի վերջին հատվածի 12-րդ ծանոթ. էջ 88:

14 Սայաթ-Նովայի այս խազը տալիս ենք մեր չափածո թարգմանության մեջ՝ տպված «Ամանաթ»-ում, Վրաստանի ազգագրական գրողների Միության հայկական սեկցիայի, Թբիլիսի, 1947, էջ 199, որ տարբերվում է Գ. Մուբադյանի ազատ թարգմանությունից (տե՛ս Գ. Լևոնյանի խմբագրությամբ հրատարակած «Սայաթ-Նովան»-ն, Երևան, 1931, էջ 33—34): (էջ 88):

15 Սահթամա կամ Սահթնավա, որը գործածում է Գ. Լևոնյանը, մեծ երդչի անվան վրացական վարիանտներն են:

16 Սա կարևոր ցուցմունք է, որ կարող է հատուկ լուսաբանության (համմ. այս աշխատության Թ դլխի ծանոթագրությունը, էջ 149—150):

17 Մեզ հասած ազգյուրներից, դժբախտաբար, չի տուղվում Սայաթ-Նովայի 1765—66 թթ. քահանա ձեռնադրող Հաղբատի առաջնորդ եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի անունը, սակայն և 1768 թվականից հետո նրան վեցերորդ եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի անունը:

18 Այս ցուցմունքի շուրջը համմ. Սերոբ պատմիչի վկայությունը. «Վանից [Մանահնում] արբոյ տաճարին են սեպանք 40 ըստ խորհրդոյն քառասնից. և ես ի հարկաւորին գ՚ի սէր ննջեցեալ հոգւոց մատուցանել զպատարագս, ի մէում աւուր կատարել զ 40-ն ես՝ յիւրքանչիւր բեմի» (Գ ի ւտ ա. ք. Ա զ ա ն ա ե ա ն, Գիւան հայոց պատմութեան, X, 1912, էջ 372). համմ. Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց, վրացերեն, Թբ., 1928, էջ 46 և ծանոթ. 3. Л. Меликсет-Беков, О международное в Тифлисе в 1197 году по поводу кривой Пасхи.— „Известия Кавк. Ист. Арх. Института", III, 1924, стр. 53—54:

19 Ըստ «Կալմասոբա»-ի I հատորի 1936 թ. հրատարակության, էջ 233—237: Այս հատվածի թարգմանությունը ռուսերենում բացակայում է:

20 Ըստ «Կալմասոբա»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 18—20:

21 Ըստ նույնի, էջ 30—31:

22 Ըստ նույնի, էջ 76:

23 Ըստ նույնի, 143—144: Համմ. Ս. Կակաբաձե հրատարակությունը. Կալմասոբան Արևմտյան Վրաստանի մասին, վրացերեն, «Պատմության ժողովածու», IV, 1929, էջ 37—39: Հատվածը զանգշտական բնույթ է կրում: Ռուսերեն թարգմանությամբ մատեմ, էջ 169—170:

24 Դարչելի մասին, և մեջն այլոց. տե՛ս Մ. Օրմանյան. Ազգապատում, III, 3428—3431: Դարչելն, երբև ռուսական օրինակությամբ գործել հատկանալի պատճառով, ծագրի առաբկա է գտնել Իոնայի կողմից:

25 Ի նկատի ունի 1801 թ. Քարթլի-Կախեթի միացումը Ռուսաստանին, որի հետ Իոանա Խելաշվիլին սկզբում չէր ուզում հաշտվել։

26 Ըստ «Կամսարական»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 163—164։

27 Այս եկեղեցական ժողովի մասին, որ 1123—1125 թթ. մի քանի անգամ գումարվել է Թբիլիսիում, տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետաց հայոց հիւսիսային կողմանց» և այլն, «Բանբեր Մատենադարանի», Թբ., 1928, էջ 137—139։ Լ. Մելիքսեթ-Բեկ, Հովհաննես Մաքսիմագ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանության երկրի»։ Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի, 1943 թ., № 1, էջ 76 և ծանոթ. 1, նաև այս ծանոթության մեջ նշված գրականությունը։

28 Ըստ «Կամսարական»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 184, 190, 193, 199, 201—202, 203, 204—205, 207։ Համեմատ. նաև՝ Ի. Թադևոսյան, Վիլի Համառոտ հաղորդագրություն վրաց գրողների մասին, «Վաղեմի վրաստան», I, 1909, էջ 15—16, 13, 36, 39, 42, 43, 44, 45—46, 48 (ուր այս հատվածն ընդունված է իբրև անկախ գործ, որը պետական հրատարակողը անհայտ վերագրել է Թեյմուրազ արքայազնին)։ Այս հատվածի հայերեն թարգմանության, համաձայն Ի. Թադևոսյանի, տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ. «Գեղարվեստ», VII, Թբիլիսի, 1921, էջ 44—48 (նույնը, Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայ հին գրականության պատմության վրացերեն, Թբ., 1941, էջ 230—231)։

29 Այս հատվածի ու մասամբ հիշված գրողների մասին առնասարակ տե՛ս Կ. Կեկելիձե, Վրաց հին գրականության պատմությունը, I, 1951, էջ 253—265, 360—363, 342—345, II, 1952, էջ 536—562։

30 Ինչպես պրոֆ. Իլիա Աբուլաձեն պարզել է, Աբսեն Իղալթոյիցու «Մերկացումներ» կեղծված անմիջական պատասխանն է ներկայացնում իրենից Մխիթար Գոշի «Դատաստանի» յոթգլուխ վրաց» գրվածքը (Մխիթար Գոշի «Յոթգլուխ վրաց» գրվածքը և նրա գրական աղբյուրները, վրացերեն, «Թբիլիսիի պետ. համալսարանի Աշխատություններ», VII, 1938, էջ 102—105)։

31 Այս Զաքարիայի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, «Գեղարվեստ», VII, էջ 45։

32 Տեր-Փիլիպոսի մասին տե՛ս Л. Меликсет-Беков. К биографии священника Филиппа Кайтмазова. „Христ. Восток", т. VI, 1922. стр. 281—284, և սույն աշխատության ե. գլխի 2-րդ ծանոթ. (էջ 101)։

33 Տեր-Պետրոսի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ, «Գեղարվեստ», VII, էջ 48։

34 Տեր Դավիթը և տեր-Սամվելը տեր-Փիլիպոսի զավակներն են, ինչպես վկայում է Գալուստ Շերմազանաշվիլը (Նիմեր ազգային պատմության, Ռուսով, 1890, էջ 213—216)՝ «Թիֆլիսի սուրբ Գեորգ (բերդի) եկեղեցուց աւագ քահանայ Տէր Ֆիլիպէ Ղայիմազեանցն ունեցել է երկու որդի՝ Տէր-Սամուէլ և Տէր-Դաւիթ անուններով։ Տէր-Սամուէլն եղել է սուրբ Բեթղեհեմ եկեղեցւոյ աւագ երէց։ Իսկ Տէր-Դաւիթը Քարափի եկեղեցում քահանայ։ Տեր-Սամվելի մասին համեմատ. նաև «Ազդարար», № 4, 1794 թ., էջ 164—172։

[35] Ըստ «Հայմատոյց»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 228։ Ելակետ ունի Լեոնտի Մրովելու երկը, տես «Վրաց պատմություններ», I, էջ 150։

[36] Ըստ Գ. Լեոնիձեի հրատարակության՝ «Բանաստեղծ Սաաքլաման», Թբ., 1930, էջ 16, ծանոթ. (վրացերեն)։

[37] Ըստ «Հայմատոյց»-ի II հատորի 1948 թ. հրատարակության, էջ 145—151, 153, և մեր համապատասխան հոդվածի (1936)։

[38] Այս զրույցները հիշեցնում են նմանօրինակ տիրահռչակ էպիզոդներ էջմիածնի կյանքից, որ իր ժամանակ արձանագրվել է հայ մատենագրության մեջ, օրինակ՝ Թաչատուր վարպապետ Կեսարացու կապակցությամբ, որ նշել է Առաքել Դավրիժեցին (Պատմութիւն Հայոց, դ. տպ., էջմիածին, 1896, էջ 398—400), հմմտ. և է օ, Հայկական տպագրութիւն. Ա. հատոր, բ. տպ., Թիֆլիս, 1904, էջ 187, նաև Հովհաննես Կաբրեցու կաթողիկոսի նկատմամբ, որի մասին գրել է Ա. Երիցյանը (Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք, մաս բ., Թիֆլիս, 1895, էջ 526—543, մանավանդ 539)։

Զրույցներն ինքնին ապացույց են այն իրողության, որ այսաեղ կենտրոնում վրաստանցի և վրացախոս հայ կաթողիկոսն է, ասել է Դավիթ Ղորղանյան էնագեցին, որը կաթողիկոս օծվեց 1801 թ. գարնանը։ Սրա կողմնակի ապացույցն է, ի միջի այլոց, նաև այն, որ Դավիթ Ղորղանյանի, դեռևս վարդապետի, 1784 թվին վախճանված մոր՝ Անոնայի գամբռնի հուշարձանը, Հոխիմեի վանքի գերեզմանատունը երկկողմանի արձանագրություն ունի — հայերեն և վրացերեն, որ հրատարակել ենք մենք (Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբիլիսի, 1930, էջ 74—75)։

Իե

ԱՆԱՆՈՒՆ ՀՆԱԳԵՏ

«ՏՓղԻՍԻ ԵՎ ՍՈՄԽԻԹԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (1837)

Անանունն հեղինակը, հավանական է՝ պատմաբան կամ հնագետ, 1837 թվին կազմել է վրացերեն լեզվով Տփղիսի և Սոմխիթի եկեղեցիների և վանքերի նկարագրությունը, ամփոփելով այն 2 տետրակի մեջ։ Դրանցից առաջինը (A) պարունակում է Տփղիսի 3 թաղամասերում՝ բուն Տփղիսում, Հավլաբարում և Դրեի թաղում (Գարեթուբանի) կամ, որ նույնն է, Տափիթաղում (Կալոուբանի) եղած վրաց եկեղեցիների տեսությունը, շուրջ 17-ի, իսկ երկրորդը (B)՝ բաղկացած լինելով 3 գլխից, պարունակում է տեսություններ՝ ա. Տփղիսում գտնվող հայադավան եկեղեցիների, թվով 22, բ. Տփղիսի կաթոլիկների զույգ եկեղեցիների, և գ. Սոմխիթի հայ-վրացական վանքերի, թվով 7։

Սոմխիթի հնություններին նվիրված գլուխը, որը Վախուշտի Աշխարհագրության (տես այս աշխատության գ. գլուխը և առանձնապես նրա վերջին հատվածը) ազդեցությունն է կրում, տեղ-տեղ նույնիսկ բառացի կրկնություններով հանդերձ, ունի մի վերնագիրը, որ բառացի թարգմանությամբ նշանակում է՝ «Տփղիսի թեմերում և գավառներում (ուեզդներում) գտնվող եկեղեցական տեսարանների նկարագրությունը»։

«Նկարագրության» հեղինակին, անկասկած, վրացի է, մոտ կանգնած Վրաստանի ուղղափառ հոգևոր իշխանությանը, քանի որ հիշում է «սրբազնագույն և կաթողիկոս Սինոդի անդամ՝ հայոց Վրաստանի էքսարխոս Եվգենի արքեպիսկոպոսին» (1834—1844 թթ.)։ Միաժամանակ, նա հեռու չէ և հայ ու կաթոլիկ հոգևորական շրջաններից, որտեղից էլ առատ նյութ է ստանում և օգտագործում իր «Նկարագրությունը» կազմելու համար։

Այդպիսի անձնավորության վրացիներից, որը սերտ հարաբերություն ուներ ինչպես վրացական, նույնպես և օտարադավան հոգևորականության հետ, գուցե հայտնի պատմաբան-

հնագետ Պլատոն Իոսելիանին լինելը, որը մի ժամանակ՝ 1838—1842 թթ.՝ նույնիսկ Ներսիսյան թեմական հոգևոր դպրոցի դաստատու էր (Մ. Երիցեանց, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ, Թ. 1898, էջ 422—423, հմմտ. 303. հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Մի էպիզոդ Պ. Իոսելիանու կյանքից. վրացերեն,— «Լիտերատուրուլի Սաքարթվելո», 1938 թ., № 31), սակայն այսպիսի ենթադրության դեմ առարկում է այն հանգամանքը, որ այս նկարագրության տեղեկությունները չեն համընկնում այն ամենի հետ, ինչ որ Տփղիսի եկեղեցիների մասին տալիս է նույն Պ. Իոսելիանին իր հայոնի աշխատության մեջ՝ Описание древностей города Тифлиса. Т., 1866, стр. 232—234։ Անանուն հնագետի նկարագրությունը կանխում է նաև ակադ. Մ. Բրոսեի (M. Brosset) և Սարգիս եպ. Ջալալյանի տեսությունները։

Անանուն վրաց հնագետի 1837 թ. նկարագրությունը, համաձայն վրաց մեջ գրագիտության տարածող նախկին ընկերության (այժմ Վրաստանի պետ. թանգարանի) հավաքածոյի № 3034 unicum ձեռագրի, հրատարակել ենք մենք 1923 թ.՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Նյութեր Տփղիսի և «Սոմխիթի» հնությունների պատմության համար, վրացերեն,— «Ձվելնի մեցնիերեբա», № 1, էջ 81—96։

Հայաստանի և հայերի հիշատակություններ, ինչպես և Տրփղիսի և Սոմխիթի հայկական հնությունների նկարագրությունները պարունակող տեղերը անանուն հնագետի գործից մենք առանձին տալիս ենք A տեսակից՝ քաղվածաբար, իսկ B տեսակից ա. և գ. գլուխները ամբողջապես։

ա

Սիոնի տաճարում... թագված Իոանե Մանգլելի՝ ազգանունով Սահակաձեի՝ դեսպանին[1] երկրպագելու համար, օգոստոսի 15-ի առնին գալիս են Տփղիսում բնակվող բոլոր վրացիք և հայերն էլ...

Հավլաբարում Ակաթիատոս կոչված մեծաշեն եկեղեցում հանուն առաքածանի[2],... [ինչպես] ասում են, թագված է Քրիստոսի համար նահատակությամբ սպանված սուրբ վկա Շուշանիկ թագուհին, որը նահատակվեց 432 թվին (sic) կոստակոտ գարձած իր ամուսնի վաստակից[3]։...

... Մթամթինպա կոչված եկեղեցին... 1808 թվին Տփղիսում բնակվող կանայք՝ վրացուհիք և հայուհիք, իրենց միջև հատկապես ժողոված գումարով մաքրեցին հիմքից և 1810-ին նրանք էս կառուցին [նորը][4]....

Բ

1837 ԹՎԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՓղԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅՈՑ (ՀԱՄՈՅԱՆՆԵՐԻ) ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԹԻՎՆ Է 22[5]

Առաջին: *Հարանց վանք: Այստեղ է նաուում էջմիածնից ուղարկված եպիսկոպոս կամ արքեպիսկոպոսը, առաջնորդ կոչվածը, Վրաստանի հայերի (հասոյաններնի) կառավարիչը: Քարուկրով կառուցված մեծ եկեղեցին հինգ խորան-սեղան ունի: Առաջինը՝ միջինը՝ հանուն ամենասրբուհի աստվածածնի, մյուսը՝ հյուսիսայինը՝ հանուն սուրբ առաքելոց, և երրորդը՝ հարավայինը՝ հանուն սուրբ Լուսավորչի՝ Գրիգոր Պարթևացու: Այս մեծ եկեղեցուն արևմտյան կողմից կցված է երկհարկանի եկեղեցի. ներքևի եկեղեցին է հանուն սուրբ Հակոբի, որն այժմ փակված է և վերևինը՝ հանուն ամենասրբուհի: Եվ այս ամբողջ շինքը կառուցված է Տփղիսի քաղաքացիներնի (մոքալաքներնի)՝ Ավազբեխովի, Բաստամովի, Նազարբեկովի, Օղանից և վրացի իշխան Սոլաղովի ծախքով 1480-ին (sic): Եվ այս շինքը մեծ ջանասիրությամբ վերանորոգեց Տփղիսի քաղաքացիներից (մոքալաքներից) մեկը՝ սուն եկեղեցու ավագերեց տեր Ղազար Լազարովը 1800 թվին: Այս եկեղեցում ամփոփված է Մծբնա (Նիզիբինի) եպիսկոպոս սուրբ Հակոբա մասունքը: Այս վանքը ունի հինգ գմբեթ, երկուսը փոքր և երեքը մեծ: Այս եկեղեցին կանգնուն է չորս այան վրա (sic) և ծածկված է կարմիր կղմինդրով: Այստեղ ևս կա երկու հոյակապ զանգակատուն, որոնք շինված են ճարտարապետության [ոճ]ով: Այստեղ են մի ավագ քահանա և վեց քահանա[6]:*

Երկրորդ: *Տփղիսի բերդի տակը, վաճառաշահ հրապարակին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն ամենասրբուհի աստվածածնի. Սա թեև բերդի ժամ է կոչվում, սակայն հնուց Հաղբատի մայրավանքի (մետրոպոլիտական) [եկեղեցի] է, որ հնուց շինված է բարեձնունդ անի Ումեկովի ծախքով, քարուկրից, կըզմինդրով ծածկված, ունի երկրորդ փոքր գմբեթ ևս, իբրև զան-*

գակաւոն։ Կանգուն է չորս սյան վրա։ Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանաներ։

Երրորդ։ Իշխան Բեհբութովների պալատին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն սուրբ Գեորգի՝ Մողնին կոչեցյալը, որ կանգուն է չորս սյան վրա։ Բացի մեծ գմբեթից, այս եկեղեցու երեք կողմում անկյուններում դրսից շինված են երեք փոքր գմբեթներ։ Այս երեք փոքր գմբեթներից մեկը զանգակների համար է, իսկ [միացած] երկուսը՝ պատարկ։ Այս եկեղեցում ամփոփված է սուրբ Գեորգի մասունքը։ Սա կառուցված է բազաքացիների (մոքալաքների) Մանդենովի, Բասոտոմովի և Բաշինջաղելովի ծախքով։ Ներքուստ ավելի դուրեկան տեսք ունի, քան թե դրսից։ Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանաներ։ Այս եկեղեցու գավթում, հինգ սաժեն հեռավորության վրա, կա մի այլ եկեղեցի՝ նույնպես սուրբ Գեորգի, նույնպես փոքր Մողնին կոչեցյալ, գմբեթավոր, քարուկրով կառուցված հնուց Տեր-Շմավոնովների ծախքով, որոնք [այժմ] իշխան Աբխազիների են կոչվում։ Սա էլ մեծ Մողնին է վերաշրված[8]։

Չորրորդ։ Թագավորական քարվանսարայի արևմտյան կողմում կա Նորաշեն (ախալ շենի) կոչված մի եկեղեցի, հանուն վերափոխման աստվածածնի, գմբեթավոր, բարեշեն՝ պղյուսից և կրով, չորս սյան վրա կառուցված, Գմբեթը սև տաշած սալաքարով է ծածկված, իսկ թևերը կարմիր պղյուս-կղմինդրով։ Դրսից սրա տեսքը ավելի դուրեկան է, քան ներքուստ։ Հիմնադրված է նախ ոմն իսոյա Նազարի ծախքով և ապա շենքը շարունակել են և ավարտել՝ Տփղիսի կանանց և սրանց ձեռներեցությամբ [հավաքած] միջոցներով՝ 1737 թվին. և նրանից հետո մինչև այժմ էլ շինվում է։ Այստեղ են մի ավագ քահանա և հինգ քահանաներ։

Հինգերորդ։ Սուրբ Նշանաց եկեղեցի կոչվածը հոյակապ է, գմբեթավոր, հանուն սուրբ Նիկողայոսի, չորս սյան վրա կառուցված։ Սրա գմբեթը կանաչ պղյուսով է ծածկված, իսկ եկեղեցին ու թևերը կղմինդրով։ Սրա մեջ կա երեք խորան. միջինը մեծ, հանուն սուրբ Նիկողայոսի, հյուսիսայինը՝ հանուն Անդրեաս առաքյալի, և հարավայինը՝ սուրբ Գեորգի։ Այստեղ կա բազմամասն պատկեր սուրբ Նիկողայոսի, հույժ աքանչելագործ, որի մեջ ամփոփված է Անդրեաս առաքյալի ճակատը։ Բացի սրանից, այս եկեղեցու ավագերեց Օհաննես Զարափխիչ իր տանը պահում է ինչպես կենսարար փայտը, նույնպես և այլ սրբոց մասունքները, որ նրա նախնիները ժառանգաբար թողել

են նրան և որը չաուերին բաժուած է. սրանք պաշտելի են ինչպես հայերից, նոյնպես և վրացիներից, իսկ հին ժամանակները թագաւորական անից ևս պաշտուած են եղել։ [Այս քահանան] երբեմն փոխադրւում է այն իր անից եկեղեցի, որպեսզի քրիստոնեաները պաշտեն և համբուրեն այն, ու կրկին իր տունը վերադարձնում։ Այս եկեղեցին կառուցուած է քաղաքացի (մոքալաք) Ամիր Մամասախլիսի ձախքով, որի առումից այժմ վեց պանի է Զաւրար Մելիքովը։

Վեցերորդ։ Տփղիսից դեպի հարաւ, քարափի թաղում, բարձրաբերձ ժայռի վրա կայ եկեղեցի գմբեթաձեւ, վերափոխման աստուածածնին, Բեթղեհեմ կոչեցեալը։ Այս եկեղեցին սրբատաշ քարից է կառուցուած, գմբեթը նոյնպես սրբատաշ սև քարով է ծածկուած։ Սուրբ տեղը և այս եկեղեցին ու նրա թեւերն ամբողջապես սրբատաշ սև տախտակով են ծածկուած։ Սրա մէջ կայ երեք խորան. մէջինը՝ աստուածածնին, հիւսիսայինը՝ Գրիգոր Լուսաւորչի, և հարաւայինը՝ [Յովհաննու] Մկրտչի։ Այստեղ ամփոփուած է ամենասրբուհի աստուածածնի պատկերը, որ հնուից է նկարած, [և] որին երկրպագում էին հայերը... Եկեղեցին իր բարձր գերքով և գմբեթով Տփղիս քաղաքի բոլոր տեղերից լաւ երեւում է և գեղեցկացնում է քաղաքը։ Եւ աստուածածնայ այս պատկերի մասին ասում են, որ սա նկարած է այն մարի տախտակի վրա, որտեղ, Բեթղեհեմում, ծնւեց տէր փրկիչ Յիսուս Քրիստոսը։ Սա կառուցուած է 1500 թվին Տփղիսի քաղաքացիներ (մոքալաքներ) Յոջափարսեխի, տէր-Սարգսի, Նաբիմանովների և Դաւթաշվիլների ձախքով։ Վերջինիս թեւերը և սալաքարերը պատրաստուած են Վրաց իշխան Գիվի Ամիլախուարովի Շահ-Դաւլի-խան կոչեցեալի ձախքով։ Այստեղ են՝ մի ավագ քահանա և հինգ քահանայ։

Յոթերորդ։ Եկեղեցի հանուն Ամենայն աստուածածնին, որը ջգրաւ կամ նախանձից պրծած է (Ջգրաշէն), շինուած գմբեթաւոր, չորս սեան վրա կանգնուն, կարմիր աղյուսից և քարաւկրով կառուցուած, կղմինդրով ծածկուած։ Ունի երկու գմբեթ, մեկը մեծ և մյուսը փոքր։ Այս փոքր գմբեթում կախուած են զանգեր։ Սա հիմնադրուած է տէր-Փարսադան Մոխնովի ձախքով, որը հենց այս տաճարի ավագերեցն էր, ապա այս եկեղեցին շինուած և ավարտուած է իշխան [Հ]ակոբջան Ամատունովի ձախսով 1729 թվին։ Այստեղ են՝ մի ավագ քահանա և վեց քահանայ[9]։

Ութերորդ։ Տփղիս քաղաքի դրսում կառուցուած է մի եկե-

դեպի գմբեթավոր, որ Բամոյանց ժամ է կոչվում, հանուն սուրբ Գեւորգի, բավականին մեծ, կարմիր աղյուսով և քարուկրով՝ շինված քաղաքացի (մոքալաք) Խուդինովի և տեր-Գաբրիել Բամովի նախքով 1727 թվին։ Ծածկված է կղմինդրով[10]։

Ինձերորդ։ Բազանիքների համրջով տանող ճանապարհին կա եկեղեցի թեև ոչ մեծ, սակայն և ոչ փոքր, գմբեթավոր։ Սա կառուցված է հին շինքի ձեռվ՝ հանուն Հրեշտակապետի։ Սրա մասին ասում են, որ իբր թե հուշերի շինած է եղել՝ հանուն քառասնից վկայից. սակայն այս ասմունքը բանավոր է և ոչ մի գրության մեջ չի երևում։ Սա նորոգեցին և [վերա]շինեցին Տփղիսեցի հայերը 1792 թվին։ Այս եկեղեցին Տփղիսեցիք Բերդի փոքր ժամ են կոչում[11]։

Տասերորդ։ [Հ]ավլաբարում, [Հ]ավլաբարի Վրաց եկեղեցուց մոտ, կա հայոց ժամ՝ հանուն սուրբ Մինասի, ոչ հեռու այն տեսարանից, որ բացվում է Տփղիսի Կուր ավազոտ դեւտափի վերևից, առանց գմբեթի, որը հին-տան նման է, շինված 1790 թվին [Հ]ավլաբարցիների ծախքով, կղմինդրով ծածկված, հանուն սուրբ Մինաս վկայի։

Տասմեկերորդ։ [Հ]ավլաբարի մեջում, ժողովրդական շինքերի կենտրոնում, կա եկեղեցի Շամքորեցոց կոչեցյալը, կառուցված 1775 թվին, հանուն ասոված-ածնի, առանց գմբեթի և փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1775 թվին[12]։

Տասներկուերորդ։ [Հ]ավլաբարի դարխլերի գլխին, դեպի աջ, որտեղից տեսարան է բացվում դեպի Կուրը և այգինները, Մեսեխի բերդի մեծ գետն գլմացը, կա փոքր ժամ գմբեթավոր, հանուն սուրբ Գեւորգի, որ ծածկված է փայտով և շինված է Սուրբ Նշանի ավագերից տեր-Օհաննես Զարափովի ընտանիքի [ծախքով] 1775 թվին։

Տասներեքերորդ։ Զուգուրեթ տանող ճանապարհի կողքին, արևելքից գտնվող ձորում, դեպի [Հ]ավլաբար տանող դարխլերին կից, գտնվում է եկեղեցի գմբեթավոր վայելչատես, քարուկրով [շինված], հանուն սուրբ Կարապետին, որ կառուցված է՝ նախ հիմնադրությամբ քաղաքացի (մոքալաք) Դավթովի ծախքով 1400 թվին, իսկ վերջին անգամ նորոգված 1790-ին։ Այստեղ է ամփոփված սուրբ Կարապետի աքանչելագործ մասունքը, որը և տանում է ժողովուրդը։

Տասներչորսերորդ։ [Հ]ավլաբարից դուրս, հարթավայր տեղում, [Հ]ավլաբար թաղից մի փոքր հեռավորությամբ, կա եկե-

պեցի փառաշեն գմբեթաձեւ, քարուկրով [կառուցված], պարսպով պատած, հանուն ամենասրբուհի ծիրանազարդ աստվածածնի, որ Յոջա Բև[ն]բուդովի ժամ է կոչվում և որը կառուցված է հենց նույն իշխան Բև[ն]բուդովների նախքով 1780 թվին և հետագայում նրանցից բազմիցս նորոգված։ Այս եկեղեցին կառուցված է իշխան Բև[ն]բուդովներից իրրև իրենց դամբան[13]։

Կուր [գետ]ի կողմը, Կուկիա կոչված թաղում, կա եկեղեցի փոքր, հանուն ամենասրբուհի աստվածածնի, կառուցված քարուկրով, առանց գմբեթի և ապյուսով ծածկված, որ շինել է տեղական ժողովուրդը 1807 թվին։

Երկրորդ [=տասնվեցերորդ]։ Վերոգրյալ՝ առաջին տեղում նկարագրած մեծ վանքին կից կա եկեղեցի հանուն սուրբ Գեորգի, որ Ղափլանենց է կոչվում, առանց գմբեթի, փոքր, կառուցված 1790 թվին այժմ հանգուցյալ տեր-Գրիգոր քահանա Սանուլովի ծախքով[14]։

Երրորդ [=տասնեւյոթերորդ]։ Վերա տանող ճանապարհի սկզբին, դեպի ձախ, ճանապարհից վերև, կամարովակու տներին կից տեղում, կա եկեղեցի, առանց գմբեթի, հանուն սուրբ Գեորգի, Զրկինյանց ժամ կոչեցյալը, որը կառուցել են քաղաքացի (մոքալաք) Ղազարոմները 1717 թվին[15]։

Չորրորդ [=տասնեւութերորդ]։ Իշխան Բև[ն]բուդովների պալատին կից, անմիջապես ժայռի վրա կառուցված են վանական եկեղեցի, տներ և խցեր կույս վանականների բնակության համար, որը քարուկրով շինել է իշխան Աշխար[ն]բեկ Բև[ն]բուդովը 1717 թվին, հանուն աստքելապատիվ նախավկա և սարկավագապետ սուրբ Ստեփանոսի։ Այստեղ ապրում են տասը չափ կույս վանականներ։ Այս վանքում ամփոփված է նույն նախավկա սուրբ Ստեփանոսի մասունքը՝ աջը։ Այս եկեղեցին փոքր է, փոքր գմբեթով ծածկված. և ինչպես մինչև այժմ ապրել են տասը, նույնպես և այժմ ապրում են նրանք իշխան Բև[ն]բուդովների ժառանգների [ծախքով][16]։

[Տասնեւիններորդ]։ Տփղիսի հարավային կողմում՝ Քարաթիի թաղում, բարձր ժայռի վրա կառուցված է փոքր եկեղեցի փոքր գմբեթով, լավ և գեղեցկատեսիլ, հանուն սուրբ Գեորգի, որ ամփոփված է սուրբ Գեորգի աքանչելագործ մասունքը։ Այս եկեղեցին կառուցված է 1600 թվին ոմն զարթիր հայ վանականի սեփական ծախքով։ Սա կղմինդրով է ծածկված և Քարաթիի եկեղեցի է կոչվում[17]։

[Քառներորդ]։ *Բազանիքների կամրջից հայնկուա, մեծ գաւրիվեր գնացող խճուղու վերջում, կան այլևայլ շէնքեր և բնակարաններ և սրանց միջում սուրբ Սարգսի եկեղեցին։ Այս եկեղեցին կառուցել է յոթներորդ կիսում նկարագրած Տփղիսի Նորաշէն եկեղեցու ավագերեց տեր Սուքիասը 1737 թվին։ Այս եկեղեցում գտնվում է սուրբ Սարգսի սքանչելագործ մասունքը, և այս սրբի հիշատակը տոնում են մաքսավորի և փարիսեցու շաբաթ օրը, և այստեղ ժողովրդի մեծ բազմութիւն է գալիս, մանաւանդ կանանցից*[18]։

[Քառնևմեկներորդ]։ [Հ]ավելաբերից դեպի ձախ, գաւրիվերին կից, Կախեթ տանող ճանապարհի սկզբին կա եկեղեցի հանուն սուրբ Գեւորգի, Էջմիածնեցոց կոչեցյալը, տանից գմբեթի, փոքր, փոքր գանգակատնով, փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1805 թվին*[19]։

[Քառնևերկուերորդ՝ երրորդին կից. տես վերևը]։

Գ

ՏՓՂԻՍԻ ԹՈՒՄԵՐՈՒՄ ԵՎ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

[1]. *Հաղբատն և Սանա[հ]ինը իբրև հոյակապ եկեղեցիներ, նուէնպես և գիւղեր, [ասում են իբր թե] Վրաց թագավորների շինված են, իսկ հայերը գրում են, որ հայ թագավորներն են կառուցել. և ես այն կարծիքի եմ, որ այս վերջինը պիտի լինի ճիշտ։ Սրանք խիստ գեղեցիկ և հոյակապ են։ Հաղբատի եկեղեցին քառասուն խորան է պարունակում։ Այնտեղ այնքան վանականներ կային, որ երբ ննջեցյալ էին լինում, մի օրում էին կատարում քառասունքը։ Այս Հաղբատն այնպես փառավոր չէ, ինչպես հին ժամանակներում։ Այստեղ Վրաստանի թագավորի հավանութեամբ նստում էր հայոց եպիսկոպոսը (ընագրում սխալմամբ՝ կաթողիկոսը), որի մասին [նախօրոք] գրում էր Էջմիածնի ընդհանրական [հայոց] հոգևոր տեր (օբեվաբտեր) կաթողիկոսին, և նրա հետն էին կազմում Քարթլիում բնակվող հայերը։ Պատմութեյունից երևում է, որ Հաղբատն ու Սանահինը որպես գյուղեր, նուէնպես [և] հոյակապ գմբեթավոր եկեղեցիներ, կառուցված են 961 թվին Բագրատունյաց Աշոտ երրորդի, Շնորհալի (sic) կոչվածի, ամուսին Ռոսթովանուշի հոգով*[20]։

2. *Հաղբատից վերև կա փոքր վանք, կառուցված հանուն կենարար փայտին, որ գրված ունին հայերը։ Այստեղ փորված են բազմաթիվ այրեր և այդ այրերից մի քանիսի մեջ բազմա-*

թիվ հին դրքեր կան և նրանց մուտքը փուլ գալու պատճառով խափանված է, և՝ անանցանելի լինելով՝ անգործածելի են մնացել[21]:

3. Հազրատից ցած գեղի հյուսիս կա եկեղեցի Ագարակի, որն այժմ Ախտալա է կոչվում և որի գմբեթը քանդել է Լանգ-Թեմուրը: Սա հոչակավոր է, գեղեցկատեսիլ, հնում մետրապոլիտանի և հոտով հանդերձ, իսկ այժմ երեցի բաժին. և գրված ունին այն հունա-վրացական պավանանքին հետևողները[22]:

4. Ախտալայի դիմացը, գեղի արևելք, Բերդուջ լեռան մեջ, կա երկու վանք, որոնցից մեկը խելագարին խելքի է բերում, իսկ մյուսում լիսում է աղբյուր, որի ջուրը եթե քառասուն օր [անընդհատ] խմել տրվի մոլեգին-կատաղածին, հաջորդ քառասուն օրն այլևս երկյուղալի չվիտի լինի նրա համար[23]:...

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

[1] *Հմմտ.* П. Иоселиани, Описание древностей города Тифлиса, Тифлис, 1866, стр. 160—162. М. Ткемаладзе, Тифлисский Сионский кафедральный собор, Тифлис, 1904, стр. 99—101:

[2] *Խոսքը Մեսխեթի տաճարի մասին է, որ կառուցել է Դեմետրե II Ինքնահպատ թագավորը (1270—1289 թթ.):*

[3] *Խոսքը Վարդան Մամիկոնյանի գուստը Շուշանիկի մասին է, որի հանահատակությունը իր ամուսին Վազգեն բդեշխից տեղի է ունեցել 474 թ. (Հմմտ. Ցակոբ Ցուրտաւեցի. Վկայաբանութիւն Շուշանիկայ, հրատ. Իլիա Աբուլադեի, Թբ., 1938, էջ 032):*

[4] *Հայ կանանց մասնակցությունը Մեծամինդա եկեղեցու վերանորոգման գործում կարևոր մոմենտ է, որը, ըստ մեր հետազոտության, արձագանքում է Դավիթ Գարեջեցու (VI դ.) մեծ հեղինակությանը Վրաստանի հայերի աչքում, որը մենք մեկնում ենք Դավիթ Գարեջեցու և հայ Դավիթ «Անհաղթ» անունով հայտնի հայ իմաստասերներից մեկի նույնացման թեոլեխայով (սրա մասին մանրամասն մեր զեկուցումը՝ Դավիթ Անհաղթի վրաստանում լինելու հարցի շուրջը,— «ՀՍՍՌ Գիտ. Ակադ. Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Գրական հետազոտությունները, I, եր., 1946, էջ 256—259):*

[5] *Թրիլիսիի հայոց եկեղեցիների ցուցակագրությունը և նկարագրությունը կարևոր նյութ է հայ գաղթականության պատմության համար Վրաստանում և, մասնավորապես, նրա մայրաքաղաքում: Որքան էլ այդ նկարագրությունը կապված է հայերին արձանագրությունների ընթերցման և հրատարակության հետ, այդ մենք պատրաստ ունինք մի այլ աշխատության համար՝ «Վերահայոց վիմական տարեգիրքը», որը պատրաստ է տպագրության: Այստեղ մենք բավականանում ենք միմիայն հիմնական գրականության նշումով. Դուկաս վ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն Երկրից մասանց աշխարհի Ասիոյ, Եվրոպիոյ, Աֆրիկիոյ և Ամէրիկոյ. մասն առա-*

ջին. Ախա, հատոր Ա., Վենետիկ, 1806, էջ 276—279 (նկարագրությունը կատարված է 1795—1800 թթ.): Մինաս վ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Վրհատան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերոյց ի նախնեաց Անի քաղաքին, Վեն., 1830, էջ 412—415 (նկարագրությունը 1824—1830 թթ.). Հմմտ. Л. Меликсет-Беков, Тифлис в 1824—1830 годах в описании патера Миная Медичи,— „Тифл. Листок", 1913 г., № 283. его-же. Старый Тифлис по описаниям А. Негри (1817 г.) и М. Медичи (1824—30 гг.),— Ars, 1918 г., № 2—3, стр. 108—114: *Կարգ եկեղեցեաց Հայոց եղելոց ի Տփղիս քաղաքի՝ ըստ կարգաւորելոյ տեառն Ներսէսի վիճակաւոր Աբգալիսկոպոսի Նորին և Առաջնորդի. Ցամի Տեառն 1827 ՌՄՀԶ:* M. Brosset, Voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, III livraison, SPB. 1851 (cinquième rapport), pp. 1—26: *Մարգիս վ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մաս բ., Տփղիս 1853, էջ 58—73:* П. Иоселиани, Описание древностей города Тифлиса, Т., 1866, стр. 230—234: *Գիւտ ա. ք. Ադոնեան, Հայերը Վրաստանում, — «Տարազ», 1919 թ., № 1—18, էջ 43—45:* Л. Меликсет-Беков, Тифлис, его основание и краткий исторический очерк,— „Тифлис и его окрестности. путеводитель", Т., 1925; стр. 16—22: М. Полиевктов и Г. Натадзе. Старый Тифлис в известиях современников, Т., 1929, Н. Бадриашвили, Тифлис, кн. I, Т., 1934, стр. 92—95, 119—121.

6 *Վանքի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Տփղիսի Վանքի հիմնադրության հարցի շուրջը, վրացերեն,— «Թբ. պետ. համալսարանի Տեղեկագիր», V, 1924, էջ 82—91: Նույնի՝ Դարեջոյալի բազմաբերանց հայկական էպիգրաֆիկան etc, վրացերեն,—* „Известия Института ЯИМК, V—VI, Т., 1940, *էջ 166:*

7 *Բերդի մեծ եկեղեցու մասին տե՛ս* И. Орбели, Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе,— „Христ. Восток", т. VI, 1922, стр. 197—202. Л. Меликсет-Беков, О международном собище в Тифлисе в 1197 году по поводу кривой Пасхи,— „Известия Кавк. Ист.- Арх. Института", т. III, 1925. стр. 49—50: *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետ Հայոց հիւսիսային կողմանց, Թբ., 1928, էջ 252: Նույնի, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբ., 1930, էջ 17—22:*

8 *Մողնու եկեղեցու մասին տե՛ս Սայաթ-Նովայի երդը «Հիմքդրդ վրբասին նուբեցըն», չազ արին Մողնու սուրբ Գևոնդը», գրված 1751 թ. (№ ՄՀ). Գ. Ասատուր, Սայաթ-Նովայի ձեռագիր մատյանը,— «Բանբեր Հայաստանի Գիտ. Ինստիտուտի», I—II, 1922, էջ 233. Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի վրացերեն թարգմանությունը, Թբ., 1935, էջ 33—34, 110:*

9 *Խոսքը Ջրաշեն եկեղեցու մասին է, որը իրր թե կոզբին գտնվող կաթոլիկների եկեղեցու ջրով է շինված (հմմտ.* M. Tamarati, Rapport sur l'église latine de l'Assomption de Tiflis en Géorgie, Rome, 1903). *այսպես էր թարգմած Սայաթ-Նովայի Թոռ տեր Մովսեսը [1810—1883]. հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Սայաթ-Նովա, վրացերեն, Թբ., 1930, էջ 159—160:*

10 *Սա նույն Տաքիթաղի եկեղեցին է, որի մոտ գտնվում էր վրացական «կայուբոնիա» (Կայլի թաղի) եկեղեցին:*

11 *Խոսքը Հրեշտակապետաց եկեղեցու մասին է, որն առաջ քառանիկ*

եկեղեցի է կոչվել և դիտվում է դեռևս VIII դարում, տե՛ս Л. Меликсет-Беков, О междоусобице в Тифлисе в 1197 г., по поводу Кривой пасхи.— „Известия Кавк. Ист.-Арх. Института", т. III, 1925, стр. 49—60. *Լ. Մելիք-Բեկ, Սայաթ-Նովա, 75—77։ Կ. Կեկելիձե, Վաղ ֆեոդալիզմի վրաց դրականությունը, I, վրացերեն, Թբ., 1935, էջ 29։*

12 *Խոսքը կարմիր-Ավետարան կոչված եկեղեցու մասին է, որ վերանորոգել են Շամխորից գաղթած հայերը XIX դարի առաջին կեսին, և հենց այդ նոր շենքն է՝ դմբեթավոր, որ հասել է մեզ։*

13 *Խոսքը Խոջիվանքի մասին է։ Համմա. Լ. Թադևոսյան, Վրաստանի հնություններըը, վրացերեն, III, Թ., 1910, էջ XIII և Ծննդարանական տախտակը։*

14 *Օրբելյանների փողոցի մոտ էր։*

15 *Դրիբոեդովի փողոցի վրա էր, Նկարչական ակադեմիայի կողքին։*

16 Համմա. А. Кишмишев, Женский монастырь св. Стефана в Тифлисе,— „Тифл. Листок", 1912 г., № 36։ А. Бебутов, По поводу статьи о женской монастыре св. Стефана в Тифлисе, там же № 58։ *Խոբէն քահ. Խուդևան, Թիֆլիսի ս. Ստեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը, Թբ., 1914. հմմտ. նաև 13-րդ ծանոթ.։*

17 *Խոսքը, այսպես կոչված, «Խխոռ»-ի եկեղեցու մասին է։*

18 Համմա. Գ. Ա. Ադոնց, Դիւան հայոց պատմութեան, դիրք ԺԲ. Մանուել Կիւմիւշխանեցի, մաս I, Թբ., 1917, էջ 175—179, 202—221։

19 *Էջմիածնի շրջակայքից գաղթած հայերի կառուցած եկեղեցին է։*

20 Համմա. այս աշխատության Գ գլխի վերջին հատվածի 10—12 ծանոթությունները։

21 *Տե՛ս նույնտեղ, ծանոթ. 15։*

22 *Տե՛ս նույնտեղ, ծանոթ. 18։*

23 *Տե՛ս նույնտեղ, ծանոթ. 19։*

ԻՋ

ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄԻՉՆԵՐ

«ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (1827—1840)

Դավիթ Բագրատիոնի «Նոր պատմությունը», ինչպես վերև նշեցինք (ԺԹ գլուխը), անաղարտ կերպով չի հասել մեզ, այլ ենթարկվել է մասնակի վերամշակման և հավելումների մի շարք այլ անձանց կողմից։ Ուստի և հասկանալի է, թե որքան մեծ աշխատանք էր պետք, որպեսզի Դավթի երկասիրության հիմնական մասը զատեինք հավելում-կցորդներից, որ մեզ հաջողվեց անել հիմնական տեքստում, նշելով այն, ինչ որ Դավթի գրչին չեն պատկանում, անկյունավոր փակագծերի մեջ։ Միանգամայն հասկանալի է, որ Դավիթ արքայազնը, որ մահացավ 1819 թվին, չէր կարող շարունակել «Նոր պատմությունը» մինչև 1840 թ.։ Շարունակողը չէր կարող լինել և Բագրատ Բագրատիոնը, քանի որ նա իր «Նոր պատումը» հիմնականում ավարտել է 1814 թ. և ապա ժամանակ առ ժամանակ կցել նրան նոր տեղեկություններ մինչ 1819 թ. և մի տեղեկանք էլ 1824 թվին։ Հետևապես, պետք է ընդունել, որ Մ. Ջանաշվիլու հրատարակությամբ 1905 թ. լույս տեսած «Նյութեր Վրաստանի պատմության համար՝ ժողոված արքայազն Դավիթ Գիորգիի որդու ու նրա եղբայրների կողմից» գործը, որը պարունակում է նյութեր շուրջ 1744—1840 թթ., միմիայն սկզբնական մասումն է Դավիթ արքայազնի հորինածը, ասել է 1744—1814 թթ. (էջ 1—126)։ Իսկ ճեացած մասը՝ շուրջ 1815—1840 թթ. (էջ 126—187) այլ անձանց գրածը պիտի լինի, որոնց անունները դեռևս ճշտված չեն անհայտ. ուստի և գրանց մենք անանուն պատմիչներ ենք կոչում։ Եվ իրոք, որ այստեղ մենք այլ հեղինակի կամ, ավելի ճիշտն ասած, առնվազն 2 հեղինակների հետ գործ ունենք, երևում է նրանից, որ 1827 թ. ներքո արձանագրած մի դեպքի նշումից հետո ասված է. «Իսկ պարսիկների

և ուսանների հետագա անցքերը, ինչ որ տեղի ունեցան, մի առ մի նկարագրած, տես այս գրքի երկրորդ հատորում» (ըստ Մ. Չամչյանի հրատ., էջ 175), որին հրատարակիչը կցել է հեռակայ ծանոթագրությունը. «Դժբախտաբար, հեղինակի կողմից նշած իր երկի «երկրորդ մասը» ձեռագրում չկա»։ Սակայն պատմությունը սրանից հետո էլ շարունակվում է մինչև 1840 թիվը, ար, մեր կարծիքով, մի այլ հեղինակ պիտի գրի առներ։ Այնպես որ Դավիթ և Բագրատ Բագրատիոնների երկերի առաջին շարունակողի գրչին է պատկանում 1812—1827 թթ. պատմությունը, իսկ երկրորդին՝ 1828—1840 թթ.. Երկուսն էլ, անտարակույս, Պետերբուրգում ապրող վրացիներ են։

I

[ԱՅԼԵՎԱՅԼ ԱՆՑՔԵՐ 1812—1827 թթ.]

1812 թվին...զանն Բաբախանն իր որդի Արաս-միրզային ուղարկեց օժանդակելու Ալեքսանդրե [արքայազն]ին[1] Կախեթում... [Արաս-միրզան] եկավ ու կանգ առավ Արազի (Արեգի) հայնկուց՝ Ասլանդուզում։ Եվ քանի որ լսեց Ալեքսանդրեի պարտությունը ռուսներից և նրա գնալը Դադաան, Ռուիշչևը[2] գրեց գեներալ-մայոր Պյոտր Սաենպանիչ Կոտլյարևսկուն (Կիտլերևսկի), որ Ղարաբաղումն էր կանգնած գրուզինսկի գրենադերսկի մի գնդով հանդերձ, որպեսզի տեղական Մելիք-խանին հետ առնելով՝ հարձակվի Արաս-միրզայի վրա։ Լսելով այս՝ Կոտլյարևսկին (Կիտլերևսկի) գնաց՝ հետը առնելով նաև Ղարաբաղի խանին երկու հազարի չափ զորքով։ Իջնելով Արազի (Արեգի) [ափը]. կամրջակով անց կացրեց ու իր զորքը փոխադրեց [մյուս կողմը]։ Իսկ երբ պինարանն էին անց կացնում, կամրջանավը խորտակվեց և երկու թնդանոթ-մարտկոցով (բատարեով) ջուրն ընկավ, և ինաց [մխայն] երկու թեթև թնդանոթ։ Չնկատելով այս՝ Կոտլյարևսկին (Կիտլերցկին) թողեց այնտեղ՝ ջրի մեջ՝ այն թնդանոթները և ինքը վրայով անցավ։ Նրա հետից գնացին զարբազոյինները և Թավրիզի ճանապարհով գիշերն աննկատելորեն Պարսից ճամբարը հասան։...

1813 թվին... հարկադրված զանն Բաբախանն ուղարկեց Շամախի խան Արուլ-Հասան-խանին։ Վերջինս եկավ Ղարաբաղ։ Եվ Ռուիշչևն էլ եկավ Տիղիսից։ Հանդիպում ունեցան Գ[յ]ուլիստանում՝ Չերայում, ուր պարսիկներն ու ռուսները հաշտվեցին, պայով իրար փոխադարձ տրակտատ հաշտության և սրտջերով

սահմաններն այսպես. Արագի (Արեգի) ափը, Մեղրին և Շորագյալը ռուսներին մնաց, նույնպես և խանությունները՝ 1. Դարբաղը, 2. Գյանջան, 3. Շաքին ու Շիրվանը, 4. Բաքուն, Թալիշը, Լենքորանը, Դարբանդը և ամբողջ Դաղստանը, 5. Դուբան... Իսկ զվրաշներին մնաց Երևանն ու Էջմիածինը և Արագի (Արեգի)՝ Ռուբդավերդիի կամրջի հայնկույս [մասը][3]...

1817 թվին... [գերմանացի կոլոնիստներըը հաստատվեցին]... Շամխորում (Շանքորում), Սոմխիթում և այլուր...

1819 թվին... Ալեքսանդր կայսրը[4] դաեն Բարախանին ուղարկեց ընծաներ Իմիրցի ապա Ավետիքի (Ավատիքի) ձեռքով:...

1819 թվին... [Տեղեկանալով Դաղստանի ժողովրդի հուզման մասին՝] Տիղիսում գտնվող գեներալ Երմոլովը[5] այս մասին գրեց Դարբաղի գավառի կառավարիչ հայ[ազգի] գեներալ իշխան Ավերիան Գրիգորիչ Մադաթովին[6], որը Դարբաղի բնիկ էր և երիտասարդ հասակից գնալով Ռուսաստան՝ այնտեղ պետական ծառայության էր մտել:... Քանի որ նա քաջարի գեներալ էր, պետք է ռուսաց զորքը ժողովեր և Շաքիի ու Շիրվանի ժողովրդով գնար Դարբանդ [օժանդակելու Երմոլովի արշավանքներին Դաղստանի դեմ]...

1820 թվին... Ստամբոլում տեղի ունեցավ հուզումնք հայերի և օսմանցիների միջև: Հայոց Գրիգոր (Գրիքուլ) պատրիարքը[7] լատինացոց հավատքի անցավ: Սա գրեց տեղացի հայերին, որպեսզի լատինացոց հավատան ընդունեն, իսկ հայերը՝ հանձն չառնելով այս՝ հարձակվեցին պատրիարքի վրա: Պատրիարքը փախավ վեղերի մոտ, գանգատվեց, որ իբր թե հայերն ապստամբություն են սարքում և նույնիսկ կաշառեց: Այս պատճառով բազմաթիվ հայ երևելիներին բանտարկեցին, իսկ օսմանցիները կոտորեցին նրանց ու հավլտակեցին նրանց գույքը:

1821 թվի փետրվարի 21-ին վախճանվեց Դայոս արքեպիսկոպոսը Վրացին, [ազգությամբ] Թալ'աշվիլին, որը Աստրախանի թեմակալն էր: Սա շատ տեղյակ էր ռուսերեն, վրացերեն և հայերենի[8]...

1822 թվին... ռուսները Պարսկաստան քշեցին Դարբաղի, այսինքն Ռանի խան Մելիքիին, Իբրահիմ-խանի որդուն: Սա դեներալ-մայոր և սպասեթ էր, և Դարբաղի խանությունը ստացել էր ռուսներից և ուներ այն ցարը: [Այս եղավ] տեղական

հայ գեներալ Մադաթովի ներշնչմամբ (մեղադրանքի հետևանքով), և ռուսները մացրին այնտեղ իրենց կառավարչությունը, որի գլուխ կանգնեցրին Մադաթովին։ Իսկ [Մելիքի] եղբորորդուն՝ Ջաֆար-գուլի-աղային, որը Մա[հ]մադ-[Հ]ասան-Աղասիի որդին էր, տղայի հետ միասին, կալանավորեցին և որպես բանտարկյալ ուղարկեցին Ռուսիա, Սիմբիրսկ (Ցիրցկի) քաղաքը։...

1823 թվին... հայերը լիալուսնից [Զատկի հաշվում] սխալվեցին[9]։ Այսպես պատմեց ինձ տերտերը՝ տեր-Գեորգ (Գեուրք) Թևևթցին, որ այժմ այստեղ՝ Պետերբուրգումն է ապրում և զարգացած և ուսյալ մարդ է, հմուտ ինչպես հայերենին, նույնպես և վրացերենին։ 80 տարին մեկ անգամ հայերը լիալուսնից [Զատկի հաշվում] սխալվում են։...

1826 թվին... Երմոլովը Տիղիսից ուղարկեց առաջընթաց երեք հազար հետևոտն և սակավաթիվ էլ վրացական հեծյալ զորքով գեներալ-մայոր իշխան Մադաթովին Ղազախ, որպեսզի զգուշացնելի վրա հարձակվի ու քշի նրանց։ Այս պահին Երևանի սարդար [Հ]ուսեյն-գուլին եկավ ու գրավեց Ղազախն ու Շամշադինը... Շամշադինում սարդարի հետ էր Ալեքսանդրե [արքայատը]։ Մադաթովը Ղազախում կանգնած՝ զգուշացնելի զորքին հազթեց, այստեղից Շամշադին գնաց։ Սարդարը Շամշադինից քաշվեց, Ջեգամի (Ջագամի) գլուխն անցավ ու այնտեղ կանգ առավ զորքով։ Գեներալ Մադաթովը Շամշադինից երկու հազար մարդով և 4 թնդանոթով ու երեք հարյուր վրացական հեծելազորքով գնաց Գյանջա ուղևորվեց։...

Սեպտեմբերի 4-ին գեներալ Մադաթովը հասավ Գյանջա... Ղզլբաշները՝ ավերելով և կողոպտելով Գյանջան՝ թողին քաղաքն ու հեռացան։ Մադաթովը առանց կռվի մտավ ու գրավեց Գյանջան։...

1826 թվին... Շահղազին նահանջեց ու պաշարած Շուշվա բերդի մարդկանց էլ հանեց ու քաշվեց դեպի Արազ (Արեզ), ուր և կանգ առավ։

Երևանի բերդի սարդար Մահմադ-[Հ]ուսեյն-խանի եղբայր Հասան-խանն եկավ մեծ զորքով... ու Լոռվա շրջակայքն ավերեց, քոչվորներին կողոպտեց... մինչ Սողանլուղ Սոմխիթի գյուղերն ավերեցին, ապա նահանջեցին։ Հասնելով Լոռի՝ Հասան-խանը գիշերով տեղահան եղավ այնտեղից։ Սրան վրա հասան երեք հարյուր ռուս զինվորներ Եգերակի [գնդից]՝ մի թնդանոթով։... Գեներալ-մայոր իշխան Մենշիկովը...կապեց Լոռիից դեպի Ջա-

լալ-օղլի տանող ճանապարհը... և հարթեց [զլուխներին]... Զլուխները տեղահան արին Փամբակը և Շորագյալը:...

Սեպտեմբերի 30-ին Պասկևիչն[10] իր զորքով հասավ ու կանգ առավ Արազ (Արեգի) գետի մոտ:... Իսկ գիներալ Երմոլովը անցավ Ղազախ, որտեղ և կանգ առավ. ուզում էր կռվի բռնվել Երևանի սարդարի հետ, որը Շամշադինում էր կանգնած: Սարդարը քաշվեց ու Շամշադինի լեռն[եր]ում կանգ առավ:

Այստեղից գիներալ-մայոր Դավիդովին ուղարկեց Բամբակի կողմերը: Ռուսական զորքը, որ կանգնած էր Լոռիում, և Քարթլիի զորքը և Սամխեթ-Սաբարաթխանոյի զորքը հետ տարավ..., որանք հասան Ագարա[կ]՝ Փամբակի գլխին: Այնտեղ էր կանգնած Հասան-խանը մեծ զորքով: Մի փոքր կռիվ տեղի ունեցավ. ապա զլուխների զորքը քաշվեց ու գնաց Երևան:

1826 թվի նոյեմբերի 1-ին պարսիկներն ամբողջովին Արազով (Արեգով) անցան, Ղարաբաղի և Շաքի-Շիրվանի բազմաթիվ քոչվորներին տեղահան արին ու հետները տարան:...

Գիներալ-ադյուտանտ Պասկևիչն իր զորքով կանգ առավ Ղարաբաղում՝ Ամոզլանի և Արազի (Արեգի) միջև Զարեք (Զերկ) կոչված գետի վրա: Այս պատերազմում վիրավորվեց Ալիշահ շահզադայի որդի Սեյիտուլ-մելիք-միրզան:... Ապա ռուսները անցան Կուրը և ուղևորվեցին Ղարաբաղի կողմերը:...

Զլուխների զորքից, որը կանգնած էր Արազի (Արեգի) վրա, հեծյալների մի քանի մասեր եկան ու գերեցին Ղարաբաղի մի քանի սահմանամերձ գյուղերը և վերադարձան:

Հոկտեմբերի 25-ին ռուսական զորքն անցավ Արազով (Արեգով), պատերազմեցին շահզադեի հետ, շահզադեն քաշվեց ու Արդրիլ գնաց: Ռուսները գրավեցին ազա[հանք]ի գյուղերը և այլն:

Հոկտեմբերի 27-ին գիներալ Պասկևիչը կանգ առավ Ղարախաչալ կոչված գետ[ի ափ]ին,... և՝ հետամուտ լինելով Ղարաբաղից տեղահան արած ժողովրդին, որին զլուխները հետները էին տանում՝ [հասավ] Քալանթար-բուլաղ կոչված աղբյուրի մոտ, որը Արազից (Արեգից) 20 վերստ հեռու է գտնվում, սախլեց թողնել 200 ձուխ:...

Գիներալ Պասկևիչը՝ անցնելով Ղարաբաղի կողմերը՝ վերադարձրեց Շաքիից, Շիրվանից և Ղարաբաղից տեղահան արած քոչվորներին... ապա՝ անցնելով Արազը՝ կանգ առավ Զարեք (Զերկ) գետ[ի ափ]ին Ղարաբաղում: Այս եղավ հոկտեմբերի 30-ին:

1826 թվի դեկտեմբերի 28-ին գեներալ-լեյտենանտ իշխան Մադաթովը իր զորքի մի մասով անցավ Արազ (Արեզ) գետով և ուղղվեց դեպի Ղարաբաղի կողմերը... և ազատեց... Ղարաբաղից տեղահան հանած քոչվորներին...

1827 թվի հունվարի 1-ին... Մադաթովն ուղարկեց [իր] հեծելազորքը, զորաբաղցի հայերին և շաքի-շիրվանցիներին... քոչվորների վրա հարձակում գործելու համար:...

...Ապա... գեներալ Մադաթովը՝ վերադառնալով Ղարաբաղից՝ գրավեց փոքր քաղաք Լոռը (Լոռի)...

...Ապա [Մադաթովը] հասավ Արազ, անցավ Արազով ու եկավ Ղարաբաղ խիստ հոգեհան...

[ՅԱՆՎԱՅԻ ԱՆՑՔԵՐ 1828—1830 թթ.]

1828 թվին... Վրաստանի կառավարչապետ կոմս Պասկևիչը գնաց Ղարսով Ախալցխեին գրավելու համար: Պասկևիչը Ղարսը պաշարեց և կռիվով վերցրեց այն հունիսի 30-ին:... Իսկ հուլիսի 14-ին Պասկևիչը կռիվով վերցրեց Ջավախեթի Ախալքալաքը:... Օգոստոսի 15-ին Պասկևիչը վերցրեց Ախալցխեին:...

Սույն իսկ թվին Պասկևիչն Երևանից ուղարկեց գեներալ-մայոր Ճավճավաձեին զորքով Բայազետը գրավելու համար: Ճավճավաձեն հասավ այնտեղ և վերցրեց Բայազետը օգոստոսի 29-ին:

Սույն իսկ թվին, օգոստոսի 28-ին, Պասկևիչը պատերազմով վերցրեց Արփահանը:...

1827 թվին ռուսները Աբասաբադի բերդն և Նախիջևանը վերցրին, շահզադեին հոգեհեց:

Օգոստոսին Աբաս-միրզա շահզադեն եկավ Երևան, պատերազմեց գեներալ-լեյտենանտ Կրասովսկու հետ: Մեծ պատերազմ ունեցան: Էջմիածինը ռուսների ձեռին էր. զղլբաշները չկարողացան խլել: Կրասովսկին այնտեղ ամրացավ: Սրան կառավարչապետ Պասկևիչն օգնության հասավ Նախիջևանից: Սա որ եկավ, շահզադը էջմիածնի պաշարումը թողեց ու կանգ առավ Դավալուում (Դեվալուում). այնտեղ նրա եղբայր Ալի-Նալի-միրզան ևս եկավ զորքով, քաշվեցին ու գնացին ներքև: Պասկևիչը Սարդարաբադը վերցրեց սեպտեմբերի 15-ին, ապա Երևանի բերդին մոտեցավ և 6 օրից հետո վերցրեց. և Հասան-խանին երեք հարյուր հոգով կալանավորեց:

1830 թվի հունիսի 27-ին Տիֆլիսում տարածվեց Հնդկաստանից եկող մի հիվանդություն, որ խոլերա (խոլերին) է կոչվում. սա շատ մարդիկ կոտորեց տասծո անհնդքով մեր մեղքերի պատճառով։ Եվ այդ երևաց տասվածծնու պատկերի վրա, որն ամփոփված է Նորաշեն կոչված հայոց եկեղեցում. պատկերը կարծես կենդանի տասվածածինը լիներ՝ լացող և արտասվալից [աչքերով]...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Ալեքսանդրի արքայազնի մասին տե՛ս այս աշխատության ժէ դլխի 2-րդ ծանոթ.։*

2 *Գեն. Ն. Ֆ. Ռտիշչևը, Վրաստանի կառավարչապետ, 1811—1816 թթ.։*

3 *Ի նկատի է առնված Գյուլստանի դաշնագիրը։*

4 *Ալեքսանդր I կայսրը, 1801—1825 թթ.։*

5 *Գեն. Ա. Պ. Երմոլովը, Վրաստանի կառավարչապետ, 1816—1827 թթ.։*

6 *Գեն. վ. Դ. Մադաթովի մասին տե՛ս՝ Գեներալ-լեյտենանտ Վ. Դ. Մադաթովը, Երևան 1942.* Генерал-лейтенант В. Г. Мадатов, Ереван 1942.

7 *Այստեղ ժամանակագրությունը խախտված է։ Դրիգոր [Մամսկցին]. Կ. Պոլսի պատրիարք էր 1801—1802 թթ., մինչդեռ 1820 թվին Կ. Պոլսի պատրիարքն էր Պողոս Դրիգորյան Ազբիանապոլսեցին (1815—1823)։*

8 *Գայսեր մասին տե՛ս Կ. Կեկելիձե, Վրաց հին դրականության պատմություն, հ. I, Թբ., 1951, էջ 360—363.* Проф. Н. Н. Пальмов, К сведениям о личности архидиакона Гаиоза, впоследствии архиепископа Астраханского и Ставропольского,—„Христ. Восток", т. II, 1913, стр. 36—53. *Ա. Խաչիկյանց, Երգք Սիրուվէ վարժապետի Պատկանեան, Մոսկվա, 1857, էջ 64 (Ա.ռ հայրապետական Գայեան)։ Լ. Մալիքսեթ-Բեկ, Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների պատրիկոպյանների կատալոգը, I, Վրացերեն, Թբիլիսի, 1949, էջ 298։*

9 *Խոսքը Մոզդոկի մասին է։*

10 *Գեն. Ի. Ֆ. Պասկևիչ, Վրաստանի կառավարչապետ, 1827—1831 թթ.։*

ԻԷ

ԹԵՅՄՈՒՐԱԶ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ԱՐՔԱՅԱԶՆ

ՆԱՄԱԿՆ Մ. ԲՐՈՍՍԵՒՆ (1836), «ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» (1843), «ՕՐԱԳԻՐ» (?)

Թեյմուրազ Բագրատիոնը Վրաց վերջին Թագաւոր Գիորգի XII (XIII)-ի որդին էր։ Ծնվել է 1782 թ., աշակերտել է Դավիթ Ալեքսի-Մեսխիշվիլուն (տես այս աշխատության ԺԲ գլուխը)։ Բաբթալեի և Կախեթի 1801 թ. Ռուսաստանին միանալուց հետո՝ մի առժամանակ համագործակցելով իր հորեղբայր Ալեքսանդրե արքայազնի հետ՝ փախչում է Պարսկաստան, սակայն 1810 թ. հաշտվում է կատարված իրողության հետ, վերադառնում է Վրաստան, ապա անցնում Ռուսաստան և նվիրվում գիտական գործունեության։ Պետերբուրգում կեցած պահին ընտրվում է Ռուսական Գիտությունների ակադեմիայի խակաչան անդամ։ Սրան, իրրև վրացերենի ուսուցչի, աշակերտում է ապագա հայտնի վրացագետ և հայագետ, ակադ. Մ. Բրոսսեն։ Նույն Պետերբուրգում Թեյմուրազը ծանոթ է լսում, վախճանվում է 1846 թվին և թաղվում Ալեքսանդր-Նեվսկու մայրավանքի (լավրայի) Ամենայց եկեղեցում։

Թեյմուրազ արքայազնը հեղինակ է մի շարք երկերի, որոնց մեջ առանձին աչքի են ընկնում «Վրաստանի պատմություն», «Ճանապարհորդություն դեպի Եվրոպա և այլևայլ տեղեր» և բանաստեղծությունները։ Բացի դրանից, մեզ հասել են նրա նամակները՝ գրված ակադ. Մ. Բրոսսեին և «Օրագիրը», որ դեռևս հրատարակված չէ։ Նրա գրական-գիտական գործունեության մանրամասն ուսումնասիրությունը կազմել է դոց. Շոթա Մեսխիան՝ «Թեյմուրազ արքայազնի կյանքն ու գործունեությունը», վրացերեն,— „Материалы по истории Грузии и Кавказа“, 1939, вып. I, էջ 17—78։

Մ. Բրոսսեին ուղղված Թեյմուրազի նամակները, որ պահվում են Վրաց մեջ գրագիտության տարածող նախկին ըն-

կերութեան (այժմ Վրաստանի պետ. թանգարանի) հավաքածոյի № 4794-ի ներքո, դեռևս հրատարակված չէն։ Իսկ «Վրաստանի պատմութեունը», որն ընդգրկում է Վրաստանի և հարևան երկրների անցյալի տեսութեունը հնագույն ժամանակներից մինչև IV դար Ք. հետո և ավարտվել է 1843 թվին, լույս է տեսել վրացերեն՝ Ռուսաց Գիտութեունների ակադեմիայի հրատարակութեամբ, Պետերբուրգում 1848 թվին հետևյալ վերնագրով՝ «Պատմութիւն ի սկզբանէ Իվերիայի, այլոյնքն Գեորգիայի, որ է հայմայն Վրաստան»։ «Օրագրից» մի հուշ հրատարակեց բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին իր բանասիրական հոդվածներից մեկում («Համունիտաս» օրաթերթ, 1935 թ., № 229)։

Հակառակ Շ. Մելիք-Թանգի կարծիքի (op. cit., էջ 73—74), մենք գտնում ենք, որ Թեյմուրազ արքայազնը ուսումնասիրած չէ հայերենը (գրաբարը) և բնագրում չի օգտագործել Մովսես Խորենացու և Մխիթար Գամշյանի պատմութեունները, և ոչ էլ օգտագործել է այդպիսիների վրացական թարգմանութեունները (Л. Меликсет-Беков, Эксцерпты из древней „Истории Армении“ по грузинской рукописи XVII века,— „Известия Кавк. Ист.-Арх. Института“, т. II, Лнгр. 1927, стр. 135—142. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց ապրյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 71—76. Նույնի՝ Մխիթար Գամշյանի «Պատմութիւն Հայոց»-ի վրացերեն թարգմանութեունը, վրացերեն,— «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», VIII, 1935, էջ 55—58. Նույնի՝ Հայոց հին գրականութեան պատմութեունը, վրացերեն, Թբ., 1941., էջ 228—229)։ Ավելի հավանական է, որ Թեյմուրազը ձեռքի տակ ունեցած Մ. Խորենացու պատմութեունը սուսերն թարգմանութեամբ՝ Հովսեփ սարկավագ Հովհաննիսյանի, Պետերբուրգի 1809 թ. հրատարակութեամբ (Армянская история, сочиненная Моисеем Хоренским, перевел с армянского архидиакон Иосиф Иоаннесов, СПБ, 1809), կամ լատիներեն թարգմանութեամբ և հրատարակութեամբ եղբայր Վլատոննների, Լոնդոնում 1736 թ. (Mosis Chorenensis Historiae Armenicae libri III... Latine verterunt... Gulielmus et Georgius Gul. Whistoni Filii, London, 1736), իսկ Մ. Գամշյանի պատմութեունը՝ անգլերեն թարգմանութեամբ, որ հրատարակվել է 1790 և 1827 թթ. (Father Michael Chamich. History of Armenia. From b. C. 2247 to the year of Christ 1780. Translated

from the original armenian by Johannes Abdal, I and II, Calcutta, 1790, 1827)։

Թեյմուրազ արքայազնի պատմութիւնը, գրված 1843 թ., հիմնականում չի պարունակում ոչ մի այնպիսի նյութ Հայաստանի և հայերի նկատմամբ, որ չլինի հիշված Մ. Խորենացու պատմութեան մեջ, որն և օգտագործում է և նույնիսկ տեղ-տեղ քննադատում Թեյմուրազը (էջ 44—47), կամ օգտագործած չլինի ըստ Մ. Զամչյանի պատմութեան, կամ վերջապես ըստ հուշն և լատին պատմիչների։ Ի նկատի ունենալով, որ Թեյմուրազ արքայազնի պատմութիւնը վերաբերում է հնագույն շրջանին, ասել է՝ անհիշատակ ժամանակներից սկսած մինչև քրիստոնեութեան ընդունելը, որ արդեն հայտնի է ուրիշ սկզբնաղբյուրներից, ինչպիսիք են Լեոնտի Մրովելին և Վախուշտին, մենք ավելորդ ենք համարում տալ այստեղ երկար ու ընդարձակ մեջբերումների թարգմանութիւնները այդ պատմութիւնից, այլ բավականանում ենք մի հատվածի թարգմանութեամբ, որը վերաբերում է Մ. Խորենացու քննադատութեանը, և մի ուրիշի էլ՝ սկսվ. Մ. Բրոսսեին ուղղված 1836 թ. 28 II թվակիր նամակից, որ վերաբերում է հայոց և վրաց տոհմերի «գյուտի» խնդրին։

[ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՌԵՐԸ]

Մեր՝ [վրացական] և ոչ մի այբուբեն և ոչ մի գիր ոչ Մեսրոպի կամ որևէ ուրիշի հորինածը չէ, և սրա ապացույցը հին գրաճեներն են, որ տակա են խուցուբի ասոմթավրուլի [նշանների] գրված և որ փորագրված են Քրխատոսի ծնունդից առաջ[1]։

[ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ]

... Մովսես Խորենացին (Մոսե Խորանելի)[2] իր Պատմութեան առաջին գրքի վեցերորդ գլխում գրում է այսպես. «Բել, այսինքն Բիլ կամ Բաալ, հայոց Նահապետ (Նախահայր) Հայկի (Հաոսի) ժամանակակիցն էր, որի մասին շատերն են պատմում և շատերն էլ այլևայլ կերպ են տարախոսում։ Իսկ ես ասում եմ, որ նա, որին Սատուռնոս և Բել են կոչում, Ներբոթն է»։ Սրանով երևան հկավ, որ հայ պատմիչ Մովսես Խորենացին (Մոսե Խորանելի) Ներբոթին Բաալ է կոչում, որին հետագայում ասորեստանցիք սխալմամբ իրրև աստված էին պաշտում։ Սա-

կայն ընդհանուր պատմության այսունները (դոգմատները) Բաբելին Ներքոթ չեն կոչում, և ոչ մի պատմաբան ընդհանուր Ասիայի, կամ Եվրոպայի, կամ որևէ ուրիշը բացի միմիայն հայ պատմիչներից, չի պատմում, որ Հայկը (Հաոսը) սպաներ Ներքոթին կամ Բաբելին։

